Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գոյակցման պայքարի քննադատությամբ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1988

ԳՄԴ 63.3 (2 Հ)
Պ 797

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Լ. Ա. ԽԱՏՐՇՈՒԳՅԱՆ
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ
Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Կ.

Պ 797 Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ) /Խմբ.՝ Ա. Ս. Համբարյան.— Եր.։ Հայաստան, 1988, 480 էջ։

Աշխատության մեջ համառոտակի բնութագրվում է սուլթանական և երիտթուրքական կառավարությունների հոյակապ ու հայաջինջ քաղաքականությունը։ Մերկացվում են արևմտյաների ցեղասպանությունը ժխտող պատմության կեղծարարները։ Բերվում են Իթթիհադի ոճրագործ քաղաքականությունը անարգանքի սյունին գամող համաշխարհային առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչների կարծիքները։

Աշխատությունը պրոպագանդում է սովետական պատմագիտության նվաճումներ և նոր պրոբլեմներ լուսաբանելու նպատակ չի հետապնդում։ Շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ նոր փաստեր։

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

0503020913
Պ ——— 59—87
701 (01) 88

ԳՄԴ 63.3 (2 Հ)

ԻՆՉՈՒ ԵՆ ԿԵՂԾՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Ներածության փոխարեն)

Թուրքական պաշտոնական պրոպագանդայի գործունեության ամենահարևանցի ուսումնասիրությունն անգամ պարզում է նրա անմիջական կապը Արևմուտքի պրոպագանդիստական կենտրոնների հետ։ Այն կրկնում է արևմտյան գաղափարախոսների մտքերն ու տեսությունները կոմունիզմի ու իրական սոցիալիզմի մասին՝ սկսած ՍՍՀՄ-ում մարդու իրավունքների ոտնահարումից մինչև «սովետական վտանգի» մասին հերյուրանքները։

Թուրքիան դեռ շատ վաղուց Արևմուտքի պետությունների ձեռքին գործիք է եղել՝ սկզբում Ռուսաստանի, ապա Սովետական Միության դեմ պայքարելու համար։ Սրանով պետք է բացատրել, որ Հայկական հարցի շուրջը ծավալված պայքարում այդ պետությունները մշտապես գտնվել են Օսմանյան կայսրության քաղաքականության պաշտպանության դիրքերում։ Դրա վառ վկայությունն էր ստատուս քվոյի քաղաքականությունը՝ եվրոպական պետությունների ջանքերը Օսմանյան կայսրության ամբողջականությունը պաշտպանելու նպատակով։

Ռուսաստանի հետ առճակատման պայմաններում, իհարկե, արևմտյան տերությունների շահերը պահանջում էին, որ ստրատեգիական տեսակետից մի այնպիսի կարևոր տարածք, ինչպիսին Հայկական բարձրավանդակն է, բնակեցված լիներ ոչ թե ռուսական կողմնորոշում ունեցող հայերով, այլ թուրքերով ու մահմեդական այլ տարրերով։ Նրանք լավ գիտեին, որ հայերն իսկապես ռուսական կողմնորոշում ունեին և այն ոչ թե ժամանակավոր ու տակտիկական, այլ առհավետ ու ստրատեգիական բնույթ ուներ։ Եվ որովհետև հայերի ցեղասպանության սուլթանական ու երիտթուրքական քաղաքականությունը առաջին հեր-

բլն ուղղված էր Ռուսաստանի դեմ, եվրոպական մեծ տերությունները միայն կեցվածք ընդունեցին, թե դատապարտում են ցեղասպանությունը, մինչդեռ եղեռնը հետևանք էր նաև նրանց իմպերիալիստական-գաղութատիրական ձգտումների։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտով քայքայվեց Օսմանյան կայսրությունը։ Թուրքիայում ծանր կացություն ստեղծվեց։

Այս պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունը, որ սկսել էր ակտիվ դեր խաղալ «հին աշխարհում», հանգեց եզրակացության՝ Սովետական Ռուսաստանի դեմ օգտագործելու համար Թուրքիան այլևս պիտանի չէ։ Վարչական, ազգային ու քաղաքական նոր միավորում էր պետք։ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի կարծիքով, այդպիսի միավորում կարող էր լինել Հայաստանը, և նա համաձայնեց վերցնել Մեծ Հայաստանի մանդատը։

«Հայերի նկատմամբ գործադրած մեթոդիկ ջարդերը,— գրում է Վիլսոնը,— մեզ հարկադրում են Եվրոպայի սահմաններից անհետացնել այդ տգետ և անառողջ... ավազակախմբերին՝ Թուրքերին։ Հայաստանին պետք է տրվի այն, ինչի նկատմամբ նա պատմական իրավունք ունի։ Նա Թուրքիայից ավելի իրավունք ունի գոյատևելու, որովհետև ինքն իրեն ավելի լավ կարող է կառավարել»[1]։

Սակայն ԱՄՆ-ը առանց երաշխավորված շահի զոհողության չէր գնա։ Եվ նա իրեն հարց տվեց՝ այդ Հայաստանը, որի մասին խոսում է Վիլսոնը, ստեղծվում է Ռուսաստանի դե՞մ, թե՞ նրա համար։ Այս հարցին պատասխանեց ամերիկյան կոնգրեսը, որը մերժեց ընդունել Հայաստանի մանդատը։ Դրանով ԱՄՆ-ը Մերձավոր արևելքի հարցում վերջնականապես որդեգրեց եվրոպական մեծ տերությունների ավանդական քաղաքականությունը, այն է՝ հենվել Թուրքիայի վրա, աջակցել նրա ռազմաքաղաքական հզորության զարգացմանը և դարձնել ստրատեգիական հենակետ ընդդեմ Սովետական Միության։

Հենց դրանով էլ պայմանավորված է Թուրքիայի տեղն ու դերը ժամանակակից միջազգային կյանքում։

Թուրքիան ՆԱՏՕ-ի ռազմական բլոկի անդամ է, այդ բլոկի հարավարևելյան ռազմական ամրոցը։

Պանթուրքիզմը, որ առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, դարձել է Թուրքիայի պետական քաղաքականությունը, իսկ այն ամենը, ինչ ուղղված է Սովետական Միության դեմ, խրա-

խուսվում և աջակցություն է ստանում Արևմուտքի իմպերիալիստական շրջանների կողմից։

Դեռ 1947-ին ամերիկյան սենատոր Ռասելը բացահայտեց Թուրքիային ԱՄՆ-ի կողմից ցույց տրվող օգնության իսկական նպատակը. «Ես չեմ ասում, թե ուզում եմ օգնել Հունաստանի և Թուրքիայի դեմոկրատիային։ Ես չեմ կարծում, թե այդ երկրների ժողովուրդները դեմոկրատիա ունեն։ Բայց ես ցանկանում եմ օգնել Թուրքերին Ռուսաստանի դեմ դնելու գործում»[2]։

Տրումենի դոկտրինայով Թուրքիան ԱՄՆ-ից ռազմական օգնություն ստացավ և դրա դիմաց պարտավորվեց իր բանակը դնել ամերիկյան վերահսկողության տակ։ Մարշալի պլանով Թուրքիան գործնականում վերածվեց ԱՄՆ-ի տնտեսական կցորդի։ Տարեցտարի աճեցին Թուրքիային ԱՄՆ-ի ցույց տված օգնության ծավալն ու ընդգրկումները։

Միացյալ Նահանգները Թուրքերին համոզում են, որ ՍՍՀՄ-ի դեմ «պատերազմը անհրաժեշտություն է», և այդ պատերազմում Թուրքիան պետք է առանձնահատուկ դեր ունենա։ Արձագանքելով դրան, թուրքական «Տասվիր» թերթը գրեց. «Պետք է ցանկանալ, որ այդ պատերազմը տեղի ունենա որքան հնարավոր է շուտ», իսկ ֆաշիստամետ ժուռնալիստ Յալչինը ԱՄՆ-ին կոչ է անում՝ չհապաղել պատերազմ սկսելու սոցիալիստական երկրների դեմ[3]։ Հակասովետական մոլագարությունն այնպիսի ծավալներ ընդունեց, որ ՄԱԿ-ում Սովետական Միության ներկայացուցիչը հարկադրված էր նշել. «... միանգամայն սանձարձակ և Սովետական Միության դեմ պատերազմ հրահրելու նպատակով մղվող զրպարտիչ ու պրովոկացիոն կամպանիայի ամեն մի սահմանից դուրս եկող փաստեր, կամպանիա, որ Թուրքիայում մղվում է արդեն երկար ժամանակ»[4]։

Թուրքիայի ռազմականացումն ու Արևմուտքի զավթողական նպատակադրումներին նրա ենթարկվածությունը հատկապես լայն թափ ստացան վերջին տարիներին։

Թուրքիայում 1980 թ. սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջման իսկական պատճառը ոչ թե ահաբեկչության դեմ պայքարն էր, այլ իշխանություն ունենալու թուրքական սպայության ձգտումը։ Այսօր թուրքական բանակում հաշվվում է 750 հազար մարդ, այսինքն՝ ազգաբնակչության 6 տոկոսը։ ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում թուրքական զինված ուժերը զիջում են միայն Միացյալ Նահանգներին, որի վերազինման,

վերակառուցման համար հսկայական միջոցներ են հատկացվում։ Եթե 1978—1979 թթ. այդ ծախսերը կազմում էին երկրի պետական բյուջեի 22,3 տոկոսը, ապա 1981—82 թթ.՝ 27 տոկոսը։ Թուրքիան ՆԱՏՕ-ում առաջին տեղն է գրավում նաև ռազմական ծախսերի աճման տեմպերով։ Այսպես, 1955—1985 թթ. ընթացքում այդ ծախսերն աճել են հինգ անգամ։

Թուրքական բանակը ոչ միայն ՆԱՏՕ-ի հարավարևելյան ամրոցն ու հարվածային ուժն է, այլ նաև ԱՄՆ-ի արագ ծավալման ուժերի բազան և Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի ու Պակիստանի հետ միասին Միջին և Մերձավոր արևելքում առանձնահատուկ դեր ունեցող դինակիցը։

1947-ի համեմատությամբ, 1984-ին Թուրքիային Միացյալ Նահանգների ռազմական օգնությունն աճել է 10 անգամ՝ 100 միլիոնից հասնելով մեկ միլիարդ դոլարի։ Միայն 1985-ին այն աճել է 60 տոկոսով։ Բայց Թուրքական կառավարությունը դա բավարար չի համարում և պահանջում է տարեկան 1,25 միլիարդ դոլար։ Այդ էր Թուրքիայի կառավարության ղեկավար Թ. Օզալի 1985 թ. սկզբներին ԱՄՆ կատարած այցի գլխավոր նպատակներից մեկը*։

Հիմնովին վերակառուցվել են Թուրքիայի բոլոր զինատեսակները, ռազմաօդային և ռազմածովային բազաները, երկաթուղային և խճուղային ճանապարհները։ Երկրի տարածքում ստեղծվել են ստրատեգիական գոտիներ, որոնք ի վիճակի են ռազմական խոշոր ուժեր ընդունել, հանդերձավորել և մարտական վիճակի բերել։ Մարտեգիական այդ գոտու մեջ են մտնում Սովետական Միությանը սահմանամերձ շրջանները, ամբողջ Արևմտյան Հայաստանը։ ԱՄՆ-ի օգնությամբ Թուրքիայում ձևավորվեցին ռեակտիվ և տրանսպորտային ինքնաթիռների ռազմական ստորաբաժանումներ, պատրաստվեցին համապատասխան կադրեր։

Բնական է, որ ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի կողմից Թուրքիային ցույց

* ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրի օգնականը 1985 թ. մարտին Անկարայում հայտարարեց՝ համաձայնություն է կայացվել, որ Թուրքիան ունենա ժամանակակից միջուկային զենք, որովհետև «Թուրքիայի արևելյան սահմանները դժվար պաշտպանելի են, և սովետները էլ այդ շրջաններում զինվորական ուժեր են կուտակում։ Թուրքական սահմանի անմիջապես մյուս կողմում սովետները ռազմական մի ահավոր ուժ են պատրաստ պահում» (Թուրքական հեռուստատեսություն, 2. 04. 1985 թ.)։

տրվող ռազմական և տնտեսական առատ օգնությունը չէր կարող ազդեցություն չունենալ նրա արտաքին քաղաքական կուրսի վրա։ Թուրքիայի տարածքում ամերիկյան ռազմական բազաների գոյությունը, որոնցում տեղադրված են նաև միջուկային զենքի պաշարներ, ՍՍՀՄ-ին ուղղված հետախուզական համակարգերի ստեղծումն ու այդ նպատակով նույնիսկ սպիտակահեր Արարատի օգտագործումը, սովետա-թուրքական սահմանների երկայնքով պայթուցիկ նյութերով լի խողովակաշարի, Մուշ քաղաքում ռազմական խոշոր օդանավակայանի կառուցումը և այլն, դրա վկայություններն են։ Պատասխանելով «Ցյունեշ» թերթի թղթակցի հարցերին, Թուրքիայի պրեմիեր մինիստրը հայտարարեց. «Ուժեղ Թուրքիան կարևոր դեր է խաղում Միջին արևելքում կայունությունն ապահովելու գործում... Մեր հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, որոնք կրում են դաշնակցային բնույթ, շատ լավ վիճակում են... Մենք գոհունակությամբ ենք ընկալում մեր տնտեսական և ռազմական պահանջմունքները բավարարելու համար ԱՄՆ-ի ղեկավարների կողմից ցույց տրվող օգնությունը»[5]։

Թուրքիայի և ԱՄՆ-ի ռազմական փոխհարաբերությունները սահմանված են «Պաշտպանության և տնտեսական համագործակցության համաձայնագրով», որը ստորագրվել է 1983-ի հուլիսի 13-ին։ Ըստ այդ պայմանագրի 3500 ամերիկյան ռազմական մասնագետներ (իրականում Թուրքիայում նրանց թիվը հասնում է 7000-ի) աշխատելու են Թուրքիայում գործող էլեկտրոնիկ-լրտեսական կայաններում, որոնցից մեկը տեղադրված է Սինոպում (Սև ծով), իսկ մյուսը՝ Ինջիրլիկի շրջանում։ Լրտեսական կայաններ են տեղադրված նաև Բելբասինում (Անկարայի մոտ) և Մարմարա ծովում[6]։

Իրանում շահի տապալումից հետո Թուրքիային սկսեցին անվանել ԱՄՆ-ի «մեծ ականջ»։ Նրա տարածքն ապահովում է ՍՍՀՄ-ի մասին ԱՄՆ-ի ստացած լրտեսական նյութերի 25 տոկոսը։

«Ջումհուրի էսլամի» լրատվական գործակալության հաղորդման համաձայն, Ամերիկայի Միացյալ Նահանգները Թուրքիայում տեղակայած իր ռազմաօդային բազաների ընդարձակման համար հատկացրել է 26,3 միլիոն դոլար։ Նախատեսվում է այդ միջոցներով ստեղծել արբանյակային հաղորդման կենտրոններ։ Գործակալությունը տեղեկացրել է նաև, որ համաձայնագիր է

ստորագրվել Արևելյան Թուրքիայում ռազմական բազաների ցանցի հետագա զարգացման մասին[7]։

Միջին ու Մերձավոր արևելքի երկրներին հանգստացնելու նպատակով գործակալությունը հայտարարեց, որ Թուրքիայի ռազմական բազաները օգտագործվելու են միայն ՆԱՏՕ-ի կողմից, որ ԱՄՆ-ը Միջին արևելքի գործերին միջամտելու նպատակ չի հետապնդում։

Բայց քիչ անց ամերիկյան «Քրիսչըն Սայնս Մոնիթոր» օրաթերթի թղթակիցը Կ. Պոլսից հաղորդեց՝ Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը հայտարարել է, որ ըստ թուրք-ամերիկյան նոր համաձայնագրի ԱՄՆ-ը նաև խաղաղ պայմաններում կարող է օգտագործել Թուրքիայի բազաները՝ ռազմական զանազան նպատակներով սպառազինություններ ամբարելու համար, իսկ ճգնաժամային իրավիճակների դեպքում այնտեղ կստեղծվեն ամերիկյան ռազմական համալիրներ։

«Հուրիեթ» օրաթերթի խոստովանությամբ, Թուրքիան, Միջին արևելքում ստանձնելով ԱՄՆ-ի շահերի պաշտպանի դերը, գնում է դեպի կատարյալ մեկուսացում։

Թուրքիան արտաքին պարտքերն ու դրանց տոկոսները վճարելու համար իր անտեսությունն ու ֆինանսական գործունեությունը գրավ է դրել։ Նա մտել է ԱՄՆ-Սաուդյան Արաբիա առանցքի մեջ և պատրաստվում է ստանձնել Միջին արևելքում Վաշինգտոնի ոստիկան զինվորի դերը, գրեց «Ջումհուրիեթ» թերթը 1985-ին, մի բան, որ ոչ միայն չի խոչընդոտի մեր երկրի շուրջ պաշարման օղակի ստեղծմանը, այլ, ընդհակառակը, կծնի նորանոր վտանգներ։ «Ոչ ոք թող կասկած չունենա այն մասին,— զգուշացնում է թերթը,— որ որքան խորանա ամերիկյան ազդեցությունը Թուրքիայում, հակառակ մեր կամքի, այնքան ավելի մեծ արագությամբ պետք է մղվենք դեպի խոր բախումների անդունդը։ Ինչպես ապրիլի 24-ից մեկ շաբաթ առաջ, երբ Լիբիայի նախագահ Քադաֆին այնքան անվայել և անպատշաճ հայտարարություն կատարեց Թուրքիայի հասցեին։ Դրանից առաջ Բուլղարիայում տեղի ունեցած դեպքերը, ապա նաև «Պրավդայի» ելույթը։ Այս բոլորը ամենևին էլ պարզ զուգադիպություններ չեն»։

Եվ ապա՝ «Վարչապետ Թ. Օզալի ամերիկյան ուղևորությունը և այդ շփումների ընթացքում նրա ցուցաբերած հանձնվողական վարքագիծը, այսինքն՝ իրադարձությունների ընթացքը ի

հայտ է բերել այն իրողությունը, որ հասել ենք մի շրջադարձային կետի։ Մոտ ժամանակներս անխուսափելիորեն տեսնելու ենք նաև իսլամական աշխարհի արմատական շրջանների հակազդեցությունը...»[8]։

Այս ողբը կեղծ է, որովհետև Արևմուտքը շատ հաճախ է կուլ գնում իր «շփացած որդու»՝ Թուրքիայի կամակորություններին։ Օրինակները բազմաթիվ են։

Մի ժամանակ եվրոպական երկրները «մարդու իրավունքները ոտնահարելու» մեղադրանքներով տպավորություն էին ստեղծում, թե իբր ուզում են Թուրքիային հեռացնել եվրոպական պառլամենտից։ Մինչդեռ վերջերս նրան ընտրեցին այդ պառլամենտի փոխնագահ, քանի որ Թուրքիայում «հաջողությամբ է ընթանում վերադարձը դեպի ժողովրդավարություն»։ Իրականում այդ վերադարձը բնութագրվում է խոշտանգումներով, գնդակահարություններով, քուրդ ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանությամբ, մյուս փոքրամասնությունների հանդեպ գործադրվող ճնշումներով ու սահմանափակումներով, բազմաթիվ քաղաքներում արտակարգ դրության հաստատումով, թուրքական բանակի միջոցով Կիպրոսի մեծ մասի գրավմամբ, հայկական ցեղասպանության մերժմամբ*։

Պաշտոնական Եվրոպան շողոքորթում է Թուրքիային։ Օզալի պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ Մեծ Բրիտանիայի կառավարության նախագահ Մ. Թեչերը հայտարարեց. «Անգլիական թերթերը նույնիսկ գրում են, որ իմ քաղաքականությունն օզալյան է, ու ես դա որպես գովեստ եմ ընդունում»[9]։

Իսկ երբ Արևմուտքի հետ հարաբերություններում հակասություններ կամ չլուծված խնդիրներ են առաջանում, թուրքական կառավարությունը դիմում է «ճոճանակի» փորձված քաղաքականությանը։ Երբ թուրք-ամերիկյան նոր երկարաժամկետ պայմանագիր կնքելու գործում դժվարություններ առաջացան, Օզալը ԱՄՆ-ին սպառնաց. «Մենք պետք է... հարաբերությունները լավացնենք Սովետական Միության և արևելյան բլոկի երկրների

---

* 1987 թ. հունիսի 18-ին եվրոպական պառլամենտը բանաձև ընդունեց, որը Թուրքիային կոչ էր անում ճանաչել հայ ժողովրդի նկատմամբ 1915 թ. կատարված ցեղասպանության փաստը և ապրիլի 24-ը նշել որպես ցեղասպանության դեմ պայքարի միջազգային օր։

հետ»։ Եվ ապա՝ «Միացյալ Նահանգներից մեր ստացած դրամը ծառայում է Ատլանտյան դաշինքի՝ Արևմուտքի պաշտպանությանը։ Մենք այդ դաշինքի պաշտպանության ծայրագույն պատվարն ենք։ Եթե մեր տնտեսական աղբյուրները կբռնատվեն, ո՞վ է լինելու շահողը»[10]։

«Մենք ՆԱՏՕ-ի ամենահզոր երկիրն ենք. հայտնի է մեր աշխարհագրական և ռազմական կարևոր նշանակությունը. մեր դիմաց ռուսներն են, մեր շուրջը կրակներ կան..., մենք գտնվում ենք մի շատ վտանգավոր աշխարհագրական գոտում...», «սոցիալիստական երկրների հետ մեր սահմանի ընդհանուր երկարությունը հասնում է 1200 կիլոմետրի, Թուրքիայի զինված ուժերը պետք է հզոր լինեն»[11]։ Սակայն ԱՄՆ-ի և Թուրքիայի հարաբերություններին բնորոշը ոչ թե դեպքից դեպք երևան եկող այս հակասություններն են, այլ լիակատար համերաշխությունը։

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղար Շուլցին են պատկանում հետևյալ խոսքերը. «Բավական է մի հայացք ձգել քարտեզին, հասկանալու, թե Թուրքիան որքան կարևոր է ԱՄՆ-ի ստրատեգիական շահերի համար։ Այն ՍՍՀՄ-ի, Մերձավոր արևելքի երկրների և պարսկական նավթահանքերի արևմտյան թևի մեջ խրված վահան է հիշեցնում»[12]։ Իսկ ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրի օգնական Ռ. Փեռլը «Հուրիեթ» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ հայտարարեց. Թուրքիան և Իսրայելը «ամուր դեմոկրատիայով միակ երկրներն են, որոնք կայունության գործոն են հանդիսանում Մերձավոր արևելքում»[13]։

ԳՇՀ-ի կանցլեր Հ. Կոլը 1985 թ. հունիսի 12-ին Անկարայում ասաց. «Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ի համար կենսական նշանակություն ունի»[14]։ Իսկ հոկտեմբերի 18-ին թուրքական հեռուստատեսությունը հայտնեց, որ ԳՇՀ-ն Թուրքիա է ուղարկում «Լեոպարդ—1» մակնիշի տանկեր[15]։

ՆԱՏՕ-ի զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ռոջերսը 1982 թ. եղավ ՍՍՀՄ-ի սահմանի երկայնքով տեղակայված թուրքական երրորդ բանակում և նրա հրամանատարության առջև խնդիր դրեց նախապատրաստվել այնպես, որ կարողանալ «իր վրա վերցնել հնարավոր հարձակման առաջին հարվածը»[16]։ Ինչպես տեղեկացնում է «Դյունեյ» թերթը, Ռոջերսը թուրքական բանակը գերարդիական զենքով զինելու նպատակով հատուկ ծրագիր էր մշակել։ Մասնավորապես նախատեսվում էր

վերակառուցել Թուրքիայում գտնվող միջուկային զենքի բազաները։

Հյուսիսատլանտյան բլոկի մեկ այլ ղեկավար՝ լորդ Քարինգտոնը, 1985 թ. նոյեմբերի սկզբին Անկարայի համալսարանում հայտարարեց, որ Թուրքիայի աշխարհագրական դիրքն ու ՍՍՀՄ-ին սահմանակից լինելը մեծացնում է նրա ստրատեգիական նշանակությունը։ Քարինգտոնը այցելեց Կարսի, Կարինի, Արդվինի և Տրապիզոնի շրջանները, եղավ թուրքական զորամասերում և «շատ գոհ է նրանց վիճակից»[17]։

Թուրքիան առաջին տեղն է գրավում ԱՄՆ-ից զենք գնող երկրների շարքում։ Միայն 1984 թ. Թուրքիան ԱՄՆ-ից գնել է 4,4 միլիարդ դոլարի սպառազինություն։ Այդ օգնության շնորհիվ է, որ Թուրքիան ձեռնամուխ եղավ նաև միջուկային զինման քաղաքականության իրականացմանը։ Միջերկրական ծովի ափերին կառուցվել են ուրանի արտադրության երկու հզոր հնոցներ, որոնց միջոցով մշակվում են 10—15 հազար տոննա հզորությամբ ուրանի հանքեր։

ՆԱՏՕ-ն գործնական քայլեր է կատարում Սովետական Միության տարածքին անմիջականորեն հարող որոշ շրջաններ զորաշղթայի միջին շառավղի հրթիռների թիրախադարձ դարձնելու համար։

Թուրքիայում ստեղծվել են հզորություններ «Ջենեռալ էլեկտրիկ» մակնիշի ավիացիոն շարժիչներ արտադրելու համար։ Արդիականացվում են Վանի, Մալաթիայի, Կարինի, Աֆիոնի, Դալամանի, Ուշակի, Զարդակի, Մուշի, Բաթմանի ռազմաօդային և ռազմածովային բազաները։ Աքսարի շրջանում սկսվել է ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի համար նախատեսված սուզանավերի հզոր բազայի կառուցումը՝ 2,8 միլիարդ թուրքական լիրա նախնական արժեքով։ Ինջիրլիկի բազայում տեղավորված են ռմբակոծիչներ, որոնք կարող են միջուկային զենք կրել։ ԱՄՆ-ը Թուրքիայում ունի 60 ռազմական օբյեկտներ։ Ռազմատրանսպորտային ինքնաթիռների արտադրություն կազմակերպելու համար բանակցություններ են վարվում Իսպանիայի, Կանադայի և Իտալիայի հետ։ Ստեղծվել է նաև սեփական ռազմարդյունաբերական համալիր, որի գործունեության մեջ ընդգրկված են թուրքական ինքնաթիռաշինական, ամերիկյան «Ջենեռալ մոտորս», Թուրքիայի ռազմաօդային ուժերին աջակցող ընկերությունները և այլն։

Ամերիկյան ֆիրմաների հետ համաձայնագիր է կնքված «Թոու» հակատանկային կառավարող հրթիռների և մարտական ուղղաթիռների գնման և համատեղ արտադրության համար։ Կառուցվում է «Ռասպիրա» շարժական զենիթահրթիռային համակարգը, 1987 թ. ավարտվեց ամերիկյան «Ֆ—16» նորագույն կործանիչ-ռմբակոծիչների հավաքման ձեռնարկության շինարարությունը։

Թուրքիան Արևմուտքին անհրաժեշտ է նաև Իրանի դեմ ռազմական ուժ ունենալու, Սիրիային չեզոքացնելու, իր գերիշխանությունը Մերձավոր արևելքում ապահովելու համար։ Դա հնարավոր է դարձնում Բաղդադի պակտի նման մի նոր ռազմական բլոկի ծնունդը, որ, մի կողմից, ուղղված կլինի Սովետական Միության, իսկ, մյուս կողմից, հնարավորություն կտա տիրելու այդ աշխարհամասի նավթահանքերին և ռազմաստրատեգիական ուղիներին։ Թուրքիան հաճույքով է ընդառաջ գնում Արևմուտքի այդ ծրագրերին։

«Օգալի կառավարության միջոցառումների նպատակն է,— գրում է «Լոս Անջելես Թայմս» թերթը,— քննություն բռնել և ծանր բեռից վերածվել լիբերալ և որոշակի պարտականություններ ունեցող ոստիկանի։

... Թուրքիան Պարսից ծոցի մի շարք երկրների հետ պայմանագրեր է կնքել՝ պարտավորվելով անհրաժեշտ ռազմական օգնություն ցույց տալ այն դեպքում, երբ նրանց «անվտանգությունը» ենթարկվի որևէ վտանգի։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Թուրքիային հատկացվել և հատկացվում է մի կեղտոտ դեր, որով նա վեր է ածվում արաբական հյուսիսային շրջանների ոստիկանի, ձգում այդ շրջաններում ուժեղացող ազատագրական շարժումների վզին փաթաթվող օղակը և արաբական ռեակցիոն ուժերին հավաստիացնում է, որ նրանց կողքին կանգնած է մի աչալուրջ պահակ...»

Իսկ Կիպրոսում արաբերեն լույս տեսնող «Ալ Հուրիա» թերթը 1985 թ. մայիսի 25-ին գրել է. «Ոստիկանը՝ թուրք... փողերը՝ նավթային, զենքերը՝ Ատլանտյան բլոկի... նոր վարչակարգը, որ փորձում է երկրում կարգ ու կանոն հաստատել տեռորի ու ճնշման պողպատյա ավելով, ներարկումներ է կատարում արաբական նավթի փողերով, որպեսզի վերակենդանացնի թուրքական օրգանիզմը, որին քայքայում է տնտեսական խեղդող ճգնաժամը։ Մյուս կողմից, ՆԱՏՕ-ն և Սպիտակ տունը իրենց վրա են վերցրել նոր վարչակարգի զինման հոգսը, որպեսզի նա առույգ ժանդարմի նման մեր վրա պրծնի և այդպիսով շատանա այն ռեակցիոն ուժերի թիվը, որոնք Մերձավոր արևելքում պաշտպանում են իմպերիալիզմի շահերը»։

Իմպերիալիստները փորձից գիտեն՝ յուրաքանչյուր երկիր, որից պահանջվում է ոստիկանի դեր խաղալ, պետք է հասարակական, քաղաքական և տնտեսական տեսակետից ներքին կայունություն ունենա, սոցիալական ցնցումների ու պայթյունի վտանգից զերծ լինի, որպեսզի նրա տերերի պլանները չձախողվեն։ Դրա համար էլ նրանք Թուրքիայի իշխող դասակարգերին բազմակողմանի օգնություն են ցույց տալիս՝ աշխատավորական զանգվածներին և դեմոկրատական տարրերին հնազանդության մեջ պահելու համար։

Թուրքիան անմասն չի մնում իմպերիալիստական բոլոր ագրեսիվ միջոցառումներից։ ՄԱԿ-ի, միջազգային մյուս կազմակերպությունների նստաշրջաններում ամերիկյան «քվեարկության մեքենայի» թուրքական կոճակը գործում է անխափան։

Թուրքիայի ամերիկյան գաղութում հաշվվում է 25 հազար մարդ։ Պետական ապարատում մեծ թվով բարձրագույն պաշտոններ զբաղեցնում են օտարերկրացիները։ 18 մինիստրություններից միայն չորսում է, ուր չկան ամերիկյան խորհրդականներ։ Վերջիններս Թուրքիայում իրենց զգում են ինչպես սեփական տանը, ունեն իրենց խանութները, 11 ռադիոկայան, սեփական փոստային կապ։ Ամերիկացիներն օգտվում են էքստերիտորիալ (արտաերկրյա) իրավունքներից։

Թուրքիայում տեղակայված ամերիկյան «բազաներից», առանց կառավարության գիտության, թռչում էին լրտես ինքնաթիռները,— գրել է Թուրքիայի բանվորական կուսակցության լիդեր Մ. Այբարը։ Վազը նույն այդ բազաներից, և դարձյալ առանց մեր գիտության, կարող է բարձրանալ միջուկային մարտագլխիկ ունեցող ինքնաթիռ։ Այլ խոսքով ասած, օտարի աչքերը, օտարի ականջներն ու օտարի ձեռքերը երկնքի նման տարածվել են մեր յուրաքանչյուր հողակտորի վրա[18]։

Ինչո՞վ բացատրել Թուրքիայի այդ վարքագիծը, Արևմուտքի իմպերիալիստական շրջաններին նրա հնազանդությունը։ Դրա համար երեք հիմնական պատճառ կա։

Առաջին. իշխող դասակարգերի ատելությունը կոմունիզմի նկատմամբ։

1985 թ. հոկտեմբերի 17-ին, հանդես գալով Կաստամոնու քաղաքում, պրեզիդենտ Ք. Էվրենը հայտարարեց. «Թուրքիայի համար գոյություն ունի երեք սպառնալիք։ Դրանցից առաջինը կոմունիզմի վտանգն է, որը երկար ժամանակ կախված է Թուրքիայի վրա»։ Մեկ օր անց Զանքրում պրեզիդենտը հայտարարեց. «... հենց այդ կոմունիստներն են, որ երազում են բնակչությանը իրենց կողմը գրավելով երկիրը մասնատելու մասին և չեն խուսափում անգամ հայերի հետ համագործակցելուց»[19]։

Թուրքիայում այսօր դրության տերը խոշոր բուրժուազիայի դրածոներն են, և նրանց անասնական ատելությունը սոցիալիզմի ու կոմունիզմի նկատմամբ միանգամայն հասկանալի է։ Բայց պրեզիդենտ Էվրենը նենգափոխում է իրողությունը, երբ գործը հանգեցնում է կոմունիզմի սպառնալիքին։ Նա քաջ գիտե, որ Սովետական Միությունը ամեն ինչ անում է Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար։

Հարցն այստեղ կոմունիզմի կամ, ինչպես այսօր Արևմուտքում մոդայիկ դարձած, «սովետական վտանգի» մասին չէ, այլ այն, որ իմպերիալիստական պետությունների ագրեսիվ պլանները համընկնում են Թուրքիայում իշխող դասակարգերի շովինիստական պանթուրքական ծրագրերի հետ։ Թուրքիան իր այդ ծրագրերի իրականացման գլխավոր պայմանն է համարում ՆԱՏՕ-ի և, առաջին հերթին, ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը, նրանց ռազմատնտեսական օգնությունը։

Զանքրում ունեցած իր ելույթում Ք. Էվրեն, հարձակվելով օպոզիցիայի վրա, ասաց. «Նրանց համար հայրենասիրություն ասած բանը գոյություն չունի։ Նրանք ասում են, թե ինչո՞ւ ենք զենք գնում, ինչո՞ւ ենք ինքնաթիռաշինական գործարաններ հիմնում, ինչո՞ւ ենք ռազմանավեր, տանկեր գնում։ Նրանք ամեն ինչին հակառակ են... Նրանց համար արյունն անգամ նշանակություն չունի, չեն ընդունում «թուրքական արյուն» հասկացությունը։ Նրանք ասում են, որ արյունը համամարդկային է, ի՞նչ է նշանակում «թուրքական արյուն»[20]։ Այո, այսօր թուրքական պաշտոնական քաղաքականության մեջ նորից հնչում է պանթուրքական արյան պաշտամունքը, այսինքն՝ վերադարձ դեպի երիտթուրքերի շովինիստական-ռասիստական մտադատյաց քաղաքականություն։ Թուրքական բանա-

կի 1986 թ. ձմեռային ռազմախաղերի ավարտին նվիրված արարողության ժամանակ Էվրենն ասաց, որ, ի տարբերություն առաջին համաշխարհային պատերազմի, «այսօր մեր բանակը կարող է ճեղքել այս լեռը (Արարատը) և մյուս կողմն անցնել..., որովհետև այսօր այն համալրված է զինվորական լավագույն միավորումներով և լավ վարժեցված է»[21]։

Թուրքական կառավարությունը աշխատում է նաև գիտական հիմնավորում տալ իր տարածապաշտական ձգտումներին։ Այդ նպատակն էր հետապնդում 1986 թ. հոկտեմբերին կազմակերպված «Թուրքագիտական հետազոտությունները և Թուրքիան» միջազգային գիտաժողովը։ Հոկտեմբերի 13-ին գիտաժողովի աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին Թուրքական հեռուստատեսության կազմակերպած «Կլոր սեղանի» ժամանակ։ Գիտաժողովի մասնակիցների վկայությամբ քննարկման հիմնական նյութը «Թուրքաբնակ ռեգիոնի արևելյան» հատվածում, այսինքն Սովետական Միությունում, բնակվող թուրքական ծագում ունեցող ժողովուրդներն էին։ Նրանց կարծիքով ՍՍՀՄ-ում թուրքալեզու անձանց թիվը կազմում է շուրջ 50 միլիոն։ Իսկ «Սարայբոսնայից մինչև Զինջիանան և Յակուտիա տարածքում այն անցնում է 140 միլիոնից։ Եկող դարի սկզբներին այդ բնակչության թիվը կհասնի մոտավորապես 200 մլն-ի։ Հետևաբար, նշում էին նրանք, մենք զբաղվում ենք շատ կարևոր և բազմամարդ մի էթնիկական խմբավորման ուսումնասիրությամբ։ Անշուշտ, դրա կարևորությունը չի բացատրվում միայն այդ խմբավորման բազմամարդությամբ։ Այն կարևոր է նաև պատմական, կուլտուրական, հոգևոր և քաղաքական տեսակետներից։ Այս շրջանը աշխարհի ապագայում կարևոր դեր է դրաղեցնելու։ Մարդկության ճակատագիրն այստեղ է որոշվելու։ Նման աշխարհագրական դիրքի պատճառով առաջիկա 10 տարում... թուրքերը ակտիվ դեր են կատարելու մարդկության պատմության զարգացման մեջ»[22]։

Պանթուրքիզմը Թուրքիայի քաղաքականության համար ժամանակավոր և անցողիկ նպատակադրում չէ, այլ ստրատեգիական նշանակություն ունեցող դիրքորոշում։ Երիտթուրքերն այն պետական քաղաքականություն դարձրին և մինչև օրս էլ պանթուրքիզմը մնում է Թուրքիայի իշխող դասակարգերի արտաքին քաղաքական կուրսի շարժիչ ուժը։ Սուլթանների, երիտթուրքերի, քեմալների և էվրենների քաղաքականության մեջ հիմ-

նարար նշանակություն ունեն մարտնչող պանթուրքիզմն ու պանթուրանիզմը, որոնց նպատակներն ու զավթողական դիտավորությունները, առաջին հերթին, ուղղված են ՍՍՀՄ-ի դեմ, քանի որ Թուրանը և դեպի այն տանող ուղիները ընկած են Սովետական Միության տարածքում։

Այսպիսով, Թուրքիային իմպերիալիզմի ագրեսիվ շրջանների հետ միավորող երկրորդ գործոնը պանթուրքիզմն է։

* * *

Աբդուլ Համիդի կարծիքով, իր գահի անսասանությունը հնարավոր էր ապահովել միայն կայսրության իսլամացումով և խալիֆայության քաղաքական տիրապետության շրջանակների մեծացմամբ։

Այն բանից հետո, երբ Եվրոպայում տարածքային զգալի կորուստներ տվեց, նա ուշադրությունն ամբողջապես բևեռեց դեպի Արևելք։ Այդ ժամանակ սկսեց ձևավորվել Բալկաններից մինչև Մոնղոլիա ձգվող թուրանական կայսրություն ստեղծելու գաղափարը, որը և հանդիսացավ բռնի թուրքացման քաղաքականության գլխավոր պատճառը։ Պլաններ մշակվեցին Ադրբեջանն ու Թուրքեստանը գրավելու համար, ծրագրվում էր նվաճել նաև Հնդկաստանը, որտեղ «100 միլիոն մահմեդականներ կդիմավորեն թուրքական բանակին»։ Համիդը շատ ջանքեր թափեց, որպեսզի արաբներն իրեն խալիֆա ճանաչեն։ Այդ նպատակով նա բոլոր միջոցներով սիրաշահում էր արաբական ցեղերի առաջնորդներին և ազդեցիկ անձանց։ Սակայն նրա ջանքերն իզուր անցան։ Արաբները ատում էին օսմանյան տիրապետությունը և պայքարում էին նրա դեմ։ Գերմանական զորավար Հինդենբուրգը գրում է. «Համաիսլամական շարժումը իր հարատևությամբ սպառնալիք էր... Թուրքերը որոշեցին ծավալվել դեպի Կովկաս։ Երազեցին ծավալվել նույնիսկ Կասպից ծովից այն կողմ, հետո Կենտրոնական Ասիայի ընդարձակ տարածությունների մեջ մխրճվել այն հույսով, որպեսզի Օսմանյան կայսրությանը միանային բոլոր այն ցեղերը, որոնք նույն հավատն ու իսլամական նույն մշակույթն ունեին»[23]։

«Իմ խալիֆայական մի խոսքը,— գրել է Համիդը,— բավական է սրբազան պատերազմ սկսելու համար... կգա մի օր և բոլոր հավատացյալները մեկ մարդու պես ոտքի կկանգնեն փրկելու անհավատների շղթաները։ Անգլիական տիրապետության մեջ գտնվող 85 միլիոն, հոլանդական գաղութներում գտնվող 30 միլիոն և Ռուսաստանում ապրող 10 միլիոն մահմեդականները բոլորն էլ այն ժամանակ կմիանան։ Չգիտե՞ն, որ 250 միլիոն մահմեդականներ ամեն օր աղոթում են ալլահին՝ իրենց աչքերը դեպի խալիֆան դարձնելով, որ մարգարեի ժառանգն է»[24]։ Աբդուլ Համիդի կարծիքով, փոքր ազգերին բարենորոգումներ շնորհելը նշանակում է «կայսրությունը կորցնել» և «ինքը ուխտում է իրեն հաջորդող սուլթաններին, որ նրանք պատերազմեն հայերի անկախության դեմ»։

Սուլթանին ու նրա քաղաքականությանը փոխարինելու եկան երիտթուրքերը։ Նրանք թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին և համառորեն իշխանության էին ձգտում, իշխանություն, որը պետք է դառնար նրանց տնտեսական ու քաղաքական շահերի իրականացման միջոց։ Բայց քանի որ այդ բուրժուազիան թույլ էր, իսկ երկրի տնտեսական կյանքը գտնվում էր հույների, հայերի ու հրեաների ձեռքին, այդ պայմաններում ձևավորվեց ոչ թե թուրքական բուրժուական նացիոնալիզմը, այլ թուրքական մեծապետական շովինիզմը, թուրքերի ազգային բացառիկության հոգեբանությունը։ Երիտթուրքերը սիրում էին ասել, որ թուրքերը 400 ձիավորով կարողացան հիմնել աշխարհածավալ կայսրություն։ Եթե հավատանք երիտթուրքական պարագլուխներին, նրանք ձգտում էին տապալել «անաղնիվ, ագահ և ստոր միապետին՝ Աբդուլ Համիդին, որովհետև նա «ոտը ոտին չէր դնում մեծ Թուրքեստան ստեղծելու համար»[25]։

Երիտթուրքերի կուսակցության հիմնադիրներից Թեմոն քննադատում էր սուլթանին, որովհետև նա «թուրք ժողովրդին չէր հրավիրում պատժելու հայերին»[26]։

Նոր վարչակարգի գաղափարախոսները հետապնդում էին մի նպատակ, այն է՝ թուրքացնել կայսրության տիրապետության տակ գտնվող բոլոր ժողովուրդներին, նրանց պարտադրելով թուրքերենն ու թուրքական մշակույթը։ Առաջին իսկ օրից նրանց գլխավոր խնդիրը դարձավ «տիրապետող ազգին», այսինքն թուրքալեզու ժողովուրդներին մահմեդական դրոշի տակ միավորելու գործը։ Այդ միավորումն ուղղված պետք է լիներ ոչ թուրք ժողովուրդների դեմ։ Ահա թե ինչու նրանք հայերին բարենորոգումներ շնորհելը համարում էին կայսրության ամբողջականու-

թյան խախտում և ուղղակի հայտարարում էին. «Թուրքիան կկործանվի, եթե Հայաստանում բարենորոգումներ մտցվեն Բերլինի դաշնագրի պահանջի համաձայն»[27]: Այդ նկատի ուներ Արփ. Արփիարյանը, երբ գրում էր. «Հայը չքացնելու համար ոչ հին Թուրք կա, ոչ նոր Թուրք, ոչ երիտասարդ Թուրք, ոչ ծեր Թուրք, այլ՝ Թուրք կա միայն»[28]: Ե. Օտյանին են պատկանում հետևյալ խոսքերը. «Կան բաներ ալ՝ որոնք որքան ալ իրագործվեն հՀեռու մնան, միշտ հեշտիվ կզոդվին իրարու, ինչպես օրինակի համար «Ահմեդ Ռիզա» և «սուլթան Համիդ» անունները»[29]:

Երիտթուրքական ղեկավարներն անվերապահորեն պաշտպանում էին 1894—1895 թթ. հայկական կոտորածները, մեղմում կայսրության ժողովուրդների ազատագրական շարժումները: Ֆրանսիացի հրապարակախոս Ֆ. Պրեսանսեն նրանց մասին գրել է. «Նրանց ով լինելը ես շատ լավ գիտեմ, համոզված եմ, որ նրանցից ամեն մեկը մի-մի սուլթան Համիդ էր... Նրանք բոլորը եվրոպատյաց, քաղաքակրթության թշնամի արյունախում մարդիկ են, ոչ նրանց ծերերին պետք է հավատալ, ոչ էլ երիտասարդներին»[30]:

Երիտթուրքական գործիչ Աղանը Փարիզում հայտարարեց, թե Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պարսից ծոց, Ալթայան լեռներից մինչև Միջերկրական ծով ընկած տարածությունները պետք է միավորել և ստեղծել թուրքական մի ամբողջական պետություն:

Կուսակցության դաղափարախոս Զիա Գյոքալփը հայտարարեց. «Թուրքերի հայրենիքը ոչ Թուրքեստանն է և ոչ էլ Թուրքիան... Այլ մի հավերժական երկիր է՝ անունը Թուրան... Անհրաժեշտ է յուրաքանչյուրին Թուրք համարել»[31]: Թուրք ազգությունը ավելի առաջնային է, քան իսլամը, և գլխավորը ռասայական հպարտությունն է: Սա արդեն անցում էր պանիսլամիզմից պանթուրքիզմ: Երիտթուրքերն իրենց նշանավոր դարձրին «Մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ, մեկ մշակույթ» խոսքերը:

1908 թ. երիտթուրքական լրագրերից մեկը գրեց. «Թուրքերն իրենց աշխարհակալ դրությամբ ունեն որոշ իրավունքներ և մենաշնորհներ. կարիք չկա մյուս ցեղերի համար ճանաչել նույն քաղաքական հավասարությունը»[32]:

1905 թ. երիտթուրքերի Սալոնիկի կոմիտեն առանձին կոչով սպառնալիք կարդաց հայերի գլխին: Այդ կոչում ասված էր.

«Մենք ձեզ չենք ճանաչում հայ հեղափոխականներ, այդ պատճառով այսուհետ մենք հեղափոխական ենք համարելու 15—70 տարեկան արական սեռի ամեն մի հայի..., անխնա կոտորելու ենք ձեզ ամբողջ երկրագնդի երեսին, որտեղ որ հայը պատահի մահմեդականին»[33]:

Իսկ «Մեշվերեթ» թերթը իր ունկնդիրներին համոզում էր, որ հայկական մշակույթ գոյություն չունի, կա միայն թուրքական մշակույթ: Երիտթուրքերը, բացի կրոնից ու հայոց լեզվից, հայ ժողովրդի բոլոր հոգևոր արժեքներն իրենց էին վերագրում: Օրինակ, ըստ նրանց հայկական ազգագրական երգը թուրքականից է փոխառնված կամ նրա մի տարբերակն է: Երիտթուրքական «Միզան» թերթի խմբագիր Մուրադ բեյի կարծիքով, «բացի թուրքին ծառայելուց հայը այլ առավելություն ունենալ չի կարող»[34]:

Նրանք սիրում էին կրկնել Համիդյան վարչակարգի Մեծ վեզիր Սայիդ փաշայի 1881 թ. արտասանած խոսքերը. «Հայկական հարցը լուծելու համար պետք է ոչնչացնել հայերին»[35] և այդ անել ոչ միայն թուրքացման, այլ նաև ֆիզիկական բնաջնջման միջոցով:

Ժուռնալիստ-գիտնական Հ. Դիպլենդին 1916 թ. գրել է. «Ադանայի ջարդը առաջին փորձն էր նրանց կողմից, որոնք յուրացրին Աբդուլ Համիդի քաղաքականությունն ու միջոցառումները, երբ նրանք հափշտակեցին հայերին բնաջնջելու նրա առաջնությունը: Այդ օրերին ես մեկից ավելի երիտթուրքերից լսել եմ, որ Հայկական հարցին վերջ տալու լավագույն ձևը հայության ոչնչացումն է»[36]:

Երիտթուրքերը,— գրել է Յո. Լեփսիուսը,—1913 թ. հայերին սպառնում էին. «Եթե դուք, հայերդ, բարենորոգումներից ձեռք չքաշեք, մի բան կկատարվի, որի համեմատությամբ Աբդուլ Համիդի ջարդերը երեխայական խաղալիք էին»[37]:

«Թալեաթը,— գրել է ֆրանսիական «Դեբա» թերթը 1921 թ. մարտին,— մարմնավորում էր որոշակի վարչաձև և մեթոդ, բայց հավատարիմ լինելով Համիդյան բռնակալությանը... որոշել էր կայսրությունից ջնջել Հայկական հարցը, բնաջնջելով հայերին»:

Նման հայտարարությունների հետևում կանգնած էր ռասայական պանթուրքիզմը: «Թուրքիան թուրքերին» լոզունգի իմաստն այն էր, որ Անատոլիան ու Հայկական լեռնաշխարհը պետք է դառնային թուրքական երկիր, իսկ դրա համար հայերի ոչնչ-

չացումը անհրաժեշտություն էր։ Անգլիական զորավար Մոնտգոմերին գրում էր, որ «հայերի ոչնչացման պլանը գծվել և դեկրետավորվել էր Իթթիհադի կենտրոնական կոմիտեի կողմից»։ Իր հայրենիքն ունենալու հայերի ձգտումը հակասում էր երիտթուրքերի շովինիստական պլաններին[38]։

Երիտթուրքերի կուսակցությունը,— գրում է այդ կուսակցության նախկին գործիչներից մեկը՝ Մ. Ռիֆաթը,— ձգտում էր «թուրք տարրին օսմանցի մյուս տարրերի նկատմամբ տիրապետող դարձնել, նրա համար բացառիկ դիրք ապահովել, մնացած տարրերին ձուլելով կամ բնաջնջելու միջոցով Օսմանյան միությունը քանդել և նրա տեղը նոր թուրքական պետություն հիմնել...»[39]։

Սալոնիկի երիտթուրքական կենտրոնը մի կոչ հրապարակեց, որում ասված էր. «Մահմեդականնե՛ր, բարձրացնենք մեր ձայնը և թուրն աջ ձեռքում, հրացանը ձախ ձեռքում, ռումբերը գրպանում և ալլահի անունը շրթներիս, լույս հավատը սրտերում հռչակենք հետևյալ պահանջները.

> ...Օսմանյան կայսրությունը՝ օսման մահմեդականների համար,
> Եգիպտոսը՝ Եգիպտոսի մահմեդականների համար,
> Պարսկաստանը՝ Պարսկաստանի մահմեդականների համար,
> Թուրանը՝ Թուրանի մահմեդականների համար,
> Բուխարան՝ Բուխարայի մահմեդականների համար,
> Կովկասը՝ Կովկասի մահմեդականների համար»[40]։

«Ես,— գրում է Ջեմալ փաշան,— նախ և առաջ օսմանցի եմ, իսկ դրանից հետո ես երբեք չպետք է մոռանամ, որ նաև թուրք եմ։ Իմ հաստատ համոզմունքն է, որ թուրքն օսմանյան պետության հիմնաքարն է. Օսմանյան միությունն է, որ ամրացնում և հիմնավորում է թուրքական քաղաքակրթության և մշակույթի զարգացումը»[41]։

Ուրեմն, Օսմանյան միություն ստեղծելու համար պայքարը գլխավորն էր երիտթուրքերի քաղաքականության մեջ։ Իսկ բոլոր նրանք, ովքեր այդ միությունն ստեղծել էին ուզում, նրանց «ուշադրությունը պետք է ուղղված լինի թուրքերին բարձրացնելու, նրանց թիվը ավելացնելու և նրանց գոյության հնարավորություն ապահովելու մեծ պարտականության վրա»[42]։

Երիտթուրքերի Սալոնիկի կազմակերպությունը 1911 թ. հոկտեմբերին ընդունեց հետևյալ հակամարդկային բանաձևը.

1. Համաձայն բնության օրենքների ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերի կեր դառնան։

2. Կոտորելը ազնվականության ցասումն է ստոր ցեղերի դեմ, որոնք դիտվել են որպես անարգ թշնամի։

3. Եթե որոշվել է ջարդերի ծրագիրը, այն պետք է գործադրել ամբողջությամբ՝ առանց որևէ մեկից ազդվելու և առանց տարվելու զգացմունքային ազդեցություններով։ Սա անգթություն չէ, այլ գերադաս տարրի ոգու արտահայտություն։

4. Ռազմական անհրաժեշտություն է ժողովուրդների կոտորածը՝ առանց տարիքի ու սեռի խտրության։

5. Թշնամի ցեղի երեխաներին կոտորելն ազգային պաշտպանության կանխարգելիչ միջոց է։

6. Իրենց մայրերի արգանդներում իսկ այդ երեխաները ապրելու անարժան են՝ որպես աստվածամերժ շառավիղներ։

7. Կայսրության գոյությունը կախված է երիտթուրք կուսակցության ուժից և բոլոր հակամարտ գաղափարների ճնշումից[43]։

Թալեաթը երիտթուրքերի 1911 թվի համագումարում հայտարարեց, որ մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարությունը անհնար է, որովհետև «անիրականալի իդեալ է»։ «Շարիաթը, մեր անցյալ ամբողջ պատմությունը և հարյուր հազարավոր մահմեդականների զգացումները, և նույնիսկ քրիստոնյաների զգացումները, որոնք համառորեն դիմադրում են օսմանցիների բոլոր փորձերին, արդար հավասարության հաստատման դեմ անհաղթահարելի պատվար են հանդիսանում»։

«Քրիստոնյաներին օրինական օսմանցի դարձնելու անհաջող փորձ կատարել ենք... Ուրեմն հավասարություն չի կարող լինել, մինչև որ չհաջողացնենք կայսրության օսմանականացումը՝ երկար ու դժվարին մի աշխատանք, որում, համարձակվում եմ հուսալ, վերջապես պետք է հաջողության հասնենք»[44]։

Սալոնիկը դարձավ երիտթուրքերի կենտրոնը, որտեղից բխում էին կայսրության վաղվա օրվա բոլոր խոշոր վճիռները։ Այստեղ ձևավորվեց «Թուրքիան միայն թուրքերին» սկզբունքը։ Այստեղ վճռվեց արևմտահայերի ճակատագիրը։ Այստեղ որոշվեց արյան ու սրի միջոցով բոլոր փոքրամասնություններին թուրքացնելու քաղաքականությունը։ Այստեղ էր, որ երիտթուրքերի համագումարը որոշեց. «Մակեդոնիայի քրիստոնյաները պետք է

զինաթափվեն, իսկ մահմեդականները պետք է պահեն իրենց զենքերը... Պետք է կասկածելիները տեղահանվեն և ոստիկանությանն ու բանակին ազատություն տրվի... Կովկասից և Քրդստանից ներգաղթը պետք է քաջալերել, ներգաղթածներին հող հայթայթել և քրիստոնյաների եկամուտները արգելել... պետք է արգելել նոր խմբակցությունների ձևավորումը...» և նոր «ազատագրական գաղափարների» տարածումը։ Թուրքիան հիմնականում մահմեդական երկիր պետք է դարձնել։ Կրոնական ամեն տեսակի քարոզչություն պետք է ճնշել[45]։

Համագումարը նպատակահարմար՝ գտավ, որ բոլոր կարևոր պաշտոնները զբաղեցնեն մահմեդական երիտթուրքերը, իսկ քրիստոնյաները կարող են զբաղեցնել միայն երկրորդական պաշտոններ։ Մահմեդականությունը պետական կրոն է և հարկ եղած դեպքում պետք է այն պարտադրել նույնիսկ ռազմական ուժով, որպեսզի կայսրությունը մահմեդական նկարագիր ունենա։ Կայսրության լեզուն թուրքերենն է։ Փոքրամասնությունները, ծայրահեղ դեպքում, իրենց կրոնը կարող են պահպանել, բայց ոչ լեզուն, որովհետև «թուրքերեն լեզվի տարածումը հիանալի միջոց է մահմեդական գերիշխանություն հաստատելու և ոչ թուրք հավաքականությունները թրքացնելու համար»[46]։

«Կայսրության կազմի մեջ մտնող ոչ մի ժողովուրդ կազմակերպվելու իրավունք չունի...»[47]։

Երիտթուրքերն արաբներին ասում էին. «Դուք և ձեր ազգը պետք է գիտակցեք, որ թուրքեր եք և չկա արաբի հայրենիք»։ Պատահական չէ, որ արաբ ժողովրդի ազատագրական շարժումը Ջեմալ փաշան արյան մեջ խեղդեց և ստացավ «արաբների դահիճ» մականունը։

Հետագայում այս բոլորի հիման վրա Քեմալ Աթաթուրքը ձևակերպեց «թուրքացման 10 պատվիրանները»՝ թուրքացրու ընտանիքիդ անդամների անունները, խոսիր թուրքերեն, ուղթիր թուրքերեն, երեխաներիդ թուրքական դպրոց ուղարկիր, բարեկամություն արա թուրքերի հետ և այլն։

«Թուրքական Թուրքիայի» ստեղծումը, որ տարածվելու էր Վոլգայի ափերից մինչև Թուրքեստան, ընդգրկելու էր Թաթարիան ու Սիբիրը, Անատոլիայի վերածումը մաքուր թուրքական երկրի, դնում էր հայերի վերացման խնդիրը։ Գերմանացի գրող Ա. Վեգները 1919 թ. գրում էր, որ համաձայն երիտթուրքերի պանթուրքիստական պլանների, համաթուրքական ճանապարհներից հայկական սեպը պետք է վերացվեր։

«Վերցրեք Թուրքիայի քարտեզը,— գրել է Հ. Թումանյանը,— և մտիկ արեք։ Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա։ Եվ էդ երկրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից, նստած պաշտում է իր մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցում ու զարգացնում է հայկական հարցը։ Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքը ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը։ Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը՝ հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել։ Այո, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ»[48]։

Այսպիսով, պանթուրքիզմի գաղափարախոսները առաջարկեցին նոր ծրագիր, նոր լուծում, նրանք ծրագրեցին արհեստական միջոցներով ստեղծել թուրք մեծ ժողովուրդ։ Այս ծրագրի մեջ նրանք միաձուլեցին պանիսլամիզմն ու թուրքիզմը։ Հայտարարվեց, որ ամբողջ կայսրության մեջ ապրողները մեկ ժողովուրդ են՝ թուրքեր և հպատակ մահմեդականներ։ Նրանք ձգտում էին մահմեդականացման ճանապարհով թուրքացնել բոլոր հպատակ ժողովուրդներին։ Առաջ քաշվեց այն թեզը, որ մահմեդականության գլխավոր ուժը, գլխավոր պաշտպանը, գլխավոր ներկայացուցիչը օսմանյան Թուրքիան է և այդ դավանանքը կարելի է պաշտպանել թուրքիզմի միջոցով։ Այս նպատակն էր հետապնդում արաբների, պարսիկների, քրդերի, կովկասյան տարբեր ցեղերի, թաթարների և այլոց թուրքացումը։

Քրիստոնյա հպատակների նկատմամբ կիրառվեց ավելի բացահայտ և դաժան քաղաքականություն։

Մեծապետական սին երազներով տարված պանթուրքիստները ձեռնամուխ եղան հպատակ քրիստոնյա ազգերի ոչնչացման քաղաքականությանը։ Ահա մի քանի քաղվածքներ նրանց ներկայացուցիչների ելույթներից։

1918 թ. սեպտեմբերին Խան Խոյսկին գրել է. «Ադրբեջանը վերջապես հասել է իր նպատակին և թուրքական ժողովուրդների մեկդարյա իդեալը՝ միություն սուլթանի դրոշի տակ, իրականություն է դարձել։ Վոլգայի թաթարները, Անդրկասպյան սարթերը, ուզբեկները, կիրգիզները և Խիվայի ու Բուխարայի բնակիչները Կենտրոնական Ասիայում մեծ հույսով են սպասում թուրքական ազատագրական բանակին»[49]։

Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ փաշան հայկական պատվիրակությանը հայտարարեց. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային արևմուտքից արևելք է քշում։ Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաև Աֆրիկայից, բայց մենք պիտի տարածվենք դեպի արևելք, այնտեղ է մեր արյունը, մեր կրոնն ու լեզուն։ Եվ սա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում և Ադրբեջանում։ Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այնտեղ։ Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին։ Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան, պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք մեզ համար արգելք կհանդիսանաք իջնելու Քուռի հովիտը և Բաքու։ Կարսն ու Ախալքալաքը կփակի մեր ճամփան դեպի Ղազախ և Գանձակ։ Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք։ Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը։ Մեզ պետք է երկու ճանապարհ, որոնք մեր բանակներին հնարավորություն կտան առաջ շարժվելու և պաշտպանվելու։ Մի ճանապարհը՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որն անցնում է դեպի Գանձակ, մյուսը գնում է Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քուռի հովիտ։ Դուք կարող եք մնալ դրանց մեջտեղում, այսինքն Նոր Բայազետի և Էջմիածնի շուրջը»[50]։

Իսկ Էնվերը գտնում էր, որ «հայերը միշտ էլ եղել են և քանի դեռ կան, կլինեն մեր թշնամիները, հանգիստ չեն թողնելու մեր անատոլիական նահանգները և ավելի լավ է նրանց հիմնովին բնաջնջենք նաև Կովկասում, ինչպես այդ արվեց Թուրքիայում։ Կովկասում փոքրիկ Հայաստանը պատճառ է դառնալու, որ միշտ ձգտի ընդարձակել իր սահմանները և դառնալ հավիտենական վտանգ Թուրքիայի համար»։

Եվ ապա՝ «Կայսրությունը պետք է մաքրել հայերից ու լիբանանցիներից։ Առաջիններին մենք կոչնչացնենք սրով, երկրորդներին՝ սովով»[51]։

Առաջին աշխարհամարտի նախօրյակին նա նշեց. «Պողպատյա բանակների տեր Գերմանիան մեզ թիկունք կկանգնի ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասն ու Եգիպտոսն էլ երիտթուրքերի տիրապետության տակ առնելու և Թուրքիան աշխարհի ամենահզոր կայսրության վերածելու»[52]։

«Մենք մի աթաթ ունենք, որ պիտի մաքրենք»՝ դա «հայերից Թուրանի ճանապարհի մաքրումն ու թուրքական միության ապահովումն է»[53]։

Իսկ Ջեմալ փաշան հայերին հայտարարել է. «Մենք վերացնում ենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ խանգարում է մեր նպատակին հասնելուն։ Դուք միշտ ռուսների հետ եք, դուք նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են»[54]։

Այդ նույն օրերին դոկտ. Նազիմը բացականչեց. «Ո՜վ թուրք, տեսնում եմ, որ բախտիդ արևը պիտի ծագի. Թուրանի ճամփան բացվելով լույսերն աչքեր պիտի շլացնեն»[55]։

Երիտթուրքերի այս ցնորամիտ երազանքները տարածվում էին ամենուր և հայտնի էին շատերին։ Այդ մասին օտարերկրյա դեսպաններն իրենց կառավարություններին զեկուցագրեր էին գրում։ Այսպես, օրինակ, Շվեյցարիայում Ֆրանսիայի դեսպանը 1918 թ. ապրիլի 18-ին գրել է իր կառավարությանը. «Մենք ձեզ արդեն հայտնել ենք այն մեծ հույսերի մասին, որ տածում է Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի ժառանգությունների նկատմամբ և այն փորձերի մասին, որպեսզի նախկինում ցարական տիրապետության տակ ապրող թուրք ժողովուրդներին միացնի Կ. Պոլսին։ Ռուսաստանում, 1918 թ. փետրվարի 20-ի համարում գրել է «Թերջուման վի հակիքաթ» թերթը, գոյություն ունի թուրանական աշխարհը, որ տարածվում է մինչև Չինաստանի և Աֆղանստանի սահմանները, ընդգրկելով Կասպից ծովը, և որի ազգաբնակչության 90 տոկոսը մերձենում է թուրքական ռասային։

Այս պլանները տվյալ փուլում ավելի կոնկրետ վերաբերում են Կովկասին և Ղրիմին։ Թուրքիային Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների զիջումը նրա համար դարձավ առաջին քայլը իր նպատակների իրականացման ճանապարհին, և այս իրական հաջողությունը ոգևորել է նրան իր եսասիրական պլանների հետագա զարգացման համար...

Արդեն երկու ամիս է ինչ թուրքական մամուլը ակտիվորեն

լուսաբանում է այս հարցը։ Բայց այդ բոլոր հոդվածներում պարզ նշված է թուրքական կառավարության հաստատ վճռականությունը ապացուցելու, որ Կովկասի ժողովուրդների մեծամասնությունը մահմեդականներ են, որ նրանք հիմնականում պատկանում են թուրքական ռասային, և որ այդ հիմքի վրա Օսմանյան կայսրությունը ունի բոլոր իրավունքները միջամտելու այդ շրջանների գործերին...»[56]։

Նման զեկուցագիր էր ուղարկում իր կառավարությանը նաև Բեռնում ֆրանսիական ներկայացուցիչը։ Նա հայտնում էր, որ Ֆուադ Սելիմ բեյի հայտարարության համաձայն, թուրքական կառավարությունը ձգտում է Կովկասի լայն ինքնավարության, նրա, Ղրիմի և Օսմանյան կայսրության կոնֆեդերացիայի ստեղծման և Սև ծովը թուրքական ներքին ծով դարձնելուն[57]։

Իսկ Կովկասում Ֆրանսիայի ներկայացուցիչ Շարդինիեն 1918 թ. ապրիլի 29-ին հաղորդում էր, որ թուրքերը գերմանացիների հետ նախապատրաստվում են զորքերը ցամաք հանել Կրասնովոդսկում, Թուրքեստանում, Մերվում՝ իրենց պանթուրքական պլաններն իրականացնելու համար[58*]:

Հինդենբուրգը, որ տարիներ շարունակ բնակվել էր Թուրքիայում, ղեկավարել թուրքական բանակի վերակառուցման, վերազինման և վարժեցման աշխատանքները, մտերիմ հարաբերություններ էր հաստատել Թուրքիայի ղեկավար գործիչների հետ և քաջ գիտեր թե՛ այդ գործիչներին և թե՛ նրանց կուսակցության քաղաքական նպատակները, գրում է. «Հայկական հարցը... պատկանում է պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսության ընդգրկած հարցերին»[59]: Կ. Պոլսում գերմանական դեսպան Մետերնիխի կարծիքով, հայերի բնաջնջման մտադրությունը որոշիչ դեր խաղաց առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի ներգրավման համար։ Նպատակը մեկն էր՝ Թուրքիան վերստեղծել «զուտ մահմեդական» համաթուրանական հիմքի վրա։ «Բոլոր ոչ մահմեդական և ոչ թուրքական բնակչությունը պետք է բռնությամբ մահմեդականացվեր և թուրքացվեր, իսկ այնտեղ, որտեղ այդ հնարավոր չէր՝ ոչնչացվեր»[60]։

* Էնգելիից ֆրանսիական ռազմական ներկայացուցիչը 1918 թ. հոկտեմբերի 5-ին հայտնում է Կլեմանսոյին, որ Բաքուն գրավելուց հետո թուրքերը Անդրկովկասի հայ ազգաբնակչության հետ վարվում են այնպես, ինչպես Օսմանյան կայսրությունում 1915 թվին (ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1985, էջ 42)։

Մուդրոսի համաձայնագրով, հեռանալով Արևելյան Հայաստանից, թուրքական հրամանատարությունը Օլթիի, Կարսի, Արդահանի, Զըլդրի, Աղբաբայի, Վեդի-Բասարի, Զանգիբասարի և Հայաստանի այլ վայրերում կազմակերպեց թուրք աղաներից ու զինվորներից բաղկացած հետախուզական, պանթուրքական հրոսակախմբեր, որոնք հայ-թուրքական պատերազմի ընթացքում (1920 թ.) գործում էին հայկական բանակի թիկունքում և նրան մեծ վնասներ պատճառում։

Այդ աշխատանքները ղեկավարում էին թուրքական զավթիչների այնպիսի փորձված ղեկավարներ, ինչպիսիք էին Նուրի և Խալիլ փաշաները, որոնք հեղափոխական սքեմ հագնելով ստեղծեցին «Թուրքական շտաբ» հակահեղափոխական միավորումը։ Նրանց հաջողվեց անցնել Դաղստան և քողարկվելով պարտիզանական շարժման թիկնոցի տակ պանթուրքական պրոպագանդա և հակասովետական աշխատանք ծավալել։ Դաղստանից դուրս վռնդվելուց հետո Նուրի փաշան հակասովետական ելույթներ կազմակերպեց Լենքորանում, Գանձակում ու Ղարաբաղում։

Ս. Մ. Կիրովի վկայությամբ, Խալիլ փաշան 1920 թ. գարնանը դիմել էր 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը, առաջարկելով թուրքական բանակի հետ միասին օկուպացնել Հայաստանը։ Բնական է, որ նրա առաջարկը մերժվեց։ Սովետական կառավարությունը վճռական հակահարված տվեց թուրքերի ագրեսիվ դիտավորություններին և հայտարարեց, որ հայ-թուրքական վիճելի հարցերը պետք է լուծվեն միայն բանակցությունների միջոցով։

Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը 1920 թ. հուլիսի 19-ին Հայաստանի կառավարությանը գրեց. «Սովետական կառավարության բացարձակապես խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք ազգայնամոլները դադարեցրին զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին»[61]։

1920 թ. օգոստոսի 14-ին, հանդես գալով ազգային ժողովում, Քեմալ փաշան ասաց. «Մենք Հայաստանի վրա արշավելու որոշում ընդունեցինք. 1920 թ. հունիսին մենք հրամայեցինք արևելյան շրջաններում նախնական զորահավաք անցկացնել։ 15-րդ կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան նշանակվեց արևելյան ճակատի հրամանատար»[62]։

1920 թ. Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը նպատակ ուներ նաև հեշտացնել Անտանտի գործը։ Գրավելով Բաքուն, հնարավոր կլիներ մի նոր ռազմաճակատ բացել Սովետական Ռուսաստանի դեմ՝ դրանով իսկ կարմիր բանակի զորամիավորումների մի մասի ուշադրությունը բևեռելով այդ նոր ռազմաճակատում ծավալվող գործողությունների վրա։ 1920 թ. նոյեմբերի 9-ին Վ. Ի. Լենինը ասաց. «Վերջերս Թուրքերը սկսեցին հարձակում Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ այնուհետև, հնարավոր է, և Բաքուն»[63]։

Հարձակման թիկունքում կանգնած էին իմպերիալիստական պետությունները։ Կ. Պոլսում դաշնակից զորքերի հրամանատար դը Բուրգոն այդ օրերին առաջարկում էր Թուրքիային վերադարձնել Զմյուռնիան և Թրակիան։ «Ես կարծում եմ,— գրում էր նա,— դա ոչ թանկ հատուցում կլինի մի բանակի համար, որը բոլշևիզմի դեմ կռվելու միակ ընդունակ բանակն է ամբողջ աշխարհում»[64]։

Իմպերիալիստները Թուրքերին ուղղեցին Սովետական Ռուսաստանի դեմ։ Նախատեսված էր Հայաստանը գրավելուց հետո հարձակվել Սովետական Ադրբեջանի վրա, որը, բնականաբար, կոնֆլիկտի մեջ կներքաշեր Սովետական Ռուսաստանին։ Սովետական Ադրբեջանում Լենքորանի և Գանձակի խռովությունները, Թուրքական բանակի հակասովետական գործունեությունը Հայաստանում, Բաթումում, Ախալքալաքում, Ախլցխայում և Նախիջևանում, Թուրքերի մասնակցությունը դաշնակների կազմակերպած փետրվարյան խռովությանը և այլն, այդ նպատակն էին հետապնդում։

Անգլիական «Դեյլի Հերալդ» թերթը 1920 թ. նոյեմբերի 13-ին հաղորդում է. «Անտանտի նախնական պլանն այն էր, որ Հայաստանին և Վրաստանին օգտագործի Բաքուն գրավելու համար, բայց Քեմալը, սպասածին հակառակ, իրեն ցույց տվեց ավելի ուժեղ։ Թուրքական բանակը խրվեց Հայաստանի սիրտը... Սրանով վերջանում է հին քաղաքականությունը։ Պարզ է, որ թույլ Հայաստանը չէր կարող Բաքվից դուրս քշել կարմիրներին։ Ո՞վ կարող էր անել այդ։ Ինչո՞ւ ոչ Քեմալը։ Հարկավոր էր ճանաչել Քեմալին, նրան փոխհատուցում տալ..., և նա կհամաձայնվի դուրս քշել կարմիրներին Բաքվից»[65]։

Բ. Լեգրանը, նկատի ունենալով այդ դիտավորությունները, գրում է. «Թուրքերի այդ ձգտումների բավարարումը քեմալականների իմպերիալիստական միտումների ուժեղացման վտանգ կստեղծի... Կարսը Հայաստանի ձեռքում՝ Հայաստանին չի դարձնի իմպերիալիստական երկիր, իսկ Կարսը Թուրքիայի ձեռքում՝ քեմալականների փոփոխված տրամադրության պայմաններում, կարող է բազայի դեր խաղալ։ Միանգամայն ակներև է, որ այդպիսի բազայի ստեղծումը Ռուսաստանի համար որոշակի սպառնալիք է ներկայացնում, դա Սովետական Ռուսաստանի շահերին դեմ է»[66]։

Սովետական Ռուսաստանը դաշնակցականների կառավարությանը իր օգնությունն առաջարկեց, բայց մերժում ստացավ։ Նրանց օրգան «Հառաջը» 1920 թ. նոյեմբերի 20-ին գրեց. «Իր փրկության համար Հայաստանն ունի միայն մի ճանապարհ, անմիջապես գտնել ընդհանուր լեզու իր հարևան Թուրքի հետ։ Հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն։ Նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

Այդ «օրիենտացիայի» ծնունդն էր Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հակաժողովրդական պայմանագիրը։ Նշենք նաև, որ Ալեքսանդրապոլում և նրա գավառներում Թուրքերը սպանեցին և գերեվարեցին շուրջ 150 հազ. հայ։ Միայն Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը փականք դրեց Թուրքիայի կառավարողների հայաջինջ ախորժակի վրա։

Սակայն Անկարան իր զավթողական նկրտումներից չէր հրաժարվում։

Քաջատեղյակ Թուրքական կառավարության ձգտումներին, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհեյմը դեռ պատերազմի նախօրյակին Թուրքիայի կառավարության ղեկավար Սայիդ Հալիմ փաշային խոստումներ էր տալիս, որպեսզի Օսմանյան կայսրությունը, առանց ժամանակ կորցնելու, պատերազմի մեջ ներգրավվի։ «Կովկասը ձեզ տալով,— ասում էր նա,— ձեր առաջ ուզում ենք Թուրանի ճամփան բացել»[67]։

Այսպիսով, պանթուրքիստական ծրագրերի իրականացումը հանգեցնելու էր հայ ժողովրդի բնաջնջմանը։ Այդ նկատի ունենալով Ջ. Բրայսը Լորդերի պալատում հայտարարեց. «Կոտորածները քրիստոնյա հայերի դեմ մուսուլմանների ատելության պոռթկում չէր։ Ամեն ինչ իրականացվում էր համաձայնեցնելով կառավարության հետ և հետևանք էր ոչ թե կրոնական մոլեգնության, այլ քաղաքական նկատառումների։ Կառավարությունն

ուզում էր ազատվել ոչ մահմեդական ժողովուրդներից, որոնք խանգարում էին կայսրության միատարրությանը...»[68]։

Պակաս կարևոր չէր նաև հետևյալ գործոնի նշանակությունը. կայսրությունում Թուրքերը փոքրամասնություն էին կազմում, ամբողջ ազգաբնակչության միայն 1/3-ը, իսկ «պետության միության համար» անհրաժեշտ էր, որ նրանք մեծամասնություն կազմեին։ Երբ Թուրքերի մեջ զարթնեց ազգայնության գաղափարը, նրանք դառնությամբ տեսան, որ Թուրքիայում կամ գեթ նրա արևելյան մասում իսկական Թուրք գրեթե չկա։ Ասիական Թուրքիայում քրդերը, հայերը, հույները, արաբները, սիրիացիները և մյուս ժողովուրդները կազմում էին ազգաբնակչության ավելի քան 2/3-ը։

Քրիստոնյա և մահմեդական մյուս ժողովուրդների Թրքացումը կամ բնաջնջումը նպատակ ուներ ապահովելու Թուրքերի տեսակարար կշռի վճռական մեծացում։

ԵրիտԹուրքերը, կազմակերպելով հայերի ցեղասպանությունը, միաժամանակ նպատակ ունեին տիրանալու նրանց ունեցվածքին և օգտագործելու այն ինչպես ռազմական ծախսերը, այնպես էլ մահմեդական քաղցած բնակչությանը բավարարելու համար։ ԵրիտԹուրք գործիչ Նայիմ բեյը գրում էր. պատերազմը նոր էր սկսվել, երբ «Թուրքիայում ծայր առան քաղցն ու Թշվառությունը։ Այս Թշվառներին (Թուրքերին) խաբել, կշտացնել էր պետք, և այդ կարող էին անել հայերի Թողնելիք ապրանքներն ու դրամը։ Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Սվազի նահանգներում հայերի ջարդ ու կողոպուտ սկսվեց։ Այս զբաղմունքը ժողովրդին ամեն ինչ մոռացնել էր տալիս»[69]։

Գերմանացի Էմիլ Լենկիելը գրում է. «Պատերազմը շարունակելու համար օսմանյան կառավարությունը դրամի կարիք ուներ։ Նա Գերմանիայի դաշնակիցն էր, սակայն ռեյխը ինքը դրամի կարիք ուներ։ Հայերը հայտնի էին որպես Օսմանյան կայսրության դրամատերեր։ Նրանցից շատերը հարուստ էին, և գերմանացիները համոզվեցին, որ նրանց հարստությունը Թուրքերին պետք է պատերազմի առաջին երկու տարիներին իրենց նյութապես ապահովելու»[70]։

Պարտվելով Բալկանյան պատերազմում, «երիտԹուրքերը,— ինչպես իրավամբ նշում է Ա. Ալպոյաճյանը,— փոխանակ պարտության պատճառներն իրեն հնացած քաղաքական համակարգի և տնտեսական ապրելակերպի ու անհիմն ներքին ու արտաքին քաղաքականության մեջ փնտրելու, այն վերագրեցին հպատակ ժողովուրդների «դավաճանությանը», ավելի ճիշտ նրանց ազգային ազատագրական պայքարին... ոչ Թուրք ժողովուրդների նկատմամբ ատելությունը կատաղության վերածվեց...»։ «Որոշվեց ներքին խնդիրները լուծելու ամենադաժան և ամենաանմարդկային եղանակը՝ ազգերի բնաջնջումը...»[71]։

Հայերի բնաջնջման հարցում գերմանական իմպերիալիստների և Թուրքական բուրժուազիայի շահերը համընկնում էին։ Եթե առաջինների համար այդ նշանակում էր շարքից հանել իր մրցակցին՝ հայ բուրժուազիային, ապա երկրորդը դրանով ձգտում էր օսմանյան շուկայի միահեծան տերը դառնալ։ Դրա համար էլ երիտԹուրքերի հայաջինջ քաղաքականությունն արժանանում էր կայզերական Գերմանիայի հավանությանն ու աջակցությանը։

Գերմանական իմպերիալիզմի քաղաքագետներից մեկը՝ Պաուլ Ռոհրբախը, առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց դեռ շատ առաջ, հանդես գալով գերմանական սպաների ժողովում, ասել է, որ Գերմանիան դեմ է Արևմտյան Հայաստանում ռեֆորմների անցկացմանը, որ հայերին պետք է ազատել և փոխադրել Բաղդադի երկաԹուղու շրջանը, իսկ Արևմտյան Հայաստանը բնակեցնել Թուրքերով ու մահմեդական այլևայլ ցեղերով՝ որպես հուսալի պատնեշ Ռուսաստանի դեմ։ Ռոհրբախի կարծիքով, Թուրքիայում անկարգությունների ծնողը հայերն են, և «հրդեհը կանխելու համար պետք է օգտագործել քրդերին»[72]։

Ֆրանսիական «Լա ռեվյու» Թերթը 1916 Թ. հոկտեմբերի 26-ին գրել է. «Գերմանիան Փոքր Ասիայում իր ծրագրերը հայերի միջոցով իրականացնել չկարողանալով..., պարզապես վճռեց նրանց դիակների վրայով հասնել իր նպատակներին»։ Ֆրանսիացի Ռենե Պինոն հայկական եղեռնը անվանեց «գերմանական մեթոդ և Թուրքական գործելակերպ»։

Փաստ է նաև այն, որ հայկական կոտորածների առաջին տարելիցի օրերին կայզերը Թալեաթին պարգևատրեց «Սև արծիվ» շքանշանով։

* * *

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ավարտից և օտարերկրյա ինտերվենցիայի ջախջախումից հետո նորաստեղծ սովետական պետությունը դարձավ մի այնպիսի ուժ ու գործոն, որը Թուրքիայի կառավարող շրջաններին հարկադրեց ժամանակավորապես օրակարգից հանել իրենց պանթուրքիստական պլանները։ Բայց միայն ժամանակավորապես։ Իսկ երբ Գերմանիայում իշխանության գլուխ անցան նացիոնալ-սոցիալիստները, պանթուրքիզմի գաղափարներով սնված թուրքական կառավարող այդ նույն շրջանները զգացին, որ աշխարհում առաջատար տեղ են գրավում հոգեհարազատ ուժերը։ Եվ նրանք մեծագույն եռանդով լծվեցին ֆաշիզմի մարդատյաց ռասիստական քաղաքականության կառքին։ Ինչպես ֆաշիստներն էին փառաբանում գերմանական ազգը, այնպես էլ թուրք կառավարիչները՝ թուրքական ազգը։ Թուրքիայում երկար տարիներ կառավարության ղեկը ստանձնած ժողովրդահանրապետական կուսակցության ծրագրում ուղղակի ասված էր. «Թուրք ազգը մյուս ազգերից բարձր է։ Նա ունի մի շարք հատուկ որակներ, որոնք փոխանցվում են ժառանգաբար»[73]։

Համբուրգյան «Դի Ցայտունգ» շաբաթաթերթը 1984 թ. դեկտեմբերի 7-ին գրեց, որ հայկական ցեղասպանության մասին «Հիտլերը քաջատեղյակ էր, որովհետև նրա մերձավոր աշխատակիցներից մեկը... դոկտոր Մաքս Էրուին ֆոն Շոյքներ-Ռիխտերն էր, Գերմանիայի նախկին հյուպատոսը Էրզրումում, որի զեկուցագրերը հայերի սարսափելի կոտորածների մասին պահպանվել են»։ Թերթն այն միտքն է արտահայտում, որ հայկական կոտորածները Հիտլերի համար օրինակ են ծառայել հրեաների զանգվածային ջարդերը կազմակերպելու համար։ «Բռնագաղթեր պատերազմի ժամանակ, ոչնչացում աշխատանքի միջոցով, մահվան երթեր, հետապնդվողներին կոտորելու նպատակով ուրիշ ժողովուրդների գրգռում», կլիմայի քմահաճույքների, սովի ու համաճարակի օգտագործում, «հմակենտրոնացման ճամբարների ստեղծում և բռնագաղթվածների սեփականության (յուրացման միջոցով) անամոթ հարստացում»։

Հիտլերը հիացմունքով էր խոսում երիտթուրքերի ղեկավարների մասին։ Նա փառաբանում էր Էնվերին։ 1943 թ. նա Թուրքիային նվիրեց Թալեաթի աճյունը, որը նույն տարվա փետրվարի 25-ին մեծ շուքով երկրորդ անգամ հողին հանձնվեց

Ցուրիխի էպետիե բլրի վրա, թուրք ազգային հերոսների կողքին։ Գերեզմանաթմբին դրված պսակներից մեկի վրա կար հետևյալ մակագրությունը. «Պետական մեծ մարդուն և հավատարիմ բարեկամին։ Թուրքիայի կառավարությունից»։

Հայտնի է, որ 1918 թ. Թալեաթն ու իր զինակիցները ճողոպրեցին Կ. Պոլսից՝ դատաստանից խուսափելու համար։

Թուրք հասարակական գործիչ, հետագայում կառավարության անդամ Ռ. Խալիտը այդ օրերին հրապարակած «Պարոննե՛ր, դեպի ո՞ւր» հոդվածում, նկատի ունենալով երիտթուրքերի լիդերների այդ փախուստը, գրում էր.

«... Անառակ որդիներ, դեպի ո՞ւր։

Զարկին, կոտորեցին, քանդեցին, սպանեցին, այրեցին և մեր դիակները մեջտեղ գցելով օձերի պես փախան...

Ընդդիմադի՞ր է՝ վայր գցեք, հրապարակագի՞ր է՝ խփեք գլխին, թո՞ւրք է՝ դեպի մահ առաջնորդեք, հո՞ւյն է՝ դրամ ուզեք, հա՞յ է՝ գլուխը կտրեք, արա՞ր է՝ կախաղան հանեք...

Մարդկանց խմբերով լեռները տանելով սրի քաշեցին, անմեղ հայրեր և որդիներ սպանեցին, Անատոլիայում այրի կանանցից ու երեխաներից բացի մարդ չթողեցին...

... Խանութները քանդելով կախաղաններ պատրաստեցին, օջախներ մարեցին, քաղաքներ քանդեցին... ոչ ծերին խնայեցին, ոչ մանուկին... ոչ գութ ունեցան և ոչ խիղճ»[74]։

Հետաքրքիր է նաև նշել, որ երբ Թալեաթը Բեռլինում սպանվեց, նրա դիակը հինգ օր անթաղ մնաց, որովհետև Կ. Պոլսի կառավարությունը չհամաձայնվեց այդ չարագործին Թուրքիայում թաղել։

Անգլիացի գիտնական Ք. Ուոկերը ևս շատ ընդհանուր գծեր է տեսնում պանթուրքիզմի ու ֆաշիզմի միջև՝ նրանք երկուսն էլ պաշտպանում են բարձր ռասայի գաղափարը և գտնում են, որ պետք է ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր այդ ռասային չեն պատկանում[75]։

Հատկանշական է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վերևում հիշատակված Ռոհրբախը նշանակված էր ռազմագերի հայերի շրջանում լրտեսական գործունեությամբ զբաղվող ծառայության պետ։ Օսվենցիմի մահվան ճամբարի պետ Ռ. Հեսը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կռվել էր Թուրքիայում, ականատես եղել հայերի

կոտորածներին և հետագայում օգտագործեց մարդկանց զանգվածային ոչնչացման երիտթուրքական փորձը։

«Նովոե վրեմյա» պարբերականը 1984 թ. դեկտեմբերի 4-ին գրել է.

«Հրեաների ջարդերի (դեմ բողոքելու) համար Արմին Վեգները ձերբակալվեց։ «Ինձ ձերբակալեցին այն պահին,— գրեց նա,— երբ ես նոր էի ավարտել հայերի մասին իմ վեպի այն մասը, որտեղ նկարագրվում էր թուրքական բանտում հայերի կրած տանջանքները։ Շուտով այդ բոլորը ես ինձ վրա զգացի»»։

Նշենք նաև, որ թուրքական ֆաշիզմի կազմակերպությունը՝ «Գորշ գայլերը», սկզբնավորվել է էնվերի կողմից ստեղծված երիտասարդական կազմակերպությունից, որի տարբերանշանը գորշ գայլն էր։

Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման նախօրյակին՝ 1941 թ. հունիսի 18-ին, Թուրքիան Գերմանիայի հետ կնքեց բարեկամության և չհարձակվելու պայմանագիր։ Սակայն հենց պատերազմի սկզբից «չեզոք» Թուրքիան աջակցում էր ֆաշիստներին, թշնամական կեցվածք ընդունում ՍՍՀՄ-ի նկատմամբ։ Նա ձգտում էր ֆաշիզմի օգնությամբ Սովետական Միությունից խլել Ղրիմը, Կովկասը, Անդրկովկասը, Աստրախանը, Կազանը, Սիբիրը։

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1947 թ. հոկտեմբերի 27-ի նստաշրջանում սովետական ներկայացուցիչը հայտարարեց, որ պատերազմի տարիներին Թուրքիան «պահում էր իր, այսպես կոչված, չեզոքությունը, շահավետ առևտուր անելով Գերմանիայի հետ և սպասելով այն պահին, թե երբ ինքը կկարողանա, հաջողության դեպքում, առյուծից իր բաժինը թոցնել»[76]։

Սևաստոպոլի անկումից հետո թուրքերը սկսեցին զորքեր կենտրոնացնել Անդրկովկասի սահմանին։ Հապճեպ զորահավաք կատարվեց, ձևավորվեցին նոր զորամիավորումներ։ Սովետական Միության մարշալ Ա. Գրեչկոն գրել է. «Գերմանական գլխավոր հրամանատարությունը հույս ուներ, որ Անդրկովկաս դուրս գալուն պես Թուրքիան հարված է հասցնելու Սովետական Կովկասին հարավից»[77]։

«1942 թ. կեսերին,— գրում է բանակի գեներալ Ս. Շտեմենկոն,— ոչ ոք չէր կարող երաշխավորել, որ նա (Թուրքիան) հանդես չի գա Գերմանիային դաշնակցած։ Իզուր չէ, որ այն ժամանակ Սովետական Անդրկովկասի սահմանի վրա կենտրոնացվել էր թուրքական 26 դիվիզիա»[78]։

1942 թ. մարտի 23-ին «Ժողովրդի ձայն» թերթը, նկատի ունենալով «Ենի Սաբահ» թերթում տպված մի հայտարարություն, զգուշացնում էր, որ Թուրքիային իր կողմը գրավելու համար Գերմանիան նրան խոստացել է Սիրիան, Իրաքը և Կովկասը[79]։

Ֆաշիստական ռադիոկայանը Հիտլերի անունից թուրքերին հրավիրում էր, օգտվելով առիթից, հարձակվել Հայաստանի վրա։

Սովետական Միության վրա հարձակման ժամկետ նշանակված էր 1942 թ. նոյեմբերը՝ Ստալինգրադը ֆաշիստների կողմից գրավելուց անմիջապես հետո։ Բայց Ստալինգրադը կանգուն մնաց, և այդ պլանը ձախողվեց։ Այն ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն գերմանական դեսպան ֆոն Պապենին հայտարարեց. «Որպես թուրք տենչում եմ Ռուսաստանի ոչնչացմանը, դա թուրք ժողովրդի նվիրական երազանքն է... Ռուսական հարցը կարող է լուծվել Գերմանիայի միջոցով միայն, եթե սպանվի Ռուսաստանում բնակվող բոլոր ռուսների մոտ կեսը»[80]։

Թուրքական ֆաշիստ Թեֆիկ Քեմալը 1942 թ. սեպտեմբերի 26-ին «Սոնտելեգրաֆ» թերթում գրել է. «Վոլգան մեր գետն է, որի մեջ մեր նախնիները դարեր շարունակ ջրում էին իրենց ձիերը»։

1941 թ. հուլիսին «Բոզքուրդ» թուրքական ամսագրում տպագրվեց «Թուրքիզմը սպասում է» հոդվածը՝ «Մեծ Թուրքիայի» քարտեզի հետ միասին, ուր Թուրքիայի տարածքի մեջ ընդգրկվել էին Անդրկովկասի և Միջին Ասիայի սովետական հանրապետությունները։ Թուրքերն ակնկալում էին տիրանալ ՍՍՀՄ-ի տարածքի մոտ 50 տոկոսին։ Շուտով հրատարակվեց «Մեծ Թուրքիայի» մի նոր քարտեզ, որով Թուրքիայի սահմանները ձգվում էին Նեղոսից մինչև Սախալին[81]։

Մեծ Թուրանը, ըստ թուրքական զինվորական քայլերգի, հետևյալն է.

«Եկեք, արշավանքը սկսվեց,
Տղերք, Կովկասի վրա ենք հարձակվում մենք,
Թուրանն է սպասում մեզ։
Մի կողմից՝ Կահիրե,
Մյուսից՝ Բաթում, Կարս,

Մի կողմից՝ Հինդ, Աֆղանստան,
Մյուսից՝ Մարոկկոն է սպասում մեզ»[82]։

Կ. Պոլսի «Բոզ քուրդ» թերթը 1942 թվականի մարտի 5-ին գրել է. «Ո՞վ ենք մենք։ Մենք գորշ գայլեր ենք։ Ո՞րն է մեր գաղափարախոսությունը։ Գորշ գայլի թուրքիզմը։ Ո՞րն է գորշ գայլերի (թուրքերի) հավատամքը։ Նրանք հավատում են, որ թուրք ցեղը և թուրք ազգը ուրիշ ցեղերից կամ ազգերից առաջնել են։ Ո՞րն է նրանց գերազանցության աղբյուրը. թուրքական արյունը։ Արդյո՞ք թուրքն ի ծնե գերազանց է։ Թուրքը գերազանց է ի ծնե»։ «... Գորշ գայլերը պանթուրքի՞ստ են։ Այո։ Գորշ գայլ թուրքերի սրբազան նպատակն է տեսնել թուրքական պետությունը 60 միլիոնանոց ազգ դարձած։ Ի՞նչ պետք է լինի քո արդարացումը (խնդիրը) դրա համար։ Գորշ գայլերը վաղուց են հռչակել «արդարությունը չի տրվում, այլ բռնագրավվում է» սկզբունքը։ Պատերա՞զմ։ Այո, պատերազմ, եթե անհրաժեշտ է...»[83]։

Կ. Պոլսում լույս տեսած «Իսլամական հանրագիտարանում» կարդում ենք. «Երևանի հայերը և շրջակայքի հայությունը օտարամուտ են։ Բնիկ տեղացին թուրքն է, որը տեղահանված ու փոխադրված է։ Հետևաբար, Երևանը Թուրքիայի մի մասն է կազմում»[84]։

Հարկ է նաև նշել, որ թուրքական շովինիզմն ու ռասիզմը համակողմանի շարունակություն և զարգացում ստացան երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տասնամյակներին։ Պատերազմի ավարտից հետո «Բոյուկ Տողու» թերթը թուրքերին կոչ էր անում Արաքսի արևելյան ափին խրախճանք սարքել։

1960 թ. լույս տեսած «Թուրք ջիլիյե Գիրիշ» գրքում կարդում ենք. «Թուրքիայի 20 միլիոնանոց դինամիկ համախմբումը և հյուսիսի ու արևելքի 30 միլիոններին (թուրքական ցեղերին) երկար զսպել հնարավոր չէ։ Եթե թուրքիզմն ու Թուրքիան պիտի ապրեն, ապա պետք է առանց ժամանակ կորցնելու միանան և կազմեն 60 միլիոնանոց թուրք ազգ»[85]։

1966 թ. «Նյու Յորք Թայմսը» տպագրեց «Ռուսաստան, Չինաստան և Թուրքիա» հոդվածը, որտեղ կան հետևյալ տողերը. «Եթե ցեղասպանության մի նոր շարժում ծնվի, ապա ասիական երկրների միակ իրավատերն է դառնալու Թուրքիան և ոչ թե Սովետները կամ Չինաստանը»։

«Թուրքիան տեր է դառնալու ոչ միայն ռուսական Ասիային, այլև Չինաստանի մի շարք հողերին։ Փոքր Ասիան պատկանում է թուրքերին, և նրանք աշխարհում ասիական շարժման առաջապահն են»[86]։

Ամերիկյան լրագիրը նկատի ունի մեր օրերում պանթուրքիզմի նոր բռնկումը, որի ընդգրկումները պետական սահմաններ չեն ճանաչում։ Երբ համաթուրանականության հիմնադիր, սալոնիկցի հրեա Մոյիս Քոհենը, վարդագույն ապագայի հույսերով գծում էր թուրանական աշխարհակալ պետության տասնյակ հազարավոր կիլոմետրեր ձգվող սահմանները, այն ժամանակ, չնայած թուլացած ու ստորացած, դեռևս կանգուն էր Օսմանյան կայսրությունը։ Մեր օրերում այդ կայսրությունը այլևս գոյություն չունի, կա միայն մի կիսանկախ պետություն, որն իր ինքնուրույնությունը կարողանում է քարշ տալ տխրահռչակ «ճոճանակի» քաղաքականության շնորհիվ։ Այդուհանդերձ, թուրքական իշխող դասակարգերն այդպես էլ չեն հրաժարվում աշխարհակալ պետություն ստեղծելու ցնորքից։

* * *

Թուրք-ամերիկյան համագործակցության երրորդ պատճառը Հայկական հարցն է։ Ըստ որում, եթե Թուրքիան ձգտում է ԱՄՆ-ի միջոցով վերջնականապես թաղել այդ հարցը, ապա Միացյալ Նահանգները Հայկական հարցն օգտագործում են Թուրքիային հնազանդության մեջ պահելու համար։ Պատահական չէ, որ վերջին տարիներին թուրք-ամերիկյան հարաբերություններում ու բանակցություններում միշտ առկա է Հայկական հարցը՝ իր զանազան դրսևորումներով։

Երկու պետությունների համագործակցության զարգացման նշանաբանով, 1985 թ. փետրվարին Վաշինգտոնում անցկացվեց «Թուրքիայի ամերիկացի բարեկամները» ընկերության համաժողովը։ Ռեյգանի հղած ողջույնի հեռագրում ասված էր, որ Թուրքիան ԱՄՆ-ի ամենահավատարիմ բարեկամներից մեկն է։ Պրեզիդենտին հետևեց ԱՄՆ-ի պետական քարտուղարը. «Դնալով երկու երկրների միջև զարգանում է երկար տարիներ շա-

բունակվող բարեկամությունն ու փոխադարձ վստահությունը, որն այժմ ձեռք է բերում ավելի մեծ կարևորություն»[87]։

ԱՄՆ-ի ղեկավարները հավաստիացրին Թուրքիային, որ իրենք ամեն ինչ կանեն, որպեսզի «Հայկական հարցը» չխանգարի երկու պետությունների դաշնակցային հարաբերություններին։

1985 թ. ապրիլի սկզբներին պաշտոնական այցով Վաշինգտոն ժամանեց Թուրքիայի կառավարության նախագահ Թ. Օզալը։ Այդ այցելության նպատակներից մեկը Հայկական հարցի շուրջ ԱՄՆ-ում ծավալված շարժումների ու քննարկումների խափանումն էր։ Եվ դա Օզալին հաջողվեց։ Այցելության ժամանակ նա հանդիպումներ ունեցավ Ռեյգանի, Շուլցի, Բուշի, Ուայնբերգերի և այլ պաշտոնական անձանց հետ։ Նրանք բոլորը Օզալին հավաստիացրին, որ «հայերի հարցի վերաբերյալ կոնգրեսի վերջին ժամանակների ընդունած որոշումների առթիվ Թուրքիայի անհանգստությունը հասկանալի է։ Մենք ամեն ինչ կանենք այդ որոշումները վերանայելու համար»[88]։

«ՆԱՏՕ-ին հակառակորդ դաշնակցային կազմակերպության ուժերն,— ասաց Ռեյգանը,— օրեցօր վտանգավոր չափերով աճում են։ Ուստի հարկավոր է զարգացնել Թուրքիայի և ԱՄՆ-ի ռազմական համագործակցությունը... (Ես) կոնգրեսից կպահանջեմ 1986 թ. ավելացնել Թուրքիային տրամադրվող օգնության չափը»[89]։

Պրեզիդենտի խոստովանությամբ Թուրքիան Ամերիկայի դաշնակիցն է, իսկ «դաշնակիցների հարաբերությունները կարևոր են։ Եթե Ամերիկան օգնում է Թուրքիային, հասկանում է, որ իրականում դրանով ինքն իրեն է օգնում։ Այդ պատճառով էլ ամերիկյան կոնգրեսի կողմից հայերի ցեղասպանության մասին օրենքի վավերացման ջանքերը չեն համապատասխանում Ամերիկայի շահերին»[90]։

Ըստ Կ. Ուայնբերգերի, Թուրք-ամերիկյան հարաբերությունները «գտնվում են իրենց ոսկեդարում»[91]։

Ամերիկյան երկդիմի քաղաքականության համար բնորոշ են հետևյալ փաստերը։

1980 թ. ապրիլի 15-ին Ռեյգանը նամակ ուղարկեց Բոստոնի հայկական թերթերից մեկին, որտեղ գրում է, թե «65 տարի առաջ պատմության տարեգրքում գրվեց ամենամեծագույն ողբերգություններից մեկը, երբ 1,5 միլիոն անմեղ հայեր՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ ոչնչացվեցին Արարատի հովանու տակ... 80-ական թվականները,— շարունակում է Ռեյգանը,— պետք է դառնան մի ժամանակաշրջան, երբ ամերիկահայերի ձայնը հասնի մինչև կառավարությանը, և ամերիկացիներն ու «ազատ աշխարհի» իր դաշնակիցները որոշում ընդունեն, որ 1915 թ. ողբերգությունը երբեք չպետք է կրկնվի։

Ես միանում եմ ամերիկյան հայկական համայնքին, 1915 թ. զոհերի հիշատակը հանդիսավորությամբ նշելու համար»[92]։

Իսկ 1985 թ. հունիսի 3-ին, երբ ներկայացուցիչների պալատը ձայների $^{2}/_{3}$-ը չապահովելու հետևանքով չընդունեց «Հայկական բանաձևը», թուրքական «Հուրիեթ» թերթի կազմակերպած հարցազրույցում Ռ. Ռեյգանը միանշանակ հայտարարեց՝ կոնգրեսը ճիշտ վարվեց, որ այդ բանաձևը չընդունեց։

Բնութագրական է, որ ԱՄՆ-ի կոնգրեսում «Հայկական բանաձևի» (այդպիսի անուն է ստացել «Ապրիլի 24-ը ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր հռչակելու մասին» բանաձևի նախագիծը) քննարկման առնչությամբ Օզալը հայտարարեց, որ հազիվ թե Միացյալ Նահանգները ցանկանան հանուն ամերիկահայերի մի քանի հարյուր ձայների կորցնել բարեկամությունը 50 միլիոն թուրքերի հետ[93]։

Օզալն իրավացի էր. նա լավ է ճանաչում ԱՄՆ-ի քաղաքական լիդերներին։ Եվ իսկապես, երբ 1985 թ. դեկտեմբերի 10-ին կոնգրեսում նորից քննարկման դրվեց «Հայկական բանաձևը», Շուլցը կոնգրեսին մի նամակ հղեց, որով հիշեցնում էր, թե ինչ ծանր հետևանքներ կունենա այդ բանաձևի ընդունումը, իսկ Ռեյգանը կոնգրեսմեններին հավատացնում էր, որ այդ բանաձևի ընդունումը կվնասի Արևմուտքի անվտանգությանը[94]։

Ահա ԱՄՆ-ի ղեկավարների այս երկդիմի վարքագիծը նկատի ուներ «Բոստոն գլոբ» թերթը, երբ 1985 թ. մայիսի 18-ին գրեց, թե ամերիկյան ժողովուրդը պետք է ներողություն խնդրի հայ ժողովրդից՝ ամերիկյան պաշտոնատար անձանց տգեղ գործողությունների համար։

Այսպիսով, մեր օրերում ևս Հայկական հարցը դարձել է քաղաքական առևտրի առարկա. կշեռքի մի նժարին դրված են հումանիզմն ու հասարակական կարծիքը, իսկ մյուսին՝ սոցիալիստական երկրների դեմ ընդհանուր պայքարում իմպերիալիստական խմբավորումների ստրատեգիական շահերը։

Սկսած 1983 թ. ԱՄՆ-ում Հայկական հարցը նկատելի ակ-

տիվությամբ քննարկվում է հասարակության ամենատարբեր խավերում։ Մեծ արձագանք գտավ պետական դեպարտամենտի «Բյուլետենում» «Հայկական ահաբեկչության էսքիզներ» հոդվածի տպագրումը, որի ծանոթագրություններում նշված էր՝ պետական դեպարտամենտը չի պնդում, որ Թուրքական կառավարությունը հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն է իրականացրել։ Այդ առթիվ Ռեյգանի ու Շուլցի հասցեով ստացվեցին բողոքի բազմաթիվ նամակներ։ Նամակագիրները գտնում էին, որ «չնայած Թուրքիայի հետ բարեկամության, չպետք է մոռանալ հայերի գենոցիդի մասին, քանի որ բոլոր և ամեն տեսակի նկատառումներով գենոցիդի ժխտումը բռնություն է ոչ միայն հասարակական խղճի, այլ նաև պատմական իրականության նկատմամբ»[95]։

1984—1987 թթ. ԱՄՆ-ի կոնգրեսում բուռն քննարկումներ տեղի ունեցան «Ապրիլի 24-ը գենոցիդի զոհերի հիշատակի ազգային օր» հայտարարելու շուրջը։

Պետական դեպարտամենտը այդ որոշման ընդունումը համարում էր «անպատասխանատու» քայլ, որովհետև այն «ունենալու էր նեգատիվ հետևանքներ» և վնաս էր հասցնելու Թուրք-ամերիկյան հարաբերություններին։

Այնուամենայնիվ, 1984 թ. հոկտեմբերին բանաձևն ընդունվեց ներկայացուցիչների պալատի կողմից։ Սակայն կոնգրեսի որոշումը պրեզիդենտը չվավերացրեց։

Օզալը կոնգրեսի նման դիրքորոշումը բնութագրեց որպես «անմիտ քայլ», որը կարող էր խանգարել մեծ ջանքերով ձեռք բերված Թուրք-ամերիկյան հարաբերություններին։

Ամերիկյան հասարակայնության կարծիքը փոխելու նպատակով Թուրքիան անցավ լայնածավալ պրոպագանդայի։ Ոտքի հանվեցին «գիտական» ողջ պոտենցիալը, պրոպագանդայի բոլոր միջոցները, որոնք փորձում էին աշխարհին համոզել, թե ոչ Արևմտյան Հայաստան է եղել, ոչ գենոցիդ և ոչ էլ Հայկական հարց։ Հայկական հարցը նենգափոխվում է ահաբեկչությամբ, իսկ վերջինս օգտագործվում է որպես հակասովետական զենք։

Թուրքական և Արևմուտքի Թուրքամետ, հակահայկական պրոպագանդայի հիմքում ընկած է հակասովետիզմը։ Այդ պրոպագանդան Հայկական հարցի առաջ քաշումը դիտում է որպես

Թուրքիայի վիճակի անկայունացման և ՆԱՏՕ-ի կազմալուծման գործոն։ Դրա համար էլ Ռեյգանի վարչակազմը ոչ միայն չի արգելում, այլ նաև խրախուսում է Թուրքական և Թուրքամետ պրոպագանդան։ Այս գործում մեծ է «ԱՄՆ-ում Թուրքական համայնքների ասոցիացիայի» դերը, որ միավորում է 57 միություն ու կազմակերպություն։ Միայն Նյու Յորքում առկա են Թուրքական 17 միություններ։ Ասոցիացիան գործում է Թուրքիայի դեսպանության օգնությամբ և ղեկավարությամբ։ Նա է նյութեր մատակարարում ամերիկյան մամուլին, կազմակերպում հակահայկական, հակահունական և հակասովետական ելույթները, ցույցեր և սիմպոզիումներ։

«Արևմուտքի շատ պետություններ,— գրում է սփյուռքահայ առաջադեմ գործիչ Հ. Մադեյանը,— որոնք անցյալում այնքան անգամ և անմարդկային ձևով շարաշահել են հայության հորդահոս արյունը, ուրացել իրենց հանդիսավոր խոստումները, այսօր էլ ուրանում են մեր հայկական դատը և զինակիցներ ու պաշտպաններ են դարձել ցեղասպան ֆաշիստ Թուրքական պետությանը՝ ընդդեմ մեր ազգային դատի»։

Հայկական հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը նա բնութագրում է հետևյալ կերպ. «Հայության նոր ցեղասպանություն երազող ֆաշիստ և ցեղապաշտ Թուրքիայի զինակից և պաշտպան, նրան ֆինանսավորող և զինող, նրան Թուրանական իր ծրագրերի գործադրմանը մղող, մեր բռնագրավված հողերի վրա, առաջին հերթին, մեր Մայր հայրենիքի դեմ ուղղված ատոմային զենքի բազաներ ստեղծող, հայության դեմ գործած Թուրքական ցեղասպանությունն ուրացող, մեր հայկական ազգային արդար դատի դեմ թշնամական վերաբերմունք որդեգրած և, վերջապես, իր կայսերապաշտ ծրագրի համար աշխարհի խաղաղությանը սպառնացող»[96]։

Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի առաջադեմ մարդիկ դատապարտեցին Ռեյգանի կառավարության շահամոլ քաղաքականությունը։ Ամերիկյան մի խումբ դասախոսներ, հանդես գալով Հայկական հարցում Վաշինգտոնի պաշտոնական վարքագծի դեմ, գրում էին. «Ամերիկայի կառավարությանը ձեռնտու չէ հայերի պահանջների պաշտպանությունը։ Նա միայն ձգտում է իր Թուրք դաշնակիցներին ազատել դժվարություններից։ ԱՄՆ-ի դերը հայ ժողովրդի պատմության լուսաբանման գործում կարելի է հա-

մարել, եթե ոչ լրիվ սև, ապա լավագույն դեպքում՝ գորշագույն, «...հայկական ահաբեկչության մասին» թուրքական կառավարության առաջ քաշած փաստարկները և ձեր (ԱՄՆ-ի կառավարության) կողմից դրանց կրկնումը, թե դրանում Սովետական Միությունը մասնակցություն ունի, հերյուրանք է և շատ է նման նեոնացիստների այն պնդմանը, թե հրեաների ոչնչացումը երբեք չի եղել։

Դուք հայկական պրոբլեմներին մոտենում եք լոկ որպես գեոպոլիտիկական խնդիր, չնայած այստեղ կա նաև ընդգծված բարոյական խնդիր։

Պարզապես հայերի շահերը ձեր շահերին չեն համընկնում»[97]։

Սա միանգամայն ճիշտ և սպառիչ գնահատական է։

Սակայն ամերիկյան որոշ վաճառված գիտնականներ վերջին տարիներին մեծ ջանքեր են թափում հայկական ցեղասպանության գործում մեղադրելու Ռուսաստանին։ Նրանք նշում են, որ հայերը, իբր, Օսմանյան կայսրությունում երջանիկ կյանքով էին ապրում, բայց ահա դեպի «տաք ջրեր» ձգտող Ռուսաստանը հայերին պայքարի հանեց Թուրքիայի դեմ, որի ուղղակի հետևանքը եղավ ցեղասպանությունը։

Մինչդեռ, անկախ ցարիզմի գաղութատիրական ձգտումներից, Ռուսաստանը միակ գործոնն էր, որի շնորհիվ հնարավոր եղավ հայերի գոնե մի մասի փրկությունը։

«Մտածում եմ և ազգովին պետք է մտածենք,— գրում է սփյուռքահայ գրող Ս. Սիմոնյանը,— 1945 թ. Մայիսի 9-ի մեծագույն հաղթանակի մասին, երբ մեր փոքր, բայց շատ թանկագին հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, փրկվեց հայկական վերջին ցեղասպանությունից՝ թուրքական անխուսափելի արշավանքից, եթե հաղթեր ֆաշիզմը...

... առաջարկում եմ, որ արտասահմանի բոլոր հայերը՝ իրենց բոլոր կազմակերպություններով, մի ընդհանուր հանրագրով շնորհավորեն Սովետական Միության՝ Հայրենական պատերազմի Մեծ հաղթանակի 40-ամյակը և այդ առիթով խնդրեն... ժողովուրդների արդար դատերի պաշտպան Սովետական մեծ Միությունից՝ կանգնել պաշտպան հայ ժողովրդի բոլոր իրավունքների՝ հայ ժողովրդի ամբողջությունը իր կողքին ունենալու մինչև հավերժություն»[98]։

* * *

Այսպիսին է պատմական իրողությունը, իրողություն, որ թուրքական ռեակցիոն պատմագրությունը միտումնաբար գլխիվայր է շուռ տալիս, որովհետև այդ պատմագրությունն արտահայտում է Թուրքիայի ամենառեակցիոն և շովինիստական խավերի շահերը։ Իսկ այդ խավերը ձգտում են արտաքին վտանգի սպառնալիքի, շովինիզմի ու ռասիզմի խարույկի վրա այրել դասակարգային ընդվզումները։

Այդպես է այժմ և միշտ այդպես է եղել. երբ երկրի ներսում սրվել են դասակարգային ներհակությունները, աշխատավորական լայն զանգվածների դժգոհությունն իրենցից վանելու համար իշխող դասակարգերն ու նրանց ձայնափողերը թուրքերին հրահրել են քրիստոնյաների և, առաջին հերթին, հայերի դեմ։

Արդեն ավելի քան երկու տարի է, ինչ արտասահմանյան հայերը թուրք դիվանագետների նկատմամբ ահաբեկչական գործողություններ չեն կատարում, բայց թուրքական պաշտոնական շրջանների կողմից հակահայկական պրոպագանդան ոչ միայն չի դադարում, այլև ավելի սանձարձակ ու լկտի է դառնում։ Պատճառը նույնն է՝ պրոպագանդիստական այդ արշավը իշխող շրջաններն օգտագործում են հասարակության լայն խավերի ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու, շովինիստական կրքերի բորբոքման միջոցով ազգային միասնության հասնելու համար։

Նրանք այդ չեն էլ թաքցնում։ Ալաջաքյուղում 1986 թ. հուլիսի 2-ին արտասանած ճառում Էվրենը մի քանի անգամ ընդգծեց այդ միտքը և, որպես ընդհանրացում ու պատգամ, հայտարարեց. «Ես միշտ շեշտում եմ ազգի միասնության ու համերաշխության անհրաժեշտությունը, որովհետև միշտ, երբ երկրում գլուխ են բարձրացրել անարխիան, տեռորն ու խլրտումները, մեր առաջ միշտ էլ ծագել են նման (հայկական) հարցեր։ Այդպիսի հարցեր ծագել են ՄԱԿ-ում և այլ համաժողովներում։ Եթե մենք կարողանանք լինել կուռ ամբողջականություն, ապա մեզ համար սարսափելի չի լինի ոչ մի բան, նրանք ոչինչ անել չեն կարող»։

Սա քաղաքական պրագմատիզմ է։ Ասում են, քաղաքական գործիչներն ու դիվանագետները պատմաբաններ չեն և չեն էլ կարող պատմություն ստեղծել։ Բայց նրանք կարող են կեղծել պատմությունը, այն խեղաթյուրելու միջոցով հարմարեցնել ի-

րենց շահերին ու սկզբունքներին։ Այդպես է վարվում նաև պրեզիդենտ Էվրենը։

Բայց արդյո՞ք պրեզիդենտի նման վարքագիծը Թուրքիայի համար շահեկան է։

Հաղիվ թե։

Հայը և Թուրքը հարևաններ են, հարևաններ են այն օրից, երբ Փոքր Ասիայում երևացին սելջուկյան առաջին հրոսակախմբերը։ Այդ հարևանության պատմության մեջ, դժբախտաբար, քիչ տեղ չեն գրավում սև էջերը, Թուրքական իշխող խավերի կողմից հայերին ճնշելու, հարստահարելու, ուծացնելու, կրոնափոխելու, ֆիզիկապես ոչնչացնելու և, նույնիսկ, որպես ժողովուրդ բնաջնջելու փաստերն ու իրադարձությունները։ Սակայն այդ երկու ժողովուրդները, անկախ իրենց ցանկությունից, շարունակելու են ապրել կողք կողքի։ Մինչդեռ նրանց միջև եղած թշնամությունը ծանր է անդրադառնում երկուստեք թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ հոգեբանական առումով։ Հին ճշմարտություն է՝ թշնամանքը լավ բան ծնել չի կարող, թշնամությամբ համակված ժողովուրդը նման է հիվանդի, որը, եթե չի բուժվում, իրեն մահվան է դատապարտում։

Դժբախտաբար, այդ թշնամության հետևանքները տարեցտարի ավելի ակնբախ են դառնում։ Բացարձակապես իրար թշնամի, ավելի ճիշտ, տևականորեն թշնամի ժողովուրդներ չկան։ Այդ թշնամության աղբյուրը ինքը՝ Թուրք ժողովուրդը չէ, այլ նրա տիրապետող վերնախավերը։ Ելնելով իրենց դասակարգային շահերից, նրանց հաջողվում է ատելություն ներարկել հասարակության լայն խավերի շրջանում և այն օգտագործել իրենց շովինիստական ու ռասայական ծրագրերի իրականացման համար։ Հայը լավ է հասկանում, որ Թուրքիայի այսօրվա քաղաքացիներից և ոչ մեկը, այդ թվում իշխանության գլուխ կանգնած անձինք, պատասխանատվություն չեն կրում տասնամյակներ առաջ կատարված ոճրագործությունների համար։

Սակայն Թուրքական կառավարող շրջանները ոչ միայն չեն դատապարտում, այլև չեն ընդունում հայկական ցեղասպանության փաստը։ Դրանով իսկ նրանք կիսում են տասնամյակներ առաջ կատարված ոճրագործության պատասխանատվությունը, դառնում մեղսակից դրանց իրականացնողների հետ։

Եվ այդ արվում է Թուրք ժողովրդի պատվի անաղարտության պաշտպանության դրոշի ներքո։ Իրականում այդ արվում է

Թուրքական կառավարողների ներկայիս քաղաքականությունը արդարացնելու համար։ Նրանք ձգտում են Հայկական հարցում նախաձեռնությունը վերցնել իրենց ձեռքը, ամբողջ ճակատով հարձակման անցնել, օգտագործելով պայքարի ոչ միայն քաղաքական, դիվանագիտական և գաղափարախոսական, այլև ոստիկանական ու դիվերսիոն միջոցները, ամբողջ թափով գործի դնելով նաև պետական տեռորը։

Քաղաքական ասպարեզում Էվրենի վարչակարգը ձգտում է Արևմուտքի պետություններ հետ համագործակցված արտասահմանյան երկրներում խեղդել հայկական հայրենասիրական, առաջադեմ շարժումները, քայքայել Սփյուռքը, կազմալուծել նրա ուժերը։ Թուրքական գործակալները մոտիկից հետևում են Սփյուռքում կատարվող իրադարձություններին ու շարժումներին, լրտեսում ու միջոցառումներ ձեռնարկում դրանք ձախողելու համար։

Գաղափարախոսության և պրոպագանդայի մարզում գործի են դրվել բոլոր միջոցները՝ մամուլը, ռադիոն ու հեռուստատեսությունը, կազմակերպվում են դասախոսություններ, գիտաժողովներ և այլն։ 1984 թ. Անկարայի ռադիոծրագրերի յուրաքանչյուր ժամի ավելի քան 3 րոպեն հատկացվում էր Հայկական հարցին։

Հրատարակվում են բառարաններ, «պատմագրական աշխատություններ», քարտեզներ, որոնց նպատակն է ապացուցել, որ Հայաստան չկա և չի էլ եղել, որ այն հայերի երևակայության արդյունք է։ Մեծ աշխատանք է կատարվում Հայկական հարցով զբաղվող հաստատություններ, ամբիոններ ստեղծելու, այդ առպարեզում «գիտական վստահելի անձինք պատրաստելու» համար[99]։

«Հուրրիեթը» 1985 թ. մայիսի 5-ին տպագրված մի հոդվածում փորձում է «բաց անել ամերիկացիների աչքերը»։ «Կալիֆոռնիայի նահանգապետ Ջ. Դոքմեջյանը,— գրում է թերթը,— թույլ է տալիս, որ փոքրաթիվ հայկական հավաքականությունը «Ցեղասպանության օր», «Թուրքերի հետ թշնամության շաբաթ» անցկացնելով՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ, հնարված ժապավեններով տարածի հայկական ստերը և խաբի խեղճ ամերիկացիներին։

Ամերիկան գաղթականների երկիր է, իսկ լայնածավալ Կալիֆոռնիայում միայն մի քանի հարյուր հազար հայ է ապ-

ում... Ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ մեր Արևելյան Անատոլիայում։ Ամերիկացիները պարտավոր են հայերին լավ ճանաչել և պետք է իմանան, որ նրանց չի կարելի վստահել»։

Թուրքիայի քաղաքագետներն ու իրավագետները, գրողներն ու արվեստագետները, պատմաբաններն ու լեզվաբանները, մամուլը ու ինֆորմացիայի միջոցները, հետևելով իրենց կառավարողների հակահայկական տեսակետին, կեղծիքի ու ստի միջոցով ճգնում են խաբել Թուրք ժողովրդի աշխատավորական և դեմոկրատական լայն շրջաններին, թյուրիմացության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը։

Այս ջանքերը նպատակ ունեն Թուրք աշխատավորությունից թաքցնել պատմական իրողություններն ու փաստերը, Օսմանյան կայսրության մարդատյաց ու ազգասպան քաղաքականությունը, նրա վզին փաթաթել պանթուրքիզմի ֆաշիստական նկրտումները։

Համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու նպատակով օգտագործվում են նաև պետական մեխանիզմի համապատասխան օղակները, այդ թվում արտասահմանյան երկրներում Թուրքիայի դեսպանությունները։ Հսկայական միջոցներ են հատկացվում արտասահմանյան ռադիոկայաններով ու հեռուստակենտրոններով, թերթերով ու ամսագրերով հակահայկական պրոպագանդա ծավալելու համար։

Իրենց նպատակներն իրականացնելու համար միջոցների մեջ խտրություն չեն դնում։ Կաշառվում են ոչ միայն օտարերկրացի պատմաբաններն ու հասարակական գործիչները, այլ նաև պրոպագանդայի ու զանգվածային ինֆորմացիայի միջոցները։ Այդ նպատակի համար տրամադրվում են խոշոր գումարներ։ Թուրքիա են հրավիրվում Եվրոպայից ու ԱՄՆ-ից «գիտնականներ», քաղաքական գործիչներ, նրանց հյուրընկալում, «նվերներ» տալիս և, օգտագործելով նրանցից յուրաքանչյուրի մարդկային թուլությունները, լծում իրենց պրոպագանդիստական գործունեության կառքին։

Թուրքիա հրավիրվեցին Միացյալ Նահանգների կոնգրեսի 300 անդամներ։ Խորհրդանշական է, որ ԱՄՆ-ի կոնգրեսում «Ապրիլի 24-ը ցեղասպանության զոհերի հիշատակի օր հռչակելու մասին» նախագծի տապալման պատճառներից մեկը «Թերջուման» թերթը համարում է ներկայացուցիչների պալատի մի շարք անդամների, առավելապես սպառազինությունների արտադրությամբ զբաղվողների այցելությունը Թուրքիա[100]։

Եվրոպական պառլամենտում ստեղծվել է «Թուրքիայի բարեկամների մասնաճյուղ», որն իր մեջ միավորում է պառլամենտի բոլոր այն անդամներին, ովքեր «տրամադիր են ավելի լավ ու ճիշտ հասկանալու Թուրքիայի իրականությունը, որպեսզի հնարավոր լինի բարվոք և նպաստավոր դարձնել Թուրքիայի հարաբերությունները եվրոպական երկրների հետ»[101]։

Արևմուտքի շատ երկրներում, և ամենից առաջ ԱՄՆ-ում, հրատարակվում են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, որոնց զգալի մասը, հենվելով միայն թուրքական պաշտոնական շրջանների ու «գիտնականների» մատակարարած նյութերի վրա և, անտեսելով դրանք հերքող մեծ քանակությամբ արխիվային վկայությունները, կեղծում են պատմությունը, արդարացնում հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան տիրակալների բարբարոս քաղաքականությունը։

Թուրքական կառավարությունն անընդհատ կատարելագործում է հակահայկական գործունեության ձևերն ու մեթոդները։ Նա համակողմանիորեն օգտագործում է աշխարհի տարբեր երկրներում հաստատված թուրքական համայնքները։ Կանադայում, օրինակ, վերջին տարիներս մեկը մյուսի հետևից ստեղծվեցին թուրք-կանադական մի քանի կազմակերպություններ։ Դրանցից մեկը զբաղված է հակահայկական գրականության տպագրությամբ։

Այդ կազմակերպությունների գործունեությունը ղեկավարում են թուրքական դեսպանությունները։

Թուրքիայում ստեղծվել է «Ահաբեկչության դեմ պայքարի կոմիտե», որի աշխատանքը ղեկավարում են անվտանգության մարմինները։ Այդ կազմակերպության խնդիրն է հետևել ոչ միայն Թուրքիայում, այլ նաև արտասահմանում Թուրքիայի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հակաթուրքական գործողություններին և քայլեր ձեռնարկել այդ գործողությունները չեզոքացնելու համար։ Գործնականում ձևավորվել է արտասահմանյան երկրներում ահաբեկչությամբ զբաղվող մի օրգան։ Այս տեսակետից ամենևին էլ պատահական չէ Թեհրանում Օզալի արտահայտած հետևյալ միտքը՝ պարսկահայերի թիվը 300 հազարից չի պակասում, իսկ դա «միշտ ուկա սպառնալիք է»[102]։

Հակահայկական պայքարում օգտագործվում են նաև այլ պետությունների լրտեսական ծառայությունները։ Այսպես, ԱՄՆ-ի լրտեսական ծառայություններին հայերի դեմ ուղղելու համար թուրքական կառավարությունը հատկացրել է 50 միլիոն դոլար։

«Այսուհետև ԱՄՆ-ում,— 1958 թ. սեպտեմբերի 5-ին գրել է «Նոր կյանք» թերթը,— հօգուտ Թուրքիայի գործունեությունը կոորդինացնելու է «Դրեյ-Բենդ-Քամփնի» ընկերությունը, որի հետ 600 միլիոն դոլարի համաձայնություն է կնքված»։

Անկարայի կառավարությունը հրահանգել է արտասահմանյան իր դեսպանություններին ու ներկայացուցիչներին, արգելել եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների վրա ցեղասպանությունը հիշատակող արձանագրությունները, խափանել այդ թեմայով հրատարակություններն ու կինոժապավենների ցուցադրումը։ Միաժամանակ Անկարան ճնշում է գործադրում հայկական մեծ գաղթօջախներ ունեցող երկրների կառավարությունների վրա, որպեսզի նրանք հայերին թույլ չտան ապրիլի 24-ին ցույցեր և այլ միջոցառումներ կազմակերպել։

* * *

Այժմ այն մասին, թե Թուրքիայում ինչպես է կեղծվում պատմությունը, և այդ կեղծարարությունը ինչ բնույթ ունի։

Թուրքիայի արդի պաշտոնական պրոպագանդայի բնորոշ գծերից մեկն այն է, որ նա ամբողջությամբ կրկնում է երիտթուրք լիդերների հարցադրումներն ու հիմնավորումները, օգտագործում նրանց «փաստարկները» և, նույնիսկ, արտահայտչաձևերը։ Դրանում համոզվելու համար բավական է թերթել այդ պարագլուխներից մեկի՝ Ջեմալ փաշայի «Հուշերը», մասնավորապես «Հայկական հարցը» գլուխը, որը 1923 թ. առանձին գրքով լույս է տեսել Երևանում։

Ջեմալը հայտարարում է, թե իբր հայերը մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ապրել են հանգիստ ու խաղաղ կյանքով, թուրքական կառավարության կամ մահմեդական բնակչության կողմից հալածանքների չեն ենթարկվել, իբր նրանց անդորրը խանգարել է Ռուսաստանը, որ, ձգտելով նվաճել թուրքական հողերը, ոտքի է հանել հայերին սուլթանական իշխանությունների դեմ՝ պատճառ դառնալով կոտորածների։ Ապա Ջեմալ փաշան կեղծում է 1915 թ. հայկական ցեղասպանության

պատմությունը, հայտարարելով, որ իբր հայերը պատրաստվում էին թուրքական բանակի թիկունքում ապստամբել հօգուտ Ռուսաստանի, որի համար երիտթուրքական կառավարությունը հարկադրված էր տեղահանել նրանց, տարագրելով կայսրության խորքերը։ Ավելորդ ենք համարում բերել հեղինակի նաև մյուս անհիմն պնդումները, քանի որ նրա բոլոր թեզերը հիմնավորապես քննադատված ու ջախջախված են սովետական պատմագրության կողմից։

1986 թ. հուլիսի 9-ին Թուրքիայի պրեզիդենտ Ք. Էվրենը, Էրզրումի մոտ գտնվող Ալաջաքյոյու բնակավայրում, հանդիսավորությամբ բացեց 1918 թ. «հայ ավազակների» կողմից բարբարոսաբար սպանված 278 թուրքերի հիշատակը հավերժացնող հուշարձանը։ Թուրքական հեռուստատեսության կարծիքով, այդ թուրքերը «սպանվել են դոկտոր Ազարևի, գնդապետ Մորելի և Անդրանիկի հրամանատարության ներքո գտնվող ավազակների կողմից... Սպանված թուրքերի հագուստներն այրված են, լաթերը՝ կպած կմախքներին, դրանց կողքին հայտնաբերվել են Ղուրաններ, թուրքերի կողմից օգտագործվող զարդեր, գլխաշորեր, արծաթյա դրամներ և կանացի հյուսած մազեր»։

Դեռ նախորդ օրը, հանդես գալով Իգդիրում, պրեզիդենտն ասաց. «Իգդիրի շրջանի բնակչությունը տարբեր ժամանակներում բազմիցս ենթարկվել է հայերի կազմակերպած ջարդերին։ Հայերն այդքան կոտորածներ են կազմակերպել և հիմա վեր են կացել ու այնպիսի աղմուկ են բարձրացնում և այնպես են ներկայացնում աշխարհին, թե ոչ թե մենք՝ թուրքերս ենք կոտորվել, այլ մենք ենք նրանց կոտորել։ Բռնություններ ու ջարդեր կատարողները հենց հայերն են։ Դրանով հանդերձ, թուրք աղջ[illegible] լռակյաց տարել է այդ բոլորը, ջարդերի շուրջ աղմուկ չի բարձրացրել և կարիք էլ չի զգացել աշխարհով մեկ այդ մասին գոռալու։ Ջարդերը գրքերում են մնացել։ Բայց քանի որ հայերն այլ երկրներում հուշարձաններ են կառուցում՝ նվիրված թուրքերի կողմից կոտորված հայերին, հետևաբար մենք կկառուցենք ավելի մեծ հուշարձաններ, քան հայերն են կառուցում»[103]։

Ալաջաքյոյուում Էվրենը հայտարարեց. «Թուրքերը պատմության ընթացքում երբեք չեն միջամտել տվյալ վայրի բնակչության կրոնին, լեզվին և սովորույթներին, իրենց հետ այդ վայրերն են տարել մարդասիրություն, արդարություն, լուսավո-

ություն և գիտություն։ Թուրք ազգը ոչ մի ժամանակ ջարդ չի կատարել...

Թուրքերը պատմության ընթացքում լավ հարաբերություններ են ունեցել հայերի հետ, սակայն հայերը միշտ էլ դավաճանական նպատակներ են հետապնդել թուրքերի նկատմամբ՝ ընդմիշտ վառ պահելով այդ ստոր նպատակները... Հայերը, օգտվելով այն հանգամանքից, որ թուրքական զորքերը պարտության մատնվեցին առաջին համաշխարհային պատերազմում, ոտքի ելան, պնդելով, թե այս հողերը իրենց են պատկանում, փորձեցին տիրանալ տվյալ տարածքին... Սակայն, երբ դա հայերին չհաջողվեց, նրանք սկսեցին կոտորածներ կազմակերպել...»[104];

Հաջորդ օրը Էվրենը, ելույթ ունենալով Էրզրումում, ասաց. «Երբ Թուրքիան ընկնում է ընդվզումների մեջ, երբ խախտվում է ազգի միասնությունն ու համերաշխությունը, զուգահեռաբար նկատելի է նաև հայերի հողային պահանջների աճը։ Սակայն ազատագրական պատերազմից հետո հազարավոր զոհերի արյան գնով ձեռք բերված մեր սահմանների ներսում մենք չենք կարող թույլ տալ մեկ այլ պետության կազմավորում։ Եթե նրանք կարող են, ապա թող գան և հողերը վերցնեն»[105];

Թուրքիայի ղեկավարներն ահա այսպես, իրականությանը ճիշտ հակառակ են ներկայացնում Օսմանյան կայսրությունում հայերի վիճակն ու 1915 թ. ցեղասպանությունը։

Հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա զանգվածային հարձակումը արդի Թուրքիայում, իրոք, դարձել է պետական քաղաքականություն։ Այն խնդիր ունի ոչ միայն ժխտելու հանրահայտ փաստը, որ Արևմտյան Հայաստանն է եղել հայերի բնօրրանը, այլև մերժելու, որպես էթնիկական միավոր, հայ ժողովրդի գոյությունը։

1982 թ. Անկարայում, պրեզիդենտ Էվրենի հովանավորությամբ, լույս տեսավ արտաքին քաղաքականության ինստիտուտի պատրաստած «Հայկական հարց. ինը հարց, ինը պատասխան» գրքույկը, որ Արևմուտքի գրեթե բոլոր լեզուներով տպագրվեց ու տարածվեց աշխարհի շատ երկրներում[106]*։ Այն նախատեսված է հարցին անտեղյակ ընթերցող լայն շրջանների համար և կառուցված է փաստերի կամայական ընտրության ու մեկնաբանության վրա։*

Գրքույկում երրորդ հարցը ձևակերպված է հետևյալ կերպ.

«Թուրքերը դարերի ընթացքում ձգտե՞լ են հայերին հավատափոխել և հարստահարել»։ Հետևում է կեղծիքներով լի պատասխանը.

«Հաստատելու համար Օսմանյան կայսրության դեմ ցեղասպանության իրենց մեղադրանքը, հայ պրոպագանդիստները հայտարարում են, որ թուրքերը միշտ վատ են տրամադրված եղել ոչ մահմեդականների և, հատկապես, հայերի նկատմամբ... Դեռ ավելին. հայերը փորձում են աղճատել թուրքական ինքնությունը՝ ստեղծելով տպավորություն, որ իսլամի և քրիստոնեության միջև պայքար միշտ եղել է, որպեսզի ժամանակակից քրիստոնյա աշխարհին հեշտությամբ ընդունել տան հակաթուրքական պրոպագանդան»։ Մինչդեռ օսմանցիները «վերացրին հայ եկեղեցիների, վանքերի վրա բյուզանդացիների դրած բոլոր հարկերը։ Դրա փոխարեն սելջուկները հայ փոքրամասնությանը հնարավորություն տվեցին, որ հայերը համայնքի ներքին գործերը ղեկավարեն իրենց հայեցողությամբ, ներառյալ կրոնական և կրթական գործը։ Եվ երբեք հայերն ու ոչ մահմեդական մյուս փոքրամասնությունները իսլամի դեմ չեն գործել։ Ավելին, հայ հոգևոր առաջնորդները միշտ էլ շնորհակալություն են հայտնել...

Հայ համայնքը զարգանում և բարգավաճում էր շնորհիվ այն ազատության, որ տալիս էր նրան սուլթանը։ Նրանք շահեցին սուլթանների վստահությունը ու դասվեցին կայսրության «հավատարիմ համայնքների» շարքը»[107]*։*

Թուրքական «Թերջուման» թերթը նույն միտքը հետևյալ կերպ է հրամցնում. «Մերձավոր արևելքի և Բալկանյան ժողովուրդները հիշում են, թե ինչով վերջացավ արդարության ու հավասարության մարմնացում հանդիսացող թուրք օսմանների դեմ պայքարը։ Նրանցից շատերը մինչև օրս դեռ չեն ազատվել ոստիկանությունից, դաժան բռնությունից և սովետական բռունցքից... իր 600-ամյա պատմության ընթացքում Օսմանյան կայսրությունը երեք մայրցամաքների ժողովուրդներին ապահովել է խաղաղ կյանք և նրանց պաշտպանել արտաքին թշնամուց։ Այս պատմական ճշմարտությունը թող հիշեն հայերը, հույները, հրեաները, սիրիացիները, պաղեստինցիները, Միջին արևելքի, Բալկանների ժողովուրդները և արդի Թուրքիայի սխալ դատարկված թուրքերը»[108]*։*

Թուրքական պրոպագանդան համառ ջանքեր է գործադրում նաև ապացուցելու, որ օսմանյան տիրապետության տակ գտնըվող բոլոր ժողովուրդները, նույնիսկ զուլումի տարիներին, ունեցել են տնտեսական ու քաղաքական լիիրավ վիճակ, «ավելի մեծ իրավունքներ, քան իրենք՝ թուրքերը»։ 1985 թ. մարտի 21-ին թուրքական հեռուստատեսությունը ի լուր ամենքի հայտարարեց. «Թուրքերը իրենց տիրապետության տակ գտնվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ մեծահոգություն էին ցուցաբերում»։

1971 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Քեմալ Օզկայայի «Հայ ժողովուրդը և թուրք ժողովրդին ստրկացնելու փորձերը» գիրքը, որտեղ կարդում ենք. «Երբեք որևէ պարտված, հնազանդ ժողովուրդ, որևէ էթնիկական կամ կրոնական փոքրամասնություն այդպիսի արտոնություն չի ունեցել աշխարհի որևէ երկրում»։ Որպես փաստարկ նա վկայակոչում է այն, որ Աբդուլ Համիդ II-ը իր առողջությունը «վստահում էր հայ բժիշկներին»։ Հեղինակի կարծիքով հայերն ավելի լավ վիճակում էին, քան թուրքերը և «բարենորոգումներն ավելի շատ թուրքերին էին անհրաժեշտ, քան հայերին»*։

---

* Մի քանի մեջբերումներ կատարենք նաև թուրքական ռադիոհաղորդումներից, մասնավորապես «Հայկական թղթապանակ» արաբերեն հաղորդաշարից։ «Թուրքիայում ամենաարտոնյալ ազգային փոքրամասնությունը,— ասված է այդ հաղորդաշարում,— երկար ժամանակ եղել են հայերը... բոլոր հայերը առանց բացառության ապրում էին բարեկեցիկ կյանքով և առանձնային պաշտոններ էին գրավում առևտրում ու արվեստում... Բացի այդ, հայերը թուրքերին անգնահատելի ծառայություն են մատուցել ազգային՝ երաժշտության, թատրոնի և նույնիսկ թուրքական լեզվագիտության ստեղծման գործում» (ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 5, էջ 25)։

«Հայերի հասարակական և տնտեսական վիճակը, համեմատած թուրք բնակչության վիճակի հետ,— ասված է հաղորդաշարի 1984 թ. ապրիլի 8-ի թողարկման մեջ,— շատ ավելի լավ էր։ Բայց գաղութատիրական պետությունները, որոնք հարմար առիթ էին փնտրում օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու համար, հրապարակ նետեցին Հայկական հարցը»։ «Հայկական հարցը արհեստականորեն առաջ քաշեցին օսմանյան պետության նկատմամբ գաղութատիրական նպատակներ ունեցող պետությունները» (ապրիլի 22-ի թողարկումից)։

«Հայերն օգտվում էին բոլոր իրավունքներից, որոնք նախատեսված էին մահմեդականների համար, դրան գումարած որոշ այլ առավելություններ...

Ա. Դելիորմանի «Հայկական կոմիտեականները ընդդեմ թուրքերի» գրքում կարելի է կարդալ հետևյալը. սուլթան Համիդը համիդիե գնդերը ստեղծեց Սասունի «15 հազար մահմեդական բնակչությանը հայ կոմիտեականներից» պաշտպանելու համար։ Նա «մեղմ քաղաքականություն» էր վարում, որի հետևանքով հայերի հարձակումներից տուժում էին «խեղճ թուրքերը»։

Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու գաղափարը ռուսների դիտավորությունն էր՝ իրականացնելու Օսմանյան կայսրությունը քրիստոնյա պետություններով շրջապատելու և նրան «ռուսների ճնշման տակ գտնվող մահմեդականներից կտրելու» քաղաքականությունը[109]։

Հակառակ պատմական իրականության, թուրքական մի պաշտոնական փաստաթղթում, սևով սպիտակի վրա գրված է. «Այն ժամանակվա մեծ կայսրություններից միայն Օսմանյան կայսրությունն էր, որ հպատակների նկատմամբ ճնշումներ չէր գործադրում։ Ավելին, նա ճանաչում էր կրոնական համայնքների լրիվ ինքնավարությունը... արդյո՞ք ծիծաղելի չէ մեղադրել օսմանցիներին, որ իբր նրանք ճնշում էին հրեաներին, հույներին և հայերին, այն ժամանակ, երբ օսմանցիները ճանաչել էին նրանց ինքնորոշման, սեփական լեզվի և մշակույթի օգտագործման, սեփական դպրոց և մանկապարտեզ ունենալու իրավունքը և երբեք չեն միջամտել նրանց գործերին։ Օսմանյան կայսրությունը չէր ճնշում ոչ մուսուլմանական փոքրամասնությանը և չէր աշխատում հարկադրել նրանց ընդունելու իսլամը... Մինչև իր անկումը Օսմանյան կայսրությունը եղել է այն անկյունը, ուր օթևան են գտել աշխարհի բոլոր հալածվածները»[110]։

Ոչ ավելի, ոչ պակաս։ Օսմանյան կայսրությունը եղել է աշ-

(հայկական) համայնքը, ընդունելով օսմանյան մշակույթն ու կյանքի ձևը, «հավատարիմ ազգ» կոչումը ստացավ... Մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը Հայկական հարց գոյություն չի ունեցել» (ապրիլի 29-ի թողարկումից)։

«Ռուսաստանի հրահրումները պատճառ դարձան, որ Թուրքիայում բնակվող հայերի մեջ զավթողական ոգի առաջանա... հայկական շարժումների նպատակն էր Արևելյան Անատոլիան (Արևմտյան Հայաստանը) միացնել Ռուսաստանին» (մայիսի 27-ի թողարկումից)։

Հայերը, եթե հասկանային, թե Թուրքիան իրենց համար ինչպիսի դրախտ է, «ապա ամեն օր իրենց աղոթքներում կփառաբանեին թուրքերին, որովհետև այնպիսի ազատություն ու հանգիստ կյանք, ինչպիսին նրանք ունեցել են և ունեն Թուրքիայում, աշխարհում ոչ մի տեղ գտնել չեն կարող («Հուրրիեթ» սեպտեմբերի 26, 1927 թ.)։

խարհի ճնշված ու հալածված զանգվածների օթևան։ Բայց պատմական փաստերը, որոնք կբերվեն ստորև, ճիշտ դրա հակառակն են ապացուցում։ Նրանք ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության տիրապետության տակ տառապող ժողովուրդները գտնվում էին չափազանց ծանր վիճակի մեջ։ Ինչ վերաբերում է քրիստոնյա ժողովուրդներին, ապա նրանք գործնականում օրենքից դուրս էին հայտարարված և զուրկ էին քաղաքական տարրական իրավունքներից, այդ թվում նաև անձի անվտանգության իրավունքից։ Թուրքիայում փոքր ժողովուրդների բռնի հավատափոխությունը, ձուլումն ու բնաջնջումը հռչակված էր պետական քաղաքականություն և իրականացվում էր պարբերաբար՝ օսմանյան պետականության ստեղծման առաջին իսկ օրերից։ Իսկ 1870-ական թվականներին ձևավորվեց մի հրեշավոր ծրագիր՝ արևմտահայությանը գլխովին ոչնչացնելու ծրագիր։

«Հայկական թղթապանակ» հաղորդաշարի 1986 թ. հունիսի 10-ի թողարկման մեջ ուղղակի ասվում է. «Հայկական ազատագրական շարժումների հիմքում ընկած էր ոչ թե աղքատության ու ճնշումների դեմ բարենորոգումների պրոպագանդան, այլ Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի համագործակցությունը՝ ազատագրական շարժումների և հայկական եկեղեցականների հետ օսմանյան պետության տարածությունները բաժանելու համար»։

Օսմանյան հայաջինջ քաղաքականության դեմ հայ ժողովրդի օրհասական պայքարը մեծ պետությունների ձեռքի գործ համարելը բացարձակ հերյուրանք ու կեղծիք է։

Հայ ժողովուրդը բռնությունների, ոչնչացման, ազատությունների օսմանյան ծովում կործանման եզրին էր և խեղդվողի նման ձեռքը մեկնում էր փրփուրին, բոլոր այն ուժերին, ովքեր ի վիճակի էին իրեն փրկել։ Մինչդեռ այդ ուժերը հայ ժողովրդի օգնության կանչն օգտագործում էին իրենց շահադիտական նպատակների համար և, ի վերջո, դավաճանեցին նրան՝ անօգնական շպրտելով օսմանյան տիրակալների երախը։ 1915 թիվը նաև այդ իմպերիալիստական քաղաքականության արդյունքն էր։

Հայ ժողովրդի դարավոր փորձն ու իմաստությունը դեռևս XVIII դարում հանգեցրին այն մտքին, որ միակ իրական ուժը, որ կարող է օգնության ձեռք մեկնել և փրկել հայերին, Ռուսաստանն է, չնայած ցարական ինքնակալությունը ևս բազմիցս Հայկական հարցն օգտագործել է իր գաղութատիրական քաղաքականության համար։ Ռուսաստանին և առաջին հերթին

նրանում բարձրացող դեմոկրատական ուժերին էր վիճակված փրկելու հայ ժողովրդին։

«...հայերը,— գրում է Մ. Նալբանդյանը,— ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին...»[111]։

Կոմիտասը 1912 թ. դեկտեմբերի 25-ին Ա. Զոպանյանին գրել է. «Ուրեմն չիք փրկություն արտաքո Ռուսիոյ։ Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես ու նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերե մեծ ազատությունը, շտապելով, առաջինը չառած երկրորդ քայլի դիմելով, բոլորովին պիտի կորչինք. տաճիկեն ոչ մի հույս մի ունենաք, մի սպասեք. նորա ուղեղը քարե ժայռից է...

Չպետք է բաժանվինք, չպետք է խաբվինք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներին, միանալու ենք և գործնական ճամփան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես և բարոյապես զուտ ազգային, առանց օտար ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը՝ ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով... Եվրոպական մարդկային գաղափարները, որքան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերի մեր ջերմ արևի տակ կկիզվեն»[112]։

* * *

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն գրքում մեր նպատակն է, հենվելով կոնկրետ փաստերի և սովետական պատմագրության նվաճումների վրա, մերկացնել Թուրքիայում ու Արևմուտքի մի շարք երկրներում ծավալված հակահայկական պրոպագանդան, ցույց տալ նրա իմպերիալիստական-ռասիստական, գաղութատիրական-շովինիստական բնույթը և պաշտպանել պատմական ճշմարտությունը։ Աշխատության բանավիճային բնույթը հարկադրում է մեզ կատարել բազմաթիվ հակիրճ ու ընդարձակ մեջբերումներ։ Եվ նկատի ունենալով, որ այն հասցեագրված է ընթերցող լայն շրջաններին, նպատակահարմար ենք գտել արևմտահայերեն աղբյուրներից կատարված վկայակոչումների հիմնական մասը ներկայացնել ժամանակակից գրական լեզվով։

1. Гр. Чалгушян, Красная книга, Ростов-на-Дону. 1919, с, 184.
2. Գ. Հակոբյան, Թուրքական ռեակցիան ամերիկյան իմպերիալիզմի ծառայության մեջ, Ե., 1951, էջ 6։
3. Նույն տեղը, էջ 17։
4. Պրավդա, 20 սեպտեմբերի 1947 թ.։
5. Գյունեշ, 13 մայիսի 1982 թ.։
6. Ալիք, 16 սեպտեմբերի 1985 թ.։
7. Ալիք, 7 մայիսի 1985 թ.։
8. Հառաջ, 11—12 մայիսի 1985 թ.։
9. Արարատ, 17 հունիսի 1986 թ.։
10. Հուրիեթ, 20 օգոստոսի 1985 թ.։
11. Ալիք, 17 սեպտեմբերի 1985 թ.։
12. Սովետական Հայաստան, օրաթերթ, 5 հունիսի 1985 թ.։
13. «Ամերիկայի ձայն» ռադիոկայան, 12 օգոստոսի 1985 թ.։
14. «Ամերիկայի ձայն» ռադիոկայան, 3 սեպտեմբերի 1985 թ.։
15. Թուրքական հեռուստատեսություն, 18 հոկտեմբերի 1985 թ.։
16. Թուրքական հեռուստատեսություն, 25 սեպտեմբերի 1985 թ.։
17. Նոր աշխարհ, 5 փետրվարի 1985 թ.։
18. Ք. Պոզնանսկա, Հին ու նոր Թուրքիա, Ե., 1985, էջ 201։
19. Թուրքական հեռուստատեսություն, 18 հոկտեմբերի 1985 թ.։
20. Թուրքական հեռուստատեսություն, 19 հոկտեմբերի 1985 թ.։
21. Արմենիա, 1 մարտի 1986 թ.։
22. Թուրքական հեռուստատեսություն, 13 հոկտեմբերի 1986 թ.։
23. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր Սուլթան, Բեյրութ, 1980, էջ 571։
24. Նույն տեղը, էջ 820։
25. Ю. Петросян, Младотурецкое движение, М., 1971, с. 183—184.
26. Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1, Ե., 1980, էջ 120։
27. Նոր դար, 1895, № 79։
28. Նոր կյանք, 1900, № 16։
29. Ե. Օտյան, ԵԺ, հ. 4, Ե., 1962, էջ 676։
30. Սապահ Գուլյան, Պատասխանատուները, Կահիրե, 1916, էջ 214։
31. Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, Ե., 1983, էջ 6։
32. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր Սուլթան, էջ 663։
33. Մուրճ, 1905, № 9։
34. Նոր կյանք, 1900, № 21։
35. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, «Документы французских архивов», 1985. էջ 5 կամ Հ. Նազլյան, Հուշեր, Բեյրութ, 1960, էջ 104։
36. Ապագա, 10 ապրիլի 1985 թ.։
37. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 94։
38. Յո. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 247։
39. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհադի հայաջինջ ծրագիրները, Բեյրութ, 1968, էջ 103։

40. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), էջ 29։
41. Ջեմալ Փաշա, Հայկական հարցը, Ե., 1927, էջ 17։
42. Նույն տեղը, էջ 18։
43. «Հիլալը Ահմերի» 1911, հոկտեմբեր։
44. Նույն տեղը։
45. Յո. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 250։
46. Ս. Զենկովսկի, Իսլամական Թուրքիան և Ռուսաստանը, Քեմբրիջ, 1960, էջ 38—39։
47. С. Бутаев, Проблемы Турции, Ленинград, 1925, с. 114.
48. Հ. Թումանյան, ԵԺ, հ. 4, Ե., 1969, էջ 149—150։
49. Գ. Ահարոնյան, Խոհեր 50-ամյակի ավարտին, Բեյրութ, 1966, էջ 172։
50. Ա. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 70։
51. Շարժում, 7 հունիսի 1985 թ.։
52. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1985, էջ 13։
53. Դե Օրիենտ, 21 հոկտեմբերի 1914 թ.։
54. Գ. Ահարոնյան, Խոհեր 50-ամյակի ավարտին, էջ 175։
55. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 22։
56. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1985, էջ 40—41։
57. Նույն տեղը, էջ 41։
58. Նույն տեղը, էջ 42։
59. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II..., էջ 571։
60. Հ. Տաշեան, Հայ ազգային տարագրությունը գերմանական վավերագրերի համեմատ, մաս Ա, Վենետիկ, 1921, էջ 52։
61. Документы внешней политики СССР. т. 1, М., 1957, с. 730.
62. М. Кемаль, Путь новой Турции. т. 3, М., 1934, с. 117.
63. Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 45, Ե., 1983, էջ 240։
64. История дипломатии, т. 3, М., 1965, с. 97.
65. Д. Завриев. К новой истории Северо-Восточных вилаетов Турции. Тбилиси, 1947, с. 100.
66. Ս. Կարապետյան, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Ե., 1965, էջ 38—39։
67. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 18։
68. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 446.
69. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 240։
70. Է. Լենիկիել, Թուրքերը, Նյու Յորք, 1941, էջ 195։
71. Ա. Ալպոյաճեան, Պատմություն Եվդոկո հայոց, Կահիրե, 1952, էջ 1212—1219։
72. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 261—262։
73. Գ. Հակոբյան, Թուրքական ռեակցիան ամերիկյան իմպերիալիզմի ծառայության մեջ, էջ 8։
74. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 188—190։
75. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 5, էջ 16։
76. Պրավդա, 28 հոկտեմբերի 1947 թ.։
77. Ա. Գրեչկո, Ճակատամարտ Կովկասի համար, Ե., 1969, էջ 68։

78. С. Штеменко, Генеральный штаб в годы войны, М., 1967, с. 51.
79. Ժողովրդի ձայն, 23 մարտի 1924 թ.։
80. Սովետական Հայաստան, ամսագիր, 1984, № 12։
81. Նույն տեղը։
82. Նույն տեղը։
83. Գ. Ահարոնյան, Խոհեր 50-ամյակի..., էջ 177—178։
84. Նույն տեղը, էջ 177։
85. Նույն տեղը, էջ 178։
86. Նույն տեղը, էջ 179—180։
87. Թուրքական հեռուստատեսություն, 19 հոկտեմբերի 1985 թ.։
88. Նույն տեղը։
89. Սովետական Հայաստան, օրաթերթ, 5 մարտի 1985 թ.։
90. Լրաբեր, 8 մայիսի 1985 թ.։
91. Արև, 20 հոկտեմբերի 1985 թ.։
92. Զարթոնք, 24 ապրիլի 1985 թ.։
93. Մարմարա, 6 դեկտեմբերի 1985 թ.։
94. Մարմարա, 11 դեկտեմբերի 1985 թ.։
95. Զարթոնք, 23 ապրիլի 1983 թ.։
96. Ազգային մշակույթ, 28 ապրիլի 1985 թ.։
97. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1982, № 5, էջ 13—14։
98. Ազգային մշակույթ, 28 ապրիլի 1985 թ.։
99. «Միլիեթ», 8 մարտի 1985 թ.։
100. Հառաջ, 7 հունիսի 1985 թ.։
101. Մարմարա, 31 հունվարի 1985 թ.։
102. Ալիք, 24 սեպտեմբերի 1985 թ.։
103. Թուրքական հեռուստատեսություն, 8 հուլիսի 1986 թ.։
104. Թուրքական հեռուստատեսություն, 9 հուլիսի 1986 թ.։
105. Թուրքական հեռուստատեսություն, 10 հուլիսի 1986 թ.։
106. Institut de Politique Efranger le problem Armenian: neuf questions, neuf reponses, Ankara, 1982, p. 6—10.
107. Նույն տեղը, էջ 6—10։
108. Թերջուման, 12 օգոստոսի 1982 թ.։
109. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1977, № 3, էջ 8։
110. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1982, № 5, էջ 30։
111. Մ. Նալբանդյան, Երկ, հ. 2, Ե., 1948, էջ 357։
112. Էջմիածին, ամսագիր, 1965, № № 2—4։

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍՏԿԱՑՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ 1877—1878 ԹԹ.

Պատմության թուրք կեղծարարները Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված հալածանքների ու բնաջնջման պատճառը համարում են մեծ տերությունների քաղաքականությունը։ Այդ քաղաքականությունը պատճառ դարձավ նաև Հայկական հարցի առաջացման համար։

Լիբանանում լույս տեսնող «Դը Դեյլի Սթար» օրաթերթը 1985 թ. մայիսի 3-ի համարում տպագրեց Հայկական հարցի վերաբերյալ թուրքական դեսպանատան պատրաստած մի հոդված, որտեղ դժգոհությամբ է խոսվում այն մասին, որ մի շարք պատմաբաններ փորձում են Հայկական հարցը ներկայացնել որպես Օսմանյան կայսրության ներքին հարց, նսեմացնելով մեծ պետությունների քաղաքականության դերը, «որի նպատակն էր բաժանման ենթարկել կայսրությունը՝ քաղաքական, տնտեսական և ռազմագիտական հաշիվներով»։

Այդ հոդվածում ասվում է, որ Հայկական հարցը «սկսվեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմով ու Բալկանների անկախությամբ, և օսմանցի հայերը, որոնք թուրքերի հետ ամբողջ ութ դար խաղաղ գոյակցել էին... ստիճանաբար փոխեցին իրենց կեցվածքը, դարձան օտար ուժերի ձեռքի գործիք»՝ դնելով «տաք ջրերը» ռուսական առաջխաղացման և դրան հակազդելու բրիտանական քաղաքականության համար։

1975 թ. Ստամբուլում լույս տեսավ Այհան Յալչինի «Թուրք-հայկական հարցի էությունը» գիրքը, որտեղ նշվում է, թե հայերը Օսմանյան կայսրությունում ... իրենց տրված իրավունքի

շնորհիվ, ոչ մահմեդական մյուս տարրերի նկատմամբ նյութական ու քաղաքական առավելություններ էին ձեռք բերել։ Երբ նրանց ապագան արդեն իսկ ապահովված էր, խանգարեցին խաղաղությունն ու անդորրությունը և անկախ Հայաստան ստեղծելու համար կամենում էին Թուրքիան մասնատել[1]։

Թուրքական պրոպագանդայի այս մտածելակերպը նորություն չէ։ Դեռ 1870-ական թվականներին օսմանյան պաշտոնական շրջանները հայտարարում էին՝ հայերը «դավաճան» ժողովուրդ են։ Վերջիններս դրան պատասխանում էին. «Ինչպե՞ս կարելի է միլիոնավոր հայերից պահանջել, որ իրենց կրած տանջանքների, բռնության և հալածանքների մասին չգանգատվեն, չտրտնջան, թե ինչ է իրենց միջից մի քանի հակոբներ, նուբարներ, արթիններ և այլ մեծամեծներ պաշտոն են վարում, շնորհներ, պատիվներ են վայելում»[2]։ Մինչդեռ «հայ էֆենդիները հայ ժողովրդի հետ ոչ հոգեկան և ոչ էլ մտավոր հաղորդակցություն չունեն։ Այս վերջին 20 տարվա ընթացքում նրանց կարելի է ազգից լրիվ մեկուսացված համարել։ Միշտ ահուդողի մեջ, զգույշ են ապրում, հայ լինելը նրանց համար ոճիր է։ Հանցագործների են նմանվում, որոնք մինչև իրենց մահը հարկադրված են ոստիկանական խիստ հսկողության ներքո ապրել»[3]։

«Պոլսահայ լուսավորական համայնք» հոդվածում Մ. Նալբանդյանը գրել է. «Այս մարդիկ հասնելով պետական պաշտոնների և հետևաբար մոտիկ հարաբերություններ ունենալով Թուրք կառավարության ազդեցիկ դեմքերի հետ, յուրացրել են իրավունք՝ խառնվելու հայկական բոլոր գործերին... Դեռն առաջ իսկ խաղալու հայ ժողովուրդը ներկայացնողների դերը»[4]։

Նալբանդյանը նշում է, որ հայերի վրա վաղուց ի վեր Թուրքիայում ծանրացած աղաղակող անկարգությունները Արևելյան պատերազմից հետո ծայրահեղության հասան։ Դրա պատճառներից մեկը նա համարում է հայ ամիրաների եսասիրական վարքագիծը։

«Արդարև, (հայ) գյուղացիները,— գրում է Թուրք պատմաբան Օ. Նուրին,— տանջվում էին, ողբում, սակայն խաղաղության, հանգստավետության և առևտրի վարժված մարդիկ, հատկապես պետական պաշտոնական տների բազմաթիվ ծառայողներն ու պաշտոնատարները, երբեք չեն գանգատվում»[5]։

Ռուս լրագրող Գ. Ն. Դիևը, 1891 թ. դիմելով իր Թուրք գործընկերոջը, գրել է. «Հայկական հարցում ճիշտ կողմնորոշվելու համար, ամենից առաջ, երևակայական գրգռողների մասին հեքիաթի փոխարեն, պետք է գլխից դուրս շպրտել հայ ռայայի նկատմամբ օսմանցիների կարծեցյալ «մեծահոգությունը» և հայերի ահավոր «սև երախտամոռությունը»։

Եվ իսկապես, ի՞նչ հիմքով դուք կարող եք ակնկալել հայ ժողովրդի արտակարգ շնորհակալությունն ու սերը։ Զեզնում սովորաբար ընտելացել են վկայակոչել մի քանի միլիոնատերերի և Բ. Դոան մի քանի բարձրաստիճան չինովնիկների, որպես հայերի բարեկեցության անառարկելի ապացույց։ Բայց Հայաստանի բազմաթիվ բնիկ հողագործ հայ ազգաբնակչությունը, որը և կազմում է Հայկական հարցի գլխավոր հետաքրքրությունն ու ծանրության կենտրոնը, և որը տրված է քրդերին ու չերքեզներին անպատիժ թալանելու, ինչպես նաև անգրագետ վարչակազմին, չի կարող երանություն ապրել նրանից, որ Ստամբուլի մի քանի հայերի, շնորհիվ բախշիշի, հաջողվում է պետական մատակարարումներից կուտակել միլիոններ, կամ այն բանից, որ ֆինանսների մինիստրը Հակոբ փաշան է, որը ստանալով իր պաշտոնը ամենևին էլ շնորհակալ չէր իր հայկական ծագումից, իր «կեղտոտ» (գյավուրի) ծագումից։ Ինչ վերաբերում է «պատմական» շնորհակալությանը, ապա այստեղ ևս հազիվ թե ձեր ակնկալությունները ավելի հիմնավոր են, և «Թայմսի» կարծիքով պետք է շնորհակալություն հայտնել նրա համար, որ դուք, եթե ս. Սոֆիա չեք կառուցել, ապա չհամարձակվեցիք այն քանդել։ Հայը ինչո՞ւ ձեզ շնորհակալություն ասի։ Եթե դուք նրան չոչնչացրիք, ապա այդ դեպքում դուք հետևեցիք ոչ թե մեծահոգությանն ու մարդասիրությանը, այլ ինքնապաշտպանության եսասիրական զգացմունքներին, որը խորթ չէ նույնիսկ բարձրակարգ կենդանիներին։ Դուք հայկական «հոտը» (ռայային) թողեցիք պարզապես... որպես «ցեղ»։ Ո՞վ ձեզ կկերակրեր, եթե չլիներ հայկական և այլ «ռայան»[6]։

«1829 թվին,— շարունակում է Գ. Դիևը,— երբ Էրզրումի հայերը հեռացան Ռուսաստան, քաղաքում նույնիսկ չրատար վերանորոգել չէին կարողանում»*[7]։

---

* «Ավելի քան 600 տարի, Փոքր Ասիայում Թուրքական տիրապետության հաստատումից հետո, բազմաշարշար հայ ժողովուրդը..., այդ իսկապես որբ ժողովուրդը, գտնվել է Թուրքերի իշխանության տակ, բուռ հուսահատությամբ տանելով կոտորած, բռնություն և հարստահարություն, որի համար

Իրողություն էր, որ Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում հույների ու հրեաների հետ հայերը առաջնակարգ տեղ էին գրավում։

«Թուրքիայի հայերը սովորաբար կրթություն էին ստանում,— գրում է Ն. Ադոնցը,— արտասահմանյան հայկական դպրոցներում և տուն էին վերադառնում գիտելիքներով հարստացած, պատրաստ ձեռնամուխ լինելու ցանկացած հասարակական-քաղաքական գործունեության։ Ահա թե ինչու բժիշկները, փաստաբանները, գրողները, հրապարակախոսները միայն հայերն ու հույներն էին։ Զարմանալի չէ, որ կառավարությունը ստիպված ղեկավար պաշտոնների էր հրավիրում կրթված ու գործունյա հայերի»։

Դարի կեսերին հայկական արտադրական ընկերությունները միավորում էին ավելի քան 70 տարբեր մասնագիտություններ, դրանց մի մասին նրանք տիրապետում էին կատարելապես։ Հայերի տեխնիկական նվաճումները Արևմտյան Ասիայում լայնորեն էին հայտնի։ Արվեստում նույնպես գերիշխում էին քրիստոնյաները։ Առանձնապես կարևոր դեր էին կատարում հայերը։ Բավական է նշել, որ «Ստամբուլի անտիկ արվեստի ամենաակնառու հուշարձանները՝ Բեյլեր-բեյի, Ջերազանի, Դոլմա-բախչեի պալատները, Բոսֆորի այդ մարգարիտները, կառուցել են հայ ճարտարապետները։ Նրանք ակտիվորեն էին մասնակցում մեծ ճաշակով աչքի ընկնող մյուս պալատների ձևավորմանը։ Նույնիսկ Թոփ-խանա մզկիթը ստեղծել է հայ գյավուրը»[8]։

Այս ամենը թուրքական պրոպագանդայի կողմից ներկայացվում է ոչ թե որպես վաստակ, այլ հայերին ընձեռած հնարավորություն։

Մեր օրերում թուրքական պրոպագանդայի պնդումներն իրենց ուղղակի արձագանքն են գտնում ամերիկյան մի շարք պատմաբանների աշխատություններում, որոնք ի հեճուկս գիտության և հօգուտ իմպերիալիզմի կեղծում են պատմությունը, արդարացնում Օսմանյան կայսրության բարբարոսական քաղաքականությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ։ Այդպիսի մոտեցման օրինակ են Ս. Ջ. Շոուի և Ե. Կ. Շոուի աշխատությունները, որոնք Օսմանյան կայսրության պատմությունը քննում են ԱՄՆ-ի այսօրվա շահերի տեսակետից։

Նրանք կրկնում են թուրքական պատմաբանների այն թեզը, թե մինչև 1877 թ. Հայկական հարց չի եղել, որովհետև հայերը կայսրության մեջ ապրել են ազատ և լիիրավ կյանքով։ «Հայերը,— կարդում ենք նրանց գրքում,— ազատ էին տնօրինելու իրենց սեփական կյանքը, ինչպես սուլթանի մյուս բոլոր հպատակները։ Հայերն ունեին փաստական ինքնուրույնություն։ Թուրքերի և քրդերի վիճակը ավելի լավ չէր, քան հայերինը։ Եվ եթե կային տնտեսական ու սոցիալական պրոբլեմներ, ապա դրանք ոչ թե հետևանք էին հայահալած քաղաքականության, այլ առաջ էին գալիս բյուրոկրատիայի և խոշոր հողատերերի ինքնագլխությունից»[9]։

Այդ դեպքում հարց է առաջանում, ապա ինչո՞ւ հայը զենք կրելու իրավունք չուներ, իսկ մահմեդականը՝ ուներ, հայը դատարանում ցուցմունք տալու իրավունք չուներ, իսկ մահմեդականը՝ ուներ, հայի կայքի ու կյանքի անվտանգությունը իշխանությունների կողմից երաշխավորված չէր, իսկ մահմեդականներինը երաշխավորված էր և այլն և այլն։

Բայց ամերիկացի հեղինակները իրենց առաջ այդ և նման բազմաթիվ հարցեր ոչ դնում են և ոչ էլ դրանց պատասխանում։ Նրանք միայն պնդում են, թե Հայկական հարցը արդյունք է «հայ ազգային արկածախնդիրների և ռուսական պրոպագանդիստների գործունեության»։

Այս տեսակետը սովետական պատմագրության կողմից հիմնավորապես ժխտվել է ոչ միայն հայկական և ռուսական աղբյուրների, այլ նաև եվրոպական և ամերիկյան արխիվներում եղած նյութերի վկայություններով։

Հարկ է իրարից սահմանազատել Հայկական հարցը և օսմանյան բռնապետության լծից ազատագրվելու համար հայ ժողովրդի պայքարը։ Եթե առաջինը, որպես միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, առաջացավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով, ապա երկրոր-

---

Հաճախ նրան նախատում են պատմության կողմից երես տված ժողովուրդները։ Հետագայում ոռոգելով հողը, որտեղ հանգչում են իր անթիվ նախնիների աճյունները, ծանր հառաչելով իր անդրջրհեղեղյան չուքի վրա, որի բնապատկերը կարելի է տեսնել եգիպտական վանքերի զարդաքանդակներում, հայերը աղաչում էին թուրքերին միայն մի բան, որպեսզի փաշաներն ու վայրենի գազանները ձեռք չտային իրենց կանանց ու երեխաներին, իրենց ողորմելի փշրանքներին, որ ձեռք էր բերվել հողագործի ծանր աշխատանքով» («Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 387):

դը, որպես հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարց, գոյություն ուներ դրանից շատ վաղ։ Եվ չնայած պատմագրության մեջ առաջինին շատ ավելի մեծ տեղ է տրվում, քան երկրորդին, ապացուցելու կարիք չկա, որ Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, ածանցիկ է և, առաջին հերթին, հետևանք Օսմանյան կայսրության ներքին կացության, այդ կայսրության մեջ բնակվող ժողովուրդների ազատագրական ձգտումների ու պայքարի։

«Հայկական հարցը շատ է հին,— գրել է Հ. Թումանյանը,— ...Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է... նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է»[10]։

Իրավացի էր Գ. Սրվանձտյանցը, երբ գրում էր. «Հայաստանում է բուն հայկական խնդիրը, և մենք այն Բեռլինում ենք փնտրում»[11]։

Հետևաբար մեզ, առաջին հերթին, պետք է հետաքրքրի Հայկական հարցի ազգային և սոցիալ-քաղաքական բովանդակությունը։ Այդ բովանդակությունն էր որոշում արևմտահայության ոչ միայն վիճակը, այլև նրա լինել-չլինելու հարցը։

Օսմանյան տիրակալության տակ հայ ժողովրդի վիճակը քննարկելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք. առաջին՝ հայ ժողովրդի ծանր դրությունը, որպես հետևանք այդ տիրակալության ռազմաֆեոդալական բնույթի, որը հավասարապես էր անդրադառնում կայսրության կազմում եղած բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրք աշխատավորական լայն զանգվածների վրա, երկրորդ՝ հայ ժողովրդին տնտեսապես ու ֆիզիկապես հյուծելու, նրան որպես էթնիկական միավորում ոչնչացնելու թուրքական իշխող շրջանների շովինիստական, պանօսմանական քաղաքականությունը։

Համառոտակի անդրադառնանք արևմտահայության վիճակին մինչև Հայկական հարցի ծնունդը, այսինքն՝ մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ու Բեռլինի կոնգրեսը։ XVIII դարի հեղինակ Հ. Գիբբոնը, ընդհանրացնելով հայերի դարավոր թշվառ վիճակը, գրել է. «Այս ժողովրդին թույլ չեն տվել օգտվելու նույնիսկ ստրկական վիճակի խաղաղությունից»[12]։

Մ. Նալբանդյանը գրում է. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անզգայացած աշխարհի վրա...,

ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ, թշվառության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում»[13]։

Հույն քաղաքական գործիչ Սալիդիս էֆենդին գրել է. «Ինչ զեղծումներ, որ կատարվեցին Ռումելիում և Բուլղարիայում, նույնը երկար ժամանակից ի վեր կատարվում է Հայաստանում... Սակայն հույներն ու բուլղարները, Եվրոպայում տեսակներ հրապարակելով և բողոքի ձայն բարձրացնելով, Եվրոպայի հայացքը իրենց տառապանքների վրա հրավիրեցին. մինչդեռ հայերը, այդ միջոցից զուրկ լինելով, լռությամբ տարան ու հանդուրժեցին իրենց կրած տառապանքները։ Բայց մի՞թե արդարություն է, որ հայը... այսպես չարչարվի ու կեղեքվի...»[14]։

Անգլիացի գիտնական Մ. Մակքոլը գրում է. «Չնայած անվերջ անարդարություններին, հայերը սուլթանի ամենահավատարիմ հպատակները կլինեին, եթե նրանց տրվեր շատ թե քիչ տանելի կյանք։ Նրանք կարող է հեռավոր ապագայում ազատության մասին երազներ ունենան, բայց այժմ գերադասում են մնալ սուլթանի իշխանության տակ և միայն պահանջում են, որպեսզի ապահով լինի իրենց կյանքը, պատիվը, կրոնն ու սեփականությունը»[15]։

Թուրք և թուրքամետ պատմաբանները սիրում են կրկնել. «Օսմանյան պետության պատմության մեջ երբևիցե, այսպես ասած, ոչնչացում կամ եղեռն չի եղել»։ Բայց չէ որ օսմանյան պետությունը ծնվեց հենց այդ միջոցներով՝ քաղաքակիրթ ժողովուրդներին բնաջնջելու և կոտորելու միջոցով։ Չէ որ օսմանյան տիրակալները բնաջնջման քաղաքականություն իրականացրել են ոչ միայն հայերի, այլ նաև հույների, բուլղարների, արաբների, հրեաների և կայսրության մեջ բնակվող մյուս ժողովուրդների նկատմամբ։ Եվ դա վկայում են ոչ միայն հայկական աղբյուրներն ու հայերը, այլև համաշխարհային պատմագրության կողմից վաղուց ապացուցված և հանրաճանաչ փաստերն ու փաստաթղթերը։

Ահա մի քանի վկայություններ։ 1822 թ. կոտորածների ենթարկվեցին հույները՝ 50 հազար մարդ, 1850 թ. նեստորականները՝ 10 հազար մարդ, 1860 թ. սիրիացիները՝ 11 հազար մարդ, 1876 թ. բուլղարները՝ 10 հազար մարդ, 1892 թ.՝ եզ-

գիները։ Ըստ ամերիկյան պատմաբան Գրինի, օսմանյան պետության պատմության մեջ 10 հազարից քիչ զոհ տված կոտորածները շատ են, և դրանց բոլորի ակունքին կանգնած են եղել զորքն ու քաղաքացիական իշխանությունները[16]։

Ա. Գալֆայանը «Համառոտ պատմություն միջին դարու» գրքում նկարագրում է XVII դարում թուրքական սուլթանների գազանային արարքներն ու վայրագությունները։ Սուլթան Մուրադ IV-ը պարսիկների դեմ պատերազմ սկսեց և Բաղդադ քաղաքին տիրեց... 30 հազար պարսիկ գերիներ սպանել տվեց... 17 տարվա թագավորության ընթացքում հարյուր հազարից ավելի մարդ սպանել տվեց և իրեն սաղող մի առած էլ ուներ, որ ասում էր. «Վրեժխնդրությունը մեծանում է, բայց երբեք չի ծերանում»։

Սուլթան Բայազետի հրոսակների կողմից Հունգարիան նվաճելու ժամանակ 150 հազարանոց հունգարական բանակից կենդանի մնացին միայն Սիգիզմունդ թագավորն ու մի քանի զինվորներ։ Բայազետը «10 հազար գերու իր աչքի առաջ սպանել տվեց»[17]։

Եվրոպացի մի ուսումնասիրող հեղնում էր, որ Նեջիբ, Խուրշուդ, Շեվքեդ, Զեքի փաշաներն ու Բեդիրխանը 1850—1894 թթ. ընթացքում կայսրությունը թեթևացնում էին քրիստոնյա բնակչության ավելցուկից[18]։

Կ. Պոլսում Անգլիայի դեսպան, թուրքամոլ Հենրի Լեյարդը քրիստոնյաների կոտորածներից մեկի մասին պատմում է. «Շուտով մենք տեսանք կոտորածների հետքերը։ Սկզբում կրի հետ միասին կուտակված գանգեր, ապա սպիտակին տվող ոսկորների շեղջեր, փտած լաթերի կտորներ։ Առաջ շարժվելուն զուգընթաց սկսեցին հաճախակի հանդիպել նման մնացորդներ, գրեթե լրիվ պահպանված ողնաշարերը դեռ կախված էին ցածր մացառներից։

Ես շուտով հրաժարվեցի դրանք հաշվելու փորձից։ Երբ մոտեցանք ժայռի բացվածքին, այն լրիվ ծածկված էր ոսկորներով, իրար փաթաթված կանացի երկար հյուսված մազերով, իր նախնական գույնը կորցրած սպիտակեղենով, մաշված կոշիկներով։ Այնտեղ կային բոլոր տարիքի գանգեր՝ սկսած դեռ չծընված երեխայից մինչև ծերը»[19]։

Շարունակելով այդ սահմռկեցուցիչ տեսարանի նկարագրությունը, Հ. Լեյարդը նշում է, որ իրենք որքան հնարավոր էր առաջ շարժվեցին և անցքից տեսան անդունդում լցված մարդկային մարմինների մնացորդներ։ Այստեղ, հերթական շարդերից մեկի ժամանակ, թաքնվել էր փախստականների մի ստվար խումբ, բաղկացած ոչ միայն տղամարդկանցից, այլ նաև կանանցից ու երեխաներից։ Նրանք թաքնվել էին այնպիսի տեղերում, ուր նույնիսկ լեռնային այծերը դժվարությամբ էին հասնում։ Բեդիրխան բեկը հայտնաբերում է նրանց թաքստոցը և, չկարողանալով այն գրավել, շրջապատում է։ Եղանակը շոգ էր ու հեղձուցիչ, պաշարվածները բավարար քանակությամբ ջուր և ուտելիք չէին վերցրել։ Բեդիրխանը Ղուրանի վրա երդվեց, որ, եթե շրջապատվածները դուրս գան թաքստոցից և հանձնեն իրենց մոտ եղած զենքը, ապա կխնայի նրանց կյանքը։ Բայց, երբ շրջապատվածները համաձայնվեցին ու մահմեդականներին ներս թողեցին, նրանք սկսեցին բոլորին սպանել, իսկ «երբ հոգնեցին զենքով սպանելուց, շատերին ժայռից ցած գլորեցին Զաբ գետը»։ Հազար մարդուց ազատվեց միայն մեկը։ Սերսպեստո գյուղի մի խումբ աղջիկներ իրենց ուղեկցող քրդերի աչքի առաջ նետվեցին գետը, խայտառակությունից ազատվելու համար։

1860 թ. սիրիական կոտորածներն ուսումնասիրած անգլիացի Կ. Գրագամը նկատում է, որ թուրքերը չէին խնայում նույնիսկ 5 տարեկան տղաներին, նրանց խլում էին մայրերից ու խփում գետնին և կամ մասերի բաժանում, իսկ եթե մայրերը նրանց ամուր էին պահում իրենց գրկում, երեխաներին սպանում էին մոր ձեռքերի մեջ, երբեմն մայրն ու երեխան սպանվում էին միասին։ Կանանց զգալի մասը հավատացնում էր, որ թուրքական զինվորները բռնում էին իրենց երեխաների ոտքերից ու նրանց մարմինները բաժանում երկու մասի[20]։

Ինչպես ամենուրեք, Լիբանանում ևս նահանգապետը սկզբում զինաթափում էր քրիստոնյաներին, և ապա նրանց տալիս իր զորքերին՝ հոշոտելու։ Կ. Գրագամը գրում է, որ կանայք պատմում էին, թե ինչպես էին իրենց ամուսիններին, հայրերին, եղբայրներին և երեխաներին մանր մասերի բաժանում և «այդ կտորները շպրտում մեր դեմքերին»։ Դեիր-ուլ-Կամար քաղաքում, մի գիշերվա ընթացքում 1100—1200 տղամարդ սպանվեց։ Շատ դիակներ մերկ էին և այլանդակված ա-

մենատարբեր միջոցներով. «Ես տեսա անգլուխ մարմիններ և մարմնից անջատված գլուխներ։ Եվ այս բոլորը առանց թաղելու։ Թողել էին, որ գազանները հոշոտեն»[21]։

Բուլղարացիների կոտորածները տեղում ուսումնասիրելուց հետո, Կ. Պոլսում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սկայլերը գրեց, որ Բուլղարիայի միայն մեկ մարզում ոչնչացվել է 15 հազար մարդ։ Սկայլերը, վճռականապես հերքելով թուրքական իշխանությունների պատճառաբանությունը, որ իբր ոչնչացվածները ապստամբներ էին, նկարագրում է, թե ինչպես Ադրիանապոլսի կուսակալը նախապես զինեց բոլոր մահմեդականներին, կազմակերպեց մարդասպանների ու թալանչիների խմբեր, որոնք «ապստամբությունը ճնշելու պատրվակով... իրականացրին ստորագույն հանցագործություն, որ կեղտոտեց ներկա հարյուրամյակի պատմությունը»[22]։

Մեջբերումները ցույց են տալիս, որ հպատակ ժողովուրդներին զաղրելի մեթոդներով սպանելը օսմանյան տիրակալների համար եղել է քաղաքական որոշակի ու տևական գիծ, որ նպատակ է հետապնդել ոչ միայն ֆիզիկապես ոչնչացնել, այլև այլանդակ բռնությունների միջոցով բնիկներին դուրս քշել կայսրությունից և մեծացնել թուրքերի տեսակարար կշիռը։ Իր գոյության բոլոր ժամանակներում,— գրում է հայտնի պատմաբան Ե. Ա. Ֆիրմանը,— «թուրքական տիրապետությունը եղել է օտարների տիրապետություն ճնշված ժողովուրդների հայրենիքում։ Այդ եղել է դաժանության, ուխտադրժության և կոպիտ կրքերի տիրապետություն։ Դա ոչ թե կառավարում էր, այլ կազմակերպված թալան»[23]։

Սովետական գիտնականների ուսումնասիրություններով ապացուցված է, որ XIV—XVIII դարերի ընթացքում Օսմանյան կայսրության հպատակության տակ գտնվող հայերի, հույների, քրդերի, արաբների և այլ ժողովուրդների զգալի մասը բնաջնջվեց կամ թուրքացվեց[24] և ձուլվեց օսմանյան թուրքերին։

Օսմանյան ցեղերի երևան գալու առաջին իսկ օրից օսմանիզմը եղել է նրանց իշխող խավերի քաղաքականությունը, որի նպատակն էր տեղական ազգաբնակչության ձուլման միջոցով թուրքերի թվի մեծացումը։

XV դարի հայտնի բյուզանդագետներ Դուկը, Ֆրանդուինը, Խալխոկոնդիլը, Կրիտովուլը վավերագրական նյութերի հիման վրա ցույց են տվել բնիկ ժողովուրդներին դաժան մեթոդներով թուր-

քացնելու, նրանց մշակույթը ոչնչացնելու և թուրքական բարքերը բռնի տարածելու օսմանցիների քաղաքականությունը։

Օսմանյան ամենախայտառակ վայրագություններից էր ենիչերիների հավաքագրումը։ Քրիստոնյաների երեխաներին խլում էին ծնողներից, դարձնում մահմեդական, դաստիարակում մուսուլմանական մոլեռանդության ոգով և օգտագործում որպես հարվածային ուժ՝ հպատակներին ճնշելու և նոր երկրներ նվաճելու համար։

Օսմանյան տիրապետությունը նաև բարոյական այլասերում ու խոշտանգում էր։

Մ. Մակքոլը գրել է. «Քրիստոնեական գյուղերում գեղեցիկ տղային կամ պատանուն շատ ավելի վտանգավոր է թուրքի աչքին երևալ, քան լավ աղջկան... Եվ թուրքերն ամենևին չեն ամաչում այդ մասին միանգամայն բացահայտ խոսել»[25]։

«Հարուստ և ազդեցիկ մի մարդ (օրինակ նահանգապետ, դատավոր կամ մուֆտի) բարեհաճ տղա ունեցող քրիստոնյայի մոտ է ուղարկում մեկին և հրամայում, որպեսզի նրա որդին իր մոտ գա։ Եվ քրիստոնյան, որ դարերի ընթացքում կեղտոտ ու դաժան ճնշումների միջոցով հասցվել է արհամարհելի վախկոտի ու նվաստացածի վիճակի, չի համարձակվում մերժել, որովհետև այդ դեպքում այս կամ այն պատրվակով ամբողջ ընտանիքը կարող է քայքայվել կամ ոչնչացվել»[26]։

Ղ. Ինճիճյանը նկարագրում է, թե թուրքական իշխող վերնախավը ինչպես էր կովկասյան ժողովուրդների պատանիներին ու աղջիկներին վաճառքի հանում օսմանյան շուկաներում։

Կ. Պոլսից, գրում է նա, Ախալցխայի փաշային հանձնարարվեց լեզգիներին հրաման ուղարկել, որպեսզի «այս երկրներն աճապարեն և վաճառելու նպատակով իրենց համար աղջիկ և տղա փախցնեն»[27]։

ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Վ. Վիլսոնը թուրքերին անվանել է «Կենտրոնական Ասիայից եկած ավազակախումբ»։

Իր ճառերից մեկում Գլադստոնը ասել է, թե ամենուրեք, ուր թուրքերը երևում են, նրանց հետևում մնում է արյան մեծ հետք և նրանց տիրապետության ամբողջ տարածքից անհետանում է քաղաքակրթությունը։ Նրանց կյանքի ղեկավարը անշեղ ֆատալիզմն է։

«Մենք կարող ենք թերթել աշխարհի տարեգրությունը, բայց ես չգիտեմ, թե ինչպիսի որոնումը մեզ կարող է տալ իշխա-

նության հանցագործ շահագործման ավելի սարսափելի օրինակ... Ոչ մի կառավարություն, ոչ մի ժամանակ այդքան չարագործություն չի կատարել և չի եղել այդքան անուղղելի»[28]։

Հայտնի իրավաբան-միջազգայնագետ Լ. Ա. Կամարովսկին Թուրքական վարչակարգն անվանել է «ամեն տեսակ ստի և բռնության խորհրդանիշ»[29]։ «Կ. Պոլսի գրավումից հետո,— գրել է «Լը Նորդ» թերթը 1892 թ. հունիսին,— անցել է 4,5 հարյուրամյակ, քաղաքակրթության փոքրագույն իսկ հետք չթողնելով ասիական քոչվորների ժառանգների վրա։ Ինչպիսին նրանք եղել են 6 դար սրանից առաջ, երբ Թուրքեստանի լեռներում ու հարթավայրերում իրենց գոյությունը պահպանում էին թալանի միջոցով, այդպիսին էլ նրանք մնացին մինչև օրս, երբ կոտորում ու խեղդում են հազարավոր քրիստոնյաների, որպեսզի տիրանան նրանց ունեցվածքին»։

«Արտասահմանյան երկրներից,— շարունակում է թերթը,— միայն Ռուսաստանը ճիշտ պատկերացում ուներ այդ հանցագործ պետության մասին. նախկին քոչվորների դաժանության ու գազանությունների մասին նա իմացավ իր կրոնակից եղբայրներից, որոնք թուրքական չարագործություններից փախել էին նրա պաշտպանության տակ... Թուրքիան չի փոխվել և հարազատ է մնացել իր նախկին բարբարոս ավանդներին... Թուրքիան 19-րդ հարյուրամյակի այս վերջին տարիներին մնացել է այն նույն սոցիալական, բարոյական, մտավոր և կառավարող վիճակում, որը նա ձեռք բերեց 1300 թվին, երբ... բարբարոս հորդան հիմնավորվեց Կարա-Կիսատի մոտ...»[30]։

Բացի դա, թուրքերը, գալով դրսից և ժառանգելով Բյուզանդական կայսրությունը, դարերի ընթացքում անկարող եղան յուրացնելու այդ ժառանգությունը, նրանք չկարողացան ոչ ենթարկել, ոչ ձուլել հպատակ ժողովուրդներին և ոչ էլ յուրացնել նրանց քաղաքակրթությունը, նվաճողն ու նվաճվածը ներքին կյանքում դարձան անհաշտ, նրանց միջև բացված անջրպետը հետզհետե խորացավ։

Թուրքերը ոչ միայն իրենք չստեղծեցին, այլև անտիկ քաղաքակրթությունից ոչինչ չսովորեցին։ Չսովորեցին, որովհետև այդ քաղաքակրթությունը խանգարում էր նրանց վաչկատուն ապրելակերպին։ Նրանք ճարտարապետական-մահմեդական հուշարձաններ ստեղծելու փոխարեն գերադասեցին եղած քրիստոնեական հուշարձանները, լավագույն դեպքում,

դարձնել մզկիթներ, ծեփի տակ առնելով այդ շինությունների հմայքը կազմող զարդաքանդակներն ու նախշերը։ Այդպես վարվեցին ս. Փրկիչ եկեղեցու հետ։ Երբ Օսմանյան կայսրությունն այցելեց գերմանական կայզեր Վիլհելմ II-ը, եկեղեցին ծեփերից ազատեցին, որպեսզի կայզերը հիանա 1511 թ. կառուցված ճարտարապետական այդ կոթողով։ Իսկ միապետի մեկնումից հետո եկեղեցու պատերը նորից ծեփեցին։

Թուրքերն ավերեցին իրենց զավթած բոլոր տարածքների վրա եղած շինություններն ու մշակույթի օջախները։ Այդպես անհետացան 6—8 մետր լայնությամբ բյուզանդական դարաշրջանում կառուցված հիանալի մայրուղիները, որոնց տեղը մնացին նեղլիկ արահետները, քանդվեցին բյուզանդական կամուրջները, ի չիք դարձան հռչակավոր մղոնանիշները, որոնցից յուրաքանչյուրը արվեստի գլուխգործոց էր։ Մղոնաքարերը թուրքերն օգտագործեցին որպես գերեզմանաքար, մարմարյա ջրավազանները՝ մսուր կամ անասուններին ջրելու աման, իսկ ժայռափոր շիրիմները՝ լվացարան։

Ա. Մանդելշտամը օսմանյան կառավարումը բնորոշում է որպես «կողոպուտի ու թալանի ընդարձակ կազմակերպություն»[31]։

* * *

Այժմ մի քանի փաստերով ցույց տանք հատկապես հայ ժողովրդի ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում։

XVI դարի օսման պատմագիր Փեչեվի Իբրահիմը նկարագրել է թուրքական գազանությունները Արևելյան Հայաստանում 1551—1554 թթ.։ Երբ թուրքական բանակը առաջ շարժվեց Նախիջևան և Սյունիք, գրում է Փեչեվին, նրա անցած ճանապարհը ավերակի վերածվեց։ «Ինակչությունն այն աստիճանի էր ցրվել ու ոչնչացել, որ մարդու հետք անգամ չէր մնացել»[32]։

«Անսահման էր նաև թալանված ու կողոպտված բազմատեսակ թանկագին ապրանքների քանակը։ Արտաքինից արծաթի նման մարմին ունեցող նորաբողբոջ սիրեկան տղաների, նորահաս և վարդանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկների, աննման և չքնաղ, գեղատեսիլ ու մանկամարդ հարսների թիվը հորինող գրիչս անգամ անկարող է արտահայտել...»[33]։

Թուրք մի այլ պատմիչ՝ Սելանիկին (XVI դարի վերջ, XVII

դարի սկիզբ) նկարագրում է, թե ինչպես մահմեդականները հայերին ստիպել են անտառից փայտ կտրել, խարույկ սարքել և նույն «այդ բնակիչները (հայերը) այրվեցին խարույկի վրա»[34]: Պատմիչը նկարագրում է 1579 թ. թուրքերի կողմից Երևանի գրավումը: Նա պատմում է «հավատոր և անասելի կողոպուտի, թալանի և հրկիզման ենթարկված Երևանի բնակիչների» ողբի մասին: «Ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք էին ագահորեն հարձակվում երկրի ռայաների վրա...»

Փեշեվին գրում է, որ 1578 թ. օսմանցիները Երևանից ու նրա շրջակա բնակավայրերից գերեվարեցին 20 հազար կին և երեխա, որոնց բոլորին մահմեդականացրին կամ ոչնչացրին: Նմանօրինակ ոճրագործությունների մասին հաղորդում է նաև Ք. Չելեբին, որը նշում է, թե 1579 թ. պատերազմի մի քանի օրվա ընթացքում Հայաստանում թուրքերը 15 հազար մարդու սրախողխող արեցին: Կենդանի էին մնում միայն նրանք, ովքեր մահմեդականություն էին ընդունում:

Իսկ Ե. Չելեբին պատմում է, որ 1662 թ. հրաման եղավ քանդել Կ. Պոլսի բոլոր եկեղեցիները: Շուտով այդ հրամանն ուղարկվեց գավառները: Եկեղեցիներ քանդեցին Կարսում, Ակնում, Շապին-Գարահիսարում, Կարինում և այլ տեղերում[35]:

XVII դարի պետական գործիչ Կոչի բեյը սուլթան Մուրադ IV-ին գրում է, որ այնպիսի բռնություններ ու ճնշումներ, ինչպես նա է գործադրում աղքատ ռայաների նկատմամբ, տեղի չեն ունեցել ոչ մի ժամանակ և ոչ մի տեղում: Այդ «ուժեղ բռնությունը գերդաստաններ է ոչնչացնում և վշտաբեկ մարդկանց արտասուքի մեջ խեղդում է աշխարհը»[36]:

Ուշագրավ է, որ, նկատի ունենալով հայերի բռնի մահմեդականացման ու երեխաների զանգվածային հափշտակությունների փաստերը, հայ պատմիչ Թադևոս Սեբաստացին հատուկ աշխատություն գրեց՝ «Ողբ Ստամբուլ գերի տարված մանուկների վրա» վերնագրով:

Օսմանյան կայսրությունում ռայայի իրավազուրկ վիճակը հասցրել էր նրան, որ, ինչպես վկայում է Ե. Չելեբին, «Կ. Պոլսում սուլթանը փողոցում տեղնուտեղը գլխատել տվեց մի հայի, որը համարձակվել էր իր ոտներին դեղին մեստ (մոյս) հագնել»[37]:

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում օսմանյան բռնակալները թուրքացնում էին նաև տեղանունները: Եթե XVII դարի թուրք պատմիչ Ք. Չելեբին Հայաստանը ներկայացնում է ոչ թե թուրքական, այլ հայկական տեղանուններով (Մեծ Արմենիա՝ Վանի և Կարինի նահանգներ, Փոքր Արմենիա՝ Ադանայի և Մարաշի նահանգներ), ապա շուտով պատկերն ամբողջապես փոխվում է: Բաբոյնք քաղաքը վերանվանվեց Բայազետ, Ալաշկերտը՝ Թոփրակալե, Սեբաստիան՝ Սվազ, Էջմիածինը՝ Ուչքիլ, Արմանի գետը՝ Մուրադչայ, Ախուրյանը՝ Արփաչայ, Սևանը՝ Գյոկչա և այլն և այլն:

Բռնությունները, հալածանքները, ապօրինությունները հատկապես լայն տարածում ու վայրագ տեսք ունեին արևելյան նահանգներում*:

Անգլիացի զինվորական Վ. Ուլյամը (հետագայում սըր Ցնուիքը) Ղրիմի պատերազմն ավարտվելուց հետո բնակություն է հաստատում Կարինում: Նա 1855 թ. փետրվարին մի զեկուցագիր է ուղարկում Անգլիայի արտաքին գործերի մինիստրին, որում թուրք և քուրդ հարկահավաքների մասին գրում է, որ այդ խավազների ամբողջ դասակարգը, սկսած մայրաքաղաքից, քաղաքներից ու գյուղաքաղաքներից մինչև գավառների խորքերը, որտեղ օգտագործվում էին որպես ոստիկան զինվոր կամ հարկահավաք, աշխարհում նմանը չունեցող բռնակալության դժոխային մեքենա է: Այդ մարդիկ՝ նախկին սպասավորներ, զինվորականներ, հացկատակներ էին այն փաշաների, որոնք Պոլսի հայ սեղանավորների կամ թուրք միջնորդների շնորհիվ գավառային որևէ պաշտոն գնելուց հետո, մայրաքաղաքից մեկնում էին՝ իրենց հետ ունենալով այս աղքատ և վերին աստիճանի դաժան խավազների խումբը, որը քաջ գիտեր, թե նախորդ փաշաների կողմից հարստահարված ամեն մի գյուղացու մոտ կողոպտման արժանի ինչ գույք էր մնացել:

Իսկ փաշան գալով գավառ, անմիջապես գործի էր անցնում՝ «նախ իր պաշտոնի համար վճարած գումարը ձեռք գցել և ապա իր մնդուկները ոսկով լցնել»: «Ավելորդ եմ համարում ձերդ

* 1825 թ. գրված մի նամակում կարդում ենք, որ հայերը «հասցվել են իրենց վերջին շունչը փչելու» վիճակին: Վանից գրում են, թե 1840-ական թվականներին տեղի հայության վիճակն այնքան ծանր էր, որ շատ վանեցիներ որոշել էին «ընտանիքով հանդերձ խույս տալ և գաղթել Ռուսաստան»:

վսեմությանն հավատացնել, որ այս մարդկանց կյանքի և նկարագրի զազրելի և զարհուրելի կողմերը լեզվով ներկայացնելը կարելիության սահմաններից դուրս է։ Իրենց շահատակությունները կենտրոնացնում են մասնավորապես քրիստոնեական գյուղերում, թեև պետք է խոստովանել, որ մահմեդական գյուղացին ևս լրիվ զերծ չէ նրանց հարստահարություններից։ Այս ոստիկանները միայն իրենց փաշայի առաջ են պատասխանատու, եթե «պատասխանատու» բառը երբևիցե կարելի է նրանց առնչությամբ օգտագործել։ Փաշան աշխատանքի է կանչում և պաշտոնանկ անում նրանց «արժանիքին» համապատասխան... (իսկ) այս «արժանիքը» չափվում է բռնակալության և ավազակության մեջ նրանց ցույց տված ընդունակության աստիճանով։ Այս կայսրության լայնածավալ տարածքով ճամփորդելիս ցավով համոզվեցի, որ արդեն քայքայված գյուղերին ավերման վերջին հարվածը հարկահավաքի ձեռքն է հասցրել։ Մահմեդական գյուղացիները կարող են դիմադրել և, թերևս, դիմադրում են, բայց վա՜յ այն քրիստոնյա ստրուկին, ով կհամարձակվի բերան բացել հարկահավաք բռնակալի՝ խավարի առաջ»[38]։

1862 թ. Մ. Խրիմյանը շրջագայում է Արևմտյան Հայաստանում և ականատես լինում հայ գեղջուկի անտանելի վիճակին՝ «կիսամերկ ու ոտաբոբիկ մայրեր ու զավակներ... տանջված դեմքերով ծերունիներ ու երիտասարդներ, որոնք սիրով ընդունում էին այդ անկոչ հյուրին և պատմում իրենց ահավոր կյանքի սև ու արյունոտ պատմությունները... ժողովուրդը... ստրուկ և գերի էր, որքան ցանկանային (նրան) կճնշեին ու կկեղեքեին, չկար մի փրկիչ, որ նրան ազատեր... ճնշված ու անճար ժողովրդի վերջին ճիգն ու հույսը մնացել է փախչելը...», իսկ չգաղթած գյուղացիները «գնացած գաղթականների ծանր բեռի տակ են ճնշվում, նրանք այնքան չքավոր են, որ իրենց բաժին հարկը վճարել չեն կարող, ինչպե՞ս կարելի է և ի՞նչ իրավունքով ուրիշի բաժին տուրքն էլ պիտի վճարեն»[39]։

1868 թ. Տարոնից Կ. Պոլիս պատրիարքարանին գրում էին. «Ազգային ապահովություն բացարձակապես չկա... հայերը մահվան սպառնալիքների մեջ են։

Ազգը արդեն հարստահարությունից երես դարձրած փախչում է Ռուսաստան, որովհետև խեղճերի վիճակն անտանելի է...»[40]։

1869 թ. Մուշի և Վասպուրականի հայության վիճակի մասին մի հանրագրում ասված է. «... մեր ստացվածքները հափշտակվում են, մեր տները, վանքերն ու եկեղեցիները կողոպտվում են, մեր կանայք և աղջիկները բռնաբարվում են...»[41]։

1874 թ. Կ. Պոլսի պատրիարքը Բ. Դոանը բողոքագիր է ներկայացնում, որում գրված էր, որ քուրդ բեյերը շարշարում և հարստահարում են հայ ժողովրդին, նրանից հարկ են գանձում, քանդում են եկեղեցիները, հրկիզում են անասնակերը, գյուղերից հայ բնակիչներին քշում և տիրանում են նրանց հողերին։ Հաջորդ տարի ներկայացրած մի այլ բողոքագրում պատրիարքը ներկայացնում է 276 գյուղերի ցուցակը, որոնց հայ բնակչության հողերը զավթել էին[42]։

1867 թ. Զարսանջակի հայերը կաթողիկոսին գրում էին, որ աղջիկը կամ պատանին ամուսնանալու իրավունք ստանալու համար 500—1500 ղուրուշ կանխիկ դրամ պետք է վճարեին գյուղի աղային։

«Թուրք հաղթողները,— գրում է Ռ. Ժեկմենը,— չհապաղեցին հասկանալ, որ պարտվածներին փոխանակ սպանելու, ավելի լավ է նրանց թույլ տան ապրելու ինչպես (անասունների) հոտ, որ որոշակի եկամուտ է բերում։

Զցանկանալով իմանալ և արհամարհելով այն ամենը, ինչով զբաղվում էին այդ անհավատ շները՝ հույները, հայերը և հրեաները, օսմանցիները բավարարվեցին նրանով, որ նրանցից ծծեցին ողջ հյութը, գանձելով գլխահարկ, որ կոչվում էր «խարաջ»՝ իրենց հարեմների համար փախցնելով նրանց պատանեկության ծաղիկը...»[43]։

Պատերազմն ու քաղաքականությունը նվաճողների սեփականությունը դարձան, իսկ այն ամենը, ինչ ճնշված ռասային մնաց ազգային ինքնագիտակցությունից, բացառապես կենտրոնացվեց կրոնական կյանքում։ Աստիճանաբար կրոնական համայնքները (ինչպես քրիստոնեական, այնպես էլ հրեական) իրենց եկեղեցիների, դպրոցների, հիվանդանոցների, բարեգործական հիմնարկների վարչությունների նկատմամբ ստացան իրավական և, նույնիսկ, քաղաքական լիազորություններ։

1871 թ. Հայկական ազգային ժողովը ստեղծեց մի հանձնաժողով՝ ուսումնասիրելու գավառներից ստացված բողոքներին ընթացք տալու վիճակը։ Բ. Դոանը 20 տարվա ընթացքում ներկայացվել էր 479 բողոք, որոնց առնչությամբ Բ. Դուռը հրամաններ էր ուղարկել կայսրության նահանգական իշխանու-

թյուններին, բայց այդ հրամանները գործնական ոչ մի ընթացք չեն ունեցել[44]։

Ահա մի մեջբերում այդ բողոքներից.

«Քրդերն ու մյուս լեռնային ռասաները, որոնց վերջին ժամանակները միացել են և չերքեզները, իրենցից ներկայացնում են իսկական աղետ ազգաբնակչության համար... Միշտ զինված, ոչ մի հարկ չվճարող, զինվորական ծառայությունից ազատ այս բարբարոսները գրեթե միշտ գտնվում են ապստամբ վիճակում։ Հայերը ծանր հարկեր պետք է վճարեն ոչ միայն թուրքական կառավարությանը, այլ նաև պարտավոր են քայքայիչ ծանրության տուրքեր վճարել հօգուտ այս վայրենիների»[45]։

Համաձայն 1876 թ. գրված մի հաշվեկշռության, պետական ծառայության մեջ գտնվող «օրինազանց բռնակալը բացառապես մի ինչ-որ օկրուգի կամ գյուղի սեփականությունը չէ։ Նա որպես ճակատագրական հետևանք թալության, ինչպես նաև բարձրագույն վարչական շրջանների փչացածության, տարածվում է ամբողջ Հայաստանով... և գրեթե ամբողջ Փոքր Ասիայով՝ բացառությամբ մեծ քաղաքների»[46]։

«Մասիս» թերթը 1877 թ. հունիսի 21-ին գրում է ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռազմաճակատ մեկնող թուրքական զորքերի կողմից Բերդի գավառում կատարած խժդժությունների մասին. «Անկարգություն, բարբարոսություն չի մնացել, որ չգործադրեն։ Այլուր գյուղում բռնությամբ նեղս են մտել բոլոր տները, տղամարդկանց ծեծել, կանանց ապտանացել... տներում ինչ գտել՝ կերել են, հափշտակել, փչացրել և նորից ընդդիմացողներին են գանձատեղ։

Թերթը նկարագրում է, թե ինչպես զինվորները զվարճանքի համար ստիպում էին գյուղացիներին վազել գետերում, նրանց հետևից փայտ էին նետում այնպես, որ երբ փայտը ավելի դիմադիմների ուսերին կպչելով նրանց գնալն էր պրկում, խլուրդ վազում էին և նույն փայտով ծեծում։ Նման վարվելակերպությունները զինվորներն այնպիսի սարսափ էին տարածել, որ գյուղերում, երբ մոտենում մարդիկ էին տեսնում (կարծելով թե

զորքեր էին գալիս), կանայք սարսափելի վայնասունով և լաց ու կոծով լեղապատառ փախչում էին։

«Մոկս գավառից քուրդ բեկը,— շարունակում է հոդվածագիրը,— 500-ի չափ քրդերով եկավ Վան, շեյխ Ջալալեդդինն էլ 1200-ի չափ քրդերով ու մեծ շուքով քաղաք մտավ շաբաթ օրը՝ մայիսի 7-ին։ Գրեթե 2000-ի մոտ քուրդ բաշիբոզուկները... թրթուրի պես իջան այս քաղաքի վրա, արդեն կողոպտված և վնասված Վանը լրիվ չորացնելու... որ գյուղերից անցել են, հայերին շարաշար գանակոծել են և սոսկալի անգթություններ են արել։ Արտամետի խեղճ հայ գյուղացիների մեջքին բարձել են իրենց բոլոր սննդամթերքն ու ռազմամթերքը, այդպես Վան մտան շեյխ Ջալալեդդինի մարդիկ...»*։

1850-ական թվականներին Արևմտյան Հայաստանում եղած ռուս գեներալ Լիխուտինը հայերի մասին գրում է. «Նրանք իրավունք չունեն զենք կրել, մինչդեռ բոլոր մուսուլմանները զինված են և այդ պատճառով վերջիններս նրանց գրեթե միշտ անպատիժ վիրավորում են. ես տեսա մի քանի հայեր՝ կտրված ականջներով և քթերով, մի բան, որ արված էր ոչ թե դատարանով, այլ կամայականորեն, այս կամ այն ազդեցիկ ու

---

* Ա. Տեկանցը երեք ամիս շրջագայել է Վանում, Բիթլիսում, Տարոնում և գրել իր «Այցելություն ի Հայաստան, 1878 թ.» նոթագրական. բնույթ ունեցող տեղեկատուն։ Նա պատմում է. մայիսի 21-ին անցնում էինք բարձր Հայքով. «...կարծես դար ու դաշտ, ձոր ու սարեր դեռ ծխում էին վրեժի ծխով ու հրով, ձյուն-ձմեռնոցով հապշտապ թաղված մեռելների և վիրավորվածներից ոմանց ձեռները, ոմանց ոտները, ոմանց գլուխները դուրս էին ընկած, կարծես, նույնիսկ, հողի տակ հանդարտվել չէին ուզում...»

«...մարդիկ պատերազմի աղետներից լքված ու բեկված, պատրանք էին համարում... ամեն մի հավաստիք, ռամկի ասածի նման՝ հոգու պատանքից կախված հուսահատներ էին... ընդհանուր սև ու սրտամեռ մի սարսափ էր տիրել նրանց սրտերին, քրդերի ու զորքերի հասցրած չարիքը պատմում էին ու լաց լինում դառնորեն, վստահությունն ու անվտանգությունը լրիվ վերցված էր և ինչպես կտիր ոչխար ամեհի արջերի կամ կատաղի գայլերի ձեռքն էին մատնված։ Դժբախտ մշեցիք, ավեր, ավար և սպանություն էր այնտեղ տիրում, ժողովուրդն անկարելից էր մնացել...» (Ա. Տեկանց, «Այցելություն ի Հայաստան, 1878 թ.», Ե., 1985, էջ 31, 40, 41)։

«Ես կը կարծեմ,— ծաղրում է Հ. Պարոնյանը,— թե կուսակալն Սեբաստիո բոլոր հայերը բանտարկված է և, հետևապես, դուրս մարդ չի մնացած, որ անոնց բանտարկվիլն հեռագրով իմացունեն մեզ։ Տաճկաստանի մեջ բա՞նտ... բանտին մեջ բանտ...» (Հ. Պարոնյան, ԵԺ, հ. 4, Ե., 1965, էջ 476)։

հարուստ գյուղապետի (մուսուլման) կամ տեղական դատարանի անդամի կողմից»[47]։

Կարինի անգլիական հյուպատոս Կ. Լլոյդը գրում է. «Սուլթանի հայ հպատակները տառացիորեն անպաշտպան են այնպես, ինչպես գայլերով շրջապատված ոչխարի հոտը»[48]։

Օսմանյան կայսրության պատմության մասնագետներից մեկը՝ Ռայտը, 1877 թ. գրել է. «Թուրքերը ավերում են ոչ միայն վայրենի կատաղության պահին, այլև լրիվ սառնասրտությամբ և իր իրավունքներին, օրենքին ու հավատին լրիվ համապատասխան։ Թուրքական տիրապետության միտումն այն է, որպեսզի իրականացվի բարոյական փչացում, տանջանք և ավերվածություն... Թուրքական կայսրությունում հազիվ թե գտնվի մի գյուղ, որ չունենա իր ողբերգական պատմությունը։ Հազիվ թե գտնվի մի քրիստոնյա ընտանիք, որ չունենա սարսափելի հուշեր, այնքան սարսափելի, որ անհնար է նրանց մասին մտածել կամ խոսել»[49]։

Թուրքական իշխանությունները կազմակերպում էին հայերի ունեցվածքի հրկիզում ու ոչնչացում։ Այդպես վարվեցին, օրինակ, Վանում։ 1876 թ. Վան քաղաքից «Մշակին» գրում են. «1876 թ. դեկտեմբերի 13-ը դարձավ Վան քաղաքի տարեգրության սև էջը... քաղաքը մի գիշերվա ընթացքում հրդեհվեց, թալանի և հարստահարության ենթարկվեց...»

Գիշերը ժամը 2-ին մոտ հայերը զարմանքով տեսան, որ «պահակային ծառայության զորքերը, ոստիկանությունն ու խուժանը միավորվելով, ձեռներին ջահեր ու կացիններ, ջարդում ու ավերում են իրենց խանութներն ու տները, թալանում ու այրում են դրանք»։ Դեպքի վայրում գտնվող պաշտոնատար անձանց մի մասը ցույց տվեց, թե անզոր է զսպելու թալանչիների զայրույթը և հանդես եկավ դիտողի դերում, իսկ մյուսները նույնիսկ ոգևորում էին թալանչիներին։

«Հայերից ոմանք զոհվեցին, ոմանք վիրավորվեցին»[50]։

Այդ գիշեր այրվեց հայերին պատկանող 1000 խանութ ու կրպակ, որ տարիներ շարունակ իր բացասական կնիքը դրեց քաղաքի տնտեսական կյանքի վրա։

Արդեն ասվեց, որ բնակչության անձն ու գույքը ապահովված չէր։ Ամենուրեք վխտում էին բազմաթիվ ավազակային խմբեր, որոնք թալանում էին, սպանում, ոչնչացնում։ Այդ ավազակախմբերի հարձակումներից ամենաշատը տուժում էին

հայերը, որոնք անզեն էին և օրենքի պաշտպանությունից զրկված։ Դիարբեքիրի վիլայեթի Բալու գավառի 17 գյուղերում 1877 թ. ընթացքում հարստահարություններից ու ավազակություններից տուժել էր 4 հազար մարդ։

Արևմտյան Հայաստանում շրջագայած Ի. Բիշոպը գրում է, որ Հայաստանի զգալի մասում ընդհանուր ապօրինություն է թագավորում։ «Ավազակները կանգնեցնում են քարավանները և կողոպտում։ Հայերի համար երկրում ճանապարհորդելը անպայման վտանգավոր է, ոչխարները քշում տանում են, մշտապես կատարվում են այնպիսի բռնություններ, որոնց մասին պատմելը պատշաճ չէ։ Գրեթե բոլոր գյուղերը հասցված են ծայրահեղ չքավորության։ Մինչդեռ նրանցից հարկ են քամում այն ժամանակ, երբ վճարելու համար քրդերը նրանց մոտ միջոց չեն թողել... զենք խլելը, քրդերի կողոպուտները, քուրդ բեյերի ճնշումները, որոնք իրենց բռնությունները պատճառաբանում են կառավարության սանկցիայով, կանանց համար անվտանգության բացակայությունը և առավել ևս վատ ապագայի սարսափը՝ այս ամենը բնակչությանը հասցրել է խղճալի վիճակի»[51]։

Այս փաստերը ցույց են տալիս, թե որքան ծանր էր հայերի դրությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից կամ Հայկական հարցի երևան գալուց առաջ։ Նրանք միաժամանակ հերքում են թուրք և թուրքամետ պատմաբանների պնդումները հայերի, այսպես կոչված, բարվոք վիճակի մասին։

Եվ պատահական չէ, որ հայ աշխատավորությունը, չկարողանալով տանել այդ անլուր ճնշումներն ու հալածանքները, ընդդիմանում էր, առանձին դեպքերում՝ զենքի դիմում։

Օսմանյան տիրապետության հայաջինջ քաղաքականության դեմ հայ ժողովրդի պայքարի ամենապայծառ էջերից մեկը դարձավ Զեյթունի 1862 թ. ապստամբությունը։

Դարեր շարունակ Զեյթունը կիսանկախ է եղել։ Գավառն ուներ ներքին ինքնավարություն և միշտ չէ, որ կառավարությանը հարկ էր վճարում։ Այդ պատճառով զեյթունցիների ու թուրքական զորքերի միջև հաճախ էին ընդհարումներ տեղի ունենում։

XIX դարի կեսերին սուլթանական կառավարության հա-

Թար այլևս անհանդուրժելի դարձավ Զեյթունի այդ կիսանկախ վիճակը։ 1860 թ. հունիսին, երբ զեյթունցիները փախուստի մատնեցին Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշային (որ փորձում էր զենքի ուժով հարկ հավաքել), Բ. Դուռը որոշեց վճռական քայլերի դիմել՝ գրավել ու ավերել Զեյթունը, իսկ նրա բնակչությանը՝ ոչնչացնել։

Մարաշի նոր կուսակալ Ազիզ փաշան, ունենալով գործնականում անսահմանափակ իրավասություններ, սկսեց նախապատրաստական լայն աշխատանքներ ծավալել Զեյթունի վրա արշավելու համար։ Նրա հանձնարարությամբ մեծ թվով շեյխեր, դերվիշներ և մոլլաներ շրջում էին Կիլիկիայի բնակավայրերով և մահմեդական ազգաբնակչությանը հայերի դեմ պատերազմի հանում։ Հայերին ոչնչացնելու միջոցով նրանց ունեցվածքին տիրանալու հեռանկարը Ազիզ փաշայի բանակատեղի բերեցին մեծ թվով մուսուլմանների։ Արշավանքի նախօրյակին այդ հրոսակների թիվը հասավ 40—50 հազարի, որոնց կռվի էին առաջնորդում 150 շեյխ և մոլլա։

1862 թ. մայիսի 27-ին թուրքերն անցան Ջահան գետը և շարժվեցին լեռնաշխարհի խորքերը։

Թիֆլիսում լույս տեսնող «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականի 1863 թ. մարտի համարում զեյթունցիների հերոսական գոյամարտը հետևյալ ձևով է ներկայացվում. «... պատերազմը բորբոքվել էր բոլոր կողմերում, Զեյթունի զանգերի հնչյունը բոլոր հայերին զենքի դիմելու նշան էր տվել։ Կռիվը խիստ կատաղի եղավ։ Հայերն ամուր դիրքեր գրավելով, այլազգիներին լավ ջարդ տվին ու նրանց հետ քշեցին և մինչև Ազիզ փաշայի բանակատեղին հասան, որը հազիվ կարողացավ մազապուրծ լինել։ Սրա նման մի ջարդ կերավ նաև Աստվածածնի վանքի կողմը եղած այլազգի գունդը։ Զեյթունցիները լեռների կիրճերում և նեղ անցքերում ամրացած լինելով, մեծ վնաս հասցրեցին այլազգիների բանակին։ Կռիվը առավոտից մինչև կեսօր տևեց, և Ազիզ փաշայի զորքերը դրանից հետո սկսեցին ցիր ու ցան փախչել։ Զեյթունցիք մինչև երեկո նրանց հետևից ընկան և շատ մարդ ջարդելով նրանց հալածեցին։ Այս զորքերի մի մասը Մարաշի ճամփան էր բռնել և իր փախուստի ժամանակ մեծ կորուստներ տալուց հետո, գիշերը հազիվհազ կարողացավ Մարաշ մտնել։ Մյուս մասը ավելի կարճ ճանապարհ անցնելով... լեռների, ձորերի ու կիրճերի մեջ ջարդ-

վեց, մի մեծ մաս էլ գետի մեջ թափվելով խեղդվեց։ Այսպիսով այլազգիների կորուստները վեց կամ ութ հազարի չափ է հաշվվում... Հաջորդ օրը, օգոստոսի 3-ին, զեյթունցիները զբաղված էին այլազգիների դիակները փոսերի մեջ գցելով»։

Սուլթանը, երբ իմանում է թուրքական բանակի պարտության մասին, Աշիր փաշային հրամայում է 150 հազարանոց զորք հավաքել և գրավել ու հիմնահատակ կործանել Զեյթունը։ Սակայն այս նոր արշավանքը տեղի չունեցավ, որովհետև սուլթան Աբդուլ Ազիզը վախեցավ, որ Նապոլեոն III-ը կօգտագործի այդ առիթը՝ կայսրությունից տարածքներ կորզելու համար։

Նա բանակցություններ սկսեց զեյթունցիների հետ։ Կընքվեց համաձայնություն. Բ. Դուռը հրաժարվեց Զեյթունի վրա հարձակվելուց, իսկ զեյթունցիները համաձայնվեցին հարկեր վճարել և ընդունել կառավարության կողմից նշանակված կայմակամին։

Եթե նկատի առնենք, որ այդ համաձայնագրից հետո էլ Զեյթունը պահեց իր կիսանկախ վիճակը, որ միայն 1865 թ. լեռնաշխարհ եկած կայմակամի իշխանությունը ձևական էր, ապա իրավամբ կարելի է արձանագրել՝ 1862 թ. իրադարձություններից Զեյթունը հաղթող դուրս եկավ։

Աննախադեպ էին Զեյթունի հերոսապատման արձագանքները։ Դրանք գործնականում համազգային բնույթ ստացան և իրենց ազդեցությունն ունեցան ոչ միայն արևմտահայության, այլև արևելահայության, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերի շրջանում։ 1862 թ. օգոստոսի 1-ին, այսինքն Զեյթունի վրա թուրքերի հարձակման օրը, Կ. Պոլսի հայ աշխատավորական տարրերը ցույց կազմակերպեցին։ Ցուցարարները պահանջում էին գործադրել արևմտահայերին խոստացած սահմանադրությունը, վերջ տալ հայերի նկատմամբ կիրառվող ճնշումներին ու հալածանքներին, դադարեցնել արյունահեղությունը Կիլիկիայում։ Ցույցը ճնշվեց զենքի ուժով։

Ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ Թուրքիայի ու Ռուսաստանի շատ քաղաքներում ու բնակավայրերում կազմակերպվեցին հանգանակություններ՝ զեյթունահայերին օգնելու նպատակով։

«Այն տարին,— գրում էր Սրբուհի Երիցյանը,— Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հա-

յոց վրա. յուրաքանչյուրի շրթներին Կիլիկիան էր, ամեն ոք մասնակից էր դրամական հանգանակություններին...»[52]։

Զեյթունի իրադարձությունները լայն արձագանք գտան նաև հայ մամուլի հրապարակումներում, դրանք ամենուրեք ոգևորություն առաջացրին, իրենց կնիքը դրեցին օսմանյան բռնատիրության դեմ հայ ժողովրդի հետագա շրջանի պայքարի վրա։

1860-ական թվականներին բողոքի ցույցեր ու զինված ելույթներ տեղի ունեցան Մուշում, Վանում, Կարինում, Դերսիմում։ Ի պատասխան ազգային ճնշումների ու հալածանքների սաստկացման, 1862 թ. զինված ելույթի դուրս եկան Վանի հայերը։ Նրանք, ինչպես 1862 թ. փետրվարի 28-ին գրեց «Փարիզ» պարբերականը, գրավեցին Միջնաբերդը։ «Երկու կողմերի սպանվածների ու վիրավորների թիվը հասնում էր 1000-ի»։

1863 թ. Մուշի բեկերի անարդարությունների դեմ բարձրացավ քաղաքի հայ ազգաբնակչությունը։ Ականատեսներից մեկը այդ զինված ընդհարումն անվանեց «բացահայտ ապստամբություն»։

Կարինի վիլայեթի Քղի գավառի 1868 թ. զինված ընդհարումը լայն արձագանք գտավ Կ. Պոլսի կառավարական և հասարակական շրջաններում։

1860—1874 թթ. բողոքի բազմաթիվ ընդվզումներ եղան Դիարբեքիրի վիլայեթի Զարսանջակի գավառում, որոնք ուղղված էին մահմեդական աղաների կողմից հայերի հողերի հափշտակությունների դեմ[53]։

Սակայն արևմտահայության այս և նման մյուս բոլոր ելույթները հաջողություն չունեցան։ 70-ական թվականները բնութագրվում են ազգային և սոցիալական ճնշումների ու հալածանքների սաստկացմամբ ու դրանց աննախադեպ ծավալումներով։

1. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1977, № 3, էջ 17—18։
2. Նոր կյանք, 1986, № 86։
3. Նոր դար, 1899, № 21։
4. Մ. Նալբանդյան, եՀԺ, հ. 2, Ե., 1948, էջ 352։
5. Ս. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Դ., Ե., 1972, էջ 172։
6. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 385—386.
7. Նույն տեղը, էջ 393։

8. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 46—47։
9. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 3, էջ 21։
10. Հ. Թումանյան, եԺ, հ. 4, Ե., 1969, էջ 162 և 167։
11. Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մաս Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 269։
12. Положение армян в Турции ..., с. 5.
13. Մ. Նալբանդյան, եՀԺ, հ. 3, Ե., 1941, էջ 103։
14. Մասիս, 1897, էջ 1885։
15. Положение армян в Турции ..., с. 177.
16. Նույն տեղը, էջ 285։
17. Ա. Գալֆայան, Համառոտ պատմություն միջին դարու, Վենետիկ, 1880, էջ 481։
18. Положение армян в Турции. ... с. 288.
19. Նույն տեղը, էջ 180—181։
20. Նույն տեղը, էջ 184։
21. Նույն տեղը, էջ 184։
22. Նույն տեղը, էջ 186։
23. Նույն տեղը, էջ 300։
24. Большая советская энциклопедия, т. 43, М., 1956, с. 442.
25. Положение армян в Турции..., с. 177.
26. Նույն տեղը, էջ 178։
27. Ղ. Ինճիճյան, Դարապատում, Վենետիկ, 1925, էջ 254—255։
28. Положение армян в Турции..., с. 303, 305—306.
29. Նույն տեղը, Предисловие, с. 8.
30. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 126—127.
31. Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 18։
32. Ս. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները..., հ. Ա., Ե., 1961, էջ 34։
33. Նույն տեղը, էջ 34—35։
34. Նույն տեղը, հ. 2, էջ 120։
35. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 16։
36. Նույն տեղը, էջ 17։
37. Նույն տեղը, էջ 18։
38. Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Բեյրութ, 1962, էջ 14—16։
39. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, Ե., 1985, էջ 57—60։
40. Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1979, էջ 238։
41. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, էջ 69։
42. Գ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 44։
43. Положение армян в Турции..., с. 17.
44. Նույն տեղը, էջ 24։
45. Նույն տեղը, էջ 26—27։
46. Հ. Ղազարյան, Ցեղասպան Թուրք, Բեյրութ, 1968, էջ 319 և Ջ. Կիրա-

կոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1, Ե., 1982, էջ 219—220։

47. М. Лихутин, Русские в Азиатской Турции в 1854—1855 годах, СПб, 1863. с. 168.
48. Положение армян в Турции..., с. 139.
49. Նույն տեղը, էջ 142։
50. Մշակ, 24 փետրվարի 1877։
51. Положение армян в Турции..., с. 264.
52. Փորձ, 1877, № 4։
53. 1862 թ. Զեյթունի և 1860—1870-ական թվականներին Արևելյան Հայաստանի մի շարք վայրերի հայերի ելույթների մասին հանգամանորեն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Ե., 1955, Վ. Մելիքսեթյան, Զեյթունի հերոսամարտը, Ե., 1960, Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը 1409—1921, Ե., 1962, Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Ե., 1974։

ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1877 թ. ապրիլի 24-ին Ալեքսանդր II-ը Քիշնևում մանիֆեստ ստորագրեց՝ Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու մասին։ Բալկանյան ռազմաճակատում ռուսական բանակները սրընթաց առաջ շարժվելով հայտնվեցին Կ. Պոլսի պատերի տակ, իսկ Կովկասյան ռազմաճակատում գրավեցին Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը, Սուխումը։ 1878 թ. փետրվարին, առանց կռվի, ռուսներին հանձնվեց նաև Կարինը։

Աբդուլ Համիդը խուճապի մեջ էր։ Նա թախանձագին դիմում հղեց Ալեքսանդր II-ին՝ «խնայել իր գահն ու կայսրությունը»։

1878 թ. մարտի 3-ին, Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան Ստեֆանո ծովափնյա ավանում, հայ մեծահարուստ Ա. Տատյանի ամառանոցում կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր։ Ըստ այդ համաձայնագրի անկախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան, ինքնավարություն էր տրվում Բուլղարիային, Բոսնիային և Հերցեգովինային։ Բոսֆորն ու Դարդանելը հայտարարվում էին բաց նեղուցներ։ Ռուսաստանը հետ էր ստանում Բեսարաբիան, Արևմտյան Հայաստանի տարածքից ստանում էր 35 հազ. քառ. կիլոմետր, որի մեջ մտնում էին Կարսը, Արդահանը, Բայազետը։ Ռուսաստանին էր անցնում նաև Բաթումը։

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացմանը և ձևակերպված էր հետևյալ կերպ. «Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի կողմից Հայաստանում գրավված վայրերի մաքրումը, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է այնտեղ ընդհարումների ու բարդությունների առիթ տալ, որոնք կարող են վնասակար անդրադառնալ երկու պետությունների բարեկամական հարաբերությունների վրա, Բ. Դուռը պարտավորվում է անհապաղ իրագործել բարվոքումներ և բարենորոգումներ, որոնք կծագեն հայաբնակ գավառների տեղական պահանջներից և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[1]։

Այս պայմանագրով Հայկական հարցը ձևակերպվեց որպես Արևելյան, այսինքն՝ Օսմանյան կայսրության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մաս և դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա։ Սուլթանական կառավարությունը հրապարակավ ընդունեց, որ կայսրության կազմում կա Հայաստան, և այնտեղ ապրում է հայ ժողովուրդը։ Պայմանագրում դրական էր նաև այն, որ բարեփոխությունների վերահսկողությունը իրականացնելու էր Ռուսաստանը, և ռուսական բանակն այդ ընթացքում մնալու էր Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում։

Ռուսական զենքի փառավոր հաղթանակը մեծ ոգևորություն էր առաջացրել հայկական շրջաններում, մանավանդ, որ Ռուսաստանը այդ պատերազմի նպատակն էր հռչակել օսմանյան տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների ազատագրումը։

«Մեծ հույսով,— գրում է Յու. Վեսելովսկին,— և ռուսական զենքի հաջողության ցանկություններով հայոց աշխարհի համար սկսվեց 1877—1878 թթ. պատերազմը։ Թուրքական բանակի յուրաքանչյուր պարտության հետ միասին, հայ հայրենասերների գիտակցության մեջ ավելի ամուր և որոշակի էր արմատավորվում շուտով ազատագրվելու հույսը»[2]։

«Մենք միշտ մեր հույսը դրել ու դնում ենք Ռուսաստանի վրա»[3],— գրեց Գ. Արծրունին։

Չնայած դրան, Կ. Պոլսի հայ լիդերները և պատրիարք Ն. Վարժապետյանը զգույշ գիծ էին վարում։ Ըստ «Մասիս» թերթի, ռեֆորմներն առաջին հերթին պետք են ոչ թե ապստամբող ազ-

գերին, այլ նրանց, ովքեր կողմնակից են օրինականությանը, կարգուկանոնին և խաղաղությանը։ Այս զգուշությունը նպատակ ուներ խուսանավել և թուրքական շովինիստների համար պատրվակ չստեղծել «ռուսական կողմնորոշման համար» հայերին պատժելու։

Բայց դա «Մասիսին» չխանգարեց 1878 թ. մարտի 7-ին գրելու, որ 16-րդ հոդվածն «արժանի է բոլոր հայ հայրենասերների աջակցությանը», որովհետև այն Հայաստանին հնարավորություն կտա Ռուսաստանի օգնությամբ շունչ քաշել։ Ն. Վարժապետյանն ավելացրեց, որ շնորհիվ այդ հոդվածի, «մեր ազգային հարցը ընդհանուր Արևելյան հարցի հետ միասին ձեռք բերեց նոր ձև և բովանդակություն»[4]։

Ռուսական զենքի ու դիվանագիտության այդ հաղթանակը, սակայն, կատաղության բռնկում առաջացրեց եվրոպական խոշոր պետությունների կառավարություններում, հատկապես Անգլիայում։ Նրանք միավորվեցին Ռուսաստանի դեմ։

Պահանջվեց հրավիրել միջազգային կոնգրես, որտեղ պետք է քննարկվեր Սան Ստեֆանոյի պայմանագիրը։ Ռուսաստանը հարկադրված էր համաձայնվել նման կոնգրեսի գումարման հետ, որովհետև նա ռուս-թուրքական պատերազմում ռազմական և նյութական առումով շատ էր թուլացել և ի վիճակի չէր պատերազմելու եվրոպական երկրների միացյալ ուժերի դեմ։ Անգլիացի պատմաբան Մ. Անդերսոնի վկայությամբ, 1878 թ. գարնանը անգլո-ռուսական պատերազմը գրեթե իրողություն էր դարձել։ Ալեքսանդր II-ի կարծիքով, Անգլիան պատրվակ էր փնտրում՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու[5]։

Ցարական կառավարությունը հարկադրված էր դիմելու Բիսմարկին՝ «Բեռլինում հրավիրել կոնգրես, այն հաշվով, որ Ռուսաստանը փրկվի երկընտրանքից՝ կամ պատերազմել Անգլիայի և Ավստրիայի հետ, կամ անվերապահ նահանջել»[6]։ Շուվալովին կոնգրես ճանապարհելիս Ալեքսանդր II-ը նրան ասաց. «Կոմս Շուվալով, հիշե՛ք, խաղաղության համար դուք ինձ գլխով պատասխան կտաք»[7]։ Իսկ ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինը ասաց. «Դուք վիճակը գիտեք։ Մենք այլևս կռվել չենք կարող... Պնդեք այն կետերի վրա, որ դուք գրտնում եք ու հնարավոր է անցկացնել և զիջեք բոլոր մյուսները, միայն թե կոնգրեսը չձախողվի»[8]։

Մինչ այդ Ռուսաստանն արդեն համաձայնվել էր վերանայելու Սան Ստեֆանոյի համաձայնագրի մի քանի կարևոր կետեր։

1878 թ. մայիսի 30-ին Ռուսաստանի և Անգլիայի միջև (Սոլսբերի-Շուվալով) կնքված համաձայնագրով, Օսմանյան կայսրությանն էին մնում Բայազետն ու Ալաշկերտը իրենց խիտ հայկական բնակչությամբ, որովհետև, ինչպես գրված էր համաձայնագրի 10-րդ կետում, «Այդ դաշտավայրերը Պարսկաստան տանող խոշոր տրանզիտային ուղիներ են և հսկայական նշանակություն ունեն թուրքերի աչքում»։ Համաձայնագրի 7-րդ հոդվածում ասված էր. «Սան Ստեֆանոյի պայմանագրով Հայաստանի նկատմամբ որոշված պարտավորությունները պետք է վերաբերվեն ոչ միայն Ռուսաստանին, այլ նաև Անգլիային»[9]։ Այդ նույն ժամանակ Անգլիան գաղտնի բանակցություններ էր վարում Բ. Դոան հետ։

Ռուսական զորքերի ներկայությունը գրավված տարածքներում, բնականաբար, շատ էր մտահոգում Աբդուլ Համիդին։ Նա պատրաստ էր նույնիսկ մեծ զոհողությունների, միայն թե «անիծյալ ռուսները» դուրս գային իր կայսրության սահմաններից։

Անգլիան, որ միշտ էլ պատերազմների ժամանակ հնոցին փայտ լցնողի դեր է կատարել, որպեսզի հաշտության բանակցությունների սեղանների շուրջ կարողանար վայելել իր մեքենայությունների պտուղները, իսկույն հասկացավ սուլթանի տրամադրությունը և Աբդուլ Համիդին հավաստիացրեց, որ պատրաստ է պաշտպանելու Թուրքիայի շահերը, եթե սուլթանը Անգլիային զիջի Կիպրոսը։ Համիդը համաձայնվեց, ու հունիսի 4-ին կնքվեց գաղտնի համաձայնագիր։ Եվ երբ հուլիսի 8-ին անգլիական ծովակալ Հեյի զորքերը Կիպրոսում ափ իջան և կղզու վրա պարզեցին անգլիական դրոշը, տերությունների ղեկավարները շփոթվեցին։

Դրա փոխարեն, եթե Ռուսաստանը «այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում Նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ Նորին կայսերական մեծություն սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար»[10]։

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանում ռեֆորմների

անցկացմանը, ապա դրանք «պետք է լինեն Անգլիայի և Բ. Դռան համաձայնության առարկան»։

Բայց մեծ տերություններից յուրաքանչյուրն էր ձգտում Օսմանյան կայսրությունից համեղ պատառ փախցնել։

«Հրացանների փողերը,— գրում է Ն. Ադոնցը,— վաղուց արդեն ուղղված էին մահվան դատապարտված «հիվանդի» հարուստ ժառանգությանը։ Թուրքիան Պենելոպեի նման գրեթե մի ամբողջ հարյուրամյակ շրջապատված էր նրա հմայքներին ձգտող երկրպագուների ամբոխով։ Այն չունենալով որևէ բարեբար, սիրով էր իրեն առաջարկում բոլոր նրանց, ովքեր կարող էին ապահովել իր գոյությունը և անվտանգությունը։

Հակառակ բոլոր լավատեսական սպասումների, Թուրքիայի ճակատագիրը նախապատրաստել էր հենց ինքը։ Այն կախված էր երկու հիմնական գործոններից՝ ներքին տրոհումից և արտաքին ճնշումից»[11]։

Բեռլինի կոնգրեսի նախօրյակին խոշոր պետությունների իրարամերժ շահերը հրապարակավ բախվեցին։ Ավստրո-Հունգարիան գտնում էր, որ Արևելյան հարցում իրեն պետք է պատկանի վճռական խոսքը։ Դեռ Մետերնիխն էր ասում՝ «Արևելքը Վիեննայի արվարձաններից է սկսվում»։ Այդ օրերին էր, որ Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ռուդոլֆը հայտարարեց. «Սալոնիկը մեզ պետք է ինչպես հացը»։ Մի անգամ մատը դնելով Կ. Պոլսի քարտեզի վրա, նա իր դստերն ասաց. «Դու այստեղ ես թագուհի ձեռնադրվելու»[12]։ Եվ պատահական չէ, որ Բեռլինի կոնգրես հրավիրելու պաշտոնական առաջարկության հեղինակը դարձավ Վիեննան։ Բայց որովհետև տվյալ ժամանակաշրջանում այդ զավթողական պլանների իրականացումը գործնականում անհնար էր և շատ ավելի հավանական, որ Ռուսաստանը կարող էր դառնալ ոչ միայն Կ. Պոլսի ու նեղուցների, այլև Օսմանյան կայսրության արևելյան նահանգների տերը, Ավստրո-Հունգարիան, ինչպես նաև Եվրոպայի մյուս մեծ տերությունները առաջ քաշեցին Թուրքիայի «ստատուս քվոյի» պահանջ և չարիքներից փոքրագույնը համարեցին պահպանել սուլթանի տիրապետությունը և նրան դարձնել նեղուցների «դռնապահ»։

Իտալացիների վարքագիծը Բիսմարկը բնութագրեց հետևյալ կերպ. «Շնագայլերի նման հետևում են առյուծին, որն իր զոհի հետ կռվի մեջ է, սպասողական և դարանակալ դիրքում դիտում են իմանալու համար, թե ով է հաղթողը, որպեսզի ճշմեն պարտվողին»[13]։ Ֆրանսիան դժգոհ էր անգլիացիների դիվանագիտական ակտիվությունից, մասնավորապես չէր կարողանում ներել, որ Անգլիային հաջողվեց ձեռք գցել Կիպրոսը։ Անգլիական կառավարությանը Ֆրանսիայի նման դիրքորոշումը վտանգավոր թվաց, և նա շտապեց հավաստիացնել, որ ինքը ճանաչում է սուրբ վայրերի նկատմամբ Ֆրանսիայի մենաշնորհը և համաձայն է, որ նա տիրանա Թունիսին։ Համեղ պատառ էր, և Ֆրանսիան գերադասեց Բեռլինի կոնգրեսում կանգնել Անգլիայի կողքին։

Գերմանիայի շահերը Բիսմարկից պահանջում էին երկդիմի քաղաքականություն վարել։ Ուստի նա հայտարարեց, որ Արևելքում Գերմանիան ոչ մի շահադիտական նպատակներ չունի և ստանձնեց միջնորդի դեր։ Իրականում նա ձգտում էր, մի կողմից, Եվրոպային (մասնավորապես Ֆրանսիային) ներքաշել Օսմանյան կայսրությունից պատառներ պոկելու գզվռտոցի մեջ, որպեսզի մեջտեղ չբերվեին եվրոպական խնդիրներն ու Ֆրանսիան չդներ Էլզասի և Լոթարինգիայի հարցը, իսկ, մյուս կողմից, հետ մղել Ռուսաստանի առաջխաղացումը և Գերմանիայի ապագա էքսպանսիայի համար գաղութատիրությունից ազատ տարածքներ թողնել։

Բիսմարկը Ռուսաստանից վախենում էր և իր հետնորդներին ավանդեց «Ռուսաստանի հետ երբեք չթշնամանալ»։ Իրականում նա ատում էր Ռուսաստանը և ամեն ինչ անում էր նրա հզորացման առաջն առնելու համար։ «Ռուսները,— հայտարարեց Բիսմարկը,— իրենց մարսողությունից ավելին կուլ տվին, պետք է որ Բեռլինի վեհաժողովը նրանց ստամոքսը թեթևացնի»[14]։

Բնորոշ է նրա հետևյալ հայտարարությունը Անգլիայի և Ռուսաստանի հակամարտությունում իր խաղացած դերի մասին. «Երկու կատաղի գազանների պարանոցից բռնել եմ, նախ՝ նրանց բաժանում եմ իրարից և ապա հսկում եմ, որ իրար հետ համաձայնվելով, ինձ չհոշոտեն»[15]։

Անգլիայի նենգ նպատակներից արտաքնապես սահմանազատվելու դիտավորությամբ, Բիսմարկը հայտարարեց, թե չի ցանկանում Անգլիայի կողմից հրահրվող շան դեր կատարել։ Սակայն վեհաժողովում նա շատ ավելի Անգլիայի կողմն էր, քան Ռուսաստանի։ Ինչ վերաբերում է Գերմանիայի շահերին,

ապա Բիսմարկը դրանք պաշտպանեց փայլուն ձևով։ Այդ ժամանակից գործածության մեջ մտավ «Այսուհետև Պոլսի ճանապարհը Բեռլինով է անցնելու» արտահայտությունը։ Ըստ էության այդ օրերին լուծվեց Բաղդադի երկաթուղու կառուցման հարցը։

Բեռլինում գլխավոր հակամարտ ուժերը Անգլիան ու Ռուսաստանն էին։ Թուրքիայի և Ռուսաստանի միջև դեռ պատերազմը շարունակվում էր, երբ Անգլիան աշխարհով մեկ աղմուկ բարձրացրեց, թե գրավելով Հայաստանը, Ռուսաստանը փակում է Անգլիայի առևտրական ճանապարհները։ Անգլիայի կառավարության ղեկավար Դիզրայելին Ռուսաստանից պահանջեց դադարեցնել հարձակողական գործողությունները, այլապես նա պատերազմի մեջ 300 հազարանոց բանակ կմտցնի։ Իսկ որպեսզի ռուսները չհամարձակվեն Կ. Պոլիս մտնել, 1878 թ. փետրվարին բրիտանական նավատորմը խարիսխ գցեց Իշխանաց կղզիներում։

Պատերազմի ժամանակ Անգլիան Թուրքիային ռազմական ու ֆինանսական օգնություն էր ցույց տալիս, տրամադրում ռազմական տեխնիկա, ինչպես նաև ռազմական մասնագետներ։ Անգլիացիները քայքայիչ աշխատանք էին տանում ռուսական բանակի թիկունքում՝ Կովկասում։

Ֆ. Էնգելսը գրում է. «Երկար պայքարից հետո 1878 թ. հունվարին ռուսական զորքերը մոտեցան թուրքական մայրաքաղաքի դարպասներին, երբ հանկարծ Բոսֆորում հայտնվեցին անգլիական չորս զրահապատ և հարկադրեցին ռուսներին, որոնք արդեն տեսնում էին Սոֆիայի տաճարի գմբեթները, կանգ առնել և Սան Ստեֆանոյի պայմանագրի իրենց նախագիծը տալ Եվրոպական կոնգրեսի քննարկմանը»[16]։

Դիզրայելին հայտարարեց, որ Միջերկրական ծովում գտնվող անգլիական նավատորմին հրամայված է պաշտպանել ոչ թե քրիստոնյաների կամ թուրքերի, այլ Բրիտանական կայսրության շահերը։

Սոլսբերին 1878 թ. ապրիլի 1-ին արտասահմանյան երկրներում Անգլիայի ներկայացուցիչներին ուղարկած շրջաբերականում գրեց. «Հայաստանի բերդերի գրավումը այդ մարզի բնակչությանը կդնի այն տերության ազդեցության տակ, որը դրանց կտիրանա և դա այն ժամանակ, երբ եվրոպական լայնածավալ առևտուրը, որն այժմ ընթանում է Տրապիզոնի միջոցով Պարսկաստան, Քուրդստանի որոշ տարածքներ Ռուսաստանին զիջելու հետևանքով, ամեն անգամ ենթակա է խոչընդոտելու»[17]։

Միջազգային իրավունքի հանրաճանաչ մասնագետ Մ. Գ. Ռոլեն Ժեկմենը գրում է. «... այդ ընդարձակ թերակղզուն հանգիստ տիրանալու և, ինչպես Միջագետքի հարթավայրի, այնպես էլ Պարսկաստանի և Վերին Ասիայի հետ հարաբերություններ ունենալու համար, չպետք է թշնամիներ ունենալ լեռնային տեղանքում, որը Կովկասը միացնելով Տավրոսի հետ, իր մեջ է ներառում Տիգրիսի, Եփրատի, Արաքսի, Քուռի, Ճորոխի ակունքները և առաջնակարգ ստրատեգիական կետեր, որոնցով պաշտպանվում են աննման բերրի հարթավայրերը»[18]։

Անգլիան Բեռլինի կոնգրես եկավ ռուս-թուրքական պատերազմի արդյունքները «լրիվ ոչնչացնելու» մտադրությամբ։ Պահպանողական կառավարությունը հանդես եկավ Օսմանյան կայսրության փրկչի դերում։

Վիկտորյա թագուհին նույնիսկ հայտարարեց. «Որքան կուզենայի տղամարդ լինել և ռուսների դեմ կռվել»։ Դիզրայելին փառաբանում էր թուրքերի բարեմասնությունները. ի նշան իր այդ վերաբերմունքի նա տանը ֆես էր կրում։

Բեռլինի վեհաժողովը բացվեց 1878 թ. հունիսի 13-ին, Ռատղեվիլի կամարակապ պալատում։ Բացելով կոնգրեսը, Բիսմարկն ասաց. «Մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի Սան Ստեֆանոյի տրակտատը ենթարկենք ազատ քննարկման»։ Անգլիան վեհաժողով էր ուղարկել պահպանողական կուսակցության դիվանագիտության ուղեղներին։ Պատվիրակությունը ղեկավարում էր կառավարության նախագահ, 74-ամյա Դիզրայելին։ Պատվիրակության կազմում էին արտաքին գործերի մինիստր Սոլսբերին և Բեռլինում անգլիական դեսպան Օ. Բիսվելը։

Ռուսական պատվիրակությունը ղեկավարում էր արտաքին գործերի մինիստր, ծերուկ Ա. Գորչակովը։ Պատվիրակության կազմում էր կոմս Շուվալովը։

Անգլիական պատվիրակության առաջարկությունները վեհաժողովում ծայրահեղ հակառուսական էին և փաստորեն ի չիք էին դարձնում ռուսական զենքի հաղթանակները։ Երբ Բիսմարկը Դիզրայելիին հարցրեց՝ նրա առաջարկները վերջնագի՞ր են, վերջինս պատասխանեց. «Անտարակույս», և եթե դրանք չընդունվեն, Անգլիան պատերազմ է սկսելու։ Անգլիայի արևելյան

քաղաքականության համար ամենաշահեկան վիճակն այն էր, որ «Բոսֆորի ափին ամեն ինչ վատ ընթանար»։

Եվրոպական հեղինակներից մեկը Բեռլինի կոնգրեսն անվանեց «օձաձկների ժողով»։ Ոչ միայն Անգլիայի, այլև վեհաժողովի մասնակից մյուս պետությունների ներկայացուցիչները մարդասիրական նպատակների, փոքր ու ճնշված ժողովուրդների շահերը պաշտպանելու մասին ճառեր ասելու և խոստումներ տալու գործում չէին զլանում, իսկ գործնականում զբաղված էին միայն իրենց պետությունների գաղութատիրական-եսասիրական շահերն առաջ տանելով։

Անգլիական պատվիրակությունը դեմ արտահայտվեց Բուլղարիայի և Հայաստանի ինքնավարությանը, պատճառաբանելով, թե այդ երկու երկրները ինքնուրույն գոյություն ունենալ չեն կարող և կընկնեն Ռուսաստանի ազդեցության տակ։ Դեռ ավելին, որպեսզի արդարացնի այդ ժողովուրդների վրա օսմանյան տիրապետությունը, Դիզրայելին նույնիսկ փորձեց կեղծել պատմական իրադարձությունները։ Ըստ նրա, ոչ թե «խաղաղասեր և հանգիստ թուրքերը», այլ «բաշիբոզուկն է գործադրել ծայրահեղություններ» բուլղար և հայ բնակչության նկատմամբ։ Զբավարարվելով դրանով, նա ավելացրեց, որ հայ և բուլղար «ապստամբներն էլ իրենց հերթին թուրքերից հետ մնացած չպետք է լինեն»[19]։

Գերմանացի դիվանագետ Հոհենլոհեի վկայությամբ, կոնգրեսում Դիզրայելիի ամենակատաղի ու կրքոտ ճառը վերաբերում էր Հայկական հարցին։ Նա պահանջում էր Թուրքիային վերադարձնել ոչ միայն Ալաշկերտը, Բայազետն ու Էրզրումը, այլև Բաթումը, Կարսն ու Արդահանը։ Տեղեկանալով այդ մասին, Ն. Վարժապետյանը Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Լեյարդին ասաց. «Համենայն դեպս դուք մեզ մի արդելք հոգով լինելու ռուսների հետ, որովհետև միայն Ռուսաստանին և Սան Ստեֆանոյի պայմանագրին ենք մենք պարտական այն բանի համար, ինչ մենք սպասում ենք կոնգրեսից։ Դո՛ւք, անգլիացիներդ, համակրում եք թուրքերին և արևելյան քրիստոնյաների վիճակը ձեզ համար ոչ մի նշանակություն չունի»[20]։

Հարկ է նշել, որ երբ մեծ տերություններն իրենց շահերին բխող հարցերը լուծելուց հետո անցան փոքր ժողովուրդներին հուզող խնդիրների քննարկմանը, վեհաժողովի մասնակիցներ

ների հետաքրքրությունը բեկվեց անտարբերության։ Լազերին վերաբերող հարցի քննարկման ժամանակ Բիսմարկը բացականչեց. «Պարոնա՜յք, այս շոգին արժե՞, որ լազերի խնդիրը ավելի շատ քննարկենք»։

Փոքր ժողովուրդների ներկայացուցիչներին, այդ թվում հայկական պատվիրակությանը, թույլ չտվեցին մասնակցել կոնգրեսի նույնիսկ այն նիստերին, որոնցում քննարկվում էր տվյալ ժողովրդին վերաբերող հարցը։ Խրիմյանը դառնությամբ բացականչեց. «Եվրոպացիները մեզ մարդ չհաշվեցին»։ Հայկական պատվիրակության ներկայացրած փաստաթուղթը կոնգրեսի կողմից ուշադրության չարժանացավ։

* * *

Գորչակովը Ալեքսանդր II-ին գրեց. «Բեռլինի կոնգրեսը իմ ծառայության կարիերայի ամենասև էջն է կազմում»[21]։

Բեռլինում կատարվեց պատմության մեջ հազվադեպ հանդիպող մի երևույթ, երբ պատերազմող ազգերի աթոռները զբաղեցրել էին պատերազմին մասնակցություն չունեցած երկրների ներկայացուցիչները, որոնցից ոմանք, առանց մի կաթիլ արյուն թափելու, կարկանդակի ամենախոշոր պատառները ստացան։

Ռուսական զենքի հաղթանակի արդյունքն ի վերջո եղավ այն, որ Ավստրո-Հունգարիան ստացավ 1093 քառ. միլ, Անգլիան՝ Կիպրոսը, իսկ Ռուսաստանը՝ ընդամենը 636 քառ. միլ։

Կոնգրեսի վերջում, 1878 թ. հուլիսի 17-ին, լորդ Սոլսբերին առաջարկեց զբաղվել Սան Ստեֆանոյի տրակտատի 16-րդ հոդվածով։ Իսկ հուլիսի 22-ին նրա առաջարկությամբ կոնգրեսը ընդունեց 61-րդ հոդվածի ձևակերպումը, որն իրար հետ համաձայնեցրել էին Անգլիան ու Թուրքիան։

Կոնգրեսի 61-րդ հոդվածում խոսքն արդեն ոչ թե Հայաստանի, այլ «հայաբնակ շրջանների» մասին էր։ Ահա այն. «Բ. Դուռը պարտավորվում է, առանց հետագա հապաղման, հայաբնակ շրջաններում իրագործել տեղական կարիքներից ելնող բարվոքումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից։ Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բ. Դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերություններին, որոնք կհետևեն դրանց իրագործմանը»[22]։

Սա այն էր, ինչ երազում էր Աբդուլ Համիդը։ Իսկ արյունարբու սուլթանը երազում էր ազատվել ռուսական բանակի ներկայությունից, որովհետև միայն այդ դեպքում էր նա դառնում դրության տերը և հնարավորություն ստանում իրականացնելու իր դիվային ծրագրերը։

Հատկանշական մի մանրուք։ Վեհաժողովի ավարտին Բիսմարկը օսմանյան պատվիրակությանն ասաց. «Հիմա գոհ պետք է լինեք, ձեզ 20 տարվա խաղաղություն ապահովեցինք։ Այդ ժամանակաշրջանը պետք է օգտագործեք ձեր ստանձնած բարեկարգումները իրականացնելու համար»։ Ապա նա քմծիծաղով ավելացրեց. «Ոչ թե հավատացած, այլ վստահ եմ, որ ոչ մի բան չեք անելու»[23]: Նա դրանում համոզված էր, չէ որ «իրավունքը հզորինն է»։

Սուլթան Համիդն ու Բիսմարկը իրար լավ էին հասկանում։

Բեռլինի կոնգրեսում օսմանյան դիվանագիտության խոշոր հաջողությունը պետք է համարել ոչ միայն այն, որ նա, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները, խափանեց Սան Ստեֆանոյի պայմանագրի շատ կետեր, այլև, խաղալով հայ հասարակական ու հոգևոր գործիչների քաղաքական միամտության, դիվանագիտական անփորձության և անհեռատեսության վրա, կոնգրեսում տպավորություն ստեղծեց, թե հայերը ապստամբական տրամադրություններ, Օսմանյան կայսրության կազմից դուրս գալու դիտավորություններ ունեն։ Հայը հռչակվեց որպես «ապերախտ» ազգ։

Բայց այդ ապերախտության՝ հայկական ինքնավարության գաղափարի հեղինակը ոչ այլ ոք էր, քան հենց ինքը՝ Աբդուլ Համիդը։ Բանն այն է, որ Բեռլինի կոնգրեսի նախօրյակին սուլթան Համիդը ռուսների առաջխաղացումը կասեցնելու և հայկական հողերն իր ձեռքում պահելու նպատակով առաջարկեց Կ. Պոլսի հայ հոգևոր ղեկավարներին, որ նրանք բանակցությունների ժամանակ պահանջեն հայկական ինքնավարություն՝ Թուրքիայի կազմում։ Դրանով նա, ինչպես իրավացիորեն նշում է Գր. Զոհրապը, ուզում էր Ռուսաստանի դեմ ստեղծել «տեսակ մը պատնեշ պետություն»։

Բայց, երբ Բեռլինի կոնգրեսը հարցերը լուծեց Թուրքիայի օգտին, սուլթանը հետ կանչեց հայկական պատվիրակությանը Բեռլինից և հրաժարվեց հայկական ինքնավարության ստեղծումից։

Աբդուլ Համիդի այս վարքագիծը ուներ նաև մի այլ պատճառ։ Նա մտադիր էր ոչնչացնել հայերին, և հայկական պատվիրակության առաջարկությունները հարմար առիթ էին կոտորածների քաղաքականությունը դրսի աշխարհին ներկայացնելու որպես հայերի ապստամբությունները սանձահարող պատժողական միջոցառում։ Նույն այդ նպատակով Համիդը կեղծեց կայսրության բնակչության ազգային կազմն արտահայտող թվերը և մեծ տերություններին համոզում էր, որ «հայերը վեց նահանգներից ոչ մեկում մեծամասնություն չեն կազմում և ինքնուրույն իշխանության կորիզ լինել չեն կարող»։ Նա գերմանական դեսպանին անկեղծորեն խոստովանեց. «Գերադասում եմ մեռնել, քան թե նման (բարենորոգումների) պահանջներին ընթացք տալ»։

Հունգարացի արևելագետ Ա. Վամբերին 1889 թ. հոկտեմբերի 22-ին հաղորդում է Լոնդոն, թե սուլթանը զրույցի ժամանակ իրեն ասել է. «Պատմիր քո անգլիացի բարեկամներին, մասնավորապես լորդ Սոլսբերիին, որի նկատմամբ մեծ հարգանք ունեմ, որ ես... ավելի շուտ թույլ կտամ գլուխս մարմնից պոկեն (այստեղ նա ավելի գրգռված դարձավ), քան թույլ կտամ ստեղծելու անկախ Հայաստան»[24]։

Այդ նկատի ունենալով, սովետական պատմաբան Դ. Ի. Երեմեևը իր «Թուրքերի ծագումը» գրքում գրում է. «Քրիստոնեական փոքրամասնության նկատմամբ Աբդուլ Համիդը իրականացնում էր սանձարձակ շովինիստական քաղաքականություն», որոշելով «Հայկական հարցին վերջ դնել հայերին ոչընչացնելու միջոցով»[25]:

Իզուր չեն ասել՝ «Կեղծել գիտենալը արքայի հմտությունն է»։

Դեռ 1877 թ. Համիդը, ընդունելով Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ասում է. «Իմ հայ ազգի որդիներից շատ գոհ եմ և նրանցից (հայերից) շատ շնորհակալ եմ։ Խնդրում եմ, որ ազգին հաղորդես իմ շնորհակալություններն ու սերը... Գիտեմ, որ հայ ազգը այս պատերազմի պատճառով շատ նեղություններ է կրել, բայց պետք է հաստատ իմանա, որ այս բոլոր տառապանքների փոխարեն շատ լավ օրեր է տեսնելու և իր հավատարմության պտուղը պիտի վայելի և բախտավոր լինի։ Բոլոր հպատակներիս սիրում եմ, մանավանդ հայ ազգին...»[26]։

Համիդը հավատարիմ է իրեն։ Նա առանց կարմրելու ստում

էր։ Չէ որ «ճանճերին միայն մեղրով կարելի է բռնել» (Աբդուլ Համիդ)։

Հայկական գործերում բացասական լուրջ դեր խաղաց հատկապես Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Լեյարդը, որ մեծ ազդեցություն ուներ թուրքական կառավարական շրջանների վրա և այդ պատճառով էլ ստացել էր «վիցե-սուլթան» անունը։ Սա այն Լեյարդն է, որ նաև մի այլ մասնագիտություն ուներ։ Նա շրջագայում էր Արևմտյան Հայաստանով, կողոպտում հայ մշակույթի արժեքները և դրանք վաճառում բրիտանական թանգարանին։

Լեյարդը Աբդուլ Համիդին ներկայացնում է որպես «երբևիցե իր տեսած ամենահաճելի մարդկանցից մեկը, բարի բռնկումների անձնավորություն»։

Դեսպանը Ռուսաստանի առաջխաղացման մոլի թշնամին էր, նա ձգտում էր Հայաստանը պահել Օսմանյան կայսրության կազմում և նրան ինքնավարություն տալ Անգլիայի հովանավորության ներքո, որ «կփակեր ռուսական առաջխաղացման» ճանապարհը։ Իսկ ինչ վերաբերում էր Ռուսաստանի հովանուտակ Հայաստանի ինքնավարությանը, նա այն անվանում էր «աբսուրդ՝ ռուսների բանսարկություն», որ կհարկադրեր Անգլիային Հնդկաստանի հետ կապ պահպանել միայն Հյուսիսային Սիրիայի միջոցով[27]։

Լեյարդը պատրիարքին հավաստիացնում էր, որ Անգլիան որոշել է ստեղծել Հայաստանի բուֆեր պետություն՝ թե՛ հայերի բարեկեցության, թե՛ Հնդկաստան տանող ճանապարհի ապահովության համար[28]։

Դրան Ն. Վարժապետյանը պատասխանեց. «Ոչ, ոչ, անգլիացիներն ու թուրքերն այժմ մեզ համար նույն բանն են, իսկ թուրքերից հայերը ոչ մի լավ բան սպասել չեն կարող»[29]։

Եվ իրոք, վիցե-սուլթանը մի կողմից քաջալերում էր պատրիարքի ձեռնարկումները, իսկ մյուս կողմից՝ Սոլսբերիին գրում. «Հայերի համար ինքնավարությունը արտառոցություն է»[30]։ Պետերբուրգի «Գոլոսը» մեջ է բերել Լեյարդի խոսքերը. «Անգլիան երբեք չի համաձայնվի Հայաստանին ինքնավարություն տալ՝ դա կնշանակեր հայերին վերածել Ռուսաստանի զենքի»[31]։

Իսկ Սոլսբերին ցինիկաբար հայտարարեց. «Հանուն քրիստոնյաների փրկության, մարդասիրական նկատառումներով իմ ձեռքը կանգ չի առնի ռուսների հետագա առաջխաղացումը կասեցնելու համար»[32]։

Անգլիական կառավարությունը բացարձակապես չէր թաքցնում իր մարտնչող թուրքասիրությունը և հայտարարում էր. «Սուլթանի թշնամիները մեր թշնամիներն են, նրա բարեկամները՝ մեր բարեկամները»[33]։ Բանն, իհարկե, Անգլիայի թուրքասիրությունը չէր։ Այդ թուրքասիրությունը նրան պետք էր կանխելու Ռուսաստանին, Հայկական բարձրավանդակը դարձնելով պլացդարմ նրա դեմ։ Անգլիան հայերին պաշտպանելու վարագույրի հետևում, «ոչնչացնելով Սան Ստեֆանոյի դաշնագիրը», այդ նույն հայերին հանձնեց թուրքերին՝ հոշոտելու։ «Անգլիացիները կեղտոտ ձեռքերով ու կեղտոտ նպատակներով իրենց ձեռքն առնելով օգնության սուրբ գործը, հայերին մատնեցին դառնագույն դժբախտության և Եվրոպայի աչքում կեղտոտեցին այդ ազգի մաքուր գործը...»[34]։

Հետագայում Լ. Ջորջը խոստովանեց. «Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա։ Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 թթ., 1909 թ. սոսկալի ջարդերին և 1915 թ. ամենասարսափելի կոտորածին»[35]։ «Անգլիական պատվիրակությունը Հայկական հարցը օգտագործեց սոսկ Ռուսաստանի դեմ Թուրքիայում իր դիրքերն ամրապնդելու համար»[36]։ Եթե չլիներ Անգլիայի միջամտությունը,— շարունակում է Լ. Ջորջը,— ապա հայերի մեծամասնությունը կանցներ ռուսական դրոշի պաշտպանության տակ[37]։

Իրավացի էր լորդ Շերբրուկը, երբ 1878 թ. հայտարարեց՝ անգլիական քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնյաների առաջ «փակեց դժոխքից դուրս գալու ելքը»[38]։

Ռուս հրապարակախոս Վ. Ա. Գոլստրեմը գրում է. «Այժմ մենք՝ ռուսներս, պարտավոր ենք հայկական սուրբ գործը առանձնացնել Անգլիայի կեղտոտ նպատակներից, պետք է օգնության (հայերի) այդ ճիշտ արձագանքենք, պետք է մեր պաշտպանության տակ առնենք մեր տառապյալ եղբայրներին...»[39]։

Հատկանշական էր, որ Բեռլինի կոնգրեսի նախօրյակին եվրոպական բոլոր մեծ տերությունների պալատներում հայկական պատվիրակությանն ընդունելով առատ խոստումներ

տվեցին։ Գերմանիայի կայսրուհին, լսելով հայերի տանջանքների մասին, նույնիսկ լաց եղավ և կայսեր անունից հուսադրեց հայերին։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վ. Հ. Վագդինդտոնը խոստացավ ոչ միայն պաշտպանել հայերի խնդրանքները, այլև միջնորդել մյուս պատվիրակությունների առաջ քվեարկելու դրանց օգտին։ Բայց հետագայում, երբ կոնգրեսի արձանագրությունները հրապարակվեցին, պարզվեց, որ նա կոնգրեսում հայերի օգտին ոչ մի խոսք չէր ասել։

Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կորտին նույնիսկ գաղափար չուներ, թե հայերը Օսմանյան կայսրության եվրոպակա՞ն, թե ասիական մասում են ուզում ինքնավարություն ունենալ։

Բեռլինում հայկական պատվիրակությունը հարկադրված էր հանդես գալ ոչ թե մարտիկի, այլ մուրացկի դերում։ Այդ նկատի ունենալով էր, որ Բիսմարկը Խրիմյանին ասաց, որ որևէ քաղաքական իրավունք պահանջելու համար կոնգրեսին պետք է ներկայանալ ոչ թե որպես հաշտվողական մուրացող, այլ այնպես, ինչպես Զեռնոգորիայի ներկայացուցիչը՝ հաղթական սրով։

Եվրոպական տերությունների մասին Գ. Սրվանձտյանցը գրել է. «Այդ կեղծ բարեկամները ոչ հայի հորեղբայրն էին, ոչ հայի քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ, որ մեզ էրիվայրի (գրաստի), պատրաստ ոչխարների և պարարակ (կթու) կովերի տեղ դնելով ուզում են մեր փարախից խրտնացնել-հեռացնել և իրենց ձեռքը ձգելով սպանդի մատնել...»[40]։

Տարիներ անց Արշակ Չոպանյանը գրեց. «Հարկ է ընդունել, որ անգլիական դիվանագիտությունը հայերի սրբազան իղձերի թշնամին է, մինչդեռ Ռուսաստանը իր շահերով հայերի դաշնակիցն էր և համաձայն էր ստեղծելու բարենպաստ պայմաններ Հայաստանում իսկական խաղաղություն ապահովելու համար»[41]։

Է. Դիլոնը նշում է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը հրաժարվեց ճանաչել Սան Ստեֆանոյի պայմանագիրը և սուլթանի քրիստոնյա հպատակներին թույլ չտվեց օգտվել ռուսական քաղաքականության բարյացակամությունից։ Նա փաստորեն պնդում էր, որ հայ ժողովուրդը վերստին մնա իր «կատաղի թշնամիների» ձեռքում։ Դիլոնը անգլիական կառավարության քաղաքականությունը համեմատում է այն վիրաբույժի հետ, որը վտանգավոր վիրահատությունից առաջ հիվանդի վրա դժվար փորձ է դնում՝ «տառապյալի կյանքի փրկության անհրաժեշտության» նպատակով, իսկ ինքը շուռ գալով հեռանում է՝ «նրան թողնելով արյունաքամ, մահվան ճանկերում»։

«...1878 թ. մեր (Անգլիայի) միջամտության հետևանքով... հայկական հինգ նահանգներում հաստատվեց կառավարման գազանային համակարգ, որի համեմատությամբ հարավային շտատների դաժան ստրկատիրական համակարգը սոսկ աննշան շարաշահում էր։ Մենք հանդիսավոր կերպով ոչնչացրինք քավարանը և էն գլխից նպաստեցինք դժոխքի ստեղծմանը... թույլ տվեցինք, որպեսզի հիմար կառավարման անկարգ համակարգը աստիճանաբար վերածվեր անխնա ոչնչացման սատանայական քաղաքականության»[42]։

Ռուս ճանապարհորդ Ա. Էլիսեն Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կապակցությամբ սրամտել է. «Այդ հոդվածը իսկապես հայերի շրթունքները թրջեց, առանց նրանց ծարավը հագեցնելու»[43]։

Պատկերավոր ու ճիշտ է ասված՝ եվրոպական պետությունները «հայերի արյունով իրենց մանածը ներկողներ էին»[44]։

Իրավացի են սովետական պատմաբանները, երբ գրում են. «Բեռլինի կոնգրեսը հայ ժողովրդի զգալի մասին թողեց թուրքերի ճնշման տակ։ Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար։ Այն թուրքահայերին մատնեց ֆիզիկական ոչնչացման»[45]։

61-րդ հոդվածը հայերի շրջանում խուճապ առաջացրեց։ Սկսվեց զանգվածային արտագաղթը։ Այդ օրերին «Մշակի» թղթակիցը Կարինից գրեց, որ քաղաքը թուրքերին վերադարձնելու լուրն իմանալուց հետո, «ինչ աղմուկ, շփոթմունք և հուսահատություն էր, որ տիրեց բոլորին... սուր ու մահ աչքերի առաջ, բոլոր գյուղացիք ահա պատրաստվում են, այլևս ոչնչի մասին չմտածելով, «փախի-փախչենք» ասելով ճանապարհ ընկնելու մեր հետևից՝ քաղցած, անոթի, մերկ ու տկլոր»։ Եվ ապա՝ «Թող միայն տեսնեն, թե ինչ հուսահատության ու տագնապի մեջ է տարաբախտ ժողովուրդը, որի ականջը միայն մի սպառնալիք է լսում, իսկ աչքը փախուստի վատ օրինակներ է տեսնում, որին

անգեն գտնելով՝ ամեն կողմից կրկնում են, թե մոտ է արդեն այն օրը, երբ հայի արյունով պիտի ցեխ շաղախեն, իսկ մարմիններից սարեր կառուցեն»[46]։

Ջ. Բրայսը Բեռլինի կոնգրեսին հաջորդած տարիները բնութագրեց որպես «թշվառության, ջարդի, մարտիրոսության, հոգեվարքի, հուսահատության տարիներ»։

Բեռլինի կոնգրեսի որոշումները սաստկացրին Աբդուլ Համիդի հակահայկական գործունեությունը։ Կոնգրեսն ազատություն տվեց սուլթանի ձեռքերին։

Կոնգրեսից հետո Թուրք կառավարության միակ նպատակը դարձավ ամեն կերպ գաղտնի և բացահայտ միջոցներով բնաջնջել հայ ազգաբնակչությանը, որով, ինքնըստինքյան և առանց արտաքին միջամտության, վճռված կլիներ Հայկական հարցը։

Գ. Օտյանը դառնությամբ գրեց, որ հաջողվեց 61-րդ հոդվածը դնել, և հազիվ թե հաջողվի այն ջնջել[47]։ Խրիմյան Հայրիկն ասաց. «Այդ հոդվածը հայերի գլխին փորձանք պիտի դառնա»[48]։ Հետագայում Ֆ. Նանսենը բացականչեց. «Վա՜յ հայ ժողովրդին, որ մտավ եվրոպական քաղաքականության մեջ։ Հայ ազգի համար շահեկան կլիներ, եթե իր անունը եվրոպական ոչ մի դիվանագետի շուրթերին չլիներ»[49]։

«Մշակ» թերթը գրեց. «Ազատություն ստանալու համար զենք պետք է գործածվի... եթե Հայաստանը չփրկվի, գոնե ավելի լավ կյանք կունենա»[50]։

Այսպես միջազգային քաղաքականության ասպարեզ նետվեց Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը կազմող Հայկական հարցը։

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին, մի կողմից, Օսմանյան կայսրության ներքին ճգնաժամի, իսկ մյուս կողմից, Մերձավոր արևելքում մեծ տերությունների գաղութատիրական, զավթողական քաղաքականության հետևանքով Թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի համար սկսվեց սոցիալական և ազգային ճնշումների ու հալածանքների նոր ժամանակաշրջան։

Սկսվեցին զուլումի տարիները։

1. Собрание договоров России с другими государствами, 1896—1917 гг. М., 1952, с. 168—169 *կամ Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 110—111։*

2. Ю. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Е., 1972, с. 417.
3. *Մշակ, 1878, № 23։*
4. *Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, պրակ 10, Թուրքիա, Ե., 1979, էջ 63։*
5. *Նույն տեղը, էջ 101։*
6. А. Ротштейн, Международные отношения в конце 19-го века, М., 1960, с. 86.
7. Русская старина, 1906, январь.
8. Собрание договоров России с другими..., с. 176—180.
9. *Նույն տեղը, էջ 178։*
10. Н. Кравченко, Очерки истории международных отношений конца 19-го и начала 20-го веков. Саратов, 1925, с. 22.
11. *ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 26։*
12. *Գ. Նազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր Սուլթան, Բեյրութ, 1980, էջ 180։*
13. *Նույն տեղը, էջ 229։*
14. *Նույն տեղը, էջ 210։*
15. *Նույն տեղը։*
16. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 16, ч. 2, М., 1960, с. 32:
17. С. Жигарев, Русская политика в восточном вопросе, т. 2, М., 1896, с. 183.
18. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 3.
19. *Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, պրակ 10, էջ 106։*
20. *Մշակ, 1878, № 127։*
21. Н. Кравченко. Очерки истории международных отношений..., с. 22.
22. *Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 121։*
23. *Գ. Նազճյան, Աբդուլ Համիդ..., էջ 232—233։*
24. *ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1982, էջ 11։*
25. Д. Еремеев, Этногенез турков, М., 1971, с. 198—199.
26. *Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 99։*
27. *Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, պրակ 10, էջ 102։*
28. *Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա. Փարիզ, 1934, էջ 81։*
29. *Մշակ, 1878, № 127։*
30. *Գ. Նազճյան, Աբդուլ Համիդ..., էջ 245։*
31. *Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, պրակ 10, էջ 107։*
32. *Նույն տեղը, էջ 102։*
33. *Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնակալության դեմ 1850—1870 թթ. Ե., 1955, էջ 313։*
34. Братская помощь пострадавшим в Турции армянам. Введение, М., 1897, с. 9.

35. Л. Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.
36. Նույն տեղը, էջ 390։
37. Նույն տեղը, էջ 332։
38. Լեո, Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 201։
39. Братская помощь ..., Введение, с. 9.
40. Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ ԺԷ։
41. Մշակ, 1878, № 127։
42. Братская помощь..., ч. 2, с. 12.
43. Գ. Եաղճյան, Աբդուլ Համիդ..., էջ 267։
44. Նույն տեղը, էջ 276։
45. История дипломатии, т. 2, М., 1963, с. 333.
46. Մշակ, 1878, №№ 137, 151։
47. Ա. Ալպոյաճեան, Պատմություն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 836։
48. Գ. Եաղճյան, Աբդուլ Համիդ..., էջ 271։
49. Նույն տեղը։
50. Նույն տեղը, էջ 273։

ԶՈՒԼՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Վ. Ի. Լենինը օսմանյան տիրապետությունը բնութագրել է որպես «բռնապետական» և «զարհուրելի ռեժիմ», որը Կ. Մարքսի խոսքերով «լուրջ արգելք է եվրոպական առաջադիմության համար»[1]։ Եվ իսկապես, մոտ 600 տարի գոյատևած Օսմանյան կայսրությունն արգելակեց իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների զարգացումը։ Զենքի ուժով ստեղծված այդ տերությունը երբեք ներքնապես չամրապնդվեց, ապրեց ճգնաժամի և անկման երկարատև պրոցես։

Մինչև XVII դարը օսմանյան պետության և ֆեոդալների եկամտի գլխավոր աղբյուրը պատերազմն էր։ Տիրապետողը թիմարական և զիսմեթական հողատիրությունն էր, որոնց ծնունդը կապված էր նոր հողերի նվաճման հետ։ Զինվորական ծառայության դիմաց բանակի հրամանատարական կազմին տրվում էր հողամաս, որը կոչվում էր թիմար ու զիսմեթ։ Այդ նոր գրավված հողերից հատկացվում էին նաև արքունիքին ու բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք անվանվում էին խաս և հոգևորականությանը՝ վակֆ։ Այսպիսով, կայսրությունում հողատիրության և հողօգտագործման ձևերը ծնվում և հաստատվում էին նվաճումների միջոցով ու նրանց զուգընթաց։ Հենց

այդ էլ հանդիսանում էր ռազմակալվածատիրական հողատիրության ձևավորման ու զարգացման հիմքը։

XIX դարում այդ հողատիրությունը ճգնաժամ էր ապրում և գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ Օսմանյան թուլացած կայսրությունը այլևս անկարող էր նոր զավթումներ կատարել։ Եկել էր ժամանակը, երբ նա հարկադրված էր մեկը մյուսի հետևից կորցնել նախկինում նվաճված երկրները։

Բացի դա, կայսրությունը այդպես էլ չթոթափեց ֆեոդալիզմի հետամնաց գործոնների ազդեցությունը։ Այդ գործոններից մեկը վաչկատուն ցեղերի չդադարող տեղաշարժերն էին, որոնց հետևանքը եղավ տնտեսական քայքայումն ու սոցիալական հետադիմությունը։

Սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի զարգացումն ու խորացումը հետևանք էին նաև հողի պետական սեփականության և հարկերի գանձման կապալային ձևերի։ Պակաս կարևոր չէր նաև այն, որ մահմեդական վերնախավի մենաշնորհն էին դարձել պետական, վարչական, ռազմական գործը, երկրի կառավարումը, իսկ տնտեսական կյանքը վստահվել էր ռայային, այսինքն ոչ մահմեդական ժողովուրդներին։

Կայսրության ռազմակալվածատիրական համակարգը կասեցնում, խոչընդոտում էր արտադրողական ուժերի ու կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը։

Ֆ. Էնգելսը նշում է. «Թուրքական, ինչպես և արևելյան ցանկացած բռնատիրություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. քամած հավելյալ արժեքը ոչնչով երաշխավորված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից։ Բացակայում էր բուրժուական ձեռներեցության համար առաջին և գլխավոր պայմանը՝ առևտրականի անձի ու նրա սեփականության անվտանգությունը»[2]։

Մյուս կողմից, Օսմանյան կայսրությունում ռազմաֆեոդալական հարաբերությունները խճճված էին ներքին և արտաքին հակասությունների մեջ, որոնք XIX դարի երկրորդ կեսին արտահայտվեցին սոցիալական ու քաղաքական խոր ճգնաժամով։ Հասարակության մի բևեռում ստվարանում էր օսմանյան պորտաբույծ ու կաշառակեր վերնախավը, իսկ մյուս բևեռում՝ թուրք, արաբ, հայ, քուրդ ու մյուս ազգերի, շահագործման միջնադարյան մեթոդների տակ կռացած, խավարի ու տգիտու-

թյան մեջ ընկղմված գյուղացիական զանգվածները, քաղաքային պրոլետարական ու լումպենպրոլետարական տարրերը։

Հասարակական այս երկու հակոտնյա խմբավորումների միջև, հայացքը վերնախավին հառած, վեր էին բարձրանում գյուղացիական տնտեսություններից, առևտրականներից, վաշխառուներից ու արհեստավորներից շահույթներ կորզելու միջոցով հարստացած բուրժուական տարրերը և կալվածատիրական ծագում ունեցող առևտրավաշխառուական բուրժուազիան։

Իսկ ահա կայսրության հասարակական բոլոր խավերը, գլխավորապես աշխատավորական զանգվածները, կքված էին սուլթանական արքունիքի անհագ շռայլությունների տակ։ Թե ինչ ծավալներ ունեին դրանք, բերենք միայն մի քանի օրինակներ։ Սուլթան Ազիզը իր դստեր ամուսնության համար ծախսեց 40 միլիոն ֆրանկ։ Սուլթանի պալատին բավարարելու նպատակով ամեն օր մորթվում էր 500 ոչխար, օգտագործվում 1500—2000 օխա կարագ։ Պոլսի ամբողջ ազգաբնակչությունը մեկ ամսում ավելի քիչ սուրճ էր օգտագործում, քան պալատը սպառում էր մեկ օրվա ընթացքում։ Պալատական ձիերի մեկ օրվա դարու պաշարը շաբաթներով կբավարարեր մի քանի հեծելազորային գնդի։

Սուլթանական պալատում ծառայողների թիվը հասնում էր 15 հազարի, որից 7000-ը սուլթանի թիկնապահ զորքն էր։

Աբդուլ Համիդ II-ը, որպես աշխատավարձ, պետական գանձարանից տարեկան ստանում էր 25 միլիոն ֆրանկ։ Այս գումարի մեջ չէին մտնում սուլթանի ստացած մեծաքանակ նվերները, քյոշքերի, մզկիթների և այլնի շինարարության ծախսերը։

Սուլթանը միաժամանակ երկրի խոշոր կալվածատերն էր. նա կայսրության տարբեր մասերում ուներ լայնածավալ և բերքի ցանքատարածություններ, այգիներ ու արոտավայրեր։ Նա և երկրի ազգաբնակչության միայն 5 տոկոսը կազմող խոշոր հողատերերը իրենց ձեռքում էին պահում մշակելի հողերի $^2/_3$-ը, իսկ գյուղացիական տնտեսությունների 87 տոկոսին պատկանում էր հողերի միայն 30 տոկոսը։

Կայսրությունը Աբդուլ Համիդի սեփականությունն էր, իսկ նրա ազգաբնակչության գլխավոր հոգսը՝ սուլթանի պահանջմունքների բավարարումը։ Եվ նա կողոպտում էր երկիրը, կողոպտում բռնագրավումների, կաշառքների, զանազան խարդախ

գործարքների, ինչպես նաև աշտոններ վաճառելու միջոցով։ Կեղեքել հասարակությանը, ապրել պերճանքի ու ճոխության մեջ՝ սա էր երկրակալի ու նրա ընտրյալների գլխավոր ու միակ հոգսը։ Ուստի պատահական չէր, որ գնալով արքունիքի ծախսերը մեծանում էին։

Այսպես, միայն 1891 թ. սուլթանի պալատը իր կարիքների համար ծախսեց ավելի քան 200 միլիոն ֆրանկ, որից կահույք ու կահկարասի գնելու համար՝ 7 միլիոն, սենդամթերքի ծախսերը կազմեցին 80 միլիոն, պալատի կենդանիների ու ձիերի խնամքը՝ 3 միլիոն, հարեմին հատկացվեց 49 միլիոն, ժամանցների ու խրախճանքների համար՝ 30 միլիոն։ Ըստ որում, այս գումարներից միայն աշխատավարձի ու պարգևատրությունների վրա ծախսվում էր 35 միլիոն, իսկ հարեմից թոշակի անցած կանանց վրա՝ 28 միլիոն ֆրանկ։ Սուլթանի ու նրա պալատի ծախսերը կազմեցին կայսրության եկամուտների $^1/_7$ մասը[3]։

Արքունիքում կար 1000 մատուցող, 800 խոհարար, 400 երաժիշտ, իսկ հարեմի համար՝ 300 ներքինի։ Պալատը տարեկան խժռում էր մեկ միլիոն գառ ու ոչխար։

Պատահական չէ, որ այս պայմաններում գանձատունը միշտ դատարկ էր ու պետությունը՝ պարտքերի մեջ խրված։ Ըստ որում, կառավարությունը պարտքեր էր վերցնում ոչ միայն երկրի փողատեր հարուստներից, այլև եվրոպական երկրներից։ Սկսած XIX դարի 50-ական թվականներից, օսմանյան պետության արտաքին պարտքերը ոչ մի տարի չիջան 200 միլիոն ֆրանկից։ Օգտվելով այդ վիճակից, օտարերկրյա կապիտալիստական ընկերությունները ստեղծեցին Օսմանյան պարտքերի վարչություն, որն իր բաժանմունքներն ուներ վիլայեթներում ու կազաներում և վերահսկողության տակ էր վերցրել կայսրության էկոնոմիկան։ 1913 թ. այս վարչության ձեռքում էր Թուրքիայի ամբողջ եկամուտի $^1/_3$-ը։ Դա Թուրքիայի կիսագաղութացման ուղու սկիզբն էր։

Անընդհատ ուռճանում էր պետական ապարատը։ Եթե 1790-ական թվականներին կառավարության գրասենյակներում աշխատում էր 1000—1500 մարդ, ապա 1890-ական թվականներին դրանց թիվը հասավ 100 հազարի։

Վարչական ապարատի ամենաբազմանդամ օղակը լրտեսների բանակն էր։ Աբդուլ Համիդի լրտեսների թիվը հասնում էր 43 հազարի, որոնց վարձատրման համար ծախսվում էր 8

միլիոն ոսկի։ Միայն սուլթանական պալատում նա պահում էր 3000 լրտես։ Ստեղծվել էր համընդհանուր լրտեսության մի վիճակ, երբ «ծառան մատնում էր իր տիրոջը, որդին՝ հորը, տերը ծախում էր իր ծառաներին, իսկ հայրը՝ որդիներին»։ Լրտեսական հսկողության տակ էին բոլոր մեծ ու փոքր պաշտոնավորները, մտավորականությունը՝ թե՛ երկրի ներսում, թե՛ արտասահմանում[4]։

Գործնականում ինքը՝ Համիդն էր ոստիկանության և լրտեսության անմիջական պետը, որոնցից նա պահանջում էր կույր հնազանդություն։ Սուլթանը լրտեսների գործունեությունը հրսկում էր անձամբ, նախանձախնդրությամբ կարդում նրանց զեկուցագրերը և տեղյակ էր ոչ միայն երկրի ներսում, այլ նաև արտասահմանում կատարվող քիչ թե շատ կարևոր բոլոր իրադարձություններին։ Լրտեսների վրա լրտեսներ էին նշանակված, լրտեսում էին բոլոր մինիստրությունների ու գերատեսչությունների ղեկավարներին։ Վարչապետն ու նախարարները խուսափում էին կարծիք հայտնելուց, որովհետև, եթե նրանց կարծիքները համընկնում էին, սուլթանը դրա մեջ դավադրություն էր տեսնում։ Մինիստրներին արգելված էր աշխատավայրից դուրս որևէ մեկի հետ հանդիպել։

Անգլիացի հրապարակախոս Ռիչարդ Դեյվին նկատում է, որ Աբդուլ Համիդ II-ը, իր ձեռքում կենտրոնացնելով բացարձակ իշխանությունը, երկրում իրականացրեց «երկու սարսափելի քաղաքականություն»՝ լրտեսության համակարգի ստեղծումը, որ նույնիսկ քաղաքականության հետ ամենահեռավոր կապ ունեցող մարդկանց կյանքն էր դարձրել անտանելի, և գրաքննությունը, որի հիմարությունները նույնիսկ անհնար է նկարագրել։ «Լրտեսության համակարգը երկրում անկարգությունների ու ապօրինությունների պատճառներից մեկն էր։ Երբ մարդուն վճարում են, որպեսզի նա լրտեսի իր հարևաններին, եթե անգամ հայտնելու ոչինչ չունենա, ապա ինքը ինչ-որ բան կհնարի»։

Լրտեսների ցանցը սարդոստայնի նման իր մեջ էր առել ամբողջ կայսրությունը։ Լրտեսները հեղինակ էին բազմաթիվ դիվերսիաների, ապօրինությունների ու բռնությունների։ Ստեղծվել էր մի շնչահեղձ մթնոլորտ։ Կարմիր ֆեսավորները ստվերի նման մայրաքաղաքի պողոտաներն էին չափում՝ նորանոր զոհեր որսալու նպատակով։

Համիդը հաճախ էր կրկնում. «Ուզում եմ, որ այսինչ անձը գոյություն չունենա իմ կայսրության մեջ»։ Այս խոսքերը իրականում մահվան յուրատեսակ վճիռ էին, և տվյալ անձը ոչընչացվում էր։ Սուլթանին կից գործում էր վարձկան մարդասպանների մի խումբ։ Երբեմն դատավարությունները կազմակերպվում էին պալատում, դրանց, վարագույրի հետևում ծպտված, մասնակցում էր նաև սուլթանը։ Այդ դատավարությունների ժամանակ մեծ տեղ էին հատկացվում խոշտանգումներին։ Սուլթանին հրճվանք էին պատճառում դատապարտյալների աղիողորմ կանչերը, խալիֆան, կատաղության փրփուրը բերանին, իր վրեժն էր ծամում ատամներով՝ արբենալով դատապարտյալի արձակած խուլ աղաղակներից և ամենայն սառնասրտությամբ ու դիվային ծաղրով իր անողոք ոխի հեշտանքն էր վայելում։

Զգացմունքներից զուրկ ոճրագործը սիրում էր կրկնել՝ «վրեժխնդրությունը մի կերակուր է, որը պետք է սառը-սառը ճաշակել»։

Կաշառակերությունը, այլասերումն ու քայքայումը բռնել էին Օսմանյան կայսրության կոկորդից և, ինչպես Աթաթուրքն էր ասում՝ «դրանք մեր մեծ երկրին և մեր մեծ ժողովրդին կորստի հասցնող հիմնական գործոններն էին»[5]։

Ինքը՝ Աբդուլ Համիդ II-ը, խոստովանում էր. «Ես գիտեմ, որ իմ շուրջը բոլորը թալանում են և նույնիսկ հսկայական հարստություններ են դիզում՝ շորթումներով ու կաշառքով։ Բայց Թուրքիայում չկան մարդիկ, որոնք, եթե հանգամանքները նրանց թույլ տան, չեն թալանի։ Ես նախընտրում եմ իշխանության ղեկին թողնել հին թալանչիներին։ Նրանք արդեն հարուստ են, դիզել են իրենց հարստությունը և եթե շարունակում են թալանել, ապա այնպիսի չափերով, որոնք ինձ հայտնի են։ Փոքր կաշառք նրանք չեն վերցնի։ Իսկ նոր անձնավորությունները քաղցած են, չբավարարված ախորժակով և, իհարկե, թալանելու են ավելի շատ, մինչև որ կշտանան... հներին ես իմ ձեռքում եմ պահում... իրենց կամքից անկախ նրանք ինձ հավատարիմ են, նոր մարդկանց հավատարմությանը, եթե նրանք կորցնելու բան չունեն, ես չեմ հավատում։

Մեր անբախտ ելումուտի պատճառով,— շարունակում է Համիդը,— երբեմն վճարումները հետաձգվում էին։ Ընտանի-

քը քաղցած է, հետևաբար բախշիշը (կաշառքը) կարող էր օգտակար լինել... Մեզ մոտ ամեն մի պաշտոնյա իրավունք ունի բախշիշ պահանջելու»[6]։

Սուլթանի անձնական քարտուղար Իսմեթ փաշան, պետական գանձարանից օտարերկրյա մի ֆիրմայի տուգանք վճարելու համար, գրպանում է 650 հազ. ֆրանկ, պետությանը հասցնելով 2,2 միլիոնի վնաս։ Երբ սուլթանին այս փաստը հայտնի դարձավ, նա իր հիացմունքը հայտնեց Իսմեթ փաշային այդ ճարպկության համար։ Հետագայում, երբ Իսմեթը Թուրքիայից փախավ, իր հետ տարավ մեքենայությունների ու զանազան խարդախությունների միջոցով դիզած 15 միլիոն ֆրանկ հարստություն։ Գանձարանից 10 միլիոն ֆրանկ էր եղողպտել պետական դույքերի մինիստր Մելհամեն։

Ֆինանսների և հասարակական աշխատանքների մինիստր Զիհնի փաշան կաշառքի նվազագույն չափ էր սահմանել՝ 500 հազ. ֆրանկ։ Միայն Բաղդատի երկաթուղու շինարարությունից նա կորզել էր մեկ միլիոն ֆրանկ։

Ծովային նախարարության աշխատողները զբաղված էին նավատորմի թալանով ու սպեկուլյացիայով։ Վաճառքի էր հանվում ամեն ինչ՝ սկսած «կոչումներից, պաշտոններից, հումքից, վերջացրած շոգենավերի ծխնելույզներով»։ Գնումներ կատարելու և պատվերներ տալու համար մինիստրությանը հատկացված միջոցների $^{9}/_{10}$-ը յուրացվում էր[7]։

Կաշառակերությունից հատկապես տուժում էր բանակի մատակարարումն ու սպասարկումը։ Իսկ բանակը կայսրության կյանքում վճռական գործոն էր։ Զինված ուժերին ամեն տարի հատկացվում էր 100 միլիոն ոսկի, բայց, չնայած դրան, զինվորը թշվառ վիճակում էր։ Այդպես էլ չհաջողվեց բանակը վերակառուցել։ «Թուրքական բանակը,— գրում է գերմանական ռազմական մասնագետ Մոլթկեն,— այդ ռուսական պարեգոտն էր, ֆրանսիական կանոնադրությունը, բելգիական զենքը, հունգարական թամբը, անգլիական սուրը, բացի գլխարկից, որ թուրքական էր»։

Մոլթկեն բերում է բանակի վերակացուի օրինակը, որը Եդեսիայում միայն մի քանի ամիս աշխատեց, բայց պաշտոնավարության այդ կարճ ժամանակը բավարար էր մեծ հարստություն դիզելու համար։ Երբ նա այլ վայր աշխատանքի մեկնեց,

ապա 1000 ձիու կարիք ուներ այդ հարստությունները տեղափոխելու համար։

«Կաշառքը,— շարունակում է Մոլթկեն,— սովորություններից ավելի օրինական դարձավ։ Ստորադաս պաշտոնյան չէր կարող մոտենալ վերադաս պաշտոնյային առանց որևէ նվեր տալու։ Դատարանում դատախազի նվիրական պարտականությունը վճիռ արձակելը չէր, այլ նրա անձնական կամքը, անշուշտ, միշտ օրենքին և արդարությանը հակառակ... բայց կայսրության ամենամեծ կաշառակերը սուլթանն էր։ Կուսակալության (պաշտոնի) վաճառքը, թեև սուլթանի համար եկամուտ էր, սակայն ինքնին անմարդկային էր։ Կուսակալության (պաշտոնը) գնող փաշան այն հարյուրապատիկ տոկոսով վճարել էր տալիս խեղճ ժողովրդին... գանձած հարկերի հարյուրից միայն տասն էր կառավարության դրամարկղը մտնում»[8]։

Զուլումի տարիների ականատես գրող Խ. Ուշաղելգիզը գրում է. «Ամբողջ երկիրը, վիլայեթներից մինչև կազաներ, ներսից ու դրսից ուտում էին որդերը։ Երկրի բոլոր հարստությունները կառավարությունը ուղղում էր պալատի անկուշտ երախը։ Ծառաներն ընտրվում էին դավաճաններից, մինիստրները՝ գողերից, ստոր մարդկանց ու սրիկաներին շնորհվում էին բարձր պաշտոններ, շքանշաններ էին կախվում համազգեստներից, որոնց ներսում կեղտից բացի ոչինչ չկա...»[9]։

Չարաշահումների, անիրավությունների, ազգաբնակչության կեղեքումների զանգվածային բնույթ ստացած երևույթների առյուծի բաժնի հեղինակները պաշտոնատար անձինք էին։ Պետական ապարատը զուրկ էր պատասխանատվության զգացումից ու կարգապահությունից։ Ծաղկում էր պրոտեկցիոնիզմը։

Մի զինվորական բարձրաստիճան ծառայող մեղադրվում էր խոշոր չարաշահումների մեջ։ Մեղադրանքը հաստատվում է։ Բայց, որովհետև նա պալատում ուներ հովանավորող, պատժվեցին ստորադաս ծառայողները։ Այդ նույն ժամանակ սուլթանի անձնական նավը Տրապիզոնի նավահանգստում սպասում էր այդ բարձրաստիճան պետին, որ նրան տանի մայրաքաղաք՝ պալատում ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու համար։

Պաշտոնյաների, մանավանդ կայմակամների կազմը հաճախ էր փոխվում։

Այսպես, Միդիայի օկրուգում 2 տարվա ընթացքում փոխվեց 5 կայմակամ, նրանցից ոչ մեկը իր պաշտոնը հեշտությամբ

չէր զիջում, մինչև որ մեկ անգամ ևս չշրջեր իրեն վստահված օկրուգում՝ ամենատարբեր պատրվակներով շորթելով դրամներ։ Իբավացի է Վամբերին, երբ նշում է, որ կայմակամները գնում էին գավառները ոչ թե պաշտոնավարելու, այլ իրենց քսակները լցնելու և նորից կենտրոն վերադառնալու նպատակով[10]։

Կայսրության պաշտոնական անձանց նման վարքագծի պատճառներից մեկն այն էր, որ նրանք կանոնավոր աշխատավարձ չէին ստանում։

«Թուրքական կառավարությանը,— գրում է Լեյարդը,— ոչ մի փրկություն չկա, քանի դեռ նա չի վճարել այն աշխատավարձերը, որ նրանից պետք է ստանան զինվորները չորս տարվա, իսկ զափթիեները՝ երկու տարվա համար։ Ծիծաղելի է խոսել ժանդարմերիայի վերակառուցման մասին, առանց նրան վճարելու»[11]։

Սուլթանի քաղաքականությունը, իր ձեռքում կենտրոնացնելով պետական ողջ իշխանությունը, հանգեցրել էր երկակի կառավարության՝ պալատի և Բ. Դուռն ստեղծմանը։ Կառավարական ամբողջ մեքենան կենտրոնացված էր Բ. Դուռն շրջանակներում։ Այն բաղկացած էր մինիստրություններից և լրիվ կազմակերպված գերատեսչություններից, պետական խորհրդից և մինիստրների խորհրդից։ Սակայն իրականում գոյություն ուներ մի այլ կառավարություն Ելդզի պալատում, որն ավելի հզոր էր, քան պաշտոնական կառավարությունը։ Այն կազմված էր հարեմի կանանցից, պալատականներից, մոլլաներից, ներքինիներից, աստղագետներից, մյուս տարրերից և աջակցություն էր ստանում գաղտնի ոստիկանությունից, որը սկսած մեծ վեզիրից ոչ ոքի չէր խնայում։ Կայսրության ընդհանուր քաղաքականությունը որոշում էր այս կառավարությունը, և կարևորագույն պետական խնդիրները հաճախ քննարկվում էին առանց Բ. Դուռն բարձրաստիճան գործիչների։ Հազիվ թե հարկ լինի ապացուցել, որ Բ. Դուռը և պալատը լարված հարաբերությունների մեջ էին և մեկը մյուսին խոչընդոտում էին գործելու։

Սուլթանը իրեն անկախ էր համարում այդ երկու կառավարություններից և միանձնյա էր լուծում բոլոր՝ թե մեծ և թե փոքր հարցերը։ Ձևականորեն նա գործում էր խնքնուրույն, բայց իրականության մեջ ոչ մի մարդ չի կարող կախված չինել այն

աղբյուրներից, որոնցից քաղում է իր տեղեկությունները և իրեն շրջապատողների անձական ազդեցությունից։

«Պալատի ֆավորիտների ազդեցությունը,— գրում է Փ. Դ. Գրինը,— ավելի քան մեծ է, և Աբդուլ Համիդը պատմության մեջ հանդես չի գա որպես կայսրության փրկիչ, սակայն կհամարվի մի սուլթան, որը կարող էր փրկել կայսրությունը, բայց չփրկեց»[12]։

* * *

Օսմանյան կայսրության ներքին կյանքի վրա փոքր չէր սուլթան Համիդ II-ի բնավորության ու վարքագծի ազդեցությունը։ Համիդի, որպես անձնավորության, տարօրինակություններ մասին շատ է գրվել։ Ավելորդ չենք համարում բերել նաև հետևյալ փաստերը. պատմում են, որ երբ թութակը նմանօրինակում էր սուլթանին, վերջինս կատաղության ջղաձգություն էր ունենում։ Մի անգամ նա բռնեց թռչնի վիզը և ոլորելով խեղդեց՝ բղավելով. «Այս պալատում հրամայող միայն մեկ ձայն կարող է լինել՝ իմ ձայնը»։

Համիդը չափազանց վախկոտ էր, նրան ամեն րոպե թվում էր, թե ինչ-որ մեկը այդ պահին ջանք է թափում իրեն սպանելու։ Այստեղ տեղին են Պլատոնի խոսքերը. «Իսկական բռնակալը իսկական գերի է»։ Եվ իսկապես, ժամանակակիցները ասում էին, որ Համիդի «իմաստության և խոհեմության սկիզբը երկյուղն էր»։ Այդ երկյուղն էր նաև նրա անմարդկային դաժանության ծնողը։ Որպեսզի համոզվի, որ իր եղբայրը իսկապես մահացել է և այլևս վտանգ չի ներկայացնում, նա պալատ է բերել տալիս Մուրադի դիակը։ Արքայի կասկածները փարատելու համար պալատականները նրա մազերից բռնած մի քանի անգամ վեր են բարձրացնում ու շպրտում գետնին։

Բռնակալը «մերթ ընդ մերթ, փոփոխաբար բարյացակամ է կամ դաժան, ագահ կամ առատաձեռն, փոքրասիրտ կամ գթաբարո, զառանցող մոլորյալի տեսք ունի։ Համիդը գորովի հանդեպ անզգա է, սիրտը փակ վեհ զգացմունքների համար... 25 տարիներ ի վեր ամրացված դղյակի նմանվող Ելդզի մեջ առանձնացել է՝ խզելով կապը իր ժողովրդի և նույնիսկ իր ազգակից հարազատների հետ... Նա նախանձ է, ստոր, ստախոս, չհանդուրժող, չարկամ, մեղրամոմի գույն ունեցող այտերը փո-

խանակ կարմրելու ժանգի կամ մաղձի գույն էին ստանում, ցասումի այդ բոպեներին կիրքը տիրապետում էր դատողությանը և անընդունակ էր դառնում տրամաբանելու... իրեն ասված էր կարծում՝ խաբվելով միշտ խալիֆայության տիեզերականության և իր գահի անսասանության վրա... ավելի վատ էր նայվածքը՝ տարտամ և անբացատրելի, որի ազդեցությունից խուսափել անհնար էր... ընչասեր էր ու ընչաքաղց, փառասեր ու եսասեր, շահամոլ ու մատնիչ, դավասեր ու դավադիր, երդմնազանց ու խոստումնադրուժ... Երբ թշնամիները զորավոր էին, նա իրեն հնազանդ էր ցուցադրում, քծնում էր, համակերպվում բոլոր տեսակի ստորացումներին, բայց երբ ինքն իրեն զորավոր զգար, սահման չկար նրա վայրագությանը»։

Համիդը, Նիցշեի խոսքերով ասած, հավատաց ոչ թե իրավունքի ուժին, այլ ուժի իրավունքին, իր շրջապատից վերացրեց խելամիտ անձանց, իրեն շրջապատեց տգետ ու անազնիվ մարդկանցով։ «Բռնապետը ժողովրդին է աղքատացնում, որպեսզի ինքը հարստանա» (Մոնտեսքյո)։ Համիդը տզրուկից արյունախում էր։ Տզրուկը, երբ արյունից արբում է, դադար է առնում, իսկ Համիդը շարունակեց կախված մնալ իր հպատակների կենսատու երակներից։

Կորցնելով վստահությունը շրջապատի նկատմամբ, սուլթանը անձամբ էր հետևում իր անձի անվտանգությանը։ Բացի զինված չինովնիկներից, պալատում միշտ էլ կային տասնյակ ժամապահներ։

Երբեք չէին իմանում, թե սուլթանը տվյալ օրը որտեղ է քնելու. նա ուներ ավելի քան 50 ննջասենյակ տարբեր շենքերում ու հարեմներում։ Ննջասենյակները հարկաբաժիններից բաժանված էին երկաթյա դռներով և կրում էին բարդ մտահղացումներով ստեղծված կողպեքներ։ Սենյակների պատերն ունեին գաղտնարաններ, որոնք կառուցել էին Եվրոպայից բերված վարպետները և հայտնի էին միայն սուլթանին։ «Ննջարանների դռների մոտ, բացի սուլթանի հրաձիգներից, կային երկուական վարժեցրած շներ, որոնք փոքր իսկ աղմուկից հաչում էին»[13]։

Սուլթանին ներկայացող կամ ընդունելության եկած անձը իրավունք չուներ ձեռքերը շարժել, դրանք պետք է անշարժ մնային այցելուի կրծքին, իսկ սուլթանի գրպաններում մի քանի ատրճանակներ կային և ընդունելությունների ընթացքում նրա

ձեռքը դրանցից մեկի ձգանին էր։ Նա կասկածում էր, որ իրեն ներկայացվող զեկուցագրերն ու տեղեկագրերը թունավորված են, և պահանջում էր դրանք իրեն տալ ափսեի վրա դրված՝ թունազերծման միջոցառումների իրականացումից հետո։ Նա վախից հանել տվեց շանթարգելը, սարսափում էր ռադիոյից, «դինամո» բառը լսել չէր ուզում, որովհետև նման էր դինամիտ բառին, արգելեց փոստային աղավնիները, դրանք համարելով եվրոպական լրտեսների լրտեսներ։ Եթե երազում տեսնում էր, որ որևէ պաշտոնյա սպառնում է իր կյանքին, այդ պաշտոնյան իսկույն հրապարակից հանվում, ոչնչացվում էր։ Աբդուլ Համիդը արգելեց ընդհանուր պատմության և քիմիական շատ բանաձևերի ուսուցումը։ Օրինակ, արգելվեցին բոլոր այն բանաձևերը, որոնց միջոցով հնարավոր էր սինթեզել պայթուցիկ նյութ։ Դասագրքերից հանվեցին «դժգոհ ենք», «ազատ չենք» և նման այլ «վտանգավոր» բառեր։

Նշենք նաև, որ ժամանակակից Թուրքիայում պրոպագանդիստական մեծ աշխատանք է ծավալվել Աբդուլ Համիդին արդարացնելու, նրան որպես բարության, արդարության և մեղմության տիպար ներկայացնելու ուղղությամբ։ Թուրքիայում այսօր աստվածացնում են մեկին, որի մասին նույնիսկ երիտթուրքերն են ասել. «Մարդկության պատմությունը չգիտի ավելի անազնիվ, ագահ և ստոր միապետի»[14]։

Ահա թե ինչ հրեշ էր նստած Օսմանյան կայսրության գահին, ահա թե ով էր որոշում նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը։

* * *

Օսմանյան կայսրությունը Ղուրանի սկզբունքների վրա հիմնված կրոնական, ռազմական պետություն էր, և հպատակ ժողովուրդների հետ նրա միակ կապը կողոպուտն ու բռնի ուժով նրանց ստրկական հնազանդության մեջ պահելն էր։

«Ղուրանը և նրա վրա հիմնված մահմեդական օրենսդրությունը,— գրում է Կ. Մարքսը,— ամբողջ աշխարհի աշխատավորությանն ու ազգությանը վեր է ածում երկու կեսի բաժանվող պարզ ու հարմար ֆորմուլայի՝ հավատացյալների ու անհավատների։ Անհավատը «գյավուրն» է, թշնամի է։ Իսլամը անիծում է անհավատների ազգությունը և ընդհանուր

թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների ու անհավատների միջև»[15]: Ռազմական օկուպանտների այդ դասակարգը իր ձեռքում միավորում է պետական բոլոր ֆունկցիաները՝ ռազմական, քաղաքացիական ու դատական[16]։

Ըստ այդմ էլ օսմանյան պետական քաղաքականության համար բնորոշն անսանձ շովինիզմն էր։ Օսմանյան կայսրությունը եթե ժողովուրդների բանտ էր, ապա քրիստոնյա ժողովուրդների համար՝ իսկական դժոխք։ Մահմեդական թուրքերը,— գրում է Ֆ. Էնգելսը,— «ինչպիսի սոցիալական վիճակ էլ նրանք ունենան, պատկանում էին արտոնյալ կրոնին ու ազգությանը. միայն նա իրավունք ուներ զենք կրելու, և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր էր հանդիպելիս ճանապարհը զիջել հասարակության ամենացածր խավին պատկանող մահմեդականին»[17]։

Ճիշտ է, մահմեդական ազգաբնակչությունը նույնպես ենթարկվում էր ճնշման ու հարստահարության, նա ևս դառը թասը խմում էր գրեթե մինչև վերջ, սակայն այդ թասի դառնագույն մասը մնում էր բացառապես քրիստոնյաների համար՝ «կրոնական հետապնդման տեսքով»։

Ֆրանսիացի պատմաբան Պոլ Ժանտիզոն կայսրության թուլության գլխավոր պատճառը համարում էր քրիստոնյաների իրավազրկությունը, որ, իր հերթին, բացասաբար էր անդրադառնում թուրքերի մտավոր զարգացման և գործարարության վրա։

Սուլթանի մահմեդական հպատակների ընկճված վիճակը, նրանց անշարժությունը և իսլամին անառարկելիորեն ենթարկվելը, որի հիմնական սկզբունքը կույր հնազանդությունն էր, պարզում են, թե ինչու նրանք կայսրության տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի վրա նկատելի ազդեցություն չէին գործում։

Ոչ թե քրիստոնյա ժողովուրդների ազատությամբ, այլ օսմանցիների վաչկատուն հոգեբանությամբ ու խավարամտությամբ պետք է բացատրել այն վիճակը, որ կայսրության ազգաբնակչության միայն տասնհինգ տոկոսը կազմող հայերի ձեռքում էին գտնվում երկրի ներմուծող առևտրի 50 տոկոսը, արտածող առևտրի 40 տոկոսը և ներքին առևտրի 80 տոկոսը[18]։

Անգլիական հյուպատոսներից մեկը նկատել է, որ Օսմանյան կայսրությունում «ժողովրդին բացարձակ կողոպտելը հանցանք չի համարվում»[19]։

«Մեր քաղաքական իմաստուններին,— նշում է թուրք քաղաքական գործիչ Ահմեդ Ռամզի էֆենդին,— ալլահը չի պարգևել ոչ խելք, ոչ փորձ... Դրա համար էլ նրանք համոզված են, որ մուսուլմանների հիմնական և սրբազան պարտականությունն է ոչնչացնել անհավատներին ամբողջ աշխարհում»[20]։

Դրա համար էլ օսմանյան կառավարողները խրախուսեցին կրոնական անտագոնիզմը և այն միջոց դարձրեցին տեռորի ենթարկելու և ստրկացնելու նրանց, ովքեր չէին ցանկանում ուրանալ իրենց հավատը, և ում դիմադրությունը սպառնալիք էր իսլամին՝ նրա աստվածակենտրոն համակարգին։ Թուրքական կառավարությունը այդ երկու կրոնական աշխարհների հակամարտության մեջ կատարեց հրահրիչի դեր։ Դրա հետևանքով այդ երկու ճամբարները դարեր ի վեր մնացին թշնամիներ. ուղղահավատներ և գյավուրներ, կառավարողներ և կառավարվողներ, զինվածներ և անզեններ, տերեր և ստրուկներ, շահագործողներ և շահագործվողներ, ավերիչներ և ստեղծողներ, նրանք, ովքեր վայելում էին առանց աշխատանքի և նրանք, ովքեր աշխատում էին առանց վայելելու։ Առաջինները հայրենիքի իսկական զավակներն էին, իսկ երկրորդները՝ նրա խորթ որդիները։ Մուսուլմանները կոչված են սուր վերցնել հանուն իսլամի, իսկ «քրիստոնյաները ընդամենը բեռնակիր անասուններ են, կոչված՝ լռելյայն կրելու իրենց բեռը հանուն իսլամի», «փափուկ գորգ» լինելու փադիշահի գահի աստիճանների վրա[21]։

Ռայան պարտավոր էր մշակել հողը, զբաղվել արհեստներով ու առևտրով և մյուս «սև աշխատանքներով», ժամանակին ու պահանջված չափով մուծել պետական ու մնացած տասնյակ տուրքերն ու հարկերը, ստրկական հպատակությամբ տանել թուրքերի քմահաճույքները։ Այն, որ թուրքը թույլատրելի էր համարում քրիստոնյայի ապրելու իրավունքը, դա արդեն գերագույն զիջում էր։ Չէ որ Ղուրանը պահանջում է. «Կռվեցեք նրանց դեմ, ովքեր չեն հավատում ալլահին... մինչև այն ժամանակ, քանի նրանք թուլացած ու ոչնչացած չեն տալիս փրկագին իրենց կյանքի համար». և մահմեդականին ստրկական հնազանդությամբ ծառայելը քրիստոնյայի այդ փրկագինն է։ Իսկ եթե քրիստոնյան կփորձի խույս տալ

հնազանդությունից,— թելադրում է Ղուրանը,— «ապա բռնեցեք նրան և սպանեցեք, որտեղ որ նրան գտնեք»[22]:

Համաձայն Ղուրանի, «Թուրքիայի բոլոր ոչ մահմեդականները orbeiից դուրս են դրված։ Երկրի միլիոնավոր բնիկ հին բնակիչներ՝ հույները, հայերը, նեստորականները, հակոբականները, հրեաները, սիրիացիները համարվում են օտարերկրացիներ։ Իրենց իրավական վիճակով նրանք ռազմական գերիներ են՝ համապատասխան իրավունքներով ու պարտականություններով»[23]։

«Հիրավի, կարելի է զարմանալ Թուրքիայի քրիստոնյաների կենսունակությամբ։ Նրանք, չնայած ամենադաժան ճնշմանն ու հետապնդումներին, կուլտուրական զարգացմամբ և առաջընթացով միշտ գերազանցում էին մուսուլմաններին»[24]։

Թուրքիայում աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կազմում էին մի ամբողջություն։ Կայսրության սուլթանը միաժամանակ հանդիսանում էր մահմեդական աշխարհի խալիֆը։

Թուրքական բանակը բացառապես մահմեդական էր, ազգային տոնակատարությունները՝ մահմեդական, պաշտոնական օրացույցը (ամսական թե տարեկան)՝ մահմեդական, օրենքները հիմնված էին Ղուրանի և մահմեդական սովորությունների վրա, օրենքների մեկնիչները մահմեդական դատավորներն էին և դատարանում նույնիսկ վկայությունը հանդիսանում էր կրոնական ակտ։

Անգլիայի գլխավոր հյուպատոս Վիլսոնը գրում է. «Այն բանի հետևանքով, որ առանձնահատուկ նշանակություն է տրվում մահմեդականի վկայություններին, բոլոր կեղծ վկաները մահմեդականներ են»[25]։

Ահա թե ինչու Թուրքիայում միլիոնավոր քրիստոնյաներ պետության քաղաքացիներ չէին համարվում պարզապես նրա համար, որ նրանք չէին պատկանում իրենց վրա իշխող նվաճողների կրոնին։ Քրիստոնյաները օրենքի առաջ, իրենց սեփական շահերի տեսակետից, գտնվում էին օտարերկրացու վիճակում, իսկ մահմեդականների շահերի տեսակետից ստրուկի վիճակում էին[26]։

Պատմական գրականության մեջ կարելի է հանդիպել կարծիքի, թե Թուրք իշխողները աչքի էին ընկնում այլ կրոնների նկատմամբ հանդուրժողականությամբ։ Սա ճիշտ է այնքանով, որ-

քանով կարելի է ասել, որ ստամոքսը «հանդուրժողական է» սննդի հեշտ մարսվող տեսակների նկատմամբ։

Մինչև այն ժամանակ, քանի դեռ քրիստոնյաները հնազանդվում էին Թուրքերի բոլոր տեսակի ճնշումներին և իրենց համար իրավունք չէին պահանջում, նրանց հանդուրժում էին, բայց հենց դիմադրավեցին՝ ենթակա էին բնաջնջման։

Ուսումնասիրողներից մեկը նշում է, որ «պաշտոնական կրոնից հրաժարվող մահմեդականները անմիջապես զրկվում էին իրենց հատուկ արտոնություններից և նույնիսկ պատժվում էին որպես հանցագործ։ Մահմեդականությունից հրաժարվելը համարվում էր դավաճանություն սուլթանին»[27]։

Բայց բանը միայն կրոնական պատկանելությունը չէր։ Օսմանցիները իրենց ստեղծած կայսրության ընդհանուր բնակչության միայն 1/5-ը էին կազմում։ Սուլթանական կառավարությունը լավ էր հասկանում, որ նոր ժամանակաշրջանում Թուրքերի փոքրաթիվ լինելը կարող է ճակատագրական դեր խաղալ կայսրության բախտի համար։ Իսկ իսլամը ուծացման ամենահզոր միջոցն էր։

* * *

1844 թ. Նիկոլայ I-ը Լոնդոնում հայտարարեց. «Թուրքիան հիվանդ մարդ է»։ Ահա այդ հիվանդ մարդը իրեն ներշնչեց, որ գոյատևելու համար պետք է ձուլել կայսրության ժողովուրդներին, նրանց Թուրքացնել։

Օսմանյան կառավարության նախկին Մեծ վեզիր Ֆուադ փաշան 1869 թ. սուլթան Աբդուլ Ազիզին հասցեագրված կտակում գրում էր. «Ներքին գործերի մասին մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն մի նպատակի միայն, այն է՝ մեր ցեղերի համաձուլում։ Առանց դրա մեր կայսրության միությունը անկարելի է թվում»[28]։

Ֆ. Էնգելսը նշում էր, որ Թուրքերը, օգտագործելով «քաղաքացիական և ռազմական պաշտոնի իրենց մոնոպոլիան», ձգտում էին ոչ միայն խեղդել հպատակ ժողովուրդների ինքնուրույնության տենչերը, այլև աշխատում էին նրանց տնտեսապես քայքայել, քաղաքականապես բարոյալքել[29]։ Կայսրությունում ազգային ճնշումներն ուժեղանում էին արտադրողական ուժերի զարգացմանը զուգահեռ, որովհետև քաղաքակրթության պրոցեսի կրողները ոչ թե Թուրքերն էին, այլ հպատակ ազգությունները։

Սակայն, եթե կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար զուլումի տարիները նշանավորվեցին սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական հալածանքների ու ճնշումների աննախադեպ ուժեղացումով, ապա հայ ժողովրդի համար այդ տարիները, բառի ամենալայն առումով, նշանավորեցին մի այնպիսի աղետալի վիճակ, որի նմանը մարդկության պատմության մեջ հազվադեպ կարելի է հանդիպել, մանավանդ, երբ Աբդուլ Համիդ II-ը սկսեց գործադրել կայսրությունը հայերից դատարկելու իր հրեշավոր քաղաքականությունը։

Զուլումի տարիներին պետության կողմից հայ ժողովուրդը ոչ միայն օրենքից դուրս դրվեց, այլ նաև լայն ճակատով իրականացվեց իր ծավալներով նախադեպը չունեցող, ընդգրկումներով համապարփակ, մեթոդներով սադիստական արշավ մի ամբողջ ժողովրդի վրա։ Իշխանությունները մահմեդականներին քաջալերում, հանձնարարում ու կազմակերպում էին հայերի նկատմամբ բռնություններ կատարելու, ոչնչացնելու, նրանց շարժական գույքը թալանելու, իսկ անշարժ ունեցվածքը՝ ցանքատարածությունները, այգիները, արոտավայրերը, բնակելի տները, անասնագոմերը, խանութներն ու արհեստանոցները զավթելու համար։

Անգլիացի մասնագետ Ֆիցմորիսը միանգամայն ճիշտ է նկատել, որ «Բերլինի պայմանագրից հետո Թուրքական կառավարությունը շիտենալով, որ ազգային գիտակցությունը չի կարող անկաշկանդ զարգանալ առանց գյուղացիության և մտածելով, որ եթե հաջողվի արմատախիլ անել գյուղացուն, հեռացնել նրան դեպի քաղաքներ ու երկրից դուրս, ապա հնարավոր կլինի ազատվել հայերից և Հայկական հարցից, քաջալերեց քրդական հարձակումները հայկական գյուղերի վրա»[30]։

Փորձենք զուլումի տարիներին Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, հայերի վիճակը համառոտակի ներկայացնել, հենվելով հայ մեծ վիպասան և պատմաբան Բաֆֆու գրական ժառանգության վրա։ Հանձինս Բաֆֆու մենք գործ ունենք արևմտահայության վիճակը գիտական ամենայն բարեխղճությամբ և օբյեկտիվությամբ ուսումնասիրողի հետ։

Բաֆֆու ոչ միայն աղատասիրական գաղափարների, նրա տաղանդի հմայքի, այլ նաև իրականությունը հարազատորեն

արտացոլելու, այն ճշմարտացի ներկայացնելու շնորհիվ էր, որ նրա ստեղծագործությունները անմիջապես ժողովրդայնություն էին ստանում, տիրապետում լայն զանգվածների զգացմունքներին ու մտքերին, դառնում ազնվության, արդարության և ազատության համար պայքարի դրոշ։

Արդեն նշվեց, որ թուրքական պատմագրությունը միտումնավոր ձևով հայ ժողովրդի վիճակը ներկայացնում է Կ. Պոլսի և ծովափնյա մի քանի այլ քաղաքներում բնակվող հարուստ ապազգայնացված, սուլթանական կեղեքողների հետ մերված հայերի օրինակով, չնայած նրանք ընդհանուր ոչինչ չունեին իրավազուրկ, թշվառ, սոցիալական և քաղաքական հարստահարությունների ու ճնշումների ենթակա հայ աշխատավոր զանգվածների դրության հետ։

Այդ կապակցությամբ Բաֆֆին գրում է.

«... ամիրա սեղանավորները... նույնպիսի ավազակներ են... Այժմ ինչ հույս կարող ենք ունենալ նրանցից,— մեր արյունը ծծողներից, մեր աշխատության վաստակը մեր ձեռքից խլողներից... Նրանց համար միշտ ձեռնտու է մի անկարգ և բռնակալ կառավարություն, որի պաղատարության մեջ կարողանում են ստանալ իրենց շահերը։ Հայի արտասուքը և թափած արյունը նրանց չի ազդում, նրանք իրենց քսակը հարստացնելու համար են միայն մտածում...»[31]։

Բաֆֆին նշում է. «Բ. Դուռը անազնիվ գործարքներ էր որոնում, և նրա նպատակներին կատարելապես համապատասխանում էին հայ ծառայողները»..., որոնք «իրենց անձնական շահերը պահպանելու համար, հայտնի բան է... կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարության անկարգ այլանդակության մեջ։ Եվ այս տեսակ մարդկանցից, հասկանալի է, որ չէր կարելի սպասել, որ նրանք բողոք բարձրացնեին և հայ ժողովրդի հառաչանքներին թարգման լինեին»[32]։

«Հավատարիմ հպատակությունը մի այնպիսի պետության վերաբերությամբ,— շարունակում է Բաֆֆին,— որպես Թուրքիան է, նշանակում է կույր ենթակայություն, այսինքն՝ անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսությունները։ Եվ հայերը մինչև այսօր իրենց հավատարիմ հպատակությամբ ոչինչ չշահեցին, միայն ծանրացրին իրենց ստրկության շղթաները»։ Ով ծանոթ է Թուրքիային, գիտե, որ այդ երկրում ան-

կարելի է ապրել և իր գոյությունը պահպանել առանց զենքի[33]։

Նշելով, որ 800 տարի շարունակ հայը տեսել և զգացել է, թե Թուրքը իր հետ որքան դաժան է վարվել, որ այդ տարիների պատմության ամեն մի տող արյունով ու արտասուքով է գրված, Բաֆֆին հարց է տալիս.

«Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ։ Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի»[34]։

Այնուհետև նա գրում է. «Չի կարելի մտածել, թե հայերը գոհ լինեն իրենց վիճակից, որովհետև անկարելի է գոհ լինել մի այնպիսի վիճակից, որտեղ կյանքի, կայքի և ընտանիքի ապահովություն չկա, որտեղ մարդու աշխատության արդյունքը հափշտակվում է բռնի ձեռքով, որտեղ նրա պատիվը շների հետ է հավասարեցված, որտեղ ամեն ինչ, որ նրա համար սուրբ է և նվիրական, հալածվում է, պղծվում է և կույր մոլեռանդության զոհ դառնում»[35]։

Գրուզն ավելի կոնկրետացնելով հարցը, նշում է. «Մշեցի, բաղեշցի կամ վանեցի հային մի վաշխառու քրդից կամ տաճիկից, հարյուր ղուրուշ փոխ առնել և շուտով մի քանի հարյուր ղուրուշ պարտական մնալ, այնուհետև յուր կինը, ընտանիքը գրավ թողնել, Պոլսի սոխախներում տարիներով փտել և մաշվել,— այդ երևույթները նրան (Պոլսի հայ մամուլին) չի գրավում... Որովհետև նա շատ պարապված է նորանով, որ գիտենա դեռևս ինչ երազներ է տեսնում Բիսմարկը յուր անկողնի մեջ»[36]։

Բաֆֆին իրավացիորեն նկատում է, որ բուն Հայաստանում հայը անգամ XIX դարի 2-րդ կեսին հողն այնպես էր հերկում, ինչպես հերկել են իր պապի՝ Արամի օրերում, կարծես հայ ժողովուրդը մի քայլ անգամ առաջ չէր դրել։ «... Ինձ պատահել է տեսնել Հայաստանում հին փլատակների տակից դուրս եկած խեցեղեն ամաններ,— նույնը այսօր շինում է հայ բրուտը առանց որևիցե զանազանության։ Ինձ պատահել է տեսնել Հայաստանում ամբողջ ժողովուրդը, որ պարապվում է խաշնարածությամբ։ Այս հովիվ ժողովուրդը դեռ ապրում է յուր նախնական կյանքով, նրա հագուստը ոտքից գլուխ կազմված է բուրդից, բոլորը նահապետական են պարզ ձևով։ Նորա ոտնամանները (տրեխները) մինչև անգամ հյուսած են այծի մազից...

Ես առիթ եմ ունեցել մտնել նոցա գետնափոր խրճիթների մեջ, որոնք ավելի գազանների որջերի են նման, որոնց մեջ տերը և յուր չորքոտանին միասին և մի հարկի տակն են ապրում։— Ես տեսել եմ նոցա կիսավայրենի նահապետական կյանքը և համաձայնվել եմ Քսենոփոնի հետ, մտածելով, եթե այդ հույն պատմաբանը նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նորա ընտանեկան կյանքը, դարձյալ նույնը պիտի գտներ, ինչ որ տեսել է 24 և կես դար առաջ...»[37]։

Անդրադառնալով Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու մասին սուլթանի խոստումներին, Բաֆֆին գրում է, որ սուլթանը դրանով ժամանակ է շահում, որի ընթացքում նա Հայաստան կուղարկի հանձնաժողովներ, ցույց կտա, թե աշխատում է բարեփոխումներ մտցնել, բայց «միևնույն ժամանակ քրդերին, Թուրքերին և ամբողջ մահմեդական ամբոխը դաղտնի կերպով կգրգռի հայերի դեմ, և փոխանակ բարեկարգությունների, արյուն, կոտորած, ավերմունք կտարածե Հայաստանում։

Եվ, երբ Հայաստանը կծխի արյան և կրակի մեջ, նա կպատասխանե Եվրոպային... Հայաստանում վերանորոգություններ մտցնելը առայժմ անհնար է, որովհետև մահմեդական ամբոխի կրոնական զգացմունքը, Թուրքերի աղբային հպարտությունը վիրավորվում է հայերին առանձնաշնորհումներ տալու պատճառով»։

Այնուհետև Բաֆֆին եզրափակում է. «Խոստանալ և չկատարել,— այդ Թուրքիայի վաղեմի սովորությունն է։ Իսկ բարիք խոստանալ և չարիք գործադրել, այդ պահանջում է նրա այժմյան ամենախարդախ քաղաքականությունը։

«Հայաստան» բառը խիստ անախորժ տպավորություն է գործում Թուրքիայի ջղերի վրա։ Բ. Դուրը բացարձակ կերպով հայտնեց հայոց պատրիարքին, թե յուր պետության մեջ Հայաստան անունով երկիր չէ ճանաչում»[38]:

Վիպասանը ճիշտ է նկատում, որ Թուրքիան աշխատում է Հայկական հարցը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը, ձգտում է Հայաստանը լցնել քրդերով, չերքեզներով, լազերով, աջարացիներով և այդ բոլոր ցեղերին գրգռել հայերի դեմ[39]։ «Նշանները արդեն երևում են Վասպուրականի մեջ... Նկատվում է քրդերի կատաղի հուզմունքը, այրվում են գյուղեր, սպանվում են մարդիկ, և ասպատակությունը օրըստօրե ավելի ընդարձակվում է, ավելի սպառնական ձև է ստանում։ Տարոնի նահան-

գում նույնպես արյուն է հոսում։ Սովուղ-Բուլախի գավառում շեյխ Իբադուլլահը, յուր գլխին հավաքած ավելի քան 10 հազար ավազակներ, վտանգ է սպառնում Ատրպատականի հայերին։ Հեքարիի կողմերում Բահրի բեկը յուր ցեղի գլուխն անցած ավերումներ է գործում։ Հին Բայազետի կողմերում Հեյդարանլի քրդերը կողոպտում են հայերին։ Ամեն տեղ նկատվում են միևնույն չարագործությունները, որոնց կեղևի տակ թաքնված է Թուրք կառավարության պաշտոնատարների նենգավոր ձեռքը։ Իսկ Կ. Պոլսի մահմեդական մամուլը այդ բոլոր բարբարոսությունները բացատրում է քրդական միության անունով...

Թուրքիան խոստանում է վճռել հայոց հարցը չորս ամսվա մեջ։ Գուցե վճիռը նրանով կվերջանա, որ չորս ամիս հետո էլ Հայաստանում հայ չի մնա...»[40]։

Այնուհետև տաղանդավոր գրողը նշում է. «Տիրում էր ընդհանուր վհատություն ընդհանուր թախծության հետ։ Ոչինչ մխիթարական չկար, ոչինչ չէր զորացնում բեկված սրտերը... Կարծես օդի մեջ շարժվում էր մի դիվական շունչ, որ բոլորի վրա սարսափ էր ազդում... —

Գիշերները մարդիկ տանից դուրս չէին գալիս։ Ցերեկը շինականները խմբերով էին գնում իրանց դաշտային մշակությունները անելու։ Անասունները գյուղերից շատ հեռու չէին քշում արածացնելու համար։ Աղքատը դժգոհ էր, որ ոչինչ չունի, հարուստը դժգոհ էր, թե ինչպես պահե ունեցածը։ Ճանապարհները դատարկվել էին, քարավանների երթևեկություն չկար։ Լեռների մեջ ամեն քար, ամեն ժայռ ավազակ էր դարձել։ Անցնելու հնար չկար։

Ինքը բնությունը զայրացել էր, պատժում էր մարդիկներին։ Երեք տարի շարունակ երաշտից հետո սկսվեց կատաղի սով... Շունը, կատուն արժեք ուներ, բայց մարդկանց որդիները արժեք չունեին։ Փողոցները ծածկված էին նվաղած, գունատված սովալլուկներով։

Ամեն կողմից վատ լուրեր էին լսվում»[41]։

«Տեղ-տեղ պատահում էին ներքին կռիվներ, ներքին ընդհարումներ։ Ավազակախմբերը ոչնչացնում էին ամբողջ գյուղեր և ուրվականների նման աներևույթ էին լինում։ Բանտերը լցվել էին կալանավորներով, սպանությունները թիվ ու չափ չունեին։ Մարդիկ գիշերը սարսափով էին գլուխը դնում բարձի

վրա, առանց հույս ունենալու, թե առավոտյան կենդանի կվերկենան։ Կյանքի և կայքի ապահովությունը վտանգի մեջ էր։ Հաճախ տարածվում էին զանազան լեղուներով տպված թերթիկներ։ Թե դրանք ի՞նչ էին ուզում, ի՞նչ էին պահանջում, ոչ ոքի հասկանալի չէր։ Թե մեջիդներում և թե եկեղեցիներում աղոթում էին, որ մի հանգստություն լինի... Բայց Զեյթունից ապստամբության ձայն էր լսվում։ Արզրումի մեջ որոնում էին մի ինչ-որ դավադրություն։ Իսկ Կ. Պոլսում այդ միջոցին զբաղված էին երկու հանելուկային թվերով—16 և 61»[42]։

«Ես գիտեմ հարյուրավոր և հազարավոր օրինակներ,— գրում էր Բաֆֆին,— թե ինչպես հայ կինը, հայ աղջիկը զոհվում էր մահմեդականի անբարոյական կրքերին... Մի քաղաքում, երբ խանի սպասավորները եկան իրանց տիրոջ համար տանելու մի աղջիկ, հայրը երկար աղաչում էր, որ չխլեն իր աղջիկը։ Երբ հոր արտասուքը չկարողացավ շարժել նրանց գութը, նա առեց մի դանակ, և խրելով իր դստեր կուրծքի մեջ, ասաց՝ «Հիմա տարեք այս դիակը»։ Նույն օրը խեղճի տունը հրդեհեցին և ինքը մեռավ բանտի մեջ»։ Մի օրիորդի խանի որդին գաշտում հանդիպելով, ասում է. «Աղջիկ, ինչ լավ են քո աչքերը»։ Մյուս օրը, երբ գալիս են այդ աղջկան տանելու խանի որդու համար, նրան կուրացած գտան։ Օրիորդն ինքն էր կուրացրել իր աչքերը։

Հարեմ տարված հայ կնոջը այնտեղից դուրս չէին թողնում։ Խանը իր հաճությունը կատարելուց հետո ամուսնացնում էր նրան իր սպասավորներից մեկի հետ, ինչպես «նա իր հնացած հագուստը պարգևում էր այս և այն ծառային որպես խալաթ»[43]։

Շարիաթի օրենքով, մահմեդականություն ընդունած մարդը կրկին իր նախկին կրոնին վերադառնալ չէր կարող։ Եթե տղամարդ էր, ամեն մի մահմեդական հանդիպելիս իրավունք ուներ նրան սպանելու, իսկ եթե կին էր, բանտ էին գցում և այնքան տանջում, մինչև նա կրկին խոստովաներ, թե ընդունում է իսլամը։

* * *

Զուլումի տարիներին արևմտահայության սոցիալ-տնտեսական կեղեքումների ու ազգային-կրոնական հալածանքների մասին կան մեծ քանակությամբ արխիվային նյութեր, վկայություններ և ուսումնասիրություններ։

Մասնավորապես հարուստ նյութեր կան օսմանյան պետության կողմից Արևմտյան Հայաստանում կիրառած հարկային քաղաքականության մասին, որի նպատակն էր տնտեսապես հալումաշ անել քրիստոնյա տարրը, քայքայել նրա նյութականը և դրանով ստիպել կամ հավատափոխվելու կամ զրկվելու հողից և վերցնելու պանդխտության ցուպը։

Հայերը տասնյակ հարկեր էին վճարում։ Հարկ էին վճարում նույնիսկ ամուսնության ու թաղման համար։ Կար նաև ատամի տուրք։

Գյուղացին թալանվում էր, կորցնում իր ունեցվածքը, ընկնում պարտքի տակ։ Բիթլիսի Ջրհոր գյուղն ուներ 60 տուն, որից միայն 5-ը պարտք չուներ։ 30 ընտանիքներ պարտքի դիմաց կորցրել էին իրենց հողերի կեսը, իսկ 25 ընտանիք ամբողջապես հողազուրկ էր դարձել։ Գյուղացու թալանին ամենաեռանդուն մասնակցություն ունեին վաշխառուները, իսկ վաշխառությունը տարիների ընթացքում դարձել էր մահմեդականների մենաշնորհը[44]։

Մ. Մակքոլը նշում էր, որ բոլորի համար պարտադիր հարկերից բացի քրիստոնյան պետք է մուծեր նաև հետևյալ լրացուցիչ տուրքերը.

— գլխահարկ, որը կոչվում էր «ստորացնող» և գանձվում էր տվյալ տարին ապրելու (գոյություն ունենալու) իրավունքի համար։

— հատուկ հարկ զինվորական ծառայության դիմաց... Այս հարկը գանձվում էր արական սեռի երեք ամսականից բարձր բոլոր հպատակներից։

— ժամանակավոր նպատակների համար հատուկ հարկեր, որոնք, սակայն, այլևս երբեք չէին վերացվում։ Օրինակ, 1867 թ. քրիստոնյաների վրա հատուկ հարկ դրվեց, որպեսզի վճարվի Անգլիայում սուլթանի ուղևորության ծախսերը։ Մեկ տարի ժամանակով նշանակված այդ հարկը 90-ական թվականներին դեռ գոյություն ուներ.

— երբեմն քրիստոնյաներին հարկադրում էին նախապես վճարել 1—2 տարվա հարկերը, խոստանալով, որ տվյալ տարիների համար այլևս հարկ չեն հավաքի։ Սակայն այս խոստումները երբեք չէին կատարվում[45]։

Էրզրումում Անգլիայի հյուպատոս Կ. Լլոյդը 1890 թ. հոկտեմբերի 2-ին գրում է. «Հայ ազգաբնակչությունը ներկա ժամանակում հարկ վճարել չի կարող քրդերի կողմից թալանվելու պատճառով...

... Քրիստոնյաները հարևան քրդերի գործողությունների հետևանքով հասցվել են աղքատության, որոնք թալանել և այրել են նրանց հունձքը, և չեն կարող մուծել իրենց հարկերը... Սա զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ կառավարական հարկերը վճարելուց հետո գյուղացուն բաժին է մնում իր հունձքի միայն 30 տոկոսը»[46]։

«Մեղու Հայաստանի» թերթը 1876 թ. նոյեմբերի 6-ին տպագրեց մի հոդված՝ Տրապիզոնի հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների մասին՝ «այնպիսի մի բարբարոսություն, որ միայն փարավոնների ժամանակներում է գոյություն ունեցել»։

Վարչական պաշտոնների վաճառքը, պաշտոնատար անձանց առանց աշխատավարձի թողնելը, հարկերի հավաքումը կապալով տալը, հարկերի գանձման բարբարոս մեթոդներն ու նրանց չափերի կամայական փոփոխությունները, հատկապես հայ ազգաբնակչության համար, ստեղծել էին արտակարգ ծանր վիճակ։ Բայց, ինչպես նշում են մասնագետները, պետության կողմից օրինականացված հարկերը միայն աննշան մասն էին կազմում կամայական հարկումների, որոնցով «տեղական իշխանությունները սիստեմատիկաբար հարկադրում են բնակիչներին»։

Կարինում անգլիական հյուպատոս Էվերստը գրում է. «Միայն համբերությամբ, վախով և բնակչության տարբեր խավերի միջև սերտ կապերի բացակայությամբ կարելի է բացատրել, որ արևելյան սանջակներն անցյալ տարի հարկերը գանձելիս մի մարդու պես չապստամբեցին կառավարության դեմ... այդ դժբախտներին ամենաանգութ կերպով հետապնդում էին հարկահանները՝ նրանց բանտ էին նետում, երբ նրանք ի վիճակի չէին լինում հարկեր վճարել...»

Մի շարք կազաներում հարկերի գանձման իրավունքը գնած ընկերությունը «մտադիր է այս տարի ևս, անցյալ տարվա պես, հացահատիկը ձմռանը վաճառել աներևակայելի բարձր գներով... Անասնակեր չլինելու պատճառով մեծ քանակությամբ ոչխարներ սատկեցին։ Չնայած դրան, սատկած ոչխարների առաջիկա տարվա հարկը անխնայորեն գանձվում է»[47]։

1879—1880 թթ. ձմռանը սով սկսվեց. ժողովուրդը բույսերով էր սնվում։ Վրա հասավ համաճարակը։ Մահացությունը

հասնում էր սարսափելի չափերի։ Սկզբում «հյուծվածությունից մեռածներին հաշվում էին հարյուրներով, իսկ ապա՝ հազարներով»։ Շատերը մեռնում էին ճանապարհներին, և ճանապարհորդները շատ անգամ են տեսել նրանց չթաղված և շների կողմից կիսով չափ կերած դիակները[48]։

1880 թ. հոկտեմբերի 2-ին թվագրված հյուպատոսական մի զեկուցագրում նշված էր, որ Բաշկալայի օկրուգում սովից զոհվել է 10 հազար մարդ, Բայազետի և Ալաշկերտի շրջաններում՝ 2—3 հազար և այլն[49]։

Օրհասական այս ծանր պահին թուրքական վարչակազմը որոշում է պատերազմից տուժած օկրուգներում երեք տարվա հարկերը գանձել միաժամանակ։

«Եթե այժմ այդ միջոցառումները համեմատենք այն հովանավորության հետ, որ ցուցաբերվում է կիսավայրենի չերքեզների կործանարար արշավների նկատմամբ և, վերջապես, քրդերի թալանին ցույց տրվող տարօրինակ հանդուրժողականության հետ, ապա կամա թե ակամա այս բոլորի մեջ միայն բթության և ագահության ապացույցներ չէ, որ տեսնում եմ։ Արդյո՞ք համոզմունք չի առաջանում, որ գոյություն ունի մահմեդականների օգտին քրիստոնյա տարրերի ոչնչացման պլան»[50]։

«Հարկերի այդպիսի անարդար գանձման մեղքը,— գրում է Է. Դիլոնը,— ընկնում է գլխավորապես բարձրագույն կառավարության վրա»։ Բ. Դուրը անընդհատ փող էր պահանջում վալիներից, սրանք իրենց հերթին՝ մութեսարիֆներից։ Հարկահավաքները, որոնց հայտնի են այդ գործի գաղտնիքները, բոլոր հնարավորություններն ունեին հարստանալու ինչպես ժողովրդի, այնպես էլ կառավարության հաշվին։

1880 թ. սկզբներին Էրզրում հեռագիր ստացվեց՝ զորքի կարիքների համար շտապ հավաքել 330 հազար ֆրանկ։ Փողը հավաքվեց և ուղարկվեց արքունիք։ Ապա Տրապիզոնից հրաման ստացվեց արքունիքի համար հավաքել ևս 220 հազար, իսկ ներքնապետի համար՝ 11 հազար ֆրանկ[51]։

Մուշ քաղաքի բնակիչների գանգատագրերից մեկում կարդում ենք. «...Հայ և քուրդ գյուղացիների համար չարիք են դարձել տասանորդ հավաքելու նպատակով կառավարության կողմից նշանակված պաշտոնյաները՝ անտանելի դարձնելով նրանց վիճակը։ Նրանք կալատեղում են որոշում առնելիք հարկի չափը՝ առանց որևէ հաշվի, և պահանջում են ավելին, քան

նշանակված քանակն է, որպեսզի ստանան իրենց անձնական բաժինը»[52]։

Հարկի դիմաց հաճախ վերցնում էին գյուղատնտեսական մթերքներ, որոնց գները որոշում էին հարկահավաքները։ Գյուղացիներից նրանք, ովքեր վճարելու հնարավորություն չունեին, բառացիորեն կողոպտվում էին, նրանց շարժական և անշարժ գույքը բռնագրավվում էր և ցածր գներով վաճառվում։ Գյուղացիներից խլված անասուններն ու գույքը իրենց արժեքի 50 տոկոսով վաճառելը սովորական էր դարձել[53]։

Երբ գյուղացին հացահատիկը կալսում էր, այն օգտագործելու իրավունք չուներ մինչև չվճարեր հարկերը։ Գյուղացու տանջանքով ու չարչարանքով ստեղծված բարիքները թալանում էին պետությունն ու կալվածատերը, վաշխառուն ու հոգևորականը։ Բերքի 70—80 տոկոսին տեր էր դառնում հողատերը, իսկ եթե գյուղացին ուզում էր գոնե բերքի 50 տոկոսը ստանալ, պետք է «ամբողջ ընտանիքով, 10—15 հոգով» աշխատեր աղայի հողի վրա։

Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» թերթը 1880 թ. գրել է. հայ գյուղացին հաճախ հարկադրված էր «վաշխառուին դիմել, որ սովորաբար այլազգի մի բեյ էր կամ աղա։ Ահա այստեղ է հայ երկրագործի ամենամեծ դժբախտություններից մեկը՝ դրամ է պարտք վերցնում, բայց ինչ տոկոսով՝ հարյուրին 50 կամ 60 (տոկոս) սովորական բաներ են. նույնիսկ 100-ին 200 շահ, բայց գյուղացին ուրիշ ճար չունի, ուստի այս ծանր պայմանով փոխառություն է վերցնում և, եթե նույնիսկ այսքանով ազատվի, կրկին գոհ կլինի։ Վաշխառուն խեղճ գյուղացու հունձքը արգելքի տակ կդնի, և եթե մեծ գումար է փոխ առել, նրա արտը գրավ կդնի...»

Հնձի ժամանակ վաշխառուն գյուղացուն ներկայանում է անմիջապես և տված դրամի դիմաց որպես միայն տոկոս պահանջում է այնքան, որքանով գուցե հնարավոր էր ամբողջ պարտքը վճարել։ Մյուս կողմից, տոկոսի վրա տոկոս էր կուտակվում և գյուղացու պարտքը ամեն տարի (թեև իր բերքի մեծ մասը պարտատիրոջն էր տալիս) աննկատ մեծանում էր։ Վաշխառուն մուրհակը նորոգելու պատրվակով գրավ էր դնում պարտապանի հողերն ու ունեցվածքը, որոնք գործնականում դառնում էին վաշխառուի սեփականությունը։ Այսպիսով, եթե գյուղացին «փոքրիկ մանուկ ունի, պարտքը այդ մանկան հետ

մեծանում է», իսկ երբ մանուկը տղամարդ է դառնում, պարտքը նրա վրա է ընկնում. և ահա այս հայրական պարտքն է, որ հազարավոր գյուղացիների նյութական վիճակն անտանելի էր դարձնում։ Եվ, չկարողանալով իրենց հաստությամբ վճարել այդ անվերջանալի պարտքը, գյուղացիները բռնում են գաղթի ճանապարհը։

«Բայց անգութ վաշխառուն այնտեղ էլ նրանց հետևից հասնում էր. արտն արդեն իր ձեռքում էր, բայց դրանով չէր բավարարվում, տոկոս էր պահանջում։ Այնպես որ մի անգամ 3000 ղուրուշ պարտքի դիմաց մի գյուղացի և նրա որդին 123 հազար ղուրուշ են վճարել, բայց նրանց հողը շարունակում էր գրավի տակ մնալ»[54]։

«Արաքս» ամսագիրը 1889 թ. գրում էր. «Ամբողջ վիլայեթները հազարներով դատարկվում էին երիտասարդ աշխույժ ուժերից, որոնք թշվառ վիճակի մեջ թողնելով իրենց ընտանիքը, երկիրը, նրա արդյունաբերությունը ցրվում են հեռավոր վայրեր ու նրանց վերջ ի վերջո կորուստ է սպառնում»։ Պանդրխտությունը դարձել էր համընդհանուր երևույթ՝ «Կեսարիայից սկսած մինչև Բայազետի» վերջին գյուղը։ Մշո խաս գյուղից պանդխտության էին գնացել 400, Նորշենից՝ 300, Բերդակից՝ 300 մարդ։ Պանդուխտ զավակներ ունեին գրեթե բոլոր հայ ընտանիքները։ Օտարության մեջ դեգերողների թիվը անընդհատ աճում էր։ Եթե 80-ական թվականների սկզբներին Մշո գավառից տարագնացների թիվը 500-ից չէր անցնում, ապա 90-ական թվականների սկզբներին այն հասավ 2—3 հազարի։ Միայն Կ. Պոլիս մշակության մեկնած հայերի թիվը անցնում էր 80 հազարից։ Պանդուխտը օրենքից ու հասարակությունից լքված մարդ էր և գոհ էր, որ կարողանում էր որևէ, թեկուզ ամենածանր աշխատանք ճարել[55]։ «Ով ուզում է մշեցի հայի թշվառ վիճակը տեսնել,— գրում է Ներենցը,— ոչ թե Մուշ... այլ այստեղ, Պոլիս Գասմ փաշայի խան կոչվող որջերը թող գնա և տեսնի մշեցի ընտանիք՝ տղամարդ, կին, տղա, գրեթե մերկ, հոգնաբեկ, անխոս, առանց կայքի, միշտ ծանր աշխատանքի և քաղցածության, գաղջ օդի մեջ։ Ով որ հայի թշվառ վիճակը ուզում է տեսնել, թող գնա Վանանդ, Ախուրյան գետի ափերի մոտ, տեսնի մշեցուն դառնադեմ դեմքով տղայի ձեռքը բռնած, հյուծված կին՝ գրկի երեխայով, մի հատ կով, մի պարկ ցորեն

բարձած և առջևը գցած, աչքերը գետնին սևեռած, գյուղից գյուղ թափառական...»*[56]։

«Ամբողջ Վանի մեջ,— գրում է Բաֆֆին,— չկա մի ընտանիք, որի մի քանի անդամներ պանդխտության մեջ չլինեին։ Առաջ գնում էին միայն տղամարդիկ, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել»[57]։

Գյուղացին լքում էր հողը, հեռանում հողագործությունից, իսկ դաշտերը մնում էին խոպան։ Կայսրության օգտագործելի հողերի մեծ մասն անմշակ էր։ Էրզրումի նահանգում մշակվում էր օգտագործելի հողերի միայն 10 տոկոսը, այն էլ շատ վատ[58]։

Ուժեղացավ արտագաղթը նաև քաղաքական պատճառներով։ 1870—1913 թվականների ընթացքում Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից հեռացավ 250 հազար մարդ։

Բազմաթիվ հայ գյուղացիներ զոհվեցին իրենց կնոջ, դստեր և որդիների պատիվը պաշտպանելու համար։ Ստեղծվել էր մի վիճակ, երբ հային արգելվում էր պաշտպանել իր անձն ու պատիվը, որովհետև եթե հայը կամ որևէ այլ քրիստոնյա պաշտպանվում էր, դրանով վիրավորում էր մահմեդականին և անպայման պատժվում էր։

Անգլիական փոխհյուպատոս Լիկիարդոպուլոն 1892 թ. գրել է. «Եթե մահմեդականը ցանկանում էր քրիստոնյայից վրեժ լուծել, դրա համար բավական էր ներկայացնել երկու վկա, որոնք հաստատեն, որ քրիստոնյան վիրավորել է մահմեդական կրոնը։ Սրա համար «քրիստոնյային իսկույն բանտ էին նետում»։ Շատ թուրքեր, օգտվելով դրանից, բացեիբաց սպառնում էին հայերին և տեր դառնում նրանց ունեցվածքին[59]։ Իսկ «եթե դատարանում թուրքը հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, ապա քրիստոնյայի վկայությունը չի ընդունվում»։ Մահմեդականների համար երկու գործողություն բացարձակապես անընդունելի էին՝ քրիստոնյայի առաջ ոտքի կանգնել և քրիստոնյային թույլ տալ դատարանում մահմեդականների դեմ վկա լինել[60]։

---

* Ժամանակակիցներից մեկը գրում է, որ Մշո դաշտում 25 տարեկանից բարձր տղամարդ չմնաց, դարիբությունը ավերում էր հայոց աշխարհը, և եթե «այդպես շարունակվի, այդ բարեբեր դաշտը բուերի վայր դարձած տեսնելու դժբախտություն ենք ունենալու»։

(«Հանդես գրական-պատմական» 1883 թ., գիրք Ա., էջ 223)։

«Ստեղծված վիճակը,— գրում է Կ. Պոլսի պատրիարքը Օսմանյան կայսրության արդարադատության մինիստր Ռիզա փաշային,— հանգեցրել է կառավարական մի շարք բռնությունների, այնպես որ հայերով բնակեցված նահանգներում կյանքը, պատիվն ու բարեկեցությունը շարունակում են մնալ բացարձակապես անապահով... Երբեմն թալանը ավարտում է գատական անարդար վճիռը... Գյուղացիները մնում են առանց ունեցվածքի, առանց պաշտպանության ընդդեմ բռնության, որը իրականացվում է օրենքի անունից։ Օրինական պաշտպանության յուրաքանչյուր փորձ դիտվում է որպես հանցագործություն և բռնություններ է ծնում։ Այսպիսով գյուղացին դառնում է բեյերի ու աղաների ստրուկը, նրանց առևտրական գործարքների առարկան»[61]։

* * *

Օսմանյան կայսրությունում մահմեդականի ու հայի հարաբերությունները, իրոք, մոտենում էին ստրկատիրոջ ու ստրուկի հարաբերություններին։ Հայը պարտավոր էր օթևան տալ գյուղ եկած մահմեդականին, կերակրել նրան ու նրա ձիուն։

«Յուրաքանչյուր քրիստոնյա տանտեր պարտավոր է, որպես սուլթանի հպատակ, համաձայն օրենքի, երեք օր առանց փոխհատուցման պահել մահմեդական ճանապարհորդին կամ չինովնիկին, եթե վերջինները այդ են պահանջում՝ սկսած փաշայից և վերջացրած աղքատներով։ Այսպիսով խեղճ քրիստոնյան հազիվ թե երբևէ ազատ էր լինում այդ անկոչ հյուրերից, որոնք ընտրում են քաղաքի կամ գյուղի լավագույն տները, զբաղեցնում տան լավագույն սենյակները և վերցնում են լավագույն ուտելիքը, այդ նույն ժամանակ տան տիրոջ ու նրա ընտանիքի հետ վարվելով ինչպես ստրուկների հետ... (և որովհետև) մահմեդականը ատելի գյավուրի վրա նայում է որպես իր բնական ավարի, ապա սովորաբար կանայք մտնում են շքեղության առարկաների ցուցակի մեջ, որի վրա տարածվում էին այս հարկադրյալ հյուրընկալության պահանջները»[62]։

Մի գեղեցկուհի հայ կին դիմադրում և արհամարհանքով հետ է մղում Հուսեին աղային։ «Այդ վիրավորանք էր, որ կարող էր սրբվել միայն երիտասարդ գեղեցիկ կնոջն անմիջապես

մեռցնելով... մահմեդականը... չի ընդունում, որ ռայան մարդկային նույն ցեղին է պատկանում, ինչ ինքը։ Նա ռայայի սեփականության, նրա կյանքի ու կանանց վրա նայում է որպես իր օրինավոր ավարի և քրիստոնյայի կողմից ամեն մի դիմադրություն նա համարում է հանդուգն խռովություն, որը պետք է տեղն ու տեղը պատժվի...»[63]։

Ահա թե ինչ է գրում «Թայմս» թերթը. «1877 թ. Նոր տարվա օրը գյուղ եկավ մի հարկահավաք և ցանկացավ օթևանել գյուղացիներից մեկի տանը, որը երկու սիրունիկ աղջիկ ուներ։ Գյուղի տանուտերը... առաջարկեց օթևանել մի ուրիշ ընտանիքում։ Այդ վիրավորանքի համար ոստիկանը տանուտերին անողոք ծեծի ենթարկեց։ Այնուհետև... նա հանեց ձիու սանձը, հագցրեց տանուտերին...»։ Հետո նա «այդ մարդ-ձիուն» սանձով կապեց դռան օղակից և մտրակի հարվածներով ստիպում էր նրան խոտ ուտել[64]։

Քանի որ, նույնիսկ, ինքնապաշտպանության համար հայը մահմեդականի վրա զենք բարձրացնելու իրավունք չուներ, ապա մահմեդականները հայի հետ վարվում էին այնպես, ինչպես կցանկանային ու կկարողանային։ Ինքնապաշտպանության նպատակով զենք օգտագործելու դեպքում ռայան դիտվում էր որպես խռովարար, պետական հանցագործ։

Իշխանությունները քաջ գիտեին, որ քոչվոր մահմեդականները ապրում են հայերին կողոպտելով ու թալանելով, բայց ոչինչ չէին ձեռնարկում վերջիններին զինաթափելու կամ հայերին պաշտպանելու համար։ «Մինչդեռ այն օրենքը, որով քրիստոնյաներին արգելվում է զենք ունենալ և կրել, խստորեն պահպանվում է»*։

Ի. Գոլոբորոդկոն իր «Հին ու նոր Թուրքիա» գրքում գրում է. «Թուրքերին հարստահարում էին վալիդիշահն ու նրա կուսակալները, բայց Թուրքերի անձը, սեփականությունն ու կյանքը անձեռնմխելի էին բոլոր կողմնակի ոտնձգություններից... իսկ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին»[65]։

---

* «Տաճկաստանում,— գրում են Մշո Սրակոն գյուղից,— մասնավորապես Սասունի և Մուշի կողմերում, ոչ մի հայ ապահովություն չունի իր կյանքի համար։ Ոչ ոք չի կարողանում իր տնից դուրս գալ առանց Թուրքերին ու քրդերին զոհ դառնալու»։

1880 թ. Բ. Դռան հրամանով արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը։ Մեկ տարի անց ցուցում տրվեց «արմատախիլ անել ազգային գրգռման արմատները», բռնագրավել ու ոչնչացնել Վարդան զորավարի և Հայաստանի ավերակների վրա սգացող կնոջ նկարները։ Բանտ էին նետվում միայն այն բանի համար, որ համարձակվել էին վաճառել հայ թագավորների գեբեզմանների նկարները։ Բռնագրավվում էին և այրվում այն գրքերը, որոնցում կար «Հայաստան» բառը, արգելվեցին հայկական օրացույցը, հայկական ներկայացումները, հայերեն դասախոսությունները։ Նույնիսկ «սուրհանդակ» բառը հապավվում էր սուր-հան-դակ և կասկածելի էր թվում։ Արգելվեց նաև Կիլիկիա և մի շարք այլ հայկական տեղանունների օգտագործումը։ Հայկական նոր դպրոցներ, եկեղեցիներ և այլ հաստատություններ բացելու համար պահանջվում էր սուլթանի հրովարտակը, որին սովորաբար հարկ էր լինում սպասել 5—10 տարի։

Օտարերկրյա մի լրագրող Կ. Պոլիս է գալիս և անմիջապես այցելում ոստիկանատուն։ Նա ոստիկանին խնդրում է ասել, թե Թուրքիայում ինչը կարելի է գրել և ինչը՝ չի կարելի։ Ոստիկանը պատասխանում է. «Ամեն ինչի մասին կարող եք գրել՝ օդի, ջրի, նույնիսկ Պոլսի շների մասին կարող եք ճառել, բայց միայն մի պայմանով, որ նրանց հավաքել չառաջարկեք։ Անշուշտ, նորին վսեմության մասին կարող եք ներբողներ հյուսել... Արգելված է, սակայն, նոր վարդապետության մասին խոսել և օգտագործել այն մատնանշող բառեր... զգուշանալ մանավանդ «Մակեդոնիա», «Հայաստան» բառերից...»[66]։

Կազմակերպվեցին խուզարկու ոստիկանների ջոկատներ, որոնք, եթե մեկին որոշել էին ձերբակալել, նրա տունը խուզարկելու ժամանակ անկյուններից մեկում աննկատ երգարան էին գցում, և դա բավական էր տանտիրոջը ձերբակալելու համար։ Հայ մամուլին հազվադեպ էին թույլ տալիս օգտագործելու զենք, զինվոր, բանակ, ազատություն, բռնակալություն, ուժ, զորություն, իրավունք, արդարություն, ընկերություն, հավասարություն, միություն և նման շատ այլ բառեր։

Գրաքննիչներից մեկը «Հայրմերից» ջնջեց «Եկեսցե արքայություն քո» բառերը՝ համարելով այն ինքնուրույն թագավորություն ունենալու հայերի ձգտման արտահայտություն։

«Սուլթանը հայ մամուլի դեմ արշավանք սկսեց գավառական վալիների անմիջական մասնակցությամբ, որոնց հախուռն

հերքումները հակադրեցին գավառական թղթակցություններին՝ երեսպաշտորեն բարբառելով իրենց կառավարմանը ենթակա հայաբնակ գավառներում տիրող «կարգի և օրինականության» մասին և մամուլին մեղադրելով զրպարտության մեջ»[67]։

1880 թ. բանտարկվեց «Թերջման էֆքյար» հայատառ թերթի տնօրենը, թերթ, որ մեծ տեղ էր հատկացնում արևմտահայության ներքին կյանքին։ 1882 թ. ցմահ բանտարկության դատապարտվեց «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանը։ 1883 թ. երկու անգամ փակվեց «Մասիսը», դարձյալ գավառում կատարվող հարստահարումները բացահայտելու համար։ Մամուլին հարկադրեցին գավառների մասին տալ միայն պաշտոնական հաղորդագրություններ և կամ կառավարությանը հաճո նյութեր։ Այդ նպատակով հայ մամուլի համար 1883 թ. մտցվեց նախնական գրաքննություն։ 1888 թ. նոյեմբերի 26-ին «Մշակը» տպեց մամուլին վերաբերող թուրքական կանոնադրությունը։ Այդ կանոնադրությունը պահանջում էր.

1. Առավելություն տվեք այն լուրերին, որոնք վերաբերում են սուլթանի թանկագին կյանքին, հունձի դրությանը, առևտրի ու արդյունաբերության զարգացմանը Թուրքիայում։

2. Մի տպագրեք այնպիսի ֆելիետոններ, որոնք չեն ստացել ժողովրդական լուսավորության մինիստրի առանձին հավանությունը։

3. Մի տպագրեք գիտական և գրական այնպիսի հոդվածներ, որոնք չեն կարող տեղավորվել մի համարում...

4. Միանգամայն խույս տվեք հոդվածների մեջ կտորներ բաց թողնելուց և տողերի մեջ բազմակետեր դնելուց, որովհետև այդ անհաճո ենթադրությունների տեղիք է տալիս և խանգարում է հոգու հանգստությանը։

6. Ոչ մի տեսակետով մի տպեք մասնավոր անձերի, համայնքների կամ նահանգների խնդրագրերը, որոնք գանգատվում են իշխանության կեղծումների դեմ և այդ մասին տեղեկացնում են ի գիտություն սուլթանի։

7. Տեղեկություններ մի տպեք օտար թագավորների անձերի դեմ արած փորձերի մասին, նույնպես և ոչինչ մի տպեք արտասահմանում տեղի ունեցող ցույցերի մասին։ Ըստ որում, լավ չէ, որ այդ բաների մասին տեղեկանա մեր խաղաղ ազգաբնակչությունը[68]։

Սուլթանի վախն ու նրա դաժան վերաբերմունքը հայ մամուլի նկատմամբ պատահական չէր։

60—70-ական թվականներին պոլսահայ մամուլը լայն տեղ էր տալիս գավառներում կատարվող հարստահարություններին ու բռնություններին, օգտագործելով լրագրային ժանրերի հնարավորությունները՝ հասարակական կարծիք էր ստեղծում դրանց դեմ*։

Սուլթանը առանձնապես դաժան վերաբերմունք էր դրսևորում ազգային դպրոցների և ուսուցիչների նկատմամբ։

Մ. Մակքոլը գրում է.

«Ոչինչ սուլթաններին այնքան չէր սարսափեցնում, որքան նրանց քրիստոնյա հպատակների շրջանում կրթության տարածումը, որովհետև նրանց հայտնի էր, որ գիտելիքը ուժ է և այդ դժոխային պայմաններում անխուսափելիորեն տանելու է դեպի դժգոհություն ու թշնամություն և ծնելու է ազատության անհաղթահարելի ձգտում»[69]։

Անգլիական հյուպատոս Լլոյդը 1890 թ. փետրվարի 19-ին Էրզրումից գրել է, որ տեղական կրոնական դպրոցի վարիչը «կրթական նպատակներով դուրս էր դրել մի քանի քարտեզներ, որոնք այլ գրքերի հետ միասին տեղական վարչության կողմից բռնագրավվել են... որովհետև Փոքր Ասիայի քարտեզի վրա նշված էր Հայաստան նահանգը։ Նա գտնում էր, որ այդ (քարտեզը) դպրոցներում օգտագործվել չի կարող...

Այս շաբաթ Էրզրումի հայկական դպրոցների տեսուչները նախատեսել էին սիրողական ներկայացում տալ, բայց... տեղական իշխանություններից մերժում ստացվեց այն հիմնավորմամբ, որ ներկայացումը նախատեսվում էր հայերեն լեզվով»[70]։

Աբդուլ Համիդը ակտիվորեն ներխուժեց հայկական դպրոցները, փոխեց նրանց ուսումնական ծրագրերը։ Բոլոր դպրոցները դրվեցին լուսավորության մինիստրության հսկողության տակ։ Արգելվեցին այն դասագրքերի հրատարակումը, որոնցում օգտագործված էին հետապնդում, ազատություն, ուժ, հավասարություն, զենք, աստղ և այլ բառեր։ Դպրոցական ձեռնարկներից ջնջվեցին «Հայաստան», «Հայկական մարզ», «Հայկական եկեղեցի», «Հայկական թագավոր», «Հայկական թագավորություն», «իշխանություն» բառերը։ 1880 թ. դասավանդումից հանվեց հայ ժողովրդի պատմությունը և մտցվեց Օսմանյան կայսրության պատմություն, որպեսզի «աշակերտների ուղեղները չաղտոտվեն Հայաստանի անցյալով»։ 1886 թ. լրիվ արգելվեց հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գրքերի հրատարակությունը։ Արգելվեց նաև ընդհանուր պատմության՝ ֆրանսիական հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանի դասավանդումը[71]։

Վարելով շովինիստական քաղաքականություն, իշխանությունները, միայն կասկածներով, ձերբակալում էին ուսուցիչներին, բռնագրավում դպրոցական գույքը, փակում դպրոցներն ու գրադարանները։ Դաժան հսկողության տակ էին Վանի Կեդրոնական և Հողագործական վարժարանները։ 1885 թ. Կեդրոնական վարժարանը փակվեց։ 1886 թ. Վանի վալին հրամայեց ձերբակալել Այգեստանի կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներին սոսկ նրա

---

* «Հայաստանեն հասած լուրերն վերջապես կը հայտնեն, թե հարստահարությունը Մշո կուսակալ կարգված է, թե՝ հարստահարությունն է Մուշը կառավարողը։

Չկա հոն ո՛չ ստացվածքի ապահովություն, ո՛չ կենաց և ո՛չ ալ պատվո նրաշխավորություն, այլ կա հոն հափշտակություն, մարդասպանություն, պատվո բռնաբարում և վերջապես այն ամեն չարիքներն, որ կառավարություն չունեցող քաղաքի մը մեջ միայն կրնան գործվիլ։

Քաղաքս հասած լուրերն և մասնավոր տեղեկություններն զմուշ մեծ հուզման և վտանգի մեջ կը նկարագրեն, անխուսափելի և ծանրակշիռ վտանգի ենթարկված է հոն տեղի ազգայնոց վիճակը։ Եկած գիրերն անստորագիր են, որ միայն կը ծանուցանեն, թե հեռագիրն ու փոստան մեզ համար արգելված են, թե այգիները կը կտրեն, կը ճմլեն, կոշնչացուցանեն, և եթե հոն անձ մը դիմացնին ելնե՝ դանակով կը զարնեն, թե հնձանները, դեզերն ու մարագները կ'այրվին, թե ուր որ հայ մը տեսնվի, խաչ և հավատք կը հայհոյեն, թե մանուկ տղաքներեն մինչև ծեր, այր և կին, առհասարակ կը դանակոծվին տաճիկներեն, թե հայ աղաները կառավարության ժողովքները երթալե դադրած են և այլն. կարծես կառավարություն չկա Մշո մեջ... Մուշեն և գեղերեն 300—400 տնվոր հանրադրություն կազմեր են տաճկնալու համար... հայն, և այլն, և այլն։

Հայերն ամեն վիշտ ու տառապանք, աքսոր ու հալածանք կրելեն ետքը, այսօր ամենայն հոժարությամբ և հավատարմությամբ կը տանին հպատակության լուծը, և ասոր փոխարեն կը բռնաբարվին թե՛ ստացվածքի, թե՛ կրոնի և թե՛ պատվո կողմանե։ Այս լուծն հպատակության ըլլալե դադրած՝ գերության լուծ եղած է, ու այնքան ծանրացած, որ անբերելի ըլլալով՝ Մշո հայերն ալ անկարող կըլլան զայն կրելու և հարստահարությունն խալսելու հույսով կրոնափոխության դիմել կ'որոշեն» (Հ. Պարոնյան, Եժ, հ. 10, Ե., 1979, էջ 67—68)։

համար, որ այդ դպրոցում անցնում էին ռազմական գործ, այսինքն «աշակերտներին նախապատրաստում էին ապստամբելու»։ 1884 թ. Մուշում ձերբակալվեց վարժարանի տեսուչ Մկրտիչ Սարրյանը։ Վայրենի հալածանքների պայմաններում էր աշխատում Կարինի Սանասարյան դպրոցը։ Հայկական դպրոցներում թուրքերենի դասատուները, որպես կանոն, այդ պաշտոնին նշանակվում էին լրտեսությամբ զբաղվելու համար[72]։

Խարբերդի «Արմենիա» կոլեջում արգելվեց ֆիզկուլտուրայի դասերի ժամանակ փայտիկներով վարժությունների կատարումը, որովհետև դրանք ընկալվում էին որպես հրացաններով վարժություններ։ Փոխվեց այդ դպրոցի անունը. «Արմենիայի» փոխարեն՝ «Եփրատ»։ Շատ դպրոցներում ֆիզկուլտուրան ընդհանրապես արգելվեց[73]։

Կառավարությունը իբր իր հովանավորության տակ էր վերցնում բոլոր տարբական դպրոցների խնամքը և այդ նպատակով 1883 թ. մացվեց հատուկ հարկ։ Այն հիմնականում վճարում էին քրիստոնյաները, իսկ հավաքված գումարը ծախսվում էր միայն թուրքական դպրոցների վրա։

Սուլթան Համիդը արգելեց քրիստոնյա երեխաներին սովորել պետական դպրոցներում։

Թուրքական ֆեսերի փոխարեն Մուշի գլխարկների օգտագործումն իսկ ընկալվեց որպես բողոք իշխանությունների դեմ։

Ֆրանսիական խոշոր իսլամագետ Ա. Մասեն գրում է. «Նրանք (ոչ մահմեդականները) պարտավոր էին կրելու հատուկ տարբերանշան ունեցող հագուստ։ Նրանց արգելված էր ձի նստել և զենք ունենալ, կառուցել կրոնական նոր հաստատություններ և հրապարակավ կրոնական ծեսեր կատարել, նրանց վկայությունը մահմեդական դատարանում չէր անցնում»։ Նրանց նույնիսկ արգելված էր լայն գոտի կապել և կարմիր կոշիկ հագնել[74]։

Կ. Պոլսի Խորենյան մանկապարտեզի երեխաների գոգնոցների վրա գրված էին այդ մանկապարտեզի անվան առաջին տառերը՝ «Խ. Մ.»։ Այդ մասին հայտնեցին սուլթանին՝ որպես թե այդ «Խ. Մ.»-ն նշանակում է «Խեղճ Մանուկ», «որ կոտորածի հիշատակները նորոգելու համար կառավարության դեմ ցույց է»։ Հայ կանանց և աղջիկներին արգելեցին կարմիր բաճկոն կրել, որովհետև կարմիրը հեղափոխություն խորհրդանշող գույն է։

Ամիդում քրիստոնյայի առանձնանշանը կապույտ կտավից կարված հագուստն էր։ Նրա գլուխը պետք է անպայման փաթթոցով փակվեր, «որպեսզի մահմեդականը գյավուրի մազերը չտեսներ»։ Չէ որ մազերի ցուցադրումը գյավուրի «հպարտության» և թուրքին վիրավորելու նշան էր։

1. К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 9, М., 1957, с. 239.
2. К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 22, М., 1961, с. 33.
3. Жизнь замечательных людей, Назим Хикмет, М., 1968. с. 11.
4. Մուրճ, 1905, № 9։
5. М. Кемаль. Путь новой Турции, М., 1934, с. 56.
6. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 834։
7. Երկրի ձայն, 1906, № 10։
8. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II ..., էջ, 283։
9. Р. Фиш, Турецкие дневники, М., 1977, с. 46.
10. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 54.
11. Նույն տեղը, էջ 54—55։
12. Նույն տեղը, էջ 282—283։
13. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II ..., էջ 361, 369, 386, 390։
14. Ю. Петросян, Младотурецкое движение, М., 1971, с. 183—184.
15. К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 10, М., 1958, с. 167.
16. К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 9, с. 35.
17. Նույն տեղը, էջ 6։
18. Յո. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 265։
19. Положение армян .... с. 73.
20. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 38։
21. Նույն տեղը, էջ 38—39։
22. А. Массэ, Ислам, М., 1961, с. 30.
23. Положение армян ..., с. 281.
24. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 44։
25. Положение армян ..., с. 296.
26. Նույն տեղը, էջ 296—297։
27. Նույն տեղը, էջ 297։
28. Մշակ, 1886, № 143։
29. К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. 9, с. 25.
30. A. Nasibian, "Britain and the Armenian Questions 1915—1923, London, 1985, p. 25.
31. Բաֆֆի, եժ, հ. 4, ե., 1956, էջ 482։
32. Բաֆֆի, եժ, հ. 9, ե., 1958, էջ 307։
33. Նույն տեղը, էջ 311։
34. Նույն տեղը, էջ 277։

35. Նույն տեղը, էջ 302—303։
36. Նույն տեղը, էջ 48—49։
37. Նույն տեղը, էջ 195—196։
38. Բաֆֆի, ԵԺ, հ. 10, Ե., 1957, էջ 37—38։
39. Նույն տեղը, էջ 39։
40. Նույն տեղը, էջ 40։
41. Բաֆֆի, ԵԺ, հ. 5, Ե., 1956, էջ 476։
42. Նույն տեղը, էջ 477։
43. Բաֆֆի, ԵԺ, հ. 4, էջ 384։
44. Նոր Հոսանք, 1914, № 6։
45. Положение армян ..., с. 132—133.
46. Նույն տեղը, էջ 133։
47. Նույն տեղը, էջ 72։
48. Նույն տեղը, էջ 74։
49. Նույն տեղը, էջ 75։
50. Նույն տեղը, էջ 76։
51. Նույն տեղը, էջ 78։
52. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 8, էջ 10։
53. Երկրի ձայն, 1907, № 18։
54. Մասիս, 1880, № 2637։
55. Մ. և Ս. Բզեյան, Հարազատ պատմություն Տարոնո, խմբագրից Աղան Տարոնցին, Կահիրե, 1962, էջ 27։
56. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 66։
57. Բաֆֆի, ԵԺ, հ. 5, էջ 41։
58. И. Голобородько, Старая и новая Турция, М., 1908, с. 123.
59. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 21.
60. Положение армян ..., с. 136.
61. Геноцид армян . . . , с. 63.
62. Положение армян . . . , с. 139—140.
63. Նույն տեղը, էջ 145։
64. Թայմս, 7 փետրվարի 1877 թ.։
65. И. Голобородько, Старая я новая Турция, с. 222.
66. А. Массэ, Ислам, с. 30.
67. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, «Օսմանյան զրաբնությունը և հայ մամուլը 1838—1896 թթ.», 1984, էջ 13։
68. Նույն տեղը, էջ 31։
69. Положение армян . . . . , с. 175.
70. Նույն տեղը, էջ 176։
71. Երկրագունդ, 1886, № 10։
72. Արձագանք, 1883, № 1։
73. Վ. Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 331։
74. А, Массэ. Ислам, с. 30.

ՔՐԴԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Մինչև XIX դարի 30-ական թվականները Արևմտյան Հայաստանում գործադիր իշխանությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր քուրդ փաշաների ու աղաների ձեռքում, որոնք կառավարության նկատմամբ երկու հիմնական պարտականություն ունեին՝ հարկ էին վճարում և պատերազմի ժամանակ իրենց զինված ուժերը տրամադրում էին Թուրքական բանակին։ Օրինակ, Տարոնի տերն ու տնօրենը Ալեդին քրդական ֆեոդալական տունն էր, որը կիսանկախ քաղաքականություն էր վարում։ Ալեդինի տունը առանձին դեպքերում հաջող կռիվներ էր մղում նույնիսկ Էրզրումի Թուրքական փաշայության դեմ։

Վիճակն այդպես էր ոչ միայն Տարոնում, այլ նաև մյուս շրջաններում։ Ունենալով զինված ուժեր, քուրդ աշիրեթապետերը ամենուրեք ինքնուրույնություն և կենտրոնախույս տրամադրություններ էին դրսևորում (Ուրֆայում, Դիարբեքիրում, Մարդինում, Մոսուլում, Բաղդադում և այլն)։ Միշտ չէ, որ օսմանյան կառավարությանը հաջողվում էր դրանք զենքի ուժով հնազանդեցնել և հաճախ գործի էր դրվում խորամանկությունը, կաշառքը, նրանց իրար դեմ գրգռելը։ Կ. Պոլիսը յուրաքանչյուր նման դեպքում տեղական իշխանություններից պահանջում էր քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ խաղաղ միջոցներով և նրանց չգրգռել։

Այս միտքը ապացուցող բնորոշ օրինակ է սիպիկ ցեղի ցեղապետ Մուհամմեդ փաշայի հետ կատարվածը։ Փաշան ինքնուրույն քաղաքականություն էր վարում։ Ոչ միայն իր ցեղին, այլ նաև հայերին թույլ չէր տալիս կառավարությանը հարկ վճարել։ Երբ ուժի միջոցով Մուհամմեդ փաշային հնազանդեցնելու կառավարության ջանքերն արդյունք չտվին, նրան նշանակեցին Ալաշկերտի մուդիր և ուղարկեցին եղդիներից հարկեր գանձելու։ Հետագայում Մուհամմեդ փաշան դարձավ Բայազետի դիկտատոր, մինչև որ սպանվեց քրդերի ձեռքով՝ «կառավարության շահերին ծառայելու համար»։

Քուրդ աշխատավորությունը ևս տառապում էր անիրավություններից, զրկանքներից, հալածանքներից, աքսորներից ու խոշտանգումներից, բայց, ի տարբերություն հայերի, նա ընդհանուր ջարդերի, կրոնական հալածանքների չէր ենթարկվում։

Ավատատիրական հարաբերությունները բնորոշ էին ոչ միայն

պետության հետ փոխհարաբերություններին, այլ նաև քուրդ ցեղապետերի ու հայերի միջև եղած հարաբերություններին։ Հայը ռայա էր և նրա ճնշող մեծամասնությունը ֆեոդալական կախման մեջ էր գտնվում քուրդ ավատատիրոջից։

Չնայած դրան, մինչև XIX դարի կեսը քրդերի և հայերի միջև լուրջ ընդհարումներ չեն եղել։

Մերձավոր արևելքում թուրքերը եկվորներ էին, իսկ հայերն ու քրդերը՝ բնիկներ, որոնք դարեր շարունակ ապրել են կողք կողքի, շնչել նույն օդը, իրար հետ կիսել ուրախությունն ու տխրությունը։ Քուրդ ու հայ շատ ընտանիքների միջև ստեղծվել էին ավանդական դարձած բարեկամական հարաբերություններ։ Գրեթե ամեն հայ ուներ իր «քիրվո» քուրդը, որը հարազատ մարդ էր հայի ընտանիքում։

Բաֆֆին իր հերոսներից մեկի բերանով ասում է. «Մեր երկիրը վատ չէր... հողն ընդարձակ էր, իսկ ջուրը՝ առատ, ցանում էինք, որքան կամենում էինք և վարում էինք, որքան կարող էինք։ Մենք մեր հողի տերն էինք։ Մեր սարերը խոտավետ էին, իսկ մեր անասունները՝ կուշտ ու պարարտ։ Մեր հարևան քրդերը չէին վնասում մեզ, մենք սիրով էինք ապրում միմյանց հետ...»[1]։

Քրդերը ևս,— գրում է Անդրանիկը,— «կառավարությունից ցավ են տեսել, կամ (նրանց) հայրերը կամ մեծ պապերն են աքսորված։ Կան նաև անհատներ, որոնք գիտակցության են եկել, տեսնում են կառավարության գաղանությունները և մտածում են իրենց ապագայի մասին...»[2]։

«Մահմեդական քրդերի հետ ևս սասունցիների հարաբերությունները առաջներում լավ էին, բարեկամական, մտերմական։ Միայն այս վերջին 10—12 տարվա ընթացքում քրդերի մեջ սկսեցին երևալ քարոզիչներ, որոնք նրանց մեջ վառում էին կրոնամոլությունը, ջերմեռանդությունը և սերմանում ատելություն դեպի այլակրոնները...»[3]։

Արևմտահայ հասարակական գործիչներից շատերը հասկանում ու ջանքեր էին գործադրում հայ-քրդական համագործակցությունը զարգացնելու համար։ 1880 թ. սեպտեմբերի 1-ին Բ. Նորատունկյանը Գ. Սրվանձտյանցին գրեց. «Քրդերը միասնություն են կազմում ցեղով և զենքով, հայերն էլ՝ ազգով ու լույսով։ Իրար հետ բախվելուց առաջ պետք է արժեքավորենք

այն օգուտները, որ կարելի է քաղել նրանց հաղորդակցությունից ու միաբանությունից»[4]։

Քրդերի առաջադեմ խավերի զգացմունքների արտահայտիչը դարձավ բանաստեղծ Ահմեդ Հանին, որ քրդերին կոչ էր անում հաղթահարել մասնատվածությունը և միավորվել ընդհանուր թշնամու՝ օսմանյան բռնատիրության դեմ։

Կան բազմաթիվ փաստեր, երբ հայերն ու քրդերը միմյանց փրկության ձեռք են մեկնել ընդդեմ օսմանյան յաթաղանի։

Այսպես, օրինակ, 1864 թ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Սասուն, նրա կիսանկախ վիճակը վերացնելու, լեռնաշխարհի հայերն ու քրդերը միավորվեցին և Տալվորիկի կամուրջի մոտ պարտության մատնելով թուրքերին՝ դուրս քշեցին։

Հայերի ու քրդերի միջև եղած այս բարիդրացիական հարաբերություններն էին, որ հանգիստ չէին տալիս օսմանյան իշխանություններին, որովհետև հայ-քրդական դաշինքը այն ուժն էր, որ արևելյան նահանգներում վտանգի տակ էր դնում օսմանյան տիրապետությունը։

«Նման դաշնագրության տարածումը,— գրում է Կարինում ռուսական գլխավոր հյուպատոս Մաքսիմովը,— թուրքական կառավարությանը հիրավի խիստ երկյուղ էր պատճառում»[5]։

Եվ ահա օսմանյան պալատում աստիճանաբար հասունանում էր այն միտքը, որ հայերի ու քրդերի դաշինքի ձևավորման առաջն առնելու համար անհրաժեշտ էր նախ թուլացնել քրդերին, ապա ոչնչացնել հայերին։

1847—1848 թթ. թուրքական բանակը, Օսման փաշայի ղեկավարությամբ, գլխովին ջախջախեց քրդական ազդեցիկ աշիրեթությունների։ Քրդերը դաժան կոտորածի ենթարկվեցին։ Նրանց ղեկավարներից շատերը ցցերի վրա հանվեցին ու կախաղան բարձրացվեցին։

Քուրդ ցեղապետերի անբաժան տիրապետության շրջանն ավարտվեց։ Սակայն այդ չի նշանակում, թե դրանով նրանք ընդհանրապես զրկվեցին իշխանությունից։

Օսմանյան կառավարությունը, հայերին հարկադրելով պետությանը հարկեր վճարել, նրանց չազատեց քուրդ աղաների գանձած հարկերից։ Աշիրեթապետերից յուրաքանչյուրն ուներ իր գյուղերն ու նույնիսկ շրջանները, որտեղ նրանք միահեծան տեր ու տիրակալներ էին։ Նրանցից շատերը միաժամանակ կատարում էին թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր պառաջնորդի դեր։

«Ամենաաղքատ դերբեյը տեր է 3—4 գյուղի։ Կան դերբեյներ, որոնք ունեն 30—40 գյուղ և հավաքում են այդ գյուղերի համարյա ամբողջ եկամուտը։ Գյուղացին աշխատում է մի կտոր չոր հացի համար»[6]։

Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարիներին քրդական դերբեյները ձեռք բերեցին ընդարձակ հողատարածություններ։ Նա նաև թույլատրեց Արևմտյան Հայաստան վերադառնալ այն դերբեյներին կամ նրանց ժառանգներին, որոնք արտաքսվել էին նախկին սուլթանների կողմից։

Սուլթանի քաղաքականությունը գործնականում ուժեղացրեց քուրդ աշիրեթապետերի կողմից հայ գյուղացիության քաղաքական ճնշումն ու տնտեսական շահագործումը։ Հայ գյուղացին տուրքեր ու հարկեր մուծելուց բացի պարտավոր էր մշակել քուրդ աղայի հողը, խնամել նրա անասունները, կատարել տան ծառայի պարտականություններ։ Վանի Խորթենց գյուղը, որն ուներ 25 ծուխ, քուրդ աշիրեթապետին ամեն տարի տալիս էր 50 ոչխար, 625 թխած հաց, 5 փութ յուղ, 120 զույգ գուլպա։ Յուրաքանչյուր հայ ընտանիք իր նորածին արու զավակի համար պարտավոր էր հարկ վճարել։ Դրա հետևանքով շատ արու զավակներ ունեցող ընտանիքներն ավելի արագ էին սնանկանում ու պարտքի տակ ընկնում։

Այս ամենի պատճառով հայ գյուղը քայքայվում էր, իսկ գյուղացին հարկադրված կամ պանդխտության ցույն էր վերցնում և կամ դառնում մարաբա՝ լրիվ ընչազուրկ կամ միայն քաշող անասուն և գյուղատնտեսական գործիքներ ունեցող մշակ։

Մարաբայության էությունը հանգամանորեն բնութագրված է Ա. Ս. Համբարյանի աշխատություններում։

«Հողը,— գրում է Բաֆֆին,— որի վրա նա (հայ գյուղացին) ապրում է, թեև մի ժամանակ իր նախնիներին էր պատկանում, բայց այժմ դարձել է օտար աղաների սեփականությունը։ Նա մշակում է օտարի հողը։ Իսկ աղայի պայմանները մշակի հետ այնքան ծանր են և անշահավետ, որ նրա երկրագործության բերքը և նրա վաստակը մեծ մասամբ վայելում է կալվածատերը, մշակի համար մնում է այնքան, որով չի կարողանում յուր կենսական ամենաանհրաժեշտ պիտույքներին անգամ բավարարություն տալ։

Նրա խրճիթը գրած է աղայի հողի վրա, նրա համար հարկ է վճարում։ Նրա անասուններն արածում են աղայի արոտներում, նրանց համար հարկ է վճարում։ Ինքը գյուղացին, նրա ընտանիքը ապրում են աղայի հողի վրա, այնտեղ ման են գալիս, նրա ջուրն են խմում, և իրենց գլուխները պահպանելու համար հարկ են վճարում։ Մի խոսքով գյուղացին, բացի իր աշխատող ձեռքերից, ուրիշ ոչինչ չունի, նրան շրջապատող ամբողջ բնությունը պատկանում է աղային, և նրա մեջ գործելու համար նաև պետք է զոհե իր աշխատության ամենամեծ մասը»[7]։

Վանի վիլայեթում հողատիրության մասին Վրթ. Փափազյանը գրում է. «... քիչ չի պատահում, որ քուրդ աղաներից մեկը կաշառեր «թափու դայիրեսի» կոչվող հողային վարչության անդամներին և սեփականացներ մի քանի գյուղի հողերն ու հանկարծ ամբողջ գյուղացիներին, որոնք տերեր էին, մարաբաների փոխեր»։ «... Մի քանի ոսկու համար գյուղացու հողը հանկարծ դառնում է սեփականություն մի վաշխառուի, մի տաճիկի և կամ մի որևիցե քուրդ աղա, հանկարծ «թափու դայիրեսիից» մի թուղթ ձեռքը՝ կգա վռնդելու գյուղացիներին իրանց հողերից և եթե կութ ունենա՝ զոնե հողատիրոջ մարաբա կլինեն»։ Ապա նա շարունակում է. «Վասպուրականի հողերի 3/4 մասը պատկանում է քաղաքացիներին՝ տաճիկների և քուրդ աղաների, որոնց մշակող մարաբաներն են գյուղի բնակիչները, այն պայմանով, որ բերքի տասանորդը կառավարությանը տալուց հետո՝ մնացյալը կիսվի տիրոջ և մարաբայի մեջ։ Այս երկուսից առաջինը տալիս է հողը, իսկ երկրորդը՝ գործիքները, եզն ու աշխատանքը»[8]։

Սոցիալ-տնտեսական դաժան կեղեքումներն ու ազգային հալածանքները դատապարտել էին գյուղացիներին լիակատար աղքատության և թշվառության։ Նրանք հնարավորություն չունեին քիչ թե շատ բարելավելու իրենց դրությունը։ Այդ պատճառով էլ ապրում էին խիստ հետամնաց պայմաններում։

Ռուսական բանակի գնդապետ Պուտյատան Արևմտյան Հայաստանում կատարած իր շրջագայությունից հետո գրեց. «Ամենուրեք նկատվում է կեղտ, տարրական հարմարությունների բացակայություն, գյուղական տները քարերի կույտեր են, իսկ գյուղերը հիշեցնում են հնագիտական բլուրների խմբեր, բնակչությունը ցնցոտիների մեջ է և քնում է անասունների հետ միասին։ Այստեղ նույնիսկ երկրագործական գործիքները, ծանրու-

թյուն կրելու սայլերը, կալսելու եղանակը պահպանվել են այնպես, ինչպես նրանք նկարագրված են Աստվածաշնչում»[9]։

Քաղաքներում ևս տիրապետողը հետամնացությունն էր. արհեստավորները տառապում էին աղքատության ճիրաններում, իսկ արհեստները կազմալուծված էին և դուրս էին մղվում արտասահմանից ներմուծվող ապրանքների կողմից։

* * *

Չնայած սուլթանական կառավարության գործադրած բռնություններին, այնուամենայնիվ, քուրդ ցեղապետերը ձգտում էին վերականգնել իրենց նախկին կիսանկախ վիճակը։

1880-ական թվականներին Օբեյդուլլան «Ազատ Քրդստան» լոզունգով ապստամբության դրոշ պարզեց։ Բարձր Դուռը ամեն ինչ արեց այդ շարժումը հայերի ու Պարսկաստանի դեմ ուղղելու համար։ Բայց ցեղապետը դեմ էր հայերին ոչնչացնելու Ելտզի պահանջին։

1880 թվականի հուլիսին շեյխերի ժողովում Օբեյդուլլան հայտարարեց, որ մինչև օրս Բ. Դուռը օգնում էր քրդերին, որպեսզի նրանք ոչնչացնեն քրիստոնյաներին։ Եթե վաղը կայսրությունում այլևս հայեր չմնան, քրդերը թուրքական կառավարության աչքում կկորցնեն իրենց նշանակությունը։ Ժողովը դեմ քվեարկեց հայերին ջարդելու Բ. Դռան պահանջին։

Օսմանյան կառավարությունը դիմեց ամեն տեսակ միջոցների՝ Օբեյդուլլային Կ. Պոլիս բերելու համար։ 1881 թ. հուլիսին դա նրան հաջողվեց։ Օբեյդուլլային մայրաքաղաքում արժանավայել ընդունեցին։ Մեկ տարի նա մնաց օսմանյան մայրաքաղաքում՝ արժանանալով մեծամեծ պատիվների։ Միաժամանակ նրան մանրամասն հրահանգավորեցին հայերի ջարդերը կազմակերպելու համար։ Բ. Դուռը կազմակերպեց նրա «փախուստը» Կ. Պոլսից։ Բայց երբ Օբեյդուլլան Վասպուրական հասավ, քրդերին հանձնարարեց, որ նրանք հայերի հետ լավ վարվեն, քանի որ թշնամությունը հայերի հետ սխալ քաղաքականություն է։

Դրա համար օսմանյան կառավարությունը Օբեյդուլլային շներեց, նրան ձերբակալեց և 1883 թ. աքսորի ճանապարհին սպանեց։

Այս պայմաններում օսմանյան իշխանությունները ձգտում են

սրել հայ-քրդական հակասությունները։ Այդ նպատակով սիրաշահում են քրդական վերնախավին և օգտագործում քրդերի կրոնական մոլեռանդությունը հայերի դեմ։ Եվ քրդական ցեղապետերն ու աղաները, հովանավորվելով իշխանություններից, սկսում են ուժեղացնել հայերի կեղեքումները։ Հայկական գյուղերի վրա հարձակումները, հայ գյուղացու կայքի ու անասունների թալանը առօրյա երևույթ են դառնում։ Աղաները խստացրեցին՝ հարկային հարստահարումները, զանգվածային բնույթ կրեց հայերի հողերի հափշտակությունը։

Օսմանյան կայսրությունում հողի գերագույն սեփականատերը պետությունն էր, բայց 1858 թ. հունիսի 6-ի օրենքով զգալիորեն հեշտացավ նրա անցումը մասնավոր մարդկանց ձեռքը։ Թուրք և քուրդ ֆեոդալները չհապաղեցին օգտվելու այդ օրենքից և զանազան ճանապարհներով տեր դարձան ընդարձակ տարածություններին։ Բացի այդ «օրինական» միջոցներից, նրանք շատ հաճախ ուղղակի բռնագրավում էին հայերի հողերը։

«Մասիս» թերթը 1879 թ. մայիսի 30-ին գրեց, որ միայն Բիթլիսի վիլայեթում հայերից բռնագրավվել է 252 հազար հեկտար հողատարածություն։

Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալներով, XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակին հայերից խլվել են 26 հազար արտ, 2,6 հազար տուն, 2 հազար կալվածք, 200 հազար այգի, իսկ ընդհանուր առմամբ հայերից բռնագրավված հողատարածությունները հասան 741 հազար հեկտարի։

Կառավարությունն ընդունեց նաև մի օրենք, համաձայն որի, եթե մեկը տասը և ավելի տարիներ, թեկուզ բռնի ուժով, օգտագործել է ուրիշի հողը, ապա այդ հողը մնում է նրան։ Հետևանքը եղավ այն, որ հայերի հողերի, մասնավորապես արոտավայրերի զգալի մասն անցավ քրդերին։

Այդ քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ 80-ական թվականներին հայերը 10 անգամ ավելի քիչ ցանքատարածություն ունեին, քան մահմեդականները։ Իսկ հայերից հարկ հինգ անգամ ավելի էին գանձում, քան մահմեդականներից։ XIX դարի 70—90-ական թվականներին Կարինի վիլայեթի 8000 տուն մահմեդականները վճարում էին 395 հազար, իսկ 2000 տուն քրիստոնյաները 430 հազար զուրուշ հարկ։

«Հայկական և սիրիական նահանգները,— գրում է Ն. Աղոն-

ցը,— միասին վերցրած Փոքր Ասիայում թուրքական տիրույթների 1/3-ն էլ չէին կազմում։ Նրանց ընդհանուր տարածքը հավասար է Միջագետքի նահանգի տարածքին։ Չնայած դրան, նրանք վճարում էին ավելի ծանր հարկեր, քան մուսուլմանական նահանգները»։ Հայկական նահանգները վճարում էին շուրջ 84 միլիոն, որից 25 միլիոնը՝ Վանը և Մուշը, նահանգներ, որոնք կազմված էին հիմնականում հայկական բնակչությունից։ Այլ կերպ ասած, քրիստոնեական նահանգները, որոնք զբաղեցնում էին մուսուլմանական նահանգներից երեք անգամ քիչ տարածք, վճարում էին նրանցից երկու անգամ ավելի[10]։

Հայերը պարտավոր էին բազմաթիվ հարկեր ու տուրքեր վճարել նաև քուրդ աղաներին*։

1872 թ. Մուշից Կ. Պոլսի հայկական պատրիարքարանին գրում են, որ Բռնաշեն, Խութ, Սասուն և Շատախ գավառներում, որտեղ քրդերի հետ հայերը խառն են բնակվում, քուրդ աղաները, որոնց «խաֆիր» են անվանում, հայերի համար ստեղծել են ծանր վիճակ։ Հայերը խումբ-խումբ նրանց բաժին դառած, յուրաքանչյուրը որպես հպատակ և սեփականություն, տարեկան տուրք են տալիս խաֆիրներին ու բաժանված են երեք կարգի։ Առաջին կարգը, որ «համբա» են անվանում, յոթ բեռ ցորեն էր տալիս, հինգ ոչխար, երկու լիտր յուղ, երկու օխա ծխախոտ, մեկ լիտր չորթան, չորս լիտր աղ, մեկ շալվար, մեկ զույգ զանկապան, մեկ զույգ գուլպա, մեկ զույգ գոգնոցի ժապավեն, երկու ունկի վառոդ, երկու ունկի կապար, երկու ունկի կանեփ, հինգ ունկի ձեթ, երկու շերեփ, երեսուն դդալ, չորս թի, երկու կողով, վեց ցախավել, մեկ դանակ, չորս հավ, երկու աքաղաղ, տասը աղավնի, վեց աղոր, 1242 ղուրուշ դրամ և այլն։ Երկրորդ կարգը, որ «կիսահամբա» էր կոչվում, վճարում էր վերոհիշյալի 2/3 մասը, իսկ երկրորդը՝ պեղը, 1/3 մասը*[11]։

Նկատվել են շատ դեպքեր, երբ խաֆիրները իրենցից ճորտային կախման մեջ գտնվող հայերին՝ կանանցով և երեխաներով, շարժական և անշարժ ունեցվածքներով վաճառում էին ուրիշ աղաների։ Կ. Պոլսի պատրիարքարանի մի բողոքագրում ասված է. «Սույն ավանի (Մոկս, Վանի վիլայեթ) քուրդ բեյերը գյուղացի հայերին որպես գերի իրար էին վաճառում»[12]։

Խաֆիրները, երբ իրար հետ թշնամանում էին, յուրաքանչյուրն իր հպատակ հայերին բռնությամբ առաջը գցելով իրար տարածքներն էին ասպատակում, մանավանդ հայկական գյուղերի վրա հարձակվելով կողոպտում էին, վիրավորում, սպանում և վերադառնում իրենց տեղերը։ Պարտվածը վրեժ լուծելու համար զորք էր հավաքում և հարձակվում հակառակորդին պատկանող հայկական գյուղերի վրա՝ կողոպտում, քանդում, ավերում, վիրավորում, սպանում և հետ դառնում։

* * *

Թուրքական իշխանությունները առիթը բաց չէին թողնում հայերին հավաստիացնելու, որ պատրաստ են խստորեն պատժելու այն քրդերին, ովքեր ոտնձգություններ կկատարեն հայերի նկատմամբ։ Հայերը, իհարկե, այդ հավաստիացումներին միշտ չէ, որ հավատում էին, բայց այլ ելք չունեին և հարկադրված իշխանություններին գանգատներ էին ներկայացնում։

Այդ իր հերթին դժգոհություն էր ծնում քրդական շրջաններում և աշիրեթապետերին պատրվակ ծառայում դիմելու նոր հարստահարությունների ու բռնությունների։ Գործնականում օսմանյան կառավարությունը ամեն ինչ անում էր քրդերի ձեռքով հայերի հետ հաշվեհարդար տեսնելու, Հայկական հարցը այդ միջոցով լուծելու համար։

1878 թ. Բեռլինի կոնգրեսում օսմանյան պատվիրակությու-

---

* Քուրդ աղաները հաճախ հայերից տուրքերի դանձման իրավունքն իրար էին վաճառում. որոշ դեպքերում այնպես էր ստացվում, որ գյուղացուց հողատիրության իրավունքի համար հարկը՝ պեղը, պատկանում էր մի ֆեոդալի, իսկ գլխահարկը՝ աղայությունը, մի այլ ֆեոդալի։ Դա չարիք էր հայ գյուղացու համար, որովհետև գործնականում այդ ֆեոդալներից յուրաքանչյուրը գանձում էր թե՛ գլխահարկը, թե՛ հողային հարկը։

Նույնիսկ ամուսնանալիս հայ աղջիկը պարտավոր էր իր օժիտի մի մասը տալ քուրդ աղային։

Աբդուլ Համիդի անձնական քարտուղար Մուստաֆա Նեղիմը իր «Հայ եղեռնը» (Կահիրե, 1925 թ.) գրքում գրում է, որ թուրք և քուրդ ֆեոդալները հայ գյուղացիներից հավաքում էին անգամ կարպետ, թաղիք, շերեփ, դդալ, կողով և, նույնիսկ, պարան։

* «Հայ աղջիկները... խաֆիրների տներում հարսի նման օրերով ձավար, կորկոտ պատրաստելով, լաթեր լվանալով ու կարկատելով սպասարկություն են կատարում՝ լուտ արտասվելով։ Եվ նրանց գլգլի արտերը քաղհանելու համար շաբաթներ են աշխատում...

Այն հայ կանայք, որոնք չբեր են կամ տղա երեխա չեն ծնում, խաֆիրները հարկադրում են երկրորդ կինը առնել, որպեսզի զավակ ծնելով տարեկան տուրքը վճարեն» (Լեո, «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հ. Ա, Փարիզ, 1934, էջ 42—43)։

նը ամեն կերպ աշխատում էր հայերի նկատմամբ գործադրվող կեղեքումների ու ճնշումների մեղքը բարդել քրդերի վրա։ Եվ նրան, Արևմուտքի պետությունների աջակցությամբ, այդ հաջողվեց, որ բնական է, ավելի սրեց քուրդ-հայկական հարաբերությունները։

Միաժամանակ օսմանյան իշխանությունները գրեթե դադարեցրին հալածանքները քրդերի նկատմամբ։ Նրանց նույնիսկ թույլատրվեց ստեղծելու շեյխություններ։ Կայսրության հարավային շրջաններից Տարոն բերվեցին քրդական նորանոր ցեղախմբեր։

Քրդական առաջադիմական շրջանները հասկանում էին սուլթանի դիվային խաղերի իմաստը։

Ավելի ուշ, 1901 թ. «Քուրդիստան» թերթում տպագրվեց մի կոչ՝ ուղղված քրդերին. «Քրդե՛ր, բավական չէ՞ արդյոք ծառայել պաշտոնավոր նոքարներին և Աբդուլ Համիդին, որը ձեզ զրկում է քաղաքակրթության և առաջադիմության բարիքներից, լուսավորության պտուղներից, ազատության երջանկությունից, պղծելով ձեր պատիվն ամբողջ աշխարհի առաջ՝ նենգամտորեն ոճրագործությունների դրդելով ձեզ և տգեղ համբավ ստեղծելով ձեր անվան շուրջ։

Հայկական կոտորածների միջոցով նա ստիպեց ձեզ ոտնակոխ անել դարավոր ու այնքան բնական հարաբերությունները հայերի հետ, կատարված չարագործությունների պատասխանատվությունը գնելով ձեր ուսերին՝ քողարկվելով աշխարհից։ Սակայն իմացեք, որ դուք էլ Աբդուլ Համիդի կողմից անպատիժ չեք մնա»։

Բայց այդ շրջանների ազդեցությունը թույլ էր, նրանք չկարողացան դիմակայել շեյխերի գլխավորած իսլամական դրոշի տակ իրականացվող հայաջինջ քաղաքականությանը և ցեղապետերի ընչաքաղցությանը։

Հայերի դրությունը օրեցօր վատանում էր։ Նրանք զրկվել էին քաղաքական ամենատարրական իրավունքներից։ Հայերի բոնի հավատափոխությունը, ձուլումն ու բնաջնջումը դարձել էր օսմանցիների պետական քաղաքականությունը և իրականացվում էր պարբերաբար։

Մի մշեցի՝ Միկիչ անունով, գրեց. «Հայը գերի էր, մենք՝ մեր տան ու տեղի տեր չէինք, ոչ էլ մեր մուլքի ու կայքի, ոչ էլ մեր կնոջ ու զավակի...»[12]։

* * *

Հայերի վիճակը առավել անտանելի դարձավ, երբ Կովկասից ու Բալկաններից բերվեցին ու նրանց հողերի վրա բնակեցվեցին ավելի քան 250 հազ. չերքեզներ ու այլ մուսուլմաններ։ Վերջիններիս կառավարությունը ապրելու որևէ միջոց չտվեց, բայց բոլորին զինեց։ Նրանց ապրուստը պետք է հայ գյուղացին հոգար։ Չերքեզը զինված, իսկ հայը զենք կրելու իրավունքից զուրկ, չերքեզին տվեցին ոստիկանական վարչական իրավունքներ, իսկ հայը գործնականում օրենքից դուրս էր դրված։

Այս պայմաններում պատահական չէ, որ կողոպուտն ու առևանգումն աննախադեպ չափերի հասան։ Չերքեզներին կանգնեցնելով դաժան երկընտրանքի առաջ՝ սովից մեռնել կամ ապրել թալանով ու կողոպուտով, սուլթանը նույն նպատակն էր հետապնդում՝ նրանց միջոցով քայքայել հայ գյուղը, հայ գյուղացուն հարկադրել հեռանալ այլ վայրեր ու երկրներ։ Անգլիական մի դիվանագետ գրում է. «Ոչ մի բան չի կարող արդարացնել այն, ինչ... ձեռնարկեց թուրքական կառավարությունը, զինված մարդկանց ամբոխը լցնելով այն երկիրը, որի անմեղ բնակչությունը նույնիսկ սովոր չէր զենք կրելու»[13]։

Անգլիական մի այլ դիվանագետ պատմում է, թե ինչպես ինքը հանդիպել է հայկական շրջաններ գաղթող մահմեդականների։ Ըստ նրա, այդ մահմեդականները ցնցոտիների մեջ էին, տառապում էին ջերմախտով, մեռնում էին սովից։ Գաղթականների մեծ մասը՝ ապրում էր բաց երկնքի տակ, սնվում միայն հատապտուղներով։ Այն հարցին, թե նրանք ինչու են թողել Կովկասը՝ մոլլաներից մեկը ցույց է տալիս օսմանյան կառավարությունից ստացված խոստումներով լի թուղթը՝ մի տարի նրանք պետության կողմից հացով կապահովվեն, նրանց կտրամադրվեն ամենալավ հողերը՝ գյուղատնտեսական գործիքներ, անասուններ, ինչպես նաև դրամ՝ տներ, մզկիթներ, դպրոցներ կառուցելու, ուսուցիչներ վարձելու համար[14]։

Վանի ճանապարհին տեսնելով հայաբնակ շրջաններ շարժվող չերքեզներին, որոնց «տղամարդիկ ոտքից գլուխ զինված էին», ականատեսներից մեկը գրեց. «Կարելի է կարծել, որ մենք վերադարձել ենք ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը»[15]։

Միայն Կարինի մի կազայում, որն ուներ ընդամենը 30 հազար բնակիչ, վերաբնակեցվեց 25 հազար զինված չերքեզ։

Չերքեզներն «անպատիժ կողոպտում են... Նրանք տերերին քշում են իրենց սեփական հողից, հափշտակում բերքը... մինչև հողի տերերը պետք է հողային հարկ վճարեն պետությանը, կառավարությանը այն հողերի համար, որ իրենք օգտագործել չեն կարող...

Մի շարք գյուղերի բնակիչներ հայտարարում են, որ իրենց գոյությունը պարզապես անհնարին է...»[16]։

Ռոլեն Ժեկմենը գրում է. «Ստրուկներ, մանավանդ հաճույքի առարկա ծառայող ստրուկներ ունենալը և գնելը Թուրքիայում հաճախ է պատահում և այդ նպատակով աղջիկների ու պատանիների գրեթե բացարձակ հափշտակումներ են կատարվում»։ Միայն Ազիզեի կազայում չերքեզներն ունեին 2000 ստրուկ, որոնք վաճառվում էին Կ. Պոլսի հարեմներին։ Պատանիների գինը 20—30 լիրա էր, իսկ կանանց գինը՝ 20—120 լիրա, նայած սարկուհու գեղեցկության։

Ամասիայում աղջիկների առևտրի մի դեպքի քննության ժամանակ պարզվեց, որ դատարանի նախագահը ևս մեղադրվող բեյից մի կին և մի աղջիկ էր գնել[17]։

«Ես չգիտեմ,— գրում է Ռոլեն Ժեկմենը,— կարելի՞ է արդյոք մի այլ երկիր տեսնել, որի կառավարությունը այդպես ձգտեր իր սեփական նահանգները լցնել վայրի հորդաներով, և ինքը նրանց առաջ այդպիսի երկրնտրանք դներ՝ կամ ապրիր թալանով ու կողոպուտով կամ աղքատությունից ոչնչացիր։ Թուրքիայի իշխանությունների վարքը ստիպում է մտածել, որ նրանց մեջ միտք է հղացել քայքայել ու ոչնչացնել քրիստոնյա բնակչությանը, չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից... Սրանից հետո մի՞թե կարելի է զարմանալ, որ Թուրքահայաստանը, որ բնությունից օժտված է ամենահարուստ երկրներից մեկը լինելու, դարձել է ամենադժբախտ և աղքատ երկիրը»[18]։

Հյուպատոսական զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Եթե մի տարի առաջ չկար ոչ կյանքի, ոչ գույքի ապահովություն, ապա այժմ ավելի քիչ է։ Եթե առաջ աղքատություն էր, այժմ դա ավելի է մեծացել, արդարադատության մասին հիշողություն իսկ չկա, իսկ ոճիրները, կաշառակերությունը և բռնությունները ավելի են բազմացել, ամբողջ բնակչությունը լիակատար հուսահատության մեջ է, և այժմ ավելի հաճախ

քան առաջ, նույնիսկ առանց փոխադարձ համաձայնության և կանխատեսության, խղճուկ ռայայի մեջ, որը համբերությամբ տանում էր բազմադարյան բռնության լուծը, առանձնապես վրդովեցուցիչ փաստերն առաջ են բերում անկարգություններ ու տեղական խռովություններ։ Կառավարությունը, հեռու լինելով այդ դժբախտությունների առաջն առնելու միջոցներ փնտրելուց, մտահոգված է միայն մեկ ցանկությամբ՝ հայերին սանձահարել նրանց դեմ գրգռելով քրդերին։ Նա այս վերջիններին բաժանում է մարտինի հրացաններ, շարունակելով հայերին արգելել զենք կրել նույնիսկ սեփական պաշտպանության համար»[19]։

Արևմտյան Հայաստան մահմեդական տարրերի ներմուծումը հեշտացնելուն և հայերին ամենուրեք ազգային փոքրամասնություն դարձնելուն էին նպատակաուղղված 1864—1880 և 1886 թ. վարչական ռեֆորմները։ Համաձայն այդ ռեֆորմների, օրինակ, Սասունը բաժանվեց չորս գավառների. Խութն ու Մոտկանը մտան Բիթլիսի, Շատախն ու Բռնաշենը՝ Մուշի, Խուլբը, Տալվորիկը և Խիանքը՝ Կենճի, Փսանքը և Ռնդուանը՝ Սղերդի գավառակների մեջ։ Խուլբից անջատեցին Լճենը, իսկ Ֆարդինը, որ Խուլբի ու Խիանքի կենտրոնն էր, կցվեց Դիարբեքիրին։

Վերաձևվեց Արևմտյան Հայաստանի նաև մյուս մասերի վարչական քարտեզը, հայաբնակ շատ վայրեր մտցվեցին Քրդըստան կոչվող վարչական միավորի մեջ։ Խարբերդը միացվեց Դերսիմին, իսկ Հեքիարը՝ Վանին։ Կիլիկիան մնաց Հալեպի և Ադանայի նահանգների մեջ բաժանված։

Այսպիսով, կայսրության տարածքում բնակվող հայերի բնակավայրերը բաժանվեցին մահմեդականներով բնակեցված վարչական միավորների վրա։

Իռլանդացի պրոֆեսոր Էմիլ Դիլոնը գրում է. «Հայերի ոչնչացման ծրագիրը ակնհայտորեն հաջող ու կանոնավոր է գործում, քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն ուրիշների ձեռքն են անցնում այնքան արագ, որքան զավեշտական օպերայի դեկորները»։ Է. Դիլոնը բերում է Ալաշկերտի հինգ գյուղերի օրինակը, ուր նախկինում ապրում էին երեք հազար հայ ընտանիք։ Քուրդ ցեղապետերի կողմից այդ գյուղերին տիրանալուց մի քանի տարի անց դրանցում ոչ մի հայ չէր

պրում։ Բուլանրխի Խաչ հայկական գյուղին տիրանալով, գեղապետ Մ. Էմինը բոլոր հայերին գյուղից քշեց և այնտեղ մահմեդականների բնակեցրեց[20]։

* * *

Իշխանությունները աշիրեթապետերին ուղղակի հասկացրին, որ հայերի նկատմամբ նրանց ոչ մի գործողություն, այդ թվում կոտորած ու հարստահարություն, որպես հանցագործություն չի դիտվի։ Հետևաբար, կարող են անպատիժ թալանել ու սպանել։ Կ. Պոլսի հոգևոր առաջնորդները, դիմելով մահմեդականներին, կոչ էին անում. «Բոլոր նրանք, ովքեր Մահմեդի որդիներ են, այժմ պետք է կատարեն իրենց պարտականությունները և սպանեն հայերին, այրեն ու հողին հավասարեցնեն նրանց տները։ Ոչ մի հայի չպետք է խնայել, այդպիսին է սուլթանի հրամանը»[21]։

Իհարկե, բանն այստեղ կրոնը չէ, այլ «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը։

Իրավացի էր Կ. Պոլսում Ռուսաստանի ռազմական կցորդ Ա. Զելյոնինը, երբ գրում էր. «Արևելքում շարժումների մեծ մասը սկսվում է ժողովուրդների նյութական անտանելի վիճակից։ Նույն ձևով ճնշվում են թե՛ քրիստոնյան և թե՛ մահմեդականը։ Սկսվում են շարժումներ, որոնց մասնակցում են թե մեկը և թե մյուսը, սակայն կառավարությունը իր փրկության համար կրոնական թշնամանք է բորբոքում, իրար դեմ դուրս բերում մահմեդականներին ու քրիստոնյաներին, և, ի վերջո, տնտեսական հարցը փոխում է իր բնույթը և դառնում իսլամի ու խաչի կռիվ»[22]։

Բացի դա, արդեն ասվեց, որ 70-ական թվականների վերջերին ամբողջական տեսք ստացավ հայերին ոչնչացնելու սուլթանական քաղաքականությունը։ Այդ քաղաքականությունը գործնական հողի վրա դրվեց հատկապես այն բանից հետո, երբ սուլթան Համիդը տապալեց Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կատարումը, և մեծ պետությունները լռությամբ անցան դրա կողքից։

Համիդը հասկացավ, որ այդ պետությունների միջև հակասություններն այնքան խորն են, որ անհնար են դարձնում

նրանց միացյալ գործողությունները։ Հետևաբար, ինքն ազատ է գործելու սեփական հայեցողությամբ։

Սուլթանը ճիշտ էր գնահատել իրավիճակը։ Մասնավորապես Անգլիան իր «չերմեռանդ թուրքասիրությամբ» սուլթանի համար ազատ գործելու անսահմանափակ հնարավորություններ ստեղծեց։ Հասարակական կարծիքը խաբելու նպատակով, Բեռլինի կոնգրեսից հետո Սոլսբերին մշակեց Արևմտյան Հայաստանում անցկացվելիք ռեֆորմի նախագիծ։ Սուլթանը «համաձայնվեց» այն իրագործել, պահանջելով վեց միլիոն լիրա փոխառություն։ Համիդը լավ գիտեր, որ անգլիական բանկերը, որոնց Օսմանյան կայսրությունը մեծ գումարներ էր պարտք, հրաժարվելու էին նոր փոխառություններ տալուց և հարցը դրանով կփակվեր։ Այդպես էլ եղավ։

Երբ հայերը իրենց հողերի վրա մուհաջիրներ բնակեցնելու դեմ բողոքեցին «իրենց հովանավոր» Անգլիայի կառավարությանը, Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Լեյարդը հայերի բողոքին պատասխանեց՝ Թուրքիան ապաստան է տալիս իր կրոնակից փախստականներին և դրա դեմ անհնար է որևէ բան անել։ Անգլիան նաև օգնում էր սուլթանին հայերին ու քրդերին իրար դեմ գրգռելու գործում։ Բրիտանական կառավարությունը Քրդստանում հյուպատոս նշանակեց Տրոտրին և նրա համար նստավայր որոշեց Կարինը։ Այսինքն՝ կրկնվում էր այն կեղծիքը, որ Հայաստան չկա, կա միայն Քրդստան։

Մեր օրերում թուրքական պատմագրությունը ամեն միջոց գործադրում է արդարացնելու այդ քայլերը։ «Հայկական թղթապանակի» 1984 թ. հուլիսի 15-ի թողարկման մեջ արտահայտված է այն միտքը, որ բրիտանական դեսպանատան աշխատակից Ուիլանը, ներկայացնելով հայերի «բնավորության վատ գծերը», գրում է. «Անատոլիայի բնակչությունը մտովի հասունացած չէ բարեփոխումների համար։ Ազգաբնակչության մեծամասնությունը զարգացած չէ և անգրագետ է»։ Բնորոշ գաղութատիրական տրամաբանություն, որը մեր օրերում էլ նեոգաղութատերերն օգտագործում են ուրիշ ժողովուրդների վրա իրենց տիրապետությունը երկարաձգելու համար։

Ո՞վ զարմանք, թուրքերը ընդունակ են ոչ միայն ինքնուրույն քաղաքական կյանքի, այլ նաև ունենալու աշխարհակալ կայսրություն, իսկ հայը ոչ միայն անընդունակ է անկախության,

այլև Օսմանյան կայսրության շրջանակներում բարեփոխ պայմաններում ապրելու։

Անգլիան կանգնած էր հայերի բնաջնջման և «Համիդական» անունը կրող ծրագրի խանձարուրի մոտ։

Անգլիական քաղաքականության համար բնորոշ են Քեամիլ փաշայի հետևյալ խոսքերը (1879). «...Այսօր գոնե Անգլիայի ջահերը պահանջում են, որ Փոքր Ասիայի (մենք և Անգլիան «Հայաստան» բառը ոչ միայն չենք ճանաչում, այլ այդ անունը արտասանողների կղակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկրները ազատ մնան օտարի միջամտությունից և միջամտության ամեն առիթներից, ուստի այդ սուրբ նպատակի համար պետք է և պետական իրավունքը պահանջում է, որ անհետացնենք ամեն մի կասկածելի տարր, որպեսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ կոչված ազգը պետք է վերացնենք, անհետացնենք, ճզմենք...

...Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան տաճկական Ասիայի մեջ կրոնակից փնտրի, բայց չգտնի, այն դեպքում մեզ կթողնի հանգիստ և մենք հնարավորություն կունենանք զբաղվելու մեր ներքին գործերով և բարեկարգություններով... Այն ժամանակ մենք կունենանք ամեն ինչ և փոխանակ ուրիշներից դաս առնելու, մենք ինքներս դաս կտանք Եվրոպային և կվերականգնենք մեր նախկին փառքը»[23]։

1879 թ. Վան է ուղարկվում մի բարձրաստիճան զինվորական՝ Սամի փաշան, որին տված հանձնարարությունը չնայած գաղտնի էր, բայց ինչպես «Մշակի» թղթակիցն էր գրում, Սամի փաշայի առաջ խնդիր էր դրված «Հայոց ազգությունը ճնշելու, Հայաստանի կարևորությունը և ողջ հայության ապագա ակնկալությունները ոչնչացնելու մի նոր հնարագետ, արտաքուստ չերևացող և արագ գործադրելի նախագիծ մշակելու և իսկույն գործի դնելու։ Բնաջնջման գործիքները պետք է դառնային քրդերը»։ Փոխվել էր վերաբերմունքը քրդերի նկատմամբ։ Համիդը արդեն քրդական շարժումներից չէր վախենում, «ընդհակառակը, խրախուսում էր, որովհետև կարծում էր այդպիսով կարող է ստեղծել քրդական մի միություն, որ իր ձեռքին քաղաքական ուժեղ գործիք կդառնար, իսկ անկախության գաղափարը հեշտ կարելի էր մոռացության տալ՝ գրգռելով քրդերին հայերի դեմ»։

Ահա թե ինչու «Սամի փաշան Վան մտած-չմտած,— ցարունակում է «Մշակը»,— սկսեց բոլոր կողմերից քրդերին հավաքել և Վան քաղաքը լցնել՝ հակակշռելու համար քուրդ տարրը հայկական տարրին։ Մտադիր է նույնիսկ քուրդ պաշտոնյաներ նշանակել կառավարական զանազան տայաններում... Կարինի ճանապարհի վրա մինչև Վան հանդիպած բոլոր ավազակապետ քրդերին փոխանակ ձերբակալելու, մեծ պատվով քաջալերեց և նրանց խրախուսեց իրենց գործունեության մեջ...»[24]։

1880-ական թվականներին արդեն իրողություն էր թուրք հրապարակախոսության միաբան թշնամությունը անխտիր բոլոր հայերի դեմ, որոնց թուրքերը մեղադրում էին պետական դավաճանության մեջ, որովհետև «նրանք, հենված օտար պետությունների վրա, արագացնում էին նրանց միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին և պատրաստում բուլղարների նման ապստամբություն։ Օրվա հերոսները այդ լրագրերի համար դառնում էին քրդերը, որոնք և պիտի լինեին հայոց հարցի կործանողները։ Գովում և փառաբանում էին քրդական բարեմասնությունները, ժխտում էին, որ նրանք առհասարակ որևէ վնաս հասցնում էին հայերին և պնդում էին, թե, ընդհակառակը, հայերն են նրանց նեղում ու վնասում...»[25]։ Այս գործում հատկապես մեծ ակտիվություն էր դրսևորում «Թերջուման հագիգաթ» թերթը, որը սուլթան Համիդի անձնական օրգանն էր։

Այսպիսով, սոցիալական առումով հայ գյուղացին «ընկավ երկու կրակի մեջ,— մինչդեռ, մի կողմից, քուրդ կալվածատերն իրենն էր համարում հայի մշակած հողը և պահանջում էր, որ այդ հողի վրա հաստատվեն նախկին կալվածատիրական իրավունքները, մյուս կողմից՝ կառավարությունը նույն այդ հողերը համարում էր իրենը և պահանջում էր վարձագինը։ Այսինքն, երկու կեղեքիչներ դաշտում կանգնած էին՝ գյուղական մի հատ արորի վրա»[26]։

Իսկ քաղաքական առումով «Այլևս կասկած չկա,— 1880 թ. հուլիսի 2-ին Վանից գրեց Խրիմյան Հայրիկը,— քրդական մի միություն է կազմակերպվում կենտրոնական կառավարության դրդմամբ, որը ուզում է անդամալուծել հայոց հարցը, նրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը...

Որքան էլ... աննշան լինի այս միության քաղաքական կարևորությունը, նա կարող է, սակայն, շարագուշակ հետևանքներ ունենալ, հանկարծակի բերելով հայ ազգաբնակչությանը, որի ոչ միայն գույքը, այլև կյանքը այսօր վտանգի մեջ է»[27]։

* * *

Սովետական պատմաբան Ա. Ֆ. Միլլեր գրում է. «Գրաված ամբողջ տարածության վրա, բացի Անատոլիայից ու Ստամբուլին հարած Ռումելիայի մասից, թուրքերը ըստ էության շարունակում էին մնալ որպես ռազմական օկուպանտներ»[28]։

Իսկ օկուպանտների համար բնորոշ են տեղական հարստությունների յուրացումը, հպատակ ազգաբնակչության թալանը, օրինական և անօրինական հարկերի գանձումը։ Օսմանյան կայսրությունում այս ամենը բազմապատկված ծավալներով կիրառվում էր հայերի նկատմամբ։

«Թայմս» թերթը 1877 թ. օգոստոսի 24-ին գրել է. «Հայերի վիճակը այն երկրներում, որով անցել Իսմայիլ փաշայի բանակը, ծայրաստիճան ողբերգական է։ Ալաշկերտի հայության բոլոր 122 գյուղերը, բացի 9-ից, լրիվ ոչնչացվել են։ Տեղում մնացած բոլոր քրիստոնյաները գազանաբար սպանված են։ Մի շարք գյուղեր ամբողջովին այրված են։ Մուշի օկրուգում որոշ գյուղեր կործանվել են, շատ բնակիչներ սրախողխող են արվել։ Բայազետ քաղաքն ու շրջանը նույն բախտին արժանացան։ Այդ վայրերի տղամարդկանց, կանանց ու երեխաների մեծ մասը սպանվեցին ամենադաժան ձևով»։

Մուսա անունով մի բեկ 80-ական թվականների Տարոնի հայ բնակչության համար իսկական չարիք էր դարձել։ Նրա տրամադրության տակ կար 4,5 հազարանոց մի զինված ջոկատ, որը զբաղված էր միայն կողոպուտներով ու սպանություններով։ Մուսա բեկը իրեն Տարոնի տերն էր համարում և գազանային հաշվեհարդար էր տեսնում բոլոր նրանց հետ, ովքեր իրեն չէին ենթարկվում։ Նա 35 հայկական գյուղեր այրեց, բազմաթիվ այլ վայրագություններ կատարեց, բայց սուլթանը այդ ավազակին պատժելու փոխարեն բարձր աշխատավարձ նշանակեց։

Տարոնի Արգավանք և Խարս գյուղերի տանուտեր Օհանն ու Միրոն Մուսա բեկի դեմ մի քանի գանգատներ գրեցին Կ. Պոլիս։ Դա բավական էր, որպեսզի վերջինս այդ երկու տանուտերերին հաշվեհարդարի ենթարկեր։ Նա Տարոնի գյուղերից մեկում բռնելով Օհանին, նրան պարանով կապում է ու գցում բուխարիկը։ Ապա նրա այրված դիակը հանում դնում է Բիթլիսի խճուղուն և վրան գրում. «Ով Մուսա բեկի դեմ բողոքի, այս վիճակին կհասնի»։

Մի քանի օր անց Մուսա բեկը 150 զինյալներով գիշերը հարձակվում է Խարս գյուղի վրա, մտնում է տանուտեր Միրոյի տունը, սպանում տանեցիներին ու փախցնում Միրոյի եղբոր դեռատի աղջկան՝ Գյուլիզարին։

Այս դեպքերը լցնում են տարոնցիների համբերության բաժակը, նրանք զանգվածային բողոքներ են գրում Կ. Պոլիս։ Այստեղ դատ է տեղի ունենում։ Դատարանը սուլթանի ցուցմունքով Մուսա բեկին արդարացնում է։ Դեռ ավելին, արքունիքը նրան ցուցադրաբար մեծ պատիվների է արժանացնում։ Դրանով Համիդը բեկերին հասկացնում էր. ես ձեր թիկունքին եմ, կոտորեք հայերին։

Կարինի անգլիական հյուպատոս Համպսոնը պատմում է պետական պաշտոնյա, ավազակությամբ զբաղվող աշիրեթապետ Հուսեին աղայի մասին, որ օրը ցերեկով թալանում էր հայերին, և թալանածը կիսում կուսակալի, դատարանի նախագահի և վիլայեթի մյուս բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ Այս ավազակի մասին քաջ գիտեին նաև օսմանյան արքունիքում։ Համպսոնը նշում է, որ իր բերած «փաստերը, ինչպես ցույց են տալիս պաշտոնական փաստաթղթերը, ոչ թե ինչ-որ արտաքո կարգի երևույթ են, այլ հայկական վիլայեթներում ապրող հայության դժնդակ պայմանների առօրյա պատկերը»[29]։

Իսկ Հուսեին աղան շարունակում էր իր չարագործությունները։ Նա սարսափի մեջ էր պահում Ալաշկերտի ազգաբնակչությանը։ 1890 թ. Բաթնոսի հայերը նրա սարսափից գաղթեցին Ղարաքիլիսե։

Վերջապես ավազակը Վանում ձերբակալվում է։ Այդ չարագործը մեղադրվում էր, որ հրդեհել է 9 գյուղ, սպանել 10 մարդ, կտրել 11 մարդու ձեռք, քիթ կամ ականջ, հափշտակել 2600 ոչխար, բազմաթիվ այլ ընտանի կենդանիներ, մեծ քանակությամբ սննդամթերք, շարժական գույք, ոսկի ու դրամ։

Սակայն մի քանի ամիս անց Կարինի վալիի ջանքերով Հուսեինը բանտից ազատվում է ու բերվում Կարին։ Այստեղից նա շարունակում է գլխավորել ավազակների գործունեությունը. թալանում, հրդեհում և ավերում հայկական գյուղերը։ Միայն Էլենթափի շրջանում ավազակախումբը, նրա եղբոր ղեկավարու-

թյամբ, ավերածություններ գործեց հայկական 21 գյուղերում։ Բաթնոսցի Խեչո անունով մի հայ հրաժարվում է կատարել նրանց պահանջը՝ տալ 5 ոսկի։ Հուսեինի ավազակները գիշերը մտնում են Խեչոյի տուն, մահացու վերք հասցնում նրա հարսին և մորթում վեց և յոթ տարեկան որդիներին։

Հուսեինը կրկին նշանակվում է Բաթնոսի մուդիր։ Նրա առաջին իսկ գործը լինում է այն, որ բանտարկում է 20 անմեղ հայի և հափշտակում 1000 ոչխար։

Այս բոլոր չարագործություններից հետո Հուսեինին կանչում են Կ. Պոլիս, ուր նա շքեղ ընդունելություն է գտնում, սուլթանից շքանշան ստանում, փաշայի տիտղոսի արժանանում և նշանակվում գեներալ-բրիգադիր[30]։ Որպեսզի պարզ լինի այս ավազակի իրական դերը, ասենք, որ Համպսոնի զեկուցագրի հիման վրա անգլիական կառավարությունը հանձնարարում է Կ. Պոլսում իր ներկայացուցչին՝ «համոզել Մեծ վեզիրին... պաշտոնից հեռացնելու այդ սրիկային»։

Անգլիական կառավարության ներկայացուցիչը Մեծ վեզիրի հետ զրույցի ժամանակ ի միջի այլոց ասում է. «Ըստ մեր ստացած տեղեկությունների, այդ սուբյեկտը (Հուսեինը) նույնպիսի հրեշավոր ճիվաղ է, ինչպիսին Մուսա բեյն է»*[31]։

Քուրդ աշիրեթապետերը գնալով ավելի ու ավելի սանձարձակ են դառնում։

«Թվում է, թե որոշ օկրուգներում,— ասված է անգլիական

* Դիվանագետների հետ վերը նշված զրույցի ժամանակ Աբդուլ Համիդն ամեն կերպ աշխատում էր համոզել, թե հայերը սուլթանի մյուս հպատակների նման օգտվում են լիակատար իրավահավասարությունից։ Նա հիշատակեց, որ ամենահարուստ բանկիրներն ու բարձրագույն աստիճանավորներից շատերը հայեր են, «...հայերի իրավազրկության և քրդերի չարագործությունների մասին լուրերը խիստ չափազանցված են և Կ. Պոլիս կանչված Մուսա բեյին նույնիսկ որևէ բանում չի կարելի մեղադրել»։

Դրան ռուսական ներկայացուցիչը պատասխանում է. «Հայաստանի հասարակ բնակչության դրությունը ծայրահեղորեն անբավարար է՝ նա ամենադժան կերպով տառապում է քրդերի սանձարձակությունից, ինչպես և վատ կառավարումից կամ անփույթ ընտրված վարչական աշխատողների գործունեությունից, որոնք հաճախ գործակցում են քրդերի հետ։ Իսկ ինչ վերաբերում է Մուսա բեյին, ապա վկաները սարսափի մեջ են նրա կապերից և անձեռնմխելիությունից» (Ս. Մարկոսյան, «Արևմտահայության վիճակը XIX դարի վերջին», Ե., 1968, էջ 116—117)։

դեսպանի նոտայում,— ...միակ ու գործնականորեն գոյություն ունեցող իշխանությունը աղաների ու քրդական բեյերի իշխանությունն է, որոնք նրանից օգտվում են, որպեսզի թալանեն, բռնաբարեն և նեղեն իրենց իշխանության տակ գտնվող դժբախտ քրիստոնյաներին»[32]։

Անգլիական բանակի կապիտան Կլեյտոնը 1879 թ. օգոստոսի 2-ին Մուշից գրում է, որ միայն 3 օր այդ քաղաքում լինելով, ինքը լսեց բազում հանցագործությունների ու գազանությունների մասին, որոնք կարող էին լցնել մի ամբողջ գիրք, և ինքը հիմքեր ունի հավատալու այդ պատմություններին... «Ես ինքս նկատեցի այն սարսափը, որով քրիստոնյա ազգաբնակչությունը նայում էր քրդերին, թուրքերին և իշխանության ներկայացուցիչներին»[33]։

Կլեյտոնը բերում է հետևյալ օրինակը։

«Երեք շաբաթ առաջ քրդական մի հայտնի խմբապետ, Միրզա բեկը, հրամայեց հայկական գյուղերից մեկի գյուղապետին ծեծել նրա համար, որ նա ընտրվել է առանց իր համաձայնության»[34]։

«Մշակ» թերթը այս վիճակը նկատի ունենալով գրում է. «Պետք է միայն մտածել, թե ինչպես անել, որ մինչև եկող տարին Հայաստանի հողի վրա գոնե մի հատ տկլոր, բայց կենդանի հայ մնա»[35]։

* * *

Հայկական ջարդերի նախապատրաստման ճանապարհին սուլթանը իրականացրեց ևս մի խոշոր միջոցառում։ Անգլիական դիվանագետների խորհրդով նա ստեղծեց Համիդիե հեծելազորային գնդեր, որոնք կազմված էին հիմնականում քրդերից։

«1890 թվին,— գրում է Ծակ դը Մորգանը,— սուլթանը, որ արդեն պատրաստվում էր հայերին բնաջնջելու, մի հանճարեղ գաղափար էր հղացել, այն է՝ Հայաստանի հարևան քուրդ հրոսակներին զինել «Համիդիե ձիավորներ» անվան տակ»[36]։ Պետերբուրգում Թուրքիայի նախկին դեսպան Շաքիր փաշայի գլխավորությամբ 1891 թ. կազմակերպվեց մի հանձնաժողով՝ հետևելու Համիդիե 20 գնդեր ստեղծելու, նրանց մարզիչ-սպաներ նշանակելու, զենք ու համազգեստներ բաժանելու համար։ Համիդիեի կազմակերպումը հանձնարարված էր անատոլիական 4-րդ բա-

նակի հրամանատար, ջարդարար Զեքի փաշային։ Նրա զինվորական իրավասության տակ էր ողջ Արևմտյան Հայաստանը։

Համիդիե զորագնդերի բանակատեղին տվյալ աշիրեթության կենտրոնն էր, այսինքն այդ զորամասերը իրենց հսկողության տակ առան բոլոր վեց վիլայեթները։ 500 համիդեական ունեցող ցեղապետը զինվորական բարձր աստիճան և դրոշ էր ստանում։ 1899 թ. համիդիե գնդերի թիվը հասավ 63-ի, որից 50-ը կազմված էր քրդերից։ Դրանցում ընդգրկված էր շուրջ 100 հազար մարդ։ Համիդիե գնդերի թվի նման արագ աճը պայմանավորված էր նրանով, որ իշխանությունները խոստացել էին նրանցում ընդգրկվողներին տալ հայերի հողերը, զիջել պարտքերը, նրանց ազատել հարկերից։

Է. Դիլոնը համիդիեների գազանությունների բազմաթիվ փաստեր է նկարագրում։ Բուլանըխի բոլոր գյուղերը «թալանի ենթարկվեցին, նրանցից խլեցին ամեն ինչ, մինչդեռ թուրքական իշխանությունները այս թալանին նայում էին խրախուսական ժպիտով։ 1894 թ. միայն Բուլանըխի և Մուշի օկրուգներում քրդերը թալանել են 10 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն և ոչխար։ Այս համակարգը տիրապետող էր ամբողջ երկրում»[37]։

1892 թ. հուլիսին համիդիեի Ինդրիս անունով մի կապիտան զորախմբով մտնում է Համենշեյկու գյուղը և հայերից մեծ քանակությամբ անասուններ պահանջում և, բավարարում չստանալով, կոտորում է գյուղացիներին։ «Նույն այդ Բուլանըխի օկրուգում, այդ նույն տարում տեղի են ունեցել 30 բացահայտ ու անպատիժ սպանություններ»[38]։

«Մահմեդականներից տուժած քրիստոնյաները,— եզրակացնում է Է. Դիլոնը,— արդարադատության հասնելու ոչ մի հնարավորություն չունեն, և դա ոչ այն պատճառով, որ դատավորները անփույթ և անգործունյա էին, այլ նրա համար, որ նրանք գիտակցաբար դրան են ձգտում... բողոքողն ինքն էր ենթարկվում պատժի այն բանի համար, որ բողոքում է իրեն վիրավորողների դեմ, բայց եթե թուրքը կամ քուրդն են դարձել հանցագործության կամ թեկուզ դժբախտ պատահարի զոհ, ապա կառավարական չինովնիկների եռանդը սահմաններ չի ճանաչում»[39]։

Մի խումբ համիդեականներ իրենց անասուններն էին արածեցնում Էրզրումի Ալիսջահրիկ գյուղի արոտավայրում։ Չորս հայ

երիտասարդներ գնում են նրանց խնդրելու, որ անասունները հանեն արտերից։ Բայց նրանց դիմավորում է հրացանային համազարկը։ Հայերից երկուսն ընկնում են, իսկ մյուս երկուսը՝ փախչում։ Դեպքի վայր են գալիս գյուղացիներն ու ոստիկանները։ Քրդերն արդեն հեռացել էին, իսկ ոստիկանները, հայերին մեղադրելով քրդերին սպանելու մեջ, 13 հոգու բանտ են նետում։ Բանտից ազատվելու համար գյուղացիներից պահանջում են գտնել անհետացած քրդերին և նրանց 400 ոսկի կաշառք տալ։ Կայացած դատավճռի մեջ գրված էր. «...Հայերն ապացուցեցին իրենց անմեղությունը, քանի որ երկու հայ սպանող քրդերը ողջ և առողջ են...»[40]։

Համիդիե գնդեր կազմակերպելուց հետո սուլթանի հայաջինջ քաղաքականությունը ավելի գործնական հողի վրա դրվեց։

Այդ գնդերի ստեղծումը նպատակ ուներ ռուսական սահմանի երկարությամբ գտնվող տարածություններն ազատել հայերից, այսինքն կազմակերպել հայերի զանգվածային ոչնչացում, որպեսզի հայերի թիվը Արևմտյան Հայաստանի բոլոր վեց նահանգներում այնքան կրճատվեր, որ վերանար հայ բնակչության համար հատուկ ռեֆորմների անհրաժեշտությունը։

Յուրաքանչյուր քուրդ ընտանիք պարտավոր էր համիդիեի համար զինվորական ծառայության ուղարկել 17 տարին լրացած առնվազն մեկ պատանու՝ ձիով ու հանդերձանքով։ Գունդը կերակրվում էր իր հաշվին, այսինքն՝ ավարի ու թալանի միջոցով։ Ավարը տնօրինում էր ցեղապետը, որ միաժամանակ գնդի հրամանատարն էր։ Նրա ազգականները զբաղեցնում էին մյուս հրամանատարական պաշտոնները։ Այդ հրամանատար-ցեղապետերը հիմնականում Մուսա բեկի նման ավազակապետեր էին, որոնք գնդերում անսահմանափակ իշխանություն ունեին։ Համիդիե գնդերը գործնականում վերածվեցին պետականորեն կազմակերպված ավազակախմբերի։

Է. Դիլոնին հաջողվում է հանդիպել համիդիե գնդի սպա, հայտնի ավազակապետ Մոստիգոյի հետ ու նրան մի քանի հարց տալ։

— Ինձ պատմել են, որ դուք սպանել եք մեծ թվով (հայեր), փախցրել նրանց կանանց, այրել նրանց գյուղերը...

— (արհամարհական ձևով) Դա ոչ մի գործ չունի իմ բանտարկության հետ։ Ես հայերին թալանելու համար չէի պատժվում։ Մենք բոլորս այդ անում ենք... Եթե ինձ դատեն, ապա

Թուրքական պահակակետի վրա հարձակման և այն թալանելու, ինչպես նաև թուրքական գնդապետի կնոջը բռնաբարելու համար... Բայց ամենևին ոչ հայերի համար։ Նրանք ի՞նչ են, որ ես նրանց համար տուժեմ։

Մենք հարձակվել ենք գյուղերի վրա, սպանել ենք նրանց, ովքեր կարող էին մեզ սպանել, թալանել ենք տներ, բռնագրավել փողեր, անկողին, ոչխար ու կանայք և հարձակվել ենք ճանապարհորդների վրա։ Մեր գործերը համարձակ ու մեծ են, և մարդիկ դրանց մասին շատ են խոսում։

Լսելով այդ «մեծ գործերից» շատերի մասին, որոնցից որոշները արժանացել են 50 մարդու կյանք, ես հարցրի.

— Հայերը երբևիցե ձեզ դիմադրե՞լ են, երբ դուք տանում էիք նրանց ոչխարներն ու կանանց։

— Ոչ հաճախ։ Նրանք չէին կարող, որովհետև զենք չունեին և նրանց լավ հայտնի էր, որ մեզնից մի քանիսին սպանելիս ուրիշ քրդեր գալու են և վրեժ են լուծելու մեզ համար, այնպես որ հայերը ոչինչ չեն շահելու։ Երբ մենք ենք նրանց սպանում, ոչ ոք չի դժգոհում։ Թուրքերը նրանց ատում են, իսկ մենք նրանց նկատմամբ թշնամություն չենք տածում։ Մեզ միայն պետք է փող և թալան, որոշ քրդեր ցանկանում են զավթել նաև նրանց հողերը, իսկ թուրքերը ծարավ են նրանց արյան[41]։

80-ական թվականների կեսերից քրդերը սկսեցին սովորականից ավելի մեծ դաժանությամբ տանջել, բռնանալ և սպանել քրիստոնյաներին՝ «հրապարակավ հայտարարելով, որ իրենց գործողությունները արժանանում են թուրքական կառավարության հավանությանը» (Կ. Լլոյդ)։ «Քրդերը խրախուսվել էին ոչ միայն թալանելու անմեղ ու անպաշտպան քրիստոնյաներին, այլև այրելու այն հացը, որ նրանք չեն ցանկացել կամ չեն կարողացել իրենց հետ տանել։ Նրանք խրախուսվում էին ոչ միայն կանանց անպատիվ անելու և տղամարդկանց սպանելու իրենց անասնական կրքերին բավարարություն տալու համար, այլ նաև հայերին ներշնչելու, որ վերջիններիս կյանքը սուլթանի ու նրա կառավարության կողմից շատ էժան է գնահատվում և այն կարող է անպատիժ խլվել հանուն յուրաքանչյուր մահմեդականի զվարճության, ում դուր է գալիս նման ձևով զվարճանալ»[42]։

«Ինչպես ես առաջ արդեն հայտնել եմ...,— գրում է Համպսոնը,— քրդերին գինելու որոշումը այստեղ ընդունվում է

մեծ վախով։ Այս զգացումը ուժեղանում է քրդերի վարքագծի հետևանքով, որոնցից շատերը բացեիբաց հայտարարում էին, որ իբր իրենք նշանակված են հայերին զսպելու համար, և իբր նրանք հավաստիացում են ստացել, որ քրիստոնյաներին նեղելու համար իրենք դատական պատասխանատվության չեն ենթարկվի»[43]։

Տրապիզոնում անգլիական հյուպատոս Մ. Լոնգվորդը 1891 թ. մարտի 30-ին գրել է, որ քրդական նոր հեծելազորի մի խումբ նստեց «հատուկ նավ, որ գնում էր Կ. Պոլիս», որտեղ նրանց ընդունելու է սուլթանը։ Այդ խումբը բաղկացած է «14 առաջնորդներից (ցեղերի) և մի շեյխից։ Խմբին ուղեկցում է 140 մարդ»։ Տրապիզոնում նրանց դիմավորեցին քաղաքացիական և ռազմական ծիսակատարություններով և մեծ շուքով ուղեկցեցին բերդ, որտեղից նրանց ուղարկեցին ճաշկերույթի՝ մահմեդական համայնքի ամենանշանավոր անդամների մոտ[44]։

Այդ խմբի Կ. Պոլիս ժամանման մասին 1891 թ. մարտի 30-ին սուլթանի պաշտոնական ամսագիրը հաղորդեց հետևյալը. «Երեկ Տրապիզոնից ժամանեցին նոր գնդի սպաներն ու շարքայինները։ Գունդը ձևավորվել է քոչվոր ցեղերից։ Նորին մեծություն սուլթանը նրանց ընդունեց քոշքում, պալատի հարեվանությամբ, և Դերվիշ փաշային ուղարկեց նրանց հաղորդելու միապետի ողջույնը։ Հրամայեց նրանց տեղավորել նոր զորանոցներում և հետևել, որ ոչ մի բանում որևէ պակասություն չզգան»[45]։

Պաշտոնական մի այլ ամսագիր 1891 թ. ապրիլի 3-ին գրեց. «Այս երջանիկ գաղափարի նախաձեռնողը և այն մեծ հաջողությունը, որով, իհարկե, պսակվում է նրա իրականացումը, մենք պարտական ենք նորին կայսերական մեծություն սուլթանի իմաստնությանն ու հեռատեսությանը»[46]։

Իսկ համիդեական գնդերի չարագործությունները այնքան ծավալվեցին, որ նրանք սկսեցին թալանել նաև թուրքական գյուղերը, հրաժարվել հավաքած հարկերը պետությանը հանձնելուց։ Այս հողի վրա սրվեցին հակասությունները նրանց և կանոնավոր բանակի միջև։ Բանակի հրամանատարական կազմից շատերը զայրույթով էին արտահայտվում համիդիեների մասին, դրանց անվանելով ոչ միայն ավազակներ, այլև պարզապես «գողեր»։

Սակայն թուրքական այն փաշաներն ու պաշտոնատարները,

որոնք փորձում էին զսպել համիդեականներին, պաշտոնանկ էին արվում։

Թուրք փաշաներից մեկը, երբ Բայազետում վալի էր նշանակվում, ասաց. «Ես գնում եմ Բայազետ վերջնականապես պաշտոնանկ լինելու համար, որովհետև չպետք է կարողանամ տանել համիդիե կոչված գազանների արարքները», քանի որ «թագավորի անունը կրող զինվորին դիմադրելը նույնն է, թե թագավորին դիմադրել»[47]։

Համիդիե գնդերի ձիավորները իրենց քոլոզների վրա կրում էին «Սուլթան Համիդ» մակագրությամբ նշան։

Համիդը աշիրեթապետերի նկատմամբ առատաձեռն էր։ Նրանցից ազդեցիկներն ու ուժեղները շքանշանների ու պաշտոնների արժանացան։ Նրանց երեխաներին թուրքական ոգով դաստիարակելու և միաժամանակ պատանդ պահելու նպատակով Կ. Պոլսում թուրքական հատուկ դպրոց բացվեց։

Կուսակալներին հրամայվեց հայերին բալանելու և կոտորելու համար աշիրեթությունների հետապնդել։

Համիդիե գնդերի կազմակերպումը, կառավարության կողմից հայերի նկատմամբ աշիրեթապետերին տրված արտոնությունները, դավանանքի տարբերությունը ստեղծել էր մի հակամարտություն, որ սուլթանն օգտագործում էր քրդերի ձեռքով հայերին կոտորելու համար։

Է. Դիլոնը հայերի նկատմամբ գործադրվող օսմանական այդ քաղաքականությունը բնորոշում է որպես «կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն... Զորքի մեջ գրանցված քրդերը թողնվել են իրենց հայրենի վայրերում, ազատված էին ծառայությունից, մատակարարվում էին զենքով, օժտված են դեսպանական անձեռնմխելիությամբ և ապահովված են ոռճիկով...

Եվ նրանք իրենց միսիան կատարում էին փութաջան ճշտությամբ. կողոպտում էին հայերին, քանդում էին տները, այրում էին հացն ու անասնակերը, ոչնչացնում գյուղերը, մորթում էին անասուններին, հափշտակում էին երիտասարդ աղջիկներին, անպատվում էին ամուսնացած կանանց, կոտորում էին ամբողջ գյուղեր։

Այժմ հայերը պատկանում են երկրագնդի ամենաչքավոր և ամենադժբախտ ժողովուրդների թվին»[48]։

Կ. Պոլսում ռուսական դեսպանատան խորհրդական Սեմյոնովը Սասունում հայ-քրդական հարաբերությունների էվոլյուցիան հետևյալ կերպ է նկարագրում. «Այդ վայրենի և անառիկ երկրում, հենց բնության պայմանների շնորհիվ հայերը մինչև վերջին ժամանակները շատ քիչ բանով էին կախված թուրքական իշխանություններից։ Առաջներում նրանք քրդերի հետ ապրում էին շատ ավելի համերաշխ, որոնք հայերին ոչ միայն չէին նեղացնում, այլ, ընդհակառակը, նույնիսկ պաշտպանում էին թուրքերի ոտնձգություններից։ Վերջին տարիներին հարաբերությունները միանգամայն փոխվեցին։ Քրդերի նկատմամբ սուլթանի ողորմածությունները և նրանց ոչ կանոնավոր հեծելազոր դարձնելը ակամա նրանց մերձեցրեց թուրքերի հետ»[49]։

Մ. Օրմանյանը նշում է, որ համիդիե քրդերը, ենթարկվելով սուլթանական ագիտացիային, իրենց շոյված զգայնի և սաստկացրին ջարդարարական դաղանությունները հայերի դեմ[50]։

Աշիրեթությունները կույր գործիք դարձան սուլթանի ձեռքին, վերջինիս հայաջինջ քաղաքականությունը իրականացնելու համար։

Իսկ Ս. Մանդելշտամը, որ երկար տարիներ աշխատել էր Թուրքիայում և քաջատեղյակ էր կայսրությունում կատարվող իրադարձություններին, հայ-քրդական հարաբերությունների այդ էվոլյուցիայի մասին գրում է. թուրքական իշխանությունները, չնայած մինչև XIX դարի կեսերը ատում էին հայերին, բայց ատում էին «նաև անկարգապահ քրդերին և աշխատում էին պահել հավասարակշռությունը երկու տարրերի միջև»։ Հայերը չէին ձգտում Օսմանյան կայսրության տապալմանը, ընդհակառակը, «թուրք տարրի հետ համաձայնությունը հայերի համար մի կենսական կարևորություն ուներ»։ Բայց թուրքական իշխանությունները, փոխանակ հայերին ընդառաջ գնալու, որդեգրեցին «քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու» քաղաքականությունը։ Աբդուլ Համիդը օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին թուլացնելու համար նրանց «լարում էր մեկը մյուսի դեմ։ Սրանից է քրդերի զրգռումը հայերի դեմ և այս վերջինների կոտորումը»։ Եվ իսկապես, մինչ այդ հայերը ռայա էին, ենթակա քուրդ աղաներին, բայց «քանի որ նրանց ծառայեցնում էին թե՛ իրենց դաշտերը մշակելու և թե՛ ուրիշ աշխատանքների համար, քուրդ բեյերն ու աղաները մի որոշ չափով բարյացակամորեն էին վարվում հայերի հետ և նրանց պաշտպանում որիշ

ավատապետ քուրդ տերերի կեղեքումներից... մի խոսքով... հայերը աշխատում էին, քրդերն էլ նրանց պաշտպանում էին։ Դարեր ի վեր այս վիճակին սովորած հայերը չէին երևակայում, թե կարող է ուրիշ կերպ լինել և չէին բողոքում իրենց ճակատագրի դեմ»։

Աբդուլ Համիդին այդ վիճակը վտանգավոր թվաց, «նա կամեցավ խեղդել հայոց հարցը՝ ջնջելով հայերին»։ Այդ նպատակով նա որոշեց օգտագործել քրդերին։ Իսկ քրդերը, դժգոհ հայերի զարթոնքից ու նրանց ինքնուրույն գործելու ձգտումից, «ուրախությամբ ընդունեցին այն հրամանը», որ ելտղից գաղտնաբար տրվում էր նրանց՝ ճնշելու հայերի նորածին շարժումը՝ նրանց ահաբեկման ենթարկելու միջոցով։ Եվ երբ Աբդուլ Համիդը, համիդիե գնդեր կազմելով, միաժամանակ բացարձակ ազատություն տվեց քուրդ աշիրեթություններին՝ հայերի հետ վարվելու այնպես, ինչպես իրենց համար լավ կթվա, քրդերի ավազակության և կողոպուտի բնազդին ազատ ընթացք տրվեց»։

Շեյխերն ու մոլլաները, որպես Աբդուլ Համիդի մտադրությունների հավատարիմ թարգմաններ, աշխատում էին քրդերին համոզել, թե հայերը «ցանկանում են երկրի տերը դառնալ, այդ թունավորեց քրդերի ու հայերի հարաբերությունները... սպանություններն ու ընդհանուր հափշտակությունները վերածվեցին ընդհանուր կոտորածի ու կազմակերպված ավարառության»։

Այսպիսով Աբդուլ Համիդը «հասել էր իր նպատակին՝ հայ ու քուրդ ժողովուրդների միջև» ստեղծելով մի խորը անվստահություն, հակամարտություն և ատելություն։

Սակայն Մանդելշտամը իրավացիորեն նկատում է, որ տպավորություն չպետք է ստեղծվի, թե Հայաստանում «կոտորածի վարշաձևը նվիրագործեց» սուլթան Համիդը, որովհետև «բոլոր ժամանակներում, նույնիսկ նրանից առաջ, թուրքի ձեռքը ծանրապես կախված էր հայկական նահանգների վրա։

...Եթե մեծ քաղաքներում, ինչպիսին են Կ. Պոլիսը, Իզմիրը, Ադրիանապոլիսը, Բրուսան, Սալոնիկը, հայերն ունեին մի տանելի կյանք, ապա... հեռավոր գավառներում թուրք պաշտոնյաներն ու քուրդ բեյերը իրար հետ մրցում էին այս ազգի գժբախտ գյուղացիներին շահագործելու մեջ»։

Հարաբերությունները գնալով սրվեցին։ Վիճակն ավելի բարդացավ, երբ միջամտեցին մեծ տերությունները։ Ահա այս պայմաններում «Հայերի դանդաղ բնաջնջումը այլևս չէր բավարարում Կարմիր սուլթանին, և 1894 թվականի օգոստոսին նա փորձեց մի փոքրիկ նախաբան-կոտորած Սասունում»[51]։

* * *

Քրդերին հայերի դեմ հրահրելու գործում կարևոր դեր խաղացին ոչ միայն մահմեդական մոլեռանդությունը և անպաշտպան քրիստոնյաներին թալանելու նրանց ընչաքաղցությունը, այլև այն հանգամանքը, որ սուլթանին հաջողվեց քրդերին ներարկել այն գաղափարը, թե իբր նրանց բնօրրանը Հայաստանն է, որ հայերը եկվորներ են և ուզում են Քրդստանը Հայաստան դարձնել, որ ռայա հայը ցանկանում է երկրի տեր դառնալ և քրդին ռայա դարձնել, որ քուրդ ժողովրդի գոյատևումը հնարավոր է միայն Հայկական բարձրավանդակում։

Դրանով թուրքերը հետապնդում էին նաև մի այլ նպատակ։ Ժխտում էին իսկական Քրդստանի գոյությունը, որն ընկած էր Դիարբեքիրի վիլայեթի և հարավից նրան հարող վարչական միավորումների զբաղեցրած տարածքներում՝ Հյուսիսային Սիրիայից, Հյուսիսային Իրաքից մինչև Պարսկաստան։ Ահա թե ինչու, սկսած XVI դարից, սուլթանները համառորեն Քրդստանը դատարկում էին քրդերից ու նրանց վերաբնակեցնում Արևմտյան Հայաստանում։ Քննադատելով այդ անհիմն քարոզները, Ն. Ադոնցը գրում էր, որ շատերը հայտարարում են, թե քրդական հարցը կարող է լուծվել միայն Հայկական լեռնաշխարհում։ «Ոմանք նույնիսկ հակված են կարծելու, որ այդ հարցը կարող է գերազանցապես լուծվել հայկական հողում։ Հայաստանը Քրդստան դարձնելու իրենց ձգտմամբ Հայաստանի բարեկամներն ու թշնամիները միավորվել են։ Այն, որ թուրք քաղաքագետները հարյուրամյակների ընթացքում փորձում էին Հայաստանը բնակեցնել քրդերով և այն դարձնել Քրդստան, ինչոր չափով հասկանալի է։ Սակայն այն, որ նման գործողությունները թաքնված կամ բացահայտ համակրանքով և հավանությամբ էին ընդունում այն եվրոպական պետությունները, որոնք կոչված էին հայերին պաշտպանելու թուրքերի ճնշումից, դա մի երևույթ է, որը պետք է առաջացնի բոլոր նրանց ատելությունը, ովքեր թեկուզ փոքր-ինչ պատկերացում ունեն բարոյականության մասին։

Նրանցից ոմանք, կորցնելով չափի ամեն մի զգացում, այն-

քան հեռու գնացին, որ սկսեցին հավաստիացնել, որ քրդերը Հայաստանի բնիկներն են, և որ, այսպես կոչվող, Հայաստանը միշտ քրդերի երկիր է եղել»[52]։

Ինչ վերաբերում է հայերի ապստամբական տրամադրություններին և ապստամբության միջոցով մահմեդականներին ոտյա դարձնելուն, ապա հարկ է նշել հետևյալը։ Համիդյան զուլումի տարիներին արևմտահայերն այնպես էին ճնշված ու կեղեքված, ճզմված ու տրորված թուրքական իշխանությունների և քրդական աղաների ու բեյերի ձեռքում, որ չէին կարող համընդհանուր ապստամբություն բարձրացնել ու այդ եղանակով ազատագրվել։ Այդ հանգամանքը նկատել էին ժամանակակիցներից շատերը։ Այսպես, Գր. Արծրունին գրում էր. «Թուրքիայի հայերը ճնշված, ստորացված են, մինչև այն աստիճանի կրավորական են դարձել, որ նրանցից անկարելի է սպասել բռնավորության, հալածանքի, ճնշման դեմ բողոքի որևէ դրսևորում...»[53]։

Էրզրումում անգլիական հյուպատոս Կ. Լլոյդը 1890 թ. հոկտեմբերի 2-ին գրում է. «Ալաշկերտի հովտում... հայ բնակչության ոչ մի դասակարգ որևէ չափով չի մտածում հեղափոխության մասին։ Բացի այդ, զինված ապստամբությունն անհնար է։ Սակայն տրտունջները կամ բողոքի ձևը թուրքական կառավարությունը դիտում է որպես ապստամբություն, որի դեմ գործադրվում են... միջոցներ, որոնք առանց որևէ հիմքի հայերին զրկում են ամեն մի անձնական ազատությունից»[54]։

Կարինում անգլիական հյուպատոս Համպսոնը գրում է. «Այս վայրերում հայերի մեջ խռովության ձգտման կամ ապստամբության ծրագրի մասին միտքը զուրկ է հիմքից և այդպիսի մտադրության կենսագործման հնարավորությունները լիովին բացակայում են։ Այստեղ հայերը ամենախաղաղ ժողովուրդն են... Նրանք ոչ զենք ունեն, ոչ առաջնորդներ և ընդհանուր ապստամբության մասին միտքը ժպիտ է առաջացնում բոլոր նրանց մեջ, ովքեր ծանոթ են երկրի իրական դրությանը։ Այդուհանդերձ, թուրքական իշխանությունները այնպես են գործում, որ կարծես թե ապստամբություն է սպառնում»[55]։

Անգլիական փոխհյուպատոս Լիկիեարդոպուլոն 1892 թ. գրում է. «Ես կարող եմ հավատացնել ձեզ, որ Ադանայի հայերը շատ հեռու են այն բանից, որպեսզի մտածեն կոմիտեների կամ այլ քաղաքական գործունեության մասին»[56]։

Լորդ Գրանվիլի կարծիքով, հայերն անկարող էին ապստամբել, որովհետև «ճնշող տեռորի և ոչնչացման համակարգը կասեցրել էր նրանց բոլոր ուժերը»[57]։

1. Բաֆֆի, նժ, հ. 8, Ե., 1957, էջ 521։
2. Զորավար Անդրանիկն ու իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 164։
3. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, Ե., 1985, էջ 130։
4. Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 346։
5. Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, էջ 124։
6. Հ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Ե., 1984, էջ 102—103։
7. Բաֆֆի, նժ, հ. 4, Ե., 1956, էջ 336։
8. Վրթ. Փափազյան, Երկեր, հ. 5, Ե., 1959, էջ 422։
9. Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Ե., 1958, էջ 15։
10. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 42—43։
11. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 41—42։
12. Նույն տեղը, էջ 43։
12 ա. Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական..., էջ 111։
13. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 60.
14. Նույն տեղը, էջ 69—70։
15. Նույն տեղը, էջ 68։
16. Նույն տեղը, էջ 62—71։
17. Նույն տեղը, էջ 66—67։
18. Նույն տեղը, էջ 68—69։
19. Նույն տեղը, էջ 107—108։
20. Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 13—14.
21. F. Nansen. Armenia and the Neas Eest, London, 1928, p. 288—289.
22. Освобождение Болгарии от турецкого ига, т. 1, М., 1961, с. 44.
23. Փորձ, 1879, № 7։
24. Լեո, Թուրքահայ հեղափոխության..., հ. Ա, էջ 117—118։
25. Նույն տեղը, էջ 118—119։
26. Նույն տեղը, էջ 40։
27. Նույն տեղը, էջ 120։
28. А. Миллер, Турция: актуальные проблемы новой и новешей истории, М., 1983, с. 21.
29. Положение армян ..., с. 165—167.
30. Նույն տեղը, էջ 168։
31. Նույն տեղը, էջ 164։
32. Նույն տեղը, էջ 59։
33. Նույն տեղը, էջ 60։
34. Նույն տեղը, էջ 61։

35. Մշակ, 1880, № 66։
36. Ժ. Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, Բոստոն, 1947, էջ 340։
37. Братская помощь ..., ч. 2, с. 16.
38. Նույն տեղը, էջ 17։
39. Նույն տեղը, էջ 18։
40. Նույն տեղը, էջ 28—29։
41. Նույն տեղը, էջ 24—27։
42. Положение армян в Турции ..., с. 158—159.
43. Նույն տեղը, էջ 161—162։
44. Նույն տեղը։
45. Նույն տեղը, էջ 162։
46. Նույն տեղը։
47. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, էջ 167։
48. Братская помощь ..., с. 13—14.
49. Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը..., էջ 194—195։
50. Մ. Ցրմանյան, Ազգապատում, մաս 2, Երուսաղեմ, 1927, էջ 5020։
51. A. Mandelchtame. Le Sort de l'empira Ottoman, Paris, 1917, p. 187—195.
52. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, № 7, էջ 51։
53. Մշակ, 1876, № 24։
54. Положение армян ..., с. 153—154.
55. Նույն տեղը, էջ 56։
56. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 21.
57. Положение армян ..., с. 108.

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ։ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ։ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

Չնայած արևմտահայերի դժնդակ կացությանը, այնուամենայնիվ երկրի մի շարք շրջաններում նրանք փորձում էին դիմադրություն օսմանյան բիրտ վարչակարգին և պաշտպանել իրենց գոյությունը։

Հին ճշմարտություն է՝ բռնությունն ու նրա դեմ պայքարը երկվորյակներ են։ Եթե կա բռնություն, ապա անպայման կա նաև նրա դեմ պայքար։ Իսկ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ միայն բռնությանը, այլև հայ ժողովրդի բնաջնջմանը։ Եվ բնական է, որ այդ քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում առաջ բերեց ընդվզումներ ու դիմադրություն։

«Քանի որ գործն այս դրության մեջ էր,— գրում է Բաֆֆին,— քանի որ Թուրքաց հայերին սպառնում է մի օրհասական հարված, որ հավիտյան վերջ պիտի դնե նրանց գոյությանը... Թուրքաց հայերին ուրիշ ոչինչ չի մնում, բացի նրանից, որ իրենք հոգ տանեն իրենց անձնապաշտպանության համար, եթե չեն ցանկանում իսպառ ոչնչանալ և ջնջվել աշխարհի երեսից»[1]։

Իր ֆիզիկական գոյության համար հայ ժողովրդի պայքարը Թուրքական և բուրժուական պատմագրությունը բնութագրում է որպես ահաբեկչություն, իսկ հայդուկներին անվանում է ահաբեկիչ տեռորիստներ։

Ինքնապաշտպանական կռիվները ներկայացվում են որպես պայքար «Անկախ Հայաստանի» համար։ Դրանով աշխատում են արդարացնել հայերի նկատմամբ իրականացված հալածանքների, բռնությունների, սպանությունների և, վերջապես, գենոցիդի օսմանյան քաղաքականությունը։

Որպեսզի ճիշտ ընկալենք XIX դարի վերջի և XX դարի սկզբների իրադարձությունները, պետք է նկատի ունենալ, որ 1840—50-ական թվականներից սկսեց ձևավորվել և Բեռլինի կոնգրեսից հետո պետական քաղաքականություն դառնալ հայերի բնաջնջման օսմանական մտադրությունը։ Աբդուլ Համիդին Քյամիլ փաշայի նամակում կարդում ենք. «Այդ հայ ազգը պետք է վերացնենք և անհետ անենք։ Եվ այդ գլուխ բերելու համար մեզ ոչինչ չի պակասում։ Բոլոր գործիքները պատրաստ ունենք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ։ Կրոնական պատերազմ կհայտարարենք և դյուրին պատերազմ այն իսկ ազգի դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան»[1]։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ուղղությունների վրա իր կնիքն էր դրել հենց այս հանգամանքը, այսինքն բնաջնջման վտանգի դեմ պայքարը՝ ինքնապաշտպանությունը։ Այլ բան է, որ հասարակական-քաղաքական ամեն մի հոսանք ինքնապաշտպանությունը յուրովի էր հասկանում և տարբեր ձևերով ու մեթոդներով էր այն իրականացնում։ Բայց բնորոշը մեկն էր՝ պայքարի այդ բոլոր ձևերն ու մեթոդները նման էին խեղդվողի ճիչի, հեռանկարից զուրկ խարկանքի, գիշատչի ճիրանների մեջ հոշոտվողի դալկացած ընդվզման։

Պատահական չէ, որ ազատագրական առաջին խմբակը, որ ստեղծվեց 1872 թ. Վանում և կրում էր «Միություն ի փրկության» անունը, իր անդրանիկ կոչում գրում էր. «Պետք է փրկության միջոցներ գտնել, թե չէ ոչնչացումը շատ մոտ է»։ «Մեռավ մեր պատիվը, պղծվեցին մեր եկեղեցիները, առևանգ-

վեցին մեր հարսներն ու երիտասարդները, բացահայտ ձևով մեր ձեռքից խլում են մեր իրավունքները և բոլոր միջոցներով ձգտում են ոչնչացնել մեր ազգի սերունդը։ Կամ պետք է մեռնել և չտեսնել այդ սարսափելի վիճակը և կամ վերակենդանություն ստանալ հայրենական գրկում»[2]։

Այդ օրերին Գարեգին Սրվանձտյանցը գրեց, որ օտարներից պետք չէ բան հուսալ, աշխատենք ինքներս մեզ հոգալ, պատրաստվել և ժողովուրդներին ցույց տալ, որ մենք էլ ազգ ենք[2]։

Գր. Արծրունին «Մշակում» գրեց. «Թուրքիայի նման բարբարոս, վայրենի տերությունից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, բացի զենքը ձեռքին արյուն թափելը»[3]։

1873 թվին Մ. Փորթուգալյանը Կ. Պոլսում հիմնադրեց «Վարազդատյան ընկերությունը», որը մայրաքաղաքի հայ երիտասարդության ուժերով բացատրական աշխատանքներ էր տանում գավառներում։ Հայաբնակ շրջաններում ազատասիրական-լուսավորչական աշխատանքներ ծավալելու նպատակով ծնունդ առան մի քանի այլ ընկերություններ։

1877 թ. թուրքական բռնությունների դեմ նորից ըմբոստացավ ազատատենչ Զեյթունը, որին հաջողվեց մի քանի անգամ հետ մղել ու պարտության մատնել թուրքական պատժողական ուժերին։ Օսմանյան իշխանությունները այս անգամ ևս հարցն իրենց օգտին լուծեցին ոչ թե զենքի, այլ խաբեության միջոցով։ 1884 թ. Զեյթունը նորից ապստամբության դրոշ բարձրացրեց։

1878 թ. Վանում կազմակերպվեց «Սև խաչ» խմբակը, որին մեր օրերի թուրք պատմաբանները համեմատում են ամերիկյան ռասիստական Կու-Կլուքս-Կլան կազմակերպության հետ։ Մինչդեռ «Սև խաչի» գործունեության մեջ ռասիստական ոչինչ չկար։ Խմբակը խստորեն պատժում էր քրդերին, պարսիկներին ու թուրքերին զենք վաճառող հայերին՝ դրանով իսկ ձգտում էր թույլ չտալ, որ թշնամին զինվեր, իսկ հայը անզեն մնար։ «Սև խաչի», «Քաղաքական ակումբի» և մյուս խմբակների գործունեությունը չվրիպեց իշխանությունների ուշադրությունից։

Մշեցի Հակոբ սարկավագ Ղևոնդյանը 1880 թ. Կ. Պոլսի հայ պանդուխտների անունից մի բողոքագիր ներկայացրեց սուլթանին, որի համար բանտարկվեց։

Սասունում մինչև 80-ական թվականները բացատրական աշխատանք էր տանում Գ. Ալեթճյանը։ Մուշի վարժարանի սաները շարքերով անցնում էին փողոցներով ու կոչ անում կռվել հանուն Հայաստանի։

Այդպիսով Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում նկատվում էր ազգային զգացմունքների արթնացում և հայրենասիրական ընկերությունների ու խմբակների ստեղծում։ Դրանցից ամենանշանակալից դերը խաղաց Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը։ Բեռլինի կոնգրեսից հետո Կարինում ստեղծվել էր «Բարձր հայոց ընկերությունը»։ Իշխանությունները «բարձր» բառի մեջ ինչ-որ քաղաքական միտում տեսնելով, այն արգելեցին։ 1881 թ. «Երկրագործական ընկերություն» անվան տակ ստեղծվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը, որը ժամանակի առաջնահերթ և մերձավոր խնդիրը համարում էր հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը։ Այդ նպատակով միջոցներ էին ձեռնարկվում Անդրկովկասում և այլուր զենք ձեռք բերելու համար։ Կազմակերպությունն ուներ իր զինագործական արհեստանոցը, զենք գնելու համար կազմակերպում էր հանգանակություններ, պատրաստում և տարածում էր թռուցիկներ, ուներ տպարան, ջանքեր էր գործադրում Արևմտյան Հայաստանի մյուս վայրերում, այսպես կոչված, «հեղափոխական խորհուրդներ» ստեղծելու ուղղությամբ։

1882 թ. կազմակերպությունը հայտնաբերվեց և ջախջախվեց։

«Պաշտպան հայրենյացի» հայտնաբերումը ևս սուլթանը օգտագործեց արտասահմանում մեծ աղմուկ բարձրացնելու համար։ Գործն այնպես ներկայացվեց, որ իբր ամբողջ Արևմտյան Հայաստանն ընդգրկված է հեղափոխական շարժումների մեջ և Ռուսաստանի օգնությամբ պլանավորվում է հայերի ընդհանուր ապստամբություն։

Գերմանական մի լրագիր նույնիսկ նկարագրեց ապստամբական ուժերի կառուցվածքը. «Ապստամբության կենտրոնը,— գրում է թերթը,— գտնվում է Հին Բայազետի հարավային կողմերում։ Ապստամբած հայերի զորաբաժինն ամենաանառիկ կերպով ուժ և զորություն է ստանում։ Սկզբում 1200 հոգուց բաղկացած մի խումբ, որ դուրս էր եկել Մուշ գավառից, մինչև Հին Բայազետ հասնելն այնքան բազմացավ, որ նրա (անդամ-

ների) թիվը հասավ 2800 հոգու, որոնք արդեն սկսել են գործել»։

Սուլթանական կառավարությունը սուտ լուր է տարածում, որ, իբր, «հանուն ազգային վրեժխնդրության հայոց զինյալ զորեղ խմբերը հարձակվել են Վասպուրականի քուրդ գյուղերի վրա և յոթ գյուղ հրդեհել են...»[4]։

Թուրքական չորրորդ բանակի զորամասերը Երզնկայից շարժվեցին Կարին և շրջապատեցին նրա հայկական թաղերը։ Ձերբակալություններ ու խոշտանգումներ եղան ոչ միայն Կարինում, այլ նաև մյուս վիլայեթներում։

1883 թ. ապրիլի 7-ին սկսվեց ձերբակալվածների դատավարությունը։ Նրանք մեղադրվում էին այն բանում, որ իբր ցանկացել են հեղափոխական ճանապարհով Թուրքիայից անջատել «օսմանյան երկրի մի մասը»։

80-ական թվականներին հայերի, թուրքերի ու քրդերի միջև կռիվներն ու ընդհարումները սովորական երևույթ դարձան։ Քուրդ-թուրքական դաշինքը օրեցօր ավելի որոշակի ուղղվածություն և նպատակ էր ստանում՝ ոչնչացնել հայերին։

Նման բախումները հատկապես լայն տարածում ու սուր բնույթ ստացան Սասունում։ Այսպես, 1880 թ. ամռանը Խուլբի շրջանի կառավարիչ Միրզա աղան խաբեությամբ իր մոտ է կանչում Ահարոնք գյուղի տանուտեր Գրիգորին ու դավադրաբար սպանում։ Այդ լսելով Ահարոնքցիները հարձակվում են Միրզա աղայի նստատեղ Նեչքի վրա և հիմնահատակ ավերում նրա տունը։ Միրզա աղան փրկվում է, որովհետև լսել էր հայերի մտադրության մասին և իր ընտանիքով նախապես փախել էր գյուղից։ Նույն ժամանակ տևական կռիվներ տեղի ունեցան Խիանքի Բերմ գյուղի գյուղացիների ու քրդերի միջև։ Հայերին հաջողվեց այդ կռիվներից հաղթող դուրս գալ։

Հարկային ծանր ճնշման դեմ 1884 թ. ըմբոստացան Տալվորիկի և Սպաղանքի գյուղացիները, որոնք շարժվելով Ահարոնք գավառից, դուրս քշեցին կայմակամի ոստիկանական ջոկատը։

Հայերի զինված ելույթներ եղան Բուլանըխի խորապալար, Կոզակ, Շիրվանշեխ և մի քանի այլ գյուղերում։ Շառոյի գլխավորությամբ Փսանքի հայ գյուղացիները տարիներ շարունակ հակահարված էին տալիս շեկո ցեղի ոտնձգություններին։

Շնորհիվ հայերի համառ դիմադրության, քուրդ ցեղապետերին դեռևս չէր հաջողվում հարավ-արևմուտքից ներթափանցել Սասուն։

1882 թ. ամռանը, երբ Շենիկ գյուղի ոչխարի հոտը Կուրտիկի փեշերին էր, շենիկցիներին հյուր են գալիս 35 խալկանցի զինված քրդեր։ Ամառանոցում միայն կանայք էին։ Նրանք դիմավորում են քրդերին, կերակրում։ Բայց քրդերը ճաշի ժամանակ, առանց թույլտվություն խնդրելու, վերցնում են գդալները և ցուցադրաբար խրում իրենց քոլոզների մեջ։

Կանայք չեն հանդուրժում այդ վիրավորանքը։ Մոսեի մայրիկը ապտակում է քրդերից մեկին։ Աղմուկ է բարձրանում, վրա են հասնում շենիկցի հովիվները։ Կռվի ընթացքում սպանվում է 4 քուրդ և 1 հայ։ Լուրը հասնում է քրդական վրանները։ Օգնական ուժեր ստանալով քրդերը վերսկսում են հարձակումը։ Հայերին օգնության են գալիս գյուղում մնացած շենիկցի տղամարդիկ։ Կռիվը շաբաթներ է տևում և, ի վերջո, հայերին հաջողվում է փախուստի մատնել քրդերին։ Վերջիններս հաշտություն են առաջարկում։ Նրանք հատուցում են հայերին հասցված վնասն ու հետ վերադարձնում գդալները։

Շատախում հաստատվելու քրդերի այս փորձը նույնպես անհաջողության է մատնվում։

70—80-ական թվականներին հայ-թուրք-քրդական հակամարտությունը այնքան էր սրվել, որ, ինչպես Խրիմյան Հայրիկն էր ահազանգում՝ եթե շտապ բարենորոգումներ չկատարվեն, Հայաստանը կդառնա հայ ժողովրդի գերեզմանը։

1885 թ. Ահարոնք գյուղում հրավիրվեց Սասունի տանուտերերի և ազդեցիկ մարդկանց ժողով։ Ժողովին մասնակցում էին շենիկցի Գրիգորը (Գրգոն), գելիեզուզանցի Պետոն, տալվորիկցի Գասպարը, Թադոսը Խիանքցի Վարդանը, Խուլբի բոլոր գյուղերի տանուտերերը։ Ժողովը որոշեց թշնամու ոտնձգություններին զինված հակահարված տալ և դրանք հետ մղել բոլոր հնարավոր միջոցներով։ Խնդիր դրվեց զինվել, կապար հավաքել, վառոդ պատրաստել և խրախուսել զինքի ձեռքբերումը։

Ի դեպ, ժողովի ու նրա որոշումների վրա նկատելի էր ազգային-ազատագրական գաղափարախոսության ազդեցությունը։

1885 թ. Մ. Փորթուգալյանը Մարսելում սկսում է հրատարակել «Արմենիա» թերթը, որը մերկացնում էր օսմանյան իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը, բողոքի ձայն բարձրացնում դրա դեմ։ Սակայն Մ. Փորթուգալյանը ազա-

տագրության հստակ ծրագիր չուներ։ Ազատագրական պայքարում արմենականները նպատակահարմար էին համարում բոլոր միջոցները՝ «երբեմն զենքով, երբեմն փողով, երբեմն օտարի օգնությամբ»։

Լոնդոնում գործող «Անգլո-Հայկական կոմիտեի» հրատարակած «Հայաստան» լրագիրը Հայկական հարցի լուծման միայն մեկ ճանապարհ էր տեսնում՝ եվրոպական պետությունների օգնությունը։

Ռուսաստանի և Անդրկովկասի հայ ուղղոչին մտավորականության մի մասը, տարվելով բուրժուական լիբերալիզմի գաղափարներով, հարձակումներ էր գործում այն ուժերի վրա, ովքեր հայ ժողովրդի ազատագրական պայքարը դիտում էին որպես համառուսական հեղափոխական շարժման բաղկացուցիչ մաս։

1884 թ. Հակոբ սարկավագը, ազատվելով բանտից, վեց տարի շարունակ ծպտված շեյխի կամ վանականի տարազի մեջ շրջում էր տեղից տեղ, քարոզում հայ-քրդական դաշինք ստեղծելու անհրաժեշտության մասին, կազմակերպում զենքի փոխադրում։ Նա հայերի ու քրդերի անունից մի հանրագիր կազմեց սուլթանի հասցեով, որն առաջարկում էր բարեփոխումների հետևյալ պլանը՝ գավառներում պետական պաշտոնյաներ նշանակել ոչ միայն թուրքերի, այլև հայերի ու քրդերի, տասնորդ հարկը գանձել միայն դրամով և թույլ տալ, որ յուրաքանչյուր գյուղի հասարակություն այդ հարկը ինքը հավաքի և մուծի պետությանը՝ առանց հարկահավաքների միջամտության, գյուղերում ստեղծել իշխանատներ և արգելել, որ պաշտոնատար անձինք բնակվեն գյուղացիների տներում ու սնվեն նրանց հաշվին[5]։

1886—1889 թթ. Վանի երիտասարդության հայրենասիրական գործունեությունը ղեկավարում էր Փանոս Թերլեմեզյանը, որը հետապնդումներից խույս տալով 1889 թ. հեռանում է Մուշ։ Այստեղ նա ակտիվորեն մասնակցում է հայդուկային շարժմանը։ Այդ տարիներին Վասպուրականում գործում էին Ջատոյի և Շերոյի մարտական ջոկատները։ Նման ջոկատներ ստեղծվեցին նաև Սասունում, Երզնկայում, Սեբաստիայում, Շապին-Գարահիսարում, Խարբերդում, Կեսարիայում և այլուր։

* * *

XIX դարի 60—80-ական թվականներին արևմտահայության ազատագրական մտքի վրա նշանակալից ազդեցություն ունեին Մ. Նալբանդյանի, Բաֆֆու և Ռ. Պատկանյանի գաղափարները, որոնք հասարակությանը հնարավորություն տվեցին այլ աչքերով նայել իրականությանը, հայ ժողովրդի անմխիթար վիճակին։ Մ. Նալբանդյանը գրեց. «Պաշտպանել այն հայի առուծուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդն և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկերկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ ու գրչով, այլ և զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»[6]։ Գամառ Քաթիպան մշեցու բերանով կոչ էր անում. «Խղճացեք հայ ազգին, տվեք մեզ հրացան», «Ձեր ոսկին չենք ուզում, տվեք մեզ վառոդ»[7]։

Իսկ Հ. Սվաճյանը գրեց. «Մենք սթափվեցինք մեր թմրությունից և սկսեցինք որոնել մեր հայրենիքը... Հայրենասիրություն, հայեր, հայրենասիրություն, հոգ տանենք մեր հայրենիքի մասին, եթե ուզում ենք ապրել և մարդ ապրել»[8]։

Կ. Պոլսի «Մամուլը» 1882 թ. № 972-ում հատվածներ տպագրեց Մանուկ Զգոնյանի «Ուղերձ» բանաստեղծությունից.

Արթնացեք հայեր, քաջերի զավակներ,
Առեք միության տեգ ու նիզակներ,
Շուտով կազմեցեք սիրո խմբակներ,
Հագեք քաջության զենք ու զրահներ։

Հինգ հարյուրամյա մի քուն քնեցինք,
Աստված ու եղբայր խպառ մոռացանք,
Սիրո միության լաթեր մերկացանք
Առելության ձեռքին խաղալիք դարձանք։

Ռ. Լյուքսեմբուրգը գրում է, որ Թուրքիայում «տարբեր ազգությունների մեջ ձգտում էր առաջանում դուրս պրծնել ամբողջից և բնազդաբար փնտրել ուղի դեպի անկախ գոյության պայմաններում սոցիալական զարգացման ավելի բարձր մակարդակը»[9]։

Հայ ժողովրդի, որպես ազգի ձևավորման բնորոշ արտահայտություններից մեկը Մայր Հայաստան գաղափարի ազգա-

յին միասնության համար պայքարի դրոշ դառնալն էր, համազգային մտածողության, հոգևոր հայրենիքի գաղափարի ձևավորվելն էր։

1860 թ. Փարիզում հրատարակվեց «Դասարան հայկազյան մանկանց» դասագիրքը, որում զետեղված էր երկու նկար, որոնք ուղղակի առնչվում էին Մայր Հայաստանի գաղափարին և համազգային մտածողությանը։ Դրանցից մեկը վերնագրված էր «Ազգի վիճակը Հայաստանում», որ պատկերում էր հայկական ավերակները և դրանց վրա ողբացող կնոջը, իսկ մյուսը կոչվում էր «Հայաստանի ոգին»՝ հերարձակ, ոտաբոբիկ և ողբացող կինը քայլում է ավերված Հայաստանով։ Այս երկու նկարների միջև տեղադրված էր պատմական Հայաստանի քարտեզը։

1861 թ. Մայր Հայաստան նկար-պլակատը հրատարակվեց գունավոր, որն հետագայում ժողովրդի կողմից ստացավ «Անիի ավերակները» անունը։ Նրան կարելի էր հանդիպել ոչ միայն ամեն մի հայի բնակարանում, այլև հասարակական վայրերում և նույնիսկ թատրոններում։

Այսպես, օրինակ, 1871 թ., երբ բեմադրվում էր Պ. Դուրյանի «Սև հողեր» պիեսը, նրա ավարտին բեմում երևում է այդ նկարը, բայց կինը այստեղ շղթայակապ էր, փշե պսակը գլխին։

Նկարը զանազան ձևերով ու վիճակներում ձեռքից ձեռք էր անցնում։ Նա վերարտադրվում էր կտավի, ձեռագործի և գորգի վրա, դարձել էր վզնոցի զարդանախշ, դաջվել փայտի վրա, պատկերվել տների պատերին, տարածվել որպես հուշանվեր, հազարավոր անգամներ տպագրվել զանազան հրատարակությունների կազմերի վրա։ Այն նույնիսկ երգվել է և նրա մասին երգեր են հյուսվել[10]։

Մայր Հայաստանի գաղափարը դարձել էր գործող ու գործի մղող, հայահավաք և հայրենիքը միավորելու կոչ։

Կառավարությանը հատկապես մեծ անհանգստություն էր պատճառում Մուշի հայկական վարժարանը, որին օսմանյան արքունիքում կնքել էին «խոովարարների բույն» անունով։ Վարժարանի աշակերտներն ու ուսուցիչները գտնվում էին իշխանությունների ամենավայրագ հսկողության տակ։ Մասնավորապես մեծ դեր էր խաղում Վարդենիսի վարժարանի ուսուցիչ Մարգար վարժապետը՝ Մարգար Ամրոյանը։ Գործնականում նա Տարոնի ազգաբնակչության շրջանում ազատագրական գաղափարներ քարոզող առաջին գործիչն էր, նրա առաջին զինված ջոկատի կազմակերպիչը։

Իշխանություններին, ի վերջո, հաջողվում է իրենց ձեռքը գցել Մարգար վարժապետին և 1893 թ. հունվարի 27-ին կախաղան բարձրացնել։ Մահից առաջ, դիմելով իր հայրենակիցներին, նա ասաց. «Հայե՛ր, մի՛ վհատվեք, քաջ իմացեք, որ մենք հասնելու ենք մեր նպատակին... Միայն թե այդ երջանիկ պահին ինձ չմոռանաք»։ Կառավարությունը Մարգարի դին երեք օր թողեց կախաղանի վրա՝ «իբրև իրատական օրինակ ուրիշներին»[11]։

Համբերության բաժակը իսկապես լցվել էր։ Դարերով անմռունչ ռայան սկսել էր շարժվել, դիմադրել, ըմբոստանալ։ Նրա մեջ ամրապնդվել էր այն միտքը, որ փրկության ճանապարհն անցնում է ոչ թե մեծ տերությունների «մարդասիրության» ու միջազգային դիվանագիտության օգնության, այլ յաթաղանի դեմ պայքարի, իր ուժերի միավորման, ինքնապաշտպանության կռիվների միջով։ Դարերով ճնշված ու բռնադատված հայը նոր աչքերով նայեց իր վիճակին, իր վաղվա օրվան, իր երեխաների բախտին։ Եվ նա շտկեց կորացած մեջքը, գնաց համալրելու ապրելու, գոյատևելու համար պայքարողների շարքերը։

Բացարձակ կեղծիք էին Աբդուլ Համիդի այն պնդումները, թե ինքը հայերի նկատմամբ հարկադրված էր բռնությունների դիմել, որովհետև նրանք պայքարում էին անկախություն ստանալու համար։ Մասնավորապես նա օգտագործում էր Կարինի 1890 թ. հունիսի 18-ի դեպքերը, ապացուցելու, որ հայերը ապստամբելու միջոցով անկախության հասնելու տրամադրություն ունեին։ Իսկ իրականում այդ դեպքերը իշխանությունների կողմից կազմակերպված պրովոկացիա էին։ Իբր թե թուրքական գաղտնի ոստիկանությանը հայտնում են, որ Սանասարյան վարժարանում և հայոց Մայր եկեղեցում մեծ քանակությամբ զենքեր են պահվում։ Խուզարկությունները ոչինչ չեն հայտնաբերում, բայց խուզարկության բուն փաստը և ազգային արժեքների նկատմամբ ծաղրն ու անհարգալից վերաբերմունքը հայերի մեջ դժգոհություն են առաջացնում։ Խանութպաններն ու արհեստավորները, որպես բողոքի նշան, մի քանի օր աշխատանքի դուրս չեն գալիս։

Իշխանությունները անմիջապես լուրեր տարածեցին, որ հայերը ապստամբել են։ Ջորքը շրջապատում է առաջնորդարանը։

Դեպի եկեղեցի է շարժվում քաղաքի մահմեդական ազգաբնակչությունը և հարձակվում եկեղեցու բակում հավաքված անզեն հայերի վրա։ Ավելի քան 200 հայ սպանվում է։

Սուլթանն իսկույնևեթ շրջաբերական է ուղարկում օտար երկրներ, նշելով, որ Կարինում «հայերին վիրավորել ու սպանել են իրենց ցեղակիցները»։

Այդ առիթով անգլիական հյուպատոսը գրում է. «Սեպ. հունիսի 20-ին մահմեդականների ամբոխը Կարինի փողոցներում հարձակվեց անպաշտպան հայերի վրա և նրանցից շատերին սպանեց ու վիրավորեց, միաժամանակ կողոպտելով նրանց տներն ու խանութները... Հանցագործները ձերբակալվել են, բայց հենց հաջորդ օրը ազատվել... Մյուս կողմից, քրիստոնյաները ձերբակալվել են և երկար ժամանակով պահվում են բանտում, թեպետ նրանց դեմ ոչ մի մեղադրանք չի հարուցվել...»[12]։

Մեկ ամիս անց, հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում, որտեղ գտնվում էր հայոց պատրիարքարանը, կիրակնօրյա պատարագի ժամանակ ամբիոն է բարձրանում մի հնչակյան և պատրիարքին մեղադրում դավաճանության մեջ։ Պատարագի մասնակիցները պատրիարքից պահանջում են գնալ սուլթանի պալատ և բողոքել վիլայեթներում կատարվող վայրագությունների դեմ։

Ցուցարարների թափորը հասնում է Ելոզ՝ սուլթանի պալատ։ Սուլթանին հենց այդպիսի առիթ էր պետք։ Նա, առանց պատճառների մեջ խորանալու, հանձնարարում է ջախջախել ցուցարարներին։ Սուլթանի հրամանը կատարվում է։ Այս խաղաղ ցույցի կազմակերպիչը հնչակյան կուսակցությունն էր։

Իրավացի էր Լեոն, երբ գրում էր. «Այդ մի աննշան ու չնչին դեպքի օր էր, որ, սակայն, դարձավ մի ընդարձակ և լայն բացված դուռ, որի միջոցով աղետներ աղետների հետևից սկսեցին թափվել անմեղ ու անգիտակ թուրքահայ գյուղացիության գլխին»։ Թուրքական կառավարությանը առիթներ էին հարկավոր և «ահա այդ առիթներն առատությամբ մատակարարում էին հայ թեթևամիտ, քաղաքականապես անզրագետ հեղափոխականները...»[13]։

Ինչպես և պետք էր սպասել, կառավարությունը Կ. Պոլսում ցույցը ջախջախելով բավարարվեց, իսկ գավառներում դրությունը աղետալի դարձավ։ Ամենուրեք բանտերը լցվեցին հայերով։

Աննախադեպ չափերի հասան կողոպուտն ու սպանությունները։ Խոշտանգումները գազանային բնույթ ստացան։ Մեծ վեզիր Ջևադ փաշան շրջաբերականներ էր ուղարկում տեղերը՝ ամեն ինչ անել այնպես, որ օտարերկրացիները «չկարողանան» ծանոթանալ գործի իսկական դրության հետ[14]։

Օսմանյան իշխանությունները զինված ուժերի աջակցությամբ բռնություններ իրականացրին Կարինի, Բաղեշի, Վանի վիլայեթների հայերի նկատմամբ։ Այդ տարիներին հայկական ջարդեր կազմակերպվեցին Ադանայում և Կեսարիայում, մեծ քանակությամբ հայեր բռնությամբ քշվեցին Ռուսաստան, իսկ նրանց տներն ու հողերը հանձնվեցին այլ վայրերից բերված մահմեդականներին։ Կեսարիայի եկեղեցիներում ծիսակատարության մասնակցած բոլոր հայերը կողոպտվեցին։

Կ. Պոլսում ԵՄՆ-ի դեսպան Թոմսոնը 1893 թ. գրեց, որ հայերի վիճակը ծայրաստիճան ճգնաժամային է։

Ամերիկացի գիտնական Լոուերը, 1896 թ. պատասխանելով օսմանյան արքունիքի հերյուրանքներին, գրում էր. «Ես ճանաչում եմ այդ ժողովրդի (հայերի) ֆիզիկական, բարոյական և մտավոր մեծ կարողությունները։ Այն անդունդը, որի մեջ կարող է ընկնել առանձին անհատը կամ ժողովուրդը, միաժամանակ ցույց է տալիս նաև այն բարձունքը, որին նա կարող է հասնել։ Կարելի է միայն զարմանալ, որ այդպիսի կարկառուն ընդունակություններ, եռանդ ու խելք ունեցող ժողովուրդը մինչև այժմ մնում է ենթակա վիճակում, բայց Կ. Պոլսում և երկրի տարբեր քաղաքներում բազմաթիվ տարիներ ապրելու ընթացքում ես դիտել եմ, թե ինչպես մատի ամեն մի շարժմանը հետևում է սոսկալի վրեժխնդրությունը և պետք է միայն զարմանալ այդ դժբախտների (հայերի) խելագար համարձակության վրա, որ իբր թե հեղափոխություն են ձեռնարկել։ Իրականում նրանք այդպիսի բան չեն մտածում։ Գոյություն ունեն առանձին ագիտատորներ, սակայն նրանց նպատակը ևս միայն այն է, որպեսզի քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը դարձնեն դեպի իրենց ժողովրդի հեծեծանքները, որոնք նույնիսկ աստված չի լսում»[15]։

Սակայն պատմական ճշմարտությունով չէ, որ թուրքական քաղաքական շրջանները այսօր ղեկավարվում են։ Նրանց համար ճիշտն այն է, ինչը օգտակար է։ Եվ ահա վերը նշված դեպքե-

րից հարյուր տարի անց Անկարայի պետական ռադիոն հայտարարում է. «Ստամբուլից ուղարկված (հայ) ուսուցիչները աշխատում էին ժողովրդին ղեկավարել։ Նրանք զենք էին ներմուծել ամեն մի հայ ընտանիքի համար»։ Իսկ հայ գյուղացին, որին հասցրել էին ստրուկի աստիճանի, ինչպես վերևում տեսանք, տանում էր իր ծանր լուծը և իշխանություններին ընդդիմանալու, այն էլ ապստամբություն բարձրացնելու միջոցով անկախության հասնելու համար ոչ մի առումով նախապատրաստված չէր։ Նրա մտահոգությունը իր ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպանելն էր։

Հայ պանդուխտների գրած մի նամակում կարդում ենք. «Մենք չենք ձգտում հատուկ թագավորության, քաղաքական անկախության, այլ ուզում ենք պարզապես ապրել մարդկային կյանքով»[15]։

Արևմտահայ հատվածի անկախության ձգտումների մասին խոսակցությունները Գր. Արծրունին հետևյալ կերպ է ծաղրում։ «Հայը կանգնում է բարբարոս, կատաղի, մոլեռանդ մահմեդականի առջև, նրան ապացուցում է իր իրավունքը, նրան աղերսներ է տալիս, պահանջում է արդարություն և գուցե վերջում սպառնում է նրան։ Բայց ինչպե՞ս, ինչո՞վ... սպառնում է, որ, եթե չստանա իր պահանջված ամենաանհրաժեշտ մարդկային իրավունքը, այն ժամանակ ստիպված կլինի գաղթել իր հայրենիքից...»[16]։

* * *

Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Տարոնում, յաթաղանի դեմ պայքարին աջակցելու նպատակով, սկսած 80-ական թվականներից, Տարոն էին գալիս զինված ջոկատներ, առաջադիմական հայացքների տեր գործիչներ։ 90-ական թվականներին Սասունում և Տարոնում եռանդուն գործունեություն ծավալեց Մ. Տամատյանը։

1890 թ. սեպտեմբերի 24-ին Պետերբուրգի համալսարանի ուսանող Սարգիս Կուկունյանի ղեկավարությամբ մի խումբ ուսանողներ փորձում են անցնել թուրքական սահմանը՝ արևմտահայության ազատագրական պայքարին մասնակցելու համար։ Սակայն սահմանի վրա խումբը հարձակման ենթարկվեց և նրա անդամների զգալի մասը զոհվեց։

Հետագա տարիներին ևս դրսից Արևմտյան Հայաստան եկան հասարակական գործիչներ, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, սակայն արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները սկզբնավորվեցին և ծնունդ առան ոչ թե այս կամ այն քաղաքական կուսակցության ազդեցությամբ կամ նրանց ջանքերով, այլ դրանց ծնեցին ու պայքարի կոչեցին հայ գյուղացիության անտանելի վիճակն ու բնաջնջման վտանգը։

Այս առումով ճիշտ չէ Լեոն, երբ գրում է. «Թուրքահայ հեղափոխության ամենագլխավոր առանձնահատկությունը հենց այս է եղել առաջին իսկ օրից։ Նա եղել է գրեթե բացառապես ռուսական մտավորականության գործը»[17]։

Եվ միանգամայն իրավացի էր Հ. Թումանյանը, երբ գրում էր. «Սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիներն են սկսել Տաճկաստանում»[17]։

Թուրքական յաթաղանի դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարում առանձնահատուկ դեր են խաղացել հայդուկները։ Հայդուկները ժողովրդի փրկության զոհասեղանին բարձրացած այն գյուղացիներն էին, որոնք, չունենալով անձնական կյանք, հեռացել էին տնից ու հարազատներից, եղբայրացել սար ու քարի հետ, որպեսզի փրկեին մարդկանց, թույլ չտային բարբարոսներին՝ անպատիժ սպանելու ու ոչնչացնելու։

Հայդուկությունը մասնագիտություն չէր, այլ նվիրում, նահատակություն։ Ժողովրդի, հայ գյուղացու ապրելու, գոյատևելու բնազդն էր հայդուկին ծնում, դաստիարակում և նպատակաուղղում։

XIX դարի 80-ական թվականներին Հայկական լեռնաշխարհում գործում էին հայդուկային մի քանի խմբեր։ Հայդուկության օրորոցի մոտ կանգնած են եղել ժողովրդական վրիժառուների այնպիսի փայլուն ներկայացուցիչներ, ինչպիսիք էին ջենիկցի Գրգոն, խուլբեցի Գալուստը, գելիեգուզանցի Պետոն, տալվորիկցի Գասպարը և շատ ուրիշներ։

Տարոնում հայդուկային շարժման հիմնադիրը, հայդուկային առաջին ջոկատի կազմակերպիչն ու ղեկավարը Արաբոն էր։ Նա սովորել և ավարտել է Առաքելոց վանքի դպրոցը, ձեռնադրվել վարդապետ, սակայն շուտով հեռացել է ոչ միայն վանքից, այլ նաև կրոնական ծառայությունից, հրաժարվել է հոգևոր կոչումներից։ Զմռանը Մուշի թուրք հարուստների տներում մշա-

կություն էր անում, իսկ ամռանը իր շուրջն էր հավաքում զինված երիտասարդների ու կռիվ մղում գյուղացիներին հարստահարողների դեմ։ Շուտով Արաբոն մեկնում է Հալեպ, փող է վաստակում, զենք գնում ու, վերադառնալով Սասուն, 1885 թ. ստեղծում է հայդուկային ջոկատ։ Հայդուկային այդ անդրանիկ խմբի անդամներն էին դերգևանքցի Մխոն, ալիզոնանցի Լևոնը, գոմերցի Հովիկը, բերդակցի Ներսոն, Գալշո Մանուկը, ահարոնքցի Ադամը և մկթենքցի Գևորգը։

Ութ տարի շարունակ Արաբոյի խումբը պարտիզանական կռիվներ էր մղում գյուղացուն լլկողների ու հարստահարողների դեմ և մեծ անուն էր վաստակել։

Իշխանություններն աշխատում էին անմիջական բախման մեջ չմտնել հայդուկների հետ և Արաբոյի դեմ կռվում էին ցեղապետերի միջոցով։ Այդ կռիվներից մեկի ժամանակ (Բերդակ գյուղում) Արաբոն և Մխոն ձերբակալվում են և նետվում Մուշի բանտը։ Արաբոյին հաջողվում է բանտից փախչել և անցնել Կովկաս։ 1895 թ. 16 հայդուկների հետ միասին նա փորձում է վերադառնալ Տարոն։ Ճանապարհին, սկզբում Ղոզլուի սարերում, իսկ ապա Գյալեռաշի ձորում քրդերը հարձակվում են խմբի վրա, և նրա բոլոր անդամները զոհվում են։

Սա հայկական հայդուկային շարժման ձևավորման տարիներն էին։

Հայդուկային առաջին խմբերում սակավաթիվ մարդիկ էին ընդգրկված, դրանք շատ վատ էին զինված՝ մի քանի որսորդական հրացան, մի քանի դաշույն, իսկ մեծ մասի ձեռքում միայն մահակ կար։ Չնայած դրան, այդ խմբերին հաջողվեց իրենց վրա բևեռել, մի կողմից, գյուղացիության, իսկ, մյուս կողմից, թուրքական իշխանությունների ու աշիրեթությունների ուշադրությունը։ Դա մի կայծ էր, որից բռնկվեց ինքնապաշտպանական կռիվների կրակը։

Արաբոյի խմբում թրծվեցին հայդուկային շարժման մի քանի աչքի ընկնող ղեկավարներ։ Այստեղ հայդուկի իր կենսագրությունը սկսեց մկթենքցի Գևորգը կամ Գևորգ Չաուշը։

Գևորգը ծնվել է 1869 թ. Փսանքի Մկթենք գյուղում։ Սկզբնական կրթությունը ստացել է հայրական տանը։ Նրա առաջին ուսուցիչը հորեղբայրն էր՝ տեր Ստեփանը։ Ապա Գևորգը դառնում է Առաքելոց վանքին կից գործող դպրոցի սան։

Շուտով նա ծանոթանում է Արաբոյի հետ, մտնում նրա

խմբի մեջ, մասնակցում մի քանի կռիվների, իսկ երբ Արաբոն մեկնում է Կովկաս, Գևորգը նրա օրինակով գնում է Հալեպ՝ մշակություն անելու ու վաստակած փողերով հրացան գնելու։

Հալեպում, ապրուստի միջոց վաստակելու նպատակով, շատ սասունցիներ էին աշխատում։ Գևորգը ծառայության անցավ մի սասունցու ջրաղացում, իսկ ապա՝ հացի փռում։ Առաջին անգամ Սասունից ոտքը դուրս դրած Գևորգի համար Հալեպը այլ աշխարհ էր, իր շինությունների ոճով, անծանոթ տարաղ կրող բազմությունների եռուզեռով, շուկաների աղմուկով, մզկիթների կանչերով։

1890 թ. գարնանը Գևորգը վճռեց վերադառնալ տուն։ Սակայն վաստակած գումարը բավական չէր հրացան գնելու համար։ Օգնության եկան տեղի սասունցիները։ Նրանք փող հավաքեցին, մի հրացան գնեցին ու նվիրեցին Գևորգին։ Պատմում են, որ մինչև հոգու խորքը հուզված Գևորգը երկու ձեռքով հորիզոնական դիրքով բռնեց հրացանը, գլուխը խոնարհեց ու ասաց. «Հայրենակիցներ, շնորհակալ, շատ շնորհակալ եմ ձեզնից», ապա գլուխը բարձրացնելով շուռ եկավ դեպի հյուսիս, հայացքը հառեց երկնքին ու ասաց. «Հե՞յ Մարաթուկ, քո զորությանը մատաղ։ Ինձ հնարավորություն ու ուժ տուր մինչև կյանքիս վերջը Արաբոյի նման, իմ այս Արաբոյով խփելու թշնամուն ու դավաճանին, պաշտպանելու թշվառին ու լլկվածին»։

Այդ օրվանից նրա հրացանը կնքվեց «Արաբո» անունով։ Գևորգը մի քարավանի հետ բռնեց տունդարձի ճամփան։

Բացի Տարոնից, XIX դարի 80—90-ական թվականներին հայդուկային խմբեր էին գործում նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում։

Սեբաստիայում դրանցից մեկի կազմակերպիչը Գաբրիել Գաֆյանն էր՝ Շմավոնը, որը մասնակցել էր Կ. Պոլսի Գում Գափուի ցույցին և ապա անցել Սեբաստիա։ Սակայն Սեբաստիայի առաջնորդ Պետրոս վարդապետը նրանից պահանջում է անմիջապես հեռանալ, այլապես կդիմի իշխանություններին։ Շմավոնը հարկադրված անցնում է Արաբկիր, որտեղ զինված խմբեր է ստեղծում և շուտով Փոքր Հայքում մեծ համբավ է ձեռք բերում։ Նա կրոնական ծեսերի ժամանակ ելույթ էր ունենում և ժողովրդին զինվելու կոչ անում։

Սակայն իշխանությունները նրան երկար չեն հանդուրժում և սկսում են հետապնդել։ Նա փոքր խմբով անցնում է Դերսիմ և մի քուրդ բեկի հետ բանակցություններ վարում՝ միացյալ ուժերով կռվել թուրքական իշխանությունների դեմ։ Այստեղ նա կազմակերպում է փամփուշտների արտադրություն։ Սակայն իշխանությունները կաշառում են քուրդ բեկին և նրա օգնությամբ բռնում են Շմավոնին ու շղթայակապ ուղարկում Կ. Պոլիս։ Ճանապարհին նա իրեն ուղեկցող ոստիկանների հրամանատարին խոշոր կաշառք է խոստանում։ Սամսոնում, ծովափնյա ռեստորանում, Շմավոնը ոստիկաններին հարբեցնում է ու փախչում՝ թաքնվելով հայկական թաղում։ Որոշ ժամանականց նա հայտնվում է Եվդոկիայում, որտեղ մի ստվարաթիվ զինված խումբ է կազմակերպում։ Սակայն լրտեսների օգնությամբ իշխանություններին հաջողվում է խմբի մի քանի անդամների իրենց ձեռքը գցել և դատել։ Դրանց թվում էր Արմենակ Հայրապետյանը, որին Կ. Պոլսում դատապարտում են 15 տարվա աղատազրկման, բայց շուտով նա բանտից փախչում է և, գնալով Ամասիա, հայդուկային խումբ է կազմակերպում։ Շմավոնը ևս անցնում է Ամասիա և տեռորի ենթարկում մի քանի լրտեսների։

Երկար հետապնդումներից հետո իշխանություններին հաջողվում է 1893 թ. Մարզվանում Շմավոնին բռնել։ Եվ քանի որ նա ռուսահպատակ էր, Կ. Պոլսի դատարանը Շմավոնին հանձնում է ռուսական դեսպանատանը, որն էլ նրան ուղարկում է Պետերբուրգ։ Մի քանի տարի տաժանակրության մեջ անցկացնելուց հետո նա վերադառնում է Անդրկովկաս։ Հետագայում Շմավոնը ողջունեց սովետական կարգերի հաղթանակը ու ակտիվորեն մասնակցեց նոր կյանքի կառուցմանը։

Մարզվանում հայդուկային խմբերը կազմակերպում ու ղեկավարում էր Բարսեղ Զաքարյանը՝ Լևոնը։ Այդ խմբերը իշխանություններին հարկադրում էին զսպել հայերի նկատմամբ իրենց ոտնձգությունները։

Լևոնը հովվի հագուստով տեղից տեղ էր անցնում, մարդկանց համոզում էր զինվել։

1893 թ. սեպտեմբերի 8-ին նա լեռներից իջնում է Մարզվան։ Նույն օրը 700 թուրք ու չերքեզ շրջապատում են հայկական թաղը։ Սկսվում է կատաղի մարտ։ Լևոնը հերոսաբար կռվում է, բայց ծանր վիրավորված ծխնելույզից վայր է ընկնում։ Թուրքերը վրա են հասնում և նրան խոշտանգելով սպանում են։

Մարտիրոս Բոյաջյանը՝ Ժիրայրը, ծնվել է 1856 թ. Հաճընում։ Նրա ուսուցիչն ու դաստիարակը կրթոտ հայրենասեր Միհրան Սվաճյանն էր, որ տեղի դպրոցի տնօրենն էր։ Ժիրայրը կրթությունը շարունակում է Կ. Պոլսում։ 1876 թ. վերադառնում է Հաճըն՝ զբաղվելու ուսուցչությամբ։ Այստեղ նա խմբակ է կազմակերպում և հոդևորականի տարազի մեջ ծպտված ազատագրական գաղափարներ է պրոպագանդում, զենք օգտագործել և վառոդ պատրաստել սովորեցնում։ Նա «հովիվ» դարձած շրջում էր էվերեկի գյուղերը, զինված ջոկատների միջոցով սանձահարում իշխանությունների, վաշխառուների ու հարկահավաքների ոտնձգությունները։

Ժիրայրին հաջողվում է Սինջան գյուղի հայ և թուրք գյուղացիներին միավորել և հանել Օսման բեյի դեմ։ Միջամտում է տեղի կայազորը, բայց տեսնելով հայերի ու թուրքերի միասնականությունը, թողնում հեռանում է։

Հեռանում է նաև Ժիրայրը, նա անցնում է Կեմերեկ և, հաստատվելով Թերզիլի գյուղում, ծավալում ինքնապաշտպանական աշխատանքներ։

1893 թ. հոկտեմբերի 29-ին Ժիրայրը Եղղատի եկեղեցում միտինգ է կազմակերպում և իշխանություններին բողոք ներկայացնում ոստիկանության, բաշիբոզուկների և հարկահավաքների բռնությունների և կեղեքումների դեմ։ Միտինգի ժամանակ քաղաքի հայերի ու թուրքերի միջև ընդհարում է տեղի ունենում. թուրքերը ձգտում էին մտնել եկեղեցի և հաշվեհարդար տեսնել միտինգի մասնակիցների հետ, բայց այդ նրանց չի հաջողվում։

Հաջորդ օրը իշխանությունները պաշարում են հայկական թաղը։ Հայերը 15 օր փակում են խանութները։ Կ. Պոլսից գալիս է Աբեդին փաշան և հայերին համոզում բացել խանութները։ Հայերը համաձայնվում են, բայց իշխանությունները դրժում են իրենց խոստումը և մի քանի օր անց ձերբակալում ու խոշտանգում են 850 հայի։

Ոստիկանությունը լրտես Ղազարոսի առաջնորդությամբ փորձում է բռնել ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկին՝ Գրիգոր Քեհրիպարճյանին։ Վերջինս դուրս է թռչում իր թաքստոցից և ատրճանակի հարվածով գետին տապալում լրտեսին ու թուրք սպային։ Սակայն ոստիկաններին հաջողվում

է նրան ձերբակալել։ Այդ ընթացքում մոլլան մզկիթում հայերին կոտորելու քարոզ էր կարդում։ Թուրքերը փողոց են թափվում և սպանում պատահած հայի։ Նույն օրը նրանք բանտում ևս հարձակվում են հայերի վրա, 13 հայ սպանվում է, 120-ը՝ վիրավորվում։ Այս բոլորից հետո Ժիրայրը կամավոր հանձնվում է իշխանություններին։ Նա մահվան է դատապարտվում։ 1894 թ. մարտի 24-ին նրան տանում են Սահաթխանե հրապարակ՝ դատավճիռն ի կատար ածելու։ Այստեղ Ժիրայրը խրոխտ կեցվածքով ճառ է արտասանում, քննադատության կրակի տակ առնելով թուրքական իշխանություններին։ Փաշան նրան արգելում է ճառը շարունակել, բայց ապարդյուն։ Փաշան հրամայում է փողեր հնչեցնել՝ Ժիրայրի ձայնը խլացնելու համար։

Դահիճը մոտենում և ուզում է պարանը Ժիրայրի վիզը գցել։ Ժիրայրը նրան մի կողմ է հրում, ինքն է պարանը իր վիզը գցում, ոտքով աթոռը հետ հրում և ճոճվում հրապարակի վրա։

Հայդուկային շարժման մեջ նշանավոր էր նաև Հովհաննես Մինասյանի՝ Մինաս օղլու գործունեությունը։ Նա ծնվել է Զարշամպայի Գաբու Գայեա գյուղում։ Հայրը խաղաղ և հեզ մարդ էր, իսկ մայրը՝ Հոռոփը, հզոր կամքի ու քաջության տեր, փայլուն հեծյալ ու հրացանաձիգ էր։ Նա Հովհաննեսին փոքր հասակից ձի նստել և հրացան օգտագործել էր սովորեցնում։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո իշխանությունները անընդհատ մուսուլմանական նոր տարրեր էին բերում Զարշամպա և բնակեցնում հայերի հողերի վրա, որի հետևանքով նրանց վիճակն ավելի էր ծանրանում։

Մուհաջիրների կամ եկվոր գաղթականների նկատմամբ իշխանությունների բացահայտ հանդուրժողականությունը նրանց ստնձարձակ էր դարձրել։ Կազմակերպվեցին Մեվլուտի և Շիրին Ալիի ավազակախմբերը, որոնք ահ ու սարսափ էին տարածել Զարշամպայի և Սամսոնի շրջաններում։ Կ. Պոլիսը, ինչպես միշտ, հայերի ու հույների բողոքներն անուշադրության էր մատնում։ Այս պայմաններում քրիստոնյա ազգաբնակչությունը հարկադրված էր զենք վերցնել իր գոյությունը պաշտպանելու համար։ Հայերի ինքնապաշտպանական պայքարի կենտրոնը դարձավ Մինասի հայրենի գյուղը՝ Գաբու Գայեան։ Ավազակախմբերի դեմ պայքարելու համար Մինասյան եղբայրները զինված ջոկատ են կազմակերպում, որը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն հայ, այլև մահմեդական ազգաբնակչության շրջանում։

Մինասը լուր է ստանում, որ Շիրին Ալիի ավազակախումբը թալանի նպատակով հարձակվել է Քիրիճ Արմուտ գյուղի վրա։ Նա իր զինակիցներով վրա է հասնում. տեղի է ունենում կատաղի ընդհարում։ Շիրին Ալին սպանվում է, իսկ նրա խումբը անձնատուր լինում։ Թալանված գույքը վերադարձվում է տերերին։ Թուրք գյուղացիները երախտապարտ էին։ Մինասը սկսում է հետապնդել Մեվլուտի ավազակախմբին։ Փետրվարյան մի ցուրտ օր լուր են բերում, որ ավազակները թուրքաբնակ Օրթա գյուղի մոտ գտնվող քարանձավում են։ Մինասը շրջապատում է քարանձավը։ Սկսվում է կատաղի փոխհրաձգություն, որ ընդհատումներով տևում է ավելի քան 24 ժամ։ Մեվլուտն ու հինգ ավազակներ սպանվում են, իսկ մյուսները՝ փախուստի դիմում։ Քանի որ ավազակախմբերի գործողությունները մեծ դժգոհություն էին առաջացրել թուրք ազգաբնակչության շրջանում, իշխանությունները հարկադրված Մինասին նշանակում են հեծյալ զորքի պաշտոնյա, այսինքն՝ նրան հեծյալներ են տալիս և հանձնարարում պայքարել ավազակախմբերի դեմ։ Մինասն այդ հանձնարարությունը հաջողությամբ է կատարում։ Սակայն երկու տարի անց Մինասն ու նրա եղբայրները ներկայանում են կառավարչին, զենքերը հանձնում են և ասում, որ ձանձրացել են և ուզում են խաղաղ աշխատանքով զբաղվել։ Իրականում նրանք անցնում են ընդհատակյա գործունեության ընդդեմ թուրքական իշխանությունների։ Վերջինները որոշ ժամանակ անց այդ կռահում են և հարձակվում նրանց տան վրա, ոչնչանում Մինասի փոքր եղբորը։ Մյուս երկու եղբայրները փախչում են լեռները, հայդուկային խումբ կազմում և կռվում իշխանությունների դեմ։ Կառավարությունը Լոզմո անունով մեկին զորք է տալիս և հանձնարարում՝ ողջ կամ սպանված իրեն հանձնել երկու եղբայրներին։ Եվ մի օր, երբ Մինասի խումբը մտնում է քարայր, թուրք հովիվները նկատում են և այդ մասին հայտնում իշխանություններին։ Լոզմոն շրջապատում է քարայրը, բայց քիչ անց հայդուկների հարվածից նա և 15 հեծյալներ ոչնչանում են, իսկ մյուսները՝ ճողոպրում։

Իշխանությունները, այս խայտառակությունից կատաղած, կրկին հարձակվում են Գաբու Գայեայի վրա, գյուղացիներին թալանում են ու խոշտանգում։

Կայսրության ոստիկանության պետ Նազըմ փաշան գրել է. «Սամսոնի ենթակա Զարշամպայ կազայի Գաբու Գայեա գյուղում Մինաս անունով մի ոճրագործ հայտնվեց։ Նա ուներ 300 ֆիդայի։ Գարահիսարի, Թոգաթի և Մարզվանի միջև թռչուն չէր թռչում...

Բոլոր միջոցներին դիմեցի Մինասին ձերբակալելու համար, որովհետև Արևելյան նահանգների հայերի հոգեկան վիճակը նորից փոխվել էր և առիթ էին փնտրում շարժումն ընդարձակելու։ Մինաս օղլուն իր բանակատեղին դրել էր Թելմեկ կազայի Գուրշուլու Դերեյի անտառում...

Մինաս օղլուն մարտահրավեր էր կարդում, արշավում էր գյուղերը, դրամ էր հավաքում և նոր ֆիդայիներով հզորանում։ Մինասը 150 մարդկանցով հարձակվում է Վելի պահականոցի 200 հոգիանոց ժանդարմների վրա. չեթեներից 88 մարդ սպանվում է»[18]։

Կառավարությունը հազարապետ Օսման բեկին, որ քաջ և հնարամիտ զորավար էր, կովող ուժ է տրամադրում և պահանջում ոչնչացնել Մինասին և նրա խումբը։ Բախումը տեղի է ունենում Դեյիրմեն Դերեսիում։ Մանր մարտեր են գնում։ Թշնամին անընդհատ թարմ համալրումներ է ստանում, և Մինասը որոշում է հեռանալ Դավշան Դաղի բարձունքները։ Այստեղ կատաղի մարտը շարունակվում է, որն, ի վերջո, ավարտվում է թուրքերի նահանջով։

Երբ ձմեռը վրա է հասնում, Մինասը հայդուկներին ցրում է գյուղերը, իսկ ինքը տեղավորվում է Մատիչ հայկական գյուղում։ Իշխանություններն այդ մասին իմանում են և շրջապատում Մինասի թաքստոցը։ Թշնամին ոչ մի կերպ չի կարողանում հայդուկների ապաստարանը գրավել և ստիպված այն հրդեհում է։ Մինասի ընկեր Բաղդասարը տանից դուրս է ցատկում՝ բակում կռիվը շարունակելու, բայց անմիջապես սպանվում է, իսկ Մինասը պատուհանից ցատկում է ձորը և կրակելով գլորվում դեպի վար։ Թշնամու գնդակը ջախջախում է նրա թևը։ Թուրքերը ցանկանում են նրան սպանել, բայց վրա է հասնում Խուլի բեկը և թույլ չի տալիս։ Մինասին տեղափոխում են Սամսոնի բանտ, որտեղ և հանդիպում է բանտարկված մորը՝ Հոռոփին, կնոջն ու երեք երեխաներին։ Բանտի ծանր պայմաններում մեռնում է նրա Կարապետ որդին։

Քաջարի հայդուկը բանտում մնում է մի քանի ամիս, որից

հետո կտրում է պատուհանի երկաթները, փախչում է ու թաքնվում հունաբնակ մի գյուղում։ Որոշ ժամանակ անց նա դինված խումբ է կազմակերպում և բարձրանում սարերը։ Մինասի փախուստը խանդավառում է հայ գյուղացիներին։ Մի քանի օր անց նրա շուրջն են համախմբվում 200 հայդուկներ։ Նա հայդուկներին բաժանում է խմբերի և խնդիր դնում՝ պատժել թուրք հարկահավաքներին ու ոստիկաններին, հայ գյուղացիների մեջ արթնացնել ինքնապաշտպանության ոգի, օգնել նրանց զինվելու, ոչնչացնել մատնիչներին, ձգտել հաշտվելու հույն, քուրդ և թուրք գյուղացիության հետ։ Շատ քրդեր ու հույներ էին ցանկություն հայտնում այդ խմբերի մեջ մտնելու։

Մինասի հայդուկները զինվում էին թուրքական բանակի զենքերով, որ նրանց էին վաճառում առանձին թուրք սպաներ։ Միաժամանակ, հայդուկները անտառում կառուցեցին զինապատրաստման երկու արհեստանոց, որոնցում աշխատում էին Սամսոնից և Տրապիզոնից հրավիրված տասնյակ զինագործներ։ Նրանք ոչ միայն հրացաններ էին պատրաստում, այլև նռնակներ արտադրում։

Իշխանությունները ուժեղացնում էին հետապնդումները։ Սամսոնի շրջանի հայկական գյուղերում ջարդեր են կազմակերպվում։ Այդ լսելով Մինասը 30 հայդուկ հեծյալների քաղաք է ուղարկում։ Զինված ու հանդերձավորված հայդուկների հայտնվելը քաղաքում խուճապ է առաջացնում։ Այդ հանդուգն քայլը զսպում է թուրքերին, նրանք դադարեցնում են ջարդերը։ Իշխանությունները Մինասի մոտ պատվիրակություն են ուղարկում և առաջարկում, որ, եթե նա զենքերը վայր դնի, ներման կարժանանա։ Չկամենալով բարդացնել իրավիճակը, նա հայդուկներին ցրում է, իսկ ինքը վերադառնում է հայրենի գյուղ։ Նա ամբողջ վիլայեթում մեծ հեղինակություն վայելող անձ էր, նրա մոտ հաճախ օգնության և վեճեր լուծելու էին գալիս ոչ միայն հայ, այլև հույն, քուրդ և թուրք աշխատավորները։ Դա անհանգստացնում է իշխանություններին։ Նրանք Մինասին առաջարկում են ժամանակավորապես հեռանալ երկրից։ Մինասը մեկնում է Եգիպտոս։ Որոշ ժամանակ անց, երբ նա փորձում է վերադառնալ, Սամսոնի նավահանգստում ոստիկաններն արգելում են։ Մինասն ընդմիշտ հեռանում է հայրենի աշխարհից։

1890-ական թվականներին Կեսարիայի շրջանում հայդուկային խմբեր էին գործում Թորոս Ծառուկյանի և Գյուլպենկ Հա-

մալյանի գլխավորությամբ։ Իշխանությունները ուժեղացնում են հայդուկներին որսալու գործողությունները։

1895 թ. դեկտեմբերին, պատճառաբանելով, որ իբր Աբդուլ Համիդին տապալելու մասին Փոքր Հայքի բնակավայրերում փակցված կոչերի հեղինակը հայ է (իրականում հայ չէր), Կեսարիայում մոտ 500 հայ է ձերբակալվում ու խոշտանգվում։ Ձերբակալվածներին խարանում են շիկացած երկաթով, գլխիվայր կախում, ածխանոցում փակում։ 80 հոգի, այդ թվում հայդուկների ղեկավարներ Գյուլպենկն ու Փանոսը, տարվում են Անկարա՝ դատվելու։ Սակայն ճանապարհին նրանք փախչում են։ Ձմեռ էր։ Փախստականները 3 օր ոչինչ չէին կերել և մտնում են թուրքական մի գյուղ՝ ուտելիք ճարելու։ Հենց այստեղ էլ նրանց ձերբակալում են։ Անկարայում կազմակերպված դատավարության ժամանակ, ի թիվս անվեհեր հայդուկների, մեղադրվում էին նաև 500 այլ անմեղ հայեր, որոնց մայրաքաղաք էին բերել Փոքր Հայքի մի քանի շրջաններից։ Թուրքական դատարանը նրանցից 17-ին մահվան դատապարտեց։

Հիշատակենք նաև Գալուստ Արխանյանի հայդուկային խմբի մասին, որը գործում էր Մնձուրի անառիկ լեռներում և դրա համար էլ նրան անվանում էին «Մնձուրի առյուծ»։ Նա Փոքր Արմտան գյուղից էր։ 1891 թ. այս գյուղում սպանվում է մի լրտես։ Գյուղից 12 մարդ ձերբակալվում են, խոշտանգվում և տարվում Երզնկա։ Գյուղը հարձակման է ենթարկվում. երիտասարդների մի մասին իրար են կապում և լեռներից ցած գլորում, մյուսների դեմքերին մեղր են քսում, ձեռքերը կապում և մեջքի վրա պառկեցնում արևի տակ, որպեսզի մեղուներն ու ճանճերը բզկտեին։ Գյուղը թալանվում է։ Արխանյանը, որ ականատեսն էր այդ վայրագության, մի քանի ընկերների հետ հեռանում է լեռները և զինվորագրվում հարազատ ժողովրդի ազատագրմանը։ Այստեղ նրանց վրա հարձակվում են թուրք զինվորներն ու բաշիբոզուկները։ Մարտը տևում է վեց ժամ։ Երբ մութն ընկնում է, Արխանյանը ճեղքում է շրջապատման օղակը և հեռանում։

Այդ ժամանակ Փոքր Հայքի հայդուկների թիվը հասնում էր 1000-ի։ Սեպուհ լեռան վրա կայանում է հայդուկային խմբերի ղեկավարների ժողով, որին մասնակցում էր նաև 18-ամյա Անդրանիկը։ Ժողովը որոշում է, որ Արխանյանի խումբը

գործելու է Մնձուրիի, իսկ Ռուբենի խումբը՝ Գարահիսարի գավառներում։

Արխանյանը լեռներում ջախջախիչ հարված է հասցնում քրդական հրոսակներին։ Մի անգամ նա շրջապատվում է, բայց կարողանում է դուրս պրծնել ու, քաշվելով Ջիրմայի քարայրը, ջարունակել կռիվը։ Մնձուրիի կայմակամ Ահմեդ բեյը տեսնելով, որ կռվի միջոցով Արխանյանին չի կարող բռնել, նրա մոտ է ուղարկում Արխանյանի մորն ու գյուղի քահանային՝ առաջարկելով զենքը վայր դնել ու ներում ստանալ։ Արխանյանը մերժում է այդ առաջարկը։ Խումբը ևս 3 օր կռվում է։ Զինամթերքը սպառվում է և ստանալով Ահմեդ բեկի հավաստիացումը, որ հայդուկների նկատմամբ ոչ մի ոտնձգություն ու բռնություն չի կատարվի, Արխանյանը հանձնվում է ոստիկանությանը։ Նրան տանում են Երզնկա և դատապարտում 12 տարվա բանտարկության։ Նա բանտում էլ մեռնում է 1905 թ. նոյեմբերի 18-ին։

Ինքնապաշտպանական կռիվների ու հայդուկային շարժման էությունը հասկանալու համար տեղին են Ստ. Շահումյանի խոսքերը. «Թող չասեն, որ լինում են պայմաններ, երբ կռիվը անհնարին է, կամ անմիտ բան է։ Չկա այն զորեղ թշնամին, որի դեմ կռիվն անհնար լինի, չկա այն բռնությունը, անարդարությունը, որի դեմ բողոքը անմիտ բան լինի։ Կռվողն այն դեպքում չի կռվում միայն, երբ նա համոզված է, որ ինքը կհաղթի, նա չի կռվում միայն հաղթելու համար։ Նա կռվում է, որովհետև չի կարող չկռվել, նա կռվում է երբեմն մեռնելու համար»[19]։

* * *

XIX դարի 80-ական թվականներին, կապված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ, ձևավորվեցին հայ ազգային քաղաքական կուսակցությունները. արմենականները՝ 1885-ին, հնչակյան կուսակցությունը՝ 1887-ին և դաշնակցությունը՝ 1890-ին։

1892 թ. Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան», որն Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը կապում էր միայն ընդհանուր ապստամբության գաղափարի հետ։ Հայ առաջին մարքսիստները

արևմտահայության ազատագրման գործը տեսնում էին Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավորական մյուս խավերի հեղափոխական շարժումների հետ միասնության մեջ։

Ըստ թուրքական պատմագրության, Արևմտյան Հայաստանում կատարվող բոլոր իրադարձությունների կազմակերպիչն ու ոգեշնչողը հայ ազգային քաղաքական կուսակցություններն էին՝ արմենականները, հնչակյանները և դաշնակցությունը։ Դա մտացածին ու սխալ կարծիք է։ Նախ, օսմանյան բռնությունների դեմ պայքարը շատ ավելի վաղ պատմություն ուներ, քան այդ կուսակցությունների երևան գալը։ Հայդուկային շարժումը ևս, որ գյուղացիության տարերային պայքարի ծնունդն էր, ձևավորվել էր շատ ավելի վաղ, քան այդ կուսակցությունները։ Այլ հարց է, որ հետագա տարիներին դրանք հայդուկային շարժման լայն ճանաչում ունեցող մի շարք ղեկավարների անդամատոմս տվին և, աշխատավորական դանդվածների շրջանում իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով, նրանց ամենուրեք ներկայացնում էին որպես իրենց կուսակցության ակտիվ գործիչներ։ Ինքնապաշտպանության և ֆիդայական շարժման որոշ ղեկավարներ համագործակցում էին այդ կուսակցությունների հետ, որովհետև հույս ունեին նրանց միջոցով ու օգնությամբ զենք ստանալ։

Մասնավորապես, դաշնակցությունն ամեն կերպ աշխատում էր իր ձեռքը վերցնել հայդուկային շարժման ղեկավարությունը, սակայն պայքարի նպատակների ու մեթոդների հարցում դաշնակցության ու հայդուկային շարժման միջև լուրջ տարաձայնություններ ու հակասություններ կային։ Դաշնակները, օրինակ, Սասունում ծավալված շարժումները դիտելով որպես համահայկական ազատագրական շարժման բաղկացուցիչ մաս, ձգտում էին դրանք ուղղակիորեն ենթարկել իրենց քաղաքական նպատակներին։ Դաշնակցությունը Արևմտյան Հայաստանի բնակավայրերում և, մասնավորապես, խոշոր կենտրոններում ստեղծում էր կուսակցական խմբեր, զինամթերքի պահեստներ և մարտական ջոկատներ։ Նա օսմանյան տիրապետության դեմ ապստամբական բնույթի այնպիսի տեսական կոիվներ էր նախապատրաստում, որոնք հարկադրեին մեծ տերություններին իրենց հովանավորության տակ առնելու Հայկական դատը։ Դրա համար էլ նա ձգտում էր հայդուկային շարժումների մակընթացությունները ու տեղատվությունները որոշել Օսմանյան կայսրության նկատմամբ մեծ տերությունների դիվանագիտական ակտիվության աստիճանով, կամ ելնելով հայկական այլ շրջաններում իր կողմից իրականացվող միջոցառումների շահերից։ Սակայն և՛ դաշնակները, և՛ հնչակյանները համազգային ապստամբության և հեղափոխական կոիվների մասին սխալ պատկերացում ունեին։ Նրանց համար հեղափոխական գործունեությունը ոչ թե ժողովրդի ուժերի համախմբում էր, այլ մի բուռ մտավորականների ու կոմիտեականների դավադրական գործունեություն։

Դաշնակցական կուսակցության 1892 թ. տեղի ունեցած առաջին համագումարը կուսակցության նպատակը հռչակեց «Թուրքահայ Հայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն»։ Այդ նպատակին հասնելու համար դաշնակցությունը «կկազմակերպի հեղափոխական խմբեր, որոնք կառավարության դեմ անընդհատ և ղորեղ կոիվ կմղեն»[19]։

Ստ. Շահումյանը նշում է. «...մենք հակառակ ենք եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականությանը...»։ Այդ քաղաքականությունը հայ ազգի համար ստեղծեց «միայն դժբախտություն, կոտորածներ ու ավերումներ»[20]։

Ֆիդայական շարժումը, ի տարբերություն վերը նշված կուսակցությունների, չուներ որոշակի հեռանկար նախատեսող քաղաքական ծրագիր։ Հայդուկները վրեժխնդիր էին լինում հայ ժողովրդին հասցված բազում վայրագությունների համար և իրենց գործունեությամբ վառ էին պահում նրա ազատատենչ ոգին։ Նրանք կյանքի փորձով դիտեին, որ հայ ժողովրդի այդ հատվածի զոյատևումը հնարավոր է միայն դահճի դեմ զինված պայքարի միջոցով։ Նրանք համոզվել էին, որ Արևմուտքի պետությունների վրա հույս դնելը միամիտ պատրանք է, որ միակ իրական ուժը Ռուսաստանն է և այնտեղ բարձրացող դեմոկրատական շարժումը։ Հայ ժողովրդի դեմոկրատական խավերը հավատացած էին, որ «Հայկական հարցի լուծման բանալին գտնվում է ոչ թե Լոնդոնում կամ էլ Բեռլինում, այլ՝ Պետրոգրադում»[21]։

Հայդուկային շարժումը իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու նպատակով, դաշնակցությունը հայդուկային խմբերում աշխատանքի էր ուղարկում իր առաջատար գործիչներին։ Որոշ տեղերում և որոշ ժամանակահատվածներում դաշնակցությանը հաջողվեց վերահսկողության տակ առնել ազգային-

ազատագրական ջոկատների գործունեությունը։ Սակայն նրանց այդպես էլ չհաջողվեց հայդուկներին իրենց ենթարկել նրա գլխավոր օրրանում՝ Սասունում։ Դրա հետևանքով հայդուկների ու դաշնակների միջև երբեմն բախումներ էին առաջանում։

Բացի այդ, եթե ֆիդայական շարժման համար բնորոշը պարտիզանական կռիվներն էին, ապա դաշնակցության համար կազմակերպչական աշխատանքը՝ ապստամբության նախապատրաստությունը, ինչպես նաև ցուցադրական կռիվներն ու ահաբեկչությունները։ Հայդուկային շարժման մի այնպիսի ռահվիրա, ինչպիսին Հրայրն էր (Արմենակ Ղազարյան), խստորեն քննադատում էր կուսակցություններին ազգային ուժերը չլատելու համար։

Արևմտահայության հարցում ի սկզբանե գծագրվեց երկու մոտեցում։ «Հայկական հարցը,— գրում է Կ. Պոլսում ռուսական դեսպան Նելիդովը,— մեր առջև կանգնած է իր երկակի բնույթով, առաջինը, որպես Ասիական Թուրքիայի ողբալի վիճակում գտնվող ճնշված և ունեզրկված գյուղական և քաղաքային բնակչության դժգոհություն՝ ուղղված օսմանյան լծի և հարևանների ճնշման դեմ, և երկրորդ՝ որպես հիմքից զուրկ, ագիտատորների հակակառավարական դավադրություն, որը ելնում է ամենածայրահեղ գաղափարներից և խնդիր է դնում քաղաքականապես միավորել բոլոր հայերին և ստեղծել անկախ հանրապետություն»։ Նելիդովը նկատում է, որ առաջին դեպքում հայկական շարժմանը պետք է համակրանք ցույց տալ և «հնարավորին չափ օգնել, մանավանդ որ նրա մասնակիցները իրենց հույսը գլխավորապես կապում են Ռուսաստանի հետ, իմանալով, թե ինչպիսի անշահախնդիր ինքնազոհողությամբ մենք մեր արյան գնով ազատագրել ենք Թուրքական լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին»[22]։

Չնայած իր մեծապետական շահադիտական ելակետին, Նելիդովը հիմնականում ճիշտ է նկատել արևմտահայության ազատագրական շարժման մեջ եղած երկու ուղղություններն ու հոսանքները։

Հայդուկների ու նրանց շարժման մասին գոյություն ունեն երկու իրարամերժ կարծիքներ։ Ոմանք, և առաջին հերթին այդ շարժման մասնակիցներն ու ժամանակակիցների մի մասը, գերագնահատում են նրա դերը և գտնում, որ հայդուկային խմբերը ի վիճակի էին դեռ երկար ժամանակ մաքառելու և խո-

չընդոտելու կոտորածները, եթե չլինեին սուբյեկտիվ բնույթի գործոնները։ Մյուսները, այդ թվում նաև որոշ մասնագետ պատմաբաններ, նսեմացնում են, իսկ ոմանք նաև խեղաթյուրում են այդ շարժման նշանակությունը, նրան վարկաբեկիչ գնահատականներ տալիս և ձգտում են մեր ժողովրդի նոր շրջանի պատմությունից այն «դուրս մղել», չնկատել։

Հատկապես վերջին տարիներին բուրժուական պատմագրությունը հրապարակ է նետել ու համառորեն թմբկահարում է հայդուկային շարժումը բնութագրող մի այլ մոտեցում՝ այդ շարժումը ներկայացնելով որպես ահաբեկչություն, իսկ հայդուկներին՝ ահաբեկիչ-տեռորիստներ։ Թուրք պատմաբաններն աշխատում են ընդհանուր գծեր գտնել հայդուկների և արտասահմանում բնակվող այն հայերի միջև, որոնք վերջին տարիներին թուրքական դիվանագետներից մի քանիսին տեռորի ենթարկեցին։ Նրանք ուղղակի պնդում են. «XIX դարի վերջին ձևավորված հայկական տեռորը շարունակվում է»։ 1983 թ., հանդես գալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նիստում, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց. «Այսօր, ինչպես մեր դարի առաջին տարիներին, հայ տեռորիստները նպատակ ունեն կատարելու նոր ցեղասպանություններ»[22]։ Նման հայտարարությունը կարելի է որակել մեկ բառով՝ կեղծիք։

Թուրք քաղաքական գործիչներն ու պատմաբանները ցանկանում են խաբել համաշխարհային հասարակայնությանը, որ իբր նախկին տեռորիստները (կամ հայդուկները) ժամանակակից հայ տեռորիստների նման սպանում էին անմեղ թուրքերի, և դրա համար էլ օսմանյան կառավարությունը հարկադրված էր բռնի միջոցների դիմելու նրանց ու նրանց համախոհների նկատմամբ։ Եվ հայերի կողմից թմբկահարվող «1915 թ. եղեռնը այլ բան չէր, եթե ոչ նման միջոցառումներից մեկը»։

Թուրքական ռադիոյի արաբերեն լեզվով տրվող «Հայկական թղթապանակ» հաղորդաշարի ապրիլի 8-ի թողարկման մեջ կարդում ենք, որ Կ. Պոլսի հայկական պատրիարքարանում 1878 թ. հրավիրված ժողովներում՝ արտահայտված մտքերը «ահաբեկչական շարժումների բուն էությունն են, որոնք սկսվեցին XIX դարի վերջին և շարունակվում են ցայսօր։ Ավելի ճիշտ, գաղութատիրական գաղափարախոսությունը հիմնական դեր խաղաց հայ ահաբեկչության երևան գալու գործում»։ Մայիսի 27-ի թողարկման մեջ կարդում ենք. «Ռուսաստանի հրահրումները պատ-

հառ դարձան, որ Թուրքիայում ապրող հայերի մեջ զավթողական ոգի առաջանա... Այս քաղաքականության շրջանակներում Անատոլիայի արևելքում կազմակերպվեցին հայկական որոշ ավազակախմբեր։ Վանում հիմնադրվեցին «Սև խաչ» և «Արմենական», իսկ Էրզրումում «Պաշտպան Հայրենյաց» ավազակախմբերը... Նրանք ժամանակի ընթացքում անհետացան հայ ժողովրդի մեծամասնության համակրանքը չշահելու պատճառով, մի ժողովուրդ, որ գոհ էր օսմանյան իշխանություններից, բարգավաճում էր ու ապրում խաղաղ... հայկական ավազակախմբերը սկսեցին ըմբոստության կրակ վառել երկրի տարբեր շրջաններում։ Այդ ըմբոստությունները սկզբնական շրջանում ղեկավարում էր հնչակյան ավազակախումբը, ապա դաշնակցականը։ Ըմբոստանալու բոլոր փորձերը ծրագրվում ու ղեկավարվում էին արտասահմանից»։

Հատկանշական է, որ Թուրքական այդ բարբաջանքները իրենց արձագանքներն են գտնում իմպերիալիստական պրոպագանդայում։ Այսպես, ամերիկյան պատմաբան Լոուրին գրում է, որ ընդհանուր նմանություն «կա այսօրվա և XIX դարի վերջի ու XX դարի սկզբների (հայկական) ահաբեկչական կազմակերպությունների ձգտումների, նպատակների ու տակտիկայի միջև»։ Նրա կարծիքով, «Ինչպես XIX դարի, այնպես էլ ժամանակակից հայկական ահաբեկչությունը նպատակ ունի Արևելյան Անատոլիայում ստեղծել անկախ Հայկական պետություն»։ Դա այսօր շատ ավելի անհնար է, «քան 100 տարի առաջ։ Հայերն ի վիճակի չեն լրջմիտ գնահատելու իրականությունը, նրանք չեն հասկացել և չեն հասկանում, որ ուժեղ Թուրքական պետությունը երբեք չի բավարարի ահաբեկիչների մի ողորմելի խմբի պահանջները», հետևաբար հայկական ահաբեկչությունը զուրկ է «տարրական տրամաբանությունից»[23]։

Լոուրին այնուհետև նշում է, որ «եթե հայ ահաբեկիչներն իրենց անմիջական թշնամիների հետ բախման մեջ հաջողություն չունեցան, ապա նրանք, համենայն դեպս, կարողացան վախի ու սարսափի զգացմունք առաջացնել իրենց՝ հայերի, հայկական համայնքի մեջ, որի անունից նրանք իբր թե հանդես էին գալիս»։ Լոուրին հարվածը հայ ահաբեկիչներից շուռ է տալիս ամբողջ հայ ժողովրդի վրա։ Նա ցիտում է ԱՄՆ-ում լույս տեսնող «Արմենիա Ուիկլի» թերթի խմբագիր Գ. Տոնապետյանի խոսքերը. «Որպես հայ ես դեմ եմ ահաբեկչությանը։ Բայց ամեն

ինչ պատճառ ունի։ Ահաբեկչությունը միգուցե ճիշտ է։ Չէ՞ որ նա հրեաներին օգնեց։ Նրանք ստացան իրենց Իսրայելը»։ Ահա թե ինչու, եզրակացնում է Լոուրին, «Ամեն մի ահաբեկչության փաստից հետո այս կարծիքը առաջ է մղվում հայկական մեծ թվով կրոնական, գիտական և քաղաքական գործիչների կողմից։ Ահաբեկիչներն իրենց գործողություններն արդարացնում են նրանով, որ նրանց նախնիները զոհ են դարձել պատմական անարդարության»։ Ապա Թուրքական աղբյուրներից վերցրած սուտ ու պատիր փաստերով նա «հերքում է» 1915 թ. հայկական ցեղասպանությունը։ Լոուրին գտնում է, որ այդ տարիներին «անատոլիական մահմեդականներ ավելի շատ են սպանվել, քան հայեր։ Բայց դա նման չէր եղեռնի»[24]։

Լոուրին ու նրա գործընկերները ստում են։ Իրականում, ահաբեկչությունը հայ ինքնապաշտպանական կռիվների և հայդուկների դեմ օսմանյան իշխանությունների պայքարի ամենահաճախ օգտագործվող մեթոդն էր։ Բացի այն դեպքերից, երբ հայդուկների դեմ հանվում էին բանակ ու ոստիկանությունը, բոլոր մյուս դեպքերում (տարիներ ու տասնամյակներ շարունակ) Թուրքական իշխանությունները հայդուկների ղեկավարներին ֆիզիկապես ոչնչացնելու համար մեծ գումարներ էին խոստանում, պրոֆեսիոնալ մարդասպաններին գլխագին առաջարկում։ Նման միջոցներով նրանք սպանեցին ամենանշանավոր հայդուկապետերից մեկին՝ Աղբյուր Սերոբին, մահափորձեր կազմակերպեցին Գևորգի ու Անդրանիկի դեմ։ Եվ ընդհանրապես, Թուրքիայում պետական տեռորիզմը միշտ հարգի է եղել և այսօր էլ հարգի է։ Ինչ վերաբերում է ֆիդայիներին, ապա նրանք չնայած տեռորը որպես պայքարի մեթոդ չէին մերժում և որոշ դեպքերում ու պայմաններում այն օգտագործում էին, բայց երբեք այն նրանց պայքարի գլխավոր մեթոդը չի եղել։ Հայդուկների գործունեության հիմնական և գլխավոր մեթոդը պարտիզանական կռիվներն էին։

Թուրքական պատմագրությունը ինքնապաշտպանական կռիվների և հայդուկային շարժման մեջ ճգնում է տեսնել միայն ազգային նպատակադրումներ։ Մինչդեռ այդ շարժումը ոչ միայն ազգային, այլև իր հիմքում նաև դասակարգային էր։ Այդ շարժումը գյուղացիական էր, նրա գլխավոր ուժը գյուղացիությունն էր և այն էլ՝ աղքատ ու միջակ գյուղացիությունը։ Շարժումն

ուղղված էր ոչ միայն թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության, այլ նաև թուրք ու քուրդ բեկերի, շեյխերի, փաշաների, աղաների, հոգևոր ու աշխարհիկ մյուս ֆեոդալների ճնշումների, շահագործման ու հարստահարությունների դեմ։ Այստեղ դասակարգայինը ազգային պատյանի մեջ է մտած այն հասկանալի պատճառով, որ ազգային ճնշման վերացումը միաժամանակ նշանակում էր իշխող խավերի շահագործման ու հարստահարությունների վերացում։

«Մակեդոնիայում,— գրում է Վ. Ի. Լենինը,— կալվածատերերը... թուրքեր և մահմեդականներ են, իսկ գյուղացիները՝ սլավոններ և քրիստոնյաներ։ Դրա համար էլ դասակարգային հակասությունները սրվում են կրոնական և ազգային հակասություններով»[25]։

Ուշագրավ է, որ Արևմտյան Հայաստանում բնակվող տարբեր ազգությունների աշխատավորներ որոշ դեպքերում համատեղ էին հանդես գալիս իրենց հարստահարողների դեմ։ Այսպես, 1880 թ. մայիսի 31-ին Մուշի սովահար հայերն ու թուրքերը միավորվելով գրավում են պետական ամբարների հացը։ Եվ, երբ կառավարությունը փորձեց բանտարկել հայերին, մահմեդականները հայտարարեցին, որ իրենք թույլ չեն տա հայերին ձեռք տալ։ «Հայերը մեր եղբայրներն են... մենք ամենքս նեղացած տանջվում ենք կառավարության ձեռքից»[26]։

Բիթլիսի գավառի 32 հայկական և քրդական գյուղեր միացյալ բողոք ներկայացրեցին իշխանություններին՝ ընդդեմ աղաների կեղեքումների։

Հայ, թուրք և քուրդ աշխատավորության դասակարգային համերաշխության այս և շատ այլ օրինակներ ևս հաստատում են, որ թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը, այդ թվում հայդուկային շարժումը, կրում էր ոչ միայն ազգային, այլև ինտերնացիոնալ ու դասակարգային բնույթ։

Սակայն պատմական տվյալ ժամանակաշրջանում քուրդ և թուրք աշխատավորության հետամնացությունը, կրոնական մոլեռանդությունը և Օսմանյան կայսրությունում տիրող քաղաքական մթնոլորտը անհնար դարձրին հայերի հետ քուրդ ու թուրք աշխատավորության համերաշխությունը, իշխող դասակարգերին հնարավորություն տվեցին հայերի հարստահարությունների, ոչնչացման ու նրանց ունեցվածքի թալանի մեջ

ներգրավել մահմեդական աշխատավոր զանգվածների ստվար մասին։

Թուրքիայում ֆեոդալական հարաբերությունների կայունությունը, աշխատավորական զանգվածների վրա մահմեդական հոգևորականության և բյուրոկրատական պաշտոնեության հրամայական ազդեցությունը նրանց զրկել էին իրենց դասակարգային շահերի համար պայքարելու և հասարակական կյանքում ինքնուրույն հանդես գալու կարողությունից։ Այդ նույն պայմանները թուրք աշխատավորության շրջանում տեսաբար ու անդադար ներարկում էին շովինիստական հոգեբանություն, որն իր հերթին ուժեղացնում էր այդ զանգվածների կախվածությունը պետական իշխանությունից, ֆեոդալներից ու հոգևորականներից, նրանց թշնամաբար տրամադրում քրիստոնյաների նկատմամբ։

* * *

XIX դարի վերջին երեք տասնամյակները և XX դարի առաջին քառորդը Թուրքիայում հայերի զանգվածային ու հետևողական ոչնչացման ժամանակաշրջանն էր։ Տարբեր ժամանակահատվածներում կիրառվել են ոչնչացման տարբեր ձևեր ու մեթոդներ, բայց եղեռնը ոչ մի օր և ոչ մի ժամ կանգ չի առել։

Ցեղասպանության մեթոդների փոփոխությունը շատ հաճախ կատարվում էր համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու համար և, դժբախտաբար, նույնիսկ հայերի մեջ գտնվեցին մարդիկ, որոնք խաբվեցին և կուլ գնացին սուլթանի խորամանկություններին։ Որպես օրինակ, բերենք Սասունի 1894 և 1904 թթ. դեպքերը։

Հայագիտական որոշ աշխատություններում այդ իրադարձությունները անվանում են ապստամբություններ։ Ի դեպ, առաջինը անվանվում է նաև Հնչակյանների ապստամբություն, այսինքն՝ այդ իրադարձությունների կազմակերպիչն ու ղեկավարը Հնչակյան կուսակցությունն էր։ Իսկ Սասունի 1904 թվականի իրադարձությունները համարում են դաշնակների ապստամբություն։ Մինչդեռ իրականում դրանք ոչ թե ապստամբություններ էին, այլ ինքնապաշտպանական կռիվներ։

Օսմանյան կառավարությունը նպատակ ուներ Սասունը դատարկել հայերից, ոչնչացնել տեղի հայ ազգաբնակչությանը։

Սասունցիները դա քաջ գիտեին և հերոսամարտի բարձրացան ոչ թե անկախություն ձեռք բերելու, ոչ թե իրենց տնտեսական ու քաղաքական վիճակը բարելավելու, այլ ապրելու, գոյատևելու իրավունքի համար։

Բնական է, որ կենացումահու կռվում քաղաքական հայացքներն ու տարընթացությունները հետին պլան են մղվում, և ժողովուրդը կազմակերպում է իր բոլոր ուժերն ու հնարավորությունները՝ յաթաղանին հակահարված տալու, իր կյանքն ու պատիվը փրկելու համար։ Ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչն ու ղեկավարը ոչ միայն այս կամ այն քաղաքական կուսակցությունն էր, այլև ինքը՝ ժողովուրդը, նրա ապրելու, գոյատևելու ձգտումը։ Ժողովրդի ինքնահամախմբման ընթացքում ծնվում ու հասակ էին առնում շարժման ղեկավարներն ու առաջնորդները։

Որ Սասունում 1894 և 1904 թվականներին ապստամբություններ են տեղի ունեցել, պատմական իրադարձությունների կեղծիք է, և այդ կեղծիքի ծննդավայրը Նլտզն էր՝ օսմանյան արքունիքը։ Կեղծիքի նպատակն էր՝ Սասունի եղերական իրադարձությունների պատասխանատվությունը գցել հայերի վրա։

1. Մշակ, 1879, № 191։
1 ա. Փորձ, 1879, № 7—8։
2. Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 270—271։
2 ա. Մասիս, 1879, № 2224։
3. Մշակ, 1878, № 28։
4. Մշակ, 1880, № 161։
5. Մ. և Ս. Բդեյան, Հարազատ պատմություն Տարոնո, Կահիրե, 1962, էջ 74։
6. Մ. Նալբանդյան, եկժ, ե., 1941, հ. 3, էջ 23—24։
7. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 74։
8. Հայրենիք, 13 հուլիսի 1985 թ.։
9. Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, պրակ 10, Թուրքիա, ե., 1979, էջ 152։
10. Հայրենիք, 28—29 հոկտեմբերի 1985 թ.։
11. Դրոշակ, 1894 թ. հոկտեմբեր։
12. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 154.
13. Լեո, Թուրքահայ հեղափոխության..., հ. Ա, էջ 175։
14. Ժ. Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, Բոստոն, 1947, էջ 340։
15. Արմենիեն Ռեպորտեր, 7—14 հունիսի 1984 թ.։

15ա. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 11—12.
16. Լեո, Թուրքահայ հեղափոխություն..., հ. Ա, էջ 69—70։
17. Նույն տեղը, էջ 21։
17 ա. Հ. Թումանյան, եԺ, հ. 4, ե., 1958, էջ 318։
18. Հնչակյան Ս. Դ. կուսակցության պատմություն։ Բեյրութ, 1962, էջ 108։
19. Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, ե., 1955, էջ 38։
19 ա. Երազիր Հ. Հ. դաշնակցության, ժնև, 1906, էջ 11 և 14։
20. Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, ե., 1957, էջ 407։
21. Ե. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, ե., 1976, էջ 95։
22. Նույն տեղը, էջ 103։
22ա. Թուրքական հեռուստատեսություն, 1983 թ., հոկտեմբերի 13։
23. Արմենիեն Ռեպորտեր, 7—14 հունիսի 1984 թ.։
24. Նույն տեղը։
25. Վ. Ի. Լենին, եԼժ, հ. 22, ե., 1979, էջ 226։
26. Մշակ, 12 հունիսի 1880 թ.։

ՍԱՍՈՒՆԻ ԳՈՅԱՄԱՐՏՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Օսմանյան կայսրության իշխող դասակարգերը գտնում էին, որ կայսրությունը տնտեսական, քաղաքական և սոցիալական ճգնաժամից դուրս բերելու համար անհրաժեշտ է գործնական հողի վրա դնել պանօսմանիզմի քաղաքականությունը։ Այդ նշանակում էր իրականացնել խալիֆայի շուրջը աշխարհի բոլոր մահմեդականների համախմբման գաղափարախոսական-քաղաքական կուրսը, որը հզոր միջոց կդառնար օսմանյան նոր աշխարհածավալ տերություն ստեղծելու համար։

Այս հեռու դնացող պլանների իրագործման նախապայմանը կայսրության ներքին կոնսոլիդացիան էր, որ նշանակում էր շովինիստական-ռասիստական կրքերի բորբոքման միջոցով հետին պլան մղել դասակարգային ներհակությունները և իսլամի դրոշի տակ միավորել, անկախ դասակարգային պատկանելությունից ու սոցիալական վիճակից, բոլոր մահմեդականներին։

Այս խնդրի լուծման համար որպես առաջին քայլ ընտրվեց ֆիզիկական բնաջնջման միջոցով կայսրությունը հայերից դատարկելու քաղաքականությունը։

XIX դարի վերջին տասնամյակը պետք է դառնար հայերի բնաջնջումն իրականացնելու համար էական նշանակություն ունեցող ժամանակաշրջան։ Որոշվեց այդ քաղաքականության կիրառումը սկսել Սասունից, որովհետև ա) Սասունը իր կիսանկախ դրությամբ նկատելի աղդեցություն էր գործում արև-

մրտահայության վրա, հայերի շրջանում ուժեղացնում ազատագրական տրամադրությունները, բ) Սասունը հեռավոր ծայրամաս էր, կտրված միջազգային կապեր ունեցող շրջաններից, իսկ դա հնարավորություն էր ընձեռում բնաջնջման քաղաքականությունն իրականացնել «գաղտնի», խուսափել արտաքին աշխարհի հակազդեցությունից և մեծ տերությունների միջամտությունից, գ) Սասունն ընկած էր Քրդստանը Հայաստանի հետ կապող ուղու վրա և այնտեղ, ավելի քան որևէ այլ տեղ, գործնական հնարավորություն կար քրդերին հեշտությամբ հայերի դեմ հանելու համար։

Եվ այսպես, Սասուն...

1891 թիվ... Թուրքական իշխանությունները Սասունը հայտարարեցին ապստամբ շրջան և նրան հարող գավառներում ռազմական ուժեր կենտրոնացրին, որոնք չնայած երկչոտ, բայց հետևողականորեն ձգտում էին թափանցել լեռնաշխարհ և իրենց ձեռքը վերցնել ստրատեգիական կարևոր կետերը։ Սասունի ու սասունցիների գլխին մահաբեր վտանգն էր կախվել։

Որոշելով ոչնչացնել Սասունի ազգաբնակչությունը, օսմանյան կառավարությունը վճռեց այդ անել քրդերի ձեռքով ու նրանց սրյան գնով՝ «թող քրդերը սպանեն հայերին, հայերը՝ քրդերին։ Իսկ անհրաժեշտության դեպքում կմիջամտի բանակը՝ հայերի ոչնչացումն ավարտելու համար»։

1891 թվի գարնանը Թիֆլիսի կուսակալ Թահսին փաշան Զիլանի և Տատերիկի շեյխերին սուլթանի անունից հրամայեց հայերի դեմ կրոնական պատերազմ սկսել հարավից։ Շեյխերը համաձայնվեցին, բայց կրոնական պատերազմը ոչ 1891 թ. և ոչ էլ հաջորդ տարում չստացվեց, որովհետև քրդերի զգալի մասը հրաժարվեց նրան մասնակցել։ Ճիշտ է, որոշ աշիրեթապետեր, թալանի ակնկալիքով, տեղական բնույթի մի շարք հարձակումներ կատարեցին, բայց ընդհանուր առմամբ քրդերին հայերի դեմ հարձակման տանելու գործը տապալվեց։ Ընդհակառակը, եղան դեպքեր, երբ Սասունի այս կամ այն գյուղի կամ շրջանի հայերն ու քրդերը միավորվեցին՝ թուրքական հարձակմանը դիմակայելու համար։

Այդուհանդերձ վտանգը մոտալուտ էր։

Տալվորիկցի Գասպարն ու տանն էին հավաքվել շրջակա գյուղերի ներկայացուցիչները։ Թշնամին հարձակում էր նախապատրաստում Վերին Սասունի վրա, և նրանք հավաքվել էին իրենց

անելիքները որոշելու համար։ Բանն այն էր, որ նախորդ տարիներին թուրքերը խուսափում էին Վերին Սասուն բարձրանալուց, և այս շրջանը ազատ էր ասպատակություններից ու թալանից։ Եվ, եթե թուրքերը որոշել էին հասնել մինչև Տալվորիկ, ապա սպասվում էր ոչ թե մասնակի, տեղական բնույթի, այլ՝ ընդհանուր հարձակում։ Ժողովը միահամուռ էր մի բանում՝ ամեն ինչ պետք է արվի, որպեսզի թշնամին հակահարված ստանա ու հետ շպրտվի ոչ թե Տալվորիկի, այլ Սասունի մատույցներից, որ հնարավորություն կտար, առանց խաթարելու լեռնաշխարհի կյանքը, տևական դիմադրություն ցույց տալ։

Դրա համար անհրաժեշտ էր ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծել նաև Դաշտի, այսինքն Տարոնի գյուղերում։ Դրրսից զենք ստանալու հույս չկար։ Ուրեմն պետք էր տեղում կազմակերպել զենքի արտադրությունը, զինել ժողովրդին ու պարտիզանական կռիվներ մղել։

Եթե նախկինում թուրքական իշխանությունները միայն թույլատրում էին աշիրեթապետերին թալանելու հայկական գյուղերը, ապա այժմ նրանք քրդերին պարտադրում էին այդ գործով զբաղվել։ Դրա համար էլ ժողովը որոշեց թուրքական ռազմական ուժերի դեմ կռիվների ծանրությունը դնել հայդուկների վրա, իսկ գյուղերում գործող ինքնապաշտպանական ջոկատները պետք է հակահարված տային աշիրեթությունների ոտնձգություններին, թույլ չտային, որ նրանք ավերեին, կոտորեին ու թալանեին։

Տարոնի հայությանը սովի մատնելու նպատակով իշխանությունները բռնագրավել ու մահմեդականներին էին բաժանել նրանց հացի պաշարները։ Սովն ու համաճարակը տառապիորեն հնձում էին Դաշտի հայ ազգաբնակչությանը։ Տարոնի բնակչության մի մասը, փախչելով սովի ու հիվանդության ճիրաններից, բարձրացել էր Սասուն։

Լուր ստացվեց, որ Շենիկ գյուղի շրջակայքում Մամկան աշիրեթությունը վտանգավոր վիճակ է ստեղծել Շատախի հայկական գյուղերի համար։

Գևորգն իր խմբով շարժվեց Շենիկ։ Դեռ Ալիանք գյուղին չհասած հայդուկները նկատեցին, որ մոտ 100 հոգուց բաղկացած քրդական մի ջոկատ դեպի հանդիպակաց կիրճն էր քշում Ալիանքի ոչխարների հոտը։ Եթե նրանց հաջողվեր ոչխարներն

անցկացնել կիրճի մյուս ափը, այլևս ոչինչ անել հնարավոր չէր։ Գևորգն իր խմբով անմիջապես անցավ կիրճի դիմացի ժայռերը, ու երբ քրդերը երևացին, ընկան ջոկատի կրակի տակ և զոհեր տալով հետ քաշվեցին։ Հաջողության նժարը հափշտակիչների կողմն էր թեքվում, երբ զանթափին դաշույններով ու մանգաղներով զինված կանանց խումբ երևաց և աղմուկ աղաղակով շարժվեց դեպի հակառակորդը։ Վերջիններս լքեցին իրենց դիրքերը։ Այդ ժամանակ վրա հասավ շենիկցի Գրգոյի՝ Գրիգոր Մոսեյանի ջոկատը։ Թշնամին այլևս անկարող էր դիմադրել և, թողնելով երկու տասնյակից ավելի դիակներ, դիմեց փախուստի։

Մի քանի օր անց Ծովասարի շրջանում հայերը հետ շպրտեցին քրդերի հարձակումը ու նրանց դուրս քշեցին Ծովասարից։ Տևական կռիվների մեջ էին Խուլբի շրջանը, Տալվորիկ և Գելիեզուզան գյուղերը։ Մուշի ու Սասունի սահմանագլխին ընկած Ֆատրագոմ գյուղի բնակիչները, Հովհանի գլխավորությամբ, հարձակվում են գյուղ ներխուժած զափթիեների ու համիդիեի ջոկատի վրա ու նրանց դուրս քշում։ Երբ թշնամին հարձակվեց Բուլանրխի խարաբալար գյուղի վրա, հայերը նրանց դեմ դուրս եկան։ Ընդհարումն ավարտվեց հայերի հաղթանակով։

Մի այլ աշխատություն հարձակվում է Շիրվանշեն հայկական գյուղի վրա՝ չվճարված հարկերը հավաքելու նպատակով, բայց, հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, հեռանում է։

Նման ընդհարումներ եղան նաև Խնուսի Ղարաչորան և Գովնատակ, Տարոնի դաշտի Հերկերտ, Ղզլաղաճ և մի քանի այլ գյուղերում։

Եվ ամեն անգամ, երբ հայերը հետ էին շպրտում աշխատությունների հարձակումները, հրապարակ էր նետվում թուրքական ոստիկանությունը, որը Մ. Տամատյանին փնտրելու պատրվակի տակ շարշարում ու խոշտանգում էր գյուղացիներին։

Այսպես անցավ 1891 թվականը։

* * *

Եկավ 1892 թվականը։ Օգտվելով Սասունի ձյունաշատ ձմռան ընձեռած հնարավորություններից, սասունցիները տենդագին նախապատրաստություններ էին տեսնում, քաջ գիտակցելով, որ գարնանը թշնամին վերսկսելու է հարձակումը։

Այդպես էլ եղավ։ Գարունը դեռ նոր էր բացվել, երբ ոստիկանական մի վաշտ երևաց Մերկեմողանում, երեք վաշտեր՝ Հաջի Ֆահիմի, Իսկենդեր և Ռուշիդ բեկերի հրամանատարությամբ մտան Շատախի գյուղերը։

Սեմալ գյուղում 1893 թ. ձերբակալվեց հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Մ. Տամատյանը։ Թուրքերը նրան սկզբում դատեցին, իսկ ապա ազատ արձակեցին։ Արաբոյին բռնել չհաջողվեց։ Սասունցիներն այդ թույլ չտվեցին, թաքցրեցին ժողովրդական վրիժառուին։ Իշխանությունները սա ևս համարեցին հեղափոխական տրամադրություններից բխող խռովություն, որ օր առաջ պետք էր ճնշել։ Եվ Սասուն ուղարկվեցին Երզնկայի 19-րդ ու Մուշի 22-րդ հեծյալ գումարտակները։ Էրզրումից բերվեց մի գումարտակ երկու թնդանոթներով։ Գարնանը համարյալ Սասուն բարձրացան նաև ոստիկանական ջոկատները։ Միաժամանակ կառավարության պահանջով հարավ-արևմուտքից դեպի Սասուն շարժվեցին Տիգրանակերտի աշխատությունները։ Նրանց միացան Խուլբի ու Խիանքի քրդերը։ Բագրանցի ու բատկանցի աշխատություններն ամրացան Կուրտիկի փեշերին՝ նպատակ ունենալով Սասունը մեկուսացնել Տարոնից։

Հարավից դեպի Տալվորիկ շարժվեց Հազոյի կայմակամը իր ոստիկանական ջոկատով[1]։

Ահա այդ բազմահազար ուժերի դեմ կանգնած էին շուրջ 2 հազար հայ գյուղացիներ, զինված միայն դաշույններով, կացիններով և կայծքարի հրացաններով։ Սասունցիները տեսնում էին հակառակորդի ակտիվ տեղաշարժերը, նրա ուժերի առաջխաղացումը, բայց խուսափում էին եռանդուն գործողություններից, որպեսզի թուրքերին վայրագություններ կատարելու պատրվակ չտային։

Մայիսի կեսերին Հազոյի ոստիկանական ջոկատը հասավ Տալվորիկ։ Բայց կայմակամը չհամարձակվեց մտնել Տալվորիկ։ Նա տալվորիկցիներից պահանջեց պետությանը հարկ վճարել։ Տալվորիկցիները հրաժարվեցին թուրքերի պահանջը կատարելուց։ Բնորոշ է, որ, երբ կայմակամը հարցրեց, թե ինչու կառավարությանը չեք ենթարկվում և հարկ չեք վճարում, տալվորիկցիները պատասխանեցին, որ իրենք կառավարության դեմ չեն ըմբոստանում, բայց հարկերը երկու անգամ չեն կարող վճարել՝ քրդերին և կառավարությանը։ Եթե կառավարությունը

քրդերի ոտնձգությունից իրենց պաշտպանի, հարկեր կվճարեն։ Հետաքրքիր է նաև նշել, որ օսմանյան տիրապետության ամբողջ պատմության ընթացքում սա Տալվորիկ հասած թուրքական առաջին ոստիկանական ջոկատն էր[2]։

Հարմար չէր դատարկաձեռն վերադառնալ, և կայմակամի ջոկատը բազրանցի ցեղի թափթփուկների հետ շարժվում է Սպաղանք ու Խոծոծվանք փոքրիկ գյուղերը։ Սպաղանքը շրջապատվում է։ Սպաղանքցիք Մակարի գլխավորությամբ հակահարձակման են անցնում և թշնամուն զգալի զոհեր պատճառելով հետ քշում։ Նոր հարձակումներից զերծ մնալու համար նրանք քանդում են Սատանի կամուրջը։

Հազոյի կայմակամը, տեսնելով, որ տեղի քրդերին հայերի դեմ հանել չի կարողանում, հեռանում է Վերին Սասունից։ Որոշ ժամանակ անց նա վերադառնում ու հարձակվում է Խոծոծվանք և Խնձորեսկ գյուղերի վրա։ Հայերին ու քրդերին հաջողվում է այս անգամ ևս թշնամուն հակահարված տալ ու կայմակամին գերի վերցնել, որին հետո ազատ են արձակում։ Կայմակամը հավաքելով իր ցաք ու ցրիվ ուժերը, հեռանում է դեպի Փսանք։ Այստեղ հայերն ու Շեկո ցեղի քրդերը հետապնդում են նրան ու հարկադրում հեռանալ Սասունից։

Այդ ընթացքում կառավարական զորքերը աստիճանաբար ամրանում են Կուրտիկի բարձունքներին։ Սասունցիները որոշեցին անընդհատ հակահարձակումների միջոցով թույլ չտալ թուրքերին իրենց ուժերը վերախմբավորելու և անկաշկանդ գործելու։ Այդ դիրքորոշումն իրեն արդարացրեց։ Թուրք հրամանատարությունը հասկացավ, որ Սասունում ծանր մարտեր են սպասվում և վախեցավ, առանց համալրում ստանալու, լուրջ մարտական գործողություններ ձեռնարկել։

* * *

1893 թվին սուլթանական արքունիքը նորից դիմեց ավանդական ու իրեն հարազատ մեթոդներին՝ խորամանկ խաղերին ու կաշառքին։ Բ. Դոան գանձարանի հարստություններից սկսեցին հոսել քրդական ցեղապետերի գրպանները։ Ամենակարող ոսկին իր վճռական խոսքն ասաց։ Աշիրեթապետերը մեկը մյուսի հետևից անցան թուրքերի կողմը։ Եվ երբ թուրքական բանակը 1893 թ. գարնանը շարժվեց դեպի Վերին Սասուն, նրան

միացան աշիրեթապետերն ու մոլեռանդ շեյխերը իրենց խումբանով, սրբազան պատերազմի կանչող ռմբոցներով։

Սասունը պաշարվեց։ Հայերը հարկադրված էին կռվել մի քանի ճակատով։ Սակայն հարվածի գլխավոր ուղղությունը Տալվորիկն էր։ Սասունցին «շատ դժվարությամբ է դուրս քաշում իր սուրը, իսկ երբ սուրը մերկացավ պատյանից, գործը վճռված է, նա պետք է կոտորի» (Բաֆֆի)։

«Սասուն ելավ, ապստամբեց, աշխարհում հանեց ձայն. Տալվորիկի զավակն եմ քաջ»։

Գևորգի խումբը Կուրտիկում տեսավ, որ թուրքական մի զորամաս, ամրանալով նրա բարձունքներին, իր հսկողության տակ է վերցրել ստրատեգիական տեսակետից բոլոր կարևոր կետերը, լեռնաշխարհը Տարոնի դաշտին կապող ճանապարհներն ու անցուղիները։ Կուրտիկի վրայով 150 հեծյալ և 300 հետևակ զորքով Սասուն էր բարձրանում Թահսին փաշան։ Նրան է միանում Կենճի մութեսարիֆը իր ոստիկանական վաշտով[3]։

Մուշի ոստիկանապետ Իսկենդար աղան իր վաշտերով Ղզլաղաչի վրայով անցնում էր Սասունի արևմտյան շրջանները՝ քրդական ցեղերին ոտքի հանելու նպատակով։ Չորս հարյուր հոգիանոց մի ջոկատ ամրանում էր Կոփում՝ Շատախի վրա հարձակվելու համար։ Հայդուկային խումբը Ծովասարի փեշերով շարժվեց դեպի Առաքելոց վանք։ Այստեղ նա ստուգեց իր տպավորությունները և համոզվեց, որ իսկապես, թուրքական իշխանությունները Սասունի վրա են շարժում ոչ միայն Մուշում տեղակայված զորքը, այլև Բիթլիսից, Կենճից, Հազոյից բերված զորամասերը։ Թահսին փաշայի ոստիկանական վաշտերն ընդհուպ մոտեցել էին Շենիկին։ Ժանդարմական մի քանի վաշտեր արդեն տեղավորվել էին Սեմալ գյուղում։ Համզոյի և Շեկոյի աշիրեթները շարժվում էին դեպի Ծովասարի արևելյան լանջերը, Վերին Սասուն բարձրանալու համար։ Միաժամանակ թուրքական իշխանությունները բանտարկեցին Մուշի հայկական համայնքի ավագանուն ու աքսորեցին Կարին։

Ըստ թուրքական հրամանատարության մշակած պլանի, հարձակումը պետք է սկսեին քրդերը, իսկ բանակը մարտական գործողությունների մեջ էր մտնելու միայն այն ժամանակ, երբ պարզվեր, որ քրդերի ուժերը բավարար չէին։

Թուրքական հրամանատարությունը քրդական աշիրեթապետերին հրամայում է հարձակվել Տալվորիկի վրա՝ ընդ որում

նա իր վրա է վերցնում քրդերի բոլոր սպանությունների պատասխանատվությունը և ամբողջ ավարը խոստանում է նրանց։

Չնայած աշիրեթությունները բազմամարդ էին, այնուամենայնիվ նրանց հարձակումները անկազմակերպ բնույթ էին կրում։ Բացի դա, քրդերի զգալի մասը թուրքական իշխանությունների նպատակների համար չէր ուզում արյուն թափել։ Դրա համար էլ առաջին իսկ բախումից հետո շրջվում ու հեռանում էր։ Երկու շաբաթ շարունակ, ամեն օր քրդական նորանոր ուժեր հարձակման էին անցնում և ողբալի աղաղակներով հետ էին շպրտվում։

Երբ քրդերի պարտության լուրը հասավ Կ. Պոլիս, սուլթանը կատաղությունից ջղաձգվեց. «Պետք է ոչնչացնել Սասունը»։ Այս բովանդակությամբ սուլթանական ֆերմանը Զեքի փաշային հանձնելու համար մայրաքաղաքից Բիթլիս եկան Սեյիդ բեյը և շեյխ Սուլեյմանը։ Սուլթանի հրամանի կատարումը հանձնարարվեց Բիթլիսի նահանգապետ, ավազակաբարո Հասան Թահսին փաշային, որի մեծաթիվ ուժերին միացան, ավելի վաղ Սասուն մտած, Երզնկայի և Մուշի ոստիկանական վաշտերը։

Թուրքական զորքերը հանկարծակի հարձակվում են Ավզոտ և Վարդենիս գյուղերի վրա և կոտորում գյուղացիներին. զինվորները շիկացած երկաթով տանջում և այրում էին տղամարդկանց, բռնաբարում կանանց, ձիերի սմբակների տակ ճզմում մանուկներին, կոտորում էին անասունները։ Նրանք շուրջ 100 մարդ ձերբակալեցին։

Թահսին փաշան որոշեց խորամանկությամբ իր ձեռքը գցել հայերի ինքնապաշտպանության ղեկավարներին։ Նա պահանջեց, որ Սասունի ավագանին իր մոտ գա բանակցություններ վարելու և գործը խաղաղությամբ վերջացնելու համար։ Հայերը, հասկանալով Թահսին փաշայի մտադրությունը, նրա մոտ ուղարկեցին ավագանու մի քանի երկրորդական դեմքերի՝ Սեմալի իշխան Գուրգենի գլխավորությամբ։ Թահսին փաշան սասունցիներից պահանջեց հանձնել զենքերը, այսինքն՝ զինաթափվել, վճարել հարկերն ու տուրքերը և ստորագրել մի թուղթ, որ գոհ են օսմանյան իշխանություններից։

Սասունցիները պատասխանեցին, որ զենքը վայր կդնեն միայն այն դեպքում, եթե զինաթափվեն նաև քրդերը։ Հարկեր ու տուրքեր վճարել չեն կարող, որովհետև բոլոր գյուղերը թալանված են։ Տեսնելով, որ խորամանկությունը չանցավ, Թահսին փաշան ընդհանուր հարձակման հրաման տվեց։

Կենճի ոստիկաններն ու աշիրեթությունները շարժվում են Շենիկ գյուղի վրա։ Շենիկցիները Գրգոյի գլխավորությամբ որոշում են հակահարձակման անցնել։ Թշնամուն օգնության են գալիս թուրքական կանոնավոր զորամասերը։ Շենիկցիներին հաջողվում է հետ մղել մի քանի գրոհներ։ Հարձակումներից մեկի ժամանակ Ալիանքի գյուղացիներից կազմված ջոկատն անցնում է թշնամու թիկունքը։ Այդ խուճապ է առաջացնում թուրքերի շարքերում և նրանք ճողոպրում են։

Թուրքերը էական հաջողությունների չհասան նաև մյուս ճակատներում։ Հունիսի 25-ին Թահսինը, հրամանատարությունը հանձնելով Մուստաֆա փաշային, հեռանում է Սասունից՝ օգնական ուժեր բերելու հույսով։ Իսկ մարտերը շարունակվում էին։ Դրանք առանձնապես կատաղի բնույթ ունեին Տալվորիկի Սպիտակ լեռան ձորերում։ Շուտով նոր համալրումների հետ Սասուն վերադարձավ Թահսին փաշան։ Հուլիսի 4-ին թուրքական զորամասերն ընդհանուր հարձակման անցան։

Տալվորիկի բնակչության մի մասը՝ կանայք, ծերեր ու երեխաներ, հեռանում էին դեպի լեռնային քարանձավներն ու Սպիտակ խազակի կիրճը։ Թշնամին մեծ զոհեր տալով ձգտում էր հասնել և կրակի տակ առնել անզեն ժողովրդին։ Թվում էր, թե ողբերգությունն անխուսափելի էր, բայց այդ ժամանակ թշնամու վրա զանգվածային կրակ տեղաց, որը նրան շփոթմունքի մատնեց։ Այդ Գևորգի ջոկատն էր, որ, դիրքեր գրավելով Տալվորիկի մերձակա ժայռերին, հսկողության տակ էր առել գյուղի արևմտյան թաղամասերի մուտքերը, մասնավորապես Սպիտակ խազակի կիրճը։

Չնայած թշնամու կորուստներն արդեն անցել էին մի քանի հարյուրից, այդուհանդերձ նա անընդմեջ թարմ համալրումներ էր ստանում ու անընդհատ գրոհում էր։ Թուրքերը թնդանոթներ էին բերել և սկսեցին ռմբակոծել Տալվորիկի թաղամասերը։ Դա շատ ծանր կացության մեջ դրեց պաշարվածներին։ Թշնամին գիտակցելով, որ հայերի ուժերը սպառվում են, ուժեղացնում է ճնշումը, մեծացնում հարձակումների հզորությունը։

Զգալով, որ Տալվորիկի պաշտպանների դրությունը ծանր է, նրան օգնության եկան մյուս գյուղերից։ Դեպի Տալվորիկ շարժվեցին շենիկցիները՝ Գրգոյի, ջելիեգուղանցիները՝ Պետոյի

գլխավորությամբ։ Իր ջոկատով Գեբինի փեշերից եկավ Հրայրը։ Նրանց միացան իշխանձորցիներն ու սեմալցիները։ Օգնության ձեռք մեկնած ուժերը դիրքեր գրավեցին Տալվորիկի ցրված թաղերում և թշնամու դեմ ճակատային մարտեր էին մղում, իսկ Գևորգի ջոկատը, շարունակելով մնալ գյուղի վերևի բարձունքներին, ապահովում էր հայերի թիկունքը[4]։

Սեպտեմբերի 6-ի կեսօրին, թշնամին բոլոր ուղղություններով աղմուկ-աղաղակով հարձակման անցավ Տալվորիկը գրավելու համար։ Պաշտպանները հարձակումը դիմավորեցին զանգվածային կրակով, ապա հավաքելով իրենց ուժերը և, օգտվելով տեղանքի ընձեռած հնարավորություններից, բոլոր ուղղություններով հակահարձակման անցան։

Հակառակորդը, որ մինչ այդ կարծում էր, թե հայերի ուժերը սպառված են, տեսնելով այդ ընդհանուր հակահարձակումը, շփոթվեց։ Թահսին փաշան, վախենալով շրջապատումից ու փոքր կռիվների մեջ ներքաշվելուց, իր զորամասերին նահանջի հրաման տվեց, մանավանդ որ եղանակը վատանում էր, և ձմեռը հեռու չէր։

Սասունցիները տոնեցին առաջին խոշոր հաղթանակը։ Այդ հաղթանակն անհնար էր առանց լեռնաշխարհի մյուս գյուղերի ռազմական, նյութական ու բարոյական աջակցության։ Բայց հաղթանակն ամենից առաջ ապահովեցին տալվորիկցիները։ Տալվորիկցի մեր ու մանուկ, ահել ու ջահել, հարս ու աղջիկ կանգնեցին իրենց հարազատ օջախի պաշտպանության դիրքերում։ Նրանք թշնամուն այնպիսի դաս տվեցին, որ դրանից հետո «Տալվորիկ» անունն իսկ քրդերի մեջ սարսափ էր առաջացնում։

Տալվորիկի հաղթանակը բարձրացրեց սասունցիների մարտական ոգին, կոփեց հաղթանակի նրանց կամքը։

Այսպիսին են իրական փաստերը։ Բայց լսենք, թե դրանք ինչպես է ներկայացնում թուրքական ռադիոն. «Օսմանյան կառավարությունը բանակ ուղարկեց այդ ըմբոստ շարժումները ճնշելու համար։ Խռովությունները շատ արագ ճնշվեցին, որովհետև հայ ժողովրդի մեծամասնության համակրանքը չէին վայելում, բայց... ըմբոստության ամեն մի ճնշում հայերի ու նրանց հովանավորողների կողմից մեկնաբանվեց որպես ցեղասպանություն»։

Ուրեմն այսպես. թուրքական զինվորներն ու ոստիկանները, քրդական աշիրեթությունները, որոնց թիվը երբեք անգամ գերազանցում էր Սասունի ազգաբնակչության թվին, թնդանոթների ուղեկցությամբ ոչ թե ամիսների, այլ տարիների ընթացքում չէին կարողանում հաղթահարել միայն 2000 զինված ու կիսազեն գյուղացիների դիմադրությունը։ Եվ սա կոչվում է «ըմբոստությունները շատ արագ էին ճնշվում»։

Տալվորիկի կռիվներին ականատես ամերիկացիների նամակում կարդում ենք. «Տալվորիկի հայերը հաջողությամբ հետ մղեցին հարևան քրդերի հարձակումը։ Երկիրը մեծ տագնապի մեջ է... հունիսի առաջին շաբաթվա ընթացքում բագրանցի քրդերը սկսեցին հավաքվել Տալվորիկի շուրջը։ Գյուղացիները տեսնելով, որ քրդերի թիվը օր օրի մեծանում է և արդեն հասել է մի քանի հազար մարդու... սկսեցին պատրաստվել։ 8-րդ օրը սկսվեց մարտը։ Ավելի ուժեղ դիրքերը գյուղացիներին հնարավորություն տվեցին քիչ կորուստների գնով հակառակորդին զգալի վնասներ պատճառել... քրդերը տվեցին մոտ 100 սպանված, իսկ գյուղացիները՝ միայն վեց հոգի»[5]։

Բնորոշ է, որ թուրքական պատմագրության կեղծիքները ուղղակիորեն կրկնվում են Արևմուտքի, մասնավորապես ամերիկյան բուրժուական պատմագրության կողմից։

Սասունի դեպքերի ժամանակ, պնդում են Շոուները, հրնշակյանները սասունցիներին հրահրել էին իշխանությունների դեմ։ Օսմանյան բանակի գալուց հետո ապստամբները ցրվել են լեռնային մեկուսի վայրեր՝ նախապես ամայացնելով մահմեդական գյուղերը... համիդիե գնդերը և թուրքական կանոնավոր զորքերը Սասունն ամայացրին միայն այն բանից հետո, երբ հայերն արդեն ոչնչացրել էին մերձակա մահմեդական գյուղերի բնակիչներին[6]։

Թուրքական «Միլիեթ» թերթը 1984 թ. նոյեմբերի 22-ին տպագրեց «Հայը հավասար է ոճրագործի» հոդվածը, որտեղ կան հետևյալ տողերը. «Հայերը իրենց ծոցի մեջ հայտնված կազմակերպությունների պատճառով նոր շրջանը (20-րդ դարը) սկսեցին «ոճրագործ ազգ» պիտակով»։ Ինչ խոսք, որ թուրք ու նրանց արտասահմանյան գործընկեր «պատմաբանների» նմանօրինակ հերյուրանքները ոչ մի ընդհանուր բան չունեն իրականության հետ։ Իսկ Սասունի իրադարձությունները թևակոխում էին իրենց եզրափակիչ փուլը։

1894 թվականի ձմռանը սասունցիների ռազմական պատրաստությունները ոչ մի բոպե չդադարեցին։ Նորոգում էին զենքերը, վառոդ էին պատրաստում, կապար թափում։ Տալվորիկը վերածվել էր զենք արտադրող գործարանի։ Տալվորիկի լեռներում երկաթի հանքեր կային։ Տեղացիներին հաջողվում էր տնայնագործական եղանակով ժայռերից երկաթ քամել։ Հաջողվեց որոշ քանակությամբ հրացան գնել։ Մոտ 100 հրացան հավաքվեց Մշո դաշտի գյուղացիներից, զգալի քանակությամբ զենք ու զինամթերք բերվեց նաև Ֆարդինից։

Այդ ամենին զուգահեռ սասունցին ամուսնանում էր, հարստանիք անում, երեխա ծնում, պարում էր ու երգում։ Սասունն իր առօրյա ուրախություններով ու տխրություններով և կռվելու, մեռնելու, բայց հաղթելու վճռականությամբ էր դիմավորում 1894 թիվը։

1894 թ. գարնանը, օգնական ուժ բերելու հույսով, Անդրկովկաս մեկնեց Հրայրը, իսկ Սասուն բարձրացավ հնչակյան կուսակցության անդամ Մուրադը (Համբարձում Պոյաճյանը), որը զեկավար մասնակցություն ունեցավ ինքնապաշտպանական կռիվներում։

Սասունի շուրջը նորից չարագույժ ամպեր էին կուտակվում։

Թուրքական բանակը բազմահազար քրդերի հետ աստիճանաբար օղակում էր Սասունը։ Թուրքերը որոշել էին նախաձեռնությունը վերցնել իրենց ձեռքը և թնդանոթների օգնությամբ իսկական ճակատամարտ տալ լեռներին ապավինած կիսազեն կամ ամբողջովին անզեն գյուղացիներին։

Զեքի փաշայի հրամանով, տարբեր ուղղություններով դեպի Վերին Սասուն շարժվեցին 20 հազար քրդեր ու համիդիեներ՝ Բեհահէդդին փաշայի հրամանատարությամբ։

Սկզբում հարձակման անցան քրդերը։ «Մեզ թույլատրված էր,— հիշում է մի թուրք սպա,— նրանց (քրդերին) ռազմամթերք տալ, և նրանք ստանում էին հրացան, վառոդ, գնդակ, որ հատուկ քրդերի համար էինք բերել»։ Սակայն քրդերը հանդիպելով հայերի հակահարվածին, մեծ կորուստներով հետ շպրտվեցին։ Նրանք հրաժարվեցին առանց թուրքական բանակի նոր հարձակման գնալ։ Այդ ժամանակ թուրք զինվորների մի մասին հագցրեցին քրդական հագուստ ու ներգրավեցին հարձակման մեջ։

Թուրք զինվորները ցրվում են հայկական գյուղերը՝ հայտարարելով, թե եկել են պաշտպանելու «հավատարիմ հպատակներին»։

Հայերը նրանց ընդունում են, կերակրում, օթևան տալիս։ Բայց այդ «հյուրերը» գիշերը հարձակվում են քնած մարդկանց՝ նույնիսկ կանանց ու երեխաների վրա ու բոլորին մորթում։

Հայ ազգաբնակչությունը թալանվում էր, զրկվում ապրուստի միջոցներից, սննդամթերքից ու շարժական գույքից։ Թուրքական հրամանատարությունը հովանավորում ու խրախուսում էր ավազակներին ու հանցագործներին, գրգռում նրանց ախորժակը։ Սուլթանի հրամանով Դիարբեքիրից Սասուն փոխադրվեց Օսման փաշայի 300-րդ հետևակային գումարտակը, Երզնկայից, Կարինից և Մուշից՝ լրացուցիչ 2750 զինվոր, հինգ թնդանոթ, հեծելազորային երկուական գումարտակ, հրետանային երկու մարտկոց, Բաղեշից՝ մի քանի հարյուր զինվոր և երեք թնդանոթ, Բաղդադից ու Հալեպից՝ ռազմական միավորումներ։ Սրանց միացան 3000 համիդիեներ Մահմուդ էլ Աղասիի հրամանատարությամբ։

Տալվորիկում Գասպար Խաչոյանի տանը հավաքվում են թաղերի ներկայացուցիչները և որոշում դիմագրավել թշնամուն և, եթե հարկ է, զենքը ձեռքին ընկնել։ Թուրքերը փորձում են վերականգնել Սայանի կամուրջը։ Հայերը մի ջոկատ են ուղարկում, որը կամուրջը վերականգնող թուրքերին հարկադրում է դադարեցնել աշխատանքը և հեռանալ։ Այդ ժամանակ աշիրեթությունները բոլոր ուղղություններով հարձակման անցան Տալվորիկի վրա։ Գյուղի մատույցներում կատաղի ճակատամարտ բռնկվեց։ Թշնամին 600 մարդ կորցնելով հետ քաշվեց։

Երբ այդ լուրը հասավ Բիթլիս, այստեղ հրավիրվեց հատուկ խորհրդակցություն, որին, բացի իշխանության ներկայացուցիչներից, մասնակցում էին 17 քուրդ նշանավոր ցեղապետեր, համիդիեի հրամանատար Բեհահէդդին փաշան և ուրիշներ։ Խորհրդակցությունը որոշում է բոլոր ուղղություններով հարձակման անցնել և հիմնովին կործանել Սասունը։

Հուլիսի 15-ին շենիկցի Գրգոյի տանը հավաքվում են ինքնապաշտպանության ղեկավարները՝ քննարկելու թուրքական ահագնացող վտանգին դիմակայելու բարդ ու դժվարին խնդիրները։ Վերլուծելով ստեղծված ծանր իրավիճակը, Մուրադը կոչ

արեց. «Մինչև մեր արյան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը»։

«Մեր թշնամին ուզում է փախցնել մեր կույս աղջիկներին, զավակներին,— ասաց Գրգոն,— քանդել մեր եկեղեցիները և ոտնակոխ անել մեր ընտանեկան պատիվը, նամուսը։ Ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ։ Բոլորս էլ ուխտել ենք մեռնել և գլուխ չծռել թշնամուն»։

Գելիեգուզանցի տեր Պողոսը, նկատի ունենալով թշնամու ուժերի բազմակի գերակշռությունը, առաջարկեց զիջումների գնով խաղաղ լուծում գտնել։ Նրա համագյուղացի Ավոն պատասխանեց նրան. «... Ի՞նչ զիջումներ։ Թուրքը երկու ոտը դրել է մեկ կոշիկի մեջ և յոթ տարվա պարտք մնացած 175 հազար ղուրուշի տուրք միանգամից ուզում է գանձել...»։ «Մուշի իշխանությունները պահանջել են, որ Սասունի 67 նշանավոր անձինք գնան և հավատարմության երդում տան։ Նա, ով այս հարցերում զիջի, հուգա է»։

Գելիեգուզանի իշխան Պետոն առաջարկեց հրաժարվել ընդհանուր ճակատամարտից, գործել հանկարծակի, սրընթաց հարձակումներով թշնամուն փախուստի մատնել և այդ ձևով զենք ու սննդամթերք հայթայթել։ «Տեսեք իմ հալիվոր մաղերը,— ասաց Պետոն։ Տարիքս 70-ի մեջ է, բայց գիտե՞ք, ձեզանից քսանի հետ գլուխ կհանեմ։ Այդ 70 տարվա ընթացքում 37 կռիվ եմ տեսել, չհաշված մանր-մունր «կատակները»։ Բայց ձեզ պիտի ասեմ, որ այս կռիվը չի նմանվում այդ կռիվներից և ոչ մեկին։ Այս կռվի գույնը և ձևը ուրիշ է։ Ես այս կռվից վախենում եմ։ Տեսնո՞ւմ եք այս վերքերը։ Սրանք ձեզ ցույց տալով չեմ ուզում վախեցնել։ Ընդհակառակը, ինչպես որ ես մահից չեմ վախենում, ցանկանում եմ և հույս ունեմ, որ դուք էլ նույն սիրտն ու հոգին ունենաք... Միայն որպես ծերունի ու փորձառու մարդ, այս էլ ասեմ ձեզ, որ հաղթողը նա է, ով առաջինը կհարվածի։ Խորհուրդ կտամ անկատ հարձակվել թուրք զորքերի վրա... Այո, կհարձակվենք գիշերով, նրանց կստիպենք փախչել և նրանց զենքերը, ռազմամթերքն ու պարենը վերցնելով կքաշվենք Գելիեգուզանի ու Տալվորիկի սարերը։ Եվ այստեղ կպաշտպանենք մեր պատիվն ու ազատությունը... Կեցցե Սասունը»[7]։

Ժողովը որոշում է նախահարձակ լինել և եթե նեղն ընկնեն՝

ապավինել Տալվորիկի ժայռերին ու Ֆոֆոքարին. կռվել մինչև վերջին շունչը։

Ժողովը հանձնարարականներ մշակեց ինքնապաշտպանության բոլոր օղակների համար, որոշվեցին հիմնական, օժանդակ ու պահեստային պաշտպանական գծերը։ Թիկունքում ունենալով Անդոկ ու Գեբին անանցանելի լեռնաշարերն ու անդրնդախոր ձորերը, իսկ հարավ-արևմուտքում՝ Խուլբի ու Խիանքի լավ կազմակերպված հայկական գյուղերը, որոշվեց պաշտպանության գլխավոր գիծ դարձնել Տալվորիկ-Գելիեգուզան առանցքը։ Պաշտպանության վերջին կետը պիտի լիներ Անդոկը։ Ուստի որոշվեց այնտեղ սննդամթերք և ռազմամթերք կուտակել։

Հարձակումը նախատեսվում էր սկսել հաջորդ գիշերը։

Ժողովը նոր էր վերջացել, երբ լուր բերեցին, որ բաղրանցի քրդերը փախցրել են շենիկցիների ոչխարի հոտը։ Տեղեկացան նաև, որ քրդերը շարժվում են Սեմալի ու Շենիկի վրա։

Թշնամին հարձակումն արդեն սկսել էր։ Ժողովի մասնակիցները, հանձնարարություններ ստանալով, հեռացան։

Գրգոյին հաջողվում է կտրել քրդերի ճանապարհը և Շենիկի ոչխարի հոտը հետ խլել։ Կռվի մեջ է մտնում թուրքական հեծելազորը։ Գրգոն հակահարձակման է անցնում և թուրքերին հարկադրում հետ քաշվել։ Բայց այդ ժամանակ սկսում են կրակել լեռնագագաթներին տեղադրված թուրքական թնդանոթները։ Հուլիսի 28-ին մարտական գործողությունները վերսկսվում են, որոնք փոփոխական հաջողություններով շարունակվում են մի քանի օր։

Շուտով ամբողջ Սասունը կռիվների թատերաբեմ դարձավ։

Հայերի զինված ուժերի թիվը մենք չգիտեինք։ Ըստ աղբյուրների, Տալվորիկից դուրս էր եկել 309, Գելիեգուզանից՝ 741, Շենիկից՝ 208, Սեմալից՝ 160, Իշխանձորից՝ 180, Հեթինքից՝ 34, Աղբրիկից՝ 120, Ալիանքից՝ 208 հրացանավոր և այլն[8]։

Ուրեմն, ընդամենը 2000—2500 մարդ։ Իրականում ամբողջ Սասունը գոյամարտի էր ելել։ Կռվում էր ողջ Սասունը՝ կին թե տղամարդ, ծեր թե երեխա։ Վերացել էր սեփական տան հասկացողությունը, գյուղացին քաշվել էր լեռները, ապավինել ժայռերին, ու կռվում էր իր հողը ոտնահարող անթիվ ու անհամար թշնամիների դեմ։

Հատկապես ծանր մարտեր էին մղվում Խուլբում և Խիան-

քում։ Այստեղ հայերին հաջողվեց մանր կռիվներ տալով մինչև հուլիսի վերջը դիմանալ, բայց այդ օրերին հակառակորդը Տիգրանակերտից թարմ ուժեր բերեց և Խիանքի ու Խուլբի ամբողջ հայ ազգաբնակչությունը հեռացավ դեպի Գեբին։

Օգոստոսի 1-ին թուրքերը բոլոր ուղղություններով հարձակման անցան։ Նախօրյակին բանակի անձնակազմին ընթերցվեց սուլթանի ֆերմանը, որը պահանջում էր անխնա կոտորել հայերին։

Զինվորները սկզբում վարանում էին, չէին ցանկանում խոշտանգումներին ու գազանություններին մասնակցել։ Բայց ընկերկելով սպաների սպառնալիքների առաջ, սկսեցին ջարդել ու ավերել ամենաանողոք ձևով, առանց հաշվի առնելու տարիքն ու սեռը։

Զեքի փաշան իր հետ Սասուն էր բերել շեյխ Մահմեդին, որը քրդերին կոչ էր անում. «Ո՞վ իսլամի զավակներ, գյավուրի կնոջն ու աղջկան առևանգելը արդար գործ է, նրանց եկեղեցիները քանդելն ու այրելը աստվածային գործ է։ Ձեր թափած արյան կաթիլների չափ հուրի ու փերի պետք է առնեք»[8]։

Թուրքերը հարձակման անցան Անդոկի ուղղությամբ։ Վիճակը բարդանում էր նրանով, որ ամենուրեք մարտեր էին մղվում և հնարավորություն չկար օգնության հասնել առանձնապես ծանր կացության մեջ գտնվող տեղամասերին։ Օրերն անցնում էին, իրենց հետ տանելով բազմաթիվ մարդկային կյանքեր։ Գրգոն հարկադրված էր հեռանալ Շենիկից ու Սեմալից։ Երկու գյուղերն էլ թուրքերը թալանեցին ու այրեցին։

Գրգոն իր ուժերը դասավորեց Մերկեմոզանի դիմաց գտնվող Անդոկի արևելյան բարձունքների վրա։ Պետոյի ջոկատը դիրքեր զբաղեցրեց Անդոկի արևմտյան լանջերին։ Հայերի պաշտպանական գծի երկարությունը հասնում էր 30 կիլոմետրի։ Այդ տարածքի մեջ էր ամփոփված Սասունի ամբողջ ազգաբնակչությունը, 22 հազար տղամարդ, կին ու երեխա, որոնք թշնամու դեմ կռվում էին՝ ապավինելով Անդոկի ժայռերին ու անգնդախոր ձորերին։

Եվ ահա որոշվում է հակահարձակման անցնել, որ նույնն էր, թե մահվանն ընդառաջ գնալ։ Օգոստոսի 8-ի առավոտ-

յան սասունցիները միաժամանակ հարձակման անցան թուրքական բանակի երեք թևերի վրա։ Նրանց դիմավոր ուժերը, հաղթահարելով խուճապի մատնված թուրք զինվորների դիմադրությունը, սլանում էին դեպի Շենիկ։ Զեքի փաշան մաղապուրծ փախավ Շենիկից։ Ջայ կոչվող վայրում համառ կռիվներ տեղի ունեցան։ Երկու կողմերն էլ մարդկային մեծ կորուստներ տվեցին։

Շենիկի ու Սեմալի ջոկատները դիրքեր գրավեցին Ջայի աջ կողմում, դելիեգուղանցիք ու ալիանքցիք՝ ձախ թևում, իսկ տալվորիկցիներն ու Գևորգի ջոկատը զբաղեցրին կենտրոնը։ Անմիջապես նրանց թիկունքում էին զենք, ուտելիք և դեղորայք մատակարարող կանայք ու աղջիկները։

Հարձակումը սկսեցին թուրքերը։ Հարձակման շղթայի առջևից գնում էր շեյխը։ Սասունցիները կրակ բացեցին, և առաջինը վայր գլորվեց «սրբազան պատերազմի» այդ մունետիկը։ Կատաղի, օրհասական ճակատամարտ էր։ Թշնամու մի քանի հարձակումներ հետ մղվեցին։ Մարտերը շարունակվեցին մինչև երեկո։

Երեկոյան կողմ արևի ճառագայթները փակեցին հարձակվողների տեսադաշտը։ Հայերը օգտվեցին դրանից։ Գրգոն մի կողմից, իսկ ալիանքցի Պողոսը մյուս կողմից կարողացան շրջանցել թշնամուն։ Թուրքերը հարկադրված էին զիջել։ Յոթ ժամ տևած ճակատամարտում նրանք կորցրին ավելի քան 300 մարդ։

Սասունցիներին հաջողվեց մեծ քանակությամբ ավար, այդ թվում հրացան ու փամփուշտ, ձեռք գցել։ Մեծ էր ճակատամարտի հոգեբանական ազդեցությունը, մասնավորապես քրդերի վրա։ Այդ ազդեցությունը չեզոքացնելու և Սասունը ոչընչացնելու նպատակով Զեքի փաշան թուրքերին ու քրդերին հարձակման տարավ Ծովասարի ուղղությամբ։

Օգոստոսի 15-ին սկսվեց մի նոր ընդհանուր հարձակում՝ Սիրին-Կատարից մինչև Բոնաշեն, Խութից մինչև Շատախ։ Սասունցիների պաշտպանության բոլոր օղակները ոմբակոծվում էին։ Իսկ մյուս կողմից բատկանցի աշիրեթության և Հազոյի ուժերը շարժվում էին դեպի Հեթինք և Աղբրիկ։ Սպիտակ սարի վրայով Տալվորիկի ու Գեբինի լանջերին էին մոտենում քրդերը։

Գրգոյի ուժերը հերոսաբար կասեցնում էին թշնամու առաջ-

խաղացումը։ Առանց էական փոփոխությունների մարտերը շարունակվեցին մինչև օգոստոսի 17—19-ը, և երբ ռազմամթերքն արդեն սպառվում էր, սասունցիները քաշվեցին պաշտպանության երրորդ գիծը։

Սասունցի կին, երեխա, ահել ու ջահել, բեռնված առաջին անհրաժեշտության իրերով, հեռանում էին իրենց օջախներից, հեռանում էին լաց ու կոծով, յաթաղանից փրկվելու հույսով։ Թշնամին լցվեց հայկական գյուղերը, դրանք թալանեց ու այրեց։

Օգոստոսի 21-ին թնդանոթային համազարկից հետո թշնամին հարձակման անցավ Անդոկի ու Սպաղանքի ուղղությամբ։ Սասունցիք կռվում էին աներևակայելի անձնազոհությամբ, կռվում էին ինչով պատահեր և կարողացան թշնամուն հետ շպրտել։ Օգոստոսի 22-ին մարտերը դադարեցին։ Հայերի վիճակը տագնապալի էր։ Սպառվել էր ոչ միայն փամփուշտը, այլև սննդամթերքը։ Սասունցիներին սպառնում էր սովը։ Օգոստոսի 26-ին թշնամին վերսկսեց հարձակումը։ Նանր մարտեր էին։ Ոչ միայն ժայռերը, այլև ժայռաբեկորներն էին ձեռքից ձեռք անցնում։ Երեկոյան կողմ թշնամին հետ մղվեց։ Հայերը կորցրին շուրջ 200 մարդ։ Փամփուշտ այլևս չկար։

Սակայն պատերազմական գործողությունները շարունակվում էին։ Հայկական գյուղերն այրված էին։ Լեռնաշխարհի ամբողջ ազգաբնակչությունը լցվել էր լեռներն ու կիրճերը։

Օգոստոսի 27-ին թուրքական բանակի 10 ձիավորներ սպիտակ դրոշներով շարժվեցին դեպի Անդոկ։ Նրանք Զեքիի անունից սասունցիներին առաջարկեցին զենքը վայր դնել։ Փաշան խոստանում էր բոլորին ներում շնորհել։

Փաշային պատասխան տալու համար ժողով է գումարվում։ Մի մասը, Հ. Պոյաճյանի գլխավորությամբ, այն կարծիքին էր, որ պետք է հանձնվել, իսկ մյուս մասը՝ Գրգոյի գլխավորությամբ, դրան դեմ էր և գտնում էր, որ պետք է կռվել մինչև վերջ։ Գրգոն ասում էր. «Օսմանցին չի կարող մոռանալ իր կորուստները, վաղ թե ուշ պիտի աշխատի մեզ պատժել այն րոպեին, երբ մենք անպաշտպան կլինենք։ Լավ է այսօր խառնենք մեր արյունը մեր եղբայրների արյան հետ և գլուխ չծռենք անգութ օտարին։ Շնորհակալ ենք այն բարեսրտությունից, որ սուլթանն է մեզ ցույց տալիս... Հեռացե՛ք մեր երկրից ու խաղաղություն ինքնըստինքյան կլինի»[9]։

Ժողովն այդպես էլ ընդհանուր եզրակացության չհանգեց։

Օրվա երկրորդ կեսին 500 զինվորով բանակցությունների եկավ անձամբ Զեքի փաշան։ Խորամանկ փաշան փորձեց պառակտում գցել սասունցիների շարքերում։ Նա հայտարարեց՝ ով հանձնվի ու զենքը վայր դնի, ոչ միայն ներում կստանա, այլև նրա քանդած տունը կվերաշինվի պետության հաշվին։ Չնայած կռիվը շարունակելու բոլոր միջոցները սպառվել էին, սասունցիները մերժեցին Զեքի փաշայի առաջարկը։ Նրանք պատասխանեցին, որ զենքը վայր կդնեն, եթե թուրքական զորքերն ու քրդերը հեռանան Սասունից։

Բայց երեկոյան իշխան Գրգոն նկատեց, որ մոտ 200 սեմալցիներ, գյուղի քահանա տեր Հովհաննեսի գլխավորությամբ, հավատալով թուրքերի խոստումներին, գնում են դեպի թշնամու բանակատեղին։ Թուրքերը նրանցից ոչ մեկին չխնայեցին, բոլորին գազանաբար սպանեցին։ Իսկ քահանայի վզից պարան կապեցին և ձգեցին երկու կողմից։ Մի քանի անգամ քահանան կորցրեց գիտակցությունը, բայց ուշքի էին բերում։ Վերջապես հրացանների սվինները, սուր ծայրերը դեպի վեր, մտցրեցին գետնի մեջ և քահանային դրանց վրա շպրտելով սպանեցին։

Թուրքերը վերսկսում են հարձակումը, կռիվը տևում է մինչև ուշ գիշեր։ Գելիեզուզանցիների, իշխանձորցիների ու սեմալցիների մի մասն անցնում է Ֆոֆոքար լեռը։ Իսկ Գրգոն շենիկցիների, ալիանքցիների և մյուսների հետ ամրանում է Անդոկում և մի քանի օր շարունակում կատաղի կռիվը։ Բայց սովը սկսում է հնձել ազգաբնակչությանը։ Գրգոն հարկադրված Անդոկի պաշտպանությունը թողնում է կանանց և իր խմբի հետ գնում է խիանքից ու խուլբից պարեն ու ռազմամթերք հայթայթելու։

Ահա թե ինչպես են խեղաթյուրվում այս իրադարձությունները թուրքական ռադիոյի «Հայկական թղթապանակ» հաղորդաշարի 1984 թ. սեպտեմբերի 9-ի թողարկման մեջ։ «1894 թ. Հ. Պոյաճյանի (Մուրադի) ավազակախումբը այդ շրջանում ապրող ցեղերի վրա մի քանի հարձակում է կազմակերպում, կողոպտում (նրանց) ունեցվածքը և սպանում ավելի քան 10 հոգու... Այս դեպքերից հետո զինված բախումներ տեղի ունեցան բահրան ցեղի և հայերի միջև։ Հայերը նահանջեցին մի լեռնային շրջան, որտեղ նախօրոք ուղարկել էին իրենց կա-

նանց և երեխաներին... Դրա իմաստը շատ պարզ է... Նրանք միայն քաղաքական նպատակներ էին հետապնդում»։

«Իրականում թուրք զինվորները այդ շրջանն էին հասել օգոստոսի 14-ին... սպանված հայերի քանակը այդ գյուղերում հասնում էր 265 մարդու, որոնք սպանվել էին բախումների ժամանակ, ...համենայն դեպս սպանվածների թիվը 900-ից չէր անցնում։ Հետևաբար, զանգվածային ոչնչացումը հայկական պրոպագանդայի երևակայության արդյունք էր»։ Ինչ խոսք, որ թուրքական ռադիոն դեպքերը ներկայացնում է ծուռ հայելու մեջ։

Իսկ Անդոկի փեշերին մարտերը շարունակվում էին։

Վերջին պահին հարձակմանը միացան նաև քրդերը, և մարդկային այդ հսկայական զանգվածը, թնդանոթների կրակի ուղեկցությամբ, գնում էր ընկճելու մի բուռ կանանց ու երեխաների հերոսական դիմադրությունը, որոնց մոտ հատ ու կենտ փամփուշտներ էին մնացել և կրակում էին միայն խիստ անհրաժեշտության դեպքում։ Թուրքական զորամասերը, շրջանցելով պաշտպանության գիծը, բարձրանում էին Անդոկի վերին շրջանները, նպատակ ունենալով հասնել հեռացող անպաշտպան ազգաբնակչությանը և ոչնչացնել։ Անդոկի փեշերը մի ողբերգական տեսարան էին ներկայացնում՝ թուրքերի հետապնդումներից մոլորված, եղնիկի պես ժայռից ժայռ փախչող կանայք և երեխաներ, լաց ու ճիչ։ Ասկյարներն ընդհուպ մոտեցել էին Գրգոյի ընտանիքի անդամներին։ Եվ ահա խմբից բաժանվում է մի գեղատես կին, երեխան կրծքին սեղմած, հպարտ քայլերով բարձրանում է ժայռի գագաթը և, արհամարհական հայացքը գամելով ասկյարների զարմանքից ու սարսափից սառած դեմքերին, նետվում է Սասուն գետի ջրերի մեջ։ Այդ Շաքեն էր, Գրգոյի հարսը։ Նրա օրինակին հետևեցին տասնյակ ուրիշ կանայք։

Գրգոն Գևորգի ջոկատին հանձնարարել էր գնալ Տալվորիկ և օգնություն խնդրել։ Անդոկից իջնելիս պարզ դարձավ, որ Զեքի փաշան Անդոկի և Տալվորիկի վրա է շարժել թուրքական ու քրդական բոլոր ուժերը։ Որոտում էին թնդանոթները, հընչում էին փողերը, ոռնում էր խուժանը և Սասունի այդ մի բուռ հողակտորի վրա ստեղծում ահ ու դող առաջացնող դժոխային աղմուկ։

Տալվորիկը դիմադրում էր, բայց դիմադրելու հետ միասին

գյուղը դատարկվում էր։ Հայերն իրենց ձեռքում էին պահում գյուղի երկու կարևոր բարձունքները և հսկողության տակ էին առել Սպիտակ լեռան կիրճերը։

Սեպտեմբերի 5-ին թշնամին «սալավաթ» բղավելով լցվեց Տալվորիկ, բայց, հանդիպելով պաշտպանների հակահարվածին, հետ շպրտվեց[10]։

Դա Տալվորիկի վերջին կռիվն էր։ Երեկոյան Անդոկի գագաթներին թշնամու ուժեր երևացին։ Ուրեմն Անդոկը գրավված էր։ Իսկ առանց Անդոկի Տալվորիկը պահել անհնար էր։ Սեպտեմբերի 6-ին գյուղի պաշտպանները խումբ-խումբ դուրս եկան Տալվորիկից ու մթության մեջ քայլեցին տարբեր ուղղություններով։

Իշխան Գրգոն իր մարտական ուժերի հիմնական մասն ուղարկեց երեխաներին փրկելու։ Իսկ ինքը մի փոքր խմբով առաջ նետվեց՝ թշնամու հարձակման գիծը ճեղքելու ու հարավային Սասուն անցնելու համար։ Բայց Սպիտակ լեռան մոտ նա ընկավ շրջապատման մեջ։ Խմբի բոլոր մարտիկները զոհվեցին։ Գրգոն մենակ մնաց կայծքարե հրացանով և յոթ փամփուշտներով։ Նա մի քանի տեղից վիրավորված էր։ Հաղթահարելով ցավը, Գրգոն հասավ Սպիտակ աղբյուր և կուզեր ջուր խմելու, բայց աղմուկ լսեց, շուռ եկավ՝ չորս կողմից դեպի աղբյուրն էին շարժվում թուրք զինվորները։ Շրջապատված էր։ Նա իր մոտ եղած փամփուշտները պարպեց թշնամու վրա և ընկավ ասկյարների գնդակից։

Այդ ընթացքում շենիկցիների զինված ջոկատը Անդոկում մաքառող անզեն ազգաբնակչությանը, կանանց և երեխաներին տարավ դեպի հարավ՝ ընկուզենու անտառ։

Սասունը պարտվեց։ Սկսվեց կոտորածը։

Մի կողմից թուրքական բանակը, մյուս կողմից քրդերը շրջապատեցին անտառը և սկսեցին թնդանոթներով ռմբակոծել։ Անտառում հրդեհ բռնկվեց ու նրանում գտնվողների մեծ մասը զոհվեց ռմբակոծությունից ու հրդեհից։ Միայն փոքր մասին հաջողվեց Փասուրի միջով անցնել խուլը։

Սասունի 1894 թ. իրադարձությունների մասին օտար աղբյուրները գրում են. «Արդեն 1894 թ. օգոստոսի վերջին Էրզրումում ֆրանսիական փոխհյուպատոսը արտաքին գործերի մինիստրին հայտնեց, որ Էրզրումում «որոշ ժամանակից ի վեր

գիտակցության մեջ տագնապն է իշխում, ռազմական իշխանությունների կողմից վերջերս ձեռնարկված միջոցառումների հետևանքով»։ 2,5 հազար կանոնավոր զորքերի մի ջոկատ հրաման է ստացել գնալ Սասուն... որպեսզի, ինչպես գրում է փոխհյուպատոսը՝ «ճնշեն ինչ-որ ապստամբություն, որ այդ վայրերում բռնկվել է արդեն վաղուց և սպառնում է հարատևել»։

Այն ժամանակ ճիշտ տեղեկություններ չկային, թե ինչ է կատարվել Սասունում, որովհետև իշխանությունները, սովորաբար, ձգտում էին որքան հնարավոր է քողարկել այդ տխուր իրադարձությունները։

Դիարբեքիրում ֆրանսիական փոխհյուպատոսը 1894 թ. հոկտեմբերի 5-ի զեկուցագրով իր կառավարությանը հայտնում էր, որ «Կ. Պոլսի հրամանով Երզնկայի 4-րդ բանակային կորպուսի հրամանատարը մեկնել է Բիթլիսի վիլայեթ՝ անցած բավականին մեծաթիվ ռազմական ուժի գլուխ, որ հաշվվում է մոտավորապես 15 հազ. մարդ և կազմված է կանոնավոր զորքերից, քրդերի բերած հանրահայտ ուժերից և որոշ քանակությամբ համիդիեից։ Մի քանի անհաջող հարձակումներից հետո նշված հրամանատարին հաջողվեց ծունկի բերել խռովարարներին, որոնք, հավանաբար, պաշտպանվում էին հուսահատված»[11]։

Ապա տեղեկացվում են Սասունում խաղացված ահավոր դրամայի մանրամասնությունները. մոտ 7,5 հազ. հայ զոհվել է, 30 հայկական գյուղեր հրդեհվել են, 400 կանայք ստրուկ են տարվել։ Մուշիրի ազատած 200 կանայք գերադասում են գետում խեղդվել, քան տանել խայտառակությունը. «Ընդհանուր առմամբ երկրում սարսափ է տիրում»։ 1894 թ. նոյեմբերի 14-ին ֆրանսիական դեսպան Կամբոնը արտաքին գործերի մինիստրին գրեց. «Բիթլիսի նահանգում տեղի ունեցած արյունալի դեպքերը, չնայած դրանք գաղտնի պահելու օսմանյան կառավարության ջանքերին, ամենևին էլ չեն մոռացվել։ Սպանությունների վայրերի հեռու լինելու և տեղում արտասահմանյան գործակալներ չլինելու շնորհիվ Բ. Դռանը հաջողվեց կասկածի տակ դնել Կ. Պոլիս դեսպանատներին հասած լուրերը... Չնայած դրան, նրանց բացառիկ կարևորությունը պահանջում էր այլ բացատրություն, քան այն հերքումները, որ անընդհատ անում էր Բ. Դուռը... Մեր զորձակալի Դիարբեքիրում հավաքած տեղեկությունները, գրեթե լրիվ, համընկնում են անգլիական դեսպանության ստացած լուրերի հետ»[12]։

* * *

Տալվորիկից վերջինը հեռացան իշխան Գասպարը, Գևորգն ու Ադամը։ Նրանք շարժվեցին դեպի ժայռերից կախված Զկընկուլի քարայրը։ Ճանապարհին նրանց միացավ նաև Մուրադը։ Թուրքական զինվորները նկատեցին քարայրը բարձրացող մարդկանց և շրջապատեցին այն։ Քարայրում էին նաև Գասպարի ընտանիքի անդամները։ Դիմադրությունն անիմաստ էր։ Գասպարը Մուրադին, Գևորգին ու Ադամին առաջարկեց հեռանալ։

— Փրկություն չկա,— ասում է Գասպարը,— ես իմ ընտանիքի անդամների հետ կշարունակեմ կրակել և մեզ վրա բևեռած պահել թշնամու ուշադրությունը, իսկ դուք գիշերը գաղտնի հեռացեք, գուցե փրկվեք։

Գևորգը նայեց Գասպարին, նրա կնոջն ու երեխաներին, որոնք հանուն իրենց փնում էին մահվան, և հրաժարվեց։ Տեսնելով, որ նրանց համոզել չի կարողանում, Գասպարը կնոջ, երեխաների և դեռատի աղջկա հետ դուրս եկավ քարանձավից ու հանձնվեց թուրքերին՝ տպավորություն ստեղծելով, որ քարանձավում այլևս ոչ ոք չկա։ Սակայն թուրքերը չհավատացին և Գասպարի ընտանիքին իրենց մոտ պատանդ պահելով, ասացին, որ եթե քարանձավում մնացածները չհանձնվեն, ողջ ընտանիքը տեղնուտեղը կգնդակահարվի։ Այդ լսելով Մուրադը, Գևորգը և Ադամը քարանձավից դուրս եկան և շարժվեցին դեպի թուրք հրամանատարը։ Գևորգին, Մուրադին ու Ադամին տարան Սեմալ գյուղ։

Թուրքական հրամանատարությունը Գևորգի ու Մուրադի բանտարկությունը համարում էր իր մեծ հաղթանակը։ Նրանց Մուշ բերեցին փողերի հաղթանակ ազդարարող կանչերի ուղեկցությամբ։ Հեռագրեր հասան Բ. Դուռ, ավետելով, որ ձերբակալված են սուլթանի դեմ կռվողների ամենանշանավոր ղեկավարները։

Բիթլիսի իշխանությունները կազմակերպեցին Գևորգի և Մուրադի փակ դատավարությունը։ Գևորգին դատապարտեցին 15 տարվա, իսկ Մուրադին 101 տարվա բանտարկության՝ «նո-

ին վեհափառություն սուլթանի դեմ ապստամբելու» մեղադրանքով։ Թուրքական ոստիկանները մեկ առ մեկ հանեցին Մուրադի մորուքի մազերը։ Կարպետի վրա լցրեցին երկաթի ու ապակու մանրած կտորներ և, մերկացնելով, գլորեցին դրանց վրայով։

Գևորգը, որի 25 տարին նոր էր լրացել, Մշո բանտում մնաց 1,5 տարի։ Ոստիկանները նրան ենթարկեցին ֆիզիկական ու հոգեկան անլուր տանջանքների։

Թուրքական բանտի մասին ասում են, որ խոշտանգումների տեսակների բազմազանությամբ նա իր հավասարը չունի. «Ամբաստանյալին հարցաքննությունից հետո գետնահարկի մենախուցն էին ուղարկում, որը խոստովանատունն էր։ Անպատմելի ու աննկարագրելի են այնտեղ գործադրված տեսարանները... այնտեղ (նրանք) ենթարկվում էին անողորմ չարչարանքների... գավազանների, ճոպանների, մահակների մահաբեր հարվածների տակ ենթական մերկանում էր իր «ես»-ից, խղճի ապատությունն էր հափշտակվում, ինքնագիտակցությունն էր կորչում։ Օր ու գիշեր (շարունակվող) մարմնական տանջանքները չեզոքացնում էին զգացողությունը, ուղեղը իր հավասարակշռությունը կորցնելով բռնադատվում էր խոստովանելու չգործած հանցանքը կամ ոճիրը... օձերով լի տոպրակների մեջ հայր ու որդի էին գցում, հանում էին (նրանց) եղունգները, սղոցում էին ատամները, գլանակով վառում էին մարմնի տարբեր մասերը, ոտքերի մատները կտրատելով բանտարկյալին հրամայում էին քայլել աղով ծածկված սալահատակի վրայով, մատների ծայրերը սեղմում էին երկաթե ձեռնակապերով, մինչև արյան ժայթքելը»։ Եռացրած ձվերը դնում էին բանտարկյալի անդամներին, որի պատճառած անտանելի ցավերի հետևանքը լինում էր ցնորվելը։ Ծարավից տառապողներին հարկադրում էին քացախ խմել։ Քնածների մարմինը ծակում էին մեծ ասեղներով, ցուրտ սենյակում կալանավորին մերկացնում և կապում էին սյանը, իսկ վերևից նրա գլխին անընդհատ ջուր էր կաթում։ Շիկացած երկաթով հերկում էին կալանավորի մարմինը[13]։

Է. Դիլոնը գրում է. «Եթե պատկերացնենք Անգլիայի հին Աստղային պալատի, իսպանական ինկվիզիցիայի, հաշիշ ծխելու չինական ավազակաբնի, դողերոցքի հիվանդությունների և Դանթեի դժոխքի ամենամռայլ անկյուններից մեկի միացումը,

ապա այդ միացումը կարող է նմանվել թուրքական բանտին. կեղտ, գարշահոտություն, հիվանդություններ, խայտառակություններ, ահավոր չափերի ու ծավալների հասնող խոշտանգումներ. նրանցում հոգեբանական մթնոլորտը կազմում են լրիվ հուսահատությունը, վայրենի չարությունը, մարդկային տանջանքներից սատանայական բավարարվածությունը, եղկելի այլանդակություններին աջակցելու համար ստոիկ ինքնագոհությունը, բարոյական կերպարի լրիվ այլանդակումը, և այս ամենը մարմնավորվում են զզվելի էությունների մեջ, որոնց մարդկային կերպարանքը հանդիսանում է երկնային վիրավորանք։ Այս սարսափելի խցերում մշտապես վարպետ խոշտանգումների հետևանքով մարդկային ոռնոցը խառնված է անբնական հեշտանքների գոռոցների հետ, կեղտոտ երգերը երգվում են հոգի մղկտացնող ողբի ուղեկցությամբ։ Նվ նույն ժամանակ մարմիններից, որոնք վաղուց զրկվել են կենսական ուժից, համբառնում է հոգին, առանց որևէ մեկի ողբի, բացի խոնավ պատերից, որոնց վրա քրտինքից և սարսափելի հիվանդությունից կուտակված մեծ կաթիլներն ընկնում են գետնին, քարերի վրա և այնտեղից բարձրանում գոլորշու ձևով։ Իրականում սա աներևակայելի մղձավանջ է»[14]։

* * *

Բայց Գևորգը չընկճվեց։ Նա ելք էր փնտրում փախուստի համար։ Այդ նպատակով նա ձևոք էր գցել մետաղի երկու կտոր և դրանցով ծակում էր բանտի պատը։ Պատից հանած մեծ քարերը գլխատակն էր դնում, իսկ հողն ու փոքր քարերը հավաքում էր և, երբ նրան օրվա ընթացքում մեկ անգամ բակ էին տանում, դրանք գաղտնի թափում էր այնտեղ։ Այսպես նա շատ տրեր աշխատեց։ Վերջապես հաջողվեց անցք բաց անել, սակայն բանտապահներից մեկը նրա խցում պատահմամբ քարի մանր կտորներ տեսավ։ Ինչ-որ բան կասկածելով բանտախուցը ստուգվեց, և անցքը հայտնաբերվեց։ Գևորգին դաժանաբար ծեծեցին և փոխադրեցին երկրորդ հարկ։ Նրա բանտախուցը շուրջօրյա հսկողության տակ էր։ Դռան անցքից երևում էր հսկող ոստիկանի աչքը։ Եթե մինչ այդ նրան շրջագայության էին հանում մյուս բանտարկյալների հետ միասին, ապա այժմ զրկեցին այդ հնարավորությունից ևս։ Բայց

Գևորգը հուսահատվողներից չէր։ Նա կարողացավ բանտապահներից թաքցնել երկաթի կտորները և գիշերները, երբ հերթապահ ոստիկանը, օգտվելով բանտի ղեկավարության բացակայությունից, խցի դռան առաջ ննջում էր, փորում էր հատակը։ Նա կարողացավ անցք բաց անել դեպի առաջին հարկ, որտեղ հայ բանտարկյալներ էին տեղավորված։ Ապա այդ անցքով թել անցկացրեց և առաջին հարկի բանտարկյալներին հասկացրեց, որ թելի ծայրին լուցկու տուփ կապեն։ Պահանջվեց մի քանի շաբաթ, մինչև Գևորգը կարողացավ տուփի վրա տկտկոցների ազդանշանային «բառարան» ստեղծել։ Նա հեռագրի սիստեմով սկսեց բանտարկյալների հետ խոսել, նրանց հորդորելով փախչել։

Այդ ընթացքում Գևորգին հաջողվեց փորել նաև բանտախցի պատուհանի երկաթյա ձողերի շուրջը, իսկ երբ նրանք արդեն թուլացել էին և հնարավոր էր հանել, նա իր հագուստից ու զանազան փալասներից պարան հյուսեց։

1896 թվի ապրիլի 10-ն էր։ Կեսգիշեր։ Ոռնում էր քամին։ Գևորգը բարձրացավ պատուհանին և կախվելով պարանից՝ սահեց ցած։ Բայց պարանը կարճ էր և հարկադրված զգալի բարձրությունից թռավ ներքև։ Մթության մեջ ոտքը խփեց քարին ու վնասեց։ Բայց կանգ չառավ, շարժվեց քաղաքից դուրս։ Նրա օրինակին հետևեցին Ադամը, Ավոն ու Խաչոն։

Բանտապահները միայն առավոտյան իմացան փախուստի մասին, երբ Գևորգն ու նրա ընկերներն արդեն շատ էին հեռացել Մուշ քաղաքից։

* * *

Սասունցիների դիմադրության ճնշումից հետո սուլթանական իշխանությունները սկսեցին դաժան հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ Դահիճները ավերի ենթարկեցին սասունցիների շեն տները, թալանեցին, սպանեցին ու բնաջնջեցին բոլոր նրանց, ով պատահում էր իրենց ճանապարհին։ Բերենք մի քանի վկայություններ օտար հեղինակներից։

Ամերիկյան միսիոներ Գրինի՝ Սասունի կոտորածներին նվիրված գրքում կարդում ենք. «Սասունում... կատարվել է մի վիթխարի և իր սարսափով անմոռանալի ջարդ, որին ենթարկվեցին հայ տղամարդիկ, կանայք և երեխաները, և

այդ ջարդը կազմակերպել են սուլթանի կողմից զինված քրդական զորքերն ու կանոնավոր բանակի զինվորները, որոնք ուղարկվել էին հատուկ հրամանով։ Այն իրականացվել է թուրքական բարձրաստիճան սպաների անմիջական ղեկավարությամբ»[15]։

Կոտորածների վայրերը, այսինքն ողջ Սասունը, «շրջապատված էր զինվորական կորդոնով ոչ միայն ջարդերի ժամանակ, այլև դրանից հետո մի քանի ամիս շարունակ։ Այնպես որ Սասունի գյուղերը դրսից ոչ ոք մտնել չէր կարող»։ Իշխանությունները ամեն տեսակ միջոցների էին դիմում, որպեսզի արտաքին աշխարհում լուր չտարածվեր Սասունում կատարված ջարդերի մասին[16]։ Գրինի գրքում ուղակի ասված է. «Թուրքիան նպատակ էր դրել ամբողջ կայսրության մեջ ոչնչացնել քրիստոնյաներին»։

Սասունցիներին ոչնչացնելու ծրագրի իրականացման ճանապարհին թուրքերը դիմում էին ամենավայրագ ու ամենաստոր միջոցների։ Նրանք հայկական գյուղերը հրի մատնելու համար իրենց հետ Սասուն բերեցին 30 բաք նավթ և հրդեհեցին 32 գյուղ։ Վանում անգլիական հյուպատոս Նոլվորդի կարծիքով «Սասունի բոլոր գյուղերի բնակիչները ջարդվեցին»։

Անգլիական մի այլ դիվանագետ՝ Մ. Շիպլերը վկայում է. «Հայերը երեք շաբաթվա ընթացքում ջարդվեցին առանց տարբերի ու սեռի խտրության (օգոստոսի 12-ից սեպտեմբերի 4-ը)։ Հայերը սպանվեցին վայրի անասունների պես հալածվելով... Ես համոզվեցի, որ թուրքական կառավարության ցանկությունը ոչ թե ոմն խառնակիչ Մուրադին գտնելն էր, այլ Գելիեգուզանի ու Տալվորիկի գավառների բնաջնջումը»[17]։

Գելիեգուզանը գրավելուց հետո թուրքերը գյուղից չհեռացածներին իրար կապեցին, թաղիքով ծածկեցին ու այրեցին։ Լոնդոնի «Դեյլի Նյուս» թերթը «Փոսի կոտորած» հոդվածում գրել է, որ դահիճները Գելիեգուզանում հայերին հարկադրում էին փոսեր փորել և այդ փոսերում էլ նրանց կիսամեռ թաղում էին։ Նվ այդպես 7—10 օր շարունակ։ Մի այլ տեղ նրանք մարդկանց շպրտում էին սվինների վրա ու տանջամահ անում։ Կանանց ու աղջիկներին լցնում էին եկեղեցիները, բռնաբարում և ապա բոլորին այրում կամ սրի քաշում։ Գեղեցիկ տղաներին ու աղջիկներին առաջարկում էին կրոնափոխ լինել, և երբ նրանք հրաժարվում էին, բո-

լորին մորթում էին։ Հղի կանանց արգանդը թրով բացում ու դեռ չծնված երեխային սրախողխող էին անում։ Զվարճության համար մարդուն կանգնեցնում էին որպես թիրախ և անասնական հրճվանքով կրակում նրա վրա։ Երեխաներին շարք էին կանգնեցնում ու շարքի երկայնքով կրակում՝ իրար հետ մրցելով, թե մեկ գնդակով ով քանի երեխա կարող է սպանել[18]։

Մի գյուղի բնակիչներ, 500 կանայք ու երեխաներ, փախուստի դիմելով մտնում են քարայրը։ Թուրքերը նրանց գրտնում են և բոլորին ոչնչացնում։ Ժողովրդին փակում էին տներում և հրդեհում։ Նման հրդեհներից մեկի ժամանակ մի փոքրիկ աղա ջուրս է պրծնում, բայց նրան անց են կացնում սվինի վրա և կրակի մեջ գցում։ Երեխաների մազերից բռնած բարձրացնում էին և կտրատում նրանց մարմինը։ Թուրք զինվորները երեխաներին իրար վրա էին շարում ու միմյանց հետ մրցում, թե սրի մի հարվածով ով ավելի շատ գլուխ կկտրի, իսկ հետո երեխաների դիակների վրա նավթ էին լցնում և այրում։

Թուրքական հրամանատարությունը հրամայել էր գերի չվերցնել, ոչնչացնել բոլորին։ Այս հրամանը ճշտությամբ կատարվեց։ Եթե 1891—1894 թթ. կռիվների ընթացքում հայերից զոհվեց 800—1000 մարդ, ապա 1894 թ. օգոստոսի վերջերից մինչև 1895 թ. սպանվեց շուրջ 10 հազար մարդ։ Այդ նույն ժամանակ գերի վերցվեց ընդամենը 30—40 հոգի։

Գրինի գրքում կան նաև հետևյալ տողերը. «Ապստամբություն չի եղել, ինչպես զեկուցվել է Կ. Պոլիս։ Բնակիչները զենքի են դիմել միայն բռնուներից պաշտպանվելու համար... ես ոչ մի տեղ չլսեցի, որ հայերը կատարած լինեն այնպիսի մի գործողություն, որ կարող լիներ համարվել կառավարության դեմ ապստամբություն»[19]։

Ռուսական հյուպատոս Մաքսիմովը գրում է, որ Սասունի բնակչության մեծ մասը «չնայած բոլորի, նույնիսկ կանանց, անձնազոհ հերոսության, զոհվել են անհավասար մարտերում», թուրք զինվորները «սպանում էին երեխաներին, որպեսզի հագեցնեին իրենց անասնական հակումները, անխնա ոչնչացնում էին աղջիկներին ու կանանց»։ Հայերը հիմնավորապես թալանվել էին։ Ավարն այնքան առատ էր, որ ջարդերից մի քանի օր անց Մուշում կայքի և անասունների գներն աներևակայելի էժանացել էին[20]։

Թուրքական զորքերը Գելիեգուղանում այրեցին 360, Շենիկում՝ 106, Սեմալում՝ 85, Ալիանքում՝ 165, Իշխանձորում՝ 75 տուն. գյուղերի անապաստան բնակչության մեծ մասը սրի քաշվեց, իսկ մյուսներին ստիպեցին «ցրվել լեռները, մնալ անօթևան, դառնալ թափառական»։ Շատախի, Խուլբի, Խիանքի, Փսանքի և այլ շրջանների բնակչության մոտ կեսը ոչնչացվեց։ 14,6 հազար մարդ մնաց անօթևան ու թշվառ վիճակում։

Ավելորդ չենք համարում բերել նաև մի քանի վկայություններ այս եղերական իրադարձությունների ժամանակ Սասունի հարևան շրջաններում գտնված անգլիացի դիվանագետների նամակ-զեկուցագրերից։

1894 թ. հոկտեմբերի 31-ի նամակից. Բիթլիսից ստացված հաղորդագրության մեջ ասված է. «Սասունում 27 գյուղ ոչնչացվել է։ 6000 տղամարդիկ, կանայք և երեխաներ սպանվել են զորքի ու քրդերի կողմից։ Այս սարսափելի դեպքը միայն այժմ է այստեղ հայտնի դառնում, չնայած կոտորածը տեղի է ունեցել սեպտեմբերի սկզբներին։ Թուրքերը բոլոր միջոցների դիմել են, որպեսզի խանգարեն լուրերի տարածմանը...»[21]։

1894 թ. նոյեմբերի 16-ի նամակից. «Անցյալ տարի Տալվորիկում հայերը հաջողությամբ հետ մղեցին հարևան քրդերի հարձակումը։ Մոտ քսան գյուղ ոչնչացվեց, բնակչությունը սրի քաշվեց, տներն այրվեցին։ Մի քանի երիտասարդների, ուժեղ հայերի, գերի վերցրին, իրար կապեցին, ծղոտով ծածկեցին և կենդանի այրեցին։ Որոշ թվով հայեր... ոչ պակաս 100 մարդ, հանձնվեցին և ներում խնդրեցին։ Նրանցից շատերը տեղում գնդակահարվեցին, իսկ մնացածները մորթվեցին թրերով և սվինահարվեցին։ Մի խումբ կանայք... 60—160 հոգի փակվեցին եկեղեցում և նրանց մեջ «բաց թողեցին» զինվորների։ Այս կանանցից շատերը տանջամահ արվեցին, մյուսները սպանվեցին թրերով և սվիններով։

Ըստ հաշվումների, սպանվածների թիվը հասնում է 20—25 հազարի... Հարկ է նշել, որ կոտորածն իրականացվեց կտնավոր զորքի զինվորների միջոցով, որոնք մեծ մասամբ գտնվում էին բարձր զինվորանշան ունեցող սպաների ենթակայության տակ։ Սա գործին արտակարգ լուրջ նշանակություն է տալիս»[22]։

1894 թ. նոյեմբերի 11-ի նամակից. «Ֆերիկ փաշան (մարշալ Զեքի փաշան), որ շուտափութ եկավ Երզնկայից, ընթերցեց բնաջնջման մասին սուլթանի ֆերմանը և ասաց, հրամանագիրը պահելով իր կրծքի վրա, զինվորներին կոչ արեց խույս չտալ իրենց պարտականությունների կատարումից։ Օգոստոսի վերջին օրը, այսինքն սուլթանի գահակալության տարեդարձի օրը, զինվորները հատկապես ջանում էին աչքի ընկնել, և նրանք այդ օրը կատարեցին ամենագազանային կոտորածը։

Եթե որևէ մեկը հնարավորություն ստանար այցելելու օկրուգ, նա կարող էր որոշել միայն սպանվածների մոտավոր թիվը, որովհետև շատ դիակներ լցված էին փոսերը և ծածկված հողով, այժմ արդեն անձրևը մաքրել է նրանց գերեզմանների հետքերը։ Այնտեղ, որտեղ փոսեր չկային, սպանվածների մարմինները փայտերի հետ դասավորել էին շեղջերով, կերոսինով շաղախել ու այրել... հավանաբար օկրուգի բոլոր գյուղերը ոչընչացվել էին։

...Առանց երկյուղելու կարելի է ասել, որ 40 գյուղեր լրիվ կործանված են և թվում է, թե սպանվել է ոչ պակաս, քան 16 հազար մարդ։ Ամենափոքր թիվը 10 հազարն է...»[23]։

1894 թ. դեկտեմբերի 4-ի նամակից. «...Կ. Պոլսից ստացվեց կեղծ հաղորդագրություն, թե հայերը զինվել և ապստամբել են։ Այդ ժամանակ մուշիրը էրզրումում հրաման տվեց ոչընչացնել հայերին։ Հրամանն ընթերցվեց զորքի առաջ, որն արագ հավաքվել էր արևելյան Թուրքիայի բոլոր գլխավոր քաղաքներից։ Նրանում ասված էր. «Ով խնայի տղամարդկանց, կանանց կամ երեխաներին, կդավաճանի հավատի հպատակի կոչմանը»։

Տեղանքը շրջապատվեց կանոնավոր (բանակի) զինվորներով և, բացի այդ, ասում են, որ այնտեղ հավաքված էր 20 հազար քուրդ։ Ամենամոտավոր հաշվարկումով 15 հազար հոգի սպանվել է, 35 գյուղ ավերվել...

Չնայած Թուրքերի բոլոր ջանքերին, թաքցնելու այս արյունոտ պատմությունը, այն հայտնի դարձավ և հանդիսանում է «XIX դարի իմացած ամենասարսափելի» արյունոտ պատմությունը։ Մի զինվոր պատմում էր, որ ինքը մենակ սպանել է 30 հոգի կին։ Որոշ զինվորներ, հավանաբար, ամաչելով իրենց խայտառակ արարքներից, ասում էին. «Մենք ի՞նչ կարող էինք անել։ Մենք գործել ենք համաձայն հրամանի»»[24]։

1895 թ. հունվարի 12-ի նամակից. Մի քանի հոգի այցելել էին Սասունի 3 գյուղեր։ «Նրանք բոլորը վերածված էին ավերակների, և այլանդակված դիակները վկայում էին սարսափելի իրադարձությունների մասին... Ամեն օր փախստական բնակիչների խմբերը գալիս էին և իրենց հանձնում սպա հրամանատարի ձեռքը։ Արևամուտից մոտավորապես երկու ժամ անց, օրվա ընթացքում այդ միջոցով հավաքված գերիներին տանում էին հարևան դաշտը, և օդը խլանում էր նրանց աղեկտուր ձայներից»։

Կոտորածներից հետո Համիդը աշխատելով չքմեղանալ, հայտարարեց. «Թուրքերը հայերի վրա չեն հարձակվել, հայերն ու Թուրքերը ապրում են կողք կողքի և խաղաղ. պատճառը քրդերի ու հայերի միջև եղած խլրտումներն են», և ինքը որպես գթասիրտ սուլթան, առանց կողմնակալության, կարգավորել է երկու համայնքների միջև ծագած խռովությունները[25]։

Մինչդեռ վերևում շարադրվածը և բազմաթիվ այլ փաստեր անառարկելիորեն ապացուցում են, որ կոտորածների իսկական կազմակերպիչը սուլթանն էր, օսմանյան կառավարությունը, և որ դրանք իրականացվել են ոչ միայն քուրդ ցեղապետերի, այլև, առաջին հերթին, Թուրքական բանակի ու ոստիկանության միջոցով։

Էմիլ Դիլոնը 1895 թ. շրջագայեց ջարդերի վայրերով և, հիմք ունենալով ստուգված փաստերը, գրեց. «Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի կոտորածը պայծառափայլ Բ. Դոան կանխամտածված գործն է, որը նա նախապատրաստեց հոգատարությամբ և իրագործեց դաժանորեն»[26]։

1891—1894 թթ. եղերական իրադարձություններն իրենց վախճանին էին մոտենում։ Սասնո գյուղերը դատարկ էին։ 102 գյուղերից 83-ը թալանված ու ավերված էր։ Ամենուրեք մեռելային լռություն էր։ Բնակչության մի մասը կուլ էր գնացել յաթաղանին, իսկ մյուսը՝ ապավինել էր ժայռերին ու ձորերին։ Թուրքական զորամասերն ու աշիրեթությունները գյուղից գյուղ էին անցնում։ Ամենուրեք դատարկ էր, մարդ չկար սպանելու, ունեցվածք չկար թալանելու, հարս ու աղջիկ չկար առևանգելու։ Նույնիսկ սասունցիներից դատարկված լեռնաշխարհը սարսափ էր ներշնչում Թուրքերին, և նրանք շտապեցին օր առաջ հեռանալ այդ «գլխակեր» լեռնաշխարհից։

Օսմանյան կառավարությունն իր հաղթանակն էր տոնում։ Սասունի կոտորածների համար սուլթանը Զեքի փաշային պարգևատրեց շքանշանով, իսկ չորս աշիրեթապետերի՝ մետաքսե դրոշով։ Սասունի հարցը, կարծես, լուծված էր։ Բայց թուրքական զորամասերը դեռ նոր էին հեռացել, երբ կենդանի մնացած, ժայռերին ու կիրճերին ապավինած սասունցիները վերադարձան իրենց գյուղերը։

Եվ երբ մի քանի օր անց ոստիկանական ջոկատը Սասուն բարձրացավ, ականատես եղավ հրաշքի՝ ծուխ էր բարձրանում բոլոր գյուղերից, ամենուրեք մարդիկ կային և զբաղված էին իրենց առօրյա խաղաղ գործերով։ Սասունը նորից կենդանացել էր։ Թուրք ոստիկանները լեղապատառ վերադարձան Մուշ։

Համաշխարհային առաջադեմ հասարակայնության ճնշման ներքո սուլթանը 1894 թ. նոյեմբերի 20-ին ստեղծեց Սասունի իրադարձությունները հետաքննող հանձնաժողով, իր թիկնապահ Ֆերիկ Աբդուլլահ փաշայի գլխավորությամբ, որը մեծ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղում ուսումնասիրություններ կատարեց։ Հանձնաժողովը հարցաքննեց 190 հայի, քրդի և թուրքական պաշտոնատար անձանց, եղավ իրադարձությունների վայրերում, տեսավ սրախողխող արված մարդկանց դիակները*[27]։

* Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնի փետրվարի 6-ի հաղորդագրության մեջ արդեն նշվում է, որ «օսմանյան իշխանությունները բոլոր միջոցներով աշխատում են վկաներին խանգարել խոսելու»։ Հետագայում ֆրանսիական դեսպանի գրեթե բոլոր զեկուցագրերում այդ բողոքը կրկնվում էր։ Դրա հետ միասին, ինչպես երևում է մարտի 6-ի հաղորդագրությունից, օսմանյան կոմիսարները ձգտում են քննությունը շեղել իր բնական ընթացքից։ Անհանգստացած Հերքոյի ցուցմունքից, գրել է Կամբոն, կոմիսարներն ընդունում են, որ զորքերը մասնակցություն են ունեցել Սասունի կոտորածին և որ նրանց գործողությունները կարող էին հեռու գնալ, բայց նրանք պնդում են, որ դրանք եղել են «անհրաժեշտ ռեպրեսիաներ ապստամբած հայերի նկատմամբ»։

Ապրիլի 5-ին Կամբոնը գրում է, որ «Վիլբերը (ֆրանսիական ներկայացուցիչը) պնդում է այն դժվարությունների վրա, որին հանդիպում են եվրոպական պատվիրակները իրենց միսիան կատարելու ժամանակ։ Ակնհայտ է, որ օսմանյան կոմիսարները ձգտում են վախեցնել Սասունի իրադարձությունների իսկական վկաներին և նախատեսում են քննությունը տանել՝ հիմնվելով միայն պաշտոնական փաստաթղթերի ու այն ցուցմունքների վրա, որոնք տալիս են չինովնիկները կամ իշխանությունների հետ կապեր ունեցող անձինք... Հարևան վայրերից եկած վկաները, Մուշ հասնելուց անմիջապես հե-

Թուրքական իշխանությունները օտարերկրացիների առաջ ոչ միայն փակել էին Սասունի դռները՝ պատճառաբանելով, թե այնտեղ ժանտախտի համաճարակ է, այլև միջոցներ էին ձեռնարկել, որ եղեռնից փրկված հայերը հարաբերությունների մեջ չմտնեն օտարերկրացիների հետ և ճշմարտությունը չպատմեն նրանց։

1895 թ. հունվարին Սասունի դեպքերը հետաքննող հանձնաժողովը իր առաջին նիստն ունեցավ Մուշում։

1895 թ. հուլիսի 28-ին մեծ տերությունների ներկայացուցիչները կազմում են կոտորածների հետաքննությունն ամփոփող զեկուցագիր։ Այդ փաստաթղթում կարդում ենք. «... փաստերն ամենևին էլ չեն ապացուցում, որ 1894 թ. հուլիսի վերջին հայերը... ապստամբություն են բարձրացրել...

Ներքո ստորագրողները... հարկադրված են հավաստիացնել, որ իրականում հայերը՝ տղամարդիկ, կանայք, երեխաները դարձան զինվորների, քրդերի և զափթիեների բազմաթիվ հետապնդումների զոհեր, որոնք վիրավորում կամ սպանում էին բոլորին, ով նրանց ձեռքն էր ընկնում՝ առանց սեռը հաշվի առնելու։ Ըստ որում, հատկապես կարևոր է նշել, որ բացի Ցալվորիկի 11 գյուղացիներից, ոչ մի գերի չկար»[28]։

Հայերի նկատմամբ իրականացված բարբարոսությունը «լրիվ հաստատվեց Գելիեգուզանում փոսերը բացելով, որոնք, իրոք, գտնվում էին Պետոյի տան հետևը։ Նրանցից հատկապես մեկը լցված էր մարդկային ոսկորներով...»[29]։

Կառավարությունն արտասահմանյան թերթերի թղթակիցներին թույլ չտվեց Սասուն մտնել։ «Թայմսը» գրում է. «Ցավով հայտնում ենք, որ մեր համառ ու տևական ջանքերը՝ Սասունի

տոն, դրվում են ոստիկանության հսկողության տակ։ Մի քանիսը հրաժարվել են իրենց նախկին ցուցմունքներից՝ մի գիշեր ոստիկանության ձեռքում մնալուց հետո, ուրիշները, որոնք պնդեցին իրենց նախնական ցուցմունքը, բանտարկվեցին։ Վկաների մեծ մասը իրենց հայտարարությունները կարծես անգիր արած լինեն։ Դրանք նույն արտահայտություններով են, որ իրենց նկատմամբ ներշնչում է անվստահություն։ Շատերը, որոնք ցանկություն էին հայտնել գալու և հանձնաժողովին ցուցմունք տալու, «իշխանությունների կողմից պահվում են գյուղերում։ Չնայած սուլթանի տված բազմաթիվ հավաստիացումների, քննության ազատություն գրեթե գոյություն չունի», սակայն «փաստերն այնքան զարհուրելի ու բազմաթիվ են, որ չնայած թուրքական իշխանությունների բոլոր ջանքերին ու մեքենայություններին, նրանց չհաջողվեց դրանք թաքցնել» (Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 95—96)։

դեպքերն անաչառ քննելու նպատակով մեր հատուկ թղթակցի Հայաստան մտնելու իրավունք ստանալու համար, ապարդյուն անցան»[30]։

Անգլիական «Սպիկեր» թերթի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, որ այլևս կասկածից դուրս է կոտորածների փաստը։ «Մենք արդեն ունենք Վանի, Էրզրումի, Սվազի և Դիարբեքիրի հյուպատոսների պաշտոնական զեկուցումները, մենք ունենք հայ փախստականների տված ցուցմունքները, մենք ունենք թուրք զինվորների վկայությունները, որոնք մասնակցել են կոտորածներին։ Այս զինվորները պատկանում են կանոնավոր զորքին և կանչված են եղել Էրզրումից, Երզնկայից, Վանից, Բիթլիսից, Խարբերդից ու Սվազից։ Նրանք արդեն վերադարձել են իրենց տեղերը և սուլթանի կողմից պաշտոնապես շնորհակալություն են ստացել իրենց կատարած գործերի համար... Սասունի սարսափները իսկապես տեղի են ունեցել և կատարվել են կանոնավոր զորքերի միջոցով և այն մարդկանց հրամաններով, որոնք հետո շքանշաններ են ստացել սուլթանից»[31]։

Հիմնվելով անգլիական կառավարության ունեցած պաշտոնական տվյալների վրա, «Թայմսը» գրում է, որ Սասունում ոչնչացվել է 10 հազ. մարդ։

Սասունի կոտորածից հետո թուրքական 8000 զինվորներ իջնում են Մշո դաշտ, մտնում հայկական գյուղերը, կերակրվում հայերի հաշվին և նրանցից պահանջում՝ թողնել իրենց տները, հողերը, ունեցվածքն ու հեռանալ կայսրությունից։ Նրանք ավերում են ավելի քան 20 հայկական գյուղ։ Դաշտում տեղի են ունենում հայերի ձերբակալությունների ու բռնի թերքացումների բազմաթիվ դեպքեր։

Բնորոշ է հետևյալ փաստը։ Այդ օրերին թուրքական թերթերում հաղորդագրություններ տպագրվեցին, որ հանձնաժողովին հանձնարարված է քննել «հայերի հանցագործությունները»։ Ըստ որում, ջանքեր էին գործադրվում հարցը հանգեցնելու լոկ քրեական հանցագործությունների։ Ավելորդ չէ նշել, որ հանձնաժողովի հավաքած նյութերի գլխավոր աղբյուրը կոտորածներին մասնակցած թուրքերի ցուցմունքներն էին, որովհետև, ինչպես նշվեց, իշխանություններին հաջողվում էր զանազան միջոցներով հայերին զրկել ճշմարիտ ցուցմունք տալու հնարավորությունից։ Երբ անգլիական թերթերում լուրեր տպագրվեցին Սասունի կոտորածների մասին, սուլթանը կատաղություն բռնկում ունեցավ, որովհետև, ինչպես գրում է ցարական դիվանագետներից մեկը, նա հույս ուներ թաքցնելու քրդերի օգնությամբ Սասունում կատարված վայրագությունները։ Սուլթանը հրամայեց «եվրոպական թերթերին ուղարկել վճռական հերքումներ և անգլիական դեսպանից պահանջել՝ Մուշից հետ կանչել գործը քննելու համար այնտեղ գտնվող Վանի իր հյուպատոսին, որի հաղորդումներին է Բ. Դուրը վերագրում սուլթանի համար տհաճ տեղեկությունների հրապարակումը»[32]։

Սայիդ փաշայի հաշվարկներով, արտասահմանյան մամուլին կաշառելու համար արյունարբու սուլթանը ծախսել էր 235 հազար օսմանյան ոսկի և 640 շքանշան։ Կաշառվեցին մեծ թվով քաղաքական գործիչներ։ Սակայն հայկական կոտորածների «ստահոդ և անամոթ հերքումները... չկարողացան ցանկալի տպավորություն թողնել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա... որը Բ. Դուռը վերջին օրերս հարկադրեց արգելել օտարերկրյա գրեթե բոլոր լրագրերի մուտքը...» Թուրքիա[33]։

1. Տեղակալ Մ. Ավետիսյան, Հուշամատեան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 121։
2. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, Ե., 1985, էջ 187։
3. Նույն տեղը, էջ 192։
4. Կ. Սասունի, Պատմություն Տարոնո աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 571։
5. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 36—38.
6. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 3, էջ 5։
7. Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասուն, Ժնև, 1903, էջ 4—5։
8. Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, էջ 200։

8 ա. Հնչակ, 1884, № 1—2։

9. Մուրճ, 1984, հոկտեմբեր։
10. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 97.
11. Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 93.
12. Նույն տեղը, էջ 93—94։
13. Նույն տեղը, էջ 30։
14. Նույն տեղը, էջ 30—31։
15. Положение армян . . . , с. 229.
16. Նույն տեղը, էջ 231։
17. Կ. Թումայան, Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, Լոնդոն, 1905, Հ. Ս., էջ 555։

18. Геноцид армян . . ., с. 39.
19. Положение армян . . ., с. 230.
20. Геноцид армян . . ., с. 26.
21. Положение армян . . ., с. 232.
22. Նույն տեղը, էջ 233—234։
23. Նույն տեղը, էջ 237—240։
24. Նույն տեղը, էջ 242—243։
25. Նույն տեղը, էջ 247։
26. Геноцид армян . . ., с. 77.
27. Братская помощь . . ., с. 96.
28. Նույն տեղը, էջ 96, 98։
29. Նույն տեղը, էջ 98։
30. Մասիս, 1895, № 1։
31. Մշակ, 28 հունվարի 1895 թ.։
32. Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Ե., 1968, էջ 219։
33. Գ. Նազարյան, Աբդուլ Համիդ II Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 607։

1895—1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ։ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐ

Սուլթանը Սասունի կոտորածներով չբավարարվեց։ Նա որոշեց օգտագործել մեծ տերությունների միջև եղած հակասությունները, նրանց եսասիրական վարքագիծը և հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև կայսրության գրեթե բոլոր հայաշատ շրջաններում։

Մեծ տերությունները 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին են ներկայացնում Հայաստանում կատարվելիք ռեֆորմների նախագիծը։ Սուլթանը պատասխանում է, որ համաձայն է ռեֆորմ անցկացնել, բայց ոչ միայն հայաբնակ շրջաններում։ Իսկ դրա համար ժամանակ ու միջոցներ են հարկավոր։ Ակնհայտ էր սուլթանի դիտավորությունը։ Նա գործնականում մերժում էր ռեֆորմներ անցկացնելու պահանջը։

Սուլթանը հինգ ամիս ձգձգեց ռեֆորմների նախագծի քննարկումը և, ի վերջո, այն դարձնելով նշանակությունից զուրկ թղթի կտոր, հոկտեմբերի 20-ին ստորագրեց։ Սակայն ամբողջ կայսրությունում հոսող հայերի հորդառատ արյունը քշեց տարավ ռեֆորմների այդ ստորագրված նախագիծը։

Գերմանիայի կառավարությունը անվերապահորեն պաշտպանեց սուլթանի դիրքորոշումը։ «Ամբողջ Հայկական հարցը Գերմանիայի համար պոմերանացի մի դառամյալ և անպետք զինվորի ոսկորների արժեքն անգամ չունի» (Բիսմարկ)[1]։

Ժամանակի թերթերը գրում էին, որ Անգլիան Հայկական հարցը նորից հրապարակ հանեց, որպեսզի նրանով ճնշում գործադրի սուլթանի վրա և նրան հարկադրի հաշտվելու Եգիպտոսի օկուպացման հետ։

Ռուս ժուռնալիստ Օլգա Նովիկովան գրեց, որ Անգլիան թուրքահպատակ քրիստոնյաներին զրկեց Ռուսաստանի հովանավորությունից, իսկ ինքը նրանց համար ոչինչ չարեց[1]։ Սոլսբերին նման մեղադրանքներին պատասխանեց Անգլիան հայերի օգտին միայնակ գործելու պատասխանատվություն երբեք հանձն չի առել։ Հայերի օգնության կանչին նա պատասխանեց. «Անգլիական նավերը Տավրոսյան լեռները բարձրանալ չեն կարող»։ Հենց անգլիական այդ «չափավոր թուրքասիրական և ուժեղ հակառուսական քաղաքականությունն էր» «հայկական ողբերգության գլխավոր արտաքին պատճառը»[2]։

Իսկ Ֆրանսիայի կառավարության նախագահ Հանոթոյի մասին ժամանակակիցներից մեկը գրում է. «Գրպանները Բուրքական ոսկիներով ուռած, դեմքը հայերի արյունով շպարված երեսփոխանների և մամուլի ներկայացուցիչների մեծամասնության ծափահարությունների ներքո բեմ է բարձրանում։ Համիդի դանձը ծանր է կշռում։

Երկու տարվա ընթացքում ամբողջ Փոքր Ասիայում, ինչպես նաև Պոլսում, ֆրանսիական դեսպանի աչքի առաջ Համիդի մոլորյալ արբանյակները սպանեցին, խոշտանգեցին, հաշմեցին, անդամահատեցին ֆրանսիական պաշտպանյալներին. լկեցին տղամարդկանց, իրենց մայրերի գրկում հոշոտեցին երեխաներին, քրիստոնյա կանանց և կույսերի վրա փորձեցին այնպիսի վայրագություններ, որոնք միայն մարդակեր արարածները կարող էին հնարել և երևակայել։ Եկեղեցիների մեջ խորովեցին քաղաքների բնակիչներին, թողնելով 300 հազար դիակ... փչացրեցին գրեթե մի ամբողջ ցեղ»[3]։

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկին ցինիկության մեջ Սոլսբերիից և Հանոթոյից հետ չմնաց. «Ես չեմ ուզում ,որ թուրքական Հայաստանը դառնա երկրորդ Բուլղարիա, որպեսզի ռուսահայերը չտրամադրվ-

վեն մեր հիմնարկների դեմ, որը կստեղծի հայկական ինքնավարություն Թուրքական պրոտեկտորատի տակ»։ «Մենք Հայաստանը ուզում ենք առանց հայերի»[4]։

Իտալացի Ա. Ջիբբարին գրում է. «1894—1896-ի զարհուրելի, անլուր, խուժ, տմարդի և եղերական կոտորածները, որոնք հուզում է այսօր աշխարհը, մեծ տերությունների ղեկավարներին անտարբեր թողեցին։

Ձեր արյունը,— շարունակում է նա,— նրանց երեսին ցայտեց, ձեր քաղաքները, տները հրի մատնվեցին, բայց նրանք իրենց տեղերից չշարժվեցին, ձեզ լքեցին..., որովհետև բոլորն էլ Թուրքիան բաժանելու շար ցանկություն ունեին, բայց ամեն մեկը մտածում էր առյուծի իր բաժինը ստանալ...

Այո, Եվրոպան ձեզ սպանողի մեղսակիցը և... համերաշխը եղավ։ Նա գերադասեց ձեր արյան մեջ թաթախված ձեռքեր ունենալ, քան թե ձեռք տալ մի գահի, նույնիսկ երբ այդ գահին բազմած էր մի գռեհիկ չարագործ, մի ավազակ, մի եղեռնագործ։

... Ողբերգական բոպեին նա ձեզ երեսի վրա ձգեց, երբ Թուրքական յաթաղանը ձեզանից հազարավորներին էր մանգաղում, թեև Եվրոպայի ժողովուրդները ձեզ հետ էին»[5]։

Մեծ տերությունների այդ եսասիրական վարքագիծը նկատի ունենալով է, որ Լենն գրեց. «... Հայ ժողովրդի արյունը նորից վաճառքի էր հանված իմպերիալիստական բորենիների միջև. կատարվում էին քստմնելի սակարկություններ, և սուլթանը շահում էր նոր կողմնակիցներ»[6]։

Թուրքիայի կառավարությունը քաջ ծանոթ էր մեծ պետությունների քաղաքականությանն ու դիտավորություններին։ Այդ օրերին Թուրքական թերթերը գրում էին. «Իրար հակոտնյա և անմիաբան Եվրոպայից վախենալ պետք չէ»։

Սվազի վալին 1895 թ. հունիսին հայտարարեց. «Դուք, հայերդ, հանգիստ մնացեք, իզուր տեղը մեծ-մեծ հույսեր մի դրեք Անգլիայի կամ ուրիշների վրա։ Մենք արդեն գիտենք Եվրոպայի հետ վարվելու եղանակը։ Եթե հարկավոր լինի Անգլիային էլի մի բան կտանք, ինչպես 1878 թ. տվեցինք Կիպրոսը, և այն ժամանակ ձեր բոլորի հոգին կհանենք»[7]։

Համիդը Սասունի իր առաջին ոճիրը գործադրելուց հետո եվրոպացիների բազկերակը քննեց, և արդյունքը գտավ գոհացուցիչ. մահվան մանգաղը գործածելու ժամանակը եկած համարեց և արձակեց ջարդի ու թալանի հրաման։

Պոլսի ցույցերից մեկ շաբաթ հետո, «Մայիսյան ծրագրի» ստորագրումից 5 օր առաջ, Համիդի թիկնապահ Սաաէդդինը, բարեկարգություններ անցկացնելու պատրվակով, մեկնեց գավառները աշիրեթություններին նախապատրաստելու, որոնք ազդանշան ստանալով պիտի սկսեին կոտորածները, իսկ բանակը պետք է այն շարունակեր իր միջամտությունը քողարկելով «երկու ցեղերի միջև» խաղաղություն հաստատելու պատրվակով։

Համիդիե զորագնդերը քուրդ և Թուրք ղեկավարների միությամբ կատարեցին իրենց հանձնարարված գործը. անպատիժ ու անխնա կողոպտեցին և հրկիզեցին։ Արևմտահայությունը XIX դարի վերջին տասնամյակի այդ երեք ամիսների ընթացքում ապրեց իր պատմության ամենաեղերական օրերը։

Ջարդերը շատ վարպետորեն էին կազմակերպված։ Դրանք բոլոր կուսակալություններում միաժամանակ տեղի չէին ունենում։ Մերթ Սև ծովի ափը, մերթ Միջագետքի սահմանագլուխը, մերթ Կիլիկիայի շրջանը, մերթ Փոքր Ասիան կոտորածների թատերաբեմ էին դառնում։ Եվ կողքից դիտողի համար ընդհանուր ջարդի տպավորություն չէր ստեղծվում։ Դա Համիդին հնարավորություն էր տալիս դեսպաններին պատասխանել, որ «կայսրությանս ամեն մի անկյունում խլրտումներ են ծագում. հազիվ զսպում եմ մեկը, մի ուրիշ տեղ նոր ապստամբության առաջ եմ կանգնում, սպասեցեք մինչև կատարյալ խաղաղության հաստատումը, որ հրովարտակս հրապարակեմ»։

Կոտորածները կազմակերպված էին որոշակի համակարգով՝ զինվորների մի խումբը սպանում էր տասը տարեկանից բարձր արական սեռի հայերին, մյուս խումբը քշում տանում էր կանանց և երեխաներին, վերջապես, երրորդ խումբը թալանում էր դատարկ տները։ Կոտորածներն ամենուրեք նույն ձևով էին սկսվում. կատաղի ամբոխը, կանաչ դրոշներ պարզած, հարձակվում էր հայաբնակ թաղերի վրա։ Խուժանները ներխուժում էին հայերի բնակարանները՝ կոտորում, խոշտանգում, թալանում և ապա հրդեհում տները։

Ելտզը բողոքներ չէր ընդունում։ Համիդը այդ ջարդերը, խլրտումները «խեղճ Թուրք ժողովրդի վրա հայ ապստամբների հար-

ձակումներ» անվանեց։ Հերքեց օտարերկրյա թերթերի գրած հոդվածները, հյուպատոսների տեղեկագրերի փաստերը։ Մյուս կողմից՝ դահիճներ էին պատժվում, նախարարներ փոխվում, պաշտոնյաներ էին աքսորվում, տասնյակներով մարդիկ էին ձերբակալվում՝ իրենց պարտականությունները թերի կատարելու համար, որպեսզի մի քանի ամիս անց ազատ արձակվեին։

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսի Գում Գափու եկեղեցում խաղաղ ցույցի հավաքվեցին մոտ 4000 հայեր, բողոքելու, որ սուլթանը բարենորոգումների ծրագիրը չի իրականացնում։ Ցուցարարները շարժվեցին սուլթանի նստավայրը՝ Բաբը Ալի պալատը։ Թուրքական կառավարությունը նախապես գիտեր այդ ցույցի մասին և մահմեդական դպրոցների սովորողներին ու խուժանին զինել էր մահակներով։ Թուրք ոստիկանությունն ու զինվորները ցուցարարների ճանապարհը փակեցին և պահանջեցին ցրվել։ Արքունի թիկնապահ Սերեվեթ բեյը զորքերի հազարապետին է հանձնում նրանց գնդակոծելու հրամանը։ Պրովոկատորներից մեկը ատրճանակի կրակով ցած է գլորում Սերեվեթ բեյին։ Թուրքական զինվորները, ոստիկանությունն ու խուժանը սկսեցին կոտորել խաղաղ ցուցարարներին։ Քաղաքի փողոցներում խուժանը հարձակվեց ցույցի հետ ոչ մի առնչություն չունեցող հայերի վրա ու կոտորեց մոտ 2000 հոգու։

Այդ առթիվ Ջ. Բրայսը գրում է. «Հայերին կոտորելու ուղղությամբ սուլթանն այնքան հեռու գնաց, որ որոշում էր, թե ինչպիսի զենք պիտի գործադրվի։ Նա չէր սիրում հրաձգային զենքը։ Բարձր աղմուկն ազդում էր նրա նյարդերի վրա։ Նա կարգադրեց գլուխ կտրողների իր բանակը զինել արճճե գլխիկ ունեցող մահակներով... երեք օր շարունակ մահակների հարվածների աղմուկը չէր դադարում, մինչև որ մեռյալ լռություն իջավ հայկական փողոցների վրա»։ Եվ այսպես «սառը միջոցներով» մարդկանց սպանում էին, իսկ ապա սայլերն ու կառքերը դիակները տանում թափում էին ծովը և, որպեսզի դրանք ջրի երես չբարձրանային, բացում էին նրանց փորերը[8]։

Տրապիզոնում հայերի կոտորածը նախապես նշանակված էր հոկտեմբերի 5-ին։ Երեք ու կես ժամ շարունակ, բանակի ներկայությամբ ու լուռ համաձայնությամբ խուժանը կողոպտում ու կոտորում էր հայերին։ Ֆրանսիական դեսպան Կամբոն գրում է, որ սկզբում կոտորեցին հայ բեռնակիրներին։ Մի քանի գրժբախտներ, փորձելով փրկվել, նավակներով թիավարեցին դեպի նավահանգստում կանգնած նավերը, բայց նրանց էլ սպանեցին նավավարների թիերի հարվածներով։ Փողոցներում, խանութներում, արհեստանոցներում և հրապարակներում պատահած բոլոր հայերին կոտորում էին։

«... մի տեղ խոովարարները չէին կարողանում գրավել հայերից մեկի տունը... այդ տեսնելով զինվորները, իրենց հագուստները փոխեցին և մարդասպանների հետ կրակ բացեցին... կասկածից դուրս է, որ դա մանրակրկիտ կերպով կանխամտածված դավադրություն էր»։ Ջարդերն անձամբ ղեկավարում էր կուսակալ Կադրի բեյը։ Հետաքրքիր է, որ քաղաքի բոլոր թաղամասերում ջարդերը սկսվեցին միաժամանակ և ընդհատվեցին հատուկ ազդանշանով։ Միայն Տրապիզոնում հայերին հասցված վնասը կազմեց 5 միլիոն ֆրանկ[9]։

Հոկտեմբերի 13-ին կոտորածներ սկսվեցին Բիթլիսում ու նրա գյուղերում։ Ազգաբնակչության մի մասը բնաջնջվեց տեղում, իսկ մյուս մասը փախավ լեռները, որտեղ ոչնչացավ սովից ու ցրտից։

Հոկտեմբերի 16-ին կոտորած տեղի ունեցավ Շապին-Գարահիսարում, զոհվեց 2000 հայ, ավերվեց 30 հայկական գյուղ։

Սեբաստիայում միայն մեկ օրվա ընթացքում՝ նոյեմբերի 12-ին, սպանվեց մոտ 1000 հայ։

Երզնկայում թուրքական իշխանությունները հայերին հավատացնում էին, որ նրանց ոչ մի վտանգ չի սպառնում, բայց միաժամանակ կազմակերպում էին, որ թուրքերը զենք գնեն։ Նրանք, մի կողմից, հայերին զինաթափ էին անում, իսկ, մյուս կողմից, թուրքերին խմբերի էին բաժանում, նրանց զենք ու փամփուշտ տալիս և որոշում հարձակվելու կարգն ու ժամանակը։ Շուտով սկսվեցին ջարդերը, որոնք տևեցին վեց ժամ։ Վայրագ խուժանը անասելի խժդժություններով սպանեց անզեն հայերին սրով, դաշույնով, դանակով, կացնով։

Արաբկիրում իշխանությունները որոշում են, որ ամեն թուրք կոտորածը պետք է սկսի իր հայ բարեկամին սպանելով։ 1896 թ. Ֆրանսիայում լույս տեսած «Հայերի ջարդը» գրքում բերված են հայերին կոտորելու բազմաթիվ փաստեր։ «Տեղական աշխարհիկ, հոգևոր, զինվորական իշխանությունները,— կարդում ենք այդ գրքում,— մի շարք տեղերում բացահայտ ղեկավարում էին ջարդերը կամ նրանց ուղղակի մասնակցություն ունենում... Զորքերին և ամբոխին կոտորածների էին կանչում ինչ-

պես պատերազմում՝ զինվորական փողի աղդականչով»։ Թուրք պաշտոնյաները շրջում էին Արաբկիրի գյուղերում և մուսուլմաններին կոչ անում՝ «Մուհամմեդի զավակները պետք է կատարեն իրենց պարտքը՝ կոտորեն բոլոր հայերին ու հրկիզեն նրանց տները։ Ոչ մի հայ մահից չպետք է ազատվի»։ Միայն Արաբկիրում կոտորածներին մասնակցում էին 1600 զինվոր ու սպա։ Քաղաքում սպանվեց 3000 հայ, հրկիզվեց 2750 տուն[16]։

Կարինում ու նրա գյուղերում ջարդերը տեղի ունեցան հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 3-ին։ Տեղի ֆրանսիական հյուպատոսը պահանջում էր «դատի տալ (այն) զինվորներին, որոնք մասնակցում էին թալանին ու ջարդերին»։ Կարինից ստացված մի զեկուցագրում կարդում ենք. «Մեռելների դիակները գնալով ստվարանում են, որ կողմ շրջվես՝ դիակների կույտ է, ամբողջ քաղաքը գերեզմանոց է դարձել»[11]։

Պոլսից ոչ շատ հեռու գտնվող Անհիսար վայրում թուրքերը հարձակվում են հայերի վրա, սպանում 60 հոգու, և նրանց դիակները գցում հորը։ Տեղական մուդիրն արդարանում է նրանով, որ իրեն վերևից կարգադրել են, թե «հայերին պետք է պատժել դաժանության համար»։

Տիգրանակերտում ֆրանսիական փոխհյուպատոս Մեյրիեի զեկուցագրում նշվում է. 1895 թ. հոկտեմբերի 4-ին վիլայեթի նահանգապետ է նշանակվում դազանաբարո հայատյաց Անիզ փաշան։ Որպես բողոքի նշան հայերը «փակեցին իրենց խանութներն ու եկեղեցիները», բայց մի քանի օր անց հարկադրված վերադարձան աշխատանքի։ Ահա այս «ապստամբության» պատճառով 119 հայկական գյուղ ավերվեց և հրդեհվեց, 6000 ընտանիք կոտորվեց։ Ավերվեց և կողոպտվեց 2500 խանութ, 1700 տուն, ոչնչացված ու անհետ կորած հայերի թիվը հասավ 30 հազարի։

Քաղաքի փողոցներում մոլլաները բղավում էին. «Մեր Ղուրանի օրենքով և կայսեր հրամանով ամեն մի իսկական մահմեդական պետք է 25 անհավատ ջարդի և նրա ունեցվածքին ու կնոջը տիրանա»։

Տիգրանակերտ քաղաքի կոտորածները Մեյրիեն նկարագրում է հետևյալ կերպ. «...12-ից պակաս էր հինգ րոպե... մկսվեց կոտորածը, փողոցում լսվեց հետապնդողների աղմուկը... կոտորածը առանց դադարի տևեց 3 օր ու գիշեր այնպիսի ահագնությամբ, որ կենդանի մնացածներին իրենց փրկվելը հրաշք

էր թվում»։ Սպանությունները սկսվեցին «սալավաթ Մահմեդ» բացականչություններով, նշանակված ժամին, նախապես պայմանավորված ազդանշանով, առանց որևէ մեկի կողմից որևէ առիթի։ Ուրբաթ օրը բացարձակապես նվիրված էր շուկային։ Սկզբում սպանվեցին բոլոր այն քրիստոնյաները, ովքեր չէին հասցրել թաքնվել, իսկ ապա սկսվեց թալանը։ Ես տեսա քաղաքով անցնող քրդերի ու թուրքերի՝ բեռնված թալման գործիքներով։

«Ինձ հավաստիացրին, որ թալանին մասնակցել են բոլորը, մեծից փոքր՝ քրդերը, զինվորները, զափթիեները և շատ բարձրաստիճան մահմեդականներ։ Երբ շուկան թալանով դատարկվեց... այն հրդեհվեց։ Ցերեկվա ժամը 2-ն էր։ Հրդեհը տևեց մինչև հաջորդ օրը... Բայց իսկական կոտորածը սկսվեց միայն շաբաթ օրվա առավոտյան։ Մինչև այդ քրիստոնյաներին սպանում էին փողոցներում, տների բակերում՝ նրանց վրա կրակելով պատուհաններից ու մինարեթներից։ Այդ օրը արևածագի հետ սկսվեց արյունահեղությունը և շարունակվեց մինչև կիրակի օրվա երեկոյան։ Նրանք (ջարդարարները) բաժանվել էին ջոկատների և գործի անցան սիստեմատիկաբար, տնից տուն անցնելով, բարեխղճությամբ շրջանցելով մահմեդականների տները։ Ջարդելով դռները՝ թալանում էին ամեն ինչ և, եթե տներում դեռ ապրողներ էին տեսնում, սպանում էին»։ «Ես իմ պատուհանից տեսա... զինվորների, զափթիեների, որոնք, միացած մահմեդականների ու քրդերի հետ, կրակում էին քրիստոնյաների վրա, իսկ վերջիններս զենքի էին դիմում միայն ինքնապաշտպանության համար»[12]։

Խարբերդի 55 գյուղերից ոչ մեկը զերծ չմնաց ավերածությունից։ Այստեղ իշխանությունները հանցագործ տարրերին նախապես զենք էին բաժանել, որոնք, գյուղացու հագուստ հագած, ոստիկանների հետ ոչնչացնում ու թալանում էին հայերին։ Հայկական որոշ գյուղեր դիմադրություն ցույց տվին, բայց ի վերջո սպանդից փրկվել չկարողացան։

Բալու քաղաքում սպանվեց 1200 հայ և առևանգվեց 250 կին։

Ակնի հայերի 1100 տներից ավերումներից զերծ մնացին միայն 140—150-ը։ Այդ քաղաքից ոչ շատ հեռու Եփրատ գետում ամերիկացիները տեսել էին բազմաթիվ դիակներ և, ինչպես ԱՄՆ-ի ներկայացուցիչ Գ. Բարնեմն է գրում, կոտորածները «կազմակերպել են պաշտոնական շրջանները՝ առանց որևէ պատճառի... Զոհերը ոչ մի դիմադրություն ցույց չեն տվել և

թուրքերից ոչ մեկը չի սպանվել, բացի նրանցից, որոնք սպանվել են կողոպուտը բաժանելու առիթով ծագած ընդհարումների ժամանակ։ Այդ մասերում քրդեր չեն եղել։ Ամեն ինչ կատարել են քաղաքացիները (թուրքերը) և զինվորները։ Կոտորածը տարածվել է նաև շրջակա գյուղերում...»[13]։

Ուրֆայում ջարդը սկսվեց 1895 թ. նոյեմբերի 6-ին, և առաջին օրը սպանվեց 125 հայ։ Հասան փաշան դիմելով թուրքերին՝ կոչ արեց. «Ոտքի ելեք, զավակներս, ձեզ տրված է 48 ժամ, կոտորենք բոլոր գյավուրներին, նրանց հարստությունը ձեզ է պատկանում»[14]։

Ֆրանսիական «Դեղին գրքում» Ուրֆայի ջարդերի մասին գրված է, որ նոյեմբերի 13-ին ժամը 17-ին չորս թուրքեր մայր եկեղեցու բակում մորթում են հայ դրամափոխին՝ հայտարարելով, որ այդ սպանությունը կատարել են իշխանավորների հրամանով։ Մահմեդականները բացեիբաց հայտարարում էին, որ հայերին պետք է կոտորեն։ Հաջորդ օրը ոստիկանությունը մահմեդականներին գրգռելու համար լուր տարածեց, որ գիշերը հայերը կրակել են թուրքերի վրա։ Հայերը փակվեցին իրենց տներում։ Թուրքերը զինվորների օգնությամբ սկսեցին թալանել ու քանդել հայերի խանութները։ Հայերը կարողացան հետ մղել խուժանի գրոհը։ Հաջորդ օրը իշխանությունները քաղաք բերեցին թուրք գյուղացիների, նրանց զինեցին և քշեցին հայկական թաղերի վրա։ Բայց այս անգամ էլ հայերը դիմակայեցին։ Զորքին հրամայվեց շրջապատել այդ թաղերն ու հայերին մեկուսացնել դրսի աշխարհից։ Չորեքշաբթի օրը ձերբակալեցին քաղաքի երևելի հայերին և նրանցից պահանջեցին իշխանություններին հանձնել 1800 հրացան ու այլ զենքեր։ Թուրքերին հաջողվեց հայերի մոտ եղած զենքերը խաբեությամբ հավաքել։ 1896 թ. հունվարի 16-ին հայկական թաղերը շրջապատեցին 3000 զինվորներ՝ 1500 համիդիե զինված ուժերի հետ միասին։ Հայերը կոտորվեցին, նրանց թաղերը թալանվեցին ու կործանվեցին։

«Դեղին գրքում» նշվում էր, որ «Այս ամենը կատարվեց հանուն մարգարեի և երկրի վրա նրա ստվերի՝ սուլթանի»։ Հաջորդ օրերին ջարդերը շարունակվեցին։ «3000 խելագարված հայեր փրկություն փնտրեցին մայր տաճարում։ Մեծամասամբ կանայք, աղջիկներ, երեխաներ էին... Կարելի էր մտածել, որ այդ ջերմեռանդները կխնայեն սրբությունը։ Ոչ, նրանք կացնով

խորտակեցին դուռը։ Ներս մտնելով նրանք սպանեցին որքան կարողացան... Վերջապես, ոչնչացման գործը ավարտելու համար չարագործները նավթ բերեցին և լցրեցին այդ դժբախտների շուրջը... Տաճարը հրդեհեցին և բոլոր նրանք, ովքեր ազատվել էին զենքից, զոհվեցին կրակի մեջ։ Այդ նույն ժամանակ մոլլան տաճարի տանիքից երախտագիտություն էր հայտնում Մուհամմեդին»[15]։

Հունվարի 16—17-ին Ուրֆայում զոհվեց 10 հազար հայ։ Վարչակազմի հրամանով հրեաները մեկ շաբաթ շարունակ փողոցներից հավաքում էին դիակները և լցնում փոսերի մեջ։

Մուշում մի պաշտոնատար անձ հրապարակավ հայտարարեց, որ մենք քրդերին հրամայել էինք հայերին սպանել, իսկ նրանք ավելի շատ թալանել, քան սպանել էին[16]։

Արաբկիրում ևս թուրքերը քրդերին մեղադրում էին, որ նրանք վատ են կատարել մինչև 7 տարեկան բոլոր հայերին ոչնչացնելու հրամանը, որովհետև հրապուրվել են թալանով։

Պ. Ի. Բելյաևի կարծիքով, կոտորածների դժոխային մեքենան գործում է հետևողականորեն և հարկադրում է մտածել, որ մենք գտնվում ենք ոչ թե մարդկային հասարակությունում, այլ ոպսոնդանոցում, որի սարսափելի պտուտակը արագությամբ իրար հետևից հրապարակ է հանում սպանություն, թալան, հրդեհ, բռնաբարություն, խոշտանգումներ[17]։

Ամենուրեք «զինվորներն ու ավազակները հարյուրներով մտնում են տները և պահանջում հանձնել տղամարդկանց։ Զինվորները կրակում էին (տների) պատուհաններից ներս, ավազակները տղամարդկանց մորթում և մասերի են բաժանում նրանց կանանց ու երեխաների աչքի առաջ»[18]։

Մի քանի բնակավայրերում հայերին գցում էին կրակի մեջ, մյուսներին կախում էին գլխիվայր ինչպես ոչխար և քերթում էին մաշկը, երրորդներին կացնով ու մանգաղով կտրատում էին, մաս-մաս բաժանում, չորրորդների վրա նավթ էին լցնում և այրում։ Վերջիններիս վրա «դնում են ուրիշ զոհերի, որոնք խեղդվում են ծխից։ Շատերին կենդանի հորում են, մյուսներին գլխատում են և գլուխները շարում երկար ձողի վրա»։ 50-ական հայերի պարանով իրար կապում ու գնդակահարում էին, ապա նրանց դիակները մասնատում կացնով կամ սրով։ Պոկում էին կանանց կրծքերը, նրանց քառատում, կանանց մայրերի մեջ վառոդ էին լցնում և այն բոցավառում[19]։

Բելյաևը շարունակում է. «Մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում կոտորածների ժամանակ տեղի ունեցած սարսափներից... Եվրոպացիներին նույնիսկ դժվար է հասկանալ այնպիսի գազանությունների հոգեբանությունը, ինչպիսիք են դիակների մանրատումն ու նրանց ծաղրելը, սպանվածի վրա սեռական կրքերին հագուրդ տալը, հղի կանաց արգանդը բացելն ու պտղին սպանելը։ Դա բարբարոսության ու այլասերվածության խառնուրդ է... Տրապիզոնում... թուրքերը մտան մսի կրպակ, հարձակվեցին մսավաճառի ու նրա որդու վրա..., կտրեցին նրանց ձեռքերը, ոտքերը, գլուխը, երկուսին մանր մասերի բաժանեցին, դրանք կախեցին և դիմելով անցորդներին, բղավում էին՝ «Ի՞նչ եք ուզում, ո՞տք, ձե՞ռք, գլո՞ւխ։ Գնեցեք։ Էժան կտանք»։ Սվազից գրում են, որ հայերից մեկը փրկվելու համար գնում է իր հարևան թուրքի մոտ։ Վերջինս նրան սարսափելի տանջանքներով սպանում է, սկզբում կտրելով քիթն ու ականջները, ապա հանելով աչքերը։ Խարբերդում հաջի Բեգոն, որ սպանել էր 100 հայ, իր ավազակներին հանձնարարում է հայ կնոջ մարմինը բաժանել չորս մասի և կախել սյուներից։ Աղթամարում ոմն Ջևվիթ երկու եղբայրների իրար է կապում, մեխում գետնին և այդպես սպանում։ Բայբուրդում վայրենիները հրճվում էին նրանով, որ սուրը մտցնում էին վիրավորի կուրծքը կամ վիզը և նրան պտտում որպես հողմահար[20]։

Սվազում Ֆրանսիայի փոխհյուպատոս Քառնիեն գրում է, որ քաղաքում սպանվածների մեջ գնդակահարվածների թիվը շատ փոքր էր։ Գրեթե բոլորի գանգերը ջարդված էին կացնով, փայտով, երկաթյա իրերով։ Վիրավորվածների թիվը չնչին էր, որովհետև բոլորին սպանում էին։ Հաջորդ օրը քաղաքի իշխանությունները դադարեցրին կոտորածները, հայտարարելով, որ «երեկ մահմեդականի պարտքը նրան պարտավորեցնում էր սպանել, և թալանածը նրա պարգևատրությունն է։ Այսօր ամեն ինչ պետք է վերջացվի»[21]։

Այսպիսով, կոտորածների կազմակերպիչը կառավարությունն էր, բայց խորամանկորեն հանցանքը գցում էր իր հրամանները կատարողների՝ թուրք և քուրդ ամբոխի և առանձին պաշտոնյաների վրա։

Վերևում արդեն ասվեց, որ իրենց արկածախնդրական քաղաքականությամբ սուլթանի ջրաղացին օբյեկտիվորեն ջուր էին լցնում դաշնակցականները։ Դրա ամենաբնորոշ օրինակը օսմանյան բանկի գրավումն էր 1896 թ. օգոստոսի 14-ին։ 30 հայեր մտնում են այդ բանկը, փակում նրա մուտքերը և պահանջ ներկայացնում հայկական վիլայեթներում բարենորոգումներ կատարելու մասին։

Սուլթանը չհապաղեց այս առիթն օգտագործել։ Նրա հրամանով խուժանին զինեցին և հարձակման տարան հայկական թաղերի վրա։ Սկսվեց կոտորածն ու կողոպուտը։ Դեպքերին ականատես Օ. Կայդանովան գրում է, որ երկու օր շարունակ «հայերի ջարդը շարունակվում էր լայն չափերով»։ «Ոստիկանությունը ինքը հորդորում և մասնակցում էր կոտորածներին։ Զինվորական պահակները... օժանդակում են մարդասպաններին»։ «Միանգամայն պարզված է, որ ջարդերը կատարել է կառավարության կողմից նախօրոք կազմակերպված խուժանը՝ ոստիկանական պաշտոնյաների ղեկավարությամբ»։ Ապա նա շարունակում է. «Այս բոլորը կատարվեց արտակարգ արագ, չէր լսվում մահացողների ոչ մի ճիչ, ոչ մի հառաչանք։ Նրանց խրձերի պես լցնում էին սայլերը՝ մեկը մյուսի վրա... տեսանք, որ նրբանցքից դուրս եկան հսկայական սայլեր՝ ոտքից գլուխ բեռնված սպանվածների դիակներով։ Նրանցից ոմանք կարծես շարժվում էին...»։ Խուժանը, բացի մահակներից, ուրիշ զենք չուներ։ Դրանք միևնույն ձևը և միևնույն երկարությունն ունեին և պատրաստված էին հատկապես այդ գործի համար։

Մահակները շատ օրեր առաջ բաշխված էին տարբեր ոստիկանական կետերի։ «Ամեն ինչ պատրաստված էր նախապես՝ մարդասպանները, մահակները, լրտեսները և սայլերը։ Բոլորը շարժվում էին և բոլորը կանգ էին առնում հատուկ ազդանշանով»[22]։

* * *

Սակայն մի քանի քաղաքներում ու բնակավայրերում սուլթանի ջարդարար քաղաքականությունը հայերի կողմից հակահարված ստացավ։

Օսմանյան յաթաղանի դեմ նորից անսասան կանգնեց հերոսական Զեյթունը։

1895 թ. հուլիսին Զեյթուն է՝ գալիս Մարաշի կառավարիչ Աս-

յան բեյը։ Արեգին գյուղում նա փորձում է ձերբակալել 1892 թ. ապստամբության հերոսներից մեկի՝ Խաչեր Կարապետյանի որդուն, բայց գյուղի զինված ջոկատն այդ թույլ չտվեց։ Իշխանություններին դա վտանգավոր ու անհանդուրժելի թվաց։ Նրանք սկսեցին ուժեր կուտակել Զեյթունի հայ բնակչությանը ոչընչացնելու համար։ Թուրքերի այդ դիտավորությունն իմանալով, զեյթունցիները նախապատրաստվեցին սպառնացող վտանգին դիմակայելու, իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու համար։ 1895 թ. հոկտեմբերի 12-ին Մութ Զոր կոչված վայրում տեղի ունեցավ ինքնապաշտպանության ղեկավարների խորհրդակցություն, որը որոշեց՝ սպառնացող վտանգը կանխելու նպատակով նախահարձակ լինել՝ շարժվել Զեյթուն և հարձակվել թուրքական զորանոցի վրա։

Զահան և Բերդուս գետերի միացման վայրում տեղի ունեցավ զեյթունցիների առաջին լուրջ բախումը օսմանյան ուժերի հետ, որը չորս ժամ տևեց։ Թշնամին զգալի կորուստներ տվեց, իսկ հայերը քաշվեցին լեռնաշխարհի խորքերը։

Հոկտեմբերի 15-ին Նշանի ղեկավարած ջոկատը գրավում է կառավարչատունը և գերում թուրք պաշտոնյաներին։ Ստեղծվում է ինքնապաշտպանության շտաբ, որը հաստատվեց ս. Աստվածածնի վանքում։ Հաջորդ օրը 2000 զեյթունցիներ շրջապատեցին թուրքական զորանոցը, որը կարողացավ միայն մեկ օր դիմադրել։ 700 թուրք զինվոր ու սպա գերի հանձնվեցին, որոնց փակեցին կառավարչատանը, իսկ նրանց կանանց ու երեխաներին ազատ արձակեցին։ Հայերի ձեռքն անցավ երկու հրանոթ, 2500 հրացան, 120 հազար փամփուշտ, մեծ քանակությամբ վառոդ, ինչպես նաև սննդամթերք, հագուստեղեն և այլն։ Զորանոցի վրա բարձրացավ կարմիր դրոշը, որի վրա գրված էր՝ «Զեյթունի անկախ իշխանություն»։ Հոկտեմբերի 19-ին ստեղծվեց Զեյթունի ժամանակավոր կառավարություն և ռազմական խորհուրդ։ Ապստամբության փաստացի ղեկավարը Նազարեթ Չաուշն էր՝ ռազմավարական փայլուն ընդունակություններ ու քաջություն ունեցող մի գործիչ։

Զեյթունի իրադարձությունները բուռն արձագանք գտան ոչ միայն Հալեպում ու Մարաշում, այլև Կ. Պոլսում. «Ապստամբ լեռան» անհավատներից՝ հայերից վրեժխնդիր լինելու համար իշխանությունները նոյեմբերի 5-ին՝ «արյունոտ երկուշաբթի»

օրը դաժան հաշվեհարդար տեսան նրա քաղաքի խաղաղ բնակչության հետ։ Ոչնչացվեց ավելի քան 1000 հայ։

Միևնույն ժամանակ թուրքական 30 հազ. կանոնավոր զորքը և նույնքան էլ բաշիբոզուկներ՝ դահիճներ, Ռեմզի փաշայի և Ալի բեկի հրամանատարությամբ, երկու ուղղություններով շարժվեցին Զեյթունի վրա։ Առաջին բախումը տեղի ունեցավ Կապանում։ Հայերը չորս ժամ դիմադրեցին, բայց ընկրկելով թշնամու գերակշիռ ուժերի առաջ, հետ քաշվեցին դեպի Ֆոնուզ։ Դեկտեմբերի 2-ին Ալի բեկի զորքերը ներխուժեցին Ֆոնուզ։ Քաղաքի բնակչությունը Ապահի և Բարդուղիմեոս վարդապետների ղեկավարությամբ երեք օր մարտնչեց թշնամու գերակշիռ ուժերի դեմ, որից հետո շրջապատման շղթան ճեղքեց ու հասավ Զեյթուն։ Թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան քաղաքից դուրս գտնվող, ինչպես նաև հարևան գավառների ու Մարաշի հայ ազգաբնակչության հետ։ Մեծ թվով կանայք քշվեցին Մարաշ, որոնց մի մասը թուրքական դաղանություններից ազատվելու համար անդունդը նետվեց։ Այդ ընթացքում Ռեմզի փաշան 40 հազարանոց բանակով ու 13 թնդանոթներով Զահան գետի կողմից շարժվեց դեպի Զեյթուն։

Չնայած հայերի հերոսական դիմադրությանը, թշնամուն հաջողվեց դեկտեմբերի 2-ին գրավել ս. Փրկիչ վանքն ու այն հրդեհել։ Ահագնացող վտանգը զեյթունցիներին հարկադրեց զինել ամբողջ ազգաբնակչությանը, իսկ ովքեր ի վիճակի չէին զենք կրելու, վառոդ ու սննդամթերք էին մատակարարում կռվողներին։ Այդպիսով կռվողների թիվը հասցվեց վեց հազարի։ Զեյթունը պաշտպանության կանգնեց։

Դեկտեմբերի 3-ին թշնամուն հաջողվեց տիրել քաղաքի վրա իշխող բարձունքներից մեկին և հայերին հարկադրել նահանջելու դեպի այգիներն ու զորանոցը։ Պաշտպանների մեջ խուճապի նշաններ երևացին։ Այդ ժամանակ պաշտպանության առաջին գծում երևաց Զեյթունի ալեզարդ իշխան Կ. Բասիլոսյանը, որին հաջողվեց ոգևորել հայերին և նրանց հակահարձակման տանել։ Սանդոխ լեռան վրա նրանք ոչնչացրին թշնամու ավելի քան 1000 զինվոր ու սպա։ Թուրքերը նահանջեցին։

Սակայն հայերի վիճակը գնալով ծանրանում էր։ Զեյթուն քաղաքում ազգաբնակչության (մասնավորապես կանանց և երեխաների) այնպիսի մեծ կուտակում էր առաջացել, որ լուրջ դժվարություններ էր ստեղծել պաշտպանների համար։ Ալի բեյը

ևս Ֆոնուզը կողոպտելուց ու ավերելուց հետո շարժվեց Զեյթունի վրա։

Օգտվելով այն բանից, որ քաղաքի կռվող ուժերը գտնվում էին պաշտպանական դիրքերում, ապստամբություն են բարձրացնում հայերի կողմից գերի վերցված 500 թուրք զինվորները։ Սակայն քաղաքը հրդեհելու նրանց փորձը ձախողվում է։ Զեյթունում մնացած կանայք, զինված կացիններով ու դանակներով, հարձակվում են հրձիգների վրա, նրանց մեծ մասին կոտորում և հանգցնում հրդեհը։

Դեկտեմբերի 6-ին Ալի բեյի զորքերը մոտեցան Զեյթունին, սակայն հայերին հաջողվեց հնարամիտ գործողություններով շփոթության մատնել թշնամուն և նրան հարկադրել, մեծ կորուստներ տալով, խուճապահար փախչել։

Հաջորդ մի քանի օրերին ևս զեյթունցիներին հաջողվում է հետ մղել թուրքերի հարձակումները, սակայն վրա հասնող սառնամանիքները, սննդամթերքի և մասնավորապես աղի պակասը նրանց ծանր կացության առաջ կանգնեցրին։ Գլուխ բարձրացրին նաև համաճարակները։

Բանակցությունների միջոցով ստեղծված իրավիճակից դուրս գալու փորձը ձախողվեց. թուրքական հրամանատարությունը անհաշտ դիրք գրավեց և Ռեմզի փաշայի ու Ալի բեյի միացյալ ուժերը 18 թնդանոթներով հարձակման անցան։ Վիճակն անհուսալի էր։ Սակայն զեյթունցիները չընկճվեցին։ Եղյա Նորաշխարհյանի ղեկավարած ջոկատը, օգտվելով ձնախառն մրրիկից, թուրքական համազգեստ հագած, գիշերով աննկատ դուրս եկավ քաղաքից և թիկունքից զրոհեց թուրքական զորքերի վրա։ Թուրքերը խուճապի մատնվեցին և սկսեցին իրար կոտորել։ Հաջորդ օրը, սակայն, թուրքերին հաջողվեց գրավել քաղաքի զորանոցը։ Բայց նրանք վախեցած էին և խուսափում էին վճռական գործողություններից, իսկ Ալի բեյը նույնիսկ հետ քաշեց իր ուժերը։

Մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորվում է Ռեմզի փաշան։ Տենդի մեջ նա մի հեռագիր է ուղարկում Կ. Պոլիս, նոր համալրումներ ստանալու խնդրանքով։ Կատաղած սուլթանը Ռեմզի փաշային անմիջապես պաշտոնանկ է անում և զորքերի հրամանատար նշանակում 5-րդ բանակի հրամանատար էթհեմ փաշային, որը զեյթունցիներին ահաբեկելու համար կատաղի ու անընդմեջ հարձակումներ է սկսում։ Սակայն Զեյթունին ընկճել այդպես էլ չի հաջողվում։ Մարտական գործողություններ-

ի չորս ամիսների ընթացքում հայերը կորցրել էին 3,5 հազար, իսկ թուրքերը՝ մոտ 20 հազար մարդ, որոնց մեծ մասը զոհվել էր ցրտից ու համաճարակից[23]։ Ոչ միայն այդ, այլև միջազգային ասպարեզում կայսրության համար ստեղծված բարդ իրավիճակի հետևանքով (հունական մի խոշոր բանակ կանգնել էր Թրակիայի սահմանի վրա՝ մտադրություն ունենալով ներխուժել կայսրություն) սուլթանը գործնական քայլերի դիմեց՝ Զեյթունի հարցը շուտափույթ կարգավորելու համար։ Էթհեմ փաշան հրաման ստացավ դադարեցնել պատերազմական գործողությունները։ Գործին միջամտեցին նաև մեծ տերությունների ներկայացուցիչները։ Հունվարի վերջերին լեռնաշխարհ եկան ռուսական, անգլիական, ֆրանսիական և իտալական հյուպատոսները, որոնք պետք է միջնորդի դեր կատարեին կռվող կողմերի միջև։ Թուրքական կողմը պահանջում էր ապստամբության ղեկավարներին պատժել, իսկ մյուսներին՝ ներում շնորհել։ Հայերը վճռականապես մերժեցին այս առաջարկությունը և սպառնացին վերսկսել մարտական գործողությունները։ Թուրքերը հարկադրված էին տեղի տալ։ Ինն օր տևած բանակցություններից հետո, հունվարի 30-ին համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի՝ ընդհանուր ներում էր շնորհվում բոլորին, դրսից եկած հնչակյանները պետության ծախսով պետք է հեռանային Զեյթունից, փախստական գյուղացիներն ու զինված ջոկատների անդամները կարող էին վերադառնալ իրենց բնակավայրերը։ Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ, ոստիկանական և նման այլ պաշտոնյաներ նշանակելիս առավելությունը տրվելու էր զեյթունցիներին։ Նրանք պետք է վերադարձնեին գրաված զենքերը։ Չեղյալ էին հայտարարվում զեյթունցիների պարտքերը։ Մարաշում ստեղծվելու էին տերությունների հյուպատոսություններ, որոնց վրա էր դրվում այդ համաձայնության կատարման վերահսկողությունը։

Իշխանություններն ու անգլիական դիվանագետներն ամեն միջոցի դիմեցին համաձայնագրի կատարումը վիժեցնելու համար։ Չնայած դրան, դժվար է գերագնահատել զեյթունցիների հաղթանակի ինչպես հոգեբանական, այնպես էլ քաղաքական նշանակությունը։ Զեյթունցիների այս խիզախության շնորհիվ Փոքր Ասիայի արևմտյան եզերքներին առաջացող ջարդը կասեցվեց, և հնարավոր եղավ փրկել Կիլիկիայի ամենաբարգավաճ քաղաքը՝ Ադանան[24]։

Ամբողջ Արևմտյան Հայաստանով տարածված զանգվածային կոտորածների ծովում բարձրացավ մարտնչող Զեյթունը, որը զենքով ու հերոսությամբ ապացուցեց ապրելու իր իրավունքը։

1896 թ. հունիսի 3—9-ը Վանում ու նրա վիլայեթում ոչնչացվեց 30 հազար հայ։ Բայց, եթե վիլայեթի գյուղերը չկարողացան թշնամուն լուրջ դիմադրություն ցույց տալ և մոտ 100 գյուղ ավերվեց, ապա Վան քաղաքի 25 հազար հայերը կենացումահու կռվի ելան։ Ի դեպ, այստեղ էին ապաստան գտել գյուղերից փախած մեծ թվով հայեր։

Թուրքերը երկմտում էին, չէին համարձակվում Վանում կոտորածներ սկսել։ Սուլթանը 1896 թ. հունվարին Վան ուղարկեց Ֆերիկ Սաաէդդին փաշային, որը նախապատրաստեց թուրքական և քրդական ուժերը Վանի հայության հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Սկսած 1896 թ. գարնանից Վանում գրեթե ամեն օր սպանությունների ու կողոպուտների դեպքեր էին տեղի ունենում։

Հունիսի 3-ին քաղաքում զգալի թվով հայեր ձերբակալվեցին և Հակոբ գյուղի մոտ տանջամահ արվեցին։ Քաղաքի թուրքերին ու քրդերին մեծ քանակությամբ զենք բաժանվեց. մզկիթներում մոլլաները մահմեդականներին կոտորածի էին կոչում։ Ամբոխը, զինված կացիններով, սրերով ու փայտերով՝ սպանում, թալանում ու հրդեհում էր հայերին ու նրանց ունեցվածքը։ Ղալիբ փաշան, պաշտպանություն խոստանալով, իր տանն է հավաքում 770 հայի և նրանց բոլորին հանձնում խուժանին հոշոտելու։ Նույն այդ խուժանը կոտրում է ս. Հակոբ եկեղեցու դռները, ոչնչացնում այնտեղ պատսպարված հայերին և հրկիզում եկեղեցին։

Շուտով Վան հասավ Բիթլիսի աղետի գույժը։ Վանի ազգաբնակչությունը շփոթվեց ու խուճապահար եղավ, որի հետևանքով զգալի կորուստներ տվեց։ Սակայն Ս. Ավետիսյանի, Մ. Սարուխանյանի (Մարտիկի) և Ա. Պետրոսյանի (Պետոյի) ջանքերի շնորհիվ հաջողվեց պայքարի միասնական ճակատ ստեղծել հայկական թաղամասերի վրա հարձակվող թուրքական զորքերի, համիդիեի հրոսակների և գավառներից եկած բաշիբոզուկների դեմ։ Հայ ավագանու ժողովը որոշեց թշնամուն դիմադրել մինչև արյան վերջին կաթիլը։

Եվ իսկապես, ամենուրեք, բոլոր փողոցներում ու տներում հայերն ընկնում էին կռվելով։ Այգեստանը ինքնապաշտպանության էր կանգնել՝ ցույց տալով հերոսության և հնարամտության փայլուն օրինակներ։ Այգեստանում բոլոր հայերը զինվել էին, ով ինչով կարող էր։ Կռվողների շարքերում հերոսաբար մարտնչում էին նաև կանայք։ 1500 զինված երիտասարդներ բաժանված էին 35 ինքնապաշտպանական խմբերի։ Թուրքական թաղերի հարևանությամբ գտնվող փողոցներում կառուցվեցին ուժեղ ամրացված ավելի քան երեսուն դիրքեր, որոնց շնորհիվ հետ մղվեցին թշնամու գրոհները։ Հունիսի 5-ին մեծաքանակ զինված ուժերով Վան մտավ հայտնի ավազակապետ Շաքիր աղան, որը, միանալով քաղաքի չարդարարներին, հարձակման անցավ Այգեստանի վրա։ Հայերը հաջողությամբ պաշտպանվում էին՝ թուրքերին նույնիսկ փախուստի մատնեցին[25]։

Վերջիններս զինադադար առաջարկեցին։ Հունիսի 6-ին նրանք անգլիական հյուպատոսի միջոցով վանեցիներից պահանջեցին հանձնել ինքնապաշտպանության 10 ղեկավարներին և իրենց մոտ եղած զենքերը։ Հայերը մերժեցին կատարել այդ պահանջը։ Թուրքերը վերսկսեցին հարձակումը, բայց նորից անհաջող։ Հունիսի 8-ին թշնամին հարձակման տարավ իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերը, իսկ թնդանոթները ռմբակոծում էին Այգեստանի թաղերը։

Ի վերջո Վանի ինքնապաշտպանության ղեկավարները հավաքվեցին խորհրդակցության և, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, զենքի, ռազմամթերքի և սննդամթերքի պաշարների սպառման վտանգը, որոշեցին ընդունել թուրքական ռազմական իշխանությունների պայմանները՝ դիմադրությունը դադարեցնելու և պաշտպանության կազմակերպիչների Պարսկաստան հեռանալու մասին։ Իշխանությունները խոստանում էին չհետապնդել հեռացողներին և երաշխավորել հայերի ապահով մեկնումը մինչև պարսից սահմանը։ 1896 թ. հունիսի 8-ին 1500 զինված ու անզեն հայեր, Մ. Ավետիսյանի և այլոց ղեկավարությամբ, դուրս եկան քաղաքից և շարժվեցին դեպի Վարագա լեռները։ Նրանց միացան 600—700 անզեն հայեր։ Սակայն Ենդամիտ Սաաէդդինը ս. Բարդուղիմեոս վանքի մոտ շրջապատեց նրանց և տեղի ունեցած անհավասար մարտում հայերի մեծ մասին, այդ թվում նաև Մ. Ավետիսյանին, կոտորեց։ Միայն 30—35 հոգի կարողացավ ազատվել և անցնել Պարսկաստան։ Իսկ Մարտիկի ու Պետոյի 80 հոգուց բաղկացած խումբը մեկ շաբաթ պատսպարվեց Վարագա լեռներում, ապա փորձեց շարժվել

պարսկական սահմանը, բայց ճանապարհին պաշարվեց թուրքական ուժերի կողմից և մինչև վերջին մարդը զոհվեց։ Այնուհետև թուրքական իշխանությունները Վանում կազմակերպեցին անզեն հայերի սոսկալի ջարդեր։ Նրանք ոչնչացրին հազարավոր անմեղ մարդկանց, ավերեցին դպրոցներ, հարյուրավոր տներ, հրո ճարակ դարձրին Հայկավանքի, ս. Հակոբի, Հանկոյսների եկեղեցիները, կործանեցին Այգեստանի մեծագույն մասը[26]։

Մալաթիայում, սկսած 1895 թ. հոկտեմբերից, իշխանությունները թուրքական և քրդական գյուղերում մարտական զենք ու ռազմամթերք էին բաժանում և մահմեդական աղգաբնակչությանը նախապատրաստում կոտորածների։ Զգալով վտանգը, հայերը դադարեցրին աշխատանքը և փակեցին կրպակները։

Հոկտեմբերի 23-ին քաղաքի կառավարիչ Ռզա փաշան կառավարչատուն է հրավիրում հայկական համայնքի ազդեցիկ դեմքերին և առաջարկում հավատափոխ լինել։ Հայերը հրաժարվում են կատարել այդ առաջարկը։ Նրանք բոլորը տեղնուտեղը ոչնչացվում են։ Թուրքերը նրանցից մեկի մարմինը կտոր-կտոր անելով կախում են հրապարակում և աղգաբնակչությանը առաջարկում գնել «10 փարայով»։

Մալաթիայի հայկական թաղերում պաշտպանական աշխատանքներ սկսվեցին։ Թուրքերը հարձակման անցան, բայց հետ շպրտվեցին, իսկ Զաթալբանդ թաղամասում հայերին հաջողվեց ոստիկանությանը փախուստի մատնել։ Թուրքերը զինադադար են հայտարարում։ Բայց դա խաբուսիկ զինադադար էր և երկար չտևեց։ Մարտերը շարունակվեցին երկուստեք հաջողություններով։ Հատկանշական է, որ այդ կռիվների ընթացքում որոշ քրդեր և առանձին թուրքեր կռվում էին հայերի հետ կողք կողքի։ Թուրքերը հրդեհեցին հայկական թաղերը՝ 2 հազար տուն այրվեց, 3 հազար մարդ զոհվեց։

Ինքնապաշտպանության կանգնեցին ոչ միայն քաղաքների, այլ նաև մի շարք գյուղերի բնակիչները։ Այդ առումով բնորոշ է Զարսանջակի գյուղացիների դիմադրությունը։ Գավառի իշխանությունները տեսնելով, որ շարսանջակցիները հետ են մղում ջարդարարների գրոհները, դիմում են խորամանկության։ Նրանց հաջողվում է խաբեությամբ ոստիկաններին գյուղ մտցնել։ Սկսվում է կոտորածը, թալանն ու ավերածությունը։

Մարզվանում զինված ամբոխը, զորքն ու մոտակա գյուղերից բերված խուժանը գրոհեցին հայկական թաղամասերի վրա, սակայն հանդիպելով համառ դիմադրության, նահանջեցին։ Համալրում ստանալով թուրքերը պաշարեցին հայկական թաղերը, սակայն օրեր շարունակ չէին համարձակվում հարձակվել։ Բայց զինամթերքի ու ջրի պակասն իր սև գործն արեց։ Հայերի դիմադրությունը ճնշվեց։ Գրեթե բոլորը սպանվեցին։

Հայերի դիմադրությունն այս և մի քանի այլ վայրերում ի վիճակի չեղավ փակելու զանգվածային կոտորածների ճանապարհը։ Զանգվածային ջարդերը մահաբեր ուրվականի նման անցնելով հայաշատ շրջաններով, 1896 թ. օգոստոսին իրենց ժանիքները նորից խրեցին պոլսահայության կոկորդը։ Օգտագործելով օսմանյան բանկի դեպքերը, սուլթանի հրամանով միայն Կ. Պոլսում ոչնչացվեց 10 հազ. հայ։

1894—1896 թթ. ընթացքում կոտորվածների թիվը սովորաբար հաշվվում է 300 հազ. մարդ, բայց, օրինակ, անգլիացի մասնագետ Ու. Ռամզեյի կարծիքով կոտորվել է 500 հազար մարդ։ Ժակ Մորգանը գտնում է, որ սպանվել է 200 հազար, բռնի մահմեդականացվել է 100 հազար մարդ, իսկ 100 հազ. կին և աղջիկ քշվել են հարեմները։ Ֆրանսիացի Էմիլ Անտուանը հաշվում է 250 հազար սպանված։ Ռուս գիտնական Գուտորի հաշվումներով քանդվել ու ավերվել է 50 հազար տուն և 8 հազար գյուղ, որը ու անապատան մնացել 100 հազար երեխա։ Ս. Իզմիրյանի խոսքերով «ամբողջ հայ ժողովուրդը սուզվում է արյան մեջ»։

Տաժանակիր վիճակ էր սպասվում կենդանի մնացածներին։

Մուշում Անգլիայի փոխհյուպատոսը 1895 թ. դեկտեմբերին գրեց, որ Դիարբեքիրի մոտակայքի գյուղերի քրիստոնյա բնակչությունը, մահվան սպառնալիքով, մահմեդականացվել է։ «Իշխան Լոբանովը նույնիսկ նյութեր է հավաքում այդ կապակցությամբ Բ. Դանը բողոք գրելու։ Հետագայում փաստերը հաստատվեցին...»[27]։

Դիարբեքիրի Բերեջիկում «մինչև կոտորածի օրը (հունվարի 1-ը) եղել է 240 տուն, կոտորածից հետո մնացել է 150 քրիստոնյա, մյուսները, թվով 1500 հոգի..., իրենց հարազատների արնաթաթախ դիակների առաջ և ամբոխի սպառնալիքների պատճառով դարձան մահմեդական»[28]։

Անկարայում ֆրանսիական հյուպատոսը գրում է, որ ֆանատիկոսները այրիացածներին ու որբերին հարկադրում էին ընդունել մահմեդականություն, հրաժարվողներին անմիջապես սպանում էին։ Բայց ոչ միայն կրոնափոխ էին անում, այլև ստրկացնում էին, վաճառքի հանում։ Այդ մասին բազմիցս հիշատակել են ֆրանսիական հյուպատոսները Օրֆիից, Ալեքսանդրեթից, Հալեպից։ Դեռ 1890 թ. նոյեմբերին հյուպատոս Պոնյոնը հայտնում է, որ Հալեպում գրեթե հրապարակավ վաճառվում էին հայ աղջիկներ[29]։

Ոչնչացվեցին ու կողոպտվեցին բազմաթիվ հնություններ, ճարտարապետական հուշարձաններ, հին ձեռագրեր ու գույք։ Հին ձեռագրերի արծաթյա կազմերն ու արծաթյա իրերը ձուլում էին, դրանցից գոտիներ և այլ զարդեր պատրաստում։

«Ավելի լավ էր մեռնեինք,— գրում է արաբկիրցի մի կին,— ի՞նչ է մեր այժմյան կյանքը։ Մեր աչքի առաջ միշտ այդ սարսափելի տեսարաններն են, ամբողջ ժամանակ մենք տեսնում ենք, թե այդ գազանները ինչպես են սպանում ու թալանում անմեղ մարդկանց... Աստվա՜ծ։ Աստվա՜ծ։ Ե՞րբ ենք մենք գաղարելու լաց լինել»[30]։

Կործանելով հազարավոր շենքեր, սպանելով խաղաղ հայ բնակչությանը, կատարելով աներևակայելի բռնություններ և անասնական սանձարձակություններ, պղծելով քրիստոնեական սրբությունները և մահմեդականացնելով հայերին, թուրքերը միաժամանակ իրենց կամակատար մամուլի օրգանների օգնությամբ հավատացնում էին աշխարհին, որ իրենք միայն պաշտպանվում են հայկական «խռովություններից», որ հայերը հարձակվել են «կառավարական շենքերի» և նույնիսկ «մզկիթում աղոթող մահմեդականների» վրա։

Թուրքական այդ սուտը նկատի ունենալով, Տյուտչևը գրեց.

Նորից Արևելքը ծխում է թարմ արյունով,
Նորից կոտորած է, ամենուրեք ողբ ու արցունք։
Եվ նորից ճիշտ է քեֆ անող մարդասպանը,
Իսկ զոհերը հանձնվել են չարախոսության։

1894—1896 թթ. կոտորածները ամայացրին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր։ Կոտորածներին ուղեկցեց ու հաջորդեց զանգվածային արտագաղթը։ Հայ ազգաբնակչությունը ահաբեկված հեռանում էր իր հայրենիքից, հեռանում էր՝ իրեն հանձնելով անորոշ վաղվան։

Կոտորածների ականատես թուրք մտավորական Եկենը գրում է. հայերից շատերը «Ամերիկա կամ Եվրոպա գաղթել ուզեցին, իրենց հետևում ձգելով հայրենիք, հարազատներ ու բարեկամներ։ Գաղթել ուզեցին ոչ թե հանուն գաղթելու սիրո կամ իրենց երկիրը չսիրելու համար, այլ հուսահատվելով ու փախչելով թուրքերի ստեղծած անտանելի վիճակից... Բռնապետերը գաղթի համար հայերի առաջ դռները բաց էին արել...»[31]։

Գ. Ա. Ջանիշևի «Հանդիպում հայ գաղթականների հետ» նամակում կարդում ենք. «Ես նորից տեսա ժողովրդի թափառական, արդեն ծանոթ պատկերը, որն անօգնական այս ու այն կողմ է ընկնում արդեն երեք տարի, չիմանալով բարբարոս հետապնդումներից որտեղ թեքի գլուխը... շարժվում է խայտաբղետ ամբոխը, հյուծված, փալասներ հագած հայերն ու հայուհիները, երկչոտ նայելով շուրջ բոլորը։ Հանդիպում են ամեն տարիքի մարդիկ՝ սկսած կրծքի երեխաներից մինչև խոր ծերության հասած ալևորներ։ Քաղցած, գիշերվա սառնամանիքից քարացած... Նրանք գնում են լուռ, ձմռան արևի սառը ճառագայթների տակ... հայացքներում անելանելի վիշտ և այնքան ակնհայտ հուսահատություն, որ անգամ ամենաանզգան չէր կարողանում անտարբեր անցնել։

Չի լսվում ո՛չ ողբ, ո՛չ հառաչանք ու հեկեկանք, նույնիսկ ոչ մի ձեռք չմեկնվեց ողորմության համար... ամեն ինչ պատմում էին նրանց այս ներս ընկած, հանգած, թախծոտ աչքերը, որոնք տեսել էին ամեն ինչի և ամենքի կործանումը, ինչը թանկ է մարդկային սրտին, այս հիվանդացած, պրկված շրթները, որոնք... երկնքից ու մարդկանցից պաշտպանություն են հայցում։

Հազարներով են նրանք անցնում սահմանը...»[32]։

Վրա հասավ 1896 թ. ցրտաշունչ ձմեռը, որը սովով ու համաճարակով եկավ լրացնելու թուրքական վայրագությունները։

Վանից գրում են, որ կոտորածներից հետո հազարավոր սովյալներ ամեն օր քաղաք էին գնում մի վիճակում, որ «անհնար է նկարագրել» և աղաչում են հաց ու հագուստ տալ։ Հազարավոր կանայք և աղջիկներ թափառում են ձյունածածկ փողոցներով, սոված ու անտուն, հաճախ ծածկված միայն մի գլխաշորով, որովհետև նրանց ամբողջ հագուստը թալանել էին[33]։

Օսմանյան կայսրությունը դարձել էր հայերի որսադաշտ։

«Եթե պատահեր, որ որևէ հայ ընտանիք տնից դուրս գար ճանապարհորդելու,— գրում է Եկենը,— ավազակներն ու մարդ կոչվող անարժան ստորները նրանց պաշարում էին և այնպիսի չարիքներ էին հասցնում, որ ճանապարհորդությունն անկարելի էր դառնում։ Վայն էր եկել այն խեղճի գլխին, ով համարձակվեր վերադառնալ և կառավարությունից պահանջեր, որ իր ընտանիքի առևանգված անդամները վերադարձվեն։ Այն ժամանակ ավելի մեծ չարիք ու աղետներ կարող էին կատարվել։ Եթե կատարվածները գրվեն, ընթերցողն անպայման կսարսափի և գիտակցությունը կկորցնի»[34]։

Եվ շատ տարօրինակ է, որ այդ դեպքերից 100 տարի անց, 1984 թ. հոկտեմբերի 10-ին Թուրքական պետական ռադիոն հայտարարում է՝ կայսրության բոլոր մասերում, «ամբողջությամբ վերցրած ըմբոստությունների ժամանակ հայերի զոհերի թիվը չի անցնում 14 հազարից, (իսկ)... մուսուլմանների զոհերի թիվը... 5 հազարից պակաս չէ։ Եվ սրանք հիմնականում սպանվել են առանց պատճառի, սպանվել հայերի կողմից իրենց վրա կրակ արձակելու կամ էլ ռումբ գցելու պատճառով, որպեսզի նրանք հարձակվեն հայերի վրա և դրանով գրավեն Եվրոպայի ուշադրությունը»։

* * *

1891—1896 թթ. թե՛ Սասունի և թե՛ հայկական համատարած մյուս կոտորածները առաջ բերեցին աշխարհի՝ առաջադեմ ուժերի ցասումն ու բուռն բողոքները։ Անատոլ Ֆրանսը Աբդուլ Համիդին անվանեց «մի բռնակալ» որ «սարսափից խելագար է դարձել»։

Հայերի պաշտպանությամբ ու արևմտյան տերությունների, այդ թվում նաև Ֆրանսիայի քաղաքականության խիստ քննադատությամբ հանդես եկավ Ժան Ժորեսը։ «Ինքը՝ սուլթանն է ցանկացել կոտորածը, նա է այն կազմակերպել ու ղեկավարել»։ Նա հայկական ողբերգության համար իսկական մեղավոր էր համարում նաև մեծ տերությունների երկդիմի շահադիտական և անմարդկային քաղաքականությունը, որ Եվրոպայի նույնիսկ դեմոկրատական ուժերին դարձրեց եսասիրական հաշիվների խաղալիք, և այդ ուժերին թույլ չտվեց իրենց ձայնը բարձրացնելու օսմանյան դահճի արյունախում քաղաքականության դեմ[35]։

Գլադստոնը Աբդուլ Համիդին անվանեց «մեծ մարդասպան» և հայտարարեց, որ Օսմանյան կայսրությունը պետք է «ջնջվի քարտեզի վրայից», որովհետև նա «նախատինք է քաղաքակրթության համար և անեծք մարդկության հասցեին»[36]։

Անգլիական քաղաքական գործիչ Ջ. Բրայսը գրում է. «Աբդուլ Համիդը իր ձեռքի շարժումով մահ էր տարածում». ինչ վերաբերում է հայ ժողովրդին, ապա նա «երբեք չէր մտածել ընդվզելու սուլթանի դեմ կամ ձեռք բարձրացնելու մուսուլման հարևանների վրա»։ Չնայած դրան, բազմաթիվ «գյուղեր հրոճարակ դարձան», եկեղեցիները վերածվեցին մզկիթների, կանայք բռնաբարվեցին, տղաներ և աղջիկներ դուրս տարվեցին և վաճառվեցին որպես ստրուկներ»[37]։ Ժնևի «Լա Ժնեվուազ» թերթը 1895 թ. հունվարի 16-ին գրել է. Թուրքական կառավարությունը «ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում», որպեսզի Բեռլինի պայմանագիրը ստորագրողներին ասի՝ «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես այլևս գոյություն չունի Հայկական հարց»*[38]։

Անգլիական «Նյուկաստել Դեյլի Ջոռնել» թերթի թղթակիցը Բիթլիսի գավառի Խնձորկ գյուղից գրում է. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, երկար ժամանակ նախապատրաստված և, վերջապես, գործադրված այն դիտավորությամբ, որ բոլորովին ոչնչացնեն այդ երկրի 30—40 հազար բնակիչներին։ Դա կանխորոշված մի փորձ էր՝ իսպառ ջնջելու աշխարհի երեսից Սասունի բնակիչներին, և մի բոպե անգամ չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը հղացվել է

* Դեպքերի ժամանակակից թուրք պատմաբան Սադիկ Շահիդը 1898 թ. գրել է. «...Հայոց վերջին ջարդը նախապես մտածված, պլանավորված և կարգադրված էր սուլթանի կողմից»։ Կ. Պոլսում թուրքերին 2—3 օր աշխատանքից ազատում և ուղարկում էին հայերին սպանելու։ Հայերին սպանում էին ինչպես առնետների։ Ջերբակալված հայերի թիվը հասավ 25 հազարի, որոնց կեսից ավելին ոչնչացվեց ամենաբարբարոսական միջոցներով։

Գերմանական գեներալ Ֆոն Դեր Հոլցը 1897 թ. գրել է. «Փոքր Ասիայում և Կ. Պոլսում հայկական կոտորածները ոչ թե թուրքերի մոլեռանդության գործն էին, այլ նախապես մտածված քաղաքական դավադրության հետևանք»։ Այդ տարիներին Կ. Պոլսում գտնվող եվրոպացիները պատմում էին բազմաթիվ փաստեր, երբ իշխանությունները պատժում էին հայերին օգնող թուրքերին («Նոր դար», 1897 թ. նոյեմբեր)։

Կ. Պոլսի բարձրագույն կառավարության գիտությամբ և նրա կատարյալ հանձնարարությամբ»[39]։

Գերմանական «Ֆոսիշե Ցայտունգ» թերթը գրել է. «Հայկական եղեռնագործությունները, որոնք այլևս անկարելի է ուրանալ, մեծ դժվարություններ պետք է պատճառեն Թուրքիային»[40]։

1894 թ. նոյեմբերի 26-ին Բոստոնում տեղի է ունենում «Հայոց միացյալ բարեկամների» ժողով, որտեղ հայտնի գրականագետ Հաունը քաղաքակիրթ մարդկությանը կոչ է անում սանձահարել սուլթանի բռնություններն ու գազանությունները[41]։

Շանթահարված Արևմտյան Հայաստանում կատարված գազանություններից, Մոսկվայի մի խումբ ուսանողներ նամակ են գրում իրենց արևելահայ ընկերներին. «Մեր բոլորի համակրանքը ձեր կողմն է՝ հանուն ազատության կռվողների կողմը... մենք ևս կրում ենք բռնակալության ճնշումը, թեև ոչ այնպիսի սարսափելի ձևով, ինչպես վերջին ժամանակները գործադրվեց ձեր եղբայրների գլխին... Մենք այժմ իսկ պատրաստ ենք սիրով ողջունել այն բոպեին, երբ ձեռք ձեռքի կտա՝ ազատ Հայաստանի և ազատ Ռուսաստանի ուսանող երիտասարդությունը»[41]։

* * *

Սուլթանի հայաջինջ քաղաքականությունը 1894—1896 թթ. շարդերով չսահմանափակվեց։

Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովևը 1901 թ. գրում էր. «Ես պետք է արձանագրեմ, որ հիշարժան 1894—1896 թթ. հետո, երբ հայերը ենթարկվեցին բարբարոսական ոչնչացման... այդ վիճակը ոչնչով դեպի լավը չի փոխվել։ Հայկական նահանգներում ռեֆորմների մասին դեկրետը, որ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճնշման տակ հրապարակեց Աբդուլ Համիդը 1895 թ. հոկտեմբերի 20-ին, մնում է որպես մնած տառ։ Ագրարային հարցը սրվում է, հողերի մեծ մասը Թուրքերի ու քրդերի կողմից զավթված է կամ զավթվում է, և իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում, այլ նույնիսկ հովանավորում ու աջակցում են այդ զավթումները։ Մեր հյուպատոսները միաձայն վկայում են քրդերի ոչ միայն չդադարող հարբստահարությունների ու թալանի, նրանց կողմից հայերի սպանության, այլև հայ կանանց բռնի մուսուլմանացման մասին։ Ի դեպ, այս անկարգությունների մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվում»[42]։

Մուշում ու Սասունում հայերի վիճակի մասին Վանում Ռուսաստանի հյուպատոսը գրում է. «Քրիստոնյա ազգաբնակչության վիճակն արտակարգ ծանր է։ Սպանությունները, թալանը և բռնությունները, որին ենթարկվում են հայերը... կրկնվում են յուրաքանչյուր ամիս»[43]։

Խնուսի 306 հայերի ստորագրությամբ անգլիացիներին հասցեագրված նամակում ասված է. «Սասունում տեղի ունեցած կոտորածը միայն մի կաթիլ է հայոց արյան օվկիանոսում... Այդ ողբերգությունը շարունակվում է մինչև այժմ, բայց հիմա նա արդեն մոտենում է իր եզրափակիչ փուլին, և հայ ժողովուրդը փչում է իր վերջին շունչը։ Մի՞թե եվրոպական կարեկցությունը պետք է արտահայտվի լոկ մեր գերեզմաններին խաչ դնելու մեջ...»[44]։

«Թուրքերն ու քրդերը,— արձանագրել է խաղաղության առաջին համաշխարհային կոնգրեսը,— զավթում են հայ գյուղացիների աշխատանքի արդյունքը, նրանց տունը և ունեցվածքը, գողանում են այն, ինչ բացահայտ վերցնել չեն կարողանում։ Ընդդեմ այս բռնությունների ու սպանությունների հայերը ոչինչ ձեռնարկել չեն կարողանում, որովհետև զրկված են զենք կրելու իրավունքից»[45]։

Ավելացան հարկերը. մի քանի, նույնիսկ 10 տարվա հարկերը պահանջում էին վճարել միանգամից, վճարել նաև արտագաղթածների փոխարեն։

Մի նամակում կարդում ենք. «Հայ բնակչությունից արդեն քերթել են նրա կաշին, այժմ սկսում են ծծել նրա ողջ արյունը ու դուրս քաշել աղիքները։ Հարկերի ու պարհակների գանձումը սովորաբար ուղեկցվում է այնպիսի բարբարոսություններով, որոնցից բոլոր նրանց, ովքեր չունեն Թուրքական պաշտոնավորների հոգեկան ու բարոյական հատկանիշները, մազերը բիզբիզ են կանգնում»[46]։

Տեղական իշխանությունները, կառավարությունից պարգևներ ստանալու մոլուցքով, հայերին ոչնչացնելու համար դիմում էին հալածանքների ամենածայրահեղ միջոցների։ Հանկարծակի խուզարկություններն ու ձերբակալությունները դառնում էին սովորական երևույթ։ Բանտարկվածներին «ուտելիք չեն տալիս, ծեծում են ճիպոտներով, նրանց մարմինը հոշոտում աքցանով,

տանջամահ անում՝ եռացող ջրի մեջ ձգելով կամ խեղդելով»։

Պետական պաշտոնյաները, բիրտ ուժ գործադրելով, հարկադրում էին մարդկանց մեկը մյուսի դեմ կեղծ ցուցմունքներ տալ։ Հաճախ կարելի էր տեսնել վախից ցնորված կանանց և երեխաների։

Օրինական ինքնապաշտպանության ամեն մի փորձ դիտվում էր որպես հանցագործություն և ենթարկվում էր հալածանքի։ Այդպես հայ աշխատավորը դառնում էր բեյերի և աղաների ստրուկը, նրանց առևտրական գործարքների առարկան։

Կոտորածներից հետո ընկած տարիներին ևս թուրքական իշխանությունները, հեղափոխականներ փնտրելու պատրվակով, հայկական բնակավայրերում գազանություններ էին կատարում, ապանում, թալանում։

«Այդ արյունահեղ դեպքերի կազմակերպիչների,— գրում է Ցու. Վեսելովսկին,— իսկապես ղեկավարող ցանկությունն էր՝ եթե հնարավոր չէ ամբողջովին ոչնչացնել հայկական տարրը, այնուամենայնիվ որքան հնարավոր էր կրճատել այն»[47]:

«Ուժեղացող ճնշումները նպատակ ունեն հարկադրելու հայերին՝ հեռանալու Ռուսաստան, որպեսզի նրանց հողերը բնակեցվեն մուսուլման գաղթականներով և այդ ձևով աստիճանաբար երկրամասը բնակեցնել մուսուլմաններով»[48]։

Բեյրութում ռուսական հյուպատոսը 1898 թ. սեպտեմբերի 12-ին գրում էր, որ թուրքական կառավարությունը Կարինի, Բիթլիսի և Վանի վիլայեթների կոտորածների հետևանքով ազատված հողերը թուրքերով բնակեցնելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում։ Այդ հողերի վրա բնակվելու բերված թուրքերը 10 տարի ազատվում են զինվորական ծառայությունից, պետությունը իր վրա է վերցնում նրանց ընտանիքների տեղափոխման ծախսերը և այլն։

Խրիմյան Հայրիկը ռուսական ցարին գրում էր, որ վերջին տարիների ընթացքում սպանված, ձերբակալված, արտաքսված, սովից մեռած, բռնությամբ մահմեդականացված հայերի թիվը գերազանցում է 1895—1896 թթ. տուժածների թիվը[49]:

Եղեռնը շարունակվում էր...

Բայց նաև շարունակվում էր հայ ժողովրդի ազատատենչ պայքարը սուլթանի հայաջինջ քաղաքականության դեմ։ 1894—1896 թթ. կոտորածները ծանր հարված հասցրին արևմտահայությանը, մասնավորապես նրա երիտասարդությանն ու պայքարի ընդունակ ուժերին։ Չնայած դրան, 90-ական թվականների վերջերին ու XX դարի սկզբներին շատ քաղաքներում ու գյուղերում գործում էին զանազան գաղտնի խմբակներ, մարտական ջոկատներ։ Իրենց գործունեությունը աշխուժացրին հայդուկները։ 1904 թ. յաթաղանի դեմ նորից ոտքի ելավ Սասունը, որի հերոսամարտը մի նոր էջ բացեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ։

Խորացող քաղաքական, տնտեսական և սոցիալական ճգնաժամը, Ռուսաստանի 1905 թ. բուրժուադեմոկրատական հեղափոխության ազատաշունչ ազդեցությունը, կայսրության ներսում ծավալված դասակարգային ընդվզումները Թուրքիային մղում էին դեպի բուրժուական հեղափոխություն, դեպի հասարակության վերակառուցում։

1. Կ. Թառոյան, Ժողովրդական շարժումները Սասունում, Ե., 1966, էջ 142։
1 ա. Մշակ, 1894, № 143։
2. Լեո, Գլագստոն, Թիֆլիս, 1899, էջ 243։
3. Գ. Եազճյան, Արդուլ Համիդ II Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 621—623։
4. Амфитеатров, Армянский вопрос, СПБ, 1906, с. 17.
5. Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին, Կ. Պոլիս, 1908, էջ 6—7։
6. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, էջ 182։
7. Մշակ, 1895, № 67։
8. А. Амфитеатров, Армянский вопрос, с. 5—6.
9. Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 101—102.
10. Նույն տեղը, էջ 51—52։
11. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 450։
12. Братская помощь . . ., с. 102—107.
13. Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1981, հ. 6, էջ 273։
14. Արարատ, 1896, մայիս։
15. Братская помощь . . ., с. 109—111.
16. Նույն տեղը, էջ 52։
17. Նույն տեղը, էջ 53։
18. Նույն տեղը, էջ 54։
19. Նույն տեղը, էջ 54։
20. Նույն տեղը, էջ 56։
21. Ցու. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր Յոհաննես Լեփսիուսի («Հայաստանի ջարդերը»), Կ. Պոլիս, 1915, էջ 143։

22. Братская помощь . . ., с. 77, 90.
23. Մ. Վարժապետյան, Հուշիկք Զեյթունի, Մարզվան, 1912, էջ 198։
24. Զեյթունի պատմագիրք, Պուենոս-Այրես, 1960, էջ 775—776։
25. Հ. Ծրամյան, Հուշամատեան Վան-Վասպուրականի, 4, 1, Ալեքսանդրիա, 1929, էջ 353—354։
26. Հայ ժողովրդի պատմություն, 4. 6, էջ 264։
27. Братская помощь . . ., с. 115—116.
28. Նույն տեղը, էջ 116։
29. Նույն տեղը։
30. Նույն տեղը, էջ 62։
31. Հայրենիք, 26—27 ապրիլի 1985 թ.։
32. Братская помощь . . ., Введение, с. 20.
33. Նույն տեղը, էջ 58։
34. Հայրենիք, 26—27 ապրիլի 1985 թ.։
35. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 166—167.
36. Положение армян до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 11.
37. Մուրճ, 1895, № 1։
38. Նոր դար, 19 նոյեմբերի 1897 թ.
39. Մշակ, 1895, մայիս։
40. Մուրճ, 1894, №№ 11—12։
41. Նույն տեղը։
41 ա. Կ. Թառոյան, Ժողովրդական շարժումները Սասունում, էջ 122։
42. Е. Саркисян, Политика османского правительства в Западной Армении, Е., 1972, с. 202.
43. Նույն տեղը, էջ 204։
44. Братская помощь . . ., Предисловие, с. 11.
45. Е. Саркисян, Политика османского . . ., с. 206.
46. Նույն տեղը, էջ 208։
47. Ю. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры. Е., 1972, с. 428.
48. Геноцид армян . . ., с. 180.
49. Նույն տեղը, էջ 183։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

ԱՃՊԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության պատմությունը կեղծելու, այդ ցեղասպանության իրողությունը ժխտելու փորձերն ու ջանքերը նոր չեն։ Դրանք գրեթե հասակակիցներ են։

Ջարդերի և նրանց հաջորդող առաջին տարիներին կատարված ցեղասպանությունն ընդհանրապես ժխտելն անհնար էր, որովհետև այն նոր էր և մարդկանց հիշողության մեջ դեռևս թարմ։ Դրա համար էլ երիտթուրքերը ոչ թե ընդհանրապես ժխտեցին ջարդերի փաստը, այլ հայտարարեցին, որ կոտորածները հետևանք էին հայերի անհավատարմության ու ապստամբական մտադրությունների։

Երիտթուրքերն եռանդուն աշխատանք ծավալեցին՝ արտասահմանյան հայկական պարբերականներում Թուրքիայի դեմ տպագրված հոդվածներ, «հայկական խռովությանը» վերաբերող նամակներ, հայկական զինված խմբերի և ռազմամթերքների պահեստների լուսանկարներ հավաքելու ուղղությամբ։ Նրանք մեծ ջանքեր թափեցին նաև ցեղասպանությունը հերքող փաստաթղթեր և այլ նյութեր հայթայթելու գործում։ Կատարվեցին առաջին լուրջ փորձերը 1914—1916 թթ. իրադարձությունները կեղծելու և այդ միջոցով իրենց քաղաքականության իսկական էությունն ու նպատակները քողարկելու համար։

Այդ նպատակն էր հետապնդում Թալեաթի այն պնդումը, թե իբր Օսմանյան կայսրությունը բռնությամբ ներքաշվեց պատերազմի մեջ, թե երիտթուրքերը դեմ էին պատերազմին Թուրքիայի մասնակցությանը։ Ապացուցելու հարկ չկա, որ Թալեաթը ստում

էր։ Պատմությանը քիչ թե շատ տեղյակ յուրաքանչյուր ոք լավ գիտե, որ երիտթուրքերի կուսակցությունը ինքն էր պատերազմի ձգտում՝ իր պանթուրքական ծրագրերն իրականացնելու, որպես մինչմում Կովկասն ու Սև ծովի հյուսիսային ափամերձ շրջանները գրավելու և այն թուրքական ներքին ծով դարձնելու, իրանական Ադրբեջանը զավթելու և Միջին Ասիա դուրս գալու, ինչպես նաև հայերին ոչնչացնելու ու կայսրությունում ազգային միատարրության հասնելու համար։ Պատմագրության մեջ երիտթուրքերը հենց այդ անունով էլ հայտնի են՝ միատարրականներ։

Պատերազմի մեջ մտնելուց դեռ ամիսներ առաջ օսմանյան կառավարությունը սկսեց տենդագին ռազմական նախապատրաստությունները։ Մասնավորապես մեծ ուշադրություն էր դարձվում Արևելյան ռազմաճակատում հաջողության հասնելուն։ Երիտթուրքերի կենտկոմի անդամ Ե. Ռիզա բեյը անդրկովկասյան որոշ ազգայնամոլ կուսակցությունների ներկայացուցիչների հետ բանակցություններ էր վարում՝ պատերազմում Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատով հանդես գալու համար։ Թուրքիան խոստանում էր զինել այդ ազգայնամոլ ուժերին, իսկ հաղթանակից հետո Հյուսիսային Կովկասում ու Անդրկովկասում մի քանի անկախ պետություններ ստեղծել։ Վերջիններս պարտավորվում էին ապստամբություն բարձրացնել, «ռուսների նահանջի գիծը կտրել, երկաթգծերը քանդել, զինամթերքներն ու ռազմական պահեստները հօդս ցնդեցնել»։

Թալեաթը համառորեն հերքում էր նախապես ծրագրված ցեղասպանության փաստը, բայց հենց այդ նույն Թալեաթի շատ հայտարարություններ հակառակն են ապացուցում։ Ահա դրանցից մի քանիսը. «Հայերը,— նշել է նա,— տեղահանվեցին արևելյան նահանգներից, բայց ոչ բնաջնջման մշակված ծրագրի հիման վրա։ Հայերի ճակատագրի պատասխանատվությունն ընկնում է իրենց՝ հայերի վրա, չնայած ճիշտ է, որ տեղահանությունն ամեն տեղ չէ, որ օրինավոր միջոցներով կատարվեց և շատ անմեղ մարդիկ տառապեցին, որովհետև մի շարք պաշտոնյաներ իրենց հեղինակությունն օգտագործեցին... Ես այդ խոստովանում եմ։ Ես խոստովանում եմ նաև, որ կառավարության պարտականությունն էր արգելելու այդ թշնամություններն ու գազանությունները, համենայն դեպս, որպես նվազագույնի հետապնդելու և խստորեն պատժելու դրանք գործադրողներին»[1]։

Զգտելով իրեն անմեղ, կոտորածներին անմեղսակից ներկայացնել և այդ ոճրագործությունները թուրք ժողովրդի վրա բարդել, Թալեաթը ասում է՝ նրանք, ովքեր մասնակցել են տեղահանություններին, կամ սովորական ոճրագործներ ու ավերողներ են և կամ էլ հասարակ, տգետ, նախանձախնդիր, կեղծ թուրքեր, որոնք հավատում էին, որ հայերը պետք է պատժվեն և, որ կոտորելով հայերին, գործում են ի շահ իրենց երկրի։ Ավելի հեշտ էր գործ ունենալ առաջինների, քան երկրորդների հետ, որոնք ավելի հզոր ու բազմաթիվ էին, և որոնց դեմ պատժողական որևէ միջոցառում մեծ դժգոհություններ պետք է ստեղծեր այն զանգվածների մեջ, «որոնք ճիշտ էին գտնում նրանց արարքները»[2]։ Չէր կարելի երկիրը մասնատել և Անատոլիայում անիշխանություն ստեղծել, երբ պատերազմում ներքին միասնությունն այնքան կարևոր էր։ Թալեաթը եզրափակում է. «Պատերազմի ժամանակ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկվում են յուրաքանչյուր երկրում, բայց, եթե մյուս երկրներում կատարված ցավալի իրադարձությունների կողքից լռությամբ անցան, մեր արարքների արձագանքը լսվեց ամբողջ աշխարհում, որովհետև բոլորի աչքերը մեր վրա էին հառած»[3]։

Երիտթուրք մի այլ լիդեր՝ Ջեմալ փաշան ևս, «ողբալով» թուրքերի ու հայերի ավանդական համերաշխ հարաբերությունների ոչնչացումը և օտարների միջամտության պատճառով հայերի կործանումը, հաստատում է հայ աղամարդկանց ջարդերի փաստը։ Նա հայտարարում է, որ իրեն հաջողվեց «150 հազարի չափ կանանց ու երեխաների փրկել, որոնցից էին կազմված տեղահանության քարավանները»[4]։

Ջեմալը պնդում է, որ տեղահանության որոշումները կայացվել են առանց իր մասնակցության, որ ինքը բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել է, որպեսզի իր իրավասության տակ գտնվող տարածքներում այնպիսի «վայրագություններ չկատարվեին, ինչպիսիք արձանագրված են», օրինակ, Խարբերդի ու Տիգրանակերտի շրջաններում։ Ջեմալն ավելացնում է՝ «ոճիրները, որոնք գործադրվեցին 1915-ի տարագրության ժամանակ, արդարացիորեն առաջացրին մարդկության խորագույն նողկանքը»[5]։

«Դժբախտաբար Հայկական հարցում կառավարության դիրքորոշումը,— շարունակում է նա,— դուռ էր բացել թուրք ընակ-

չության կողմից գործադրված ոճիրների համար... և մարդ չի կարող հարց չտալ, թե արդյո՞ք Հայկական հարցի մի այլ լուծում չկար»[6]։

Երբ պատերազմն ավարտվեց, թուրքական որոշ խմբավորումներ հրապարակ նետվեցին, հանցանքը միայն երիտթուրքերի վրա բարդելու միջոցով այն թուրք ժողովրդից՝ մասնավորապես նրա իշխող դասակարգերից հեռացնելու համար։ Նրանք վերականգնեցին այն մեղադրանքը, որ «շատ հայեր, խաբված հունական դիվանագիտությունից ու տոգորված հեղափոխական գաղափարներով», ոտքի էին ելել օսմանյան կառավարության դեմ։ Հետևաբար,— ասում էին նրանք,— տեղահանությունները կարելի էր արդարացնել «պատերազմական անհրաժեշտությամբ», բայց ոչ մի արդարացում չուներ «թալանի ու բնաջնջման» քաղաքականությունը, որ իրականացրին երիտթուրք ղեկավարները և որոնք դասվում են «մարդկության մեծագույն ոճրագործությունների շարքում»։ Ուստի արդարությունը պահանջում է, որ թուրք ժողովուրդը չպատժվի «ոչ բանական կառավարության» «ոճրագործ մոլորությունների» համար, որը մահմեդականներին նույնքան վնաս պատճառեց, որքան հայերին։ Այդպիսին էր Մեծ վեզիր Ֆերիդ փաշայի դիրքորոշումը 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում։ Ընդունելով «չարագործությունները, որոնք այնպիսին են, որ մարդկության խիղճը հավիտյան սարսռեցնում են», Ֆերիդ փաշան հանցանքը բարդեց գերմանացի և երիտասարդ թուրք բռնապետերի վրա և դաշնակիցներին հիշեցրեց հայերի «չափազանցությունների մասին»։

Հետպատերազմյան շրջանում թուրք գործիչներից ամենաանկեղծը Ահմեդ Էմինն էր՝ Եալմանը։ Նա ընդունում էր, որ ցեղասպանություն կատարվել է և այն, ինչ հայերի նկատմամբ կատարվեց, «ռազմական պահանջների հետ համաչափ չէր»։ Նշելով, որ տարագիրների մեծ մասը կանայք ու երեխաներ էին, որոնք զրկված էին ապրելու միջոցներից և ենթարկված կլիմայական և աշխարհագրական ծանր պայմանների ազդեցությանը, Եալմանը գրում է. «Առաջին հերթին ավանը կամ գյուղը բոլոր շարժական իրերով թողնելու կամ վաճառելու համար տրամադրված ժամանակը շատ կարճ էր, որոշ դեպքերում այդ ժամանակը մեկ կամ երկու օր էր միայն։ Երկրորդ, տեղահանվածները ոչ միայն անպաշտպան էին հարձակումներից, որոնք անխուսափելի էին հրոսակախմբերի կողմից, այլև «հատուկ կազմակերպությունը», որ ստեղծվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկու ազդեցիկ անդամների աջակցությամբ, մի շարք դեպքերում, ուղղակի գործնական դեր ունեցավ հարձակումների ու ջարդերի կատարման գործում։ Երրորդ, տարագրության համար ընտրված վայրը մասամբ անապատ էր և անկարող ապահովելու մեծաքանակ մարդկանց, ովքեր զով լեռներից էին եկել՝ անցնելով անասելի դժվարությունների միջով։ Տեղահանությունները կոչված էին լինելու ռազմական նկատառումներով ժամանակավոր միջոցառում, բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների համար դրանք կոչված էին բնաջնջելու Թուրքիայում եղած հայկական փոքրամասնությունը, Փոքր Ասիայում ցեղային միատարրություն ստեղծելու համար»։

Էմինը նշում է, որ 1917 թ. թշնամական պրոպագանդայի ուժեղացման և տեղահանության դեմ հանդես եկող մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների (նույնիսկ կառավարության կազմում եղած անձանց) ճնշումների շնորհիվ կառավարական մի հանձնաժողով ստեղծեցին՝ տեղահանության վայրագությունները քննելու համար, բայց կառավարության կազմում տեղահանության կողմնակից անձանց ավելի ազդեցիկ լինելը ամբողջ խնդիրը «վերածեց ցուցադրման, քան անկեղծորեն փորձ արվեց ճշտելու իրական վիճակը»։ Նրանք, ովքեր պնդում էին «բնաջնջման քաղաքականության վրա», գիտեին, որ հասարակական դատապարտման էին ենթարկվելու, միաժամանակ հավատալով, որ ի շահ ազգի իրենց անձնական զոհողությունը կարող է ճանաչվել «միայն շատ հեռավոր ապագայում»[7]։

Հանրապետության հռչակումից հետո Հայկական հարցի նկատմամբ Թուրքիան պաշտոնական մի նոր կեցվածք ընդունեց։ Թեև քեմալականները ևս իրականացրին հայկական կոտորածներ, բայց ինչպես հայտարարեց Մ. Քեմալը՝ հանրապետական Թուրքիան պատասխանատու չէ պատերազմի ժամանակ իրականացված ջարդերի համար։ Նրա կառավարությունն ամեն ինչ արեց Հայկական հարցը մոռացության մատնելու։ Որպես նշանաբան հռչակվեց թուրքական հասարակական գործիչ Հալիտե Էդիպի խոսքերը՝ ջարդերի մասին «ավելի լավ է շատ չխոսել, դրանք որքան շուտ մոռացվեն, այնքան լավ»։ Ցեղասպանությունը և Հայկական հարցը միջազգային հասարակայնությանը ներկայացնելու ափյուռքահայերի ջանքերը չեզոքացնելու հա-

մար Թուրքական կառավարությունը սկսեց օգտագործել նաև դիվանագիտական միջոցներ։ Եվ այս առումով նա էական հաջողություններ ունեցավ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի թոհուբոհի մեջ հայկական ջարդերը մոռացության մատնվեցին և ամեն անգամ, երբ այդ հարցը բարձրացվում էր, Թուրքական կառավարությունը դիվանագիտական ճնշումների միջոցով կարողանում էր այն փակել։

Պատերազմի ավարտին, երբ Սովետական Միությունը դրեց Կարսի ու Արդահանի հարցը, Թուրքական կառավարությանը հաջողվեց ԱՄՆ-ի ակտիվ օգնությամբ այն նորից փակել։ Բայց որովհետև միջազգային կազմակերպություններում, մասնավորապես ՄԱԿ-ում ևս Հայկական հարցը բարձրացվեց, Թուրքական մամուլն ու դիվանագետները սկսեցին դեպքից դեպք այն արծարծել։ Վաշինգտոնում Թուրքական դեսպանատան մամուլի կցորդը հայտարարեց, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը գործել են որպես օտար կառավարությունների գործակալներ և, հետևաբար, պետք է ենթարկվեին սահմանափակ տեղահանության։ «Համոզված եմ, որ հայկական ծայրահեղությունների հանդեպ Թուրքական հակազդեցությունը համապատասխան է ամերիկյան այն հակազդեցությանը, որ կարող էր գործադրվել, եթե Մինեսոտայի և Վիսկոնսինի ամերիկաբնակ գերմանացիները պատերազմի ժամանակ ապստամբեին հօգուտ Հիտլերի»[8]։

Եղեռնը մոռացության տալու ջանքերը շարունակվեցին մինչև 1960-ական թվականները։ Հայկական հարցը մնում էր ստվերում։ Այդպես էր, երբ մոտեցավ Մեծ եղեռնի 50-ամյակը, և տասնամյակներ շարունակ լուռ խմորված զգացմունքները պոռթկացին աշխարհի բոլոր այն երկրներում, ուր գոյատևում էր հայը։ Թուրքական կառավարությունը հսկայական միջոցներ ծախսեց այդ պոռթկումը խեղդելու համար։ Միաժամանակ ծավալվեց հակապրոպագանդիստական ակտիվ գործունեություն։ Անկարան արտասահմանյան երկրների քաղաքական գործիչներին, մասսայական ինֆորմացիայի և հասարակական կարծիքը ձևավորող մյուս միջոցներին, օրենսդիր մարմիններին, ինչպես նաև գրադարաններին ուղարկեց մեծ թվով գրքեր ու տեղեկատուներ։ Սակայն ապարդյուն անցան Հայկական հարցը թաղելու Թուրքական ջանքերը։ Դրան հաջորդեցին արտասահմանյան հայերի միջոցով իրականացված ահաբեկչական գործողությունները։ Համաշխարհային հասարակական կարծիքը սկսեց հետաքրքրվել ոչ միայն Մեծ եղեռնով, այլև Թուրքիայի իշխող խավերի կողմից այն ժխտելու պատճառներով։

Իսկ Թուրքիան, օգտագործելով իր դիվանագետների դեմ իրականացված ահաբեկչական գործողությունները, աշխատեց համաշխարհային հասարակական կարծիքն ուղղել հայերի դեմ։ Սկսվեց հակահայկական պրոպագանդիստական արշավ։ Զգալի միջոցներ են ծախսվում համաշխարհային հասարակական կարծիքին համոզելու, որ հայկական ահաբեկչությունը միջազգային ահաբեկչության բաղկացուցիչ մասն է և սերտորեն համագործակցում է Սովետական Միության ու Պաղեստինի ազատագրության կազմակերպության հետ։ Ըստ որում, ջանք չեն խնայում իրար հակադրել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների նկատմամբ իրականացված ցեղասպանությունն ու Հայկական մեծ եղեռնը։ Հրեական ցեղասպանությունը հռչակվում է որպես դարի մեծագույն ողբերգություն, իսկ Հայկական եղեռնը՝ «դարի մեծագույն սուտ»։ Զոհը Թուրքիան ու Թուրքերն են, որովհետև հայկական շարժումներն ուղղված էին Թուրքիան կործանելու և Թուրքերին կոտորելու միջոցով մի ինչ-որ «Հայաստանի ստեղծմանը»։

Տեսնելով, որ սեփական ուժերով պատմությունը կեղծելու գործում լուրջ հաջողության հասնել չեն կարող, Թուրքական պաշտոնական շրջանները դիմեցին օտարերկրացիների և նույնիսկ օտար երկրների ուսանողների օգնությանը։ Նրանց նյութական միջոցներ և արխիվային նյութեր մատակարարեցին, քաջալերեցին Արևմուտքում տարածելու Թուրքական տեսակետները։ Իհարկե, գտնվեցին ծախու պատմաբաններ, որոնք եռանդով լծվեցին պատմության կեղծարարների կառքին, մանավանդ որ Արևմուտքի համար Թուրքական հանրապետությունը շահեկան երևույթ է և, հետևաբար, «ոչինչ անբնական չէ» արդարացնելու այն իրադարձությունները, որոնք ստեղծեցին այդ հանրապետությունը։ Դեռ 50-ական թվականներին ամերիկյան գիտնական Վ. Թոմասը

պնդում էր, որ թուրքերը միայն հակադրել են հայկական սպառնալիքին։

«1918-ի շեմին, —գրել է նա,— Անատոլիայի և նեղուցների շրջանի հայ քրիստոնյա ողջ բնակչության վերջնական մաքրագործումով... մինչ այդ թուրքացման և իսլամացման խաղաղ գործունեությունը սկսեցին մեծ թափով առաջ տարվել ուժի գործադրմամբ։ Ուրիշ ի՞նչ ձևով մարդ կարող է հանցանքի վերջնական գնահատականը տալ, բացի ասելով, որ այդ Անատոլիայի նկատմամբ Արևմտյան Եվրոպայի ազգայնականության ազդեցության ողբերգական հետևանքն էր։ Եթե այնտեղ թուրքացման ու իսլամացման գործողությունները ուժի գործադրմամբ թափ չառնեին, ապա հաստատ է, որ այսօր Թուրքական հանրապետություն գոյություն չէր ունենա, հանրապետություն, որն իր ուժի ու կայունության համար ոչ փոքր չափով պարտական է իր բնակչության միատարրությանը, մի պետություն, որ այժմ Միացյալ Նահանգների արժեքավոր դաշնակիցն է»[9]։

Մեկ տասնամյակ անց, պրոֆ. Բերնարդ Լուիսը իր «Ժամանակակից Թուրքիայի կազմավորումը» գրքում հայերի տեղահանությունն ու շարդերը համարեց հայկական ազգային շարժման հետևանք։ «Թուրքերի համար բոլոր սպառնալիքներից ամենամահացուն հայկական շարժումն էր։ Սերբերի, բուլղարացիների, ալբանացիների և հույների գրաված հողերից, թեև դժկամությամբ, նրանք կարող էին հեռանալ... Բայց հայերը, սփռվելով ասիական Թուրքիայի տարածքում, կովկասյան սահմաններից մինչև Միջերկրական ծովեզերքը, գտնվում էին թուրքական հայրենիքի ճիշտ սրտի վրա։ Այս հողերից ձեռք քաշելը կնշանակեր թուրքական պետության կազմալուծում։ Թուրքական և հայկական գյուղերը անքակտելիորեն միախառնված՝ դարերով ապրել էին ընկերակցությամբ։ Հիմա նրանց միջև ճգնաժամային պայքար էր սկսված՝ պայքար երկու ազգերի միջև նույն հայրենիքին տիրապետելու համար, որը վերջ գտավ 1915 թ. սոսկալի աղջակիզումով, երբ 1,5 միլիոն հայեր ոչնչացան»[10]։

70-ական թվականներին կեղծիքների էստաֆետը իր ձեռքը վերցրեց Ստենֆորդ Շոուն։ Դրա վառ օրինակն է տեր և տիկին Շոուների «Օսմանյան կայսրության և արդի Թուրքիայի պատմություն» գիրքը, որը կեղծարարության մեջ գերազանցում է բոլորին, այդ թվում նաև երիտթուրք գործիչներին։ Շոուների

կարծիքով, Մեծ եղեռնը լոկ հայերի հիվանդոտ երևակայության արդյունք է, որ 1915 թ. ոչ թե ցեղասպանություն է կատարվել, այլ հայերի մեղքով առաջացած միջհամայնքային «անկարգություններ Տրապիզոնում և մի քանի այլ քաղաքներում ու գյուղերում»։ Եվ ուրիշ ոչինչ։ Այդ կապակցությամբ նրանք հայերին բնութագրում են իբրև «սառնասիրտ և ֆանատիկոս ահաբեկիչներ»։

Գրքում արդարացվում է 1915-ին հայերի նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը, որն իբր հետևանք էր առաջինների դավաճանության և օրինական իշխանությունների հանդեպ ահաբեկչական գործունեության։ Գրքի հեղինակները ճգնում են ընթերցողին համոզել, թե հայերը տեղահանվել են միայն մի քանի ստրատեգիական շրջաններից, արտակարգ հոգատարություն է ցուցաբերվել նրանց կյանքի և ունեցվածքի նկատմամբ։ Թուրքական պնդումների նման անվերապահ կրկնողությունը հեղինակներին տարել է դեպի բացահայտ կեղծարարություն։ Նրանք գրում են, որ պատերազմից առաջ կայսրության մեջ ամբողջ հայերի թիվը հասնում էր մեկ միլիոն 300 հազարի..., նշված քանակից տեղահանվել է ոչ ավելի, քան 400 հազարը, այդ թվում և որոշ «տեռորիստներ ու ագիտատորներ՝ քաղաքներից, որոնց հավաքել էին պատերազմը սկսվելուց հետո»։ Ի լրումն դրա, մոտ մեկ ու կես միլիոն հայ հետագայում գաղթեց Կովկաս և այլուր։ Այդ ժամանակից շուրջ 100 հազար հայ ապրում է կայսրությունում։ Կարելի է ենթադրել, որ «հայերից մոտ 200 հազարը զոհվեց ոչ միայն տեղահանության, այլև սովի, հիվանդությունների և ռազմական գործողությունների պատճառով, ինչը այդ նույն ժամանակ պատահեց նաև շուրջ 2 միլիոն մահմեդականների հետ։ Օսմանյան կառավարության գաղտնի գործողությունների ուսումնասիրությունը փաստեր չի բացահայտում, որոնք ապացուցեն, որ Իթթիհադի ղեկավարներից որևէ մեկը կոտորածների հրաման տված լինի։ Ընդհակառակը, տեղական իշխանություններին հրամաններ էր ուղարկվել կանխելու ամեն տեսակ հարձակումները և ընդհանուր անկարգությունները, որոնք կարող էին մարդկանց սպանելու պատճառ դառնալ»[11]։

Ուրեմն, 1915 թ. մահացել և սպանվել է միայն 200 հազար հայ, այն էլ սովից, հիվանդություններից ու պատերազմական գործողություններից։ Այսպես են ասում թուրքական աղբյուրնե-

ը, և այդպես են նրանց կրկնում իմպերիալիզմի կամակատար պատմաբանները։ Նրանք իրենց նույնիսկ նեղություն չեն տալիս տեսնելու թուրքական աղբյուրների տվյալների մեջ եղած հակասությունը։ Եթե կայսրությունում ապրում էր 1,3 միլիոն հայ, ապա ինչպե՞ս 1,5 միլիոն հայ հեռացավ Կովկաս, 0,2 միլիոն հայ մեռավ ու կոտորվեց, իսկ 0,1 միլիոնը մնաց կայսրությունում։ Անկամ դպրոցական երեխան կարող է այս տարրական թվաբանական գործողությունը կատարել և տիտղոսավոր պատմաբանների ու նրանց թուրքական հովանավորյալների երեսին շպրտել՝ պարոննե՛ր, թվաբանություն չգիտեք՝ 1 միլիոն 500 հազարին գումարած 200 հազար, գումարած 100 հազար հավասար է ոչ թե 1 միլիոն 300 հազարի, այլ՝ 1 միլիոն 800 հազարի։

Ամերիկյան մի այլ թուրքագետ, դոկտոր Լոուրին գրում է. «Եթե նկատի ունենանք սպանվածների ու բռնագաղթվածների թիվը, ապա ամենաշատը տուժել են Ղրիմի ու Կովկասի մահմեդականները... Պատմական ճշգրտությունը աշխատում են ներկայացնել այլ ձևով՝ հնարելով մի միֆ դաժան թուրքի ու բարի հայի մասին... Իսկ եվրոպացիների համար, որոնք ավելի քան 5 դար թուրքերից սարսափ են ունեցել, հայերի ցեղասպանության գաղափարը թուրքերի դաժանության մասին արմատացած կարծիքի ապացույցն է»։

Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ն. Ռավիչը Թուրքիայի իշխող շրջաններին ծախված այս «պատմաբանների» վարքագծով է նաև բացատրում, որ մեր օրերում հայկական ցեղասպանությունը «համարվում է մոռացված ու խունացած»։ Եթե հայերի ճակատագիրը «քաղցր» չի եղել, ապա շատ ավելի դառն է այդ ճակատագրի ժամանակակից մեկնաբանությունը, երբ նույնիսկ հայկական ցեղասպանությունը գնահատվում է Թուրքիայի պետական քաղաքականության դիրքերից։

Ն. Ռավիչն իրավացի է։ ԱՄՆ-ի քաղաքագետ Մ. Գյունտերի կարծիքով, օսմանյան տիրապետությունը հայերի համար ստեղծել էր կյանքի բարեկեցիկ պայմաններ, բայց հայերը Ռուսաստանի դրդմամբ պայքարի ելան հանուն անկախության, իսկ «...թուրքերի համար հայերի անկախությունը տրամաբանական անհեթեթություն էր և սպառնալիք էր ներկայացնում կայսրության գոյությանը»[13]։

«Ռուսական կայսրությունը,— գրում է Մ. Գյունտերը,— փոփոխական հաջողությամբ փորձում էր Օսմանյան կայսրության

հայ ազգաբնակչությանը օգտագործել որպես հինգերորդ շարասյուն»։

Նույն կարծիքին է նաև ամերիկյան մի այլ քաղաքագետ Ռ. Հոուին։ Նրա կարծիքով, Ռուսաստանի հրահրմամբ ու ռազմական աջակցությամբ Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում կազմակերպվել էին հայկական ահաբեկչական խմբեր, որոնք ոչնչացնում էին քրդերին ու թուրքերին, «խաչակրաց արշավանք» էին հայտարարել թուրքական իշխանություններին։ Ըստ Ռ. Հոուի, ցեղասպանության զոհ դարձած հայերի թիվը 15 հազարից չի անցնում։

Արձագանքելով ամերիկյան պատմաբաններին, արևմտագերմանական «Դի Յայտ» լրագիրը գրում է, որ 1918 թ. բնաջնջվել է ընդամենը 60 հազար մարդ[14]։

Որպեսզի ընթերցողը համոզվի, թե Արևմուտքի պատմաբանները ումից են փոխառել այս մտքերը, մեջբերում կատարենք թուրքական ռադիոյի 1984 թ. դեկտեմբերի 2-ի հաղորդումից. «Որոշ լուրեր են տարածվել, թե իբր մեծ թվով հայեր են սպանվել տեղափոխության ժամանակ։ Որոշ մարդիկ տեղափոխության ժամանակ իրոք սպանվել են։ Նրանցից ոմանք մահացել են հիվանդություններից, մյուսները՝ ճանապարհի դժվարության պատճառով, որոշ մարդիկ էլ սպանվել են 1914—1916 թթ. ըմբոստությունների ընթացքում։ Ավազակային գործողություններ կատարելու ժամանակ սպանվեցին նաև որոշ հայեր, որոնք կամավոր մտել էին ռուսական բանակի շարքերը և պատերազմում էին թուրքերի դեմ։ Սրանից ո՞րը կարելի է համարել «միտումնավոր սպանություն»։ Մինչդեռ հայ կամավորական խմբերը «Թուրքիայի արևելյան վիլայեթներում 1915—1918 թթ. սպանել են ավելի քան 800 հազար մարդ»։ Իսկ օսմանյան կառավարությունը այդ հայերին ոչնչացնելու փոխարեն «1915-ին տեղափոխման որոշում ընդունեց»։ Հետևաբար «բնաջնջման ոչ մի դեպք տեղի չի ունեցել»[15]։

Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության հրատարակած «Հայկական հարց. ինը հարց, ինը պատասխան» գրքույկը 1915 թ. իրադարձությունները հետևյալ կերպ է ներկայացնում։

Երբ ռուսական զորամասերը մտան օսմանյան պետության տարածքը, նրանց առաջնորդում էին ռուսահայերը և տեղական

հայ կամավորները, որոնց միացան թուրքական բանակի հայ գասալիքները։ Այս վերջիններից շատերը նախընտրեցին միավորվել և պարտիզանական կռիվներ մղել, օգտագործելով այն ռազմամթերքը, որ տարիների ընթացքում թաքցրել էին դպրոցներում և եկեղեցիներում, կողոպտելով պարենավորման կետերը, խոչընդոտելով թուրքական բանակների տեղաշարժերին՝ ընդդեմ ռուսական զանգվածային ներխուժման։ Պատերազմի սկզբի մի քանի ամսվա ընթացքում նրանք հարձակումներ գործեցին արևելյան շրջանների բնակավայրերի վրա, անխնա կոտորեցին բնակիչներին, կատարեցին բազմաթիվ վնասարարական գործողություններ, թուրքական բանակը թուլացնելու և ռուսական առաջխաղացումը հեշտացնելու համար քանդեցին ճանապարհներն ու կամուրջները, կողոպտեցին քարավանները։ Ըստ այդ գրքույկի, միայն թուրքերն ու մյուս մուսուլման բնակչությունը չէր, որ հայերի կողմից ենթարկվեց դաժան հաշվեհարդարի։ «Հայկական ապստամբությունները հույների ու հրեաների հավանությանը չարժանացան, նրանք հավանություն չէին տալիս հայերի հեղափոխական ծրագրերին»։ Դրա համար էլ հայերը Ցրապիզոնում և նրա շրջաններում կոտորեցին հազարավոր հույների, իսկ Հաքքարիի շրջանում հրեաներին հավաքեցին և ոչնչացրին։

«Այս խժդժությունների նպատակը պարզ էր՝ այդ շրջաններում թողնել միայն հայերի, որպես հայկական ապագա պետության կորիզի։ Բոլոր ոչ հայերին կոտորեցին և կամ փախուստի մատնեցին, որպեսզի հայերը դառնան մեծամասնություն»։

Նույնիսկ Վանի դեպքերից հետո, կարդում ենք գրքույկում, օսմանյան կառավարությունը մի վերջին փորձ արեց հայերին ներգրավելու թուրք ազգի ընդհանուր ջանքերում։ Այդ նպատակով խորհրդի կանչվեցին պատրիարքը, պառլամենտի հայ դեպուտատներն ու այլ պատվիրակներ։ Նրանց նախազգուշացվեց, որ շատ խիստ միջոցներ ձեռք կառնվեն, եթե հայերը շարունակեն «կոտորել մուսուլմաններին և վնասարարական գործողություններ ձեռնարկեն թուրք կառավարության դեմ»։ Իսկ երբ կառավարությունը նկատեց, որ հայկական հարձակումները չեն նվազում, վճռեց վերջնականապես գործի անցնել։ 1915-ի ապրիլի 24-ին բոլոր հեղափոխական կոմիտեների գործունեությունն արգելվեց և նրանց ղեկավարներից 235-ը ձերբակալվեց հակա-

կառավարական գործողությունների համար։ Այս ձերբակալությունների օրն է, որ վերջին տարիներս «աշխարհով մեկ սփռված մի խումբ ազգայնամոլ հայեր նշում են որպես եղեռնի հիշատակի օր։ Իրականում կոտորածներ չեն եղել ոչ այդ թվականին, ոչ էլ պատերազմի որևէ այլ տարում։

Իսկ այն 700 հազար հայերը, որոնք 1915 թ. տեղափոխվեցին, անշուշտ, նրանցից ոմանք կորցրին իրենց կյանքը։ Ռազմական գործողությունները, պարտիզանական կռիվները, որոնք այդ շրջաններում բավական տարածված էին, և ընդհանուր անապահովությունը անկասկած նշանակություն ունեցան։ Ավելին՝ հայերի տեղահանությունը տեղի էր ունենում այնպիսի ժամանակաշրջանում, երբ կայսրությունը տառապում էր սովից, բազմաթիվ տարափոխիկ հիվանդություններից, դեղորայքի պակասից և այլն։ Պատերազմի վերջին տարիներին օսմանյան բանակում 3—4 միլիոն մարդ ոչնչացավ հենց այդ պատճառով»[16]։

Ժամանակակից թուրք պատմաբան Սոնյելը ցանկանալով ցույց տալ, որ երիտթուրքական լիդերները կայսրությունը հայերից դատարկելու ծրագիր ու մտադրություն չեն ունեցել, 1978 թ. հրատարակեց բրիտանական արխիվներում եղած մի շարք վավերագրեր, չնայած վաղուց ապացուցված է, որ թուրքական պաշտոնական այդ փաստաթղթերը ստեղծվել էին իրականությունը քողարկելու նպատակով։ Այս առնչությամբ երիտթուրքերի Կ. Պոլսի դատավարության մեղադրական ակտում գրված է. «... Իթթիհադի կուսակցությունը ուներ իրար հակասող երկու բնույթ։ Նրանցից մեկը՝ իր ծրագրին և կանոնադրությանը համաձայն գործող լեգալ և հրապարակային Իթթիհադն էր։ Մյուսը՝ բերանացի և ոճրամիտ հրահանգների համաձայն գործող գաղտնի և դավադիր Իթթիհադը»[17]։

Վերը նշված փաստաթղթերն ընտրված են մեծագույն զգուշությամբ, բայց նույնիսկ այդ ընտրված փաստաթղթերում Սոնյելի պնդումները հերքող ծածկագրեր ու հեռագրեր կան։

Ահա նրանցից մի քանիսը։

«25 հուլիսի 1915 թ.

Որոշված է հայերին երկրի խորքերը տեղափոխել։ Դրա համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի շրջանի աշխատավորական վաշտերում եղած հայ զինվորները կարգ

ու կանոնը չխանգարեն, իսկ այս հրահանգի մեկ օրինակն ուղարկել շրջանի աշխատավորական վաշտերի հրամանատարներին։

29—30 հուլիսի 1915 թ.

Անձնական գույքը, որ պատկանում է հայ մանուկներին և որոնք հետագայում իսլամացվել են, ամուսնացել կամ հանձնվել վստահելի անձանց խնամքին՝ մարզվելու կամ ուսման նպատակով, պետք է թողնել այդ մանուկներին։ Եթե կտակողները մեռնեն, նրանց ունեցվածքից բաժին պետք է հանել մանուկներին։

Չթվագրված.

Զինվորականների ընտանիքները, բողոքականներն ու կաթոլիկները, որոնք չեն տեղահանվել իրենց շրջաններից, արվեստագետները (արհեստավորները), որոնց տեղական իշխանությունները թույլատրում են մնալ, բանվորները, որոնք աշխատում են պահանջարկ ունեցող ապրանքներ արտադրող գործարաններում և նրանք, ովքեր աշխատում են երկաթուղիների վրա ու կայարաններում, ինչպես նաև նրանց ընտանիքները, չպետք է տեղահանվեն։

15 տարեկանից բարձր տղաներն ու ամուսնացած կանայք ընտանիքի մեծերից կախված չեն համարվում»[18]։

Հայկական հարցն ընդհանրապես թաղելու համար Անկարայի կառավարությունը վիթխարի բացահայտ և անդրկուլիսյան աշխատանք է ծավալել, որը մասնավորապես կատաղի եռանդով է կատարվում, երբ ՄԱԿ-ում և միջազգային այլ կազմակերպություններում քննարկվում է ցեղասպանության հարցը։ Այսպես, ՄԱԿ-ի փոքրամասնությունների պաշտպանության և նրանց նկատմամբ խտրականությունների դեմ պայքարի ենթահանձնաժողովին 1973 թ. ներկայացված տեղեկագրի 30-րդ պարբերությունում գրված է. «Անցնելով արդի ժամանակաշրջանին, կարելի է նշել համեմատաբար լրիվ վավերագրերի գոյությունը հայերի ջարդերի մասին, որոնք համարվում են որպես XX դարի առաջին ցեղասպանություն»։ Թուրքերը արշավի ելան, նրանց ճնշման տակ մարդկային իրավունքների հանձնաժողովն այդ կետը խմբագրեց հետևյալ կերպ. «Մատնանշվեց, որ գոյություն ունի այն վտանգավոր թակարդը, որով ցեղասպանության ոճիրը կարող է շփոթվել այնպիսի երևույթների հետ, որոնք պատերազմի հետևանք են»[19]։

1975-ին, երբ վերոհիշյալ հարցը նորից արծարծվեց, հանձնաժողովի անդամներից մեկն ասաց, որ 1915 թ. ողբերգությունը պատմական իրողություն է, «բայց քաղաքակրթված միջազգային հասարակությունում պետք է նաև կարևորություն տրվի պետության ցանկությանը՝ անցյալի իր գործունեության համար նրան չվարկաբեկելու, գործունեություն, որը կատարվել է նախորդ սերնդի կողմից և որի համար ներկա սերունդը հավանաբար ցավում է»[20]։

1978 թ. ՄԱԿ-ի նույն ենթահանձնաժողովը ցեղասպանության հարցի քննարկումն արդեն սկսեց ֆաշիստների իրագործած գենոցիդից և, ինչպես Լեո Կուպերն ասաց, հայկական ցեղասպանությունը «հիշողությունից անհետացել էր»։ Պատճառը ենթահանձնաժողովին ներկայացրած զեկուցագրի հեղինակը բացատրեց հետևյալ կերպ. «... Ցեղասպանության ուսումնասիրությունը կարող է շեղվել իր առաջ դրված խնդիրներից և կորցնել իր հիմնական նպատակը։ Հետևաբար, որոշվեց (փաստաթղթում) թողնել ֆաշիստների տիրապետության ներքո հրեաների ջարդը, քանի որ այն բոլորին ծանոթ է և նրա դեմ ոչ մի առարկություն չարվեց, իսկ մյուսները (ցեղասպանությունները) դուրս գցվեցին, որովհետև անհնար է կազմել դրանց ամբողջական ցանկը և կարևոր էր այս հարցի գծով պահպանել միջազգային հասարակայնության միասնությունը»։

1986 թ. ապրիլի վերջերին մի շարք երկրների քաղաքական գործիչներ, թերթերի խմբագրություններ, ռադիո-հեռուստատեսային կայաններ փոստով ստացան Հայկական հարցը պարզաբանող աշխարհի ժողովուրդների 9 լեզուներով հրատարակված գրքեր ու բրոշյուրներ և 97 անուն գրքերի ցուցակ։ Այդ «աշխատությունների» զգալի մասի հեղինակը Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, դոկտոր Թարքայա Աթայովն է։ Ինչպես հայտարարել է ինքը Աթայովը, հակահայկական գրականության այդ սերիան բաղկացած է 12 գրքերից, որոնք հրատարակվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հայերեն և հոլանդերեն։

Թուրքական պատմության ընկերությունը ևս սկսել է յուրատեսակ «փաստավավերագրական պայքար» հայկական պահանջ-

ների դեմ։ Երկու գիտական խմբեր զուգահեռ ուսումնասիրություններ են կատարում։ Նրանք պատրաստել են 20 գիրք և ուղարկել աշխարհի 375 գրադարաններ[21]։

Թուրքական «Միլիեթ» թերթին այդ քիչ է թվում։ Նա առաջարկում է մեծ աշխատանք ծավալել հայ-թուրքական հարաբերությունները ուսումնասիրելու ուղղությամբ, ուժեղացնել ուշադրությունը դիվանագիտական կադրերի պատրաստման վրա, կադրեր, որոնք լավ կողմնորոշվեն թուրք-հայկական խնդիրներում, հետևել այս հարցի մասին համաշխարհային մամուլի ելույթներին։ Անհրաժեշտություն կա այդ աշխատանքները «կազմակերպելու, իրականացնելու և ղեկավարելու համար ստեղծել հատուկ գերատեսչություն, ինստիտուտ, ամբիոն։ Մասնավորապես մեծ ուշադրություն է պահանջում համապատասխան մասնագիտությունների գծով բանիմաց և վստահելի կադրերի պատրաստումը։ Թուրքիան պետք է պատրաստ լինի բանավեճի բոլոր և ամենատարբեր տեսակետներ ունեցող գիտնականների հետ, անկախ նրանց ազգային պատկանելությունից»[22]։

«Արարատ» թերթի 1980 թ. նոյեմբերի 5-ի համարում տպագրվել է Ի. Սելջուկի հոդվածը, որում նա առաջարկում է բանակցություններ սկսել ՆԱՏՕ-ի երկրների հետ՝ Հայկական հարցում իրենց գործողությունները կոորդինացնելու համար։ Թուրքական պաշտոնական շրջանները Հայկական հարցում Արևմուտքին նույնիսկ ահաբեկելու ջանքեր են գործադրում։

Պրեզիդենտ Էվրենը «Ֆայնեյնշլ թայմսում» գրեց. «Արտաքսվածների հայերը կոմունիզմի մարիոնետներ են»[23]։ Ըստ Էվրենի, հայկական ահաբեկչության «իրական նախաձեռնողները նրանք են, ովքեր դրանք օգտագործում են, այսինքն՝ մարքսիզմն ու սիոնիզմը»[24]։ ԱՄՆ-ի կոնգրեսում ցեղասպանության հարցի քննարկման առնչությամբ Ռեյգանին հղած ուղերձում Էվրենը զգուշացնում է, որ այդ հարցի քննարկումը նշանակում է խրախուսել հայկական ահաբեկչությունը։ Թուրքիան պաշտոնական բողոք ներկայացրեց նաև եվրոպական պառլամենտում տվյալ հարցի քննարկման դեմ՝ «Նման որոշումը տանում է դեպի Թուրքիայի տարածքային ամբողջության խախտում և խթանում է հայկական ահաբեկչությունը»[25]։

Էվրենը 1981 թ. հոկտեմբերին Մալաթիայում և Դիարբեքիրում արտասանած ճառերում հայտարարեց. «Մեզանում Հայկական հարց չկա և չի լինի»։ Եվ ապա՝ «Թուրքիան մտադիր չէ հայերին թեկուզ մի թիզ հող տալ»[26]։

«Նյու Յորք Թայմսը» 1982 թ. հուլիսի 21-ին հայտնեց, որ թուրքական պաշտոնատար անձինք ԱՄՆ-ի ղեկավարներին զգուշացրել են, որ եթե Վաշինգտոնում բացվող գենոցիդի թանգարանում հայկական ցեղասպանությանը բաժին հատկացվի, ապա դա կարող է պատճառ դառնալ ՆԱՏՕ-ից Թուրքիայի դուրս գալու համար*։

1985 թ. ապրիլի 24-ին «Պրավդա» թերթը տպագրեց «Դատապարտված է մարդկության կողմից» հոդվածը, որի մեջ Մեծ եղեռնի մասին կան հետևյալ տողերը. «Իմպերիալիզմի ծնունդ հանդիսացող ցեղասպանության խոշորագույն ակտ եղավ 70 տարի առաջ օսմանյան Թուրքիայի կառավարողների կազմակերպած հաշվեհարդարը հայ ազգաբնակչության նկատմամբ։ Դրա հետևանքով զոհվեց ավելի քան մեկ ու կես միլիոն բոլորովին անմեղ մարդ»։

Թուրքական կառավարությունն իր պարտքը համարեց ոչ միայն հերքել «Պրավդայի» արտահայտած այս բացարձակ ճշմարիտ միտքը, այլև հայտարարել. «Ափսոսանքով է ընդունվում այն, որ տեռորիստների պնդումներին զուգահեռ «Պրավդայի» նման թերթում տեղ են գտել Թուրքիայի դեմ ուղղված, ամեն տեսակ գիտական հիմքից զուրկ մի շարք զրպարտանքներ։ Կասկած չկա, որ նման հրապարակումները չեն ծառայում Թուրքիայի և ՍՍՀՄ-ի միջև առկա բարեկամությանը և բարիդրացիական հարաբերություններին»։

«Միլիեթի» 1985 թ. հուլիսի 8-ի համարում կարդում ենք. «Սովետական հեռուստատեսությունը իր ծրագրերում տեղ է

* Արևմուտքին, մասնավորապես ամերիկյան հասարակայնությանը ահաբեկելու, ամենալուրջ ստեր ու կեղծիքներ տարածելու գործում հատկապես աչքի է ընկնում ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շուքրի Էլչեքդաղը, որը հրապարակային ելույթներում ու մամուլում տպագրված հոդվածներում ոչ միայն ժխտում է հայկական ցեղասպանությունը, այլև պնդում է, որ կոտորածների նախաձեռնողը եղել են իրենք՝ հայերը։ Երբ 1981 թ. Աղջան Հովհաննես Պողոս II պապի վրա մահափորձ կատարեց, նույն Շ. Էլչեքդաղը ջանաց «ապացուցել», որ Աղջայի ու հայկական կազմակերպությունների միջև կապ գոյություն ունի։

ԱՄՆ-ի Հայկական հարցի հանձնաժողովը, հիմնավորելով Շ. Էլչեքդաղի անթույլատրելի վարքագիծը, պահանջեց նրան հայտարարել նոն Գրատա և հեռացնել ԱՄՆ-ից։

տվել երկսերիանոց հակաթուրքական մի ժապավենի, որի նյութը վերցված է հայկական պնդումներից (խոսքը «Զորի Միրոն» կինոնկարի մասին է)։ Առաջին սերիայի ցուցադրումից հետո... Մոսկվայի թուրքական դեսպանատունը, դիմելով սովետական արտաքին գործերի մինիստրությանը, պահանջեց, որ ժապավենի երկրորդ սերիան հայտագրից հանվի։ Սակայն հակառակ այս դիմումի, սովետական հեռուստատեսությունը երկրորդ մասը ևս ցուցադրեց։ Դրանից հետո Անկարան պաշտոնապես բողոք ներկայացրեց սովետական դեսպանությանը։

Հատկապես մի այնպիսի ժամանակ, երբ Թուրքիայի և Սովետական Միության միջև զարգանում են տնտեսական և մշակութային հարաբերությունները, նման հաղորդումը հուզումներ է առաջ բերել։ Սրանից հետո անհասկանալի է ՍՍՀՄ-ի դիրքորոշումը... Այժմ, երբ թուրքական և սովետական պաշտոնատար անձինք գոհունակություն են արտահայտում երկու երկրների հարաբերությունների սերտացման կապակցությամբ, մեծ հակասություն է վերոհիշյալ ժապավենի ցուցադրումը»։

Ժամանակակից Թուրքիայի իշխանությունների և պրոպագանդայի միջոցների համար ազգային հարցում այս կամ այն չափով ակտիվություն դրսևորող բոլոր սփյուռքահայերը տեռորիստներ են։ Ֆրանսիական հեռուստատեսությամբ ցուցադրվեց մի կինոնկար, որտեղ Հայկական եղեռնից հրաշքով փրկված մի քանի կանայք և տղամարդիկ, որոնց միջին տարիքը 75-ից անց էր, հեռուստադիտողների հետ կիսեցին իրենց հուշերը հայկական ցեղասպանության մղձավանջային օրերի մասին։ Պետք էր տեսնել, թե այդ ծերունիների հուշերը ինչպիսի կատաղությամբ ընդունվեցին Թուրքիայի կառավարության և մամուլի, մասսայական ինֆորմացիայի միջոցների կողմից։ Նույնիսկ սպառնալիքներ հնչեցին Ֆրանսիայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին։

Նույն բանը կատարվեց, ինչպես թուրքական թերթերից մեկն է գրում, երբ «Վիեննայի հեռուստատեսությունը սկսեց ցուցադրել մի քանի, իրենց բովանդակությամբ անհայտ լուսանկարներ՝ նահատակների գլուխներ, դիակներ և այլն, նրանց կցելով երկար բացատրություններ։ Անշուշտ, դարձյալ երկար խոսվեց ցեղասպանությունների մասին»։

Նույն օրը ցուցադրվեց նաև հունական «Ռեպեթիֆա» կինոնկարը, որը ներկայացնում էր «Իզմիրի մաքրազարդման ընթացքում հույն և հայ ընտանիքների ապրած «տխուր» պատմությունը»[27]։

Թուրքական պաշտոնական շրջաններում զայրույթի անսանձ բռնկում առաջացրեց նաև իտալական առևտրական մի հաստատության կողմից 1985 թ. հրատարակած Թուրքիայի քարտեզը, ուր զետեղվել էին Պոնտոսը, Հայաստանն ու Քրդստանը։ 1986 թ. հուլիսի 10-ին Թուրքիայի տուրիզմի մինիստր Ն. Տասիոզլին խստորեն քննադատեց Միջերկրածովյան տուրիստական ակումբին նրա հրատարակած բրոշյուրում եղած մի «չարաբաստիկ ֆրազի» համար, որը հրավիրում էր այցելել «քրդական գյուղերն» ու «Հին Հայաստանի չքնաղ մայրաքաղաքը»։ Մինիստրը ակումբին մեղադրեց հայկական պրոպագանդայի մեջ և սպառնաց փակել Թուրքիայով անցնող նրա ուղերթերը[28]։

1984-ին Ֆրանսիայի Արֆոլվիլ քաղաքում բացվեց եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան։ Այս կապակցությամբ Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությունը հայտարարություն հրապարակեց, որտեղ խիստ քննադատության էր ենթարկվում այդ «ատելության հուշարձանի» բացումը, այն անվանելով տեռորիստների հետ «մութ գործարք», որի իրականացնողները պետք է «պատասխանատվություն կրեն ահաբեկչական գործողությունների և Ֆրանսիայում թափված արյան համար»[29]։

Ֆրանսահայերը, և ոչ թե տեռորիստները, դիմել էին ֆրանսիական կառավարությանը՝ թույլատրել Փարիզում եղեռնի զոհերի հուշարձան կանգնեցնել։ Դրա դեմ արշավանքի ելան Թուրքիայի պրոպագանդիստական միջոցները։ «Հուրիեթը» գրեց. «Անհասկանալի է, թե ինչպես Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրը խոստանում է տեռորիստներին Փարիզում հայկական հուշարձան կանգնեցնել, ինչպես է նա խեղաթյուրում պատմական փաստերը և դառնում տեռորիստների զենք...»[30]։

«Թերջուման» թերթը ուղղակի իջնում է խուլիգանի մակարդակի՝ Մարսելում եղեռնի զոհերի հուշարձանը կոչելով «շների հուշարձան»[31]։

Թուրքական մամուլը կատաղության բռնկում ունեցավ նաև 1985-ի ապրիլի 23-ին, երբ ԳՖՀ-ի հեռուստատեսությամբ ցուցադրվեցին Արմին Վեգների կատարած լուսանկարները, որոնցում պատկերված էր Եփրատի ափերին բռնագաղթված հայերի մահն ու ոչնչացումը։ Նշենք նաև, որ դրանից մի քանի օր առաջ՝ ապրիլի 19-ին, Բրեմենի առաջադիմական բոլոր կուսակցությունները

ներն ու միությունները, այդ թվում նաև թուրքական կազմակերպությունները, հրապարակեցին մի կոչ, որտեղ ասված էր. «1915—1918 թթ. ընթացքում Թուրքիայում սպանվեց առնվազն 1,5 միլիոն հայ։ Դա դարի մեծագույն կոտորածներից մեկն է...»[32]։

Թուրքիայում մայիսի 30-ը հայտարարված է, ահաբեկիչների ձեռքով զոհվածների հիշատակի օր, որն օգտագործվում է հակահայկական կրքեր բորբոքելու համար։

Իր նպատակներին հասնելու համար թուրքական պրոպագանդան օգտագործում է պայքարի բոլոր ձևերն ու եղանակները։ Ճակատային զանգվածային հարձակումները զուգակցում խուսանավման ու նենգափոխման հետ։ Ոչ քիչ դեպքերում այդ պրոպագանդան նույնիսկ հանդես է գալիս հայ ժողովրդի «բարեկամի» դիմակով։ «Հայերի ատելությունը թուրքերի նկատմամբ,— 1965 թ. ապրիլի 10-ին գրեց «Միլիեթը»,— տարիներ առաջ տեղի ունեցած դիտավորյալ գրգռությունների, սև օրերի հետևանք է։

Նոր բան չէ... Հիմա երևան են եկել այլ գրգռիչներ, այս անգամ հայերի հետ գործակցած, որոնք «ջարդերի 50-ամյակի» պատրվակով կրկին ցանկանում են սեպ խրել երկու եղբայր ժողովուրդների միջև, հոռի զգացմունքներ հրահրել և այդ խեղճ մարդկանց առինքնել «Հայաստանի երազով», չնայած իրենք էլ գիտեն, որ այդ իրականանալ չի կարող»։

Թուրքական կառավարող շրջաններն ու պաշտոնական պրոպագանդան գնալով ավելի ու ավելի մեծ տեղ են հատկացնում հայերի կողմից թուրքերին ոչնչացնելու «փաստերին»։ 1915—1923 թթ. իրադարձությունները դիտվում են կամ թուրքական ցեղասպանության փորձ և կամ հայ և թուրք ժողովուրդների միմյանց կոտորելու «ցավալի դեպքեր»։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին,— գրում է «Թերջումանը»,— երբ «մեր բանակը գտնվում էր ռազմաճակատում, հայերը, ֆինանսավորվելով և աջակցություն ստանալով մի քանի տերությունների կողմից, ապստամբություն բարձրացրին և ոչնչացրին անպաշտպան թուրք ազգաբնակչությանը։

Ի պատասխան դրան, այն ժամանակվա կառավարությունը որոշեց ճնշել ապստամբությունը և հայերին տեղափոխել։

Ապստամբությունը ճնշելու ժամանակ երկու կողմերն էլ կորուստներ ունեցան, որ անխուսափելի էր»[33]։

1965 թ. ապրիլի 8-ին «Հուրիեթը» գրեց. «Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմի, ներքին ընդհանուր խլրտումների ընթացքում հայերը ևս զանազան վայրերում ըմբոստություններ կազմակերպեցին, նույնիսկ թուրքերի դեմ զուլումներ կատարեցին... Հայերը սպանում էին թուրքերին։ Նրանք էլ թուրքական իշխանությունների կողմից ըմբոստությունները ճնշելու ժամանակ մեռել են։ Մի մասն արտասահման է փախել, իսկ մյուս մասը երկրից վտարվել է»։

Նույն թվի ապրիլի 10-ին «Միլիեթը» գրեց, որ 1915 թ. իրադարձություններն այլ բան չեն, եթե ոչ «երկու կոմիտեների՝ Իթիհադի և դաշնակի ջարդեր»։

Թուրքական «Դունյա» թերթը 1965 թ. ապրիլի 19-ին գրել է. «...հայերն ուզում են քաղաքական դիպլոմատներում ցուցադրել իրենց մեռելներին... Հայերը ծիծաղելի պահանջներ էլ են հրապարակ հանել... հատուցում ու հող են մեզնից պահանջում...»։ Մինչդեռ Հայկական հարցը,— 1965 թ. ապրիլի 22-ին գրեց «Թերջումանը»,— «մեռած ու թաղված է Լոզանում։ Դեռ ավելին, Թուրքահայաստանում այլևս հայ չի մնացել և այսուհետև ևս չի լինելու։ Թուրքերն ամուր փակել են իրենց դռները... Ռուսաստանում նրանք Հայաստան նահանգ ունեն. Թուրքիայում ոչ Հայաստան կա, ոչ հայ»։

«Հուրիեթը», ընդհանրացնելով հարցը, հայտարարում է. «Իրականում ցեղասպանություն չկիրառած ոչ մի ազգ գոյություն չունի։ Թերևս այդ տեսակետից ամենաբարվոքն էլի մենք ենք»։ Դա, իհարկե, ոչ սովորական ինքնահանգստացում է[34]։

Կ. Պոլսի համալսարանի պրոֆեսոր Թ. Աթեշը նշում է, որ Թուրքիայում «տեղի չի ունեցել այնպիսի ջարդ, որի մասին անընդհատ պնդում են։ Պատերազմի պայմաններում տեղի ունեցած գաղթն էլ միակ օրինակը չէ ամբողջ աշխարհում։ Դեռ մոտիկ անցյալում, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ը չվարանեց նույն բանը կիրառել ճապոնական ծագում ունեցող իր քաղաքացիների նկատմամբ։ Եվ սրա համար ոչ ոք ամերիկացիներին չի մեղադրել։ Չէր կարելի սպասել, որ Օսմանյան կայսրությունը ներողամիտ աչքերով նայեր կամ թույլատրեր անջատողական հայկական կոմիտեների գործունեությունը, որոնք բացեիբաց օտար տերությունների և,

մասնավորապես, ցարական Ռուսաստանի իշխանությունների օժանդակությունն ու խրախուսանքն էին վայելում։ Բացի այս բոլորից, ներկա հանրապետական Թուրքիայի կառավարությունը, իր ազգային ուխտի սահմաններում և Լոզանի խորհրդաժողովով էլ նվիրագործված ձևով, երբեք չի կարող պատասխանատու լինել անցյալում պատահած մի շարք դեպքերի համար։ Այսօրվա Թուրքիան իր համար «Հայկական հարց» կոչված խնդիր չունի։ Թուրքիայում հայ չկա։ Հայկական ծագումով թուրքեր կան»[35]։

Ցեղասպանության մասին թուրքական գաղափարախոսությունը բնորոշ է «Ջումհուրիեթ» թերթում տպագրված «Ո՞ր ցեղասպանությունը» հոդվածը։

Պատմությունը լցված է անցյալի դեպքերով, կարդում ենք այդ հոդվածում, և ցեղասպանությունն էլ այդ դեպքերից է՝ «գիտակցաբար մի որևէ ժողովրդի կամ հավաքականության ոչնչացում»։ Ցեղասպանություն են, օրինակ, ամերիկյան բնիկների, գերմանական հրեաների ու գնչուների ոչնչացումները։ Իսկ ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, ապա «Թուրք ազգը երբեք դիտավորյալ ցեղասպանություն չի կատարել»[36]։ Ահա թուրքական մոտեցման համար մի բնորոշ փաստ ևս։ «Ծանգ» թերթը դիմելով հայերին, գրում է. «Եթե Թուրքիայում նույնիսկ մի թուրք մնա և իմանալով, որ պիտի մեռնի, միևնույն է, ձեզանից ներողություն չի խնդրի, որովհետև դուք դրան արժանի չեք»[37]։

Թուրքիայում զոհեր են հռչակվում դահիճները։ Եվ պատահական չէ, որ թուրքական պրոպագանդայի մաղձի զոհ են դառնում նաև թուրք առաջավոր այն գործիչները, որոնք հակառակ կարծիքի են։ Այդպիսի գործիչներից է, օրինակ, Թեվֆիկ Ֆիքրեթը, որը դեռ XIX դարի 90-ական թվականներին խարազանում էր հայերի նկատմամբ օսմանյան քաղաքականությունը։ «Բուլվար» թերթում հրատարակված հոդվածում թուրք լրագրող Կ. Երտեշը Թ. Ֆիքրեթին հռչակում է թուրքական դավաճանության հիմնադիր և հայերին վաճառված անձնավորություն, որն անպայման «գլխարկ է հանել հայի կատարած խժդժությունների առաջ, որոնք այն թվականից (1890 թ.) ի վեր չեն դադարում։ Ողբացյալ Թալեաթ փաշան, որ Բեռլինում նահատակվեց նույնպես հայերի կողմից, այդ օրերին մեր իսկ կատարած գրգռությունների հետևանքով օտար աշխարհում մեն մենակ էր մնացել»*[38]։

Թուրքական հեռուստատեսությունը 1986 թ. ցուցադրեց հայկական ցեղասպանությունը «հերքող» կինոշարք։ Նրա գլխավոր գործող անձը Թալեաթն է, որի «սպանությունը վառ օրինակ է հայկական ահաբեկչության առաջին քայլերի»։ Կինոնկարի հեղինակների նպատակն էր հերքել «Թեհլերյանի մասին գերմանական դատարանի արձակած վճռի օրինականությունը՝ ապացուցելով, որ Թալեաթը հայերին բնաջնջելու նպատակ չի ունեցել»[39]։ Կինոնկարն առաջ բերեց նույնիսկ թուրքական մամուլի զայրույթը։ Ֆիլմում,— գրեց «Միլիեթը»,— «պատմության նկատմամբ հարգանքը մոռացված է... Դրանից ավելի մանկական և կոպիտ պրոպագանդիստական ժապավեն հազիվ թե հնարավոր լինի ստեղծել։ Հոնքը շինելու փոխարեն աչքն են հանում։ Այդ ինչ կեղծ մելոդրամատիկ ֆիլմ է։ Ինչպե՞ս կարելի է հեռուստատեսությամբ այդպիսի բան ցուցադրել... Թուրքական հեռուստատեսությունը հանդիսատեսին այդքան խե՞ղճ է կարծում»[40]։

Մի քանի մեջբերումներ կատարենք նաև թուրքական ռադիոյի «Հայկական թղթապանակ» հաղորդաշարից։

Նախքան համաշխարհային պատերազմը հայկական ավազակախմբերը միացան Ռուսաստանին և սկսեցին պատերազմական գործողություններ Թուրքիայի դեմ... Էրզրումի ժողովը հայտարարեց հայերի չեզոք մնալու մասին..., «դաշնակները շարունակում էին Ռուսաստանից ներմուծել զենք ու պայթուցիկ նյութեր»։ Ռուսական բանակին միացած հայ կամավորները «այրում էին գյուղերն ու անխղճորեն սպանում անմեղ մահմեդականներին։ Դրա պատճառով օսմանյան իշխանությունները

* «Թերջուման» թերթի 1985 թ. հունվարի 24-ի համարում տպագրված ընդարձակ հոդվածում (Մեծ եղեռնի և նրա 70-ամյակը նշելու մասին) կարդում ենք.

«... Ինչո՞ւ ապրիլի 24-ը»,— հարցնում է հոդվածագիրը և պատասխանում. «Որովհետև հայ կոմիտեականները ցանկանում են այդ օրն օգտագործել հայերի վրեժխնդրությունը (աշխարհին) որպես մի միամիտ բան հրամցնելու համար, չնայած դա թուրքական բանակի թիկունքին հասցված մի հարված էր։

... Անշուշտ, այս ջանքերին հետևում է քաղաքական պրոպագանդան, հոգային հատուցման պահանջի նման անընդունելի պնդումներ։

հարկադրված էին բանակում գտնվող հայ զինվորների ու ոստիկանների մոտից հավաքել զենքերը և նրանց ուղարկել» ճանապարհներ կառուցելու ու բեռներ փոխադրելու։

«Հայերի դավաճանությունը սրանով չսահմանափակվեց»... պատերազմում «հայերը հրաժարվում են միանալ օսմանցիներին... դեկտեմբերին Զեյթունի հայ բնակչությունը սկսում է հարձակվել պաշտոնյաների ու ոստիկանների վրա», կտրում հեռախոսային գծերը։ Հայերին ռուսները զինում են և նախապատրաստում ապստամբության։ Եվ ապա՝ «1915 թ. մայիսին ռուսները հայերի ցուցումներով շարժվում են Արևելյան Անատոլիա», ֆրանսիացիներն ու անգլիացիները՝ Դարդանել։ «Իսկ երկրի կենտրոնում բանակից փախածները՝ 300 հազար մարդ, որոնք հիմնականում հայեր էին, սկսեցին գյուղեր ու գյուղաքաղաքներ կողոպտել», առանց տարիքն ու սեռը հաշվի առնելու, սպանել մարդկանց։ «Միայն Սվազի վիլայեթում հայերը զինեցին 30 հազար մարդ, նրանցից 15 հազարը անցավ ռուսների կողմը... Այդ դժվարին պայմաններում օսմանյան կառավարությունը սիպված եղավ ընդունել տեղափոխման որոշում»։

Ակնհայտ կեղծիք է, որովհետև ըստ թուրքական պատմաբանների Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 870 հազար մարդ։ Եթե հավատանք հաղորդաշարի հեղինակներին, որ բանակից դասալքվածների «հիմնական մասը» հայերն էին, ապա խոսքը գնում է շուրջ 200—250 հազ. հայ զինվորների մասին։ Ամենանվազ հաշվումներով, զինաթափված հայ զինվորների թիվը ևս մոտենում էր 250 հազարի։ Ուրեմն հենց պատերազմի առաջին տարում Օսմանյան կայսրությունում զորակոչվել էր 500 հազար 18—45 տարիկան հայ։

Իսկ իրապես ի՞նչ կատարվեց պատերազմի առաջին ամիսներին և ո՞րն էր բունագաղթի ու կոտորածների պատճառը։ Իհարկե, որոշ ճշմարտություն կա այն բանում, որ հայ ազգաբնակչությունը ձգտում էր զենք ունենալ։ Եվ դա հասկանալի է, չէ որ նրան շրջապատող մահմեդական ազգաբնակչությունը զինված էր, մինչդեռ հայը անպաշտպան վիճակում էր։ Թուրքական իշխանությունները մահմեդականներին զինում էին, իսկ հայերին խստորեն պատժում զենք ունենալու համար։ Եվ ամենևին էլ տարօրինակ չէ, որ այս պայմաններում հայերը պետության կողմից մահմեդականների զինման մեջ ուղղակի վտանգ էին տեսնում իրենց անվտանգությանը և զանազան ճանապարհնե-

ով զենք էին ձեռք գցում հավանական հարձակումներից պաշտպանվելու և ոչ թե պատերազմի ժամանակ թուրքերի դեմ կռվելու համար։

Իրավացի է նաև այն, որ հայերը ռուսական կողմնորոշում ունեին։ Դա ճիշտ կողմնորոշում էր և, վերջապես, դա հայ ժողովրդի իրավունքն էր։

Բայց հայերը լավ էին հասկանում, որ քաղաքական կողմնորոշումը մի բան է, իսկ քաղաքական իրավիճակը՝ մի այլ բան, որ առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական լուծը թոթափելուն նպատակաուղղված ամեն քայլ հղի էր ազգի ոչընչացման վտանգով։ Եվ պատահական չէ, որ Կ. Պոլսում ռուսական դեսպան Իզվոլսկին 1913 թ. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին գրում էր, թե Նուբար փաշան իրեն ասել է, որ «թուրքահայերը ինքնավարություն չեն ուզում և ոչ էլ հպատակության փոփոխության հարց են դնում. նրանց նպատակն է իրականացնել այն բարենորոգումները, որոնք նախատեսված էին Բեռլինի դաշնագրով...»[41]։

Եվ, որ պատերազմի տարիներին արևմտահայերի առանձին խմբեր օսմանցիներին զինված դիմադրություն էին ցույց տալիս, ապա դա երիտթուրքերի կառավարությանը ոչ մի իրավունք չէր տալիս արևմտահայությանը հոչակելու ապստամբ ժողովուրդ և գործի դնելու իր հրեշավոր ծրագրերը։ Առավել ևս անթույլատրելի էր արևմտահայերին մեղադրել, որ Արևելյան Հայաստանում հայկական կամավորական ուժեր էին ստեղծվում և ռուսական բանակի կազմում մասնակցում թուրքական բանակների դեմ մարտական գործողություններին։

Եղեռնի իրականացումը հիմնավորել արևմտահայության վարքագծով, կեղծիք է։ Դեռ ավելին, արևմտահայերի գլխավոր սխալը այդ իրադարձությունների ընթացքում այն էր, որ նրանք հավատացին թուրքական իշխանությունների հավաստիացումներին, ինչպես նաև հայկական կուսակցական մի շարք գործիչների և Կ. Պոլսի պատրիարքարանի կոչերին, զինաթափվեցին, ինչը նրանց զրկեց յաթաղանի դեմ իր գոյության համար զենքը ձեռքին կռվելու հնարավորությունից։ Համենայն դեպս, եթե չլիներ Կիլիկիայի կաթողիկոսի հորդորանքը, Զեյթունը կարող էր իսկական ինքնապաշտպանական կռիվներ մղել, եթե չլիներ դաշնակ գործիչներ Ռ. Տեր-Մինասյանցի և Վ. Փափազյանի անլուրջ

և անպատասխանատու վերաբերմունքը, Տարոնն ու Սասունը կարող էին տևական պաշտպանական մարտեր մղել։

Դաշնակների համար երիտթուրքերի կառավարության հայաջինջ քաղաքականությունն այնքան անսպասելի էր, որ երբ ապրիլի 24-ին Կ. Պոլսի մտավորականությանը ձերբակալեցին, նրանց թվում եղած է. Ակնունին երեխայական զարմանքով հարցրեց. «Այս անորակելի արարքներից արդյոք լուր ունի՞ մեր ընկեր Թալեաթը»[42]։

Դեռ Բալկանյան պատերազմի տարիներին Անդրանիկը դաշնակների երեսին շպրտեց, թե Ձեր այդ Իթթիհադի ընկերները օր մը ձեր գլուխը պիտի ուտեն, ձեր ազգին ալ [43]։

Սա է իրականությունը, և այն ոչ թե հայերի երևակայության արդյունք է, այլ բազմաթիվ վկայություններով հաստատված ճշմարտություն։ Բերենք այդ վկայություններից միայն մեկը։ Լսենք իրադարձությունների ժամանակակից և ականատես, պրոբլեմը հիմնավորապես ուսումնասիրած գերմանացի հասարակական գործիչ ու գիտնական Ցո. Լեփսիուսին։

«Թուրքական կառավարությունը ինքն էլ երբեք չէր հավատացած, թե հայ ժողովուրդը հեղափոխական ըմբոստությամբ ինքն իրեն մեղավոր է դարձրել։ Ամբողջ ամիսներ մենք թուրքական մամուլի մեջ կարդում էինք, թե հայերը հավատարիմ են մնացել իրենց թուրքական հայրենիքին։

Պատերազմի առաջին իսկ օրից ամբողջ հայ մամուլը հայ ժողովրդին կոչ էր անում պաշտպանելու օսմանյան հայրենիքի միությունը։ Հայ լուսավորչական եկեղեցու պատրիարքը շրջաբերական ուղարկեց իր բոլոր թեմերին, որով հորդորում էր, թե «հայ ազգը, որի հավատարմությունը հայտնի է, ներկա ժամանակին պետք է կատարի իր պարտքը և պետք է համակերպվի բոլոր զոհողություններին ի պաշտպանություն հայրենիքի»։ Հայ առաջնորդները Կարինից, Վանից և այլ տեղերից հեռագրեր էին ուղարկում Բ. Դուռ, ասելով, թե «Հայերը հայրենիքի պաշտպանության համար ոչ մի զոհողության առաջ ոչ ընկրկել են և ոչ էլ կընկրկեն»[44]։

Թուրքական կառավարությունը պատասխանեց. «Հայ մամուլի ու ժողովրդի վարքագիծը ըստ ամենայնի ողջամիտ է», որ թուրք կառավարությունը «երբեք չի տարակուսել հայերի հավատարմության և անձնվիրության վրա»[45]։

«Թուրքական բանակում գտնվող հայ զինվորները, որոնք

ըստ թուրքերի վկայությունների օրինակելի վարմունք ունեին, քաջաբար կռվեցին Բալկանյան պատերազմում, այս պատերազմի առաջին ամիսներին... ստացան բարձր պարգևատրություններ։ Կ. Պոլսի զինվորական վարժարանում պահեստի սպա գրվելու համար թուրքերից շատ հայեր ներկայացան և եղան մոտ 1500 դիմումներ կամավոր ռազմաճակատ մեկնելու համար»։

«Ռազմական նախարար Էնվեր փաշան... հայոց պատրիարքին առանձնապես գոհունակություն հայտնեց հայ զնդերի վարմունքի ու քաջության համար»[46]։

Այս առիթով տեղին է նաև մեջբերում կատարել ԱՄՆ-ի մի խումբ հասարակական գործիչների նամակից՝ հասցեագրված Թուրքիայի վարչապետ Օզալին. «Մենք դատապարտում ենք ահաբեկչական այն արարքները, որոնք կատարվում են թուրք դիվանագետների դեմ։ Մենք դատապարտում ենք բռնությունները միջազգային կյանքում։ Բայց ահաբեկչությունների նկատմամբ մեր ընդհանուր արգահատանքը և մեր անվտանգության շահերը ձեր կառավարության համար պատրվակ ծառայել չեն կարող պատմությունն ուրանալու համար։

Հետևաբար, մենք հորդորում ենք ձեզ, որ վերանայեք ձեր երկրի ու կառավարության դիրքը հայկական ցեղասպանության նկատմամբ և որպես նախաքայլ հաշտվեք այն իրողության հետ», որ ապրիլի 24-ը հայտարարվի «Ցեղասպանության դեմ պայքարի օր»։

Դրան «Գյունեշը» պատասխանեց. «Ապրիլի 24-ը որպես մարդկության նկատմամբ ցեղասպանության օր հայտարարելը հայերի համար կնշանակի ոչ միայն բարոյական հաղթանակ», այլ նաև հայերն այն «կօգտագործեն քաղաքական նպատակներով», «կօրինականացնեն իրենց դատը, նույնիսկ կկարողանան Ամերիկայից նյութական օժանդակություն պահանջել»[47]։

Թերթը թուրք ժողովրդին կոչ արեց զանգվածաբար բողոքի նամակներ գրել դրա դեմ։ Նամակագիրների գործը հեշտացնելու նպատակով, «Գյունեշը» տպագրեց այդ բողոք-նամակների ձևերն ու ԱՄՆ-ի կոնգրեսի անդամների հասցեները։

Նկատելի է նաև հետևյալը. որքան հեռանում ենք 1915 թվականից, որքան նվազում է Մեծ եղեռնի ականատեսների ու այն վերապրածների թիվը, թուրքերն այնքան ակտիվացնում են հայկական ցեղասպանությունը ժխտելու պատմությունը խեղաթյու-

ելու իրենց ջանքերը։ Հենց այդ ջանքերի մեջ պետք է փնտրել «հայկական ահաբեկչության» ակունքները։

Ժողովուրդն իզուր չի ասում՝ «ձեռքը գող, սիրտը՝ դող»։ 1983 թ. Էրզրումի կոյուղու վերականգնման ժամանակ բանվորները հայտնաբերում են շուրջ հարյուր երեխաների դիակներ։ Քաղաքի ծերունի թուրքերն ասում են, որ դրանք թուրքերի ձեռքով սպանված հայ երեխաների դիակներ են։ Դա թուրքական իշխանություններին դուր չի գալիս։ Նրանք հայտարարում են, որ հայտնաբերված դիակները հայերի ոճրագործության հետևանք են։ Եվ այս կեղծիքը ճշմարտության տեղ հրամցնելու նպատակով կազմակերպվում է սգո արարողություն՝ ի հիշատակ «հայ չարգարարների կողմից հոշոտված թուրք երեխաների»։

1. Հասկ, 1985, ապրիլ-մայիս։
2. Նույն տեղը։
3. Նույն տեղը։
4. Ջևմալ փաշա, Հայկական հարցը, Ե., 1927, էջ 52։
5. Նույն տեղը, էջ 51, 53։
6. Նույն տեղը, էջ 53։
7. Հասկ, 1985, ապրիլ—մայիս։
8. Նույն տեղը։
9. Նույն տեղը։
10. Նույն տեղը։
11. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 3, էջ 10—11։
12. Արմենիեն ռեպորտեր, 7—14 հունիսի 1984 թ.։
13. Սովետական Հայաստան ամսագիր, 1986, № 11։
14. Դի Ցայտ, 7 դեկտեմբերի 1984 թ.։
15. Արմենիեն դեպորտեր, 7—14 հունիսի 1984 թ.։
16. Le probleme Armenian: Neuf questions, neuf reponses, Ankara, 1982, p. 22—25.
17. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 270։
18. Հասկ, 1985, ապրիլ—մայիս։
19. Նույն տեղը։
20. Նույն տեղը։
21. Մարմարա, 13 հունվարի 1985 թ.։
22. Մարմարա, 9—10 մայիսի 1980 թ.։
23. Մարմարա, 15 մայիսի 1981 թ.։
24. Ազատ օր, 4 հուլիսի 1981 թ.։
25. Մարմարա, 25 հունվարի 1985 թ.։
26. Մարմարա, 20 հոկտեմբերի 1981 թ.։

27. Թուրքական հեռուստատեսություն, 25 ապրիլի 1985 թ.
28. Արև, 15 հունվարի 1985 թ.։
29. Մոնդ, 28 հունիսի 1984 թ.։
30. Մոնդ, 12 մայիսի 1984 թ.։
31. Հուրիեթ, 15 օգոստոսի 1982 թ.։
32. Հառաջ. 23 մայիսի 1985 թ.։
33. Թերչուման, 23 օգոստոսի 1982 թ.։
34. Արմենիա, 8 հոկտեմբերի 1985 թ.։
35. Հայրենիք, 19 մարտի 1985 թ.։
36. Արմենիա, 21 մայիսի 1985 թ.։
37. Հառաջ, 6 օգոստոսի 1985 թ.։
38. Թերչուման, 14 սեպտեմբերի 1982 թ.։
39. Զարթոնք, 18 հունիսի 1985 թ.։
40. Երևան, 10 հունվարի 1987 թ.։
41. Ջեմալ փաշա, Հայկական հարցը, էջ 32։
42. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
43. Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Պեյրութ, 1932, էջ 165։
44. Յո. Լեփսիուս, Հայաստանի չարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 170—172։
45. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
46. Նույն տեղը, էջ 171։
47. Գյունեշ, 13 ապրիլի 1983 թ.։

Ո՞ՎՔ ՇԱՀԵՐԻՆ ԵՆ ԾԱՌԱՅՈՒՄ

Թուրքական քաղաքագետներն ու պրոպագանդիստները ամեն կերպ աշխատում են գործն այնպես պատկերել, թե իրենց հակահայկական, հակասոցիալիստական քաղաքականությունը հետևանք է թուրք դիվանագետների վրա «հայ ավազակների» իրականացրած ահաբեկչության։ Իրականում այդ ահաբեկչությունը միայն առիթ ու վարագույր է, որն օգտագործվում է օսմանյան և երիտթուրքական արյունարբու քաղաքականությունը արդարացնելու, հայերի ցեղասպանության փաստը ժխտելու, պանթուրքիզմի գաղափարները պրոպագանդելու համար։ Թուրքական պրոպագանդան ՍՍՀՄ-ի ու իրական սոցիալիզմի դեմ իմպերիալիզմի վարած գաղափարախոսական պայքարի, «խաչակրաց արշավանքի» բաղկացուցիչ մասն է ու հրահանգավորվում է ԱՄՆ-ի կողմից։ Դրա համար էլ Թուրքիայի հակահայկական պրոպագանդան համաչափ է գործում Արևմուտքի հակասովետական պրոպագանդայի հետ։ Դա ապացուցելու համար փաստերի պակաս չի զգացվում։ «Միլիեթ» թերթը գրում է. «Աստված չանի, եթե քո հարևանը անբարոյական է և մշտապես

զավթողական պլաններ է մշակում։ Թուրքիայի համար Ռուսաստանը հենց այդպիսի հարևան է... Այսօր ամբողջ աշխարհում Թուրքերն ու Թուրքիան չունեն այնպիսի իսկական թշնամի, ինչպիսին Մոսկվան է»[1]։

Կոմունիզմի դեմ պայքարելու համար,— գրում է «Թերջուման» թերթը,— պետք է «օգնել հակակոմունիստական շարժմանը ամբողջ աշխարհում։ Մենք պետք է պաշտպանենք աֆղանական, լեհական, էստոնական, լիտվական և բելոռուսական հարցերը։ Նրանց ցույց տանք քաղաքական, բարոյական և, երբ անհրաժեշտ է, նաև գործնական աջակցություն... Այսօր Թուրքիայում կադրեր կան, որոնք պատրաստ են օգնել այդ ժողովուրդներին (սովետական ժողովուրդներին) ազատվելու ռուսական գերությունից։ Ինչո՞ւ էմիգրացիայում չստեղծել «Թուրքեստանի» կամ թե «Ուզբեկստանի» կառավարություն։ Ստեղծենք Ղրիմի թաթարների, Հյուսիսային Կովկասի, Թուրքմենստանի և Ադրբեջանի էմիգրացիոն կառավարություններ։ Նրանց տրամադրենք հատուկ շենքեր, մեքենաներ, ռադիոկայաններ»[2]։ Սա այլ բան չէ, եթե ոչ հակասովետիզմի վարագույրով քողարկված պանթուրքիզմի տարածապաշտական քարոզների բնորոշ օրինակ։

«Թերջումանը» 1982-ի օգոստոսի 12-ին կոչ էր անում. «Պաշտպանողական միջոցների փոխարեն մենք պետք է հրապարակենք միլիոնավոր գրքույկներ, որոնցում հայերի բոլոր գազանությունները պետք է ցույց տրվի փաստաթղթերով... Ինչո՞ւ մենք մինչև այժմ այդ գործով չենք զբաղվել և չենք թարգմանել այդ գրքույկները օտար լեզուներով»։ Թուրքական պաղլամենտը խնդիր է դրել՝ հայերի դեմ սկսել մինչ այդ «չտեսնված ծավալների» գործողություններ և, առաջին հերթին, պրոպագանդիստական բնույթի։

Նույն «Թերջումանը» գրում է. «Նրանք (հայերը) կապերի մեջ են մտել Թուրքիայի մարքս-լենինյան անարխիստական խմբերի հետ... ահաբեկիչների մի նոր հաղթանակ կարելի է համարել թուրքական հեռուստատեսությամբ Թուրքիայի հայերի պատրիարք և հոգևոր լիդեր Գալստյանի ելույթը։ Եվ ամենագրգիռավորն այն է, որ այդ ելույթը հայերեն լեզվով էր։ Չգիտեմ, թուրքական հեռուստատեսության ո՞ր հիմարի խելքին էր փչել այդ գաղափարը»[3]։

Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի 1984 թ.

սեպտեմբերի 25-ի հայտարարության մեջ ասված է՝ հայկական տեռորիստների գործունեությունը ուղղված է Թուրքիայի Հանրապետության տարածքային ամբողջականության դեմ։

Ըստ թուրքական մամուլի, Հայկական հարցում ՍՍՀՄ-ի ձգտումն է.

— առաջնությունը չզիջել արևմտյան երկրներին, ցույց տալ, որ Սովետական Միությունը պաշտպանում է հայերի իրավունքները։

— տեսականորեն ու պարբերաբար ճնշում գործադրել Թուրքիայի վրա։

— Սովետական Հայաստանին դարձնել Հայկական հարցի ժառանգորդը միջազգային ասպարեզում, որ նրան հնարավորություն կտա բարենպաստ իրավիճակում իր սահմանները տեղաշարժել դեպի հարավ։

— ընդարձակել իր ազդեցության շրջանակները և միջազգային ասպարեզում ուժերի հավասարակշռությունը փոխել հօգուտ սոցիալիզմի։

«Թերջումանի» 1985 թ. հոկտեմբերի 26-ի համարը պատմում է Լոնդոնում կայացած մի սեմինարի մասին, որը քննարկել է ԱՄՆ-ի լրտեսական կենտրոններից ղեկավարվող «Լրաքաղության հատուկ հետազոտությունների» գործակալության մասնագետների կազմած «Ռուսների կողմից 1988 թ. իրագործվելիք տարածապաշտական ծրագրերը» անունը կրող 373 էջից բաղկացած տեղեկագիրը։ Տեղեկագրի մեծ մասը նվիրված է Թուրքիային։ Զեկուցումով հանդես եկավ Սովետական Միության գծով ամերիկյան մասնագետ Կոնստանդին Ջորջը։ Նա ասաց. «Ռուսները այդ շրջանում (Թուրքամերձ) այս տարի սկսեցին երկու ռազմական երկաթգծերի շինարարությունը։ Դրանցից մեկը, որ պետք է ավարտվի 1987-ին, կանցնի Սովետական Հայաստանի տարածքով ու Վրաստանով կհասնի Կարսի ուղիղ դիմացը՝ Աջանհաքի։ Իսկ մյուսը պետք է ավարտվի 1986-ին՝ որը սկիզբ առնելով Հայաստանում, Իջևանով և Սևանա լճի շրջակայքով կհասնի Թուրքիայի սահմանը։ Այս երկու ճանապարհներով սովետական զինված ուժերը կստանան շարժվելու մեծ դյուրություն... օգոստոսին, 25 հազ. զինվորի մասնակցությամբ, սահմանից 200 կիլոմետր հեռավորության վրա Թուրքիան գրավելու մի գաղտնի զինավարժություն է կատարվել

(խոսքը վերաբերում է «Կովկաս» պայմանական անունը կրող զորավարժություններին)»։

Ըստ տեղեկագրի, Թուրքիան գրավելու սովետական պլաններում հիմնարար տեղ է հատկացված այդ երկրի վիճակի անկայունացմանն ու ահաբեկչական արարքների ծավալմանը։ Տեղեկագրում ուղղակի գրված է. «Սովետական Միությունը Պարսկաստան իջնելով պիտի սկսի իր տարածապաշտ շարժումները։ Այնտեղից պետք է գործողությունների մեջ ներքաշվեն Թուրքիայի անջատողականները և այդպիսով երկիրը հրեն դեպի ներքին պատերազմ։ Այդ ժամանակ գործի կլծվեն նաև մոլեռանդ շիիները, որոնք վայելում են Սիրիայի վարչապետ Հաֆեզ Ասադի աջակցությունը։ Ասադն իր ողջ ուժերով կջանա Իսկենդերու մտնել։ Մինչ այդ Սովետական Միության հրամանով գործի պիտի լծվեն Բուլղարիան և Հունաստանը։ Այս կացությունը Թուրքիային կհարկադրի ճակատել Թրակիայում՝ հույների և բուլղարների, արևելքում՝ անջատողականների, իսկ հարավային շրջաններում՝ Սիրիայի դեմ։ Այս ծրագրի միակ նպատակը Թուրքիային անօգնական վիճակում թողնելն է, որպեսզի նա հպատակվի սովետական բռնապետությանը»։

Թուրքական քաղաքական գործիչներն ու պատմաբանները այդ խնդրում ակնհայտորեն ղեկավարվում են Շատոբրիանի հանրահայտ խոսքերով. «Երբ սուտը հաճախ է կրկնվում, ճշմարտության տեղ է ընդունվում»։ Ահա թե ինչու նրանք իրար հետևից հրապարակ են նետում սուտն ու կեղծիքը, դրանք հրամցնում որպես կատարված իրողություն և դրանց շուրջը տևական աղմուկ բարձրացնում, աշխատելով այդ միջոցով խաբել համաշխարհային հասարակական կարծիքը և հնարավորություն չտալ, որպեսզի մակերես դուրս գան իսկական փաստերն ու դրանց ծնող պատճառները։

Թուրքական հեռուստատեսության 1985 թ. փետրվարի 23-ի հաղորդումներից մեկում, խոսելով ԱՍԱԼԱ հայկական կազմակերպության մասին, ասվում է. «Այդ կազմակերպության հիմնական նպատակն է տեռորի միջոցով համոզել Թուրքիայի ներկայիս կառավարությանը, որ նա ընդունի հայերի ցեղասպանությունը... այդ կազմակերպությունը սերտ կապերի մեջ է մարքս-լենինյան միջազգային կազմակերպությունների հետ»։

Նույն հեռուստատեսությունը իր 1981 թ. հունիսի 10-ի հաղորդման մեջ ասում էր. «Գենոցիդի ընդունումը շատ կարևոր

խնդիր է։ Դրա համար էլ մենք այստեղ և ամեն տեղ ջանում ենք ապացուցել, որ գենոցիդ չի եղել։ Սա երկար շղթայի մի օղակն է միայն... Ցեղասպանությունը այն որոգայթն է, որի միջոցով հայերը ցանկանում են հասնել մեկ այլ նպատակի։ Դա հետևյալն է։

Հայերը մեծամասնություն էին կազմում Արևելքում։ Այստեղ գոյություն ուներ Հայաստան։ Թուրքերը այն դատարկեցին։ Որպես պատիժ նրանք պետք է հայերին կրկին բերեն այստեղ և հիմնեն նոր Հայաստան։ Այս բոլոր ասածիս նպատակը մեր որոշ քաղաքացիներին նախազգուշացնելն է։ Նրանցից ոմանք, թող ինձ ներեն, պարզամտորեն ու մանկամտությամբ են վերաբերվում այդ հարցին։ Նրանք ասում են թողնենք այդ բոլորը, և ինչպես գերմանացիներն ու հրեաները հաշտության ձեռք մեկնենք միմյանց... Սրանից ավելի վտանգավոր պարզամիտ բան չի կարող լինել... Գործը դրանով չի վերջանա, գործը դրանով կսկսվի»։

Իհարկե, թուրքական մամուլի և պաշտոնատար անձանց «մտավախությունը», թե ժամանակակից հայկական ահաբեկչությունը սպառնում է Թուրքիայի տարածքային ամբողջությանը, չպետք է լուրջ ընդունել, որովհետև դժվար չէ բացատրել, թե ինչու արտասահմանյան երկրներում կատարվող ահաբեկչական գործողությունները և ահաբեկչությունը, ընդհանրապես, չեն կարող մասնատել Թուրքիան, նրանից տարածքներ խլել։

Այդ հայտարարությունների իմաստը պարզ է՝ արտաքին վտանգով ահաբեկել թուրք ժողովրդին, նրա վզին փաթաթել իշխող դասակարգերի շահերից բխող քաղաքականությունը՝ շովինիստական մթնոլորտի բորբոքում, երկրի հետագա ռազմականացում, սոցիալական և տնտեսական սուր խնդիրներից հասարակության ուշադրության շեղում։ Այս առումով հատկանշական է, որ ամեն տարի ապրիլի 22—28-ը Թուրքիայում անց է կացվում «Ազգային միասնության շաբաթ»։

Վերևում կատարված բոլոր մեջբերումներին բնորոշ է մի միտք՝ ժամանակակից հայկական տեռորիզմի պատճառները պետք է փնտրել ոչ թե Թուրքիայի, այլ աշխարհի մյուս պետությունների քաղաքականության մեջ։ Հայկական ահաբեկչությունն ուղղակի հետևանք է միջազգային կոմունիզմի և, առաջին հերթին, Սովետական Միության «զավթողական արտաքին քաղաքականության»։

«Հուրիեթը» զգուշացնում է Թուրքերին, որ «Սովետական Միությունը Արևելյան Անատոլիայում անկախ Հայաստանի երազ է հյուսում»[4]: ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շուքրի Էլեքդաղը, արտահայտելով իր կառավարության կարծիքը, հայտարարեց, որ զորավիգ լինել հայկական «ենթադրություններին»՝ նշանակում է աջակցել թշնամի ուժերին, որոնց նպատակն է Թուրքիայի բաժանումը՝ մի մեծ վտանգ, որի դեմ ՆԱՏՕ-ն պարտավորված է պայքարել։ Դեսպանի ասածների հետ համահնչյուն են ամերիկյան պետական գործիչների խոսքերը՝ «ԱՍԱԼԱ-ի նման հայկական ահաբեկչական կազմակերպությունների հռչակած նպատակն է Թուրքիայի արևելյան շրջանների հողերի անջատում և դրանց կցում Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը»[5]։

Դժվար չէ նկատել, որ այստեղ մենք գործ ունենք «սովետական վտանգի» մասին իմպերիալիստական տխրահռչակ տեսության մի տարբերակի հետ, որը կոչված է հասարակությանը «կոմունիստական վտանգով» ահաբեկելու միջոցով առաջ մղել իր շահադիտական քաղաքականությունը։

«Գյունեշ» թերթի 1983 թ. հունվարի 3-ի համարում տպագրված «Հայկական մի շարք ծրագրերի մասին» հոդվածի հեղինակը նշելով, որ «հայկական ահաբեկչությունը» աստիճանաբար վեր է ածվում «քաղաքական գործունեության», գրում է. «Ճիշտ այնպես, ինչպես առաջներում հրեաները ահաբեկչությամբ իրենց ձայնը լսելի դարձրին և վերջն էլ անկախ պետություն հիմնադրելու վերջնագծին հասան, ինչպես Պաղեստինի ազատագրական կազմակերպությունը նույն ճանապարհով ընթանալով այսօր սկսեց պետություն համարվել... հայերի նպատակն էլ նույնն է, և նրանք բացարձակ ձևով դրան են ձգտում։

Չենք կարող ասել, թե ահաբեկչությունն ամբողջությամբ կվերանա, բայց այսուհետև զգալիորեն նվազելու է։ Երբ հայերը նկատեն, որ ահաբեկչությունը տգեղացնում է իրենց դատի դեմքը, կսկսեն այդ դատը առաջ տանել քաղաքական միջոցներով, խոշոր պետությունների օգնությամբ։ Եվ Թուրքը, որ մինչև օրս այդ դատի կապակցությամբ իր խելքը գլուխը չի հավաքել, այդ ժամանակ է, որ ուշքի է գալու...»

Ահա թե ինչու Թուրքական պաշտոնական շրջանները համառորեն կառչում են «հայկական ահաբեկչությունից», նրա

շուրջը մեծ աղմուկ բարձրացնում։ Այդպիսով նրանք ոչ այնքան բողոքում են իրենց դիվանագետների կորուստների դեմ, որքան ստեղծված մթնոլորտն օգտագործում Թուրքիան տնտեսական, սոցիալական ու քաղաքական ճգնաժամից դուրս բերելու համար։ Այն ժամանակ, երբ Թուրքական իշխանություններն իրենց ողջ եռանդը ներդնում են տեռորին զոհ գնացած մի քանի տասնյակ անձանց շուրջ համաշխարհային աղմուկ բարձրացնելու, քաղաքական ու դիվանագիտական վճռական վարքագիծ դրսևորելու համար, այդ նույն ժամանակ Թուրքիայում քաղաքական ու դաղափարախոսական նկատառումներով ձերբակալվել է 150—160 հազար մարդ, որոնցից մոտ 1500-ը զանազան միջոցներով ոչնչացվել են։

Պրոպագանդայի իմպերիալիստական միջոցները համառորեն թմրկահարում են «անձի իրավունքների» հարցը, որ դարձել է հակասովետական պրոպագանդայի գլխավոր միջոցներից մեկը։ Մինչդեռ, երբ խոսքը վերաբերում է ԱՄՆ-ի իմպերիալիստական շահերին ու նրա դաշնակիցներին, անդրօվկիանոսյան պաշտոնատարները ոչ միայն աչք են փակում մարդու իրավունքների առաջ, այլև բացահայտ կոչ են անում դրանք ուշադրության չարժանացնել։ Այդ անամոթ երկվատությունը գնալով ավելի ու ավելի որոշակիորեն է դրսևորվում ԱՄՆ-ի քաղաքականության և պրոպագանդայի մեջ։ 1984-ի ամռանը ԱՄՆ-ի պետական քարտուղարի օգնական Աբրահամսը Անկարայում հայտարարեց. «Մարդու իրավունքների պաշտպանությունից առավել առաջնային ուշադրություն պետք է դարձնել կոմունիզմի դեմ պայքարին... Մարդու իրավունքների բնագավառում մեր հիմնական խնդիրն է դիմագրավել կոմունիզմին... Այն քաղաքականությունը, որ չի խարսխվում հակակոմունիզմի վրա, աբսուրդ է»։

Չինվորական խունտայի քաղաքականությունը քննադատողների հասցեին նա ասաց. «Նրանք երբեք քարտեզին չեն նայում, անտեսում են Թուրքիայի աշխարհագրական դիրքը, որ պաշտպանում է Հյուսիսատլանտյան պակտի հարավային թևը»[6]։ ԱՄՆ-ի իմպերիալիզմի ջատագովը իր հակասովետական հերյուրանքներով փորձում է թույլ հասարակության ուշադրությունը շեղել այն իրական փաստից, որ Միացյալ Նահանգները Թուրքիայի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքն արդեն գցել են իրենց կրնկի տակ և պաշտպանում են այդ երկրում հաստատված հակադեմոկրատական ռեժիմը։

Չեխոսլովակիայում արաբերեն լույս տեսնող «Սոցիալիստական ուսումնասիրություններ» ամսագրի 1985 թ. ապրիլյան համարում տպագրված «Մարդկային իրավունքներ. ճշմարտություն և կեղծիք» հոդվածում նշված է. «Ռեյգանի վարչակազմը կոմունիզմի դեմ խաչակրաց արշավանքի դրոշ բարձրացնելուց հետո լիովին համաձայնվեց Թուրքիայում քաղաքացիներին հալածելու պետական քաղաքականության հետ» և, որ «Օզալի ղեկավարությամբ իշխանության գլուխ անցած կառավարությունը բռնակալական վարչակարգի մեջ ոչ մի փոփոխություն չմտցրեց։ «Երկիրը, ինչպես եղել է անցյալում, մնում է օտար և տեղական մոնոպոլիստական կապիտալի ամենառեակցիոն և թշնամական ուժերի բռունցքի տակ, ուժեր, որոնք կառավարում են բացահայտ տեռորով»։

«Проблемы мира и социализма» ամսագրի 1985 թ. № 6-ում կարդում ենք. «Թուրքիան «Մարդու իրավունքների» վաշինգտոնյան ծնողների օրհնանքով և 1980 թ. ռազմական հեղաշրջման նախաձեռնողների ուժերով վեր է ածվել համատարած համակենտրոնացման ճամբարի»։

Թուրքական բանտերում սովորական երևույթ է, երբ «սպանությունը քողարկվում է ինքնասպանության տակ»։ 1980—1984 թթ. ընթացքում ռազմական դատարանները դատապարտել են ավելի քան 42 հազար մարդու։ Միայն 1984 թ. մահվան էր դատապարտվել մոտ 200 մարդ, իսկ 6000-ին մահապատիժ էր սպասվում։ Թուրքիայում ընթացքի մեջ է... մոտ 1000 նոր բանտերի շինարարությունը։

«Ցումանիտե» թերթը գրում է, որ կալանավորներից խոստովանություն կորզելու նպատակով նրանց հետանցքը ձողեր են խրում, անողոքաբար ծեծում, ստիպում երկար ժամանակ կանգնած մնալ, սառնամանիքին հարկադրում են դրսում լողանալ և այն էլ սառը ջրով, հաճախ է օգտագործվում փայտով ոտքերի ներբաններին հարվածելը՝ ֆալախան։ Բանտարկյալներին հարկադրում են ուտել իրենց արտաթորանքը, նրանց վրա բաց են թողնում կատաղած շներ։ 1980—1984 թթ. ընթացքում խոշտանգումների հետևանքով՝ բանտում մահացել է 130 մարդ[7]։ Բանտերում չեն խնայում նաև կանանց ու երեխաներին։ Նկատվել են բանտարկյալների խմբակային բռնաբարության մի շարք փաստեր[8]։

Ականատեսների վկայությամբ բանտարկվածների մեջ կան նաև 7—11 տարեկան երեխաներ։

Թուրքական «Նոկտա» թերթը 1986 թ. փետրվարի 2-ի և 9-ի համարներում տպագրեց գաղտնի ոստիկանության նախկին ծառայող Ս. Ջանետի հուշերը, որոնցում նա պատմում է քաղաքական բանտարկյալների նկատմամբ իրականացված աներևակայելի խոշտանգումների մասին։ Հեղափոխական ժողովրդական միության կապավորուհի Ջ. Դեյիրմենջիի վրա կիրառեցին ֆալախան, էլեկտրական հոսանք, «պաղեստինյան» և «մսագործի» կախաղաններ, «գործողության սեղան»։ Կնոջ աչքերը կապում էին, ձեռքերը մեջքին ամրացնում, կախում և մարմնի ամենազգայուն մասերին միացնում էլեկտրական հոսանք, սեռական օրգանների մեջ մեծ ճնշման տակ ջուր սրսկում, աղի պանիր ուտեցնում, կանգնեցնում աղբյուրի կողքին և թույլ չէին տալիս ջուր խմել, բռնաբարում կոկա-կոլայի շշով։ Պատահական չէ, որ կինը այդ գազանություններին չի դիմանում և մեռնում է։

«Գործողության սեղանն» այն էր, երբ կալանավորներին մերկ պառկեցնում էին սեղանին, ոտքերն ու ձեռքերը ամուր կապում և ապա նրա մարմինը ծածկելով աղաջրով, միացնում էին էլեկտրական հոսանքը։ Եվ այսպես 3—4 օր շարունակ։ Դեռատի մի աղջկա «պաղեստինյան կախաղան» բարձրացրին և մահակով բռնաբարեցին։ Քաղաքական հանցագործ Հ. Կապանի խոշտանգումները տևեցին 200 օր։ Նրա քթից շղթայով օղակ անցկացրին և վեց օր շարունակ հարվածելով, ինչպես շղթայված վագրի, խաղացնում էին։

Քրդական «Գահլ» («Ժողովուրդ») թերթը 1985 թ. ապրիլի 15-ին գրում է. «Ըստ պաշտոնական տվյալների, 1983 թ. հունիսին քաղաքական բանտարկյալների թիվը թուրքական զինվորական բանտերում հասնում էր 21046-ի..., սակայն նրանց իսկական թիվը շատ ավելի մեծ է։ Ձերբակալվածների զգալի մասը մեղադրվել է թուրքական քրեական օրենսգրքի 141 և 142 հոդվածներով, որոնք վերաբերում են չօրինականացված կազմակերպության անդամ լինելուն կամ «կոմունիստական պրոպագանդայով զբաղվելուն»»։

Օրենսգրքի այդ հոդվածներն օգտագործվեցին ձախ հայացքներ ունեցողներին, առաջադեմ ժուռնալիստներին, գրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին, գիտնականներին և մտա-

վորականության մյուս ներկայացուցիչներին բանտ նետելու համար։

«Թուրքական առաջադեմ արհմիության 85 ղեկավարներից (40-ը կանայք) 74-ը դատապարտվել են մահապատժի, չնայած մեղադրական եզրակացության մեջ ոչ մի կոնկրետ փաստ չկար նրանց կողմից «բռնության ակտ» գործադրելու մասին, և նրանք բոլորն էլ անվանված էին «խղճի բանտարկյալներ»։

Կոմունիստներին բանտերում ամեն օր խոշտանգում էին էլեկտրական նստարանների վրա, նրանց սոված կատուների հետ փակում պարկերում, մարմինները ծակում ծխախոտի այրոցքներով։

Իշխանությունները կազմակերպեցին քաղաքական կուսակցությունների մի քանի խոշոր դատավարություններ, լուծարքի ենթարկվեցին ու ջախջախվեցին բոլոր՝ թվով 20 ռեակցիոնային ու դեմոկրատական կազմակերպությունները։ Մահմանափակվեցին քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, գործնականում երկրի ազգաբնակչությանն արգելվեց քաղաքական գործունեությամբ զբաղվել։ Անսահմանափակ իրավունքներից օգտվում են միայն ներքին գործերի մինիստրությունն ու ոստիկանությունը։

Կառավարման պառլամենտական համակարգին անցնելուց հետո էլ գեներալները շարունակում են իրենց ձեռքում պահել պետության ներքին և արտաքին քաղաքականությունը։ Թուրքիայում «ղինվորականությունը,— 1985 թ. սեպտեմբերի 12-ին գրեց «Նյու Յորք Թայմսը»,— չնայած վերադարձել է իր զորանոցները, սակայն դրանց դռները բաց են և գտնվում են քաղաքացիական կառավարության գրասենյակներին առընթեր»։

Ինչպես բնութագրել է Թուրքիայի կոմկուսի V համագումարը, «երկրում հաստատվել է համաձայնողական օլիգարխիայի դիկտատուրա»։

Քաղաքական վայրագ հալածանքների զոհ դարձան Թուրքիայի խաղաղության կողմնակիցների շարժման ու գրողների կազմակերպության ղեկավարները։ Այս պայմաններում տրամաբանական հնչեց պրեզիդենտ Էվրենին Թուրքական ֆաշիստների՝ Գորշ գայլերի լիդեր Թուրքեշի գրած հետևյալ երկտողը. «Ես ինչո՞ւ եմ դատվում, երբ երկրում իմ գաղափարներն են իշխում»։ Եվ զարմանալու ոչինչ չկա,— 1985 թ. օգոստոսի 13-ին

գրեց ֆրանսիական «Ֆիգարոն»,— որ որոշ ժամանակ անց թուրքական ֆաշիզմի այդ լիդերն ազատ արձակվեց։

Ծանր է Թուրքիայի տնտեսական ու ֆինանսական վիճակը։ Աշխատավորական խավերը տառապում են աղքատության ճիրաններում։ Թուրքիայի արտաքին պարտքերը անցնում են 30 միլիարդ դոլարից։ Երկրի միջին տնտեսական շահույթները հազիվ բավարարում են այդ պարտքերի տոկոսները վճարելուն։ Հաշվված է, որ Թուրքիայի յուրաքանչյուր բնակիչ, այդ թվում նաև նորածին երեխան, XXI դար կթևակոխի արտասահմանին 1000 դոլար պարտքով։ Թուրքիան հարկադրված է արտաքին պարտքերը փակել նոր փոխառություններ, այսինքն նոր պարտքեր վերցնելու միջոցով[9]։

Ֆինանսական վիճակը շտկելու նպատակով Օզալը վաճառքի հանեց 263 պետական ձեռնարկություն և հաստատություն, այդ թվում երկաթուղիներ, ռադիոկայաններ, թղթի և կարի արդյունաբերական ձեռնարկություններ։ Վաճառվել են Բոսֆորի կամուրջի շահագործումը, թեյի արտադրությունն ու էլեկտրակայանները, օդային փոխադրումները։ Արտաքին առևտրական հարաբերությունների հաշվեկշռի ճեղքվածքը փակելու համար թույլատրվել է արտահանումների ժամանակ օգտագործել թուրքական թղթոսկին, ինչպես նաև ոսկու առևտուրը, բայց, չնայած դրան, ներմուծման և արտահանման տարբերությունը շարունակում է կազմել 2 միլիարդ դոլար՝ հօգուտ ներմուծման։ 1980—1984 թթ. ընթացքում բանվորների ու աշխատավորական մյուս խավերի աշխատավարձը կրճատվել է 55 տոկոսով[10]։ Բարձրացել են ապրանքների գները և, ինչպես Ասոշիեյթեդ Պրես գործակալությունն է հայտնում, Թուրքիայի ազգաբնակչությունը գլխապտույտ ունեցավ գների խելահեղ բարձրացումից։ Միայն 1984 թ. 68 տոկոսով ավելացան առաջին անհրաժեշտության առարկաների գները։ 1985 թ. սկզբին բարձրացան հեղուկ վառելիքի, շաքարի, էլեկտրաէներգիայի և այլնի գները։ 1984 թ. ընթացքում վառելիքի գներն աճեցին 11 անգամ, իսկ բնակվարձը՝ 50 տոկոսով։ Մտցվեց նոր եկամտահարկ, որի ընդհանուր գումարը կազմում է 400 միլիարդ լիրա։ Պաշտոնական տվյալներով գործազուրկների թիվը հասավ 4 միլիոնի, այսինքն՝ բանվորների ընդհանուր թվի 25 տոկոսը (ըստ արհմիությունների տվյալների գործազուրկ է 7,5 միլիոն մարդ)։ Ամեն տարի գործազուրկների բանակը համալրվում է 350 հազար մար-

գով։ «Ավելորդ մարդկանց» 55 տոկոսի տարիքը 25-ից չի անցնում։ Միլիոնավոր թուրք աշխատավորներ հաց վաստակելու ակնկալիքով դիմում են պանդխտության և իրենց աշխատուժը ամենաէժան գներով վաճառում եվրոպական շատ երկրների շուկաներում։ Ծանր է արտագնա աշխատանքի մեկնածների վիճակը. նրանք տնտեսական վայրագ շահագործման են ենթարկվում, զոհ դառնում բազմաբնույթ խտրականությունների։

Ֆրանկֆուրտի դատարանի որոշմամբ արգելվել է թուրքերի այցելությունը հասարակական վայրեր ու հաստատություններ։ Քաղաքի փողոցներում նույնիսկ ցուցանակներ երևացին՝ «Լավ թուրքը մեռած թուրքն է» մակագրությամբ։

Աշխատանքի դիմաց թուրքը և մյուս օտարերկրացիները շատ ավելի քիչ են վարձատրվում, քան ԳՖՀ-ի բնակիչները։ Նրանց օգտագործում են ծանր, վտանգավոր և ցածր վարձատրվող աշխատանքներում։

Թուրքիայում հասարակական հարստությունը տարեցտարի ավելի ու ավելի կուտակվում է թուրքական խոշոր կապիտալի ու միջմայրցամաքային մոնոպոլիաների ձեռքում, ավելի անգութ է դառնում հասարակության աղքատ խավերի շահագործումը։

Մեծ քաղաքների բնակչության 35—60 տոկոսը բնակվում է գետնախորշերում։ Գյուղացիների 72 տոկոսն ունի մինչև 2,3 հա հող։ Իսկ կես միլիոն թուրք գյուղացիներ ընդհանրապես հողազուրկ են։ Դրա դիմաց 38 հազար կալվածատերերին է պատկանում բոլոր մշակելի հողերի $^1/_4$-ը։ Արևելյան նահանգներում «կան կալվածատերեր, որոնց պատկանում է 40-ական գյուղ,— գրել է թուրք գրող Ազիզ Նեսին,— իսկ կալվածատերերի համար աշխատող գյուղացիները չունեն ոչ իրենց գդալը, ոչ անկողինը»[11]։ «Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ հիմա թուրք գյուղացին բնակվում է կավաշեն տներում... և ներկայումս էլ ապրում է ինչպես հազար տարի առաջ... 22 միլիոն գյուղացիներից 19 միլիոնը բոլորովին զուրկ է ճանապարհներից, 15 միլիոնը՝ խմելու ջրից, իսկ 21,5 միլիոնը՝ էլեկտրականությունից...», տներում մարդն ու անասունը միասին են ապրում։ «Միլիեթի» վկայությամբ, գյուղատնտեսության մեջ արորների թիվը ոչ միայն չի պակասում, այլ ավելանում է[12]։

Ինչպես տեսնում ենք, հասարակության այս բևեռում տարբական հնարավորություններից զուրկ, քաղցից, թերսնումից ու

համաճարակներից մահվան դատապարտված աշխատավորական բազմամիլիոն զանգվածներն են։ Այդպես է ոչ միայն գյուղում։

1986 թ. նոյեմբերի 25-ին «Պրավդան» տպագրեց «Խոշորագույն գործադուլ (աշխատանք և կապիտալ)» հոդվածը, որտեղ ասված է. Թուրքիայում «1983 թ. բանվորական շարժման վրա արգելքը մասնակիորեն վերացվեց, սակայն ուժի մեջ են մնում բազմաթիվ սահմանափակումներ...»։ Թերթը նշում է, որ վերջին տարիները նշանավորվեցին «թուրք աշխատավորության կենսամակարդակի անշեղ անկումով։ Դա ուղղակի հետևանք է ներկա կառավարության կողմից իրականացվող տնտեսական «լիբերալիզացիայի» քաղաքականության։ Պրեմիեր մինիստր Թ. Օզալը բազմիցս հայտարարել է, որ «օտարերկրյա կապիտալի համար Թուրքիան իսկապես դրախտ է բանվորական ուժի էժանության շնորհիվ»։

Թուրքական հայտնի տնտեսագետ Է. Սորալը գրում է, որ 1984 թվին 1979 թվի համեմատությամբ բանվորների ռեալ աշխատավարձը կրճատվել է երկու անգամ։ Գլխավոր պատճառը ինֆլյացիայի աճն է։ Նշենք նաև, որ 1984 թ. հետո ինֆլյացիան աճել է ևս ավելի քան 100 տոկոսով։

Ըստ «Ջումհուրիեթ» թերթի, թուրքական յուրաքանչյուր հարյուր ընտանիքից 30-ը ապրում է աղքատության մեջ։ Հասարակության 10 տոկոսը կազմող հարուստները 47 անգամ ավելի շատ եկամուտ ունեն, որոնց և բաժին է ընկնում ազգային եկամտի 56 տոկոսը, իսկ $^1/_5$-րդ մասը կազմող աղքատներին՝ միայն 2,6 տոկոսը։

Գնալով ուժեղանում է Թուրքիայի կախումը արտասահմանյան կապիտալից։ Միջմայրցամաքային մոնոպոլիաների հետ մրցությանը չդիմանալու հետևանքով միայն 1984 թ. Թուրքիայում սնանկացել է 165 ազգային ընկերություն։ Քանի որ Թուրքիան միջազգային վալյուտային ֆոնդին հսկայական պարտքեր ունի, վերջինների ճնշման տակ գլխապտույտ արագությամբ արժեզրկվում է թուրքական լիրան։ Եվ պատահական չէ, որ, ըստ հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալների, Թուրքիայի ազգաբնակչության 60 տոկոսը դժգոհ է կառավարության տնտեսական քաղաքականությունից։

Այս վիճակից թուրք ժողովրդի ուշադրությունը շեղելու, նրան ջինգիզմի ու պանթուրքիզմի բացիլներ ներարկելու և այդ մի-

ջոցով աշխատավորության դասակարգային գիտակցությունը թմրեցնելու, դասակարգային ներհակությունները հետին պլան մղելու համար թուրքական կառավարությունը օգտագործում է նաև «Հայկական ահաբեկչության» շուրջը իր իսկ կողմից բարձրացրած աղմուկը։

1. Միլիեթ, 24 օգոստոսի 1982 թ.։
2. Թերջուման, 12 օգոստոսի 1982 թ.։
3. Նույն տեղը։
4. Զարթոնք, 1 փետրվարի 1985 թ.։
5. Հուսաբեր, 16 մարտի 1985 թ.։
6. Հուրիեթ, 3 հուլիսի 1984 թ.։
7. Ազգային մշակույթ, 2 դեկտեմբերի 1984 թ.։
8. Շաղկապ, 1982, № 13։
9. Коммунист. 23 мая 1985 г.
10. Ասպարեզ, 8 ապրիլի 1985 թ.։
11. Ք. Պոզնանսկա, Հին և Նոր Թուրքիա, Ե., 1985, էջ 161։
12. Նույն տեղը, էջ 158։

ՈՒԹԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ։ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿՈՂՈՊՈՒՏ

Թուրքական պաշտոնական շրջաններն ու պատմաբանները վերաձևում, վերախմբագրում են ոչ միայն թուրք, այլև հարևան ժողովուրդների և, առաջին հերթին, հայ ժողովրդի պատմությունը։

Հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի վրա զանգվածային հարձակումը իրոք դարձել է պետական քաղաքականություն։ Այդ ընդհանուր հարձակումն ունի երկու գլխավոր խնդիր՝ ժխտել, որ Արևմտյան Հայաստանն է հայերի բնօրրանը և, որ Թուրքերը հայ ժողովրդի նկատմամբ իրականացրել են ցեղասպանություն։ Թուրքիայի հեռուստատեսության 1982 թ. ապրիլի 14-ի հաղորդման մեջ ասվում է. «... հայոց պատմությունը հաճախ սնվել է լեգենդներով և հեքիաթներով։ Կան բազմաթիվ լեգենդներ, որոնք ավելի շատացան XIX դարի երկրորդ կեսին։ Իրականում հայերի ծագման մասին նույնիսկ արևմտյան աղբյուրներում տեղեկություն և ստույգ փաստ չկա... Ուզում եմ ասել, որ հայերի ծագումը, նրանց ազգային սեր-

ման հարցը խիստ մութ է։ Ոմանք պնդում են, որ նրանք ծագել են Բալկաններից եկողների և նույնիսկ հրեաների և այլոց խառնուրդից։ Հետևաբար ոչ մի ստույգ փաստ չկա նրանց ծագման մասին»։

Ակնհայտորեն շփոթելով հնդեվրոպացիների՝ Բալկաններից տարածված լինելու գիտական վարկածը լեգենդի և առասպելի հետ (ի դեպ այժմ հերքվում են ինչպես այդ, այնպես էլ Մերձբալթիկայի և Հնդկաստանի վարկածները), թուրք «պատմագրությունը» լուծված է համարում հայերի բնիկ չլինելու հարցը։ «Երբ հայերը եկան Անատոլիա (Հայկական բարձրավանդակ), այնտեղ վաղուց ի վեր ապրում և ստեղծագործում էին թուրքերի նախնիները»։

Դրա համար իբրև ապացույց նշվում են «թուրքական ութ հազարամյա մշակույթի հուշարձանները», որոնք իրականում ոչ այլ ինչ են, եթե ոչ փոքրասիական քաղաքակրթությունների թողած հայտնի անունների հետքեր, ինչպես նաև հայկական հուշարձաններ ու կոթողներ։

Հայերը,— շարունակում է թուրքական հեռուստատեսությունը,— իրենց ողջ պատմության ընթացքում ոչ Արևելյան և ոչ էլ Հարավարևմտյան Անատոլիայում չեն ունեցել կայուն և երկարատև պետականություն։ Նրանց հիմնած պետությունները եղել են «ընդամենը փոքր ֆեոդներ (դերբեյություններ)» և որքան էլ նրանց իշխողներին անվանեին արքաներ կամ իշխաններ, այդ թագավորությունները չեն կարողացել իրենց գերիշխանությունն ընդունել տալ նույն շրջանի այլ հայկական դերբեյություններին, նրանք շարունակել են գոյատևել՝ կախման մեջ լինելով խոշոր պետություններից։

Պարսիկների, հռոմեացիների, արաբների ճնշման և, հատկապես, բյուզանդացիների գործադրած զանգվածային գաղթերի հետևանքով հայերը ցրվեցին Արևելյան Եվրոպայից մինչև Հնդկաստան ընկած երկրները։ Իսկ Անատոլիայում մնացած հայերը բնակվեցին աննշան ազգային փոքրամասնությունների ձևով։

«... Օսմանցիները բնակավայրերը չխլեցին հայերի ձեռքից, դրանք արդեն հայերի ձեռքում չէին գտնվում։

... Հայերը Օսմանյան կայսրության մեջ եղել են պետության ամենահավատարիմ ենթակաները ոչ մուսուլման ժողովուրդների մեջ։ Այն աստիճան հավատարիմ, որ լիովին յու-

բացրել են օսմանյան և հետագայում թուրքական կուլտուրան, որ իրենց հետ Անատոլիա բերեցին օսմանցիները»։

Դեռևս Ք. Աթաթուրքը թուրք պատմաբաններին կոչ էր անում. «Թուրքերը Անատոլիայի հնագույն բնիկ ժողովուրդն են։ Անատոլիական բոլոր քաղաքակրթությունների մեջ առկա է նրանց մասնակցությունը։ Անատոլիայի ժամանակակից թուրք ժողովուրդը ոչ միայն մշակույթի, այլև ցեղային առումով է Հին Անատոլիայի ժառանգորդը»։ Հետևելով այս կոչին, թուրք պատմաբանները ճիգ ու ջանք չեն խնայում «բռնի միջոցներով» թրքացնելու Հին Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդներին։ Այնպես որ Փոքր Ասիայում և Հայկական բարձրավանդակում այլ ժողովուրդների համար ուղղակի տեղ չի մնացել, որովհետև այստեղ մշտապես բնակվել են «թուրքերի նախնիները»։

1979 թ. Կ. Պոլսում անգլերեն լույս տեսավ Վանի պատմա-հնագիտական ուսումնասիրության կենտրոնի հիմնադիր, պրոֆեսոր Հ. Էրգենի «Արևելյան Անատոլիան և ուրարտացիները» գիրքը։ Հեղինակը Անատոլիա է համարում նաև Հայկական բարձրավանդակը և այն անվանում Արևելյան Անատոլիա։ Մինչդեռ հայտնի իրողություն է, որ Անատոլիան սկսվում է Եփրատի արևմտյան ափերից։ Հ. Էրգենը Վանի շրջանում եղած ժայռապատկերների կերտողներ է համարում «հին թափառաշրջիկ ու կիսաթափառաշրջիկ թուրքական ցեղերին»։ Ելնելով այդ «հայտնագործությունից», հեղինակը եզրակացնում է. «Հետևաբար պարզ է, որ նույնիսկ նախապատմական ժամանակաշրջանում գոյություն է ունեցել անքակտելի միասնություն Անատոլիայի, արևելաանատոլիական շրջանի և Ադրբեջանի ու Ասիայի տափաստանների մշակութային կենտրոնների միջև»[1]։

Հեղինակի կարծիքով, խուրրիներն ու ուրարտացիները ևս թուրքական ծագում ունեն։ Խուրրիներին թրքացնելուց հետո նա յուրացնում է նաև հայկական թոնրատները, հայտարարելով՝ «Անդրկովկասի, հյուսիսարևելյան Իրանի և Վանի ճարտարապետության գնդաձև տիպը խուրրիական մշակույթի բնորոշ գիծն է։ Այդ տները, որոնք նման են կիսաքոչվոր խուրրիացիների վրաններին, օգտագործվում էին կենցաղում»։ Բնական լույսի համար վերևում մեծ անցք ունեցող վրանները, որոնք այժմ էլ օգտագործում են կիսաքոչվոր թուրքական ցեղերը, հիշեցնում են այդ գնդաձև տները, որ «խոսում է անատոլիական ավանդությունների փոխանցման մասին»։

Ինչ վերաբերվում է ուրարտացիների հետնորդներին, ապա ըստ այդ հեղինակի, նրանց թագավորության անկումից հետո 1000 տարի ուրարտական տարածքները մնացին չբնակեցված, մինչև որ այստեղ եկան նրանց ազգակից թուրքերը՝ «բնակեցնելու պապենական տարածքները»[2]։

1982 թ. Թուրքիայում հրատարակված «Վանի պատմությունը և թուրք-քրդերի վերաբերյալ հետազոտությունները» գրքում կան հետևյալ բնույթի բազմաթիվ էջեր. «Մեզ համար աններելի է, որ երբեմն չմտածելով, իսկ ավելի հաճախ անտեղյակության ու տգիտության պատճառով, մենք այդ հիասքանչ վանդնջական հողերը էրմենիստան ենք անվանում։ Հայերը յուրացնում են այդ հնամենի երկրի անունը, իսկ Արարատ սարը համարում են իրենց խորհրդանիշը... Հակառակ բոլոր պատմական փաստերի, էրմենիստան հասկացությունը, որպես հայերի հայրենիք, հակաթուրքական պրոպագանդայի ձևերից մեկն է»։

«Հայ ժողովուրդը և թուրք ժողովրդին ստրկացնելու փորձերը» գրքում ասվում է, որ Բիհիսթունի ժայռի վրա Դարեհի մ. թ. ա. 521 թվի արձանագրության մեջ հիշատակված «Արմենիա» երկիրը նշանակել է լոկ բարձրաբերձ երկիր և ոչ մի կապ չունի հայերի հետ, որ այդ երկրում բնակվողները խոսել են թուրքերենին մոտ լեզվով, իսկ հայերը հետո են եկել և չեն սերում տեղացի և ոչ մի ժողովրդից՝ «ոչ կովկասյան ժողովուրդներից, ոչ Ուրարտուից և ոչ էլ Նաիրիից»։ Դրա վկայությունն այն է, որ ոչ Հերոդոտոսը և ոչ էլ Քսենոֆոնը հայ անունը չեն հիշատակել։ Իսկ հայերը հետո գալով բնակվել են Արարատ լեռից հյուսիս-արևելք, այսինքն՝ ներկայիս Թուրքիայի տարածքի հետ հայերը ոչ մի առնչություն չունեն։

Թուրք են համարվում նույնիսկ Գրիգոր Լուսավորիչն ու Արշակունիները, պատմության թուրք կեղծարարները անգամ չեն խորշում հայտարարել, որ հայ գրերը ևս ստեղծել են թուրքական ծագում ունեցողները։

«Վանի, Բիթլիսի շրջանների բնակիչները,— գրում է Բ. Օզկայան,— որոնք ծագում էին տեղաբնիկներից կամ Վանի բնակիչներից՝ խառնված սկյութների, մարերի, հեթիթների հետ, քրիստոնեացվեցին և, կախված լինելով Գրիգորյան եկեղեցուց, հարկադրված եղան... սովորել այն լեզուն, որով խոսում էին էջմիածնում։ Նրանց մեջ գտնվեցին նույնիսկ այնպիսիները, որոնք մոռացան իրենց նախնիների լեզուն»։

1982 թ. Անկարայում լույս տեսավ Մ. Ռիզայի «Մեր էությունն ու ընդհանուր լեզուն» գիրքը, որը նույնպես պընդում է, որ թուրքերը Հայաստանում բնակվել են հնագույն ժամանակներից, բայց հետագայում, ենթարկվելով հարևան ժողովուրդների ազդեցությանը, դարձել են քրիստոնյա և կորցրել իրենց ազգային դեմքը։ Որպես օրինակ հիշատակվում են համշենցիները։ Մի այլ հեղինակ՝ Քատրի Ք. Քոպը, գտնում է, որ բացի թուրքերից այս շրջաններում «էթնիկական այլ ընդհանրություններ առհասարակ չեն եղել»։

Թուրքական շովինիզմն ու սնապարծությունը սահմաններ չեն ճանաչում։

1985 թ. հոկտեմբերի 9-ին «Հուրիեթը» գրեց. «Այսօրվա արևմտյան քաղաքակրթությունը... ամեն ինչով պարտական է Վերածննդին, որը սկիզբ է առել 1453 թվականին, մեր կողմից Ստամբուլը գրավելով»։

«Այցելեցեք Էտիրնե և Բուրսա,— գրում է «Թուրքիշ Դեյլի Նյուս» թերթը,— տեսնելու համար այն հիվանդանոցները, որտեղ արդեն XIV դարում հոգեկան հիվանդներին երաժշտության ունկնդրության միջոցով էին բուժում»։ Իրապես Թուրքիայում հոգեբուժությունը հիմնադրել են հայերը և այն էլ XIX դարում[3]։

* * *

Վերջերս Թուրքիայում արգելվեց երկար տարիներ գործածության մեջ գտնված «Ստամբուլ» տուրիստական ուղեցույցը, որովհետև նրանում կարելի էր հանդիպել հետևյալ տողերի՝ «Աբդուլ Համիդի հրահրմամբ Ստամբուլում 1894—1896 թթ. 7000 հայ սպանվեց։ Իսկ 1915 թ. էլ արևելյան նահանգներում մոտ 1 միլիոն հայ կոտորվեց»[4]։

Բուլղարիայի կոմկուսի Կենտկոմի մի շարք անդամներ, պետական, հասարակական գործիչներ, գիտության և մշակույթի աշխատողներ 1985 թ. դեկտեմբերին նամակ հղեցին Թուրքիայի վարչապետ Օզալին, որտեղ գրված էր. «Ինչ իրավունքով է Թուրքիայի վարչապետը խոսում բուլղար մահմեդականների անունից, քանզի նա դեռ հռչակված չէ աշխարհում ապրող մահմեդականների խալիֆ։ Բայց, որովհետև դուք շատ եք սիրում հարցեր բարձրացնել միջազգային տարբեր համաժողովներում, գուցե պատասխանեք՝ ի՞նչ պատահեց Թուրքիայում

բնակվող հազարավոր բուլղարներին։ Ի՞նչ ճակատագիր ունեն հայերը, հույները, քրդերը, արաբները, ասորիները, ալբանացիները և ուրիշները ձեր երկրում։ Ինչպե՞ս է պահպանվում նրանց ազգային գոյատևումը, երբ, ըստ Թուրքական սահմանադրության 66-րդ հոդվածի, թուրքական հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի թուրք է, իսկ համաձայն 1984 թ. ընդունված «Ազգանունների պարտադիր փոփոխման» օրենքի՝ Թուրքիայի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ազգանվան փոխարեն մականուն ընդունել՝ անկախ իր ազգային պատկանելությունից»[5]։

Բայց նախ տեսնենք, թե Թուրքիայում բնակվող փոքրամասնությունների վիճակն ինչպես են ներկայացնում իրենք՝ թուրքերը։

Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան Շ. Էլեքդաղը ամերիկյան ղեկավարներին տեղեկացնում է. «Թուրքիայի հայերը թուրք ժողովրդի բաղկացուցիչ և անբաժան մասն են կազմում, նրանք վայելում են այն բոլոր իրավունքներն ու ազատությունները, ինչ թուրքական քաղաքացիներն են վայելում»։

«Թուրքիայի հայերը իրենց տաղանդը, կարողություններն ու եռանդը օգտագործում են... Թուրքիայի բարգավաճմանը իրենց ակտիվ մասնակցությունը» բերելու համար*[6]։

Մինչդեռ հալածանքներից խուսափելու համար Թուրքիայի հայ ազգաբնակչության $^2/_3$-ը փոխել է իր ազգանունը և ազգությունը։ Այսօր էլ իշխանությունների թողտվությամբ քուրդ բեկերն ու թուրք հարուստները հայ ծառա-ստրուկներ են պահում։

Ներկայումս Թուրքիայում բնակվող հայերի միայն 20 տոկոսն է ի վիճակի գրել և կարդալ մայրենի լեզվով։ Ըստ սահմանադրության միայն թուրքերենն է ոչ միայն պետական, այլև խոսակցական լեզու։ Հայ ազգաբնակչության անձի անվտանգությունը իշխանությունների կողմից չի ապահովված։ Երիտասար-

---

* «Թերջուման» թերթը գրում է. «Այսօր Թուրքիան «Հայկական հարց» կոչված խնդիրը չունի։ Թուրքիայում հայ չկա։ Հայկական ծագումով թուրքեր կան։ Թուրք հայրենակիցները անառարկելիորեն իրավահավասար թուրքեր են»։

Ըստ «Միլիեթի», օրեցօր շատանում է Թուրքիայից հեռացող հայերի թիվը, որի պատճառը կրոնական ու ազգային հետապնդումներն են։

«Հակառակ դաշնագրերի, ՄԱԿ-ի որոշումների... փոքրամասնության իրավունքները շարունակվում են անտեսվել, որ պատճառ է դառնում փոքրամասնությունների ձուլման և ճնշման քաղաքականության գործադրման»։

գությունը համար զինվորական ծառայությունը նշանակում է անհարգարելի տանջանքներ. հայ զինվորներին հալածում են թե՛ սպաները և թե՛ շարքայինները։ Նրանք բռնի թլպատվում են։

Թուրքական Ունիե քաղաքում մի հայի հարսանիքի ժամանակ թուրքերը հրդեհեցին հարսանքավայրը, որի հետևանքով 14 մարդ զոհվեց և 10-ը ծանր վիրավորվեց։ 25 տարի առաջ մի հայ կին եկեղեցուն շենք էր նվիրել։ Այսօր այդ շենքը իշխանությունները բռնագրավել են այն պատճառաբանությամբ, որ «հայը նվիրատվության, այսինքն եկեղեցուն, հիվանդանոցին և հայկական որբանոցին հողակտոր նվիրելու իրավունք չունի»։ Կ. Պոլսի հայկական հիվանդանոցի վերանորոգումն արգելվեց, որովհետև «փոքրամասնությունները իրավունք չունեն իրենց շենքերը վերանորոգելու»։

Շնորհ պատրիարքին արտասահման մեկնելու թույլտվություն են տալիս պայմանով, որ նա երկրի սահմաններից դուրս խարազանի «Հայկական հարցը» բարձրացնողներին և Թուրքիայում ապրող հայերին ներկայացնի որպես «դրախտի բնակիչներ»։

Վաքֆլը հայկական գյուղ է Թուրքիայում։ «Թերջուման» թերթի թղթակիցը լինում է այդ գյուղում և 1985 թ. հունվարի 30-ի համարում պատմում է իր այցի մասին։ Վաքֆլի գյուղացիները, «շնորհիվ օսմանյան Թուրքիայի և հանրապետական Թուրքիայի անզուգական լայնախոհության, հասել են մեր օրերը, պահպանելով իրենց բոլոր հատկությունները»։ Գյուղացիներն իրենց անվանում են «քրիստոնյա թուրքեր»։ Գյուղի դպրոցը թուրքական է, եկեղեցի չունի, գյուղացիների մեծ մասը հայերեն չգիտեն, թուրքացված են նրանց անունները ու ազգանունները։ Թուրքիայի ներքին գավառներում «յան» վերջավորությամբ հայկական ազգանուններ չկան։ Բոլորը բռնությամբ թուրքացվել են։ Այսօր էլ քրիստոնյա մնացած հայերը բռնությամբ մահմեդականացվում են, Արևմտյան Հայաստանում կան ոչ քիչ թվով գյուղեր, որոնց բնակիչները ծագումով հայեր են, պահպանել են հայկական սովորությունները, սակայն հայերեն չգիտեն և մահմեդականացված են[7]։

1985-ին երկու հայ դատապարտվեցին սոսկ այն բանի համար, որ Վարդոյում, Դիարբեքիրում և Կեսարիայում բնակվող Կատուկենտ հայերի երեխաների համար հայոց լեզվի դասընթաց էին կազմակերպել։ Նրանց մեղադրեցին «թուրքորբերին հայացնելու» մեջ։

Երկու անգամ դատի տրվեց Բ. Թուղլաճյանը՝ Վ. Լենինի «Արևելյան ալբոմը» (որում Թուրքիան ներկայացված է որպես բազմազգ պետություն) թարգմանելու և հրատարակելու, ինչպես նաև Պալյան գերդաստանին նվիրված ուսումնասիրության համար, որտեղ «թուրքական տաղանդին հատուկ ճարտարապետական կոթողները հայի են վերագրված»։

Սա է թուրքական «լայնախոհությունը»։

Կոնիայի դատարանը 5 տարվա բանտարկության դատապարտեց թուրք առևտրականին միայն նրա համար, որ զրույցի ժամանակ նա ասել էր. «Օսմանյան կայսրությունը կայսերապաշտ էր։ Հայերը արդար են»։ Նրան մեղադրանք ներկայացվեց «թուրքական հողերի վրա հայկական հանրապետություն ստեղծելու օգտին քարոզչություն տանելու համար»[8]։

1984 թ. նոյեմբերին թուրքական իշխանությունները ձերբակալեցին մի խումբ հայ ոսկերիչների, որոնց ունեցվածքը բռնագրավեցին, իսկ նրանց դատի տվեցին։ Պետական այս կողոպուտ-հալածանքի համար թուրքական պաշտոնական շրջանները և մամուլը առաջ քաշեցին պատրաստի մեղադրանք՝ պնդելով, թե «հայ ոսկերիչները նյութապես օժանդակում էին ԱՍԱԼԱ-ին»։ Բացարձակապես հնարված մեղադրանք, որ օգտագործվեց Կ. Պոլսի հայ համայնքի շուրջը մեկ անգամ ևս թշնամական կրքեր բորբոքելու, հայերի ունեցվածքը թալանելու, նրանց նկատմամբ բռնություններ գործադրելու համար։

Թուրքական պառլամենտում, երբ քննարկվում էին կառավարական պաշտոններ զբաղեցնող բարձրաստիճան անձանց խարդախությունների ու կաշառակերության փաստերը, պետական մինիստր Մ. Էլմազը այս աղմկոտ, հասարակական լայն արձագանք ստացած դեպքերի մեղքը ևս բարդեց հայերի վրա։ Նա հայտարարեց, որ Թուրքիայում մաքսանենգության հեղինակները «ԱՍԱԼԱ-ն ու անջատողականներն են»։ Քրեական խոշոր հանցագործություններին քաղաքական բնույթ տալու միջոցով իր գործընկերներին արդարացնելու, հակահայկական տրամադրություններին մի նոր հզոր լիցք հաղորդելու համար նա պառլամենտին ներկայացրեց հայերի «հակաթուրք» գործունեության միջազգային լայն կապեր ունեցող «դավադրությունները»։ Խոսելով «Ռուսաստանում, Շվեյցարիայում և Սիրիայում գոր-

ծող 12 հայկական կազմակերպությունների» մասին, նա թուրք ժողովրդին հայտնեց՝ 1984 թ. «ապրիլի 30-ին ձերբակալվեց թմրադեղերի առևտրով զբաղվող հայկական ծագում ունեցող մի մաքսանենգ, որի տված տեղեկությունների հիման վրա 102 հոգի հսկողության տակ են վերցվել։ Ստուգվեց, որ 400 հազար զենք և 2,5 միլիոն փամփուշտ գաղտնի երկիր է բերվել՝ անջատողական ձախակողմյան կազմակերպությունների համար։ Քննությունը շարունակելով նաև քաղաքական տեսակետից, հայտնի դարձավ, որ... բազմաթիվ ահաբեկչություններ կատարվել են այդ ցանցի կողմից»։

Եվ ապա, հայերի «նպատակներից մեկն էլ Թուրքիայի տընտեսության քայքայումն է»։ Ինչպես տեղեկացրել են մինիստրին, «հայերը 50 միլիոն դոլար կեղծ դրամ են տպել Թուրքիա ուղարկելու համար և Թուրքիայում 10 հազար դոլար կեղծ դրամ է» իշխանությունների ձեռքն ընկել։

Բայց ահա որոշ ժամանակ անց արտաքին առևտրի մինիստրության խորհրդականի օգնական Տողան Աքը հայտարարեց. էլմազը «իրար խառնելով խնձորն ու տանձը, ահաբեկելու ճիգ է գործադրում։ Հայերը, ոսկերիչները թե այլոք, ԱՍԱԼԱ-ի հետ կապ չունեն, մեր խնդիրը ԱՍԱԼԱ-ի խնդիր չէ։ Ես այդ դեպքերի մեջ եմ։ Կարող եմ լավագույն ձևով արժեքավորել դրանք։ Մինիստրի լուսաբանությունները մեր խնդրի հետ որևէ կապ չունեն...»։ Իսկ ոսկերիչներն ու մյուս ձերբակալվածները շարունակում են մնալ բանտերում[9]։

Երբ Ֆրանսիան, առողջապահական նկատառումներով, հրաժարվեց Թուրքիայից գինի ներմուծել, թուրքական իշխանությունները հայտարարեցին, թե «ինչպես այլ բնագավառներում, այնպես էլ այս խնդրում հայերն են ամեն տեսակ մեքենայության դիմել, որպեսզի թուրքական գինիները մերժվեն»։ Ի դեպ, Թուրքիան դաժան է վարվում ոչ միայն երկրում բնակվող հայերի, այլև բոլոր այն հայերի նկատմամբ, որոնք գտնվում են նրա սահմաններից դուրս։ Այսպես, նրանք ավերածություններ կատարեցին Կիպրոսի հայկական շրջաններում, 1984 թ. հուլիսին թուրքական ջոկատը ներխուժեց Սիրիա և բուլդոզերներով ավերեց էսկուրեն հայաբնակ գյուղը։

Համաշխարհային եկեղեցական խորհուրդը Թուրքիայում քրիստոնյաների վիճակը բնութագրում է հետևյալ կերպ. նրանք

մշտապես ենթարկվում են բռնության։ Եթե անարդարություններից տուժող քրիստոնյաները դիմում են դատարան կամ ոստիկանություն, տուժողն է պատժի ենթարկվում։ Դատարանն ու ոստիկանությունը պայմանավորվել են, որպեսզի բողոքները հետ տրվեն առանց քննության։ Քրիստոնյաների նկատմամբ հանցագործություն կատարած անձանց, դատելուց որոշ ժամանակ անց, ազատ են արձակում, եթե նույնիսկ հանցագործը մի քանի տարվա բանտարկության է դատապարտված։ Այլ երկրներ փախչելու դեպքում ևս քրիստոնյան փրկված չէ, քանի դեռ նրա ընտանիքը Թուրքիայում է[10]։

Իշխանությունները հայերին մերժում են եկեղեցապատկան հողերում նոր շինությունների կառուցման հարցում, չնայած այդ հողերի վարձը կանոնավոր կերպով գանձվում է։ Կրոնական շինությունների, դպրոցների վերականգնման ու վերանորոգման կամ նույնիսկ պահպանման համար թույլտվություն տրվում է մեծ դժվարությամբ և ուշացումով։

Ստամբուլի Գալիսօղլուի շրջանում գտնվող Ոսկեղջյուրի վրա նոր կամուրջի շինարարության պատճառով հայկական երկու եկեղեցիներ ու ապաստարաններ քանդվեցին։ Այդ և մյուս շենքերի վաճառքից ստացված դումարը բռնագրավվեց նոր կամուրջի շինարարության վարչության կողմից։

Փոխվեց կրոնական գործերի վարչության անունը, որի հետևանքով այն զրկվեց սեփականության հարցերը լուծելու իրավունքից։ «Քաղաքացիական իշխանություններն այժմ պնդում են, որ եկեղեցիներն իրավունք չունեն սեփական գույք ունենալու կամ էլ այն գնելու»[11]։

Ստամբուլում գործում էր 27 հայկական դպրոց։ Լուսավորության նախարարության որոշմամբ այդ դպրոցներում որպես տընօրենի տեղակալ թուրքեր են նշանակված։ Փաստորեն նրանք են ղեկավարում այդ կրթօջախները և խնդիր ունեն՝ որքան հնարավոր է շուտ «թուրքացնել» դրանք։ Գործող հրահանգները խոչընդոտում են հայ ծնողներին՝ իրենց երեխաներին ուղարկելու հայկական դպրոցներ։ Օրինակ, հայ երեխաներին արգելում են ընդունվել հայկական դպրոց, եթե նրանք չեն բնակվում այդ դպրոցի շրջակայքում կամ եթե թուրքական անուն են կրում։ Իշխանությունները հարկադրում են նրանց փոխել իրենց անունները։ Թուրքիայում այսօր էլ փակվում կամ թուրքացվում

են հայկական դպրոցները։ Վերջին քսան տարում փակվել է 10 հայկական դպրոց*։

Հանդես գալով ֆրանսիական հեռուստատեսությամբ, մի խումբ քուրդ ժուռնալիստներ և հասարակական գործիչներ պատմեցին թուրքական իշխանությունների հակաժողովրդական դաժան քաղաքականության մասին։ Նրանք մասնավորապես անդրադարձան փոքրամասնության նկատմամբ կառավարության անհանդուրժողական վերաբերմունքին, քրդերի, ասորիների և հայերի ծանր վիճակին[12]։

Հայը Թուրքիայում ենթարկվում է «ամեն կարգի մեծ ու փոքր հալածանքների»։ «Գյուղերում և ավաններում դրությունն ավելի ծանր է, քան Ստամբուլում»։ Թուրքիայում բնակվող հայերը «մտովին շղթայված են այդ ամենահաս դիկտատուրայով, որի ծանրության տակ տարիներ շարունակ ապրել են։ Մինչև արտասահման աշխատանքի մեկնելը նրանք ցեղասպանության մասին ոչինչ չէին լսել։ Գրաքննությունն ու ինքնագրաքննությունը նրանց ընտանիքներում այնպիսին էր, որ նրանք ոչինչ չգիտեին 1915 թ. ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Նրանք պատմում են, թե ինչպես էր թուրքական ոստիկանությունը խոշտանգում հայերին, թե ինչպես նրանց ընկերները, որոնք քաղաքականությամբ երբեք չեն զբաղվել, ձերբակալվում էին ԱՍԱԼԱ-ին պատկանելու մեղադրանքով, որի մասին հազիվ թե ինչ-որ բան էին լսել»[13]։

Թուրքական պաշտոնական շրջանները երկրում բնակվող հայերին որպես պատանդ են օգտագործում։

* * *

1985 թ. հունվարի 28-ին թուրքական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ մի մանկական երգչախումբ։ Թե ինչ էր իրենից ներկայացնում այդ երգչախմբի երգացանկը, բերենք միայն մի օրինակ.

«Կարսը իմն է,
Էրզրումը իմն է, Երզնկան իմն է,
Թուրք եմ,
Օրանի ինձ...»

* Ըստ պատրիարքարանի հայտարարության, 1987 թ. կ. Պոլսում մնացել է միայն ինը հայկական դպրոց։

Այս առթիվ սփյուռքահայ առաջադեմ գրող Գ. Ադդարյանը գրեց. «... մաղձ է, թույն է, ինքնահամոզման ճիգ է և ուրիշի ինչքը սեփականացնելու հոգեբանական փորձ։ Երեխաների շրթերից բարձրացող այդ երգը ցեղամոլության հաստատում է, բռնագրավման «նվիրագործում», նոր սերնդին, սերունդներին փոխանցված ու միաժամանակ կեղծ սնապարծության հետևում թաքնված վախ, գողի վախ՝ գողացածը իր տիրոջը վերադարձնելու հավանականության նկատմամբ...

Երեխան, և ընդհանրապես թուրքը, իր սեփականի, անհատականի սեփականատիրական զգացում պիտի ունենա բռնությամբ, արյունով, ջարդով յուրացրած հայկական հողերի նկատմամբ... այդպես են «լվանում» մանուկների ուղեղները, ինչպես պատմության նենգափոխումներն են վերածվում երգի... Թուրք երեխաների շրթունքներին։ Թալեաթի հուշարձանը Պոլսի հրապարակներից մեկում կանգնեցնելուց հետո (այն) փոխադրում են նաև երեխաների հոգիները...»[14]։

Նույն նպատակն են հետապնդում աղավաղումների միջոցով հայկական տեղանունների «թուրքացման» ճիգերը։ Պատմական Հայաստանի տեղանունների 90 տոկոսը փոխվել է։ Օրինակ Անին վերանվանվել է Անը, որ թուրքերեն նշանակում է հուշ, հիշատակ, Աղթամարը՝ Ակդամար՝ սպիտակ երակ, Կարսի Առաքելոց վանքը այցելուներին ներկայացվում է որպես սելջուկյան դամբարան։

Թուրքական են հռչակված «Սարի սեյրան», «Խնկի ծառ», «Աման թելո», «Ջեմ ու չեմ» և բազմաթիվ այլ հայկական երգեր ու պարեր։

Թուրքիան շարունակում է գենոցիդի իր քաղաքականությունը, ավերելով հայկական հուշարձանները։

Ռեյտեր գործակալության թղթակից Պ. Բոլդինգը 1985 թ. օգոստոսի 25-ին Անիի ավերակները դիտելուց հետո գրեց. «Հայկական նախկին թագավորանիստ այս ամայացած քաղաքի՝ Անիի կարմիր պատերն ու աշտարակները հիշեցնում են ժողովրդի արյունաներկ անցյալը... Թուրքիան ոչինչ չի կատարում Անիի հնությունները պաշտպանելու համար։ Նման անտարբերությունը արդյունք է նույն Թուրքիայի կողմից Հայկական հարցի անտեսման»[15]։

«Ջումհուրիեթի» թղթակից Ե. Փեքշենը 1985-ին շրջագայել

է Արևմտյան Հայաստանում, և իր տպավորությունները հոդվածաշարով տպագրել է այդ թերթում։

«Վանա լճի շուրջը,— գրում է նա,— ծառ չգտնելը մարդու մեջ տարօրինակ զգացումներ է առաջացնում...»։ Աղթամարում ենք. «Անմիջապես, երբ ոտք ենք դնում կղզու վրա, դարձյալ զբոսաշրջիկային մի ցուցատախտակ է դիմավորում մեզ։ Աղթամարի եկեղեցու մասին այն տալիս է հետևյալ ծանոթությունը. «Եկեղեցին կառուցվել է 901—951 թթ.։ Եկեղեցու պատերը քանդակներով, իսկ ներքին պատերը որմնանկարներով են զարդարված»։

Այս ձևով ոչ ոք չի իմանում հայ արվեստի գլուխգործոցներից մեկի՝ Աղթամարի եկեղեցու հայկական գործ լինելը»[16]։

«Անկարայի համալսարանի մարմնամարզության և բժշկական բաժանմունքները,— գրում է «Թերջումանը»,— կազմակերպեցին արշավանք դեպի Արարատի գագաթը... խումբը... թուրքական մի դրոշակ և Ղուրան է թաղել Արարատի գագաթին՝ 75 սմ խորությամբ։ Խմբի ղեկավար, պրոֆեսոր Տողրուն այդ մասին ասել է. «Մեր դրոշակը և Ղուրանը հավիտյան պիտի մնան գագաթին, ամբողջ աշխարհը ընդ՞ միշտ պիտի իմանա, որ Արարատը թուրքական լեռ է»։ Ի դեպ ևս փոխվել է Արարատի անունը՝ թուրքերը բիբլիական սարին անվանում են Աղր, որովհետև «... լեռը ավելի շատ մահմեդականությանն է պատկանում, քան քրիստոնեությանը... Նոյի ջրհեղեղը ոչ թե աստվածաշնչային է, այլ Ղուրանի մեջ է գրված»[17]։

«Ջումհուրիեթը» 1985 թ. փետրվարի 10-ին գրեց. «Նախկին նախարար Ահմեդ Այդն Բոլաֆը մտավորականների կենտրոնի կազմակերպած գիտական սեմինարի ժամանակ ասաց, որ թուրք ազգին «թուրք» անունը աստծուց տրված լինելու մասին գիտական փաստեր գոյություն ունեն»։ Եվ այսպես, մինչև այժմ միայն հրեաներն էին իրենց համարում «աստծու ընտրյալ ժողովուրդ», իսկ այժմ նրանց միացան թուրքերը։

Նման փաստերի թվարկումը կարելի է երկար շարունակել, որոնք անառարկելիորեն վկայում են, որ Թուրքիայի ժամանակակից տերերը, հավատարիմ սուլթանական և երիտթուրքական ավանդներին, այսօր էլ շովինիզմի և ռասիզմի մարդատյաց գաղափարախոսությունների կրողներ են։

* * *

Թուրքական և իմպերիալիստական պրոպագանդան Մեծ եղեռնը ժխտելու համար ամեն կերպ աշխատում է ապացուցել, որ մինչև 1915 թ. Թուրքիայում ապրող հայերի թիվը 1,5 միլիոնի չէր հասնում։

Թուրքական հեռուստահաղորդումներից մեկում ասվեց, որ եթե օսմանցիները նույնիսկ ցանկանային 1,5 միլիոն հայ սպանել, հնարավոր չէր, քանի որ Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թիվը չէր հասնում 1,5 միլիոնի։

Լոուրին գրում է. «Կայսրության հայ ազգաբնակչության մասին թուրքական կառավարության հավաքած տվյալները դեմոգրաֆիական տեսակետից ճիշտ և հետևողական էին։ Այդ տվյալների կազմումը չի պատճառաբանված քաղաքական և պրոպագանդիստական նպատակներով... 1912 թ. հայկական վեց վիլայեթներում ապրում էր միայն 870 հազար հայ։ Հայերը կազմում էին այս վիլայեթների ազգաբնակչության կեսից պակաս, հետևաբար պարզ է, որ հենվելով այս թվային տվյալների վրա անհնար էր անկախ պետություն կառուցել»[18]։

Իսկ ո՞րն է իրականությունը։ Փաստն այն է, որ հայկական վիլայեթներում ոչ մի ժամանակ ստույգ մարդահամար չի եղել, և թուրքական իշխանությունները այդ վիլայեթներում ազգաբնակչության մասին տվյալներ կազմելիս ելնում են 1880 թ. Աբիդին փաշայի հորինած «վիճակագրությունից»։

1880 թ. հունիսի 11-ին Բեռլինի կոնգրեսի մասնակից երկրները օսմանյան կառավարությանը նոտա ներկայացրին։ Տերությունները սուլթանից պահանջում էին անմիջապես իրականացնել 61-րդ հոդվածը[19]։ Ստանալով վեց պետությունների նոտան, սուլթանական կառավարությունը որոշում է հորինել մի պատասխան, որ առժամանակ քողարկեր իրերի իսկական վիճակը։ Պատասխանի հեղինակը արտաքին գործերի մինիստր Աբիդին փաշան էր։ Տերություններին նրա տված բազմաթիվ ստահոդ հավաստիացումների մեջ կան նաև հետևյալ տողերը. «... Ես պետք է վճռականապես հաստատեմ, որ Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի հայ բնակչության պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել. հայերի թիվը ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17 տոկոսի, մյուս ոչ մահմեդական համայնքներինը՝ 4

տոկոսի, իսկ մահմեդականներինը՝ 79 տոկոսի»[20]: Այս թվերին կարելի է հանդիպել թուրքական բոլոր պատմաբանների, Արևմուտքի շատ թուրքագետների գրքերում՝ որպես հավաստի ապացույց Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմի մասին։ Իրականում ոչ մի ցուցակագրում էլ չի եղել, և այդ թվերը հորինել են տեղական վարչությունները։ 1880-ական թվականներին արևելյան նահանգներում «ճշգրիտ ցուցակագրում» կատարելը գործնականում անհնար էր։

Համոզվելով, որ օսմանյան կառավարությունը խուսանավում է, վեց տերությունները երկրորդ նոտան են տալիս, որի մեջ ասված է. «Այն արտահայտությունները, որոնցով Բ. Դուռը իրեն իրավունք է համարել արտահայտվել հայերով բնակեցված նահանգներում կատարվող ոճրագործությունների մասին, ապացուցում են, որ նա չի ընդունում անարխիայի այն աստիճանը, որ տիրապետում է այդ նահանգներում և իրերի դրության այն լրջությունը, որի շարունակությունը, ամենայն հավանականությամբ, կարող է հանգեցնել այդ լայնածավալ շրջանների ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացման»։

Ապա, խնդիր դնելով հայերին վարչականորեն անջատել քոչվոր քրդերից, տերությունները գրում են. «Ճիշտ է, որ Բ. Դուռը չանում է նսեմացնել այդ հոդվածի (61-րդ) նշանակությունը, վկայակոչելով ամբողջ ժողովրդի թվի համեմատությամբ ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա մյուս բնակչության քանակը։ Նոտայում ներկայացված աղյուսակը այն աստիճան տարբերվում է բոլոր մյուսներից, որ տերությունները չեն կարող այն ընդունել որպես բացարձակ ճշմարտություն»[21]։

Ռուսական արքունական խորհրդական, հայատյաց Գրյազնովը հարկադրված էր խոստովանել, որ հայկական վիլայեթներում ազգաբնակչության հաշվառում կատարել՝ «ինչպես տեղում դիտումներ կատարելը, այնպես էլ դրանց արդյունքների մասին Եվրոպա հաղորդելը, անկարելիության չափ դժվար է... Ավելի կանոնավոր աղբյուրը հայերից ստացված տեղեկություններն են...»[22]։

Եվ իսկապես, նույնիսկ մեր օրերում Թուրքիայում իսկական մարդահամար չի անցկացվում, ուր մնաց անցյալ դարի 50—80-ական թվականներին Օսմանյան կայսրությունում, որի կազմի մեջ մտնող ժողովուրդների զգալի մասը (այդ թվում քրդերի ճնշող մեծամասնությունը, մեծ թվով արաբական ցեղեր ու թուրքեր) քոչվոր կյանք էին վարում, թափառում՝ սկսած արաբական անապատներից մինչև Աֆղանստան։

Կ. Պոլսի պատրիարքարանի հավաքած ոչ լրիվ տվյալներով, 1878 թ. ամբողջ Օսմանյան կայսրությունում ապրում էր 2 մլն. 660 հազար հայ, որից 1 մլն. 630 հազարը՝ Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում։ Սովետահայ պատմաբանների հետազոտություններով այդ նույն ժամանակ կայսրությունում հայերի թիվը կազմում էր շուրջ 3 միլիոն, որից Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում՝ 1 միլիոն 630 հազար մարդ[23]։ Սակայն սուլթանական կառավարության վարած հայահալած քաղաքականության հետևանքով հետագայում հայերի թիվը ամենուրեք նվազեց։ 1914 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր շուրջ 2,5 միլիոն հայ, որից 1 միլիոն 400 հազարը՝ Արևմտյան Հայաստանում[24]: Այդուհանդերձ, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1912 թ.) հայերն Արևմտյան Հայաստանում կազմում էին ազգաբնակչության հարաբերական մեծամասնությունը՝ 38,9 տոկոսը, մինչդեռ թուրքերը՝ 25,4 տոկոսը, քրդերը՝ 26,0 տոկոսը, հույները, ասորիները, չերքեզները, չեչենները, պարսիկները և ուրիշներ՝ 9,7 տոկոսը[25]։

Այսինքն Արևմտյան Հայաստանում գերակշռողը հայերն էին, ապա՝ քրդերը, իսկ թուրքերը, մանավանդ XIX դարի վերջին, սակավաթիվ էին։ Այստեղ նրանք հիմնականում ներկայացված էին պետական ծառայողներով, զորքով ու ոստիկաններով։ Կարինի ռուսական հյուպատոսը վկայում էր, որ Բայազետի ամբողջ սանջակում, բացի քաղաքից, թուրք բնակչություն գրեթե չկար։ Անգլիական հյուպատոս Լեյկոն Բիթլիսի մասին գրում է. «Երկրի տերերը՝ թուրքերը, շատ փոքրաթիվ են, ամբողջ բնակչության հազիվ 3—4 տոկոսը կազմեն»։ Բոլոր տվյալները հաստատում են, որ XIX դարի կեսերին Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ թուրքերի թիվը 15 տոկոսից չէր անցնում։

Հանրահայտ է, որ XIX դարի վերջին աշխարհում ապրում էր 5 միլիոն հայ և 6 միլիոն օսմանցի թուրք։ 1913 թ. թուրքերի թիվը կրկնապատկվեց, իսկ հայերի թիվը այդ ընթացքում ոչ միայն չաճեց, այլև կրճատվեց 1 միլիոնով։ Բայց եթե չլիներ օսմանյան բարբարոսությունը, Թուրքիայում հայերի թիվը կհասներ առնվազն 5,5—6 միլիոնի։ Նշենք նաև, որ եթե դարավերջին

Թուրքերի թիվը հայերից շատ էր միայն 1 միլիոնով, ապա այժմ 6,5 անգամ։ Երկու ժողովուրդների թվային հարաբերակցության նման հրեշավոր փոփոխությունը կարմիր և սպիտակ ջարդերի հետևանք էր։ Տվյալ դեպքում կարմիր ջարդի կազմակերպիչները օսմանյան և երիտթուրքական կառավարություններն էին, իսկ սպիտակ ջարդը առաջինի ուղղակի շարունակությունն է։

Թուրքական իշխող խավերն անընդհատ պնդում են, թե Թուրքիան ազգային կազմով միատարր է, որ Թուրքիայում բնակվում են սոսկ միայն թուրքեր, որ թուրքերն այդ աշխարհամասի բնիկներն են և այնտեղ բնակվում են «էն գլխից», անհիշելի ժամանակներից։ Մինչդեռ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Ն. Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի կողմից 1986 թ. Մոսկվայում հրատարակված Ս. Ի. Բրուկի «Նասելենիե միրա. էտնոգրաֆիչեսկի սպրավոչնիկ» գրքի 431-րդ էջում կարդում ենք. «Գոյություն ունեցող կարծիքը Թուրքիայի մասին, որպես ազգային առումով համեմատաբար միատարր երկրի, սխալ է։ Այս պատկերացումը կապված է այն բանի հետ, որ պաշտոնական աղբյուրներում, այդ թվում և մարդահամարի նյութերում, ազգային փոքրամասնությունները չեն առանձնացվում..., իշխող շրջանների ասիմիլացման բազմադարյան քաղաքականության պայմաններում, ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների թիվը, որպես կանոն, զգալիորեն փոքր է համապատասխան փոքրամասնության թվից»։

Թուրքերը ձևավորվել են հիմնականում թուրքական (օղուզական) քոչվոր ցեղերից, որոնք Անատոլիայում սկսել են բնակություն հաստատել XI—XIII դարերում, գալով Միջին Ասիայից և Իրանից։ Թուրքերից մշակութային մի քանի գծերով առանձնանում են ղզլբաշները, որոնք մահմեդականության շիիթական թևին են պատկանում և, այսպես կոչված, մուհաջիրները՝ Հունաստանից և Բալկանյան մյուս երկրներից գաղթվածները։ Երկրի մյուս թուրքալեզու ժողովուրդներից ամենախոշորը թուրքմեններն են, որոնք Անդրկասպիայից XIII—XIV դարերում Թուրքիա թափանցած քոչվորների ժառանգներն են... «Նրանք բոլորը թուրքերի հետ խառն են ապրում ու նրանց կողմից ձուլվում են»[26]։

Թուրքիայում ապրող թաթարները այստեղ վերաբնակվեցին XVIII դարի վերջին։ Թաթարների մեծ մասը ձուլվեց թուրքերին,

թեև նրանց ոչ մեծ խմբեր պահպանվեցին Թուրքիայի հարավարևելյան ծայրամասում, Վանի ու Հաքյարի շրջաններում։

Քրդերը մեծ զանգվածներով բնակվում են Թուրքիայի արևելյան, հյուսիսարևելյան և հարավարևելյան մասերում։ Նրանք մեծամասնություն են կազմում Հաքյարի, Վանի, Բիթլիսի, Սղերդի, Մարդինի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Բինգյոլի, Մուշի, Աղրի, Թանգլերի վիլայեթներում և հիմնականում գյուղաբնակներ են։ Քրդերը բնակություն են հաստատել նաև երկրի կենտրոնական մասում, Սվազից արևելք, Ամասիայից հարավ, Անկարայի մոտակայքում։ «Այս թուրքական շրջաններում քրդերը բռնի վերաբնակեցվել են Քրդստանից XX դարի առաջին քառորդին՝ թուրքերի հետ արագ ձուլման նպատակով»[27]։

1. Հուսաբեր, 14 փետրվարի 1985 թ.։
2. Նոր սերունդ, 1985 թ. մարտ։
3. Հուսաբեր, 23 մայիսի 1985 թ.։
4. Լրաբեր, 5 փետրվարի 1985 թ.։
5. Երևան, 4 դեկտեմբերի 1985 թ.։
6. Հուսաբեր, 16 մարտի 1985 թ.։
7. Զարթոնք, 17 ապրիլի 1985 թ.։
8. Զարթոնք, 24 հունիսի 1985 թ.։
9. Արև, 16 հունվարի 1985 թ.։
10. Լրաբեր, 4 մայիսի 1985 թ.։
11. Նույն տեղը։
12. Հայրենիք, 2 փետրվարի 1985 թ.։
13. Լրաբեր, 4 մայիսի 1985 թ.։
14. Լրաբեր, 2 մարտի 1985 թ.։
15. Ալիք, 18 օգոստոսի 1985 թ.։
16. Ջումհուրիեթ, 8—9 հուլիսի 1985 թ.։
17. Արարատ, 13 փետրվարի 1985 թ.։
18. Արմենիեն դեպորտեր, 7—14 հունիսի 1984 թ.։
19. Ս. Մարկոսյան, Արևմտահայերի վիճակը XIX դարի վերջերին Ե., 1968, էջ 155—156։
20. Նույն տեղը, էջ 157։
21. Նույն տեղը, էջ 158—160։
22. Նույն տեղը, էջ 317—318։
23. Ա. Համբարյան, Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, («Բանբեր Երևանի համալսարանի»), 1969, № 2, էջ 101, 113։
24. Նույն տեղը, էջ 111։
25. Сборник дипломатических документов, реформы в Армении, Петроград, 1915, с. 289.
26. С. Брук, Население мира, М, 1986, с. 432.
27. Նույն տեղը, էջ 433։

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում Հայկական հարցը ընդմիշտ օրակարգից հանելու Թուրքական կառավարության ջանքերը դեռևս էական արդյունք չեն տալիս։ Դեռ ավելին, վերջին տարիներին ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի շատ երկրներում նկատելիորեն ուժեղացել է հետաքրքրությունը հայ ժողովրդի նոր շրջանի պատմության, մասնավորապես Մեծ եղեռնի նախապատրաստման և իրականացման ժամանակաշրջանի նկատմամբ։ Լույս են տեսնում բազմաթիվ գրքեր, արխիվային նյութերի ժողովածուներ, առանձնահատուկ ուշադրություն են դրսևորում արտասահմանյան մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցները։

Արևմուտքում տիրապետողն այն կարծիքն է, որ հետաքրքրության նման աճը արդյունք է 1970-ական թվականների սկզբներին այսպես կոչված «հայկական ահաբեկչության նոր բռնկման»։

Իհարկե, Թուրքիայի դիվանագիտական աշխատողների նկատմամբ ահաբեկչական գործողությունները որոշակի դեր խաղացել են այդօրինակ հիմնավորումների համար։ Բայց այն բացատրել միայն ահաբեկչությամբ, սխալ է, որովհետև այդ դեպքում հարց է առաջանում. իսկ ինչի՞ հետևանք է ինքը՝ «հայկական ահաբեկչության այդ նոր բռնկումը»։

Եվ իսկապես, 20-ական թվականներից հետո ընկած ավելի քան 50 տարիների ընթացքում արտասահմանյան հայերը ահաբեկչական որևէ գործողություն չեն կատարել Թուրքերի նկատմամբ, իսկ ահա 1973 թ. սկսվեց նման գործողությունների մի ամբողջ շարք։

Այս երևույթի պատճառների բացահայտումն ունի սկզբունքային կարևոր նշանակություն, քանի որ դրանք ընդգրկում են ոչ միայն Մեծ եղեռնի նախապատրաստման ու իրականացման, այլև մեր օրերում դրանց նկատմամբ վերաբերմունքի ու մոտեցումների առանցքային հարցերը։ Գործնականում այդ պատճառների նկատմամբ վերաբերմունքը դարձել է օբյեկտիվ և գիտական մոտեցում ունեցողներին պատմության կեղծարարներից անջատող գիծը։ Ուրեմն որո՞նք են «հայկական ահաբեկչության» այդ նոր բռնկման պատճառները։

Ընթերցողի ուշադրությանն առաջարկվող մեջբերումները

պարզ պատկերացում են տալիս, թե միջազգային ասպարեզում, մասնավորապես մամուլում, ինչպիսի ակտիվությամբ են քննարկվում ինչպես «հայկական ահաբեկչության», այնպես էլ հայկական ցեղասպանության և, ամբողջությամբ վերցրած, Հայկական հարցի ամենատարբեր հայեցակետերը։ Քանի որ մեջբերումները հստակ են արտահայտում դրանց հեղինակների տեսակետները, ապա վերանում է դրանք մեկնաբանելու անհրաժեշտությունը։

«Հայկական խնդիրը,— գրում է ֆրանսիացի հրապարակախոս գիտնական Պ. Ռիշարդոն,— միայն ցեղասպանության ընդունումից և կոտորածների փոխհատուցումից չէ, որ կազմված է։ Հիմնականում այն հողային իրավունքների խնդիր է, այսինքն՝ հայ ժողովրդին Հայաստանը (Թուրքիայի կողմից գրավված Հայաստանը) վերադարձնելու իրավունքն է...

Այդ հողային իրավունքները հայ ժողովրդի համար պատմական իրավունքներ են, քանի որ հայ ժողովուրդը մշտապես ապրել է այդ հողերի վրա։ Նա երեք հազար տարի առաջ որպես ժողովուրդ և որպես ազգ կազմավորվել է այդ հողերի վրա։ Նա իր պատմությունը ստեղծել է այդ հողերի վրա։ Նա հաղթանակներ ու պարտություններ է ճաշակել այդ հողերի վրա։ Հայկական հաբուստ մշակույթը, բոլոր տեսանկյուններից, ճանաչված բոլորի կողմից,- ով այն ուսումնասիրել է, նույնպես ստեղծվել է այստեղ։ Մի խոսքով, այսօր Թուրքիայի կողմից գրավված աշխարհի այդ շրջանը, որ միշտ հայտնի է եղել Հայկական լեռնաշխարհ անունով, համարվում է հայ ժողովրդի բնական հայրենիքը, մոտ 2 միլիոն հայերի, որոնք կազմում են հայկական «սփյուռքը» և նրանց, ովքեր բնակվելով Սովետական Հայաստանում, ծագումով Արևմտյան Հայաստանից են»[1]։

Կանադացի լրագրող Ե. Մաուերը «Դը Գազետ» օրաթերթի 1985 թ. ապրիլի 22-ի համարում գրում է. «Շատերը, որոնք լավագույնը համարում են անցյալը մոռացության հանձնելը, հարց են տալիս, թե ինչու այդ մասին (անցյալի ցեղասպանությունների) այսքան խոսում ենք։ Պատասխանը պետք է փնտրել պատմությունից մեր սովորած դասերի մեջ։ Երբ կորցնում ես արժանապատվությունը ոտնակոխելու զգացողությունը, ամեն ինչ կարող է կրկնվել։ Եվ հաջորդ անգամ զոհը կլինի այն խումբը, որին պատկանում ես և դու... Բոլորս մի ինչ-որ ձևով պետք

է մեզ պատասխանատու զգանք։ Վերջ ի վերջո մենք մեր եղբայրների պահապաններն ենք»։

«Թայմսը» 1977 թ. մայիսի 30-ին գրեց. «Հավանաբար որոշ հայեր կորցրել են հավատը, որ աշխարհի շատ պետությունների կառավարություններ պատրաստ կամ ի վիճակի են լսելու (իրենց) խաղաղասիրական կոչերը»։

Արևմտագերմանական «Դի Ցայտունգ» շաբաթաթերթը 1984 թ. դեկտեմբերի 7-ի համարում գրել է. «Տասը տարուց ավելի աշխարհի բոլոր մասերում թուրքական դիվանագետներին հետապնդում են հայկական ահաբեկչական խմբերը։ Դրդապատճառը միշտ նույնն է՝ թող Թուրքիան ընդունի, որ 1915 թ. հարյուր հազարավոր հայերի է սպանել (պետական) հրամանով»։

Պրոպագանդայի իմպերիալիստական միջոցները միտումնավոր ձևով հայկական ցեղասպանությունն ու հայկական ահաբեկչությունը նույն հարթության վրա են դնում և, մերժելով ահաբեկչությունը, ժխտում են նաև ցեղասպանությունը որպես պատմական իրողություն ու նրա դերը այդ ահաբեկչության երևան գալու գործում։

Լիբանանում հրատարակվող «Դեյլի Սթար» օրաթերթի 1984 թվականի դեկտեմբերի 5-ի համարում տպագրված մի մեկնաբանության մեջ գրված է. «Ուզում են Հայաստա՞նն ազատագրել։ Շատ լավ, թող ազատագրեն, ի՞նչ են անելու։ Կարո՞ղ եք երևակայել, որ մարսելաբնակ մի դեղագործ խանութ բացի Էրզրումում կամ Վանում։ Քանի՞ հարյուր հոգի պիտի վերադառնա Ֆրեզնոյից կամ Կալիֆոռնիայից։

Լավագույն դեպքում նրանք պետք է փոքրամասնություն լինեն թուրքերի ու քրդերի կողմից բնակեցված ծովում։ Արդյոք երազածը ա՞յդ Հայաստանն է, որ ուզում են»։

Ժամանակակից «հայկական տեռորիզմը» Թուրքիայի տիրապետող վերնախավի պանթուրքիստական քաղաքականության հետևանք է, նրա ապօրինի զավակը։ Թուրքական պաշտոնական շրջանները, փոխանակ ընդունելու հայկական ցեղասպանության փաստը կամ գոնե լռելու, իրենց հովանավորության տակ են վերցնում այդ ցեղասպանության կազմակերպիչներին ու նրանց ռասիստական քաղաքականությունը։ Իսկ նման վարքագիծը նշանակում է, որ թուրքական կառավարությունը կիսում է ցեղասպանության պատասխանատվությունը։ Նա իր այդ մեղսակցությամբ, հայ էթնոսի գոյության ժխտման քաղաքականու-

թյամբ և դրա ճանապարհին իր քաղաքական ու բարոյական անազնիվ ու այլանդակ վարքագծով ծնեց հայկական տեռորիզմը։ Եվ որքան արդահատելի է այդ վարքագիծը, նույնքան էլ անընդունելի «հայկական ահաբեկչությունը»։

Ֆրանսիական «Լը Մոնդը» գրում է. «Թուրքիան է այս ահաբեկչությունների պատասխանատուն, որը ժխտելով ցեղասպանությունը, հայ երիտասարդությանը մղում է վրեժխնդրության»։

Հայկական եղեռնի վերաբերյալ եվրոպական պառլամենտին մի խումբ մասնագետների կողմից ներկայացրած տեղեկանքում ասված է. «Մերժելով 1915 թ. հայկական ցեղասպանությունը, թուրքական կառավարությունը հայերին զրկում է իրենց պատմությունից, և այս վիճակն էլ առիթ է տալիս բռնության դեպքերի և ահաբեկչության»[2]։

«Հերալդ տրիբյուն» լրագրերը 1985 թ. մայիսի 3-ին տպագրեց Ռոլանդ Միլլերի «Հիշել այն ինչ մոռանում է աշխարհը» հոդվածը։ Այն հարցին, թե 70 տարի առաջ կատարված ցեղասպանությունը ինչու է մնում հայերի հիշողության մեջ, հոդվածագիրը պատասխանում է.

«Առաջին՝ ժամանակը մի շարք վերքեր չի բուժում։ Պատճառաբանելով, թե հայերին հեռացնում է պատերազմական գոտիներից և ռուսական բանակի ներխուժած վայրերից, թուրքական կառավարությունը նրանց աքսորեց սիրիական անապատներն ու նրա մերձակա շրջանները։ Տղամարդիկ և անչափահաս տղաները սկզբից ևեթ դուրս բերվեցին աքսորականների քարավաններից և գնդակահարվեցին կամ անգթորեն սպանվեցին։

Կանայք ու երեխաները ոտքով շարունակեցին ճամփան, երբեմն ամիսներով։ Ճանապարհին նրանց կողոպտում էին, բռնաբարում և կոտորում։ Երեխաներին գողանում էին։ Մայրերը կանգնած էին ողբերգական երկընտրանքի առաջ՝ երեխաներին հանձնել քրդերին ու թուրքերին, այն հույսով, որ թերևս նրանք ողջ մնան։ Կամ, որն ավելի ցավալի էր, շատ փոքրերին և ծերերին թողնում էին ճանապարհին, որպեսզի մարմնով ու հոգով ավելի ուժեղները կարողանան շարունակել ճամփան... Արդյոք մենք պետք է զարմանա՞նք, որ այս վերապրողները դեռևս 70 տարի առաջ պատահած դեպքերի տպավորության տակ են գտնվում։

Երկրորդ՝ ցեղասպանությունը հայերի հավատը խորտակեց բարոյական օրենքով ղեկավարվող աշխարհի նկատմամբ... հազարավոր հայեր սովամահ եղան։ Տեղահանված իրենց հայրենի

Ազգերից և կողոպտված, նրանք հարկադրված էին խոտ ուտել և Ֆատիկներ որոնել։

... Բարոյական կարգի նկատմամբ հայերի հուսախաբությունն ավելի ևս խորանում է ժամանակի հետ, երբ Թուրքական կառավարությունը շեշտում է ուրացման արշավը։

Մի բան է տառապել մի անչափելի ողբերգությունից և մի այլ բան, երբ ասվում է, թե իրապես ոչինչ չի կատարվել։

Այսօր հայերը լսում են, թե իրենց պահանջները կեղծիք են ու սուտ։

Ես հենց նոր եմ վերադարձել երկու հանդեսներից՝ ... որոնց ներկա էին ուսանողներ աշխարհի տարբեր շրջաններից։

Ահաբեկչությունը պաշտպանելու խոսք ես չլսեցի ոչ բանախոսներից և ոչ էլ ներկա գտնվող հայերից։ Ինչ որ ես լսեցի, այն բանի ցավալի հաստատումն էր, որ ահաբեկչությունը մի ազդակ է հայկական ցեղասպանությունը հանրության ուշադրությանը հանձնելու համար։

Հայերը ահաբեկիչներ չեն. հաստատել ցեղասպանությունը՝ չի նշանակում պաշտպանել ահաբեկչությունը, ինչ որ, ըստ երևույթին, պրեզիդենտ Ռ. Ռեյգանն է մտածում։

Թրականության մեջ ճիշտ հակառակն է։ Հայկական ցեղասպանությունն ուրանալը կնպաստի, որ ապագայում շեշտվի ահաբեկչությունը։

Դժբախտաբար, ինչպես երևում է, Ռեյգանի վարչակազմը Ամերիկայի շահերի տեսակետից է ուրվագծում անցյալի պատմությունը։ Թուրքիայի ստրատեգիական դիրքը՝ որպես պատվար Սովետական Միության և Արևմտյան Եվրոպայի միջև, պատճառ է դառնում, որ արտաքին գործերի մինիստրությունը ցեղասպանությունը ճանաչելու հարցում թշնամական վերաբերմունք ունենա հայկական պահանջների նկատմամբ։

Ողբերգականորեն հայ ժողովուրդը մեկ անգամ ևս զոհաբերվում է քաղաքական նկատառումներին»։

«Եթե Անկարան,— գրում է Գ. Ռիչարդսոն,— ընդուներ ցեղասպանության փաստը, նա անմիջապես կխարխլեր բռնության հենարանը, որովհետև հայերը շափավոր մարդիկ են։ Այն ժամանակ նրանք իրենք տաքի կելնեն նրանց դեմ, ովքեր ռումբեր են տեղադրում։ Սակայն Անկարան, ըստ էության, ոչինչ չի ընդունում։ Եվ դրանով Թուրքիան, համաձայն ազգեցության և հակազդեցության օրենքի, նույնիսկ, ինչպես հարկն է չհասկանալով թե ինչ է անում, համարձակվում է ահաբեկչության ալիքներին ծնունդ տալ և դառնալ դրանց առաջին զոհը։

Հայերը երբեք չեն մոռանա ապրիլի 24-ի անարգանքները, ինչպես նաև ահաբեկչության խայտառակ տարիները, որոնք հաջորդեցին դրանց։ Եվ որքան քիչ լինի Հայաստան վերադառնալու հավանականությունը, նրանք այնքան ավելի անգութ կլինեն նրանց նկատմամբ, ովքեր հրաժարվում են ասել հասարակ բառեր. «Այո, մեր նախնիները դահիճներ են եղել, կներեք»»[3]։

Ահա թե նույն խնդրի մասին ինչ են ասում իրենք՝ ահաբեկիչները։ Նախ մի հատված նրանց կոչից.

— Թուրքիան մեզ ոչնչացրել է։

— Մեր հողերի մեծ մասը մնում է Թուրքիայի կողմից բռնագրավված։

— Գոյացել է 2,5 միլիոնանոց Սփյուռք, որը հալվում ու ձուլվում է։

— Մեծ պետությունները «չեն ուզում նույնիսկ, որ իրենց հիշեցնեն Հայկական հարցի մասին»։

— Անցած 50 տարվա ընթացքում մեր ժողովրդի բողոքի ցույցերն ու գանգատները մնացին անպատասխան։

— Մենք հուսահաբ ենք, որովհետև Թուրքիան ոչ միայն չի ընդունում ցեղասպանությունը, այլ... «կայսերապաշտ պետությունների հովանու տակ փորձում է խեղաթյուրել պատմությունը՝ ճնշում բանեցնելով պետությունների վրա, որ խեղդեն հայկական ծագում ունեցող իրենց քաղաքացիների արդարություն պահանջող ձայները։

Մեզ համար այլ ճանապարհ չի մնում, եթե ոչ բռնությունը։ Խաղաղ ճանապարհով արդարության հասնելու երազով այլևս չենք ուզում օրորվել»։

«Այսօրվա կացությունը,— գրում է ահաբեկիչներից Մաշս Գիլինճյանը (Հրայր),— ստեղծվեց Թուրքիայի կողմից պատմական եղելությունը ճանաչելու և հայ ժողովրդի ապրելու իրավունքի ընդունումից հրաժարվելու պատճառով»։

«Մենք չենք կարող մոռանալ մեր անցյալը,— 1983 թ. Բելգրադում կայացած դատավարության ժամանակ հայտարարեց Հարություն Լևոնյանը,— և չպայքարել մեր ապագայի համար... Մեր հիմնական նպատակը վրեժխնդրությունը չէ, մեր արարքները քաղաքական բնույթ ունեն...

Թուրքական կառավարությունը այսօր էլ փորձում է մոռացության մատնել Հայկական հարցը, հավատալով, թե աստիճանաբար մարդկությունը կմոռանա իրականությունը ու սպասելով մի հարյուրամյակ, ենթադրում է, թե այն ժամանակ ո՞վ պիտի ուզի հողերը, ո՞վ պետք է լինի պահանջատերը։ Այս քաղաքականության դեմ հայ ժողովուրդը, մանավանդ երիտասարդությունը, չեն կարող այլևս լուռ մնալ և չհակազդել»։

«Բռնի ուժի դիմելու մեր որոշումը,— ասաց Ռաֆֆի էլբեքյանը,— հետևանք է թուրքական պետության և նրան պաշտպանող պետությունների մերժմանը՝ զոհացում տալու հայ ժողովրդի արդար ու խաղաղասեր իրավունքներին»։

Մեղադրյալներից մեկը՝ Գառնիկ Սարգսյանը, ասաց, թե այդ ահաբեկչությանը մասնակցելը «ժողովրդիս համար մի որևէ բան անելու հնարավորություն էր»[4]։ Ահաբեկչական խմբի ղեկավարներից Հ. Հակոբյանը 1984 թ. հայտարարեց. «Մեր միակ թշնամին Թուրքն է» լոզունգը միաժամանակ մի ապիկարություն և քաղաքական տհասություն է։ Այն կարելի է համարել նաև դավաճանություն հայկական դատի նկատմամբ։ Այդ նոր լոզունգը ինքնին արտահայտում է ցեղասպանության մոլուցքը, որ մեծապես վնասում է թե՛ հայ ժողովրդին և թե՛ հայ դատին։ Այն պատճառ է դառնում հայ և թուրք ժողովուրդների միջև ատելության սերմանմանը, որից միակ օգտվողը թուրքական ֆաշիստական կառավարությունն է»[5]։

1984-ին ժողովուրդների մշտական տրիբունալը անդրադառնալով հայկական ահաբեկչությանը, նշեց. «Ամեն ժողովուրդ, որի հիմնական իրավունքներն անտեսված են, իրավունք ունի դրանք վերստանալու քաղաքական միջոցներով կամ ապավինելով ուժին», իսկ «թուրք դիվանագետների դեմ կատարվող ահաբեկչական արարքները, ըստ երևույթին, արդյունք են ցեղասպանության իրողության ժխտման և նրա մոռացման»[6]։

«Իզվեստիա» թերթի 1985 թ. հունիսի 28-ի համարում տպագրված «Իսկ ովքե՞ր են դատավորները» հոդվածում (Բեյրութում ամերիկյան օդանավն առևանգողների մասին) գրված է. «...Մենք նպատակ չունենք որևէ ձևով արդարացնել ահաբեկիչներին։ Մենք լոկ ցանկանում ենք ասել՝ նրանք իրենց հակառակորդների հետ խոսում էին նույն լեզվով՝ բռնության լեզվով, միայն «բարբառներն» են տարբեր. զրուցակիցներից մեկն ունի «նիմից» ավիակիր և ծովային հետևակ, իսկ մյուսը՝ զուգ

ատրճանակ և նռնակ՝ զուգակցված մահմեդական ֆանատիզմի և սեփական կյանքը զոհաբերելու պատրաստակամության հետ»։

Սովետական Միությունը դատապարտել ու դատապարտում է ահաբեկչությունը՝ որպես պայքարի անընդունելի ու վնասակար ձև։ Նման մոտեցումն ամբողջությամբ վերաբերում է նաև «հայկական ահաբեկչությանը» թեկուզ այն պատճառով, որ թուրքական քաղաքագետներն ու պրոպագանդիստները «հայ ավազակների» նմանօրինակ գործողությունները օգտագործում են որպես յուրատեսակ վարագույր իրենց հակահայկական, հակասոցիալիստական պրոպագանդան ծավալելու, սուլթանական և երիտթուրքական արյունարբու քաղաքականությունն արդարացնելու և պանթուրքիզմը առաջ մղելու համար։

* * *

Ֆրանսիացի հայտնի պատմաբան Թեռնոնը, հանդես գալով ժողովուրդների մշտական տրիբունալում, հայտարարեց. «Ժխտել ցեղասպանության փաստը, նշանակում է կասկածի տակ դնել հայերի գոյությունն ընդհանրապես։ Արևմուտքի անտարբերությունն այս խնդրի նկատմամբ հայերի մեջ արթնացրեց ատելության զգացում և ռադիկալ խմբերին հանդեցրեց ահաբեկչության»։

«...Ժամանակակից Թուրքիան կամ կհեռանա ոճրագործներից և, այդ դեպքում, մեղսակից չէ ոճիրին, և կամ կշարունակի խուսափել պատմության դատաստանից՝ այդ դեպքում ոճիրի մեղսակից է»։ Աթաթուրքի ավանդներին հավատարիմ լինել, նշանակում է նրա նման խոստովանել, որ «մեր հայրենակիցները անլուր ոճիրներ գործեցին, տեղահանություն և կոտորածներ կազմակերպեցին...»[7]։

Մինչդեռ իշխանության գլուխ անցնելուց հետո զինվորական խունտան իր առջև երկու գլխավոր խնդիր դրեց՝ Թուրքիան դուրս բերել ճգնաժամից և վերջնականապես փակել Հայկական հարցը՝ այն մերժելու և հերքելու միջոցով։ Այս գործում նա աշխատում է հօգուտ Թուրքիայի օգտագործել «հայկական ահաբեկչությունը» և թույլ չտալ, որ «Հայկական հարցը առաջ մղվի քաղաքական միջոցներով»։ Պատահական չէ, որ Վաշինգտոնում թուրքական դեսպան Շ. Էլեքդաղն ուղղակի հայտարարեց, որ «հայկական դատը խաղաղ միջոցներով առաջ տանելը Թուրքիայի համար ընդունելի չէ»։

«Հուրիեթը» 1982-ի օգոստոսի 13-ին գրեց, որ հեղաշրջումից հետո «եռանդուն աշխատանք է ծավալվում հայկական թղթապանակը ուսումնասիրելու ուղղությամբ։ Այդ աշխատանքներին մասնակցում են նաև պետության ղեկավարներն ու ազգային անվտանգության խորհրդի անդամները»։

Պրոպագանդիստական այդ արշավում օգտագործվում են բոլոր միջոցները և, իհարկե, կանգ չեն առնում ստի, կեղծիքի և պրովոկացիաների առաջ։ Բայց պատմությունը վերաձևել հնարավոր չէ։ Ստի ոտքերը կարճ են, և համաշխարհային հասարակական կարծիքը տեսականորեն թյուրիմացության մեջ գցելը անհնար է։

Ժան Պիեռ Ռիշարդոն «Հայեր, ինչ գնով էլ լինի» գրքում գրում է. «Հայաստանը գոյություն ուներ այն ժամանակ, երբ Ուսուկես հազարամյակ առաջ, երբ նոր էր ծնվում Հռոմը։ Նա գոյություն ուներ և այն ժամանակ, երբ 150 տարի առաջ Հռոմը գաղարել էր գոյություն ունենալուց։

Հայերը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն են։ Նրանք ունեին մանրակերտ պալատներ, երբ Աստերիքսը դեռ գոյություն չուներ։ Բաբելոն, փարավոններ, Հռոմ, քրիստոնեության ակզբնավորում, երեք հազար տարվա ընթացքում նրանք գործնականում առնչվել են Արևելքի ու Արևմուտքի ամբողջ պատմությանը։ Նրանք հաղորդակցվել են Դարեհի և Քսերքսեսի, Ալեքսանդր Մեծի, Կեսարի և Հիսուս Քրիստոսի, Նապոլեոնի և Ելեմանսոյի հետ»[8]։

Թուրքիայի կառավարության նախագահ Թուրգութ Օզալը տեսնելով, որ բացահայտ և ճակատային միջոցներով հայկական ցեղասպանությունը ժխտելն անհնար է, որ համաշխարհային հասարակական կարծիքը օրեցօր համոզվում է թուրքական պրոպագանդայի ստահոդության մեջ, որոշեց փոխել տակտիկան, անցնել խուսանավման։ Նա «Գյունեշ» թերթում մի հայտարարություն հրապարակեց, որտեղ ասվում էր, որ մինչև օրս Հայկական հարցի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը «սխալ» է, որովհետև Հայկական հարցը պետք է դիտել որպես «հնարավոր անցյալի» հարց և նրա համար պատասխանատվությունը «թաղված է պատմության էջերի մեջ»։

«Հայերը,— ասում է Թ. Օզալը,— բազմաթիվ գրքեր ու գրքույկներ են հրատարակել և հաղորդագրել են աշխարհին համոզել ցեղասպանության հարցում։ Հետևաբար սխալ կլինի, եթե մենք

ասենք, որ այդ ամենը ճիշտ չէ, որ մահմեդականները ավելի են շարչարվել»։ Ցեղասպանության մասին հայերի պնդումները թեև «սուտ են», բայց չարժե դրանց անդրադառնալ և դրանք ժխտել, որովհետև «հնարավոր անցյալում պատահած դեպքերի համար անհնար է Թուրքիային մեղադրյալի աթոռին նստեցնել, նրանից ու նրա այսօրվա ղեկավարներից հաշիվ ու հող պահանջել»։ «Ոչ ոք,— շարունակում է Օզալը,— իրավունք չունի պահանջելու Թուրքիային պատկանող թեկուզ մի բուռ հող կամ դատապարտել Թուրքիայի Հանրապետությունը։ Կարևոր չէ, թե ինչ-որ բան պատահել կամ չի պատահել, ոչ ոք իրավունք չունի Թուրքիայից պահանջելու, որ նա խոնարհվի կեղծիքների վրա հիմնված այդ պահանջների առաջ»։ Փաստորեն Օզալը կամենում է ասել, որ «հայկական պահանջների» դեմ պայքարի լավագույն միջոցը այն ուշադրության չարժանացնելն ու մոռացության մատնելն է, «մեռած անցյալի» մեջ թաղելը։

Նոր տակտիկա չէ՝ այն ինչ մերժել չես կարող, ցույց տուր, որ չես նկատում։

Այս հայտարարությունից քիչ անց «Միլիեթը» 1985 թ. հունվարի 10-ի համարում տպագրում է «Հայերի հետ բանակցություններ վարել» հոդվածը։

«Հայկական ահաբեկչության հարցում,— կարդում ենք այդ հոդվածում,— հարկադրված ենք ընդունել մի շարք դառը իրողություններ։

— Ոչ մի հույս չկա, որ 1985 թ. հայ ահաբեկիչները դադարեցնելու են իրենց գործունեությունը։

— Ոճիրների պատասխանատուները միայն մի բուռ ահաբեկիչները չեն, նրանց աջակցող բազմաթիվ կազմակերպությունները վերջին տարիներին շատ են ուժեղացել։

— Ջանգան պնդումների ու ինֆորմացիաների համաձայն, ահաբեկչական գործողություններին աջակցողների թվում են ամերիկացիները, Սովետական Միությունը, ֆրանսիացիները, պաղեստինցիները, հրեաները, հույները, Կիպրոսի հույները, քրդերը և ուրիշներ։

— Սխալ չի լինի, եթե ասենք, որ Հայկական հարցին վերաբերող որևէ քաղաքականություն չունենք։ Մեր դիվանագետներին լավ կամ վատ պաշտպանելուց բացի, այլ բան չենք անում...

...(Մինչդեռ) վերջին տասը տարվա ընթացքում հայերը պրո-

պագանդայի մարզում, բառիս բուն իմաստով, մեզ փչացրին։ Երբ մի օր գրվի XX դարի պրոպագանդայի պատմությունը, թերևս, որպես այդ ասպարեզի ամենանշանակալից երևույթ, նըշվի հայերի հակաթուրքական քարոզչությունը 1970—1980-ական թվականներին»։

«Մենք չկարողացանք պատասխանել։ Լուռ ու մունջ կրեցինք «բարբարոս» և «ջարդարար» համարվելու ստորացումը։

Փորձեցինք մի քանի գրքերի հրատարակությամբ... պաշտպանել մեր թեզը. մենք մեզ խաբեցինք։

Պարտավոր ենք նոր մոտեցումներ փորձել... Հայկական հարցին վերաբերող մեր քաղաքականությունը... պետք է կարող անձանց ու կազմակերպություններին հանձնել...

Մի այլ բան ևս պետք է անել՝ ուղղակի բանակցությունների մեջ մտնել Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի հայ ղեկավարների կամ եկեղեցական իշխանությունների հետ... Տեսակցություններին կարող են ներկա գտնվել երկու կողմերի համար ընդունելի մի շարք եվրոպացիներ և ամերիկացիներ...»

Հայերի հետ բանակցություններ սկսելու այս առաջարկության մեջ ասվում է, որ նման քայլ պետք է կատարեն ոչ թե թուրքական կառավարությունը, այլ կիսապաշտոնական անձինք, այն էլ կողմնակի ճանապարհներով։ Թերթը նույնիսկ չի նշում, թե այդ «բանակցություններն» ինչ հարցեր պետք է արծարծեն։ Այս առաջարկության նպատակը պարզ է՝ մի կողմից մարել ցեղասպանության առնչությամբ բորբոքված աղմուկը, իսկ, մյուս կողմից, չեզոքացնել հայանպաստ գործողություններն ու «հայկական ահաբեկչությունը»։ Չէ որ «Միլիեթի» ելակետը նույնն է. ցեղասպանություն չի եղել և Արևմտյան Հայաստան հասկացությունը մտացածին է։

Սակայն Հայկական հարցին նոր մոտեցումներ ունենալու այս պահանջները, որպես պղպջակ, հօդս ցնդեցին, երբ պրեզիդենտ Էվրենը «դաս տվեց» վարչապետ Օզալին։ Դրանից հետո Օզալը հայտարարեց, որ իրեն սխալ են հասկացել։ Ոչ մի նոր մոտեցման մասին խոսք լինել չի կարող։

Եվ ահա «Լը Բաեն» թերթի թղթակցի հարցին (ապրիլ 1985 թ.), թե 70 տարի է անցել, բայց դուք ինչո՞ւ չեք ընդունում հայերի կոտորածը, Օզալը պատասխանեց. «Որովհետև ջարդ տեղի չի ունեցել։ Միջազգային քննություններից և ոչ մեկը թուրքերի հանցագործությունը չի հաստատել։ Առաջին մեծ պատերազմի ժամանակ արևելյան ճակատում ռուսները հարձակվեցին թուրքական բանակի վրա։ Այդ շրջաններին սահմանակից հայերը գործում էին ռուսների օգտին և մեզ հետ թշնամաբար վարվեցին։ Եվ թուրքական կառավարությունը հայ ժողովրդին ուղարկեց Սիրիա։ Ոմանք գաղթի ժամանակ զոհ գնացին հիվանդությանը»[9]։

Օզալը «նոր մոտեցումից» հրաժարվեց, բայց «Գյունեշը» շարունակեց իր էջերը տրամադրել այդ հարցի քննարկմանը*։

«Սխալ մոտեցում ենք ունեցել հայկական խնդրին,— գրում է «Գյունեշը» 1985 թ. փետրվարի 15-ին,— և այդ պատճառով Թուրքիան անելանելի վիճակում է։ Ավելի շատ չենք կարողացել լուսաբանել աշխարհի հանրային կարծիքը։ Հայերը տասնյակ հազարավոր գրքեր են հրատարակել և հավաստիացրել, «որ ցեղասպանություն է կատարվել»։ Հիմա այլևս չենք կարող ասել, որ այդ պնդումները սխալ են և, եթե սպանդ է կատարված, դրանից ամենից շատ տուժել են երկրի իսլամ հայրենակիցները։

Այս ամենը մեզ ոչինչ չի ասում։ Չի ասում, որ պետք է նըստել և տեսնել, թե մեր վարքագիծը մեզ մինչև ուր է հասցրել։ Չի ասում, որ այսօր մոռանալով Լոզանը, Սևրի դաշնագիրը սառաջ քաշողները որևէ բանի չեն կարող հասնել»։

«Միլիեթում» թուրք հրապարակախոս Մ. Թոկերը նշելով, որ «Հայկական հարցի մեջ հողային պահանջը կամ հատուցման նման պահանջները իրավաբանական հիմք չունեն», Օզալին առաջարկում է. հայերի պահանջների միջազգային ճանաչմանը խանգարելու համար «միակ ելքը քաղաքական աշխարհին ներկայանալն է այնպիսի առաջարկով, որ միջազգային հասարակական կարծիքի վրա մեծ տպավորություն գործի՝ եկեք 1915 թ. դեպքերը ամենաանկողմնակալ, գիտական մակարդակով քննարկենք։ Եթե նման առաջարկություն կատարենք, այդ դեպքում վերոհիշյալ ազդեցիկ մարմիններում (ԱՄՆ-ի կոնգրես, Եվրո-

* Օզալի օդանավակայանում կատարված ահաբեկչության հեղինակների դատավարության ընդմիջումներից մեկում, երբ թուրք պրոֆեսոր Աթայովին հարցրեցին, թե «դուք կարող եք փորձել խաբելու այս դատարանին, երդվյալներին, հասարակական կարծիքը, բայց դուք, անկասկած, ձեր ասածներին չեք հավատում»։

Աթայովը պատասխանեց. «Մտածում եմ, թե ժամանակն է խորհրդակցելու և վերջացնելու մեր և ձեր միջև եղած վեճերը»։

պական պաշտամունք) կատարված բոլոր ձեռնարկումները իրենք իրենց խափանվելու են»։

Բայց Թուրքերն իսկապե՞ս թույլ կտան, որ Թալեաթի կամ Էնվերի ստորագրած որևէ փաստաթուղթ հրապարակվի։ Իհարկե, ոչ։

* * *

Պրոպագանդիստական այդ մարաթոնում մեծ տեղ է հատկացվում, այսպես կոչված, գիտաժողովներին։

1984 թ. սեպտեմբերին նման մի գիտաժողով կազմակերպվեց Կարինի Աթաթուրքի անվան համալսարանում։ Պրոպագանդիստական պարզունակ միջոցների այդ խառնաժողովը սկսելուց առաջ նրա մասնակիցները ծաղկեպսակ դրեցին «հայերի կողմից իրականացված ցեղասպանության զոհ Թուրքերի» հուշարձանին։

«Սիմպոզիումի կապակցությամբ,— ասվում է թուրքական հեռուստատեսության 1984 թ. սեպտեմբերի 8-ի հաղորդման մեջ,— քաղաքում բացվել էին հայերի կողմից կատարված կեղեքումներն ու ցեղասպանությունները ցուցադրող նկարների ու գրքերի ցուցահանդեսներ»։

Բացելով սիմպոզիումը, համալսարանի ռեկտորը հայտարարեց. «Թուրքական ու միջազգային հասարակական կարծիքը 10 տարուց ի վեր գտնվում է ոչնչից ստեղծված հայկական պրոբլեմի ազդեցության տակ։ Թշնամիներն ու մութ ուժերը, որոնք նպատակ են հետապնդում կիսել ու մասնատել Թուրքիան (որոշ դավաճանների հետ միասին), կազմակերպում են նենգ միջադեպեր արտասահմանում ու թուրքական սահմանների ներսում, կատարում մի շարք հանցագործություններ...

Մենք այսօր կարևոր պարտականություն ենք կատարում էրզրումում, որը նույնպես ականատեսն է հայկական կեղեքումների»։

1984-ի ապրիլին Անկարայում տեղի ունեցավ ևս մի գիտաժողով՝ նվիրված միջազգային տեռորիզմին։ Գիտաժողովին հիմնականում մասնակցում էին թուրքական ու ամերիկյան մասնագետները։ Որպեսզի պարզ լինի «գիտաժողովի» բնույթը, միտումներն ու մակարդակը, նշենք, որ Անկարայի համալսարանի ռեկտոր Մոնները, բացելով այն, հայտարարեց.

«Ձեռք բերված արդյունքներն (ուսումնասիրություններն) ապացուցում են..., որ հայ լիդերները համագործակցում են ընդհատակյա կազմակերպությունների հետ։ Մի խումբ հայ երիտասարդներ, գայթակղվելով «անկախ Հայաստանի» երազներով ու ազգասիրական լոզունգներով, դառնում են թմրադեղ տարածող ընդհատակյա կազմակերպությունների անդամներ»։ Ըստ այս վայ-պրոֆեսորի, 1915—1921 թվականներին երեք անգամ ավելի շատ մահմեդական է սպանվել, քան հայ։

ԱՄՆ-ի Լուիզվիլի համալսարանի դասախոս Ջ. Մաքքարտին իր զեկուցման մեջ նշեց. սխալ է, որ «շատ եվրոպացիներ և ամերիկացիներ հավատում են հայկական դատի իրավացիությանը... Հայերը ջանում են Թուրքիային ստիպել, որ նա ընդունի գոյություն չունեցող մի սպանություն»։

Թենեսիի համալսարանի դասախոս Մ. Գյունտերը ամեն կերպ աշխատում էր ապացուցել, որ հայերի միջոցով «որոշ գերուժեր ջանում են ստրատեգիական նպատակներով խարխլել Թուրքիայի հավասարակշռությունը..., որովհետև նրա նկատմամբ ունեն պատմական նպատակներ»։

Անկարայի համալսարանի պրոֆեսոր Թ. Աթայովի կարծիքով, «համաշխարհային հասարակությունը Հայկական հարցին տեղյակ է դարձել միակողմանիորեն և չի տեսել բուն ճշմարտությունը։ Սոսկ մի քանի հայ ընտանիքների պատմածների վրա հիմնված տեսակետները չեն կարող լինել ակադեմիական, բանական ու անկողմնապահ... պատմական իրողությունները պետք է արժեքավորել միայն բոլոր փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո։ Արժեքավորելու ժամանակ պետք է օգտվել նաև շուրջ 100 միլիոն փաստաթղթեր պարունակող օսմանյան արխիվներից..., որոնք ապացուցում են, որ հայերի ապստամբությունները հրահրվել ու քաջալերվել են դրսից»[10]։

1985-ի մայիսին Կ. Պոլսում նույնիսկ հատուկ սիմպոզիում հրավիրվեց՝ «Օսմանյան արխիվները» թեմայով։ Հանդես գալով գիտաժողովում, վարչապետ Օզալն ասաց, որ օսմանյան արխիվների ուսումնասիրությունը աշխարհին ցույց կտա, որ Թուրքիան «միշտ էլ հարգել է մյուս ժողովուրդների ազգային անվտանգությունն ու կրոնը»[11]։

Թուրք գիտնականներն ու քաղաքական գործիչները ստում են, որովհետև, եթե թուրքական արխիվներն իսկապես բացվեն արտասահմանցի ուսումնասիրողների առաջ, ապա մարդկությանը

կներկայացվեն Օսմանյան կայսրության մեջ մտնող ժողովուրդների նկատմամբ դարեր շարունակ իրականացվող գաղութային քաղաքականության հրեշավոր փաստեր։ Ուստի պատահական չէ, որ «Միլիեթը» 1985 թ. փետրվարի 16-ին դիմելով Թուրքական իշխանություններին, զգուշացնում էր. «Արխիվների դռները ամեն մեկի առաջ չպետք է բացել..., որովհետև գրությունների մեջ կարելի է հանդիպել թե՛ նպաստավոր և թե՛ աննպաստ հայտարարությունների»։ Այս անապահովությունը վերացնելու համար թուրքական թեզը յուրացրած գիտնականները պետք է զտում կատարեն և հետո միայն գիտական բոլոր շրջանների առաջ բացեն հայկական ընդդիմները հերքող փաստաթղթերը...

Պետք է ծավալել պրոպագանդիստական լայն աշխատանք, ընտրված փաստաթղթերն ուղարկել Արևմուտքի մշակութային կենտրոնները՝ համալսարաններ, գրադարաններ, գիտական կենտրոններ։ Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ...

«Առանձնապես կարևոր է ԱՄՆ-ի համալսարաններին միջոցներ հատկացնել՝ այս թեմայով ուսումնասիրությունների ամբիոններ կազմակերպելու...»

Ահա թե Թուրքիայում ինչպես են պատկերացնում ուսումնասիրողների առաջ օսմանյան արխիվների դռների բացումը։

Սակայն վերադառնանք Անկարա և ունկնդրենք, թե ինչ են ասում վերոհիշյալ «գիտաժողովի» մասնակիցները։

Ամերիկացի մասնագետ Պոլ Հենսը հայտարարեց, որ «հայերի ու թուրքերի միջև ահաբեկչության դեպքերը սկսվել են XIX դարի սկզբներին... Այդ հարյուրամյակում ռուսների առաջխաղացումը Կովկասից, այս հողերի նկատմամբ Արևմուտքի երկրների նպատակները դարձան այն գործոնները, որոնց ազդեցությամբ սկսվեց հայերի օտարացումը օսմանյան պետության հանդեպ»։

Ամերիկացի մի այլ մասնագետ, Ն. Բյորսը ախտորոշում է. «Հայ տեռորիստների... կազմակերպած գործողությունների նպատակն է Թուրքիան անջատել, մեկուսացնել Արևմուտքի երկրներից»։

«Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և հետո տեղի ունեցած հայկական դեպքերի քննարկում» թեմայով միջոցառում կազմակերպվեց 1985-ի ապրիլի 2-ին Վանում։ «Գիտաժողովը» կազմակերպվել էր այն օրերին, երբ թուրքական իշխանությունները մեծ շուքով տոնում էին «Թշնամուց Վանի ազատագրման 67-ամյակը»։ Իր ելույթում Վանի համալսարանի ռեկտորն ասաց. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսները հայերին օգտագործում էին որպես 5-րդ շարասյուն. միայն Վանի շրջանի Ջերե գյուղում հայերը ոչնչացրեցին 2000 թուրք, իսկ Վանի հայ պարտիզանները սպանեցին տասնյակ քաղաքացիների»։

«Գիտաժողովում» հանդես եկան նաև վանեցի Բուրքերը և, որպես ականատեսներ, պատմեցին «հայերի կատարած անմարդկային ոճրագործությունների մասին, բացի դրանից ցուցադրվեցին այդ դեպքերը պատկերող շինծու ժապավեններ»[12]։

Ապրիլի 3-ին միջոցառումը շարունակվեց Բիթլիսում։ Այստեղ ևս խոսակցության հիմնական թեման այն էր, թե «Բիթլիսի շրջանում հայկական ավազակախմբերը ինչպիսի ցեղասպանություն են իրականացրել, որ նրանց գործունեության շարունակողներն այսօրվա հայ ահաբեկիչներն են»։ Այստեղ էլ ցուցադրվեց «հայերի վայրագությունները պատկերող» շինծու ժապավեն։

Ապրիլի 4-ին խառնաժողովը տեղափոխվեց Մուշ։ Մուշի քաղաքապետը նույնպես առիթը բաց չթողեց թուրքերին և, մասնավորապես, քրդերին ահաբեկելու։ «Հայերը,— ասաց նա,— այժմ որդեգրել են Իսրայելի դիրքը և իրենց վերջնական նպատակը համարում են անկախ պետություն ստեղծելը։ Հակաթուրքական որոշ արտաքին ուժեր աջակցում են հայերին»։

Մի թուրք գիտնական աշխատում էր ապացուցել, որ «մինչև XIX դարի վերջը Եվրոպացի աշխարհագրագետները Արևելյան Անատոլիան կոչում էին Թուրքստան, բայց ավելի ուշ, քրիստոնյաների ազդեցության հետևանքով, այդ անունը օգտագործելուց հրաժարվեցին...»

Մի քանի օր անց Կոնիայի «Սելջուկ» համալսարանում տեղի ունեցավ «Անարխիզմի և տեռորիզմի դեմ աթաթուրքիզմ» թեմայով «գիտաժողով» (գիտաժողովների անունները տարբեր են, իսկ բովանդակությունը նույնն է)։ Հայի Թեփե համալսարանի դասախոս Հ. Ջայը նշեց, որ «Թուրքիայում տեռորիզմի ամենախոշոր աղբյուրը հայկական կազմակերպություններն են, որոնք կապված են իմպերիալիստական պետությունների ու գաղափարախոսությունների հետ»։

Նույն ժամանակ Սվազում տեղի ունեցած «Միջազգային տերորիզմն ու երիտասարդությունը» նստաշրջանում մասնավորապես նշվեց, որ հայերը, Կովկասում մի անկախ պետություն հիմնելու գործում ձախողվելով, առաջին անգամ թուրքական իշխանության տակ ստացան իսկական կրոնական ու խղճի ազատություն։

Եվ այսպես շարունակ։ Այդ գիտաժողովների մասնակիցները ժխտում են նույնիսկ պատմական այն իրադարձությունները, որոնք հաստատվել են ոչ միայն բազմաթիվ վկայություններով ու արխիվային նյութերով, այլև այդ իրադարձությունների կազմակերպիչների խոստովանություններով։

* * *

Միջազգային իրավունքի սովետական մասնագետ Գեորգ Բարսեղովը գրում է. «Թեև հայկական ցեղասպանությունը ամբողջ աշխարհում և լիակատար հիմունքով դիտվում է որպես «դասական», սակայն նրանք, ովքեր հանդես են գալիս այդ հանցագործության կազմակերպիչներին և իրականացնողներին պաշտպանողների դերում, բոլորին հայտնի պատճառներով, փորձում են ժխտել կամ աղավաղել օբյեկտիվ ու հանրահայտ փաստերը, չխորշելով պատմության կոպիտ ու բացահայտ կեղծարարությունից, առաջադրելով ամենահակասական, իրարամերժ մեկնաբանություններ»[13]։

Եղեռնի ջատագովները պնդում են, թե հայերի ֆիզիկական բնաջնջումը չի կարող որակվել որպես ցեղասպանություն, քանի որ նման հասկացություն այն ժամանակ չի եղել, որ այն օրենքի ուժ է ստացել միայն 1948թ. ՄԱԿ-ի կոնվենցիայով։ Իսկ «օրենքը հետադարձ ուժ չունի»։ Այդ դեպքում ինչո՞ւ է ցեղասպանություն համարվում 12 միլիոն սլավոնների ու հրեաների կոտորածը, որն իրականացրեց ֆաշիստական Գերմանիան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, այսինքն այդ կոնվենցիայից մի քանի տարի առաջ։

«Ցեղասպանություն» տերմինի հեղինակը լեհ իրավաբան, դոկտոր Ռաֆայել Լեմկեն է։ 1933 թ., այսինքն Հայկական եղեռնից ընդամենը տասնութ տարի անց, երբ այդ հանցագործության սարսափները դեռևս ապրում էին մարդկության հիշողության մեջ, Լեմկեն համապատասխան տերմին չունենալով նկարագրեց հանցագործության տարրերը՝ «ցեղային, կրոնական կամ սոցիալական խմբերը ոչնչացնելու հանցավոր գործողություններ»[14]։

Միակ խոշորածավալ հանցագործությունը, նկատում է Գ. Բարսեղովը, որ 1933-ին կարող էր իբրև փաստարկ և հիմք ընդունվել առաջարկված բնորոշման համար, հայ ազգաբնակչության ջարդերն էին։

Դեռ 1915 թ. Առնոլդ Թոյնբին, որպես Հայաստանում տեղի ունեցող արյունալի իրադարձությունների ականատես, դրանք նկարագրել է չափազանց արտահայտիչ ու սպառիչ խորագիր ունեցող «Ազգի սպանությունը» գրքում։ Նույն այդ ժամանակ հանդես գալով լորդերի պալատում, լորդ Բրայսը ասաց. «Գրեթե մի ամբողջ ազգ ոչնչացված է»։ Անգլիական հետախուզական ծառայության մի գործակալի 1915 թ. օգոստոսի 11-ի գաղտնի զեկուցագիրը հաղորդում է. «Թուրքերը կոպտորեն ու մեթոդաբար իրականացնում են ամբողջ հայ ցեղի բնաջնջումը»։ Ռենե Պինոն 1916 թ. թուրքական կառավարության գործողությունները բնորոշել է որպես «հայերի բնաջնջում»։ Անատոլ Ֆրանսը՝ «մի ամբողջ ժողովրդի բնաջնջում», Ս. Մ. Կիրովը՝ «ամբողջ հայ ազգաբնակչությունը բնաջնջելու» թուրքերի ծրագիր։ 1915 թ. սեպտեմբերին «Ժուռնալ դը Ժնև» լրագիրն իր խմբագրականում նշում էր, որ «տեղի է ունենում մի ամբողջ ժողովրդի կոպիտ ու հետևողական բնաջնջում... Այսօր խոսքը Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում մի ամբողջ ժողովրդի բնաջնջման մասին է, որը կատարվում է ամենուրեք, որտեղ էլ ապրելիս լինեն նրա ներկայացուցիչները»։ Շվեյցարական մեկ ուրիշ լրագիր՝ «Բազելեր նախրիխթենը», թուրքական կառավարության գործողությունները որակեց որպես «մի ամբողջ ժողովրդի ծրագրված բնաջնջում», որի իրականացումը կատարվում էր այդ նպատակի համար ստեղծված «բնաջնջման ստոր և դաժան համակարգով»[15]։

Ֆրանսիայի պրեմիեր մինիստրը 1916 թ. հոկտեմբերի 14-ին սենատոր Լուի Մարտենին հղած նամակում պաշտոնապես հաստատել է, թե «Ֆրանսիական կառավարությունը դատապարտել է երիտթուրքերի հանցագործությունները և մարդկային խղճի դատին է հանձնել մի ամբողջ ժողովրդի բնաջնջման նրանց հրեշավոր ծրագիրը, ժողովուրդ, որը մեղավոր էր այնքանով, որքանով սիրում էր առաջադիմություն և քաղաքակրթություն»[16]։

«1915 թվականին,— գրում է Լեմկեն,— գերմանացիները ներխուժեցին Վարշավա և նվաճեցին ամբողջ շրջանը։ Ժամանակն անցկացնում էի պատմությունը ուսումնասիրելով։ Հետևում էի, թե արդյո՞ք չեն ոչնչացվում ազգային, կրոնական կամ ցեղային խմբերը։ Ճշմարտությունը մեզ հասավ միայն պատերազմից հետո։ Ինչպես հայտնի է, պատերազմի ժամանակ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր, և գերմանական նվաճողական իշխանությունները խստագույնս գրաքննության էին ենթարկում Հայաստանում տեղի ունեցող արյունալի իրադարձությունների մասին լուրերը։ Գերմանական կառավարության պաշտոնական փաստաթղթերը հրատարակվեցին միայն պատերազմի ավարտից հետո։ Թուրքիայում մեկ միլիոն 200 հազար հայ սպանվել էր միայն այն պատճառով, որ եղել էր քրիստոնյա»։ Պատերազմից հետո շուրջ 150 թուրք հանցագործներ ձերբակալվեցին ու աքսորվեցին Մալթա կղզի։ Հայերը պատգամավորներ ուղարկեցին Փարիզի խաղաղության կոնֆերանս։ Բայց մի օր էլ այդ պատգամավորները լրագրում կարդացին, որ պատերազմի թուրք հանցագործները ազատ են արձակվել. «Ես ցնցված էի։ Ազգը ոչնչացվել էր, իսկ հանցագործները ազատված էին։ Ինչո՞ւ են պատժում անհատին, երբ մեկը սպանում է մյուսին։ Ինչո՞ւ միլիոն հոգու սպանությունը պետք է լինի նվազ հանցագործություն, քան մեկ մարդու սպանությունը»[17]։

Լեմկեի խոստովանությամբ հատկապես հայկական ցեղասպանությունն է նրան դրդել իր կյանքը նվիրաբերելու ցեղասպանության հանցագործության դեմ մարտնչելու գործին։ «Ես ավելի ու ավելի էի ներդաշնակում այն զոհերի տառապանքներին, որոնց թիվը աճում էր՝ պատմությունը ուսումնասիրելուս զուգահեռ։ Ես ըմբռնեցի, որ հիշողության ֆունկցիան ոչ միայն այն է, որպեսզի դասակարգի անցյալի դեպքերը, այլև խթանի մարդկային խիղճը։ Շատ շուտով ի հայտ եկան ցեղասպանության ժամանակակից տեսակները, որոնք նույնն էին ինչ հայերի 1915 թ. ջարդերը... Ես վճռեցի դառնալ իրավաբան և սկսեցի աշխատել այն ուղղությամբ, որպեսզի ցեղասպանությունը օրենքից դուրս դրվի»[18]։

«Իմ գիտակցության մեջ,— շարունակում է Լեմկեն,— հասունացավ մի համարձակ ծրագիր։ Խնդիրն այն էր, որ Թուրքիան վավերացնի Կոնվենցիան՝ սկզբնական 20 մասնակիցների թվում։ Դա կլիներ հայկական ցեղասպանության դիմաց մեղքի քավություն։ Բայց ինչպե՞ս հասնել այդ ծրագրի իրականացմանը»։

Ու թեև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ռ. Լեմկեն ինքն էլ դարձավ ֆաշիստական ոճրագործության զոհը և կորցրեց մոտ հինգ տասնյակ հարազատների, այդ ողբերգությունը, սակայն, նրա գիտակցության մեջ չթուլացրեց հայկական ցեղասպանության սարսափները։ 1950 թ. հուլիսի 26-ին Թ. Սթիվենսին հղած նամակում նա գրել է. «Այդ կոնվենցիան խղճի խնդիր է և շարիքի նկատմամբ մեր անձնական վերաբերմունքի փորձություն։ Ես գիտեմ, որ հուլիս—օգոստոսը շատ շոգ է աշխատելու համար, բայց չուզենալով լինել խիստ զգայական կամ խուսափելով գեղեցկախոսությունից, այնուամենայնիվ կասեմ. եկեք չմոռանանք, որ այս օրերի շոգը ավելի ծանր չէ մեզ համար, քան Աուշվիցի և Դախաուի վառարանների տապը և կամ Հալեպի անապատի սպանիչ շոգը, որը մոխրացրեց 100 հազարավոր հայ քրիստոնյաների՝ 1915 թ. ցեղասպանության զոհերի մարմինները»։[19]

* * *

ԳՖՀ-ում աշխատող թուրք բանվորների օրգան «Մյուշդեյլե» թերթի վկայությամբ, հայկական ցեղասպանության ժխտումը անհեթեթություն է, հայերը Թուրքիայում ոչնչացվել են։

«Վաշինգտոն պոստ» թերթը 1983 թ. մայիսի 31-ին տպագրեց Ռ. Քոհենի հոդվածը։ Մերկացնելով հայ ժողովրդի պատմությունը կեղծելու թուրքական ջանքերը, Ռ. Քոհենը գրում է. «Յանկացած գենոցիդի վերջին զոհը արդարությունն է»։ Իսկ «Լոս Անջելես Թայմսը» 1983 թ. նոյեմբերի 16-ին տպագրեց «Թուրքիան պետք է ընդունի իր պատմության սարսափները» հոդվածը՝ թուրքական կառավարությանը կոչ անելով ընդունելու հայկական ցեղասպանության հավաստիությունը և դրանով իսկ վերականգնելու իր կորցրած հեղինակությունը։

1984 թ. ԱՄՆ-ում հրատարակվեց «Պատմության համար» ժողովածուն։ Նրանում տպագրված էին կոնգրեսի զույգ պալատներում 89 կոնգրեսմենների ելույթների ամբողջական տեքստերը, որոնք բոլորը գտնում են, որ հայկական ցեղասպանությունը պատմական իրողություն է և անհնար է այն ժխտել։ Բերվում էր ներկայացուցիչների պալատի կողմից այս հարցի վերաբեր-

յալ ընդունված բանաձևը։ Վերջինիս մեջ նշվում է, որ ԱՄՆ-ը պետք է ճանաչի հայկական ցեղասպանության փաստը, ելնելով այն բանից, որ արևմտահայության նկատմամբ գործադրված ոճիրը պլանավորել և իրականացրել է Թուրքական պետությունը, որի հետևանքով զոհակահարվել է 1,5 միլիոն հայ և ոչնչացվել երանց 2500-ամյա հնություն ունեցող հայրենիքը, որ հայերի ցեղասպանությունը հաստատված է Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի որոշակի շրջանների կողմից, որ այն ժամանակին դատապարտել է նաև ԱՄՆ-ի կոնգրեսը։

Ամերիկյան «Արմտ ֆորսիզ ջոռնել ինտերնեյշնլ» պարբերականի 1986 թ. ապրիլյան համարում տպագրված մի հոդվածում նշվում է, որ թեև Թուրքական նեղուցները Սովետական Միության համար միակ ելքն են դեպի էգեյան ծով և պատերազմի ժամանակ նեղուցներն իր ձեռքում պահելով Թուրքիան ԱՄՆ-ի կարևոր դաշնակիցը կդառնա, բայց «արժե՞ ստացվելիք առավելությունների համար վճարել Թուրքիայի պահանջած գինը»։ Իհարկե, ոչ։ Որովհետև, երբ հարկ լինի «ՆԱՏՕ-ն կարող է օդային հարձակումով փակել նեղուցները։ Նույնիսկ, եթե նեղուցները բաց մնան, Սև ծովից ծովային ճանապարհով ներխուժողներին կասեցնելու վճռական կետը էգեյան ծովում է», իսկ այստեղ Հունաստանն է։ «Որոշակի է, որ այս երկու թունդ մրցակիցներից ոչ թե Թուրքիան, այլ Հունաստանն է ավելի կարևոր Արևմուտքի համար»։

Հայտնի է, որ Թուրքիայում են տեղակայված արևմտյան լրտեսական ձայնագրող կայանների զգալի մասը։ Դրանց կորուստն անհարմարություններ կստեղծի, բայց, հոդվածագրի կարծիքով, արդի տեխնիկայի հնարավորությունների պայմաններում այլևս ճիշտ չէ, որ այդ կայաններն անփոխարինելի են։

Թուրքիան ոչ էլ դեպի Մերձավոր արևելքի նավթահանքերը տանող ուղիներին վերահսկող պետություն է։ Նա գլխավոր ուղղությունից դուրս է գտնվում։

Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին տարիներին ԱՄՆ-ի գլխավոր շտաբը ծրագրում էր «պատերազմի դեպքում հարձակվել Սովետական Միության վրա։ ԱՄՆ-ի զինված ուժերը պետք է Թուրքական ցամաք հանվեին Ալեքսանդրեթի ծոցում և Անատոլիայով շարժվեին դեպի Սովետական Հայաստան ու Վրաստան և ապա՝ Կովկաս։ Արևմուտքը կհայտնվեր Սովետական Միության կենտրոնում՝ Ուրալից արևմուտք, առանց հարկադրված լինելու հազար մղոն տարածության վրա կռվելու Արևմտյան Եվրոպայում։

Միացյալ Նահանգների այս ծրագիրը դեռևս իր ուժը չի կորցրել և Թուրքիան հույս է փայփայում, որ կտեսնի իր ավանդական երազի իրականացման հնարավորությունը, այսինքն՝ Թուրքիայից մինչև Կենտրոնական Ասիա և Չինաստան ձգվող համաթուրքական պետության ստեղծումը»։

Այնուհետև հոդվածում կարդում ենք. «Առանց երկմտելու կարելի է ասել, որ հայկական ցեղասպանությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված հրեական ցեղասպանության չափ փաստերով հիմնավորված է։ Անհերքելիություն է այն ուրանալ»։

Թուրքիայի դիրքը, եզրակացնում է թերթը, կենսական և վճռական է համաթուրանականության համար, քանի որ Անատոլիայի և Կենտրոնական Ասիայի թուրքական սովետական հանրապետությունների միջև ընկած է Հայաստանի Սովետական Հանրապետությունը, որը պետք է բնաջնջվի, որպեսզի իրականանա Թուրքիայի հույսերը։ «Թուրքիան Ամերիկային մեղսակից է դարձնում ոչ միայն անցյալում գործած, այլև ապագայում հավանական ոճիրներին»[20]։

1983 թ. հոկտեմբերի 17—18-ը Բրյուսելում Եվրոպական պառլամենտի քաղաքական հանձնաժողովը ընդունեց հետևյալ բանաձևը.

Պահանջում է Եվրոպական տնտեսական խորհրդի մինիստրների խորհրդից.

ա) հայտարարել գենոցիդի ընդունման մասին.

բ) հասնել Թուրքական կառավարության կողմից 1915 թ. գենոցիդի պատմական փաստի ընդունմանը.

գ) համոզել Թուրքիայի կառավարությանը, որ Թուրք-հայկական պրոբլեմի արդար ու հիմնավոր լուծումը հնարավոր է միայն քաղաքական երկխոսության միջոցով.

դ) հասնել ՄԱԿ-ի կողմից նույնատիպ դեկլարացիայի ընդունմանը[21]։

Փարիզի թուրքական հյուպատոսության վրա 1981 թ. սեպտեմբերի 24-ին հարձակում գործած հայերի դատավարությանը, որ տեղի ունեցավ 1984-ի հունվարին, ֆրանսիացի հայտնի ռեժիսոր Անրի Վերնոն ուղարկեց հետևյալ նամակը. «Ես այս դա-

բաշրջանի առաջին գենոցիդից փրկվածներից եմ։ Սպանվեց 1,5 միլիոն մարդ միայն այն բանի համար, որ մի ժողովուրդ որոշել էր ոչնչացնել մյուսին, կոտորածները բարձրացնելով «պետական քաղաքականության» աստիճանի։

1915-ին դեռևս չկային դիահրկիզարաններ։ Այն ժամանակ սահմանափակվել են նրանով, որ զոհերին կանգնեցրել են բռնագաղթվողների երկար շարքերում և նրանց խեղդել են ճանապարհին։ Իմ ընտանիքի մի մասը եղել է այդ մահվան քարավանների կազմում։

Տասնամյակներ շարունակ ես հանդիպել եմ եղեռնից վերապրած, ամբողջ աշխարհով սփռված հայերի, որոնք ողբում էին արյունոտ արտասուքով և խաղաղ միջոցներով դիմում էին ընդհանուրի խղճին, որպեսզի արդարությունը վերականգնվի։ Ես հանդիպել եմ նաև երեկվա դահիճների երեխաներին... աշխատելիս՝ ստեղծելու պատմության կեղծման ընդարձակ պլան, խրախուսված ամբողջ աշխարհի անտարբերությունից։ Այս մարդկանց համար քիչ էր ողջ աշխարհի մոռանալը։ Նրանց պետք է ժողովուրդների մեծ գրքից ջնջել այն բառերը, որոնք իրենց դատապարտում են։ Բարեբախտաբար Գուտենբերգը նրանց կանխել էր, իսկ աշխարհի բոլոր գրքերն անհնար է այրել։

1971 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում Թուրքական ներկայացուցիչը առաջարկեց «գենոցիդը» փոխարինել «ցավալի դեպքեր» արտահայտությամբ։ Այդ առաջարկությունը մերժվեց՝ 1979 թ. անցնելով հանձնաժողովից մինչև ենթահանձնաժողով, առևտրից մինչև ահաբեկում, հրթիռների տեղադրումից մինչև հանցագործությունը մոռանալու համար մղվող պայքարի իննամյա երկար ճանապարհ, գենոցիդը վերածվեց երրորդական կարևորություն ունեցող պաշտոնական փաստաթղթի»[22]։

Նույն դատավարությանը Շ. Աղնավուրը գրեց.

«Ամերիկացիները խոստովանեցին հնդիկների, գերմանացիները՝ հրեաների ցեղասպանությունը։ Հայերը դեռևս սպասում են մարդկային իրավունքի իրենց պատմության գիրքը գրելու համար՝ հենվելով պատմական փաստի ընդունման վրա։ Գենոցիդի ժխտումը դարձել է հայերի ազգային արժանապատվության ժխտում և հանդիսանում է նրանց միակ և ամենաահավոր ոչնչացումը։

Երեկ նրանք ընկան առանց մի բառ ասելու... Այսօր նրանց թոռները գլուխ են բարձրացնում, որպեսզի հարկադրեն ողջ աշխարհին հարգել... իրենց ազգային արժանապատվությունը»[23]։

«Յումանիտեն» 1984 թ. հունվարի 9-ին ինֆորմացիա տպագրեց Վեն քաղաքի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ պրեզիդենտ Ֆ. Միտերանի հանդիպման մասին։ Պրեզիդենտը հայտարարեց, որ «հայերն ապրել են գենոցիդի ողբերգական մեծ դրամա և անհնար է ջնջել այդ գենոցիդի հետքերը»։

1. Լրաբեր, 4 մայիսի 1985 թ.։
2. Արև, 15 մայիսի 1985 թ.։
3. Լրաբեր, 4 մայիսի 1985 թ.։
4. Արձագանք, 8 մարտի 1985 թ.։
5. «Լիբանանահայության ձայն» ռադիոկայան, 24 հունվարի 1982 թ.։
6. Լռության ոճիր, (Le Crime de silense..., p. 335).
7. Զարթոնք, 5 փետրվարի 1985 թ.։
8. Լրաբեր, 20 ապրիլի 1985 թ.։
9. Ջահակիր, 2 մայիսի 1985 թ.։
10. Թուրքական հեռուստատեսություն, 17 ապրիլի 1984 թ.։
11. Թուրքական հեռուստատեսություն, 21 մայիսի 1985 թ.։
12. Նույն տեղը, 17 ապրիլի 1984 թ.։
13. Սովետական Հայաստան ամսագիր, 1986 թ., դեկտեմբեր։
14. Նույն տեղը։
15. Նույն տեղը։
16. Նույն տեղը։
17. Նույն տեղը։
18. Նույն տեղը։
19. Նույն տեղը։
20. Զարթոնք, 20 հունիսի 1986 թ.։
21. «Ամերիկայի ձայն» ռադիոկայան (հայերեն), 19 դեկտեմբերի 1983 թ.։
22. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1986, № 1, էջ 46—47։
23. Նույն տեղը, էջ 47—48։

ՊԱՆՕՍՄԱՆԻԶՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄ

Արդեն նշվել է, որ Օսմանյան կայսրության տիրապետող գաղափարախոսություններն են եղել պանօսմանիզմն ու պանիսլամիզմը։ Կայսրության գոյության վերջին տարիներին ծնունդ առավ նաև պանթուրքիզմը, որ նույնպես դարձավ Թուրքիայի իշխող դասակարգերի գաղափարախոսությունը։ Մեր օրերում Թուրքական պաշտոնական շրջանները վերոհիշյալ երեք գաղափարախոսություններին տրվում են միաժամանակ կամ առան-

ձին-առանձին, նայած ովյալ պահին դրանցից ո՞րն է ի վիճակի ավելի արդյունավետ ծառայելու իրենց շահերին։

Պանթուրքիզմի ամենաբնորոշ արտահայտություններից մեկը Թուրքիայում քուրդ ժողովրդի նկատմամբ իրականացվող խտրականության ու գենոցիդի քաղաքականությունն է։

Ուտրեխտի համալսարանի պրոֆեսոր, խոշոր քրդագետ Մարտին Վան Բրուինեսենը, խոսելով ժամանակակից Թուրքիայում քրդերի վիճակի մասին, ընթերցողների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ Թուրքիայի արևմտյան և արևելյան շրջանների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման միջև այնպիսի խոշոր տարբերություններ կան, որ կարծես գործ ունես զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող առանձին երկրների հետ։

«Երբ մարդ հանապարհորդում է Թուրքիայի արևմտյան շրջաններից դեպի արևելյան մաս,— գրում է նա,— կարծես ամբողջովին այլ երկիր է մտնում, որը շատ ավելի աղքատ է, նախնադարյան մակարդակի վրա և հասարակական հակասություններով լի»։ Այս շրջանների գյուղացիների մեծ մասը ապրում է ֆեոդալական շահագործման ու ճնշումների ներքո։ Տիրապետողը շարունակում են մնալ աշիրեթական հարաբերությունները, երբ քուրդ աշխատավորությունը ամբողջությամբ ենթարկված է թոռունների ու ցեղապետերի կամքին ու շահերին։ «Քուրդ գործիչները գտնում են,— շարունակում է հեղինակը,— որ Թուրքական պետությունը կանխամտածված ձևով արգելակում է արևելյան նահանգների զարգացումը, վախենալով, որ դրանց սոցիալական ու մշակութային առաջընթացը կարող է ուժեղացնել քրդերի ազգային մղումները»[1]։

Խոսելով Արևմտյան Հայաստանի տարածքի ազգաբնակչության մասին, Բրուինեսենը նկատում է. «Այս շրջանների ազգաբնակչության մեծամասնությունը ոչ թե Թուրքերեն, այլ քրդերեն են խոսում»։ Ասվածից հետևում է, որ ոչ միայն XVI—XIX դարերում, ոչ միայն XX դարի սկզբներին, այլև գալիք հարյուրամյակի նախաշեմին Արևմտյան Հայաստանում Թուրքերը կազմել և կազմում են փոքրամասնություն, չնայած դարեր շարունակ Թուրքական իշխանությունները ամեն տեսակ դիվային միջոցներով ճգնել են Արևմտյան Հայաստանում Թուրքերի թվական գերազանցություն ստեղծել։ Թուրքական կառավարող շրջանները ոչ միայն չեն նպաստում քրդերի զարգացմանը, այլև արհամարհում են նրանց ազգային լեզուն, մշակույթը*[2]։

«Քրդերեն խոսելը ինքնին հետամնացության նշան է»՝ լկտի ցինիկությամբ ու մի ամբողջ ժողովրդի նկատմամբ անսանձ արհամարհանքով ասում են Թուրք քաղաքական գործիչներն ու պատմաբանները։ Նրանք գտնում են, որ քրդերին պետք է Թուրքացնել, իսկ այդ գործընթացը հեշտացնելու և արագացնելու նպատակով կեղծում են պատմությունը, հայտարարելով, թե նրանք «լեռնային Թուրքեր են», բայց որովհետև հետամնաց են, դրա համար են խոսում մի լեզվով, որ Թուրքերենի, արաբերենի և պարսկերենի խառնուրդ է։ Քրդերենով անհնար է բարդ և իմացական բարձր մակարդակի գաղափարներ արտահայտել։ «Հետևաբար, այս նախնական և հետամնաց ժողովրդին Թուրքերեն լեզու սովորեցնելը առաջին քայլն է նրան (քուրդ ժողովրդին) մարդկային մակարդակի հասցնելու ուղղությամբ»։ Արգելված են քրդական բոլոր հրատարակությունները, խստորեն պատժվում են բոլոր նրանք, ում մոտ քրդերեն գրքեր ու ձայնագրություններ են հայտնաբերում[3]։

Այսպիսով, Թուրքերը հայերի հետ իրենց հաշիվները մաքրելուց հետո, հայոց լեզվի, հայ մշակույթի և հայ ժողովրդի գոյության իրավունքը մերժելուց հետո ժխտում են նաև քրդերին՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, ծաղրում նրանց լեզուն ու մշակույթը։

Թուրք ազգայնամոլները զարմանում ու դայրանում են, որ քրդերը «քաղաքակրթվել չեն ուզում», այսինքն Թուրք դառնալ չեն ուզում և կամենում են քուրդ մնալ։ Նրանց կարծիքով դա հետամնացություն է և Թուրքերի համար ուղղակի անհասկանա-

* Վերջին ժամանակներս Թուրքական կառավարությունը նոր մոտեցում է դրսևորում Արևմտյան Հայաստանի նահանգների նկատմամբ։ 1984 թ. օգոստոսին հանդես գալով Կարսում, Թ. Օզալը հայտարարեց. «Վերականգնման կարիք ունեցող նահանգների մեջ տասը առաջնահերթ նշանակություն ունեն։ Դրանց թվում է նաև Կարսը։ Վերջին որոշումով այստեղ ներդրումները պետք է կատարվեն 100 տոկոս գեղչով...»

Օզալի այս հայտարարությունը չպետք է ընկալել որպես քրդերի նկատմամբ նոր քաղաքականություն։ Պարզապես կառավարությունը, վերջապես, վճռել է տնտեսապես յուրացնել Արևմտյան Հայաստանը և, այն բնակեցնելով Թուրք ազգաբնակչությամբ, ավարտել հարյուրամյակներ տևող էքսպանսիան։

լի է, թե ինչու են այդ հետամնաց «քրդացած թուրքերը» ազատագրական պայքար մղում թուրքական լծից ազատվելու և կամ ներքին ինքնավարություն ունենալու համար։

Թուրքական իշխանությունները դաժան հաշվեհարդար են տեսնում քրդական ազգային շարժումների ու նրանց գործիչների հետ։ Նրանք ընդհանրապես մղձավանջ են ապրում, երբ լուր են ստանում երկրի այս կամ այն հպատակ ժողովրդի ազատասիրական տրամադրությունների մասին։ «Վախենալով,— գրում է Բրուինեսենը,— որ Ռուսաստանի հետ ռազմական ընդհարման ժամանակ հայերը կարող էին 5-րդ շարասյուն կազմել, թուրքական կառավարությունը 1915 թ. հարյուր հազարավոր հայերի տեղահան արեց և կոտորեց։ Նույն բանն է կատարվում նաև քրդերի հետ։ Քրդերով բնակեցված շրջանների ստրատեգիական կարևոր դիրքը՝ Սովետական Միության սահմաններին շատ մոտ լինելը, Իրաքի նավթահորերը և այս ամենի մերձավորությունը Արաբական ծոցին, քրդական որևէ անջատողական շարժման հավանականությունը խիստ մտահոգում է Թուրքիայի ղեկավարներին և նրա դաշնակից ամերիկյան իշխանություններին»։ Այս դաժան քաղաքականության գլխավոր պատճառը, սակայն, պանթուրքիզմի գաղափարախոսությունն է, որ Թուրքիայում դարձել է պետական կրոն[4]։

1985 թ. նոյեմբերին Փարիզում հանդես գալով ժուռնալիստների առաջ, Օզալը հայտարարեց. «Քրդերն արտասահմանում է, որ իրենց քուրդ են անվանում։ Ինձ համար դրանք մարքսիստներ են... Չենք կարող թուրքին ու քրդին իրարից զանազանել... Այդ երկու համայնքների տարբերությունները ավելի շատ չեն, քան այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն Ֆրանսիայի հարավի և հյուսիսի բնակչության միջև»։ Հետևաբար, քրդերի ինքնավարության ձգտումը անիմաստ ու վնասակար բան է[5]։

1930 թ. քրդական ապստամբությունը մեծ դաժանությամբ ճնշվեց։ Յուրաքանչյուր քրդական գյուղ վերածվեց բաց բանտի, որն իրեն կից ոստիկանական հենակետի հսկողության տակ էր։ Արգելվեց քրդական լեզուն ու տարազը, սովորություններն ու մշակույթը։ Արգելվեց նույնիսկ քրդական անունների գործածությունը։ Բազմաթիվ քրդեր տեղափոխվեցին երկրի այլ մասեր, իսկ նրանց փոխարեն բնակեցվեցին արևմուտքից բերված մուհաջիրները։ Ամբողջ ճակատով գործողության մեջ դրվեց

քրդերին ձուլելու պետական քաղաքականությունը։ Արգելվեց «Քրդստան» անունը, որի փոխարեն թույլատրվում էր օգտագործել «Արևելք» արտահայտությունը։ Փակվեցին քրդական բոլոր թերթերն ու հրատարակությունները, դպրոցներն ու մշակութային օջախները։

«Սփոթլայդ» թերթը 1984-ի նոյեմբերին գրեց. Թուրքիայում քրդերի քուրդ մնալու ցանկությունը «վարձատրված է մահապատիժներով, բռնությամբ, զանազան վայրերի ամբողջ ազգաբնակչությունը երկրի մի կողմից մյուսը բռնագաղթի տանելով և նրանց լեզվի վրա դրված արգելքով»[6]։

Հեղաշրջումից անմիջապես հետո Էվրենը հայտարարեց, որ «իր նպատակներից մեկը քրդական անջատողականության արմատախիլ անելն է»[7]։ Քրդերին սպառնում են, որ կարժանանան հայերի բախտին։ Թուրքիայի արդի կառավարողները բազմիցս հայտարարել են, որ պետք է խորտակել քրդական շարժումները և վերացնել քրդերի ազգային գիտակցությունը։ Քրդաբնակ շրջաններում գործողության մեջ է արտակարգ դրությունը։ Թուրքական բանակի հրոսակները մեծ թվով քրդական գյուղեր ամբողջովին ոչնչացրին, հարյուր հազարավոր մարդիկ ձերբակալվեցին ու հարցաքննությունների անվան տակ խոշտանգվեցին, շատերն առանց դատ ու դատաստանի մահապատժի ենթարկվեցին։ Բանտերում են գտնվում քրդական կազմակերպությունների գրեթե բոլոր ղեկավարներն ու դրանց անդամների մեծ մասը, թվով ավելի քան 17 հազար մարդ։ Ուժեղացվեց ուծացման քաղաքականությունը։ Քրդական շրջաններ ուղարկվեցին մեծ թվով լրացուցիչ զորամիավորումներ, թուրքական բանակի յուրաքանչյուր երկրորդ զինվորականը ծառայում է արևելյան նահանգներում։ Բանակն ու ոստիկանները քրդական գյուղերում կատարում են բազմատեսակ վայրագություններ ու անբարոյականություններ։ Նպատակը նույնն է ինչ տասնամյակներ առաջ հայերի նկատմամբ՝ հարկադրել ոչ թուրք ազգաբնակչությանը կա՛մ թուրքանալ և կա՛մ հեռանալ, հալածանքների, խոշտանգումների ու թալանի միջոցով հյուծել քրդերին, նվազեցնել նրանց թիվը և այդ շրջանում ապահովել թուրքերի թվական գերակշռությունը։ Եվ իսկապես, զգալի թվով քրդեր հարկադրված թողեցին իրենց գյուղերը, գնացին արևմտյան շրջաններ և բնակություն հաստատեցին քաղաքներում, որտեղ ևս պարբերաբար ենթարկվում են հալածանքների ու ստորացումների։ Թուրքական

իշխանություններին հաջողվում է իրենց կողմը գրավել քուրդ շատ ցեղապետերի և նրանց օգտագործել քրդերի ազատագրական ձգտումները խեղդելու համար։

Սակայն քաղաքական, տնտեսական և ազգային ճնշման տակ գտնվող ժողովրդի ազատասիրական ձգտումներն ընդմիշտ խեղդելն անհնար է, մանավանդ, երբ խոսքը 22—23 միլիոնանոց մի ժողովրդի մասին է (ըստ ֆրանսիական լրագրող, քրդագետ Ժան Պերտոլինոյի ժամանակակից Թուրքիայում բնակվում է 12 միլիոն, Իրանում՝ 6, Իրաքում՝ 3, Սիրիայում՝ 1 միլիոն քուրդ)։ Քուրդ ժողովուրդը տասնամյակներ շարունակ կենաց ու մահու կռիվ է մղում իր գոյության իրավունքի համար։ Այդ պայքարը գնալով ավելի մեծ թափ ու ընդգրկումներ է ստանում։

1984 թ. հոկտեմբերի սկզբներին ելույթ ունենալով Կարսում, պրեզիդենտ Էվրենը քուրդ հայդուկների գործողությունների մասին ասաց. «Օգոստոսի 15-ին... այդ դավաճանները մի հարձակում կատարեցին... Այդ թափթփուկները ցանկանում են իրենց կողմը գրավել այստեղի բնակչությանը և երկրում տարածել մարքս-լենինյան կոչվող գաղափարախոսությունը, իսկ այնուհետև կիսել, մասնատել երկիրը, գուցե մի մասը տալ հայերին։ Նրանց նպատակը սա է»[8]։

Քրդական շարժումներն այնպիսի ծավալներ ընդունեցին, որ այն հատուկ քննարկման առարկա դարձավ Ազգային ժողովի գլխավոր խորհրդում։

Ընդվզումները չախչախելու նպատակով մշակվեց «Արև» անունը կրող մարտական գործողությունների պլան, որի իրականացմանը, ըստ թուրքական կառավարության մտադրության, պետք է մասնակցեին նաև հարևան պետությունների ռազմական ուժերը։ Թուրքական կառավարությունը զինեց երկրի հարավարևելյան շրջանների 15—50 տարեկան բոլոր թուրք գյուղացիներին, գյուղերում սահմանեց մշտական հերթապահություն[9]։

Մուշի և Բիթլիսի քրդերը թուրքերի դեմ պատերազմական վիճակում են։ 1984 թ. օգոստոսի 15-ին քրդական աշխատավորական կուսակցության մարտիկները Սղերդի և Հաքյարի պետական ուժերի դեմ «խփիր-փախիր» մարտական գործողություններ սկսեցին։

Տեղի ունեցավ ավելի քան 70 ընդհարում, որի հետևանքով երկու կողմերն էլ զոհեր տվեցին։ Ձերբակալվեց 500 քուրդ, որոնցից 10-ը մահապատժի ենթարկվեց։ Սկսվեցին զանգվածային խուզարկություններ, մանրակրկիտ հետախուզվում էին քաղաք կամ գյուղ տանող բոլոր ուղիները։ Լեռնագագաթներում ոստիկանատներ հիմնվեցին, որտեղից զինվորները գիշեր ու զոր հսկում են ճանապարհներն ու կիրճերը։ Բանակը, ահաբեկիչներ որոնելու անվան տակ, քրդաբնակ գյուղերում խժդժություններ է կատարում։ Նույնիսկ արահետներում կարելի է հանդիպել մինչև ատամները զինված ոստիկանական եռյակների։ Դեպի լեռներն են շարժվում ավազե պարկերով պաշտպանված ավտոմեքենաներ՝ տասական զինվորներով։

Այդպես է։ Շուրջ 100 տարի առաջ թուրք կառավարողները քուրդ գյուղացիներին էին զինում հայերի դեմ, իսկ այժմ թուրք գյուղացիներին են զինում քրդերի դեմ։ Քուրդ ժողովրդի դեմ սկսած պետական տեռորը իր գագաթնակետին հասավ 1984 թ. երկրորդ կեսին։ Ռազմական դատարանները մեկը մյուսի հետևից մահապատժի ու երկարաժամկետ բանտարկության դատապարտեցին մեծ թվով քրդերի։ Դիարբեքիրում տեղի ունեցած միայն մեկ դատավարության ժամանակ դատախազը մահապատիժ պահանջեց 106 «մեղադրյալների» համար։ Քուրդ հայրենասերներով լցված Դիարբեքիրի բանտը հիշեցնում է ֆաշիստական համակենտրոնացման ճամբար։ 1984 թ. հունվարի 6-ին, ի պատասխան կալանավորների բողոքի, բանտապահները նրանց վրա կրակ բացեցին, մեծ թվով մարդիկ սպանվեցին և վիրավորվեցին։

Օգոստոսի 14-ին իշխանությունները քրդական կոտորածներ կազմակերպեցին ոչ միայն Թուրքիայում, այլև Իրաքի ու Իրանի քրդաշատ վայրերում։ Կոտորածներն անձամբ ղեկավարում էին բանակի գլխավոր շտաբի պետն ու ներքին գործերի մինիստրը։ Հայդուկների հետ միասին կոտորվում էր նաև քրդական խաղաղ բնակչությունը։ Էվրենը հեռուստատեսությամբ, ի լուր բոլորի, հայտարարեց, որ զենք վերցրած քրդերը պետք է ոչնչացվեն առանց դատ ու դատաստանի։

Քրդական հարցը (եթե ոչ ընդմիշտ, ապա գոնե տևական ժամանակով) «փակելու» համար Թուրքիան համաձայնագիր կնքեց Իրաքի հետ, ըստ որի քրդական շարժումները չախչախելու համար երկու երկրների բանակները կարող էին միմյանց տարածքները մտնել 5 կմ խորությամբ, ինֆորմացիա փոխանակել այդ շարժումների ու դրանց դեմ իրականացվող

միջոցառումների մասին, իրականացնել համատեղ գործողություններ։

Իրանը վերոհիշյալ համաձայնագիրը համարեց իր դեմ ուղղված ակտ, որովհետև, եթե քրդերին «զսպելու» պարտականությունը դրվեր Թուրքիայի վրա, Իրաքը հնարավորություն էր ստանում իր ռազմական ողջ ուժերը կենտրոնացնել Իրանի դեմ։ Իրանի կառավարությունը հայտարարեց, որ «Սադամ Հուսեինի վարչակարգին նպաստող ամեն մի քայլ մեր դեմ է ուղղված», իսկ Թուրքիայի «նման քայլերը ավելի են սրում ռեգիոնին սպառնացող վտանգը»։

Իրանը Թուրքիային սպառնաց բոյկոտի ենթարկել Թուրքական ապրանքները և փակել Անկարա-Թեհրան մայրուղին։ Թուրքիան հարկադրված էր Իրաքի տարածքում դադարեցնել քրդերի հետապնդումը։ Միաժամանակ 1984 թ. նոյեմբերի 29-ին Թուրքիայի և Իրանի միջև քրդերի դեմ ուղղված համաձայնագիր կնքվեց։

Փոխանակ ասելու ճշմարտությունը, որ քրդական շարժումները հետևանք են քրդերի ծանր վիճակի, պրեզիդենտ Էվրենն իր ելույթներում այդ շարժումները Սիրիայի և Սովետական Միության տարածապաշտական դիտավորությունների արտահայտություն է համարում։

Արձագանքելով Թուրքիայի պրեզիդենտին, արևմտյան մամուլը ողբ բարձրացրեց «Մոսկվայի զենքով զինված քրդերի կողմից հարձակման ենթարկված» Թուրքիայի շուրջը։ Դեռ ավելին, «քրդերին մարդկային ուժով օգնում են հայերը»[10]։

Պրեզիդենտ Էվրենը համոզվելով, որ քրդական շարժումները «մտահոգիչ» են դառնում, հրամայեց լրացուցիչ 30 հազարանոց բանակ ուղարկել Բիթլիսի վիլայեթ և Սիրիային սահմանամերձ շրջաններ։ Սկսվեցին քրդաբնակ գյուղերի բարբարոս ռմբակոծությունները։ Թուրքիայի կառավարությունը պնդում է, որ ռմբակոծությունների ժամանակ զոհվել է միայն հարյուր քուրդ պարտիզան, սակայն ճշմարտությունն այն է, որ սպանվել են մեծ թվով կանայք ու երեխաներ։

«Միլիեթը» 1986 թ. ապրիլի 10-ին մի հոդված տպագրեց քրդական շարժման մասին, որտեղ գրված էր. «Մաքրագործումի վերջին գործողությունների ընթացքում ձեռք են բերվել փաստաթղթեր, որոնցից պարզվում է, որ՝ 1. քրդական հրոսակների նպատակն է ստեղծելու ժողովրդական բանակ, 2. փակել ԱՄՆ-ին ու Ատլանտյան պակտին տրամադրված ռազմական բազաները, 3. հաշվեհարդարի ենթարկել Թուրքական պետության քաղաքական կազմակերպություններին, 4. վերջ տալ Թուրքերենի գործածությանը, 5. հեղափոխական շարժման միջոցով տապալել ներկա իշխանությունը»։

Դժվար չէ նկատել, որ նման «փաստաթղթերի» մեծ մասը շինծու են, սարքված Թուրքական համապատասխան օրգանների կողմից և նպատակ ունեն, մի կողմից, վարկաբեկել քուրդ ղեկավարությանը և, մյուս կողմից, արևելյան և հարավարևելյան նահանգների բնակչությանը զգուշացնել, որ քուրդ հայդուկների հետ չհամագործակցեն։ Այսինքն դրանք ուղղված են քուրդ և Թուրք աշխատավոր զանգվածների համերաշխության դեմ։ Եվ դա պատահական չէ, որովհետև Թուրքական ձախակողմյան ուժերը, մանավանդ Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը, համագործակցում են քրդական ազատագրական շարժման հետ և իր գործունեության համար որպես հենակետ ընտրել է քրդական շրջանները։

* * *

Մերձավոր արևելքի երկրների հետ Թուրքիան իր հարաբերությունները այսօր էլ ձգտում է կառուցել պանօսմանիզմի ավանդույթների վրա։ Նրա արտաքին քաղաքական գործունեության ոլորտում երբեմն երևան են գալիս դավթողական բնույթի միտումներ, լսվում են կոչեր՝ «ազատելու Ռուսաստանում կախյալ վիճակում գտնվող 50 միլիոն մուսուլմաններին»։ Թուրքական կառավարությունը պատմական անարդարություն է համարում այն, որ Թուրքիան Պակիստանի հետ ընդհանուր սահման չունի։ Դրանով իսկ Թուրքիան ձգտում է դառնալ պանօսմանիզմի գաղափարներն իրականացնող հարվածային ուժը։

Նկատի ունենալով Թուրքիայում գլուխ բարձրացնող և աստիճանաբար պետական պաշտոնական քաղաքականություն դարձող պանօսմանիզմը, Փարիզում արարերեն հրատարակվող «Ալ Մուստակբալ» թերթը 1983 թ. հուլիսի 16-ին մի հոդված տպագրեց, որ սկսվում է այսպես. «Թուրքերն են գալիս։

— Ո՞ւր։

— Դեպի Օսմանյան կայսրության սահմաններն ու մերձավոր շրջանները, որ նրանք լավ գիտեն։

Սա այն նոր կանչն է, որն այս օրերին մարդիկ լսում են Արաբական ծոցի տարբեր կողմերում...»։ Եվ ապա՝ «Երեք տարի անընդմեջ և մինչև օրս շարունակվող իրաք-իրանյան պատերազմը Թուրքիային հնարավորություն տվեց կրկին վերադառնալ Միջին արևելք նույն այն դարպասից, որը նրա երեսին փակվել էր Օսմանյան կայսրության փլուզման ժամանակ»։ «Թուրքերը գալիս են, ոմանք ասում են, որ արդեն փաստորեն եկել են։ Թուրքիան անցած ամիս հայտարարեց, որ Իրաքի կառավարության պաշտոնապես հրապարակված համաձայնությամբ ինքը մտել և 20 կիլոմետր խորացել է Իրաքի սահմաններից ներս, այդ շրջանները «քրդական խլրտումներից» մաքրագործելու նպատակով...»

Իրաք ներխուժելու իր իսկական նպատակները քողարկելու համար Թուրքիայի կառավարությունը հայտարարեց, որ այն ուղղված է ոչ միայն քրդերի, այլև հայերի դեմ, որ իբր Իրաքում «գոյություն ունի հայ-քրդական համատեղ դաշնակցություն՝ ընդդեմ թուրքական ռազմական ռեժիմի»։

Մինչդեռ թուրքական ներխուժումը համաձայնեցված էր Ատլանտյան բլոկի հետ և կազմում է աշխարհագրական այդ շրջանում ԱՄՆ-ի ծրագրերի բաղկացուցիչ մասը։ Եվ ինչպես թերթն է գրում, «դիվանագիտական հավաստի աղբյուրները հաստատում են, որ Թուրքիայի միջամտությունը վայելում է Հյուսիսատլանտյան պակտի պաշտպանությունը և իրականացվում է փորձելու այդ «պակտի կարողությունը՝ դիմակայելու սովետական ներխուժման որևէ փորձին»։ Այսինքն այստեղ ևս «սովետական վտանգի» տխրահռչակ վարագույրի հետևում Արևմուտքն ու նրա արբանյակները իրագործում են իրենց զավթողական, իմպերիալիստական ծրագրերը։ Խոսքը վերաբերում է Մոսուլի և նրա մերձակա շրջանների հարուստ նավթահանքերն իրենց ձեռքը գցելուն։ ԱՄՆ-ը, օգտագործելով այդ շրջանի նկատմամբ Թուրքիայի ձգտումները, նրա առաջ խնդիր է դրել՝ իր վրա վերցնել հարվածային ուժի դերը։ Այդ նպատակով Թուրքիայի արևելյան շրջաններում կառուցվեցին ամերիկյան ռազմական բազաներ, որոնք համագործակցում են Արաբական ծոցի շրջանում գտնվող ԱՄՆ-ի «արագ ծավալման զորամասերի հետ»։

Իսկ Թուրքիան հեռու գնացող նպատակներ ունի։ Նա փոր-

ձում է վերակենդանացնել երիտթուրքերի արտաքին քաղաքականությունը, որի մեջ կարևորագույն տեղ էր գրավում «արաբական աշխարհի թուրքացումը»։ Այս հարցում Թուրքիային խրախուսում է անձամբ ինքը՝ Ռեյգանը։ Նա իր ելույթներից մեկում վստահություն հայտնեց, որ թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունը երկու երկրների հարաբերությունները կհասցնեն նոր «ծաղկման», որովհետև Թուրքիան ԱՄՆ-ի համար արդյունավետ գործիք է «ժամացույցի սլաքը հետ շարժելու դեպի այն օրերը, երբ Իրանն ու Իրաքը արևմտյան դաշինքի մասն էին կազմում, իսկ արաբական աշխարհը ամբողջությամբ Արևմուտքի հովանավորության տակ էր»։

Թուրքիայում կան ուժեր, որոնք ԱՄՆ-ի թելադրանքով ծրագրեր են մշակում Իրանի և Իրաքի քրդերին (նրանց զբաղեցրած տարածքներով) Թուրքիայի գերիշխանության տակ առնելու համար։

Վերոհիշյալ պարբերությանը հետևյալ եզրակացության է հանգում. «Ամենամեծ վտանգն այն է, որ, գուցե, ամերիկացիները ցանկանում են իրենց ձեռքը վերցնել օսմանյան սուլթանի երկար թուրը (թեև այն այլևս չկա) և պատերազմել մուսուլման երիտթուրքական բանակներով (թեև նա դարձել է ատլանտյան)... արաբական հողի վրա, չնայած նա այլևս Օսմանյան կայսրությանը չի պատկանում և ոչ էլ նրա ժառանգներին»։

Մի ակնթարթ վերադառնանք 1912 թ., երբ երիտթուրք ղեկավարներից մեկը խորհուրդ էր տալիս՝ «Թշնամու կրակի դեմ դուրս բերեք արաբներին, աշխատեք ամեն կերպ նրանցից ազատվել, պահպանեք քրդերին, նրանք մեզ պետք կգան հայերի երկրում...»

«Աքդամ» թերթի տնօրեն, հայտնի երիտթուրք Հ. Նուրիին են պատկանում հետևյալ խոսքերը. «...Հարկավոր է թրքացնել արաբական հողերը և արաբ երիտասարդության հոգում սպանել ազգային ազատագրության զգացումը»։ «Արաբները թուրքերի գլխին փորձանք են»։

Մեծ ջանքեր են գործադրվում Հայկական հարցում արաբներին թյուրիմացության մեջ գցելու, երիտթուրքական բարբարոսությունները կոծկելու համար։ Եվ դա հասկանալի է, որովհետև թուրքական յաթաղանի ճնշող, հարստահարող և ոչնչացնող ուժը իրենց մաշկի վրա զգացել են նաև արաբները։ Մեր դարի սկզբներին օսմանյան կառավարությունը փորձեց զանգ-

վածային ոչնչացման ենթարկել նաև արաբներին, և, օրինակ, Դամասկոսի շրջանում նրան այդ հաջողվեց։

«Քաղաքական հատուկ ծրագրով,— գրում է սփյուռքահայ հասարակական գործիչ Հ. Մադեյանը,— Թուրքիայի նախագահը, վարչապետը, մինիստրները, զինվորական ղեկավարները և այլ գործիչներ տենդագին ձևով շարունակում են մեկը մյուսի հետևից այցելությունները արաբական երկրներ, բոլոր միջոցների դիմում են նրանց հետ զարգացնելու և ամրապնդելու բոլոր տեսակի կապերն ու հարաբերությունները, շարաշահելով նրանց կրոնական զգացմունքները և մոռացության տալով իրենց չարագործությունները, հալածանքը, կախաղաններն ու ոճիրները իսլամ և իսլամություն ստեղծած նույն այդ արաբ ժողովրդի նկատմամբ։

Իրենց այցելած երկրներում նրանք անպայման ձգտում են սերմանել գրգռիչ չարախոսություններ, զրպարտություններ և նենգ խեղաթյուրումներ հայության հասցեին, նրա ազգային պահանջների շուրջը»[11]։

1983 թ. հունվար—հունիս ամիսներին, յուրաքանչյուր կիրակի, օրը երկու անգամ թուրքական ռադիոն արաբերեն եթեր էր արձակում հաղորդումներ նվիրված «Հայկական հարցին», «եղեռնին» և «հայկական ահաբեկչությանը», այսինքն՝ 52 անգամ ռադիոլսողին ներարկվում էր կեղծիք ու բացարձակ սուտ նշված հարցերի մասին։

Այդ հաղորդաշարին փոխարինեց արաբերեն մի նոր հաղորդաշար, այսպես կոչված «Հայկական թղթապանակը», որը յոթ ամիս շարունակ նույնպես եթեր էր տրվում ամեն շաբաթ։

Այս երկու հաղորդաշարերին բնորոշ է պատմագիտական ցածր մակարդակը, միևնույն փաստի կամ մտքի բազմակի կրկնությունը, փաստերի կամայական ընտրությունն ու դրանց խեղաթյուրումը, հնարովի փաստերի օգտագործումը։ Սեփական խոսքի նկատմամբ հավատ ներշնչելու նպատակով օտար ունկնդրին համոզում են, թե «արխիվային փաստաթղթերը, որոնց անդրադառնում ենք մեր ծրագրերում, ոչ մի քաղաքական նպատակ չեն հետապնդում և ներկայացվում են ձեզ առանց որևէ մեկնաբանության»։ Այս պարզունակ, բայց լկտի սուտը նպատակ ունի ճշմարտության տեղ վաճառվելու քաղաքականության մեջ անփորձ մարդկանց։

Ո՞ւմ համար հասկանալի չէ, որ փաստերն ու վկայությունները առանց մեկնաբանությունների ներկայացնելը ինքնին ոչ միայն օբյեկտիվություն չէ, այլև միտումնավոր մոտեցման դեպքում դառնում է կողմնակալության ամենաանազնիվ միջոց։ Որովհետև հեղինակային մոտեցումը ավելի ցցուն դրսևորում և ավելի ուժեղ ազդեցություն է ունենում ոչ թե տվյալ փաստի մեկնաբանման, այլ հեղինակի ասելիքը հաստատող փաստերի համադրման միջոցով։ Ահա այդ հաղորդաշարերը փաստերի կամայական, անազնիվ համադրման միջոցով թուրքական պատմագրության սուտ հորինվածքները ճշմարտության տեղ անցկացնելու օրինակ են։

Իհարկե, որպես փաստ, ճիշտ է, որ հայերը «Օսմանյան կայսրությանը տվել են արտաքին գործերի մեկ մինիստր, 7 այլ մինիստրներ, շատ քաղաքագետներ, պառլամենտի անդամներ, դեսպաններ, դատավորներ և մի քանի վարչական աշխատողներ», բայց բացարձակ կեղծիք է, որ դա արդյունք էր այն բանի, որ Թուրքիայում «հայկական փոքրամասնությունը... ճոխ կյանք վայելող փոքրամասնություն է եղել»։ Կեղծիք է, որովհետև Կ. Պոլսի և ծովափնյա քաղաքների մի քանի հարյուր հայ հարուստներն էին միայն ճոխ կյանքով ապրում, իսկ Արևմտյան Հայաստանում միլիոնավոր հայեր գտնվում էին իրավազուրկ ու թշվառ վիճակում։

«Թղթապանակի» հեղինակները «Միություն և առաջադիմություն» կուսակցության հայասպան ղեկավարների դատավարությունը համարում են դավաճանության և քաղաքական բանսարկությունների հետևանք։

Պատահական չէ, որ ժամանակակից Թուրքիայում պաշտոնապես ու մեծ շուքով են նշում Թալեաթի, Ջեմալի, Էնվերի ու մյուս մարդասպանների տարելիցները, նրանց հասցեին շռայլում ամեն տեսակ գովասանքներ։

«Թղթապանակի» հեղինակներն այնքան շատ են ստում ու փաստերը կեղծում, որ խճճվում են և իրենք իրենց ժխտում։ Ըստ որում, ժխտվում է նաև գլխավոր թեզը, որ հայերի բռնի տեղահանությունը հետևանք էր վերջիններիս ապստամբության և «անզեն թուրք ազգաբնակչության» սպանության։ Այդ նույն «Թղթապանակում» ներկայացված են կառավարության հետևյալ հեռագրերը գավառապետին. «24 ժամվա ընթացքում դուք պետք է ձեր գավառից դուրս քշեք բոլոր հայերին։ Ուղղու-

թյունը՝ Սիրիա»։ Տեսնում եք, թե ինչքան հոգատար կառավարություն է։ Այս հեռագիրը ստանալուց հետո,— կարդում ենք «Թղթապանակում»,— «մի քանի ժամ անց հայերի երկար քարավանները, որոնք հիմնականում կազմված էին կանանցից, երեխաներից ու ծերերից, շարժվեցին... դեպի Սիրիա»։ Հետաքրքիր է իմանալ, եթե տեղահանված հայերի քարավանները կազմված էին միայն կանանցից, երեխաներից ու ծերերից, ապա ո՞ւր էին տղամարդիկ։ Նրանք արդեն ոչնչացվել էին։

Ժամանակակից Թուրքիայում եռանդուն աշխատանք է տարվում երկրի իսլամացման խորացման ուղղությամբ։ Գավառներում խմիչքներ չեն վաճառվում, խոզի միս չեն ուտում, բոլոր կանայք պարուրված են չադրայի, իսկ տղամարդիկ՝ թուրքական ավանդական հագուստների մեջ։ Մեկը մյուսի հետևից բացվում են իսլամական հագուստի վաճառանոցներ, իսլամության հարցերը մեծ ակտիվությամբ քննարկվում են հեռուստատեսությամբ, հրատարակվում է մեծ քանակությամբ գրականություն։

«Կետ» հանդեսի թղթակցի այն հարցին, թե Էվրենը ի՞նչ կարծիքի է իսլամական շարժման մասին, պրեզիդենտը պատասխանեց.

«Իսլամը մեծ կրոն է, որ հենվում է խելքի ու գիտության վրա։ Իսլամը սիրո, բարեկամության ու եղբայրության կրոն է։ Իսլամը մարդու մեջ առաջացնում է գործելու և խղճի պատասխանատվության զգացում, արգելում է դավադրությունն ու նենգությունը»[12]։

Ա. Պորոմիչը ժամանակակից Թուրքիան հետևյալ կերպ է բնութագրում. «Անունով եվրոպական և բնույթով ասիական, ավանդությամբ իսլամական և միայն հրամանագրով աշխարհիկ»։

«Թուրքիան,— հայտարարեց Թ. Օզալը Տոկիոյում 1985 թ. մայիսին,— նպատակ ունի Մերձավոր արևելքում դառնալու իսլամական աշխարհի տնտեսական լիդերը»։ Ահա թե ինչու թուրքական կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում մահմեդական երկրների հետ տնտեսական կապերին[13]։ Դրա արտահայտությունն էր 1984 թ. նոյեմբերին Կ. Պոլսում իսլամական երկրների տնտեսական համագումարի հրավիրումը։ Համագումարը ղեկավարում էր Օզալը։ Ճառով հանդես եկավ

Էվրենը։ Համագումարը որոշեց ստեղծել իսլամական հասարակությունների շուկա[14]։

Թուրքիայի «արաբասիրական» քաղաքականությունը ստացել է «քծնող իսլամացում» անունը։ «Միլիեթի» վկայությամբ, Օզալի կառավարությունը «ցույց է տալիս քծնող իսլամական պահպանողականության նշաններ»։ Թուրքական հասարակության լայն շրջաններում տարածում է ստացել այն մտայնությունը, որ այժմ «կրոնն է դառնում իրենց երկրի հիմնական ուժը»։

Թուրքիան ոչ միայն պաշտոնապես է վերադառնում դեպի իսլամական աշխարհը, այլև աստիճանաբար հրաժարվում է Աթաթուրքի եվրոպականացման քաղաքականությունից, մանավանդ լեզվի և մշակույթի խնդիրներում։ Օզալը գտնում է, որ դպրոցներում մեծ տեղ պետք է հատկացնել արաբերենին։ Թուրքիան նորից կենտրոնանում է թուրքական ավանդական լեզվի և մշակույթի ստեղծման անհրաժեշտության վրա, որպեսզի համաթուրանական ծրագրի իրականացման պահին «իրեն մեկուսացված չզգա իր ազգակիցներից»[15]։

Թուրքիայի կառավարության ղեկավարներին են պատկանում հետևյալ խոսքերը. «Իր ժամանակին Օսմանյան կայսրությանը վերաբերվում էին որպես իսլամական աշխարհի լիդերի։ Այսօր մենք նորից սկսել ենք խաղալ այդ երկրների լիդերի դերը և դրանով իսկ Արևմուտքի համար դառնում ենք առավել կարևոր ուժ»։ Այս խոսքերը որքան համահնչյուն են Աբդուլ Համիդի հետևյալ արտահայտությանը՝ ես նախ մահմեդականների խալիֆն եմ և ապա օսմանցիների սուլթան[16]։

Թուրքիայի համար հաջողությունները իսլամով հիմնավորելը, ամենուրեք և ամեն դեպքում իսլամը առաջ մղելը, դասերի խորքից եկող բնավորություն է։ Պանիսլամիզմին ապավինելը թուրքական պետության քաղաքականության մեջ հարաճուն նշանակություն է ստացել։ Դա բացատրվում է նրանով, որ արդի ժամանակաշրջանում «իսլամական գործոնը» մեծ դեր է խաղում ոչ միայն մուսուլմանական շատ երկրների կյանքում, այլև նկատելի ազդեցություն է գործում միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգի վրա։ Բանն այն է, որ մուսուլմանական աշխարհին է բաժին ընկնում երկրագնդի տարածքի $^1/_4$-ը և ազգաբնակչության $^1/_5$-ը։ ՄԱԿ-ի յուրաքանչյուր չորրորդ անդամ մուսուլմանական պետություն է։ Մուսուլմանական աշ-

խարհի ձեռքին է նավթի պաշարների 60 տոկոսը և կապիտալիստական աշխարհի նավթի արտահանությունների 90 տոկոսը։

Իսլամը մեր օրերում օգտագործվում է սոցիալ-քաղաքական ամենատարբեր ուժերի ու կազմակերպությունների կողմից։ Մի շարք արաբական երկրներում նրա դրոշի տակ հանդես են գալիս հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական պայքարի ուժերը։

Սակայն իսլամիզմը իր գլխավոր ուժերով գտնվում է իմպերիալիստական հետադիմական ճամբարում, որոնք Սովետական Միությանը հռչակել են իսլամի թշնամի և ձգտում են խեղաթյուրել ՍՍՀՄ-ի քաղաքականությունը իսլամական աշխարհի նկատմամբ։ Ավելին, իսլամական ռեակցիան քայքայիչ գործունեություն է ծավալում սոցիալիստական երկրներում, ահաբեկում մուսուլմանական հոգևոր և աշխարհիկ գործիչներին, ծավալում հակակոմունիստական պրոպագանդա։ Հոգևորականությունը պրոպագանդիստական այդ արշավում գործողության մեջ է դրել աշխատավորական լայն զանգվածների վրա կրոնի ազդեցության դարավոր փորձը։ Մուսուլմանական ռեակցիան մեծ ակտիվությամբ է օգտագործում ռադիոն և հեռուստատեսությունը, տեսապրոպագանդան, կինոն, մամուլը և գրականությունը։ Գործնական քայլեր են կատարվում օգտագործելու միջազգային իսլամական կենտրոնների մեծ հնարավորությունները՝ կոմունիզմի դեմ պայքարում զանգվածային ինֆորմացիայի միջոցների ուժերը կոորդինացնելու և նրանց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ։

Իսլամական ռեակցիան մատերիալիստական-մարքսիստական ուսմունքը հռչակել է մուսուլմանականության գլխավոր թշնամի և մուսուլման հավատացյալներից պահանջում է «սրբազան պատերազմ» մղել «կոմունիստական իմպերիալիզմի» դեմ։ Հակակոմունիզմն ու հակասովետիզմը մուսուլմանական ռեակցիոն վերնախավի համար միջոց է խեղդելու «ներքին թշնամու»՝ այսինքն աշխատավորության ազատագրական ձգտումները։ Այն նաև պատրվակ է արդարացնելու պանիսլամական նկրտումները։ Իմպերիալիստական գաղափարախոսությունը հաճույքով է օգտագործում ՍՍՀՄ-ում «մահմեդականներին հետապնդելու», «ՍՍՀՄ-ում մուսուլմանների իրավազրկության», նրանց հավատի ճնշման մասին հերյուրանքները, Միջին Ասիայի և Կովկասի ժողովուրդների՝ ռուս ժողովրդի հետ միավորելու, այդ հանրապետություններում սովետական իշխանության հաստատման պատմության աջ մուսուլմանական կեղծիքը։

Մուսուլմանական ռեակցիայի պրոպագանդիստական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս նրա անմիջական կապը իմպերիալիստական պրոպագանդայի կենտրոնների հետ։ Իսլամը կրկնում է Արևմուտքի մտքերն ու «տեսությունները» կոմունիզմի ու իրական սոցիալիզմի մասին՝ սկսած ՍՍՀՄ-ում «մարդու իրավունքների վիճակից» մինչև «սովետական ռազմական վտանգի» մասին հերյուրանքները։

1. Merip Reports 1984 թ., փետրվար։
2. Նույն տեղը։
3. Նույն տեղը։
4. Նույն տեղը։
5. Թուրքական հեռուստատեսություն, 12 նոյեմբերի 1985 թ.։
6. Սփոթլայդ, 1 նոյեմբերի 1984 թ.։
7. Ազգային մշակույթ, 2 դեկտեմբերի 1984 թ.։
8. Թուրքական հեռուստատեսություն, 4 հոկտեմբերի 1984 թ.։
9. Թուրքական հեռուստատեսություն, 30 հոկտեմբերի 1985 թ.։
10. Նույն տեղը։
11. Ազգային մշակույթ, 28 ապրիլի 1985 թ.։
12. Թուրքական հեռուստատեսություն, 9 հունիսի 1986 թ.։
13. Նույն տեղը, 14 մայիսի 1985 թ.։
14. Զարթոնք, 27 հունվարի 1985 թ.։
15. Դունյա, 8 դեկտեմբերի 1983 թ.։
16. Թուրքական հեռուստատեսություն, 15 ապրիլի 1982 թ.։

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երիտթուրքերի կողմից Մեծ եղեռնի նախապատրաստման և իրականացման վերաբերյալ վիթխարի քանակությամբ նյութեր՝ վավերագրեր, ականատեսների և ցեղասպանությունից փրկվածների վկայություններ, գիտական ուսումնասիրություններ ու մասնագետների եզրակացություններ են մեզ հասել։ Փորձենք դրանց միջոցով ընթերցողին ներկայացնել հայոց ցեղասպանության նախապատրաստությունն ու իրականացումը։

Վկայագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ուղղությամբ երիտթուրքերը գործնական քայլերի դիմեցին իշխանության գլուխ

անցնելու առաջին իսկ օրից։ Ադանայի 1909 թ. կոտորածը այդ քաղաքականության գործադրման առաջին լուրջ փորձն էր։

Իթթիլաֆ կուսակցության ղեկավար Սաբահէդդինը դեռ 1908 թ. հայերին ասել է. «Եթե Իթթիհադը ութ ամիս իշխանության գլուխ մնա և պետական գործերը ինքը վարի, հաստատ համոզված եղեք, որ բաղկացուցիչ բոլոր ազգերի և, մասնավորապես, հայերի ապագան ջախջախված է... Այդ մարդիկ ինձ մոտ մտերմական խոսակցություններ են ունեցել, բացվել են որպես թուրք»[1]։

1909 թվականի հունվարի 19-ին Կարինում ռուսական գլխավոր հյուպատոսը ահազանգում է, որ հայերի «նկատմամբ անվստահությունը աճում է ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ»[2]։ Մարտի 2-ին այդ նույն հյուպատոսը գրեց. «Երիտթուրքերը սկսել են արագորեն զինել մահմեդականներին, հատկապես քաղաքային դաղաշներին, որոնք հայտնի են հայերի նկատմամբ իրենց անսանձ լկտիությամբ ու թշնամությամբ»[3]։

Իշխանությունները «շարունակում են զենք և ռազմական հանդերձանք ուղարկել զանազան քաղաքներ։ Նոյեմբերի 18-ին Բիթլիս է ուղարկվել 38 արկղ զենք։ Բիթլիսի վիլայեթի Սղերդում հին սիստեմի հրացանները, մաուզերները փոխարինվում են նորերով...»[4]։

1912 թ. որոշ երիտթուրքեր հրապարակավ կոչ էին անում. «Հայերին չխնայեք, կենդանի շունչ չթողնեք, կայք, գույք, ամեն բան խլեցեք»[5]։ Ստեղծված վիճակը նկատի ուներ «Պրավդան», երբ 1912 թ. հունիսի 27-ին գրեց. «... երիտթուրքերը իրենց առաջին իսկ քայլերից, կարծես դիտմամբ, սկսեցին իրենցից վանել Օսմանյան կայսրության ժողովուրդներին... խոսքով լիբերալ ձևանալով, նրանք իրականում լի էին ամենաթունդ նմուշի սահմանադրական նացիոնալիզմով և բուրժուական կառավարի եսասիրությամբ։

Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և այլներին թուրքացնելու համար նրանց ձգտումը ստացավ ավելի կոպիտ և համառ բնույթ, քան Աբդուլ Համիդի ժամանակ էր»։

Բայազետից ռուսական փոխհյուպատոսը 1913 թ. դեկտեմբերին հաղորդել է. «Այստեղ բնակվող և ռուսների դեմ տրամադրված շերիֆ Զելալ Իբրահիմը իր տրամադրության տակ

գտնվող քրդերին հրաման է տվել նախապատրաստվել հայերին կոտորելու, և այդ գործը սկսել հենց որ նա կարգադրի»[6]։

1913 թ. մարտի 23-ին Հասան Ղալա գյուղում Քերոբ անունով մի հայի ճաշարանն է մտնում թուրքական բանակի կապիտան Հասան աղան և ներկաներին հայտարարում. «Մեր այժմվա բոլոր դժբախտությունների պատճառը քրիստոնյա ռայան է... Ես իմ կողմից անհրաժեշտ միջոցներ եմ ձեռնարկել և Պասին կազայի բոլոր քրդական գյուղերում համոզել եմ քրդերին՝ այլևս չդանդաղել հայերի կոտորածների ու նրանց ունեցվածքի թալանի գործում և նույն խորհրդով դիմում եմ ձեզ։ Բոլոր բեկերը, որոնց հետ ես հանդիպել եմ, չկարողացան ինձ հետ չհամաձայնվել։ Դրա համար էլ հույս ունեմ, որ դուք ևս կհետևեք նրանց գովելի օրինակին»[7]։

Դիարբեքիրից 1913 թ. ապրիլի 24-ին գրել են. «...հայերի նոր կոտորածների հնարավորությունը չի բացառվում»[8]։

«Ավելի ու ավելի հաճախ են լուրեր ստացվում,— 1913 թ. մայիսի 2-ին Սազոնովին գրել է Վորոնցով-Դաշկովը,— հայերի նկատմամբ բռնությունների մասին... Թուրքահայերը իրենց շրջապատված են տեսնում համատարած զինված մահմեդական ազգաբնակչությունով և այդ այն ժամանակ, երբ բոլոր միջոցներով նրանց խոչընդոտում են զենք ունենալու... Թուրքահայերի վիճակը գնալով օրհասական է դառնում և նրանք, հնարավոր է, հիմք ունեն վախենալու, որ մոտ ապագայում իրենք հարկադրված են ապրելու ավելի ծանր ժամանակներ, քան մինչև այժմ ապրել են...»[9]։

Պատրիարքը 1913 թ. մայիսի 20-ին Գիրսին գրեց. «Ամբողջ Անատոլիայում հայերի գլխին կախվել է զանգվածային ոչնչացման վտանգը... սպանությունների թիվը անընդհատ աճում է, և որոշ ժամանակից ի վեր, սպանությունների բուն բնույթը վկայում է հայերին ահաբեկչության ենթարկելու մտադրության մասին»[10]։

«Պատրիարքը,— 1913 թ. մայիսի 20-ին գրել է Գիրսը Սազոնովին,— Բ. Դռնից ռեֆորմներ չի սպասում, և նրան լոկ մատնացույց է անում հայերին սպառնացող եղեռնի վտանգը։ Սպանվածների թիվը հետևողականորեն աճում է, իսկ կառավարությունը առաջվա նման անգործության է մատնված»[11]։

Այդ օրերին պատրիարքը Մեծ վեզիր Մ. Շեվքեթ փաշային գրեց. «Ձերդ մեծությանը Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի

հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածի վտանգի մասին հուշագիր հանձնելուց հետո մինչև օրս ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել, որը մեր ցեղակիցներին կարողանար պաշտպանել այդ սպառնալիքից։ Մարդիկ, որոնք զբաղված են կոտորածներ հրահրելով, ոչ մի պատասխանատվության չեն ենթարկվել։ Պաշտոնատար անձինք շարունակում են մարդկանց վիրավորել միայն այն բանի համար, որ նրանք հայեր են...

Դեռ ավելին, տեղերից ստացվող վստահության արժանի հաղորդագրությունների համաձայն, վտանգը մեծացել է և, որ սպանությունները, բռնությունները, թալանն ու կողոպուտները, առանց չափազանցությունների, կրում են զանգվածային ջարդերի բնույթ... այժմ հայ ժողովուրդը օրենքից դուրս է դրված»[12]։

Դր. Զոհրապը 1912 թ. նոյեմբերին Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսին ասել է. «... Վերջին ժամանակներս ուժեղանում են ամենաշարագույժ լուրերը պատրաստվող ջարդերի մասին»[13]։

Կարինում,— գրել է Գիրսը Սազոնովին 1913 թ. դեկտեմբերի 29-ին,— «գաղտնի ժողովները... շարունակվում են ամենուրեք։ Ըստ որում, դրանցում սկսել են բացահայտ խոսել հայկական կոտորածների մասին։ Մոլլայի հրամանով մահմեդականները սկսել են իրենց ծածկել սպիտակ չալմայով։ Ըստ լուրերի, բոլորը պատրաստ են եղեռնին և միայն սպասում են մայրաքաղաքի ազդանշանին։ Պետք է վճռականորեն կանխել կոտորածը, որը ձեռնտու է միայն մեր թշնամիներին, որոնք ուզում են շեղել հայերի համակրանքը Ռուսաստանից»։ 1913 թ. սեպտեմբերի 5-ին Կ. Պոլսի պատրիարքը գրեց. «Ռուսական դեսպանը մենակ է մնացել հայկական դատը պաշտպանելու գործում»։ Նույն կարծիքին է Գր. Զոհրապը՝ «Ռուսաստանի դեսպանատունը մեր միակ ապավենն է»[14]։

Կարինում ռուսական գլխավոր հյուպատոսը 1914 թ. փետրվարի 15-ին գրել է. «Տեղական երիտթուրքական ակումբի կազմակերպած «Թուրքի ուժ» ընկերության... անդամների թիվն արդեն հասել է 200-ի, որոնց մեծամասնությունը էրզրումի դաշները կամ խուլիգաններն են»։ Ընկերության նախագահը պաշտոնաթող սպա Համիդ փաշան է, որն ամեն հինգշաբթի ընկերության անդամներին «ռազմական զրոսանքի»՝ զինավարժության է տանում[15]։

1913—1914 թթ. իշխանությունների հայերի դեմ ուղղված բոյկոտն ու ապօրինությունները զանգվածային բնույթ ստացան, որի նպատակն էր նրանց տնտեսապես քայքայել ու թալանել։

Երիտթուրքերն ամբողջ երկիրը լարում էին հայերի դեմ, որպեսզի ջարդերի ժամանակ թուրք և քուրդ ժողովուրդները ոչ միայն չաջակցեին հայերին, այլև մասնակցեին նրանց բնաջնջմանը։ Պահեստի սպաների դպրոցը, որ ստեղծվեց 1914 թվականի ամռանը, «ջարդերի համար կադրեր պատրաստելու» հարմար վայր դարձավ։ Հրահանգիչ սպա Վայսել բեյի ղեկավարությամբ վարժվում էին զանազան զորամասերից հավաքված թուրք երիտասարդներ։

1914 թ. հոկտեմբերի 11-ին Գիրսը գրեց. «Բայազետում իշխանությունները շարունակում են զինել ավազակախմբերին։ Հայերը սարսափած փախչում են Ռուսաստան՝ վախենալով կոտորածներից, որ սպասվում է օր օրի»[16]։

Իր «Սարսափների երկրում» գրքում, որ լույս է տեսել 1919 թ., Անրի Բարբին գրում է. Բաշկալայի «ջարդը տեղի ունեցավ 1914 թ. դեկտեմբերի առաջին շաբաթում։ Ահմեդ բեյը 160 ժանդարմներով և Շերիֆ բեյը՝ շիկար թափառախմբի ղեկավարը, 150 համիդիեներով ռուսական բանակի նահանջից հետո հարձակվում են Բաշկալայի վրա։

Նրանք թալանում ու հրդեհում են հայերի տները, սպանում տղամարդկանց, դիակները թողնում փողոցներում ընկած, երեխաներին հետ տանում գեղեցիկ աղջիկներին և բախտի քմահաճույքին են թողնում հացից ու բնակարանից զուրկ կանանց ու երեխաներին»[17]։

1915 թ. փետրվարի 24-ին ռուսական զորքերի Կովկասյան ռազմաճակատի առաջին բանակի հրամանատարի տեղակալը գրել է. Դիլմանի երեք գյուղերում «փետրվարի 14—15-ի գիշերը սպանվել են 707 մարդ... թուրքական կառավարության գաղտնի ներկայացուցիչ, կայմակամ Ռուստամ բեկը հրամայեց քրդերին և զինվորներին՝ մտնել պարսիկների տները, քրիստոնյաներին դուրս հանել և սպանել այն պարսիկներին, ովքեր քրիստոնյաներ են թաքցրել»։ Հրամանն անմիջապես կատարվում է։

«Ես անձամբ իմ աչքերով տեսա փոսերում թափված հարյուրավոր դիակներ, որոնց գարշահոտությունից վարակվել էր...

օդը, տեսա անգլուխ դիակներ, կացնով քարի վրա կտրված ձեռքեր, սրունքներ, կտրված մատներ, կմախքացած գանգեր, դիակներ փլվածքների, բակերի պարիսպների տակ, տասնյակ զոհվածներ...»[18]։

Հայերը, արհավիրքի առաջ անօգնական մնալով, շփոթվեցին։ Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո, 1914 թ. օգոստոսի 29-ին Կ. Պոլսի ազգային հոգևոր վարչությունը որոշեց իշխանությունների հետ զգույշ և հաշտ վարքագիծ որդեգրել։ Հոկտեմբերի 20-ին այդ նույն վարչությունը պատրիարքին հանձնարարեց լավ հարաբերություններ հաստատել Իթթիհադի կենտկոմի ու կառավարության հետ և ձգտել մեղմացնել մթնոլորտը գավառներում։ Այդ նպատակով պատրիարքը հրահանգ ուղարկեց տեղերը և հորդորեց հայերին՝ անթերի կատարել պետության նկատմամբ պարտականությունները, ջերմ հարաբերություններ ունենալ տեղական իշխանությունների հետ և օգնել նրանց, խոհեմ լինել իրենց դիմումների մեջ, սիրալիր վերաբերմունք ցույց տալ հարևան ժողովուրդների նկատմամբ։ Պատրիարքը պահանջում էր, որ հայերը օգնեն իշխանություններին, «անձնվիրությամբ և զոհողությամբ հարգեն նրանց զգացմունքները, բոլոր ժամանակներից առավել հեռատես և շրջահայաց լինեն, թյուրիմացությունների առիթ չտան և, ըստ ամենայնի, զգույշ լինեն իրենց խոսքերի ու վարմունքի մեջ, որովհետև հայտնի բան է, որ այսպիսի մի ժամանակում մարդիկ դյուրազգաց ու դյուրադրգիռ են դառնում»[19]։

Հուսալքված ու բարոյալքված էին նաև հայ քաղաքական կուսակցությունները։ Նրանք ևս հաշտվողական դիրք գրավեցին և ժողովրդին կոչ արեցին զենքերը հանձնել իշխանություններին։

Արևմտահայության այդ շփոթ վիճակը նկատի ուներ Դր. Զոհրապը, երբ 1914 թ. օգոստոսի 18-ին գրեց. «... Ո՞ւր է մեր ազգը, ամենուրեք փնտրում և չեմ կարողանում գտնել հյուլեացած, ցրված, անկապակից ազգ. ամեն մարմին ներքին ձգողության ուժով է կազմվում, մեր ազգը կարծես ներքին վանողության զորությամբ գոյություն ունի։ Ազգ, որ ոչ գլուխ ունի, ոչ ձեռք և ոտք, ոչ ուղեղ ունի, զգայունություն, որ միաբջիջ կակղամորթ արարածների նման ինքնաշարժ ավտոմատ կծկումներ ունի միայն ամեն ինչի հետ շփվելիս»[20]։

Հայերը խուճապի մեջ էին, իսկ երիտթուրքերի կենտկոմի 1913 թ. կայացած գաղտնի նիստի հանձնարարությամբ արդեն իսկ պատրաստվում էր Մեծ եղեռնի ծրագիրը ու իրականացվում էին նրա նախապատրաստական աշխատանքները։

Այդ ծրագիրն էր.

— ցրել բոլոր հայկական ընկերություններն ու կազմակերպությունները, ձերբակալել նրանց ղեկավարներին և երբևիցե երիտթուրքերի նկատմամբ թշնամություն դրսևորած անձանց, նրանց աքսորել Բաղդադի ու Մոսուլի շրջաններն ու ճանապարհին կամ այլուր բոլորին ոչնչացնել.

— նախապես հավաքել հայերի մոտ եղած բոլոր զենքերը.

— հնարավոր բոլոր միջոցներով մահմեդականների մեջ թշնամություն զարգացնել, նրանց գրգռել հայերի դեմ.

— Վանի, Կարինի և Ադանայի շրջաններում, որտեղ հայերը իրենց նախկին գործունեությամբ մահմեդականների թշնամությունն էին վաստակել, կազմակերպել միջադեպեր այդ հարաբերություններն ավելի թշնամական դարձնելու համար.

— Կարինի, Վանի, Խարբերդի և Բաղեշի վիլայեթներում հայերի նկատմամբ հաշվեհարդարը հանձնարարել մահմեդական ազգաբնակչությանը, իսկ Ադանայում, Սեբաստիայում, Նիկոմեդիայում և Զմյուռնիայում, ընդհակառակը, զորքը պետք է ակտիվ մասնակցություն ունենա բռնագաղթին ու կոտորածին.

— բնաջնջել 50-ից ցածր տարիք ունեցող բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին մահմեդականացնել.

— բռնագրավել այն անձանց ունեցվածքը, ովքեր ճողոպրել են արտասահման.

— պաշտոններից քշել հայ ծառայողներին.

— բանակում եղած հայերին ոչնչացնել.

— գործողություններն ամենուրեք սկսել միաժամանակ և հայերին թույլ չտալ ինքնապաշտպանության համար պատրաստվելու.

— մինչև կիրառման պահը ոչնչացման ծրագրի մասին պետք է իմանան միայն մի քանի ղեկավար գործիչներ։

---

* *Բուխարեստի գերմանական դեսպանատանը հայտնաբերված փաստաթղթերը ցույց տվեցին, որ 1914 թ. հուլիսին Թուրքական և գերմանական ներկայացուցիչները միասին քննարկել և հավանություն են տվել հայերի բռնագաղթի ծրագրին։ 1914 թ. դեկտեմբերին և 1915 թ. հունվարին Թալեաթն ու Էնվերը այդ հարցի շուրջը խորհրդակցություններ են ունեցել Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհեյմի հետ։ Վերջինս 1915 թ. մայիսի 12-ին հայտարարեց. «Թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ» (Հայրենիք, 30 ապրիլի 1985 թ.)։*

* * *

1915 թ. փետրվարի կեսերին հրավիրվեց երիտթուրքական կուսակցության կենտկոմի նիստ, որը տևեց երեք օր։ Կայացած քննարկման մանրամասն շարադրանքին կարելի է ծանոթանալ նրա մասնակիցներից մեկի՝ Մ. Ռիֆաթի 1929 թ. Հալեպում հրատարակված «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը» գրքում։ Ռիֆաթը պատմում է։

Նիստը ղեկավարում էր Թալեաթը։

Նա ելույթի համար ձայնը տալիս է դոկտոր Նազիմին, որն ասաց. «...հայերը, որոնք այս անգամ պատերազմը համարելով հարմար առիթ, հակառակ չեզոքության պահելու իրենց խոստումին, ռուսական բանակի մեջ կամավոր մտնող հրոսակախմբեր ստեղծելով գրավված գյուղի, քաղաքի բնակչությանը, առանց խղճահարության սպանեցին և տեղ-տեղ ապըստամբություն բարձրացնելով մեզ վրա հարձակվեցին և մեր բանակի նահանջի գծերին սպառնացին»։ Ի՞նչ են ուզում հայերը,— հարցնում է Նազիմը և պատասխանում. «Նրանք մեզ բնաջնջելով, մեր գյուղերին ու կալվածքներին տիրանալով ուզում են ասել. «Ո՞վ թուրք, դու վեր կաց այստեղից հեռացիր, դու այս հողի տերը չես...»։ Դրանք «աշխարհի ստեղծումից առաջ մերն են եղել»»[21]։

«Անհրաժեշտ է գործել և գործել արագ,— ճառը շարունակում է Նազիմը։ Եթե բավարարվենք մասնակի ջարդերով, ինչպես այդ եղավ 1909 թ. Ադանայում և ուրիշ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, որովհետև մենք դրանով վտանգում ենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես պետք է ճանապարհից դեն շպրտենք։ Խոսքս վերաբերում է արաբներին և քրդերին։ Դրանով վտանգը մեկի փոխարեն դառնում է երեքը և դժվարանում է մեր նպատակների իրականացումը... Հայ ժողովրդին պետք է արմատախիլ անել, որպեսզի մեր հողի վրա ոչ մի հայ չմնա և մոռացվի հայ անունն իսկ։ Այժմ պատերազմի մեջ ենք, այսքան հարմար առիթ այլևս չի լինի։ Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ երբ նրանք իմանան, ապա արդեն կանգնած կլինեն կատարված փաստի առաջ, և դրանով հարցը կփակվի։ Այս անգամվա գործողությունը բնաջնջման գործողություն պետք է լինի. հայերի մինչև վերջին անձի բնաջնջումը անհրաժեշտություն է։

Ես դարձա ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրը նրա համար, որպեսզի վերածենք թրքությունը։ Ես ուզում եմ, որպեսզի այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու անբաժան տիրապետի։ Թող ջնջվեն բոլոր ոչ թուրք տարրերը, որ ազգությանն ու կրոնին պատկանելիս լինեն։ Այս երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»[22]։

«Մեր ազգային կալվածքում կարող ենք թույլ տալ միայն թուրքի առաջադիմություն և ծաղկում։ Մենք պարտավոր ենք մաքրել մեր հողը հնից մնացած ոչ ազգակից ու վնասակար ժողովուրդներից, նրանց արմատախիլ անել, ինչպես մոլախոտը։ Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է...

Տարբեր տարրերից կազմված օսմանյան շաղախը չունի իր ազգային դեմքը, նա նման է մի ագարակի մեջ տնային տարբեր կենդանիների հավաքածուի։ Հայ, հույն, բուլղար, բոսնիացի, պոմակ, սերբ, ալբանացի, քուրդ, չերքեզ, արաբ, վրացի, լազ. բոլոր այս իրարից տարբեր տարրերը իբրև թե կազմում էին մի ամբողջություն «օսմանցի» անվան տակ։ Պետք է հրաժարվել նման հասկացողությունից։ Ինչպես բակում բաղը, սագը, հավը, ոչխարը, կովը, ցուլը և հորթը ապրում են կողք կողքի, առանց իրենց տեսակը փոխելու, ճիշտ այդպես էլ այդ ժողովուրդները մնացել են մեր հողի վրա առանց փոխելու իրենց ազգությունը։ Բարենպաստ պայմաններում նրանք նեղել են թուրքերին և առանձնացել նրանցից՝ խլելով հողեր, ինչպես այդ արեցին, օրինակ, ռումինացիները, սերբերը, բուլղարացիները և վերջապես՝ մակեդոնացիները»[23]։

Հասան Ֆեհմին առաջարկեց. «Հիմա պատերազմի մեջ ենք, զենք վերցնելու կարող հայ երիտասարդներին պատերազմի առաջին գիծ կուղարկենք, այնտեղ դիմացից ռուսների, իսկ հետևից մեր կողմից այդ նպատակով ուղարկված ուժերը կրակի մեջ կառնենք և կոչնչացնենք։ Նրանց տանը մնացած հիվանդ ու ծեր, կին ու երեխա տարրերին էլ կհրամայենք, որ ոչնչացնեն մեր հավատացյալները։ (Հայերի) ունեցվածքը կկողոպտենք, աղջիկներին կառևանգենք»[24]։

Ֆինանսների մինիստր Ջավիդ փաշան խոսք վերցնելով ասաց. «Թուրքը արևի կիզիչ ճառագայթների տակ իր արտում

աշխատում է, բերքը բերում և քաղաքի վաճառական հային է վաճառում, նրան հարստացնում, նրա հանգիստը ապահովում։ Տնտեսական իշխանությունը հայի ձեռքին է, հայերի լրիվ բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետից որքան հարկադրական անհրաժեշտություն է, այնքան էլ Թուրքերի տնտեսական գերիշխանություն ստեղծելու համար կարևոր է»[25]։

Երիտթուրքերի կենտկոմի անդամները միաձայն քվեարկեցին բոլոր հայերի ոչնչացման օգտին։

Այդ նույն օրը, փետրվարի 18-ին, վիլայեթներ ուղարկվեց հետևյալ հրահանգը. «Թուրքիայում «Միության և առաջադիմության» քաղաքական կյանքը խափանող միակ կարող ուժը հայերն են։ Վերջերս Կահիրեից բազմիցս ստացվող լուրերից երևում է, որ դաշնակցությունը Ճեմիյեթի (երիտթուրքերի կենտկոմի) դեմ վճռական հարձակում է պատրաստում։

Եթե անցյալի ողջ պատմության իրադարձությունները մանրազնին քննենք, կտեսնենք, որ Ճեմիյեթի հայրենասիրական ջանքերի ճանապարհին հայտնված բոլոր փոթորիկները հայերի ցանած խռովության սերմերի հետևանքն են։

Ճեմիյեթը հայրենիքը այս անիծյալ ցեղի ցանկություններից փրկելու և այս կապակցությամբ օսմանյան պատմությանը քրտվելիք արատի պատասխանատվությունը իր հայրենասեր ուսերին վերցնելու որոշում է ընդունել։ (Նա) Թուրքիայում բնակվող բոլոր հայերին, առանց բացառության, ոչնչացնել է որոշել և այս գործում կառավարությանը լայն իրավասություններ է տվել։

Հարդերն իրականացնելու մասին կառավարությունը կուսակալներին ու բանակի հրամանատարությանը հարկ եղած պարզաբանումներ կտա։ Իթթիհադի և Թերաքգիի բոլոր պատվիրակները իրենց գտնված վայրերում պետք է այս խնդրի իրականացմամբ զբաղվեն։ Չպետք է թույլ տալ, որ որևէ հայ օգնության և պաշտպանության արժանանա։

Թողնված գույքերը, հետագայում Ճեմիյեթի կազմակերպության ընդարձակման և հայրենասիրական նպատակներով ծախսելու համար, առայժմ կառավարության կողմից նպատակահարմար եղանակներով, պետք է հավաքվեն և պահվեն»[26]։

* * *

Երիտթուրքերի կենտկոմն ու նրա տեղական կազմակերպությունները եղեռնը նախապատրաստելու և իրականացնելու ուղղությամբ մեծ ու բազմաբնույթ աշխատանքներ ծավալեցին։ Բռնագաղթի և եղեռնի կազմակերպումը ղեկավարելու համար ստեղծվեց «Եռյակ գործադիր կոմիտե», որի մեջ մտան Բ. Շաքիրը, Նազիմը և Շուքրին։

Կոմիտեն ինքնուրույն կուսակցական մարմին էր և ոչ ոքի առաջ հաշվետու չէր։ Գործնականում նա պետական իշխանության արտակարգ իրավունքներից օգտվող մի մարմին էր, պետություն պետության մեջ՝ իր տեղական օրգաններով ու զինված ուժերով։ Ճիշտ է, կոտորածներ կազմակերպելու համաշխարհային պատերազմը «երկնային պարգև էր», բայց մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելը դժվար խնդիր էր։

Կոմիտեի առաջին նիստում Բ. Շաքիրը հայտարարեց. «Մենք պետք է ձևավորենք այնպիսի զինված ուժեր, որոնք դուրս լինեն իշխանության տեղական օրգանների վերահսկողությունից... Դրանք մեր հրամանները պետք է գործադրեն... (իսկ) մենք պետք է միայն կենտրոնական կառավարությանը ճանաչենք և նրա ներկայացուցիչը հանդիսացող Մինիստրների խորհրդի հետ խորհրդակցենք...

Մեր ստանձնած պարտականությունը հայերին (առանց բացառության՝ կին, երեխա, աղջիկ, ծեր ու հիվանդ) մինչև վերջին մարդը սպանելն ու բնաջնջելն է... այդ գործը չենք կարող կատարել ոչ զինվորի և ոչ էլ ժողովրդի միջոցով...

Սա հասարակ և վայրագ ոճրագործություն է. զինվորը կաթնակեր մանուկին մոր գրկից հափշտակելով, մոր աչքի առաջ չի կարող նրա գլուխը ջախջախել... նման հրամանի գործադրումը նա իր զինվորական պատվին հակառակ կհամարի և կմբոստանա։ Ինչպես նաև զինվորը անկարող է ձեռքերը կապած ծերունուն կրծքից սյունին մեխել... Նա վայրագությունը հերոսություն չի համարի...»

Իսկ ժողովրդին զինելը վտանգավոր է, որովհետև «մի շարք բախտախնդիրների առիթ ու ուժ կտանք» մեր դեմ հանդես գալու համար։

«... Ես կարծում եմ, որ մեզ համար հարմար մարդիկ գտել եմ...», ես դրանց բանտերի մեջ գտա։ Դրանք ոճիր գործած, մար-

դասպանության ու զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով (բանտ ընկած) մարդիկ են։ «Եթե նրանց ազատ արձակելով մեզ ենթարկենք և խմբերի բաժանենք, կարծում եմ, որ մի շատ լավ հատուկ կազմակերպություն կստեղծենք»[27]։

Այդպես էլ որոշվեց՝ բանտերից հանել քրեական հանցագործներին, մարդասպաններին ու ավազակներին, նրանց զգեստավորել, զինել, նրանցից յուրաքանչյուր 10—15 հոգուն դնել Երիտթուրք խմբապետի ղեկավարության տակ*։

Եոզգատի նախկին կառավարիչ Քեմալ բեյը 1918 թ. դեկտեմբերի 12-ին դատարանին ցուցմունք տվեց. «Բանտերի կալանավոր ոճրագործները օգտագործվեցին հայերի կոտորածն իրականացնելու համար։ Այս բանը լսեցի Եոզգատի իմ խոհարարից։ Վերջինիս եղբայրը ևս մարդասպանություն կատարելու համար բանտում էր։ Խոհարարուհին ինձ ասաց, որ իր եղբորն էլ բանտից ազատ են արձակել և ուղարկել հայերին կոտորելու...»[28]։

---

* Սվազի բանտից ազատեցին հայտնի ավազակապետ Մահիր բեյին ու 123 այլ հանցագործների և ուղարկեցին ոչնչացնելու հայերին։ Ռաս ուլ-Այնում բանտից ազատված չեթեներից մի ջոկատ կազմակերպեցին հայերին թալանելու և ոչնչացնելու համար։ Նրա անդամներից ոմն Աբդուլահ էֆենդին 1200 հայ սպանեց Մալաթիայի նահանգապետարանի բակում, իսկ մեկ ուրիշը՝ Հումդի էֆենդին՝ 210 հայ գլխատեց (Շ. Նաթալի, «Գիրք մատուցման և հատուցման», 1949, էջ 22)։

Սկզբում նախատեսված էր աշխատավարձի փոխարեն այս ավազակներին թողնել հայերից թալանված ունեցվածքն ու դրամը, կանանց և աղջիկներին, բայց քիչ անց հայերի ունեցվածքն ու միջոցները նպատակահարմար համարվեց դնել պետության տրամադրության տակ, որը չեթեների շրջանում դժգոհություն առաջացրեց։ Այս առթիվ Թալեաթը երիտթուրքերի կուսակցության Մալաթիայի կազմակերպության քարտուղարին հեռագրեց. «Չեթեների մասն են կազմում բանտերից հանված կամ դրսից հավաքված մարդասպանները, բայց վերջիններս իրենց սպանած հայերի ունեցվածքին ձեռք տալու իրավունք չունեն։ Նրանք երդում են տվել, որ գրավված ամբողջ կայքը կենտրոն կբերվի», որ այդ «ապրանքների կեսը տրամադրվելու է կուսակցությանը, իսկ մյուս կեսը բաժանվելու է չեթեներին»։ 1915 թ. սեպտեմբերի 13-ին նույնիսկ հատուկ օրենք ընդունվեց՝ «Լքյալ ունեցվածքի գրավման մասին»։ (Ա. Անտոնյան, «Մեծ ոճիրը», Բեյրութ, 1977, էջ 283)։

1914 թ. նոյեմբերին Սեբաստիայի կուսակալի կարգադրությամբ Բինյանի բանտից ազատ արձակվեց 24 ոճրագործ։ 1915 թ. մարտի 3-ին Անկարայի կենտրոնական բանտից ազատ արձակվեց 249 հանցագործ, իսկ մայիսի 15-ին Եոզգատի բանտից հանեցին 65 հանցագործ։ Այդ 65 հանցագործից 51-ը մարդասպան էր, իսկ 12-ը՝ գող կամ ավազակ (Դ. Ե., № 534)։

Արդարադատության նախարար Բիրիզադե Իբրահիմ բեյը հրամաններ ու հրահանգներ ուղարկեց տեղերի դատավորներին ու դատախազներին, որ նրանք չհետապնդեն ջարդարարներին ու կողոպտիչներին, բացառությամբ նրանց, ովքեր իրենց կողոպուտից բաժին չեն հանել թուրքական կառավարությանը և երիտթուրքերի կուսակցությանը։ Իբրահիմ բեյը անձամբ էր զբաղվում բանտերից ազատ արձակված չեթեներից հրոսակախմբերի կազմակերպմամբ։ Բնորոշ է, որ այդ ավազակախմբերի շարքերում գրանցումները կատարվում էին կայսրության դատախազի հրամանով, Արդարության պալատում։

Իբրահիմ բեյը հրամայել էր հատուկ ուշադրություն դարձնել չեթեների ընտրության վրա. դրանք պետք է լինեին ոճրագործներից ու մարդասպաններից ամենակատաղիներն ու ամենաարյունարբուները։ Ընտրությունը կատարում էին Վերաքննիչ դատարանի ընդհանուր դատախազը և ռազմական նախարարության մի բարձրաստիճան սպա, որն անձամբ էր ստուգում ոճրագործների ֆիզիկական կարողությունները։ Բոլոր ոճրագործները բժշկական ստուգման էին ենթարկվում։ Ընտրվում էին ֆիզիկապես ուժեղ և առողջ հանցագործները։

Արդարության պալատում Իբրահիմ բեյը, Պոլսի զորքերի ընդհանուր հրամանատար Խալիլ փաշան, Բ. Շաքիրը, Նազըմ բեյը, Աթիվ բեյը, կայսրության անվտանգության տնօրեն Ազիզ բեյը բազմաթիվ խորհրդակցություններ ունեցան Թեշքիլաթը Մախսուսեի (հատուկ կազմակերպության) ջարդարարական գործունեության ձևերն ու մեթոդները մշակելու համար։ Թալեաթը ամեն օր Իբրահիմ բեյին տվյալներ էր հաղորդում հայերի քարավանների ջարդերի ընթացքի և կոտորածների նախատեսված վայրերի մասին։

Մի թուրք վկայում է. «...արդարադատության նախարարը բանտերից արյունարբու մարդասպան ոճրագործներին ազատ արձակեց։ Այդ մարդասպաններից կազմված հրոսակախմբերը արդարադատության նախարար Իբրահիմ բեյը ինքը կազմակերպեց...»[29]։

Բոլոր գավառներում ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնց մեջ մտնում էին կառավարիչը, զինվորական հրամանատարը, ընդհանուր դատախազը և դատավորը, ոստիկանապետը և առողջապահության տնօրենը։ Այդ հանձնաժողովներն էին ընտրում հատուկ կազմակերպության ոճրագործներին։

Եոզղատի նախկին դատավոր, այդ հանձնաժողովի անդամ Մ. Ռեմզին 1919 թ. փետրվարի 10-ին ցուցմունք տվեց. «Բժշկական քննությունից հետո տեղի ունեցան ոճրագործների ազատ արձակման ձևակերպումները՝ իբր թե նրանք զինվոր էին գրանցվում։ Հետագայում իմացանք, որ այս ոճրագործները ուղարկվել են Զորումի հրոսակների թիվը ավելացնելու...»[30]: Բուրսայի կենտկոմը Կ. Պոլսի երիտթուրքերի գործադիր բարձրագույն մարմնին 1914 թ. սեպտեմբերի 19-ին հեռագրել է. «Երկու օր առաջ ներքին գործերի նախարարությունից կուսակալությանը մի ծածկագիր-հեռագիր հասավ, որը պահանջում էր մեկ շաբաթվա ընթացքում 200 հոգի գտնել։

...Կարգադրություն արվեց և պահանջված հատկություններ ունեցող 200 հոգի արձանագրվեց, սակայն նրանք զինվորական ծառայության համար որևէ ունակություն չունեն... Թեև կառավարությունը հրամայեց հավաքել ու ուղարկել նաև ոճրագործներ և ավազակություն անելու վարժված անհատներ, սակայն բոլոր դեպքերում, նույնիսկ մեր մեջ, այդպիսի բարոյականության տեր անհատները քիչ են և շատ թվով մարդիկ չեն հավաքվում...»[31]։

Ռազմական դատարանի 1920 թ. հունվարի 8-ի կայացրած դատավճռում կարդում ենք. «Միություն և առաջադիմություն» կուսակցության ընդհանուր կենտրոնը (Նուր էլ-Օսմանիե) ընտրվեց «որպես կենտրոնավայր՝ պետության կենսական հարցերը լուծելու համար, այնտեղ բանակցություններ էին վարում, դաշինքներ կնքում, այնտեղ էին որոշվում գործադրվելիք ոճրագործություններին ժողովականների ներկայության մանրամասները, հատկապես հանդգնեցին որոշում ընդունել տեղահանության, կոտորածի, կալվածքների բռնագրավման, հարստություն դիզելու միջոցների և ոճիրներ ու չարաշահումներ գործելու մասին։

Նրանք 1918 թ. մայիսի 14-ին, ժամանակավոր օրենքի ոգուն համաձայն, տեղահանության միջոցներն ու առիթները հարմարեցրին իրենց անձնական շահերին։ Վերոհիշյալ ընդհանուր կենտրոնը ստեղծել էր հատուկ կազմակերպության մի ցանց, կազմակերպել էր ոճրագործների հրոսակախմբեր, խուժանների ամբոխներ, հատկապես հայերի կոտորածն ու բնաջնջումը իրականացնելու, նրանց կալվածքներն ու հարստությունը կողոպտելու համար...»[32]։

«Մի օրենք հարմարեցրին, որի համաձայն (հայերին) այլ վայրեր տեղափոխեցին նրանց քարավանները կոտորելու դիտավորությամբ, նրանց ունեցվածքն ու կալվածքները կողոպտելու և գողանալու մտադրությամբ. այս նպատակին հասնելու համար օգտագործեցին հրոսակների, որոնց նախապես հենց իրենք էին կազմակերպել»[33]։

«Հատուկ կազմակերպությունը,— գրում է Մ. Ռիֆաթը,— այլ բան չէր, եթե ոչ անպատասխանատու և ոչ լրիվ պաշտոնական թալանչիների խումբ։ Պետության մեջ պետություն և կուսակցություն, որում հաշվվում էր մոտ 10 հազար մարդ, որոնք բոլորը, լինելով մարդասպանությամբ, կեղեքումով, տուն ու տեղ այրելով ու թալանելով, առևանգումով և զանազան տեսակի ոճրագործություններով սնված մարդիկ, առանց խղճահարության կատարում էին Եոյակի տված հրամանները։

Հետապնդման և բանտարկության վախ չկար. գործադրված ոճրագործություններն ու վայրագությունները նույնիսկ դիտվում էին որպես հայրենիքին մատուցած ծառայություն»[34]։

Հատուկ կազմակերպությունը ֆինանսավորվում և մատակարարվում էր ազգային պաշտպանության ֆոնդերից։ Նրա ղեկավար մարմինը մշակեց և հաստատեց բռնագրքի ժամկետներն ու չվերթերը, մարդկանց ոչնչացնելու վայրերը, ջարդարարների գործելակերպը և մնացած բոլոր մանրամասները։ Նա մահապատժի իրավունք ուներ, կարող էր աշխատանքից հեռացնել այն բոլոր պաշտոնյաներին, որոնք կթերանային կոտորածների կազմակերպման գործում։

Հասարակայնության լայն, մասնավորապես հետամնաց, խավերին ջարդերի իրականացման մեջ ներգրավելու համար դրանց կրոնական բնույթ տրվեց։ Հավատացյալներին կոչ արվեց՝ դրախտ գնալու համար յուրաքանչյուր մահմեդական պետք է երեք հայ սպանի։ Շովինիստական ալիքների վրա օրորվող թուրքական թերթերը կոչ էին անում. «Ո՜վ հավատացյալներ, կռվեք ձեր հարևան գյավուրների դեմ»։ Մզկիթներում անընդհատ կրկնում էին. «Մեր թշնամիները մեր մեջ են։ Դրանք հայերն են, որոնք այսօր ամբողջ աշխարհը մեր դեմ են հանել։ Մեր արյունն են թափել տալիս, մեր հայրենիքի ու պետության հիմքերն են քանդում։ Ուստի պետք է նախ այդ նենգ թշնամուն ոչնչացնել»։

Բացի ոստիկաններից գավառներ ուղարկվեցին «12—13 հա-

զար կացիններով և այլ երկաթյա գործիքներով զինված գյուղացիներ՝ «սրբազան պատերազմին» մասնակցելու համար։ Նրանց թույլ տրվեց բոլոր հայերին առանց խնայելու սպանել և միայն գեղեցկագույն աղջիկներին իրենց հետ տանել»։

Այդ օրերին ամենուրեք կարելի էր լսել հետևյալ կոչերը. «Ով գյավուրի արյամբ ներկի իր ձեռքը, դրախտ կգնա։ Գյավուրի անունը, պատիվը, կյանքը հալալ է մահմեդականին»։ Փողոցներում գոչում էին. «Է՜յ, մահմեդական եղբայրներ, մեզ էլ դանակ և գյավուրի գլուխ տվեք, որ մենք էլ կատարենք մեր պարտքը և արժանի լինենք դրախտին»։

Այսպիսով, հաջողվեց կոտորածների կազմակերպման մեջ ներգրավել ոչ միայն կանոնավոր բանակի զորամասերին, ոստիկանությանն ու ժանդարմերիային, այլև համիդիեին, վաշկատուն ցեղերին և Թուրք խուժանին։

Սեփական ձեռքերին լրիվ ազատություն տալու համար Թալեաթը ճնշում գործադրեց սուլթանի վրա և վերջինս 1915 թ. մայիսի 1-ին վեց ամիս ժամանակով արձակեց պառլամենտը։

Ռազմական դատարանի 1919 թ. մայիսի 22-ի դատավճռի մեջ գրված է, որ կանոնավոր բանակի զինվորներն ու չետեները գործում էին համատեղ*։ «Այս ոճրագործներն ու ավազակները, հազիվ քարավանները քաղաքից դուրս էին գալիս, նախ տղամարդկանց բաժանում էին կանանցից, ապա նրանց տանում էին մարդկանց աչքից հեռու վայրեր, որտեղ կողոպտում էին և ապա, ամեն տեսակի տանջանքների ենթարկելուց հետո, կոտորում էին։ Ապա կանանց էին տանում այլ տեղեր, որտեղ կողոպտում էին նրանց զոհարեղենն ու ունեցած դրամը, նրանց մերկացնում էին և շատերին բռնաբարելուց հետո հետիոտն, ամիսներ շարունակ քայլեցնում էին այնպես, որ նրանցից շատերն ընկնում էին և ճանապարհի սահմանը շարշարանքներից հետո մեռնում էին սոված ու ծարավ...»[35]։

1918 թ. դեկտեմբերի 5-ին Թուրքիայի արևելյան ռազմաճակատի 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան, պատասխանելով հետաքննող հանձնաժողովի նախագահ Մազհար բեյի հարցմանը, վկայեց, որ Երզնկայի կառավարիչ Մեհմուդ բեյը հրամայել էր զինվորներին ու ոստիկաններին՝ կոտորելու հայերի քարավանները։

1920 թ. հունվարի 13-ին ռազմական դատարանը մահվան դատապարտեց Բ. Շաքիրին։ Դատավճռում գրված էր. «Վեհիբ փաշայի վկայությունը ցույց է տալիս, որ հայերի կոտորածն ու բնաջնջումը և նրանց ունեցվածքի ու կալվածքների կողոպուտը արդյունք են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի որոշումների։ 3-րդ բանակի տեղակայման շրջանում Բ. Շաքիր բեյը կազմակերպեց ու գործի դրեց մարդու մսագործների։

3-րդ բանակի շրջանում եղած բոլոր խժդժությունները, մարդկային չարիքները, ոճիրներն ու անկարգությունները Բ. Շաքիր բեյի ձեռքով կազմակերպված դեպքեր են։ Հրոսակներից ոմանք ազատված էին կախաղանից ու ցցից, մյուսներն էլ արյունարբու ռազմիկներ էին և ոստիկաններ՝ կազմակերպված ոճիրներ գործելու համար...

Եվ պետությունը նրանց թիկունքին էր կանգնած։ Նրանք բնաջնջեցին մարդկային զանգվածներ, որոնք զուրկ էի որևէ պաշտպանությունից։ Կոտորածները կազմակերպված էին մի հատուկ ծրագրի համապատասխան և իրագործվեցին առանձնակի նպատակի համար։ Կենտրոնական կոմիտեի երկարատև խորհրդակցություններից հետո տրված որոշումները գործադրվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարների միջոցով և ապա այն անհատների կողմից, որոնք գործեցին բոլոր օրենքներն ու կանոնները մի կողմ նետելով՝ կուսակցական վերնախավի և կառավարության կարգադրություններին համապատասխան»[36]։

Ջարդարարների շարքերը համալրելու նպատակով 1915 թ. ապրիլի կեսերին զորակոչվեցին 14—60 տարեկան բոլոր այն թուրքերը, որոնք զանազան պատճառներով մինչ այդ չէին զորակոչվել։ Նրանց զինեցին ու վարժեցրին ոչ թե ռազմաճակատի, այլ հայերին կոտորելու համար։ Այս հիմքի վրա ձևավորվեց այսպես կոչված «իսլամական հեղափոխական բանակը»։

Եոյակ կոմիտեի հաստատած «Լրիվ ոչնչացման միջոցներն ու դրանց կիրառումը» փաստաթղթում գրված է. «Այն քաղաքի

* Պոլսի հետաքննիչ հանձնաժողովի նախագահ Մազհար բեյը հարցրեց Սեբաստիայի ոստիկանապետին. «Խուլուսի բեյը իր 105 հրոսակների հետ մինչև Գանկալ գաղթածների հետևից գնաց և այնտեղ կողոպտեց կանանց։ Նրանց վերադարձել են մեկ ֆայտոնով և երկու հասարակ կառքով՝ լցված ոսկով, զոհարեղենով, գորգերով ու կարպետներով։

Այս զոհարեղենի և գորգերի մի մասն էլ կառավարչատուն տարան։ Այս քանակի մասին ի՞նչ լուր ունես» (Դ. Ե. Ա Մ. 317)։

և գյուղաքաղաքի մեջ, որտեղ հայ կա և թե նրանցից ո՞ւմ պետք է առաջին հերթին ոչնչացնել, կորոշենք ներքին գործերի մինիստրության տեղական (ներկայացուցիչների) հետ և յուրաքանչյուր շրջանին պահանջված թվով ուժեր կուղարկենք։ Նրանք ճանապարհների մեր նշանակած հարմար վայրերում կսպասեն հայերի քարավաններին։ Ներքին գործերի նախարար Թալեաթը այդ քաղաքների վարչական աշխատողներին կհրահանգի, որ դրանցում գտնվող բոլոր հայերին պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով խումբ-խումբ, երկու օրը մեկ ոստիկան զինվորների հսկողությամբ տվյալ ճանապարհով որոշված տեղը ուղարկեն»։

Եվ ապա.

«Ոստիկան պաշտոնյաները, համաձայն այս հրամանի (այդ հայերին) ... կհանձնեն նրանց սպասող հատուկ կազմակերպությանը՝ չեթեներին, և կվերադառնան։ Չեթեները հայերին մինչև վերջին մարդը անմիջապես կսպանեն և, որպեսզի հանրային առողջությունը չվնասվի, դիակները նախապես պատրաստված փոսերը կգցեն ու կթաղեն։ Եվ այս ձևով հաջորդաբար կիրականացնեն բնաջնջումը»[37]։

Եվ ահա «Հատուկ կազմակերպության» չեթեները նշանակված վայրերում «դիակների սպասող ագռավների նման հայերի խմբերի հասնելուն էին սպասում»։

Բառի բուն իմաստով,— գրում է Մ. Ռիֆաթը,— «խղճալի և ողբալի, նույնիսկ քարսիրտ վայրենիների գութն ու կարեկցանքը շարժող թշվառ վիճակի մեջ, իրենց ղավակներով սպանդանոց առաջնորդվող, ոչխարի հոտի նման տարագրվող այս մարդկային խմբերը «Հատուկ կազմակերպություն» անունով հրեշների ձեռքն ընկնելով, երևակայությունից և նկարագրելուց վեր խժդժությունների և տանջանքների էին ենթարկվում։

Դեռևս ծծկեր... մոր գրկի մեջ քնած (ին)... մոր գրկից խլելով կացնի հարվածով... մոր աչքի առջև երկու մասի էին բաժանում, և այս վայրագությունը հրճվանքով ծափահարվում էր և մյուս կողմից հարկադրում էին, որ մահվան սպասող մյուս տարագիրներն էլ ծափահարեին...

Դեռևս 7—8 տարեկան աղջիկներին ծեծի տակ լկելով, վախի, սարսափի և դողի մատնված այդ խեղճերի վրա իրենց անամոթական կիրքը գոհացնող այդ հրեշների ոճիրները նկարագրելու ժամանակ գրիչը ինչպե՞ս չդողա»[38]։

* * *

Ստեղծվեց գաղտնապահության մի կատարյալ համակարգ։ Կառավարությունը տեղերն ուղարկված իր հեռագրերն ու ծածկագրերը հետ էր պահանջում։ Հետագայում, 1918 թ. Թալեաթի հանձնարարությամբ դրանք ոչնչացվեցին։

Օսմանյան 3-րդ բանակը դիրքեր գրավեց Արևմտյան Հայաստանի սահմանի լայնքով և նրա միջոցով կարվեց հաղորդակցությունը կայսրության զանազան մասերի միջև։ Դա այնպիսի վարպետությամբ արվեց, որ խզվեց կապը նույնիսկ քաղաքի ու գյուղերի միջև։ Հայաբնակ շրջանները իրարից մեկուսացվեցին։

Պահպանվել է Հալեպի փոխկուսակալ Ղալիպի 1915 թ. օգոստոսի 21-ի հեռագիրը. «Չորրորդ բանակի հրամանատարության 1915 թ. օգոստոսի 12-ի հեռագրի ու կարգադրության համաձայն ոչ մի հայի, անկախ նրա տարիքից ու սեռից, չպետք է թույլատրվի երկրից դուրս գալ»[39]։

Արգելվեց տեղափոխումը նաև երկրի ներսում, նույնիսկ անձնագիր ունենալու դեպքում պահանջվում էր հատուկ դրավոր թույլտվություն։ Արգելվեց նաև գրագրությունը այլ լեզուներով, դադարեցվեց նամակագրական և հեռագրական կապը Կ. Պոլսի և արտասահմանի միջև[40]։

Միաժամանակ կազմվեցին քաղաքների ու գյուղերի ազդեցիկ հայերի, հասարակական գործիչների ու մտավորականների ցուցակներ։

Հայերին առաջարկվեց հայ-թուրքական միացյալ ճակատ ստեղծել Ռուսաստանի դեմ, ռազմաճակատ ուղարկել բոլոր հին ու նոր հայդուկներին, ստեղծել հայկական կամավորական զորամասեր Կովկասում՝ ռուսական բանակի թիկունքում քայքայիչ աշխատանք տանելու և ապստամբություններ հրահրելու համար, բոլոր միջոցներով աջակցել դեպի Անդրկովկաս թուրքական բանակի առաջխաղացմանը։ Հայերը պատասխանեցին, որ իրենք գերադասում են չեզոք դիրք գրավել, պարտավորվելով բարեխղճությամբ կատարել օսմանյան հպատակի իրենց բոլոր պարտականությունները։ Մերժում ստանալով, Երիտթուրքերն այդ առիթն օգտագործեցին հայերին դավաճան հռչակելու։

Թուրք քաղաքագետը խարել գիտի ու տաղանդավոր ստախոս է։ Եվ հանձինս հայկական ցեղասպանության մենք գործ ու-

նենք դառը, բայց իրական ճշմարտության հետ՝ Թուրքական կառավարությանը հաջողվեց խաբել հայ ժողովրդին, նրան հանկարծակիի բերել։ Եվ դա շնորհիվ քաղաքական դեմագոգիայի, նրբորեն մշակված տակտիկայի՝ օգտագործելով հայերի մտքերի ու զգացմունքների վրա ազդեցության բոլոր միջոցները, կոտորածները նախապատրաստելով քայլ առ քայլ, աներևակայելի գաղտնապահության պայմաններում։ Այդ ուղղությամբ կառավարության յուրաքանչյուր գործողություն անմիջապես տատանում էր պրոպագանդիստական համոզիչ հիմնավորում։

Հ. Մորգենթաուն գրել է. «Բավական ժամանակ անցավ, մինչև որ հայության դեմ գործադրվող խժդժությունների մանրամասն լուրերը ամերիկյան դեսպանատուն հասան։ 1915 թվի հունվարին ու փետրվարին մեզ հասնող լուրերը էնվերն ու Թալեաթն անուշադրության մատնեցին, ասելով, որ պատահածը միայն մասնակի բնույթ ուներ, թե տեղական իշխանությունները շուտով կարգ ու կանոն կհաստատեն։ Հիմա ես տեսնում եմ այն, ինչ սկզբնական ամիսներին այնքան հստակ ու ակներև չէր, որ Թուրքիայի կառավարությունը որոշել էր որքան հնարավոր է այս լուրերը թաքցնել արտաքին աշխարհից։ Հաստատ էր, որ նրա նպատակն էր Եվրոպայից ու Ամերիկայից գաղտնի պահել հայերի ջարդը, մինչև նրա ամբողջական իրականացումը»[41]։

Նախ ժողովրդի մոտ եղած զենքերը հավաքեցին, պատճառաբանելով, թե պատերազմական վիճակն է այդպես թելադրում։ Բայց քիչ անց մահմեդականներից հավաքած զենքերը թաքուն վերադարձվեցին դրանց տերերին։ Հայ ժողովրդին զինաթափելու գործողությունները «հայկական բոլոր նահանգներում վերածվեցին զանգվածային ահաբեկչության»։ Ապա 18—50 տարեկան 300 հազար հայերի բանակ զորակոչեցին՝ պատերազմի ժամանակ միանգամայն տրամաբանական միջոցառում։ Բայց իրապես այդ արվեց հայերի կռվող ուժը ոչնչացնելու նպատակով։

«Զինվորագրություն ասված կատակերգությունն էլ,— գրում է Գր. Զոհրապը,— քրիստոնյաներին թալանելու մի այլ միջոց էր»[42]։

«Զորակոչված հայ երիտասարդներին,— գրում է Մ. Ռիֆաթը,— ուղարկելով ճանապարհների շինարարության վրա, տաժանակիր աշխատանքով ոչնչացնել սկսեցին»[43]։

Հայ երևելիներին ու մտավորականներին առաջարկեցին ժամանակավորապես, մինչև պատերազմի ավարտը, անվտանգության նկատառումներով տեղափոխվել ռազմաճակատից հեռու շրջաններ։

Հնարավոր բարդություններից խուսափելու համար շատ տեղերում հայերին, մյուս ազգերի տղամարդկանց հետ, կանչում էին կառավարչատներ՝ պատերազմական տուրք պահանջելու պատրվակով։ Բայց այլազգիներին անմիջապես ազատ էին արձակում, իսկ հայ տղամարդկանց բանտարկում ու խոշտանգելով կոտորում էին։ Նրանց ընտանիքները նույնիսկ կեղծ հեռագրեր ստացան, որ «ողջ առողջ հասել ենք մեզ համար նշանակված նոր բնակավայրերը և բարվոք վիճակում ենք»։

Մնացած ազգաբնակչությանը հեշտ էր հանել բռնագաղթի ու կոտորել, որովհետև դիմադրող ուժ այլևս դրեթե չկար։ Եվ կոտորեցին։ «Հայերի տեղահանությունն ու սպանդը,— գրում է Մ. Ռիֆաթը,— շատ վայրագ քաղաքական ոճիր էր»*[44]։

Հայ գյուղերի վրա հարձակման առաջին հրամանը տրվեց

* Կ. Պոլսում ռուսական դեսպանատան աշխատակից Սերաֆիմովը 1915 թ. մարտին գրել է. «Բանակում ծառայող բոլոր հայերը զինաթափ են արված։ Երզրումի շրջակայքի 17 գյուղերից միայն երեքն են կանգուն... Ամբողջ երկրում հայերը ձերբակալվում են»։

Մեկ ամիս անց, ապրիլի 10-ին նա գրեց. «Բանակ զորակոչելու պատրվակով մարդկանց ձերբակալում են, առանց տարիքը հաշվի առնելու նրանց բռնում են փողոցում, եկեղեցում, խանութում, տրամվայներում և նման այլ վայրերում, ժամանակ չտալով կարգավորելու իրենց գործերը, զգուշացնելու ծնողներին»։

1915 թ. ապրիլի 7-ին Գևորգ V կաթողիկոսը Սազոնովին գրել է. «Համաձայն հեռագրական հաղորդագրությունների, որոնք հաստատվել են այլ աղբյուրներով, իրականացվում են զինաթափ, անպաշտպան հայերի կոտորածներ Էրզրումում, Դերջանում, Զեյթունում և նրանց մոտակայքում, արյունալի բախումներ՝ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, թալան և սպանություններ՝ Էգինում, Կիլիկիայում, ամբողջ հայ ազգաբնակչության տնտեսական քայքայում»։

1915 թ. ապրիլի 12-ին Սազոնովը Փարիզում և Լոնդոնում Ռուսաստանի դեսպաններին գրեց. «Մինիստրությունում նոր տեղեկություններ են ստացվել ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և Թուրքերի ու քրդերի կողմից հայերին կոտորելու մասին»։

Վանում Ռուսաստանի հյուպատոսության աշխատակից Ստոլիցան արտաքին գործերի մինիստրությանը 1915 թ. ապրիլի 26-ին գրել է. «Նոր տոմարով ապրիլի 15-ից բոլոր հայերը փակվել են քաղաքի հայկական թաղում։ Զեվդեթ փաշան ռմբակոծում է քաղաքը... Շրջապատի մոտ 100 հայկական գյուղեր մորթված են...» («Геноцид армян в Османской империи», Е., 1982, с. 278—280).

1914 թ. հոկտեմբերի 25-ին, իսկ կոտորածները ծավալվեցին 1915 թ. հունվարից։ Այդ ժամանակ էր, որ Կովկասյան ռազմաճակատում նահանջող թուրքական զորքերը կողոպտեցին ու կոտորեցին Ալաշկերտի, Մուշի և Բիթլիսի հայությանը։

Կառավարությունը ձգտում էր, որ տվյալ շրջանի բռնագաղթի իրականացման ղեկավարությունը կենտրոնացված լիներ մեկ անձի ձեռքում, որպեսզի «խժդժությունները գործադրելու համար տրվող հրամանները հնարավորին չափ գաղտնի մնային, շատ մարդիկ չիմանային և ոճիրը կատարվեր անաղմուկ...»[45]։

Պոլսահայ գաղութի ղեկավարները տեսնելով ահագնացող վտանգը, 1915 թ. ապրիլի 23-ին պատրիարքարանում ժողովի հավաքվեցին։ Ժողովը հանձնարարեց Գրիգոր Զոհրապին և Զաքեհ Դիլբերին՝ կառավարությանը ներկայացնելու համար մի տեղեկանք պատրաստել, որտեղ պետք է ցույց տրվեր կայսրությանը հայերի հավատարմությունը, ներկայացվեր գավառներում տիրող ծանր վիճակը, հայ ժողովրդի գլխին կախված վտանգը և կառավարությանը կոչ արվեր հայերի նկատմամբ բարյացակամ լինել։

Ճակատագիրը ծաղրել գիտե։

Այդ նույն ժամանակ իշխանություններն ավարտում էին նախապատրաստական աշխատանքները՝ Կ. Պոլսի հայ գաղութի ղեկավարներին ու մտավորականությանը զանգվածաբար աքսորելու համար։

Ձերբակալությունները սկսվեցին ապրիլի 24-ին, շաբաթ օրվա ցերեկը, բայց դրանք զանգվածային բնույթ ստացան գիշերը։ Մեթթերհանեի բանտը լցվեց հայերով։ Ապրիլի 25-ին բանտարկվածներին քաղաքից հանեցին և տարան Մինջենքյոր, որտեղ նրանց երկու մասի բաժանեցին։ «Առավել վտանգավորներին» տարան Այաշ, իսկ մյուսներին՝ Զանդիր։ Պոլսում ձերբակալությունները շարունակվեցին մի քանի շաբաթ։

Այն, ինչ կատարվեց Կ. Պոլսում, կրկնվեց բոլոր հայաշատ վայրերում, Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գյուղերում։ Դա, ազգաբնակչության մոտ եղած զենքերը հավաքելուց ու զանգվածային զորահավաքից հետո, երրորդ ծանր հարվածն էր հայ ազգաբնակչությանը։ Նա գլխատվեց։ Դրանից հետո ամենուրեք սկսվեց հայերի ոչնչացումը, որի տարեգրությունը հետևյալ տեսքն ունի։ Ապրիլին ոչնչացվեց մտավորականությունը, մայիսին լրիվ տարագրվեցին և նշանակված վայրերում կոտորվեցին տղամարդիկ։ Մի շաբաթ անց սկսվեց կանանց, երեխաների և ծերերի բռնագաղթը։ Տեղահանությունը առաջինը սկսվեց Մարաշում և Զեյթունում 1915 թ. ապրիլին։ Կարինում այն սկսվեց մայիսի 15-ին։ Հունիսին տեղահանվեց Խարբերդի, Երզնկայի, Բաղեշի, Հուլիսին՝ Սեբաստիայի, Բաբերդի, Դերջանի, Մալաթիայի, Կիլիկիայի ծովափնյա շրջանների, Այնթափի, Քիլիսի, Ադյամանի, օգոստոսին՝ Տարոնի, Նիկոմիդիայի, Բրուսայի, Թրակիայի հայությունը։ 1915 թ. աշնանը իրականացվեց Միջագետք հասած հայերի ոչնչացումը։

1916 թ. գարնանը կոտորվեց Հյուսիսային Սիրիա բռնագաղթված 500 հազար հայ։ Ապրիլին Մոսուլ տանող ճանապարհին կոտորվեց Ռաս ուլ-Այնի, հունիսին՝ Դեր Զորի հայությունը։

Կոտորածներից մազապուրծ 600 հազար հայեր ոչնչացվեցին 1918—1922 թթ., որից 250 հազարը Արևելյան Հայաստանում թուրքական հարձակման ժամանակ, 1921-ին գրավելով Կիլիկիան, թուրքերը ոչնչացրին 50 հազար և տեղահան արեցին 160 հազար հայ, 1922 թ. կոտորվեցին Զմյուռնիայի հայերը։

«Բռնագրավումը,— գրում Հ. Մորգենթաուն,— որ զուգակցվեց զորակոչին, իրականում վերածվեց բնակչության կողոպուտի... թուրքերը վերցրին բոլոր ձիերը, ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը... էնվերն ինձ ասաց, թե 150 հազար կենդանի են հավաքել»։ Նույն կերպ թալանվեցին արդյունաբերողներն ու առևտրականները, որոնք քրիստոնյաներ էին։ «Այս արարքները,— ավելացնում է Հ. Մորգենթաուն,— քիչ էին տարբերվում գիտակցված ավազակությունից»։ «Ռազմական կարիքների համար կատարված բռնագրավումները,— գրում է Գր. Զոհրապը,— այլ բան չեն, եթե ոչ թալանի վաղնջական տրամադրությունների առջև բացված ասպարեզ»[46]։

Թալանի ու ոչնչացման ենթարկվեցին 66 քաղաքի ու 2500 գյուղի հայ բնակիչներ, քանդվեց ու կողոպտվեց 2000 եկեղեցի ու վանք, 1500 դպրոց ու վարժարան։ 1919 թ. տվյալներով հայ ժողովրդին հասցվեց 20 միլիարդ դոլարի վնաս։

Ինչո՞ւ հենց 1915 թ. գարնանը սկսվեց կոտորածը։ Դրա պատճառը ամենայն հավանականությամբ Սարիղամիշի խայտառակ պարտությունն էր և արևելյան բանակի ջախջախումը, Զեմալ փաշայի փետրվարի 2-ի արկածախնդրության ձախողումը Սուեզում։ Իսկ արևմտյան ռազմաճակատում դաշնակիցները Դարդանելից ուղղակի սպառնում էին կայսրության մայրաքաղաքին։

Թուրքերը խուճապի մեջ էին։ Կառավարությունը պատրաստվում էր թողնել Կ. Պոլիսը և տեղափոխվել Անատոլիա։ Հ. Մորգենթաուն մարտ ամսին Պոլսում տիրող վիճակի մասին գրել է. «Այդ պահին մայրաքաղաքից արդեն սկսել էին մեկնել կանայք և երեխաները, նրանք երկրի խորքերն էին տարվում, բանկերին կարգադրված էր իրենց ոսկիները Փոքր Ասիա ուղարկել։ Բարձրագույն դռան պաշտոնաթղթերը էսքիշեհիր էին տեղափոխվում և միաժամանակ գրեթե բոլոր դեսպանները, նրանց տեղակալներն ու պաշտոնատարները կարգադրություններ էին անում, թե ինչ պետք է արվեր, եթե հարկադրված լինեին քաղաքը դատարկելու։ Կ. Պոլսի արվեստի գործերի մեծ մասը թաղվեցին նկուղներում և կամ որևէ կերպ թաքցվեցին... Բոլոր նախապատրաստություններն ավարտված էին՝ կառամատույցում այն գնացքակազմերը, որոնք սուլթանին, կառավարությանը և դեսպաններին պետք է Փոքր Ասիա տանեին, շոգին միացած, պատրաստ էին առաջին իսկ ազդանշանով մեկնելու, և մենք բոլորս սպասում էինք դաշնակիցների նավատորմիղի հաղթական ժամանմանը»[47]։

Սակայն դաշնակիցները շուտով հետ քաշվեցին, չնայած դա չվերացրեց նրանց զորքերի ափ դուրս գալու վտանգը, որովհետև Դարդանելի օպերացիայում հաջողությունը թուրքական բանակի համար պյուրոսյան հաղթանակ էր, որ նրան թանձրացրեց մարդկային ուժի ու ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ։ Իսկ եթե դաշնակիցները Պոլիս մտնեին, հայ լիդերների քաղաքում գտնվելը թուրքերի համար ցանկալի չէր։

Բռնագաղթն ու կոտորածը սկսվեց։ Թուրքական ազգայնամոլներին հաջողվեց իրագործել գենոցիդի պանթուրքիստական քաղաքականությունը։ Բայց հայերի կոտորածները գաղտնի պահելու երիտթուրքերի ջանքերը, հասկանալի պատճառով, ձախողման էին դատապարտված։ Ջանաղան միջոցներով լուրերը երկրից արտահոսեցին։ Այս գործում մեծ էր կայսրությունում աշխատող օտարերկրացիների, դիվանագետների, ինչպես նաև եղեռնից մի կերպ փրկված հայերի դերը։ Մասնավորապես նշանակալից են Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանության պատասխանատու աշխատող Ա. Մանդելշտամի, ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի և գերմանացի գիտնական ու հասարակական գործիչ Յո. Լեփսիուսի ծառայությունները։

«Նյու Յորք Թայմսը» 1915 թ. մարտի 20-ից մինչև հոկտեմբերի 8-ը հայոց եղեռնի մասին տպագրել է 39 հոդված, իսկ մինչև 1916 թ. վերջը՝ ևս 76 նյութ։ Եղեռնի մասին հարյուրավոր նյութեր կարելի է գտնել աշխարհի ամենատարբեր երկրների (1915—1920 թթ. հրատարակված) մամուլի էջերում։

Արդեն 1915 թ. ապրիլի 26-ին բուլղարական թերթերը տպագրեցին Կ. Պոլսից ստացված մի լուր. «Թուրքական կառավարությունը, հայկական մի դավադրություն բացահայտելով, զանգվածային ձերբակալություններ է կատարել մայրաքաղաքի հայկական շրջաններում»[48]։

1915 թ. մայիսի 1-ին Բուլղարիայում հրատարակվող «Հայաստան» թերթը գրեց. «Ապրիլի 24-ի առավոտից Պոլսի ամբողջ ոստիկանությունը շարժման մեջ էր դրված։ Սկսեցին ձերբակալություններ նախնապես պատրաստված ցուցակով։ Գիշերը տեղի ունեցան բանտարկություններ՝ հետեւելով մինչև առավոտ... Ձերբակալված են հայկական բոլոր կուսակցությունների, հասարակությունների ու միությունների աչքի ընկնող անդամները, մի խոսքով, բոլոր նրանք, ովքեր լաբող էին դեր խաղալ հասարակական կյանքում»։ Թերթը 1915 թ. օգոստոսի 25-ին տպագրում է Պոլսից ստացված մի թղթակցություն՝ «Մեծ ճգնաժամ» վերնագրով։ «Դեռ չհագեցա՞վ հիվանդը ամբողջ Հայաստանը, բովանդակ Կիլիկիան, նաև Փոքր Ասիան ու Բութանիան ոչնչացնելով, Թուրքիայի հայության արյունը վերջապես մարելով, ահա յաթաղանը Պոլսի գլխին է։

Այս ժողովրդից ոչ մի շառավիղ չպե՞տք է մնա...»

1915 թ. օգոստոսի 1-ին Շ. Միսակյանը Կ. Պոլսից «Հայաստանի» խմբագրությանը հայտնում է, որ կոտորված, անհետացած, աքսորված ու մահմեդականացված հայերի թիվը արդեն հասել է 835.600-ի։ Եվ ավելացնում է. «Այս սևաբախտ ժողովուրդը նույնիսկ մի սև խաչ չունի իր թաղման վայրը նշելու համար...»

Սոֆիայի հայերը ստեղծում են մի հանձնաժողով, որը որոշում է.

ա) օգոստոսի 4-ին փակել բոլոր խանութները՝ ի նշան ընդհանուր սգի.

բ) նույն օրը կատարել հոգեհանգիստ և կազմակերպել սգո հանդես.

գ) ... քվեարկել բողոքի բանաձևեր և դրանք հանձնել կառավարությանը խնդրանքով՝ դիմել օտար կառավարություններին հայկական սարսափներին վերջ դնելու համար...

Բուլղարիայի, Ռումինիայի բոլոր հայաբնակ քաղաքներում տեղի ունեցան հոգեհանդեսներ ու բողոքի միտինգներ։ «Հայաստան» թերթը լույս տեսավ սև շրջանակով ու գրեց. «Եվ փույթ չէ, թե աշխարհում չգտնվի մի առաքինի տարեգրող, հայ ժողովրդի կենդանի փշրանքները իրենք կդառնան հավիտենական հուշարձաններ, այնպես որ ապագան երբեք չի կարող մոռանալ Մեծ եղեռնը»[49]։

Այսպիսով, Մեծ եղեռնի զոհերի հիշատակության օրը առաջին անգամ նշվել է 1915 թ. օգոստոսի 4-ին։

1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունները հայտարարություն հրապարակեցին Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածների մասին, որի մեջ ասված էր. «Արդեն մեկ ամսից ավելի է... Թուրք կառավարության գործակալների հետ համախորհուրդ և հաճախ նրանց իսկ օժանդակությամբ Թուրք և քուրդ ժողովուրդները կոտորում են հայերին։ Մասնավորապես ապրիլի կեսերին ջարդեր են կազմակերպվել Կարինի, Դերջանի, Բաղեշի, Սասունի, Զեյթունի և ամբողջ Կիլիկիայի մեջ։

Վանի նահանգում ավելի քան 100 գյուղի ժողովուրդ խմբովի ջարդված է։ Թուրք կառավարությունն էլ մայրաքաղաքի անմեղ հայ ազգաբնակչությանն է հալածում»[50]։

Հաջորդ օրը, մայիսի 25-ին օսմանյան կառավարությունը հերքեց այս մեղադրանքը՝ «Կայսրության սահմանների ներսում հայերի ոչ մի ջարդ տեղի չի ունեցել»։ Սակայն ջարդարարության փաստը ամբողջապես ժխտել այլևս հնարավոր չէր և երիտթուրք լիդերները որոշեցին համաշխարհային հասարակությանը խաբել՝ ասելով, որ իրականացվում է հայերի ոչ թե կոտորած, այլ՝ բռնագաղթ։ Ահա թե ինչու մայիսի 27-ին հրապարակվեց կառավարության հրամանը հայերի բռնագաղթի մասին։

Նույն օրը Էնվերը հրամայեց.

1. Պատերազմի ընթացքում բանակի, զորագնդերի և զորամասերի հրամանատարներին ու նրանց փոխարինողներին, ինչպես նաև անկախ խմբերի հրամանատարներին իրավունք է վերապահվում ռազմական ուժով անմիջապես և խստությամբ հիմնովին կանխել ժողովրդի կողմից որևէ դիմադրություն, որևէ զինված հարձակում, որ նպատակ ունի խոչընդոտել կառավարության հրահանգների ու միջոցառումների իրականացմանը...

2. ...Ելնելով ռազմական պահանջներից, բանակի անկախ

խմբերի և զորամասերի հրամանատարները իրավունք ունեն լրտեսության կամ դավաճանության դեպքում քաղաքների ու գյուղերի բնակիչներին առանձին կամ խմբերով տեղահանել և այլ վայրերում հաստատել...[51]։

Մայիսի 31-ին գերմանական դեսպան Վանգենհեյմը իր կառավարությանը գրում է. «Էնվեր փաշան մտադիր է, օգտվելով պատերազմական բացառիկ վիճակից, մեծ թվով հայկական դպրոցներ փակել, հայերեն թղթակցություններն արգելել, հայերի թերթերը փակել և արդի ապստամբական կենտրոններից բոլոր կասկածելի ընտանիքները Միջագետք գաղթեցնել։ (Էնվերը) թախանձագին խնդրում է, որ մենք այս գործում նրան չխանգարենք... Այս թուրքական միջոցները ամբողջ թշնամի աշխարհում նորից նոր հուզում պետք է առաջացնեն և նաև մեր դեմ պետք է օգտագործվեն... Այդ միջոցներն, անշուշտ, մեծ խստություններ են հայ ժողովրդի նկատմամբ։ Իմ կարծիքով մենք դրանք, ըստ նրանց ձևի, անշուշտ, մեղմելու ենք, բայց սկզբունքորեն չպետք է արգելենք...»[52]։

Դրանից անմիջապես հետո հրապարակվեց օսմանյան կառավարության հայտարարությունը, որ ստորագրել էին Թալեաթը, Էնվերը և Նազիմը. «Նկատի ունենալով, որ նրանց (հայերի) մոտ արգելված զենքեր են գտնվել, ինչպես նաև պայթուցիկ նյութեր՝ երկրի ներսում հեղափոխություն կատարելու նպատակով... և որ նրանք մեծ օգնություն ցույց տվին ռուսական գնդերին, իսկ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ, որոշեցինք՝ այս խռովությունների առաջն առնելու համար, որ կարող են առաջ բերել հայերն ըստ իրենց սովորության, նրանց հավաքել և տեղափոխել Մոսուլի և Սիրիայի կուսակալությունները և Դեր Զորի գավառակը՝ առանց դիպչելու նրանց կյանքին, կայքին և պատվին»[53]։

Բոլոր հայերը պարտավոր էին այս հրամանի հրապարակումից հետո հինգ օրվա ընթացքում թողնել իրենց բնակավայրերը և ոստիկանների հսկողությամբ հեռանալ։ Նրանց արգելված էր վաճառել իրենց հողերը և ունեցվածքը կամ դրանք ուրիշին պահ տալ։ «Եթե հայերից ոմանք փորձեն զինվորների ու ոստիկանների դեմ զենք բարձրացնել, պետք է նրանց դեմ զենք գործածվի և այդպիսիներին հարկավոր է դեն շպրտել ողջ թե մեռած։ (Եթե նրանք...) մեկնելու ժամանակ փախչեն կամ

թաքնվեն, եթե նրանց պատսպարեն կամ օգնություն և սնունդ տան, այդպիսիներին ևս սպառնում է գնդակահարություն»[54]։

1915 թ. հունիսի 11-ին Վանգենհեյմը գրեց. «Ակներև է, որ հայերի տարագրության շարժառիթը սոսկ ռազմական նկատառումները չեն...

Ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը այժմ կայսերական դեսպանատան մեջ պաշտոնավարող դոկտոր Մորգմանի հետ վերջերս ունեցած իր ժամադրության ժամանակ բացեիբաց հայտարարեց, որ Բ. Դուռը ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից՝ արմատախիլ անելու իրենց ներքին թշնամիներին (բնիկ քրիստոնյաներին), առանց անհանգստանալու օտար դիվանագետների միջամտությունից»[55]։

Այսպիսով, երիտթուրքերը հրապարակավ ընդունեցին, որ իրենք իրականացնում են հայերի բռնագաղթ, միաժամանակ համառորեն հերքելով այն հրեշավոր իրողությունը, որ կայսրության հայ աղգաբնակչությունը զանգվածային կոտորածների է ենթարկվում։

1915 թ. նոյեմբերի 18-ին Թալեաթը հեռագրեց Հալեպի կուսակալին. «...մի շարք տեղերում ամերիկյան հյուպատոսները գաղտնի միջոցներով տեղեկություններ են ձեռք բերում... աշխատեք, որ քաղաքին, գավառներին և կենտրոններին մոտ գտնվողներին (հայերին) տարագրելու ժամանակ ուշադրություն գրավող դեպքերի տեղիք չտրվեն։ Ներկա քաղաքականության տեսակետից կարևոր է, որ այդ վայրերում շրջող օտարները համոզվեն, թե (գաղթականների) առաքումը իսկապես տեղափոխության նպատակով է կատարվում... Իսկ այս մասին (օտարերկրացիներին) տեղեկություն տվող լրտես անձանց ձերբակալելն ու այլ պատրվակներով ռազմական դատարաններին հանձնելը շատ կարևոր եմ համարում»[56]։

Մեկ ամիս անց Թալեաթը ծածկագրեց. «Իմացել ենք, որ մի քանի հայկական թերթերի թղթակիցներ, այդ կողմերը շրջելով, մի շարք եղերական դեպքեր ներկայացնող լուսանկարներ ու թղթեր են կազմել... Նման վնասակար անձանց ձերբակալելով ոչնչացրեք»[57]։

18 օր անց Թալեաթը նորից ծածկագրեց. «Լսել ենք, որ օտար սպաները ճանապարհների եզրերին դիզված ծանոթ անձնավորությունների (հայերի) դիակներ տեսնելով լուսանկարում են։ Այդ դիակներն անմիջապես թաղելը և դրանք թափված չթողնելը շատ կարևոր է»[58]։

Առաջին համաշխարհային պատերազմի ամեն մի օրը արյունոտ եղավ հայ ժողովրդի համար և դրանցից յուրաքանչյուրն ավելացրեց եղեռնի մասին վավերագրերի ու վկայությունների քանակը։ Դրանց մի զգալի մասը օգտագործվեց երիտթուրքերի ղեկավարների 1919—1920 թթ. դատավարությունների ժամանակ։ Այդ փաստաթղթերի վավերականությունը հետաքննող հատուկ հանձնաժողովը մանրազնին քննության ենթարկեց և հետո միայն փաստաթղթերը ներկայացրեց դատարաններին որպես հավաստի վկայություններ։ Կ. Պոլսի կառավարության աջակցությամբ տեղական իշխանությունները ևս այդ հանձնաժողովին ուղարկեցին մեծ քանակությամբ նյութեր։ Դրանք հիմնականում ներքին գործերի և ռազմական մինիստրությունների, երիտթուրքերի կենտկոմի կողմից նահանգների ղեկավարներին ու զինվորական հրամանատարներին ուղարկված հեռագրեր էին։

Իսկ այդ ի՞նչ հանձնաժողով էր. նախապատրաստվելով երիտթուրքերի դատավարությանը, թուրքական կառավարությունը ստեղծեց մի շարք արտակարգ դատարաններ։ Դրանց բոլորին համապատասխան վավերական հավաստի նյութերով ապահովելու համար անհրաժեշտ էր դարձնում հետաքննող օղակի գոյությունը։

1918 թ. նոյեմբերին սուլթանը Անկարայի նախկին կուսակալ Մազհար բեյի նախագահությամբ մի հետաքննող հանձնաժողով ստեղծեց, որը սկսեց նյութեր հավաքել հայասպանության մասին։ 1919 թ. փետրվարի 4-ին ռազմական դատարանի նախագահը ՆԳՄ-ից պահանջեց դատարանին հանձնել հայերի տեղահանության և բնաջնջման վերաբերյալ պաշտոնական վավերագրերը կամ նրանց վավերացված կրկնօրինակները։ Միաժամանակ Մազհար բեյը ամենուրեք գրություններ ուղարկեց՝ խնդրելով հանձնաժողովին ներկայացնել վավերագրեր ու հավաստի վկայություններ։ Ստացվեցին մեծ թվով նյութեր։

Ռազմական դատարանի 293 թղթապանակներում հավաքվեցին թուրքական պաշտոնական և կիսապաշտոնական բազմաթիվ վավերագրեր, որոնց մի մասը հրատարակվեց ռազմական դատարանի պաշտոնաթերթ «Թագուիմը Վագայի Դիվանը Հարպը Էորֆի Մուհաբեմաթը Զաբթ ջերիտեսիի» մեջ։

Շատ պաշտոնական փաստաթղթեր հրատարակված են ժա-

մանակի մամուլում։ Դրանք տպագրել են ավելի քան 40 թուրքական, 20 հայկական, 10 հունական, 8 ֆրանսիական, բազմաթիվ ամերիկյան և անգլիական թերթեր ու հանդեսներ։ Նշենք նաև, որ Կ. Պոլսի Զավեն պատրիարքը 1922 թ. հավաքում է եղեռնի մասին վերը նշված վավերագրերը, ինչպես նաև հազարավոր այլ պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթեր ու դրանք գաղտնի ուղարկում Եվրոպա։ Որոշ ժամանակ անց վավերագրերով լի սնդուկները տեղափոխում են Երուսաղեմ, ուր և գտնվում են մինչև օրս։ Փաստաթղթերը գրված են արաբատառ թուրքերենով և նրանց միայն չնչին մասն է օգտագործված։ Դրանց վրա է կառուցված Գրիկերի «Եղողատի հայասպանության վավերագրական պատմությունը» փաստական նյութով հարուստ ու շահեկան գիրքը։

Սկսած 1916-ից, ցեղասպանության մասին վավերագրեր ու հոդվածներ են տպագրել Հ. Մորգենթաուն, Յո. Լեփսիուսը, Ժան Մարի Գարզուն, Ա. Բարբին և ուրիշներ։ 1921 թ. Բոստոնում լույս տեսավ Ա. Անտոնյանի «Մեծ ոճիրը» գիրքը։

Ժամանակակից թուրք պատմաբաններին ու քաղաքական գործիչներին հատկապես մեծ անհանգստություն են պատճառում, Հ. Մորգենթաուի, Յո. Լեփսիուսի, Ա. Անտոնյանի աշխատությունները, որովհետև դրանք շրջանառության մեջ են դրել մեծ քանակությամբ վավերագրական նյութեր։ Չկարողանալով հերքել այդ նյութերի իսկությունը, թուրք պատմաբանները դիմում են տգեղ, ուսումնասիրողին անվայել միջոցների։ Նրանք հայտարարում են՝ Հ. Մորգենթաուին հավատալ չի կարելի, որովհետև նա եղել է «հոգեկան հիվանդ»։ Լեփսիուսը «խաբեբա է» և զբաղվել է գրագողությամբ՝ արտագրել է Հ. Մորգենթաուի գիրքը։ Ա. Անտոնյանը «սրիկա հանցագործ է», որ Նայիմ բեյը (որից Ա. Անտոնյանը ձեռք է բերել ծածկագրերն ու հեռագրերը) հնարովի դեմք է, այդպիսի թուրք պաշտոնյա գոյություն չի ունեցել, որ Ա. Անտոնյանի գրքում օգտագործված հեռագրերը «սարքել են» հայերը Փարիզում։

Թուրք պատմաբանները այլ ելք չունեն, որովհետև «Մեծ ոճիրը» հայոց Մեծ եղեռնի իրականացման փաստաթղթերի իսկական ժողովածու է, որը տարեթվային հաջորդականությամբ, հետևողականությամբ և ուժեղ տրամաբանությամբ բացահայտում է երիտթուրք լիդերների նախաձեռնող և ղեկավար դերը հայ ժողովրդի բնաջնջման գործում։

Իսկ որ Ա. Անտոնյանի գրքում հավաքված նյութերը ճշմարիտ են արտահայտում պատմական իրողությունը, ապացուցվում է բազմաթիվ փաստերով։ Այսպես, օրինակ, երբ դաշնակիցները Կ. Պոլիս մտան, խուզարկությունների ժամանակ երիտթուրքերի Նուր էլ-Օսմանիե ակումբում գտան եղեռնի մասին բազմաթիվ պաշտոնական գրություններ, իսկ Բ. Շաքիրի փեսա Ահմեդ Ռամեզ բեյի բնակարանում գտնվեց մի մեծ պայուսակ, որ պարունակում էր բազմաթիվ վավերագրեր, ծածկագրեր և գաղտնի ժողովների արձանագրություններ, որոնք օգտագործվել են Մ. Ռիֆաթի «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը...» գրքում[59]։

Ոստիկանների հայտնաբերած հեռագրի մեջ էր Թալեաթի ծածկագիրը՝ ուղղված Մալաթիայի երիտթուրքերի ակումբին. «Ձեր գավառն ուղարկված և այդտեղ հավաքված հայերին բնաջնջեք՝ բարոյական և նյութական ողջ պատասխանատվությունը ինձ վրա լինելու պայմանով»[60]։

Գտնվեցին նաև Բ. Շաքիրի և Նազիմի ստորագրությամբ հեռագրեր. «Կետ առ կետ գործադրեցեք հայերին սպանելու մասին ձեզ տրված հրամանը»[61]։

«Հայերին ջարդելու մասին սրանից առաջ ձեզ տրված հրամանը գործադրեցեք»*[62]։ Ահա և Բ. Շաքիրի բանաստեղծություն-շրջաբերականը։

Թող զենք չպայթի,	Մեծերին մորթուել,
Թող զինվորը չանի,	Գեղուհիներին ընտրել,
Թող հայ չմնա։	Մյուսներին տարադրել[63]։

Այստեղ էր նաև Թալեաթի հեռագիր-շրջաբերականը։ «Առանց որևէ վարանումի ու գութի բնաջնջեք մեկ ամսականից

* Հալիդե էդիպը պատերազմի տարիներին մեկնում է Հալեպ։ Նրան ուղեկցում էր Ջեմալ փաշայի քարտուղար Ռ. Ֆայիհը։ Ադանայում գնացք է բարձրանում Բ. Շաքիրը։ Ռ. Ֆայիհը Հ. Էդիպին ծանոթացնում է երիտթուրք գործչի հետ։ Հետագայում Հ. Էդիպը հանդիմանելով Ռ. Ֆայիհին, ասում է. «... գու ինձ հարկադրեցիր սեղմել մարդասպանի ձեռքը»։

(«Դունյա», 7 դեկտեմբերի 1967 թ.)։

Նույն Ռ. Ֆայիհը իր «Ջանկայա» գրքի 450-րդ էջում գրում է. «Ափսոս, որ առանց հայկական ողբերգության Աթաթուրքի ազգային դաշինք շարժումը չէր կարող արմատավորվել»։ Նրա կարծիքով, առանց ցեղասպանության «այսօր Թուրքիան արևելյան նահանգներում կդիմակայեր մի Հայաստանի»։

մինչև 90 տարեկան հայերին, միայն թե ոչ քաղաքում ու ոչ ժողովրդի աչքի առաջ»[64]։

Այս հեռագրերի և Ա. Անտոնյանի գրքում զետեղված փաստաթղթերի միջև, եթե նույնիսկ տարբերություն կա, ապա լոկ առանձին դեպքերում և այն էլ միայն շարադրանքի մեջ։ Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա դրանք բացարձակապես նույնն են։

Երկու խոսք եղեռնի վավերագրերի ու վկայությունների հրապարակումների մասին։ Եղեռնը մոռացության տալու տարիներին, այսինքն 1922—1965 թվականներին, այդ նյութերի ուսումնասիրության և հրապարակման ուղղությամբ քիչ գործ կատարվեց։ 1960-ական թթ. սկսվեց մի նոր ժամանակաշրջան, որի հեղինակն ու նշանաձողը դարձավ 1966 թ. Երևանում Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած «Геноцид армян в Османской империи» վավերագրերի ու վկայությունների ժողովածուն։

1965—1987 թթ. ոչ միայն Սովետական Միությունում, այլ նաև արտասահմանյան շատ երկրներում լույս տեսան հայկական ցեղասպանության մասին բազմաթիվ հետազոտություններ, փաստաթղթերի ժողովածուներ, ականատեսների վկայություններ։

Մասնավորապես, հիշատակության արժանի է Ա. Բեյլերյանի աշխատանքը ֆրանսիական արխիվներում եղեռնի մասին եղած նյութերի հրատարակության ուղղությամբ։ Հրատարակվեց ավելի քան 700 վավերագիր։

1980 թ. Ռ. Քլյանը Բերկլիում հրատարակեց ԱՄՆ-ի մամուլում հրապարակված նյութերի՝ «Հայերի ցեղասպանությունը» ժողովածուն, որը պարունակում է շուրջ 300 հրապարակումներ։

* * *

Սրագրելով և իրականացնելով հայերի բռնագաղթն ու ոչնչացումը, երիտթուրքերը բազմազան և բազմատեսակ միջոցների դիմեցին համաշխարհային հասարակական կարծիքին խաբելու համար։ Գերմանական «Վոլֆ» հեռագրական գործակալության միջոցով Եվրոպա հասան հինգ հաղորդագրություններ, որոնք բոլորն էլ երիտթուրքական կեղծիքներ էին։ 1915 թ. օգոստոսին թուրքական կառավարությունը ժնևի իր դեսպանի միջոցով եվրոպական թերթերին ուղարկեց հետևյալ պաշտոնական հերքումը. «Թուրքական բարեխնամ կառավարության պաշտպանության տակ գտնվող բոլոր հայերը, լինի տղամարդ, կին կամ երեխա, վայելում են կատարյալ ազատություն։ Գտնվեցին միայն մի քանի հանցավորներ, բայց նրանք էլ դատվեցին օրինավոր կերպով կազմված դատարանների կողմից»[65]։

Այս կեղծիքը ճշմարտության տեղ հրամցնելու նպատակով կազմակերպվեցին հայերի բազմաթիվ ցուցադրական դատավարություններ ու կախաղաններ։ 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում կախաղան հանվեցին հնչակյան 20 գործիչներ։ Կեսարիայում մահվան դատապարտվեց 50 մարդ, այդ թվում և Մուրադը՝ Համբարձում Պոյաճյանը։

Ռետիկանական պաշտոնաթերթ «Փոլիս մեջմուասի» մեջ տպագրվում էին հայերի դավաճանությանը և հակաթուրքական գործունեությանը նվիրված բազմաթիվ շինծու հոդվածներ, լուսանկարներ և այլն։

Թալեաթը, Էնվերը, ինչպես նաև կուսակալներն ու զորավարները իրենց ստորադասներին անդադար հրամայում ու հանձնարարում էին, որ 1914 թվականի հուլիս ամսվա ընդհանուր զորաշարժից ի վեր հավաքեին և պահեին հայերի «խռովությունների» մասին բոլոր տեսակի ապացույցները, որոնցով «հնարավոր լիներ արդարացնել հայ ժողովրդի նկատմամբ կիրառված տեղահանության և բնաջնջման պետական քաղաքականությունը»։ Ահա Էնվերի 1915 թ. հուլիսի 14-ի հրամանը բանակների հրամանատարներին. «Բացարձակապես անհրաժեշտ է օրեցօր հավաքել ու պահել բոլոր ապացույցները, բոլոր վավերագրերը, որոնք նպատակ ունեն աշխարհի աչքի առաջ արդարացնելու մեր այն վերաբերմունքն ու միջոցները, որոնք որդեգրել ենք խորտակելու համար հայ հեղափոխական շարժումը, որպեսզի դրանք հրատարակվեն գրքույկներով»[66]։

Էնվերը պահանջում էր յուրաքանչյուր ամիս գլխավոր շտաբ ուղարկել հայերի ապստամբական-դիվերսիոն գործունեության մասին վավերագրեր, պաշտոնական վկայություններ, լուսանկարներ, կատարված դեպքերի նկարագրություններ։ Նա գտնում էր, որ յուրաքանչյուր զորամաս պետք է հատուկ մատյան պահի այդ նյութերը հավաքելու ու գրանցելու համար։

Արաբ հեղինակ Ֆ. էլ-Ղոսեյնը գրում է, որ «թուրքերը սպանված հայերին քրդական տարազ էին հագցնում՝ ապացուցելու

համար, որ դա հայերի գործն է»։ Որոշ տեղերում նույն նպատակով սպանված հայերին թուրքի հագուստ էին հագցնում։ Այս ստոր մեթոդով նախ տպավորություն էր ստեղծվում, որ կոտորողները ոչ թե թուրքերն ու քրդերը, այլ հայերն էին, և ապա այն օգտագործում էին հայ-թուրքական և հայ-քրդական թշնամությունը բորբոքելու համար[67]։

Թուրք ժողովրդին խաբելու նպատակով 1916-ին գումարվեց երիտթուրքերի համագումար։ Զեկուցումով հանդես եկավ Թալեաթը։ Այդ զեկուցման իմաստը նույնն էր՝ հայերը խռովություններ բարձրացրին, մտադիր էին ապստամբել, նրանք հայրենիքին դավաճանեցին և դրա համար պատժվեցին։

Այդ նույն նպատակով 1916 թ. հրատարակվեցին «Հայ հեղափոխական կուսակցություններն ու օսմանյան կառավարությունը» և «Հայ կոմիտեների հեղափոխական ձգտումներն ու գործունեությունը սահմանադրությունից առաջ և հետո» գրքերը։ Դրանց կցված էին վավերաթղթեր, նկարներ և այլ նյութեր, այդ թվում «Մայր Հայաստան» նկարը, Հայաստանի քարտեզը և այլն, որպեսզի ընթերցողը համոզվեր, որ հայերն ուզում են մասնատել Թուրքիան և նրա տարածքների վրա ստեղծել անկախ Հայաստան։

Հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու գործում ևս երիտթուրքերին օգնում էին գերմանացիները։ Թուրքիայում կայզերի անձնական ներկայացուցիչը գրել է. «Կյանքիս մեծագույն մասը ապրել եմ Թուրքիայում և ճանաչում եմ հայերին։ Գիտեմ նաև, որ հայերն ու թուրքերը մի տեղ ապրել չեն կարող այս երկրում... հետևաբար այս ցեղերից մեկն անհետանալու է... Ես չեմ մեղադրում թուրքերին, որոնք հայերին վերացնելու վրա են... Հայերն ուզում են անդամահատել Թուրքիան, այս պատերազմում նրանք թուրքերի ու գերմանացիների դեմ են։ Հետևաբար իրավունք չունեն գոյություն ունենալու։

Որպեսզի արդարացնեն երիտթուրքերի «սատանայական միջոցառումները,— գրում է Հ. Մարկվարտը,— ... գերմանական մամուլը Գերմանիայի քաղաքնու գլխին թափեց զրպարտիչ հաղորդագրությունների հեղեղ, որոնք մասամբ ծագում էին թուրքական աղբյուրներից... հայերը նկարագրվում էին ամենագորշ գույներով, որպես առևտրականների ու արյուն ծծող վաշխառուների հավաքածու...»[67]։

Հայերի ապստամբական դիտավորությունների մասին Թալեաթի 1915 թ. օգոստոսի 9-ի հեռագրին Անկարայի 5-րդ զորաբանակի հրամանատարի պաշտոնակատար Խալիլ Ռեջային պատասխանեց. «Պատիվ ունեմ հայտնելու, որ զորակոչից մինչև օրս նահանգում հայերը չեն գործել որևէ էական եղեռնագործ»[68]։

Իսկ 13-րդ զորաբաժնի հրամանատար Սուլեյման բեյը 1915 թ. օգոստոսի 11-ին հեռագրեց Խալիլ Ռեջայի բեյին. «Պատիվ ունեմ ձեզ հայտնելու, որ զորակոչի սկզբից մինչև այսօր... իմ իրավասության տակ ապրող հայերից ոչ մեկը թե՛ ժողովրդի և թե՛ իշխանության դեմ հարձակում և ընդոստական շարժում կամ հեղափոխության փորձ չի արել»[69]։

Ահա մի ծածկագիր ևս.

«Պահակախմբի հրամանատարը ինձ տեղյակ է պահել, որ Պողազյան գավառակում ընդոստական շարժման ոչ մի նշան չկա... Այս գավառակում մնացած հայ ընտանիքների զավակները իրենց գյուղերում ոչ միայն չեն շրջում, այլև չեն համարձակվում տան շեմից ոտք դուրս դնել։ Այս գավառակում առաջ եկած ցավալի երևույթներից մեկը սաստիկ թալանն է, որ հայ գյուղերում գործում են լրացուցիչ զինքի տակ վերցված մարդիկ, չերքեզ ձիավորները և մահմեդական բազմամարդ ամբոխը...

Առաջին գնդի դասապետ, ավագ հարյուրապետ Իսմայիլ Ռիֆաաթ»[70]։

Եոզգատի ոստիկաններն ու 5-րդ բանակի շատ զինվորներ վերադաս օրգանների ու զորամասերի հրամանատարների բազմաթիվ հարցումներին պատասխանել են, որ վիլայեթի հայերը դաշնակցական և հնչակյան կուսակցությունների հետ կապ չունեն, սակայն «այդ նույն անձինք, որոնք իրենց պատիվ էին համարում «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատկանելը, Նեջաթի բեյի միջնորդությամբ հայանեցին բանակի և զորաբաժնի հրամանատարությանը, թե հայկական մի երևակայական կոմիտե գոյություն ունի։

Սրանք հրամայեցին քննություն կատարել, զենքեր փնտրել, բայց գտան միայն այն զենքերը, որ խուզարկողները իրենց ձեռքով էին դրել և վերջապես հրաման ստացան հայերին տեղահանելու»[71]։

Իսկ գնդի հրամանատար Թեվֆիգ էֆենդին, շրջելով հայկական

գյուղերով, սպանել տվեց բազմաթիվ հայերի, թե իբր «նրանք պատկանում էին կոմիտեներին»[72]։

1919 թ. մարտի 5-ին Ջեմալ բեյը դատարանին ցուցմունք տվեց, որ Թևֆիգ բեյը «ինձ խնդրում էր, որ գյուղի հայերը, որոնք թնդանոթներով զինված էին, այլ վայրեր տարագրվեն և նրանց փոխարեն թուրքեր բերվեն։ Հենց իմացա այս թնդանոթների պատմությունը, հետաքննություն սկսեցի, բայց այն տրևէ բանի չհանգեցրեց. ըմբոստության հետք անգամ չկար, լոկ բանակից մի քանի փախստականներ լեռներն էին ապաստանել։

Դրանից հետո հուլիսի 18-ին (Անկարայից) ստացվեց տարագրության հրամանը...»[73]։

Ռազմական դատարանը 1919 թ. ապրիլի 8-ի դատավճռով հերքեց Նոզդատի հայերի ապստամբության մասին վարկածը։ Դատարանը գտավ, որ «Բոլոր նշված պարագաները այդ տեսակ ոճիր գործելու համար (տեղահանելու և ջարդելու) արդարացնող փաստ չեն, որովհետև, եթե հայ ժողովրդի նույնիսկ մի մասը հակակառավարական գործունեության մասնակից եղած լինի, մնացածը փաստորեն ցույց տվեց իր հավատարմությունը...»[74]։

Թուրք ազգաբնակչության վրա հայ կամավորների կատարած «գաղանությունների» մասին թուրքական պնդումների առնչությամբ Ֆ. Նանսենը գրում է. «Անատոլիայի ջարդերից ճողոպրած հայերը միացան այդ (կամավորական) գնդերին։ Թուրքերը լրբություն ունեցան նրանց «մատնիչ» որակելու, որովհետև համարձակվում էին կռվել իրենց ժողովրդի դահիճների դեմ»։

«Հայ կամավորական գնդերից ոմանք չկարողացան դիմադրել վրեժ լուծելու փորձությանը։ Այդ առանձին դեպքերը անհնար է նույնիսկ հեռավոր համեմատության մեջ դնել թուրքերի գործած վայրագությունների հետ»[75]։

Այսինքն ոչ թե թուրք բնակչության վրա հայ կամավորների հարձակումն է պատճառ հանդիսացել հայերի զանգվածային կոտորածների, այլ, ընդհակառակը, կոտորածներից մազապուրծ հատուկենտ հայերն էին, որ վրեժխնդրությամբ լցված զենքի դիմեցին։Ինչ.վերաբերում է հայերի կողմից քրդերի ոչնչացմանը, ապա այդ պանթուրքիստների և պատմության թուրք կեղծարարների մտքի արգասիքն է, որ նպատակ ունի իաբել միամիտներին ու անտեղյակներին, քրդերի մեջ ատելություն

դաստիարակել հայ ժողովրդի նկատմամբ։ Նույն նպատակն է հետապնդում նրանց ջանքերը՝ հայերի ինքնապաշտպանական կռիվները ներկայացնելու որպես ապստամբություն։

Ա. Մանդելշտամը համոզիչ փաստերով հերքում է հայերի ապստամբական տրամադրությունների մասին հերյուրանքները։ «Այն դեպքերում,— գրում է նա,— երբ հայերը (իրենց մոտ եղած) զենքերը հանձնում էին, Կ. Պոլիս զեկուցում էին, որ դավադրություն է բացահայտվել», իսկ երբ զենք չէր հայտնաբերվում, այնքան էին խոշտանգում, որ հայերը հարկադրված մահմադականներից զենք էին գնում և հանձնում իշխանություններին։

«Ի հեճուկս թուրքական կառավարության կեղծ հայտարարությունների, ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չի եղել»,— հայտարարում է Ա. Մանդելշտամը և ապա ավելացնում. «Հայերը զենք են վերցրել միայն այն ժամանակ, երբ նկատել են կոտորածի վտանգը... պետք է հատկապես շեշտել, որ հայերը միայն պաշտպանվել են և երբեք առաջինը չեն հարձակվել թուրքական զորքերի վրա»[76]։

Իրողություն է, որ Արևմտյան Հայաստանի մի շարք շրջանների՝ Վանի, Շատախի, Մուշի, Սասունի, Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի հայ ազգաբնակչությունը դիմադրեց թուրքական ջարդարարներին, կռվի ելավ իր կյանքը եթե ոչ փրկելու, ապա գոնե զենքը ձեռքին մեռնելու համար։

Յաթաղանի դեմ արևմտահայության պայքարի ամենափայլուն դրվագը Վանի պաշտպանությունն է։ Դրա համար էլ թուրքական պրոպագանդան առավել ակտիվությամբ է այն օգտագործում հայերի ապստամբությունը որպես իրողություն ներկայացնելու համար։

Թուրքական ռադիոն 1984 թ. նոյեմբերի 4-ին ասում էր. «1914 թ. հոկտեմբերի վերջերին լուրեր են հասնում, որոնք վկայում են, որ հայերը Վանում պատրաստվում են ըմբոստության։ 1914 թ. Վանի նահանգապետը նամակ է ուղարկում ներքին գործերի մինիստրություն, որով հաստատում է վերոհիշյալ միտքը»։ «Եվ իրոք, ռուսների կողմից Վանը գրավելուց հետո պարզ երևաց ռուսական կայսեր հեռագրի իմաստը..., որը զոհաբերությունների համար շնորհակալություն է հայտնում Վանի բնակչությանը»։ «Արամ Մանուկյանը թողել է իր

աշխատանքը և զենք վերցրել։ Նա Վանում ղեկավարում էր ըմբոստությունը»։

Այս կապակցությամբ բերենք իրադարձությունների ժամանակակիցների մի քանի վկայություններ։ «Կասկած չկա,— 1915 թ. մայիսի 1-ին հեռագրել է Սազոնովը,— որ Վանում հայերի ապստամբությունը կոտորածների հետևանք է և ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»[77]։

Մայիսի 14-ին կաթողիկոսը Սազոնովին հայտնում է. «Թուրքական ժանդարմերիան Վանի վիլայեթում զորահավաքի կամ հասարակական աշխատանքներ կատարելու պատրվակի տակ հավաքում է հայ տղամարդկանց և հայրենի վայրերից հեռու տեղերում զանգվածաբար սպանում, իսկ կանանց և երեխաներին առևանգում են»[78]։

Վանում Իտալիայի հյուպատոսության գործակալը 1915 թ. մայիսի 31-ին գրել է. «Ջեվդեթ բեյը Սալմաստում, Խոզրակում և Բաշկալեում քրիստոնյաներին կոտորելուց հետո Վանի տղամարդկանցից պահանջեց զորակոչվել բանվորական զորամասերի համար։ Սակայն իրականում նրանց հավաքում էին, որպեսզի ոչնչացնեն, ինչպես մեկ անգամ Ջեվդեթ բեյն արդեն արել էր, հրամայելով դավաճանաբար գնդակահարել իր հրամանատարության տակ գտնվող բազմաթիվ այլ զինվորներին։ Վանի շրջակայքի գյուղերի հայերի մոտ եղած զենքերը հավաքեցին և 16 հազար մարդ սպանեցին... Այս բոլոր կոտորածները կատարվում էին արտակարգ դաժանությամբ։ Տղաների փորերն էին պատռելով բացում, լրիվ մերկացնում էին կանանց ու աղջիկներին և, ինչպես գաղանների, քշում էին լեռները»[79]։

Նանսենը գրում է. «Այդ ժամանակ պայթեց Վանի ըմբոստությունը, որ թուրքերն անվանեցին «Հայկական դավադրություն»։ Զեռքի տակ ունենք ականատես գերմանացի և ամերիկացի միսիոներների վավերական տեղեկագրություններ։ 1915 թ. փետրվարին Վանի վալի Ջեվդեթ բեյը թուրքերի մի ժողովում հայտարարել է. «Բնաջնջեցինք Աղրբեջանի հայերին ու սիրիացիներին, բնաջնջենք և Վանի հայերին»։ Հոգուտ բանակի հայերին ամոթալի միջոցներով կողոպտեցին, շրջակա գյուղացիները քրդերի և ոստիկան զինվորների ավազակությանն ու բռնաբարումներին ենթարկվեցին։

...Ջեվդեթ բեյը հարձակում պատրաստեց Վանի հայկական

թաղերի վրա, միաժամանակ հրամայեց ջարդեր կազմակերպել Արճեշի և Հայոց ձորի գյուղերում։ Կանանց և երեխաներին պաշտպանելու համար հայերը քաշվեցին Վանի իրենց թաղերը...

Թուրքերը հայկական թաղերը ռմբակոծեցին թնդանոթներով ու ձեռնառումբերով։ Հայերը պաշտպանվեցին ինչպես կարողացան։ Միայն մի քանի ատրճանակ ու հրացան ունեին. ռազմամթերք չունեին։ Իրենց ձեռքերով զենքեր, փամփուշտներ և ռումբեր պատրաստեցին։ Թուրք զինվորներն ու քրդերը ավերում են Վանի շրջակայքը, այրում տները, կոտորում ծերերին, կանանց և երեխաներին։

... Պաշարումն ու ռմբակոծումը տևեց չորս շաբաթ։ Մայիսի 16-ին դրանք հանկարծ դադարեցին և Ջեվդեթ բեյն ու թուրքերը փախան։ Ի՞նչ էր պատահել։ Ռուսական մի զորաբանակ էր մոտենում Վանին։

Մայիսի 18-ին ռուսական առաջապահ գնդերը մտան Վան. ահավոր եղելության մասին ռուսները ևս տեղեկություն չունեին...

Թուրքական հարձակման դեմ Վանի հայկական ինքնապաշտպանությունը ունեցավ իր պատմիչը՝ Էնվեր փաշան։ Թուրքական կառավարությունը Բեռլինում հրատարակեց մի տեղեկագրություն, որն ուղարկեց նաև այլ երկրներ։ Ըստ այդ տեղեկագրության, ըմբոստ հայերի խմբերը հարձակվել են մահմեդական ժողովրդի վրա։ Վանի վիլայեթի 180 հազար մահմեդականներից միայն 30 հազարը ճողոպրեցին մահից։

Ավելի ուշ, 1915-ի հոկտեմբերի 1-ին, Բեռլինի թուրքական դեսպանատունը հայտարարեց, որ «ոչ պակաս, քան 18 հազար մարդ սպանված էր։ Դրանից հետո մահմեդականները վրեժ են լուծել և ի՞նչ հարկ կա զարմանալու»։ Հարձակման պահին սպանված 18 թուրքերը դարձել են... 18 հազար։ Այս բացահայտ սուտը որոշ հիմք ունի։ Ըստ վիճակագրության, Վանում բնակվում էր 180 հազար մահմեդական, որից 30 հազարը՝ թուրք, 150 հազարը՝ քուրդ։ Երբ ռուսական բանակը մոտենում էր, թուրքերը—փախան արևմուտք, քրդերը մնացին իրենց տեղում և վատ վերաբերմունքի չարժանացան ո՛չ ռուսների և ո՛չ էլ հայերի կողմից»[80]։

«... Թուրքերի բոլոր միացյալ ջանքերը չեն կարող ծածկել այն ոճիրները, որոնք ճնշում են Թրքության ուսերը...»,— գրում է «Սաբահ» թերթի խմբագիր Ա. Քեմալը։

«Ի՞նչ պետք է անենք... Ներո՞ւմ պիտի խնդրենք։ Պետք է ասե՞նք, թե հայերն են, որ չարդեցին Թուրքերին։ Սակայն ուրիշ երկրներում օրենքն ու խիղճը թույլ չեն տա, որ անմեղը այդպես ամբաստանվի, նրա կինն ու զավակները մորթվեն, որպեսզի մենք կարողանանք այդպիսով ինքներս մեզ անմեղ դարձնել Եվրոպայի աչքում։

Վանում կեղեքիչ ոճիրներ գործեցին մի քանի անհատներ և կառավարական ուժը պարտավոր է բնաջնջել միայն այս ոճիրների հեղինակներին, մինչդեռ մեր կառավարությունը որոշեց չարդեր կատարել, մորթել տվեց մարդկային զանգվածների, կողոպտեց նրանց ունեցվածքը և հրապարակեց լքյալ գույքերի օրենքը, այսինքն՝ գրավել այն կալվածքները, որոնք հնարավոր չէր եղել հափշտակել։

Մեր՝ Թուրքերիս առաջ քաշած պատճառաբանությունները, համաձայն որի Վանում հայերն են մեզ վրա նախահարձակ եղել, և, որ մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք, գոհացում կարող է տալ միայն նրանց, ովքեր «զգացմունքայնությամբ» և ոչ թե գիտական և իրավական տրամաբանությամբ են դատում»[81]։

«Վագիթ» օրաթերթը 1919 թ. տպագրեց Թուրքիայի ներքին գործերի նախարարության հետևյալ հայտարարությունը. «Ստույգ է, որ մի քանի հայեր օգնեցին մեր թշնամուն և որոշ հայ դեպուտատներ թուրք ազգի դեմ ոճիրներ գործեցին։ Սակայն թուրքական կառավարության պարտականությունն էր ձերբակալել ոճրագործներին և միայն այս վերջիններին պատժել։ Շատ ցավալի է, որ մեր այն ժամանակվա ղեկավարները, ավազակային ոգով տոգորված, տեղահանման օրենքն այնպես կիրառեցին, որ ամենահանդուգն արյունարբու ավազակները այդպես վարվել չէին կարող։

Նրանք որոշել էին բնաջնջել հայերին և բնաջնջեցին»[82]։

Ակնհայտ կեղծիք է նաև այն պնդումը, թե հայերի բռնագաղթը հարկադրական միջոցառում էր և նպատակ ուներ նրանց հեռացնել ստրատեգիական նշանակություն ունեցող շրջաններից և դրանով իսկ ապահովել թուրքական բանակի թիկունքը հայերի հավանական հարձակումից։ Հայկական կոտորածների հեղինակներից մեկը, կայզերական Գերմանիայի հյուպատոս Շոյքները 1915 թ. հունվարի 2-ին գրել է. «Այդ ակտը (բռնագաղթը) չի կարող հիմնավորվել ռազմական նկատառումներով, որովհետև

տեղական հայերի ապստամբելու հնարավորությունը բացառված է, քանի որ գաղթվողները ծերեր, կանայք ու երեխաներ են»[82ա]։ Գերմանական դեսպան Վանգենհեյմը կանցլեր Բեթման-Հոլվեգին 1915-ի հունիսի 17-ին գրում է. «Բացարձակապես ակնհայտ է, որ հայերի գաղթեցումը արդյունք է ոչ միայն ռազմական միջոցառումների։ Ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը վերջերս ուղղակի հայտարարեց. «Բ. Դուռը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնականապես հաշվեհարդար տեսնի ներքին թշնամու (տեղական քրիստոնյաների) հետ»։ Եվ ապա, «բռնագաղթը նույնքան ծանր է, որքան ղանգվածային ոչնչացումը»[83]։

1915 թ. հուլիսի 7-ին գրված մի այլ նամակում, դեսպանը կանցլերին հայտնում է, որ թուրքերը սկսել են հայերին կոտորել ու քշել նաև այն շրջաններից, որոնք «չեն գտնվում թշնամու ներխուժումների որևէ վտանգի տակ»[84]։

Մի քանի օր անց գերմանական հյուպատոս Շոյքները դեսպան Վանգենհեյմին գրում է Էրզրումից. «Տեղի վալի (նահանգապետ) Թահսին փաշայի կողմնակիցները բացահայտ ընդունում են, որ իրենց գործունեության գլխավոր նպատակը հայերի լրիվ ոչնչացումն է Թուրքիայում։ Պատերազմից հետո «մեզ մոտ Թուրքիայում հայեր այլևս չեն լինի»[85]։

Դրա համար էլ տեղահանությունը համընդհանուր էր և ընդգրկում էր ամբողջ Փոքր Ասիան։

Ղանգվածային բռնագաղթ չկատարվեց միայն Կ. Պոլսից, Զմյուռնիայից և ծովափնյա մի քանի այլ քաղաքներից։ Թուրքական պատմագրությունն աշխատում է դրանով հիմնավորել, որ օսմանցիները ցեղասպանության մտադրություն չեն ունեցել։ Իսկ Լոուրին բացականչում էր. եթե դա ցեղասպանություն էր, ապա հնարավո՞ր է պատկերացնել «որ Հիտլերը խնայեր Բեռլինում բնակվող հրեաների կյանքը»[86]։

Մինչդեռ այս քաղաքներից զանգվածային բռնագաղթ չիրականացնելը պայմանավորված էր մի քանի գործոններով.

ա) դրանց տնտեսական կյանքում հայերը բացառիկ դեր ունեին, և նրանց ոչնչացումը կարող էր կազմալուծել երկրի տնտեսությունը.

բ) դրանցում մեծ էր օտարերկրացիների թիվը, և հայերի բռնագաղթը կարող էր լրացուցիչ բարդություններ ստեղծել.

գ) Կ. Պոլիսը և Արևմտյան Անատոլիան Հայաստան չէին,

իսկ երիտթուրքերի քաղաքականությունը առաջին հերթին ձգտում էր հայերին ոչնչացնել Արևմտյան Հայաստանում։

Այդ է պատճառը, որ որքան խորանում ենք դեպի Արևելք, կոտորածներն այնքան վայրագ ու գազանային բնույթ էին կրում։ Եթե ծովափնյա քաղաքներում կատարվեց միայն մասնակի բռնագաղթ, Էրզրումի ու Սեբաստիայի շրջաններում ջարդերն իրականացվեցին բռնագաղթի միջոցով, ապա Բիթլիսի վիլայեթում հայերին ոչնչացրին տեղերում։

Գրեյս Կնապի «Բիթլիսի ողբերգությունը» գրքում (հրատարակվել է 1919 թվականին) գրված է, որ Հալեպի կառավարիչ Աբդուլհալիքը ասել է. «Մուսուլմանների տառապանքները, որոնք դրսևորվում են հիվանդությունների ու պատերազմների միջոցով որպես արդարացի պատիժ, տրված է արդարամիտ աստծո կողմից՝ հայերի նկատմամբ մեր կազմակերպած կոտորածների համար։ Նրանցից (հայերից) մի քանիսը արժանի էին պատժի, բայց մենք շատ հեռուն գնացինք։ Այժմ աստված մեզ պատժում է»։

Թալեաթ փաշան մի առիթով ասել է, որ հայերի բռնագաղթի կազմակերպմամբ ինքը վրեժ է լուծում Սարիղամիշում Էնվեր փաշայի պարտության համար[87]։ Թալեաթը ստում է։ Նա ոչ թե վրեժ էր լուծում, այլ փորձում էր խաբել թուրքերին, օսմանյան բանակի խայտառակ պարտության մեղքը բարդելով հայերի վրա։ Դրանով նա աշխատում էր նաև արդարացնել բռնագաղթն ու կոտորածները։ Նրան հաջողվեց այս խնդրի առնչությամբ երկրում հակահայկական մեծ աղմուկ բարձրացնել, նոր թափ հաղորդել շովինիստական կրքերին։

«Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում,— գրում է «Советская Россия» օրաթերթը 1987 թ. փետրվարի 18-ին,— պարտություն պարտության հետևից կրելով, Թուրքիայի կառավարողները ձգտում էին դրա մեղքը բարդել քրիստոնյա ազգաբնակչության և, առաջին հերթին, հայերի վրա, նրանց բոլորին հայտարարելով «ռուսական լրտեսներ», «կայսրության թշնամիներ»։ Ոչնչացվեց 1,5 միլիոն խաղաղ բնակչություն, իսկ ամբողջ Արևմտյան Հայաստանը վերածվեց այրված անապատի»։

Սարիղամիշում թուրքական բանակի պարտության պատճառները միանգամայն այլ էին։

Կարինում կենտրոնացված էր 150 հազարանոց մի բանակ, որը, ըստ էության, չէր մատակարարվում։ Զորքի մի մասը տեղավորված էր հայ ընտանիքներում ու ապրում էր նրանց հաշվին։

Կ. Պոլսում ռուսական դեսպան Ս. Գիրսը 1914 թ. հոկտեմբերի 9-ին հեռագրեց Պետրոգրադ. «Բանակը (թուրքական) չի ապահովված հանդերձանքով, հրացանով և սննդամթերքով։ Սկսվել է սովը և դասալքությունը»։ Սկսվեց նաև համաճարակը, որ հնձում էր ոչ միայն ազգաբնակչությանը, այլ նաև զորքին։ Կարինի վիլայեթում համաճարակից ու ցրտից մեռավ 110 հազար մարդ։ Տեղի գերմանական հյուպատոսը գրում է. «Թուրքական գնդերի... մեկ երրորդը հիվանդացել է, իսկ մնացած երրորդ մասը բանակից հեռացել ու դասալիք է դարձել»։ Լիման ֆոն Սանդերսը գրում է. «Թուրքական բանակն այսօր 300 հազարից ավելի դասալիք ունի»։ Սարիղամիշի պարտության գլխավոր պատճառը բանակի այս ծանր վիճակն էր։

Սարիղամիշի օպերացիան ղեկավարում էր Էնվեր փաշան։ Այդ փառամոլը, ելնելով իր եսասիրական շահերից, պաշտոնից հեռացրեց 1200 լավագույն սպաների, որ չէր կարող բացասական լուրջ ազդեցություն չունենալ բանակի մարտունակության վրա։ Հինդենբերգը Էնվերի մասին գրում է, որ նրա «հրամանատարական կարողությունները հավասար են զրոյի»։ Դրա փոխարեն Գերմանիայի շահերի համար պայքարում «ընթացող պատերազմի ժամանակ այս թուրքի ներդրումը եղավ անսահման»։ Էնվերը թուրքիային գերմանական սայլին կապեց և, առաջին հերթին, նրա ջանքերով էր, որ կայսրությունը պատերազմի մեջ մտավ որպես Գերմանիայի դաշնակից։ Գերմանիայում «Թուրքիա» բառի փոխարեն օգտագործում էին «Էնվերլանդ» բառը։

«... պատերազմական ախտով վարակված մի անփորձ երիտասարդ (Էնվերը) իր գերմանասեր հակումներով է ղեկավարում պետությունն ու բանակը, ինքնագլուխ ամեն օր նոր հիմարությունները որպես օրենք հրատարակելով» (Գր. Զոհրապ)[88]։

Լ. Սանդերսը Էնվերի մասին գրել է. «Փորձից ու ինտելեկտից լրիվ զուրկ, աննշան անձնավորություն է»։

Մի այլ մասնագետ՝ Դանիշմենդը, գրում է. «Սարիղամիշի պարտությունը օսմանյան ամենախոշոր պարտություններից մեկն է... և հետևանք մեկ անհաջի (Էնվերի) փառք վաստակելու մարմաջի»[89]։

Էնվերը լսեց 3-րդ բանակի հրամանատար Հ. Իզզեթ փաշայի խորհուրդները, նրան հարկադրեց հրաժարական տալ և ինքը կանգնեց բանակի գլուխ։ Դա Օսմանյան բանակի խայտառակ պարտության մյուս պատճառն էր։

Բացի դա։

Օսմանյան ռազմական մինիստրության պատմության հաստատության ղեկավար Ս. Սամիհը 1935 թ. տպագրած մի հոդվածում գրում է, որ հայկական գյուղերի վրա հարձակումներ, հայերի նկատմամբ խժդժություններ կատարվել են Սարիղամիշի ճակատամարտից առաջ։ Արդեն 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հայ տղամարդկանց օգտագործում էին որպես քաշող ուժ։ Բ. Շաքիրը կոտորածներ կազմակերպելու համար Էրզրում ու Մուշ գնաց 1914 թ. դեկտեմբերի սկզբներին, այսինքն՝ մինչև Սարիղամիշի ճակատամարտը։ Իսկ ճակատամարտի օրը՝ դեկտեմբերի 22-ին, համիդիե ջոկատները արդեն շրջապատել էին Ալաշկերտի բնակավայրերը և սկսեցին կոտորել հայ ազգաբնակչությանը։ Երբ հունվարի կեսին ռուսները եկան, «մահմեդականները, վախենալով քրիստոնյաների դեմ իրենց կատարած չարագործությունների համար պատժվելուց, ընտանիքներով լքեցին իրենց գյուղերը և կառավարության օգնությամբ վերահաստատվեցին Մանազկերտի և Բուլանըխի հայկական գյուղերում»[90]։

Մարիա Յակոբսոնը 1907 թ. որպես բուժքույր մեկնում է Արևմտյան Հայաստան, Խարբերդում մի փոքր հիվանդանոց է բացում և աշխատում։ Կոտորածներից հետո Բեյրութի մոտակայքում «Թռչնոց բույն» անունով որբանոց է կազմակերպում հայ որբերի համար։ Պատմում է հայ ժողովրդին նվիրյալ այդ դանիացի կինը.

«1914 թ. ապրիլի 29։ Վերադարձա Խարբերդ...

Ժողովուրդը սարսափի մեջ է։

... Ասում են այս բոլորը ծրագրված ջարդերի սկիզբն է։ Հինգ օր ժամանակ են տվել բոլոր զենքերը հավաքելու համար։

... Թուրքերը հայերի վրա սուտ մեղադրանքներ են բարդում, որպեսզի կարողանան ասել, թե հայերը պատժվում են արդարացիորեն»։

Սկսվում է տեղահանությունը։

Թուրք զինվորները, որոնք հիվանդանոցի մոտ պահակ էին

կանգնած, զարմանքով ասում էին. «Ինչո՞ւ եք դրամ և ուտելիք տալիս. սրանք լեռները մեռնելու են գնում»։

«Որքան դժվար է տեսնել թուրք կանանց հայկական արդուզարդով ներս ու դուրս անելիս։ Ամեն օր նոր գաղթականներ են գալիս։ Սրանց պարտությունները մեկը մյուսից սոսկալի են, բայց իրական... Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովրդի ցավերն ու տառապանքները, հալածանքներն ու սարսափը։

Ինչպիսի՜ երկիր, ի՜նչ ժողովուրդ և ի՜նչ դժբախտություն...

Տղամարդիկ սպանված են, կանայք ու երեխաներն անտերության են մատնված։ Թուրքերը հայ կանանց համոզում են ամուսնանալ իրենց հետ... եթե ոչ, իրենք էլ են դատապարտված։ Կանայք դիմադրում են... Թուրքերը կատաղում են։ Նրանք հոգնում են սպանելուց»[91]։

Կարելի է բազմաթիվ այլ փաստեր բերել ցույց տալու, որ հայերի բնաջնջումը սկսվել էր մինչև Սարիղամիշի ճակատամարտը։ Դա ծրագրված ոչնչացում էր, և Սարիղամիշը միայն արագացրեց նրա գործադրումը։ Որ դա ծրագրված բնաջնջում էր, վկայում է նաև հետևյալը. 1914-ի վերջերին թուրքերը իրականացրին Ուրմիայի շրջանում բնակվող նեստորական արաբների ոչնչացման ծրագիրը։ Այսինքն խնդիր էր դրված ոչնչացնել բոլոր այն ոչ թուրք տարրերին, որոնք փակում էին Կովկասի և Իրանի թուրքական ծագում ունեցող ժողովուրդների հետ կապը։ Պատահական չէ նաև թուրքերի հետևյալ հայտարարությունը. «Նախ մենք կսպանենք հայերին, ապա՝ քրդերին, այսինքն՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բոլոր ոչ թուրքերը բնաջնջման վտանգի տակ էին»։

Պոլսի Արդարության պալատի ճակատին ոսկե մեծ տառերով գրված է. «Արդարադատությունը պետության հիմնաքարն է»։ Դարի սկզբին Կ. Պոլսում հրատարակվող կիսակառավարական «Ալեմդար» օրաթերթը, նկատի ունենալով վերոհիշյալ ոսկետառ նշանաբանը, գրում է. «Տեղահանության և կոտորածների դատավարության ընթացքում բացահայտված խժդժությունները իրենց ամբողջ մերկությամբ երևան հանեցին, որ այս երկրում իրավունքն ու արդարությունը չէ, որ տիրում են, այլ կեղեքումն ու ոճիրն են կաղմում կառավարության որդեգրած վարքագիծը։

Չփորձենք հայերին հանցանք վերագրել, որովհետև չկար-

ծենք, թե աշխարհը ապուշ է։ Կողոպտեցինք ունեցվածքն այն անձանց, որոնց տեղահանեցինք և ջարդեցինք...

Մեր արդարադատության նախարարը բանտերի դռները բացեց։

Կազմակերպեցին հրոսակախմբեր հայ մանուկներին, ծերերին, տղամարդկանց ու կանանց մորթելու համար...

Այս բոլորը մենք արեցինք»[92]։

1. Սապահ Գյուլյան Ս., Պատասխանատուները, Եգիպտոս-Հելիապոլիս, 1916, էջ 220։
2. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 188.
3. Նույն տեղը, էջ 188։
4. Նույն տեղը, էջ 203։
5. Ա. Ալպոյաճեան, Պատմություն Եվդոկո հայոց, Կահիրե, 1952, էջ 1212։
6. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 29—30։
7. Геноцид армян ..., с. 255.
8. Նույն տեղը, էջ 256։
9. Նույն տեղը, էջ 257—258։
10. Նույն տեղը, էջ 259։
11. Նույն տեղը, էջ 264։
12. Նույն տեղը, էջ 260։
13. Նոր կյանք, 23 հոկտեմբերի 1986 թ.։
14. Նույն տեղը։
15. Геноцид армян ..., с. 268.
16. Նույն տեղը, էջ 275։
17. Анри Барби, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919, с. 131.
18. Геноцид армян ..., с. 277.
19. Էջմիածին, 1965 № № 2—3—4։
20. Նոր կյանք, 23 հոկտեմբերի 1986 թ.։
21. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը, Բեյրութ, 1968, էջ 92։
22. Նույն տեղը, էջ 97—99։
23. Նույն տեղը, էջ 99—100։
24. Նույն տեղը, էջ 100—101։
25. Նույն տեղը, էջ 101։
26. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 137—139։
27. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 114—116։
28. Դ. Ե. (Երուսաղեմ տեղեկատու դիվան) № Մ 492—Մ 494։
29. Դ. Ե. № Մ 256։
30. Դ. Ե. № Մ 535։
31. Թագուիմը Վագայի, 25 մայիսի 1919 թ.։
32. Նույն տեղը, № 3772։
33. Նույն տեղը, 8 հունիսի 1919 թ.։
34. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 112։

35. Թագուիմը Վագայի, 6 օգոստոսի 1919 թ.։
36. Դ. Ե. № Հ 171—182։
37. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 117։
38. Նույն տեղը, էջ 120—121։
39. Դե Օրիենտ, 7 ապրիլի 1915 թ.։
40. Նույն տեղը, 26 մայիսի և 30 հունիսի 1915 թ.։
41. Ապագա, 10 հունիսի 1985 թ.։
42. Նոր կյանք, 23 հոկտեմբերի 1986 թ.։
43. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 90։
44. Նույն տեղը, էջ 91։
45. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 52։
46. Նոր կյանք, 23 հոկտեմբերի 1986 թ.։
47. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
48. Հայաստան, 1 մայիսի 1915 թ.։
49. Նույն տեղը։
50. Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 122։
51. Кавказское слово, 1919, կամ Մ. Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության..., էջ 119։
52. Հ. Տալեան, Հայ ազգային տարեգրությունը գերմանական վավերագրերու համեմատ, Վիեննա, 1921, էջ 16—17։
53. Ֆայեզ էլ-Ղոսէն, Հերոսական հայության անցյալից, Կահիրե, 1960, էջ 4։
54. Ա. Գալֆայան, Ջոմախլու, Նյու Յորք, 1930, էջ 130։
55. Նազլյան, էջ 37։
56. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 147։
57. Նույն տեղը, էջ 151։
58. Նույն տեղը, էջ 154։
59. Արքամարտ, 18 դեկտեմբերի 1918 թ.։
60. Լա ռենեսանս, 7 փետրվարի 1919 թ.։
61. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
62. Նույն տեղը։
63. Ա. Քալֆեյան, Կարմիր դրվագներ հերոսների կյանքեն 1915—1918, հ. Ա., Բուխարեստ, 1933, էջ 63 և 65։
64. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 228։
65. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
66. Դ. Ե. № Հ. 602։
67. Геноцид армян ..., с. 406.
67ա. Նույն տեղը, էջ 276։
68. Դ. Ե. № Հ 630—Հ 631։
69. Դ. Ե. № Հ 630։
70. Դ. Ե. № 304։
71. Դ. Ե. № 574—577։
72. Նույն տեղը։
73. Լա ռենեսանս, 6 մարտի 1919 թ.։
74. Թաշուիմը Վագայի, № 2617։
75. Ֆ. Նանսեն, Հայաստանը և Մերձավոր արևելքը, Վերլուծ, 1966, էջ 222—223։

76. Геноцид армян..., с. 498—499.
77. Նույն տեղը, էջ 281։
78. Նույն տեղը։
79. Նույն տեղը, էջ 285։
80. Ֆ. Նանսեն, Հայաստանը և Մերձավոր արևելքը, էջ 267—270։
81. Լա ռենեսանս, 1 մարտի 1919 թ.։
82. Նույն տեղը, 14 դեկտեմբերի 1918 թ.։
82ա. Геноцид армян..., с. 288.
83. Նույն տեղը։
84. Նույն տեղը, էջ 291։
85. Նույն տեղը, էջ 295։
86. Armenian reporter 7—14 հունիսի 1984 թ.։
87. Թայմս, 29 սեպտեմբերի 1915 թ.։
88. Նոր կյանք, 23 հոկտեմբերի 1986 թ.։
89. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 768։
90. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 5, էջ 18։
91. Լրաբեր, 13 հոկտեմբերի 1984 թ.։
92. Լա ռենեսանս, 14 մայիսի 1919 թ.։

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

«... Երբ Անատոլիայի զանազան վայրերում սկսվեց հայերի տեղահանությունը,— իր հուշերում գրում է Թալեաթը,— Պոլսի հայերի շրջանում և մասնավորապես կոմիտեներում տիրեց արտասովոր տագնապ։ Հայկական կոմիտեների վարչական կենտրոնը Պոլսում էր։ Այս քաղաքն էր ամեն տեսակ ռազմական շարժումների կենտրոնը։ Հետևաբար, ընդհանուր փութկոտություն դրսևորվեց նախ Պոլսում որևէ ապստամբության հնարավորությունը կանխելու և նեղուցների պաշտպանությունը կազմակերպելու համար։ Իրեն ենթակա դերատեսչությանը (ոստիկանության պետը) հրամայեց ձերբակալել և պաշարման շրջանից հեռացնել բոլոր այն անձանց, որոնք առնչություն ունեին կոմիտեի գործողության հետ։ Այս հրամանը տալուն պես ոստիկանապետը ինձ տեղեկացրեց։ Փնտրվող անձանց մի մասը կովկասցի էր։ Նրանք մի գիշերվա ընթացքում ձերբակալվելով ուղարկվեցին Կոնիա։ Ավելի ուշ քննիչ հանձնաժողովը պարզեց, որ նրանք Անկարայի ռազմական ատյան տանելու ժամանակ սպանվել են ոստիկանության կողմից...

Ըստ էության ռազմական նախազգուշական միջոցառումը անխիղճ, անդեմ մարդկանց պատճառով ստացել էր ողբերգական կերպարանք»[1]։

Թալեաթը չի թաքցնում իր դիտավորությունը։ Նա հայերի ոչնչացումը համարում է ոչ թե ծրագրված պետական քաղաքականություն, այլ «անխիղճ, անդեմ» պաշտոնատարների սխալ գործունեության, հասարակության ստորին խավարամոլ խավերի մոլեռանդության ու ընչաքաղցության, ինչպես նաև պատերազմի պատճառով ստեղծված ծանր պայմանների՝ սովի և համաճարակի հետևանք։

Պանթուրքիզմի մունետիկները հայտարարում են,— գրել է «Советская Россия» օրաթերթը 1987 թ. փետրվարի 18-ին,— «որ ոչ մի գենոցիդ չի եղել, այլ պատերազմ էր գնում, երկու կողմերն էլ զոհեր էին տալիս, իբր Թուրքերը նույնիսկ ավելի շատ կորուստներ են տվել»։

Սակայն վավերաթղթերը, վկայությունները, տարբեր առիթներով երիտթուրքական լիդերների արտահայտած կարծիքները, նրանց հրամանները, հեռագրերն ու ծածկագրերը անառարկելիորեն հաստատում են, որ Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը պետական քաղաքականություն էր, որ բխում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության պանթուրքիստական գաղափարախոսությունից։

Ի դեպ, առանձին դեպքերում երիտթուրքական լիդերները ուղղակի կամ անուղղակի ձևով այդ խոստովանել են, նույնիսկ փորձել են այն բացատրել ու հիմնավորել։ Ահա մի քանի մեջբերումներ հայերի մասին երիտթուրք գործիչների արտահայտած մտքերից։

Մորգենթաուի հետ հանդիպումներից մեկի ժամանակ Թալեաթը ասել է. «Հայերի դեմ մեր թշնամությունը հիմնված է երեք կետի վրա...

Առաջին՝ նրանք հարստացել են Թուրքերի հաշվին։

Երկրորդ՝ նրանք որոշել են իշխել մեզ վրա և անջատ պետություն հիմնել։

Երրորդ՝ բացահայտորեն քաջալերել են մեր թշնամիներին։ Կովկասի մեջ օգնել են ռուսներին, և մեր ձախողումը առավելապես նրանց գործունեությամբ է բացատրվում։

Հետևաբար, մենք չվերանայվող որոշում ենք ընդունել՝ պատերազմի ավարտից առաջ նրանց (հայերին) անզոր դարձնել...

Ես խնդրեցի այստեղ դալ, որպեսզի Ձեզ հաղորդեմ, որ այս

հարցում մեր անելիքը լրիվ որոշված է, և ոչինչ այն փոխել չի կարող։ Մենք Անատոլիայում այլևս հայ տեսնել չենք ուզում։ Նրանք կարող են միայն անապատում ապրել և ուրիշ ոչ մի այլ տեղ...»[2]։

Իսկ «Բեռլիներ տագեբլատի» թղթակցին Թալեաթն ասաց. «Մեր երեսին շպրտում են, որ մենք անմեղ և մեղավոր հայերի միջև տարբերություն չենք դնում։ Այդ բանն անել բացարձակապես անհնար է, որովհետև այսօրվա անմեղները, թերևս, վաղվա հանցագործներն են»[3]։

Երբ հայերը վերաշինեցին Վանը, Թալեաթը գրեց. «Այս իժերը կրկին գլուխ են բարձրացնում։ Սրանց հաշիվը պետք է վերջնականապես մաքրել»։

Թալեաթի խոսքերն են. «Ձեզ, հայերիդ, պետք է այնպես ցիր ու ցան անենք, որ 50 տարի մտքից հանեք բարենորոգումների գաղափարը»[4]։

«Ձեր առարկություններն ավելորդ են,— ասել է Թալեաթը Մորգենթաուին,— հայերի 3/4-ին արդեն ոչնչացրել ենք։ Բիթլիսում, Վանում և Էրզրումում հայ չի մնացել։ Ներկա պահին հայերի ու թուրքերի միջև ատելությունը այնքան ուժեղ է, որ անհրաժեշտ է մեր հաշիվները մաքրել նրանց հետ։ Եթե մենք այդ չանենք, նրանք պետք է վրեժխնդիր լինեն...

Խնդրում եմ, որ կյանքի ապահովագրության ամերիկյան ընկերություններից ստանաք և մեզ ուղարկեք նրանցում ապահովագրված հայերի լրիվ անվանացուցակը։ Բոլոր հայերը մեռել են, և այդ դրամները որպես ժառանգություն ստացողներ չեն մնացել։ Անշուշտ, այդ բոլոր դրամները պատկանում են օսմանյան պետությանը»[5]։

«Սրանից հետո ոչ մի հայ մեր բարեկամը լինել չի կարող, բայց մենք մեր արածի համար երբեք չենք զղջա,— իր խոսքն ավարտեց Թալեաթը»[6]։

Իզուր չէ, որ Ու. Եկենը երիտթուրքերին անվանել է «անարդարության և զուլումի պատմություններում Աբդուլ Համիդի հաջորդներ»։

Թալեաթի հետ մի այլ հանդիպման մասին Հ. Մորգենթաուն գրել է. «Թալեաթը, կարծելով, որ հաղթանակն ու անպատիժ մնալը ապահովված է, ցինիկ կերպով խոստովանում էր, որ պարզապես որոշված էր վերջնականապես բնաջնջել մի ամբողջ ցեղ...»։ «Հայկական հարցը լուծելու համար 8 ամսում ես շատ

ավելին արեցի, քան Աբդուլ Համիդը՝ 30 տարվա ընթացքում»։ «Հայկական հարց այլևս գոյություն չունի»[7]։

Թալեաթը Կ. Պոլսում գերմանական ներկայացուցիչ Ֆ. Բանտրոֆի հարցապնդմանը պատասխանեց. «Այլևս հայեր չկան»։ Հ. Էդիպի «Հուշեր» գրքի (լույս է տեսել Նյու Յորքում 1926-ին) 387-րդ էջում տպված են Թալեաթի հետևյալ խոսքերը. «Ես պատրաստ եմ իմ արածի համար մեռնելու և գիտեմ, որ դրա համար ես պիտի մեռնեմ»։

Իսկ էնվերը, Մորգենթաուի այն հարցին, թե գույն կառավարությունը տեղյակ չէ՞, գուցե դա միայն պաշտոնյաների՞ ձեռքի գործն է, պատասխանում է. «Լրիվ սխալ եք... մենք այս երկրի բացարձակ տերերն ենք։ Ես երբեք նպատակ չունեմ մեղադրանքը մեր ստորադասների վրա գցելու և ուզում եմ ստանձնել պատասխանատվությունն այն ամենի, ինչ պատահեց։ Կառավարությունը տարագրությունների հրահանգը ինքն է տվել, և ես համոզված եմ, որ մենք իրավունք ունեինք կարծելու, թե հայերը մեր թշնամիներն են։ Դեռ ավելին, այսաղի տերերը մենք ենք, և ոչ ոք չէր հանդգնի, առանց մեր հավանության, նման քայլերի դիմել»[8]։

«Կոտորածները,— «Մորնինգ պոստի» թղթակցի հարցին պատասխանել է թագաժառանգ Ս. Մեհմեդը,— ամենաանչնչելի արատներն են, որոնք նսեմացրին մեր ազգն ու ժողովրդին։ Կոտորածը Թալեաթի ու էնվերի գործն էր։ Բնաջնջման գործը սկսելուց առաջ էնվերին հարցրի, թե կոտորածի ծրագիր ունե՞ն։ Նա ուղղակի պատասխանեց, որ այդ մասին վճռական որոշումներ կան, որոնք իրենց ծրագրի մասն են կազմում»[9]։

Էնվերը Կ. Պոլսում Հռոմի պապի ներկայացուցչին հայտարարեց, որ «ինքը կանգ չի առնի, քանի դեռ կա մեկ կենդանի հայ»։

Այսպիսով, «ոչ թե հայերի դավաճանությունը, այլ էլ ավելի մեծ երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականությունն էր այս դրամայի հիմքում։ Երիտթուրքերի գլխավորները մի տեսակ սոցիալական դարվինիզմ էին քարոզում, որ նրանց հնարավորություն էր ընձեռում գոհ լինել իրենց ռասայական քաղաքականությունից...»[10]։

Հայնպամ գերմանական հյուպատոս Ռյոսլերը գրում է. «Փաստերի (չարգելի եղանակների) այս կրկնությունը ապացուցում է, որ խոսքը պատահական ապականությունների մասին չէ, այլ իշխանությունների կողմից նախապես մշակված ծանրագա-

ծային բնաջնջման։ Միայն Մեսքենե քաղաքում 55 հազ. հայ էր թաղված»[11]։

Որ կոտորածները գենոցիդի պետական քաղաքականության հետևանք էին, ավելի պարզորոշ երևում է երիտթուրք լիդերների հրամաններից, որոշումներից ու հեռագրերից։

1915 թ. ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի և Նազիմի ստորագրությամբ տեղերը ուղարկված հրահանգում գրված էր. որպեսզի պատերազմում պարտության դեպքում Անտանտը չօգտագործի հայերին, նրանց անունից հանդես չգա և նորից հրապարակ չնետվի Հայկական հարցը, «որն ահա ավելի քան կես դար միջազգային հանգամանք է դարձել և սպառնագին խրվել մեր կուրծքը», դրա համար էլ կառավարությունը «խնդիր է առաջադրում՝ օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, վերջնականապես վերջ դնել այդ հարցին, հայերին քշել արաբական անապատները, բնաջնջել այդ տարրը՝ համաձայն մեր տված գաղտնի հրահանգի»։

Կառավարությունն ու երիտթուրքերի կենտկոմը տեղական իշխանություններին «հրամայում էին». «... ձեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցել «Միության և առաջադիմության» տեղական օրգաններին, որոնք ապրիլի 24-ին, արեվածագի հետ, գաղտնի հրահանգների համաձայն ձեռնամուխ կլինեն այս հրամանի կատարմանը։

Ամեն մի պաշտոնական կամ մասնավոր անձնավորություն, որը կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ ինչ-որ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել որևէ հայի, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»[12]։

Բանակների հրամանատարներին Էնվերի ուղարկած ծածկագրում մանրամասն շարադրված են հայերի նկատմամբ գործադրվելիք միջոցները։

«... կայսերական հրամանով որոշված է հայ ցեղի լրիվ ոչնչացում։ Նրանց նկատմամբ հետևյալ գործողությունները պետք է կիրառվեն.

1. Մինչև 5 տարեկան երեխաներից բացի, օսմանյան հպատակ հանդիսացող և հայ անունը կրող բոլոր բաշիբոզուկները (ոչ զինվորականները) քաղաքներից դուրս հանվելով պետք է սպանվեն։

2. Կայսերական բանակում ծառայող բոլոր հայ անհատներին, առանց որևէ միջադեպի տեղիք տալու, իրենց զորամասերից հանելով, ընդհանուրի աչքից հեռու թաքուն վայրերում պետք է գնդակահարել։

3. Բանակում գտնվող հայ սպաները... պետք է բանտարկվեն մինչև նրանց մասին նոր հրահանգի ստացվելը»[13]։

Ասված է սպառիչ հստակությամբ։ Բայց հասկանալի պատճառներով ամեն ինչ արվեց, որպեսզի ծրագրված ոչնչացման տպավորություն չստեղծվեր։

Թե թուրքական իշխանությունները ինչպես էին հոգ տանում, որ հայերը ոչնչանան «բնական պատճառներով», ցույց է տալիս տարադրության Հալեպի հանձնաժողովի նախագահ Ա. Նուրիի 1916 թ. հունվարի 10-ի հեռագիրը ներքին գործերի մինիստրությանը՝ «... բռնագաղթի ենթարկված հայերի միայն 10 առկոսն է հասել իրենց համար որոշված վայրերը։ Մնացածը մեռել են բնական պատճառներով, ինչպիսիք են քաղցն ու հիվանդությունը։

Ձեզ տեղեկացնում ենք, որ կաշխատենք նույն արդյունքին հասնել նաև նրանց նկատմամբ, ովքեր դեռ ողջ են մնացել, գործածելով խստագույն միջոցներ»[14]։

Մեկ ամիս անց Նուրին հեռագրում է, որ անապատ աքսորվածների երեք քառորդը ճանապարհին մեռել է «բնական պատճառներով։ Միջոցների ենք դիմել (անապատ) քշել նաև նրանց, ովքեր զանազան պատճառներով Հալեպում են մնացել»[15]։ Եվ մի ամիս անց Նուրին կհայտնի. «Ստացված տեղեկություններից իմանում ենք, որ 35 հազար հոգի զանազան պատճառներով մեռել են Պապի և Մեսքենեի մոտակայքում, Հալեպի առաքման վայրում (Դատլը)՝ 10 հազ., Տիբսիի, Արուհաբրարի և Համամի շրջաններում՝ 20 հազ., Ռաս ուլ-Այնում՝ 35 հազ., ընդամենը 95 հազ. հայ այլևայլ պատճառներով մեռել է»[16]։

Բայց թող տպավորություն չստեղծվի, թե բռնագաղթն ու կոտորածները ամբողջությամբ գտնվում էին կառավարության վերահսկողության տակ և տեղերում ճշտորեն իրականացվում էին վերևից ստացված հրամանները։ Դա զայրացնում էր Թալեաթին, և նա սպառնալիքներ էր կարդում։ Իր հրամանները թերի կատարողների հասցեին նա գրում է. «Արդյոք, իսկապես, կարո՞ղ են գոյություն ունենալ այսօրինակ տաղտկալի ապուշ հատներ»։

1915 թ. նոյեմբերի 5-ին Թալեաթը հեռագրում է Հալեպի կուսակալին. «Մեզ տեղեկացրել են, որ Սվազի, Մամուրեթ ալ Ազիզի, Դիարբեքիրի և Էրզրումի նահանգներից տարագրված և (ծնողներին կորցրած) հայ երեխաները մի քանի մահմեդական ընտանիքների կողմից որդեգրված և ընդունված են որպես ծառաներ։ Տեղեկացնում ենք, որ ձեր գավառի մեջ եղած այս տեսակ բոլոր երեխաներին պետք է հավաքեք և ուղարկեք իրենց համար նախատեսված վայրերը...»[17]։

Ընթերցենք Թալեաթի մի այլ հեռագիր. «Որբանոցի կարիք ամենևին չկա։ Ժամանակը չէ զգացմունքային մղումներով զբաղվելու և որբերին կերակրելու միջոցով նրանց կյանքը երկարացնելու։ Նրանց դեպի անապատ քշեք և մեզ տեղեկացրեք»[18]։

Եվ ապա Հալեպի կառավարչին. «Իմացել ենք, որ մի շարք տեղերում բացված որբանոցներում ծանոթ անձնավորությունների (հայերի) փոքրիկներին էլ են ընդունում... Կարելի է, որ սա արվել է չգիտակցելով կառավարության իսկական նպատակները և կամ հակառակ նրան գործելով կամ դրանք արհամարհելով։ Այս տեսակ փոքրիկներին սնելը, նրանց նկատմամբ զգացմունքը կամ նրանց կյանքը երկարացնելու որևէ փորձ կառավարությունը համարում է իր առաջադրած նպատակներին բոլորովին հակառակ...»[19], «Հավաքեք և միայն այն որբերին պահեք, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողներին հասցված զուլումները»[20]։

«Նախապես հաղորդել ենք, որ Ճեմիլեթի հրամանով կառավարությունը որոշել է Թուրքիայում ապրող բոլոր հայերին բնաջնջել։ Նրանք, ովքեր կհակառակվեն այս որոշմանը, չեն կարող պետական ծառայության մեջ մնալ... որքան ոճրագործ լինեն նրանց (հայերի) նկատմամբ ձեռնարկված միջոցները, առաջադրված նպատակին հասնելու համար պետք է խեղդել խղճահարության ձայնն ու մարդասիրական զգացմունքները և վերջ տալ այդ ժողովրդի գոյությանը, առանց խնայելու (նույնիսկ) կանանց, երեխաներին և հիվանդներին»[21]։

1915 թ. սեպտեմբերի 15-ին Հալեպ ուղարկված այս ծածկագրի լուսանկարը տպված է Սագե Ս. Բենեդիկտսենի «Հայերը» գրքի 259-րդ էջում։ Գիրքը լույս է տեսել 1925 թ. Կոպենհագենում։

«Հայտնեցեք և տեղեկացրեք այն անձանց, ովքեր ձգտում են բռնագաղթից ազատվել հավատափոխվելով՝ մահմեդական դառնալով, պետք է մահմեդական կրոնն ընդունեն իրենց աքսորավայրերում»[22]։

«Պետք է պատժի ենթարկվեն բոլոր նրանք, ովքեր ցանկանում են հայերի գոյությունը ապահովել։ Նրանք (հայերը) դարեր շարունակ Թուրքիայի համար մի վնասակար տարր են եղել և վերջին ժամանակներս փորձեցին մեր ողջ երկիրը արյան մեջ ողողել»։ «Այդպիսի խռովարար ժողովրդի համար աքսորավայրը ոչնչացում է»[23]։

Հալեպի կուսակալին Թալեաթի 1915 թ. սեպտեմբերի 9-ի հեռագիրը սպառնալիքների մի ամբողջ տարափ է բոլոր նրանց հասցեին, ովքեր բռնագաղթի ու կոտորածների գործում թերանում են. «Թուրքիայի հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լրիվ ջնջված է, և այս մասին կառավարությունը, ողջ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայել է նույնիսկ օրորոցի երեխաներին չթողնել։ Մի քանի նահանգներում այս հրամանի գործադրման արդյունքները նկատելի են... (սակայն), մեզ անհայտ պատճառներով մի շարք անձանց նկատմամբ առանձնահատուկ գործողություններ են կիրառվում և նրանց տարագրության վայրերն ուղարկելու փոխարեն Հալեպում են թողնում, որով կառավարությունը կրկնակի դժվարության է մատնվում։

Առանց նրանց պատճառաբանություններն ընդունելու, կին թե երեխա, բոլորին, նույնիսկ շարժվելու անկարողներին այդտեղից հանեք և հնարավորություն մի տվեք, որ ժողովուրդը նրանց պաշտպանի... Որովհետև այլ տեղերում անուղղակի ձևով կատարվող բնաջնջման գործողությունները՝ խստություն, արագություն (տարագրության ընթացքում), ճանապարհի նեղություններ, թշվառություն, այդտեղ կարող են ուղղակիորեն իրականացվել, հետևաբար, առանց ժամանակ կորցնելու քրտնաթոր գործեք։ Ռազմական նախարարությունից բանակի բոլոր հրամանատարներին հայտնված է, որ զինվորական կայազորների հրամանատարները... գաղթականների առաքման գործին պետք է միջամտեն։ Այս գործի համար առանձնացվելիք պաշտոնյաներին հաղորդեք, որ առանց պատասխանատվությունից վախենալու պետք է աշխատեն իրականացնել իսկական նպա-

տակը։ Հաճեցեք ձեր գործունեության արդյունքները ամեն շաբաթ ծածկագրով հաղորդել»[24]։

Մի այլ հեռագրով Թալեաթը իր զայրույթն է թափում նրանց գլխին, ովքեր հայերի նկատմամբ բռնություններ կատարած պաշտոնյաներին դատի են տվել։ «Դա,— գրում է Թալեաթը,— որքան էլ ձևական է, այնուամենայնիվ կարող է համանման պաշտոնյաների համարձակությունը նվազեցնել։ Այդ պատճառով հրամայում եմ, որ նմանօրինակ քննություններ այլևս չկատարվեն»[25]։ Թալեաթը նաև հանձնարարում է «նկատի չառնել» հայերի բողոքի դիմումները, որովհետև դրանցով զբաղվելը «ոչ միայն նրանց (դեպի անապատ) առաքման դանդաղեցման պատճառ կդառնա, այլ նաև դուռ կբացի մի շարք գործողությունների առաջ, որոնք, հավանաբար, առաջիկայում կարող են ծնել քաղաքական անկայունություն»[26]։ «Բողոքողներին հաղորդեք, որ կորցրած իրավունքներով կարող են զբաղվել տարագրության վայրում»[27]։

Երբ Թալեաթին հայտնեցին, որ Բաղդադի երկաթուղու շրջանում մեծ թվով հայեր են կուտակվել, նա կատաղության բռնկում ունեցավ։ 1916 թվի հունվարի 16-ին նա Հալեպի կուսակալին հեռագրեց. «Լսել եմ, որ Ինթիլլի, Այրանի մերձակայքից սկսած մինչև Հալեպ երկարող գծերի ճամփաների երկայնքով 40—50 հազ. հայեր կան, որոնց մեծագույն մասը կանայք ու փոքրեր են։ Ամենախստագույն ձևով պետք է պատժվեն այն անձինք, որոնք ռազմական փոխադրումների համար այդ կարևոր դիրքերի վրա թշվառության կենտրոնացման պատճառ են դառնում... անմիջապես այդ հայերին, շրջանցելով Հալեպը, հետիոտն իրենց տարագրության վայրը ուղարկեք»[28]։ Բացառություն էր արվում միայն երկաթուղու վրա աշխատող հայերի ընտանիքներին։ Սակայն մի քանի օր անց Թալեաթը մտադրությունը փոխեց և պահանջեց, որ այդ ընտանիքները ևս քշվեն «տարագրության վայրերը»։ «Այդպես էլ եղավ. (երկաթուղայիններ) կանայք մի օր հանկարծ ճամփա հանվելով քշվեցին Մեսքենեի անապատը՝ այնտեղից Դեր Զոր ուղարկվելու համար»[29]։

Բերենք Թալեաթի հեռագրերից ևս մեկը. «Թեև նախապես մտադրված էինք բնաջնջելու հայ տարրը, սակայն հանգամանքները հնարավորություն չէին տալիս իրականացնելու այս սրբազան մտադրությունը։ Հիմա բոլոր արգելքները վերացված

են և պատեհ առիթ է մեր հայրենիքը այս վտանգավոր տարրերից փրկելու։ Վճռականապես հանձնարարում ենք՝ պետք չէ գթասիրտ դառնալ նրանց թշվառ ու տառապալի վիճակը տեսնելով։ Իրականացնելով նրանց բոլորի ոչնչացումը, ձեր ողջ կարողությամբ ջանացեք Թուրքիայից մեկընդմիշտ վերացնելու հայ անվան հետքը։ Հոգ տարեք, որպեսզի այս նպատակը իրագործելուն կոչված պաշտոնյաները հայրենասեր ու վստահելի մարդիկ լինեն»[30]։

Թուրք գրող Սամիհ Հաֆիզ Թանսունի «Ներկա ժամանակների վարագույրի հետևում» գրքի 297-րդ էջում գրված է՝ Եոզգատի մութեսարիֆ Քեմալ բեյը ներքին գործերի մինիստրությունից հետևյալ ծածկագիրը ստացավ. «Հարկ է 24 ժամվա ընթացքում տարագրել գավառում եղած հայերին։ Նրանց բնակատեղին պետք է լինի Սիրիան»*։

1915 թ. հունիսի 2-ին մի խումբ հայեր հետևյալ հեռագիրն ուղարկեցին Թալեաթին. «Խորը կսկիծով է, որ ձեզ ուղղում ենք այս հեռագիրը, բողոքելու համար մեր բոլոր ուժերով, մեր ողջ կորովով և մեր էության բովանդակ խորությունով քրդերի ու թուրքերի կողմից և ինչը որ ավելի ծանրակշիռ է, թուրքական կանոնավոր բանակի օժանդակությամբ, հայ ժողովրդի հանդեպ գործված արհավիրքների դեմ։

Ո՞վ կազմակերպեց այս կոտորածները։ Ո՞վ է պատասխանատուն այս վայրագությունների, որ նսեմացնում է համիդյան ռեժիմի այնքան սոսկալի արհավիրքները։ Ո՞վ տարածեց սգո այս քողը ամբողջ Հայաստանի վրա, Կիլիկիայից մինչև Արաքս և Արարատ լեռը։ Ո՞վ այս դժբախտ երկիրը վերածեց ավերակների շեղջակույտի, անգթորեն ջարդելով արու բնակչությանը՝ առանց տարիքի խտրության, բռնաբարելով ու հափշտակելով կանանց ու թողնելով միայն ծերերին ու հիվանդներին՝ լալու մխացող ավերակների վրա։

Ո՞վ է հանցավորը։ Ամբողջ աշխարհը, և առաջին հերթին ձեր դժբախտ զոհերը, ձեր երեսին բղավում են ձեր ոճիրի մասին... Ձեր քաղաքականությունն էր, որ ստիպեց հայերին խմբեր կազ-

* Երիտթուրքերի լիդերների դատավարության մեղադրական ակտում արձանագրված է. «...Դիարբեքիրում կոտորածներն ու գազանությունները կատարվել են Թալեաթի... հրահրմամբ... (Ա. Անտոնյան, «Մեծ ոճիրը», էջ 276)։

մել և կռվել իրենց ցեղի սիստեմատիկ բնաջնջումների դեմ»[31]։

«Պատերազմը,— գրում է Ու. Չերչիլը,— իրենց (հայերի) վրա բևեռեց չարիքների մի ամբողջ նոր շարք։ Բալկանյան պատերազմից հետո պանթուրքիստները միաժամանակ հրապարակեցին «օսմանացումը» և «թուրքացումը»՝ որպես միջոց իրենց պետությունը վերստեղծելու։ Նրանք իրենց երկրի ոչ թուրք ցեղերին էին մասամբ վերագրում այն աղետները, որոնց ենթակա էր թուրքական կայսրությունը։ Բիրտ, բայց հասկանալի լեզվով նրանք եզրակացրին, թե այս ցեղերը «արժանի չէին նույնիսկ նկատի առնվելու, բեռ ու արգելք էին, թող գրողը տաներ նրանց»։ Այդ վերածնված պետությունը, որ հայրենասեր թուրքերը հույս ունեին մեջտեղ բերել, պետք է կազմված լիներ միայն թուրքերից։ Այս նպատակին կարելի էր հասնել, եթե երբևիցե հասնեին, երկար ու դժվար ճանապարհ կտրելուց հետո միայն։ Հետևաբար, որքան շուտ և որքան շտապ թուրք ժողովուրդը սկսեր այդ ճանապարհը անցնել, այնքան լավ։ Մեծ պատերազմի պայթելը այս հարցերը շարժման մեջ դրեց։

1915 թ. թուրքական կառավարությունը սկսեց ու վայրագորեն գործադրեց Փոքր Ասիայի հայերի ընդհանուր և անարգ ջարդերն ու տեղահանությունը...

Տրամաբանական ոչ մի կասկած չկա, որ ոճիրը ծրագրված ու գործադրված էր քաղաքական պատճառներով։ Առիթը ներկայացել էր թուրքական հողը ազատելու մի քրիստոնյա ցեղից, որը... աշխարհագրականորեն գտնվում էր թուրքական ու կովկասյան իսլամական ժողովուրդների միջև... Պանթուրքիստները գտնում էին, որ եթե Կ. Պոլիսն ընկներ և Թուրքիան պատերազմը տանուլ տար, նույնիսկ այդ դեպքում, հայերի բնաջնջումը ունենալու էր իր հետևանքները և թուրք ցեղի ապագայի համար մշտական առավելություն էր ստեղծելու։

Հայ ժողովուրդը առաջին մեծ պատերազմից դուրս եկավ կոտորված...

Շուրջ 2,5 միլիոնանոց ժողովրդի $^3/_4$-ը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, բնաջնջված էին...»[32]։

Արդի թուրք պատմաբան և գրող Ս. Այդեմիրը իր «Իթթինգի ադեմ» գրքի 45-րդ էջում (լույս է տեսել 1973 թվականին Ստամբուլում) Նազըմ բեյին բնութագրում է որպես իթթիհադական կուսակցության ահաբեկիչ։ Իսկ «Սույու արայան ադամ» գրքի 273-րդ էջում (հրատարակված 1979 թվականին

Ստամբուլում) գրում է. «Նազըմ բեյը կրում է ամենաարյունահեղ արարքների պատասխանատվությունը և մարմնավորում է մեր կայսրության ամենախավար շրջանի արյունոտ դեպքերը»։

Մի այլ պատմաբան՝ Դողան Ավշի Օղլուն, իր «Միլլի քուրթուլուշ թարիխի» բազմահատոր գրքի երրորդ հատորի առաջին մասի 125-րդ էջում մեծացնում է պատասխանատուների շրջանակը ու գտնում է, որ այդ անմարդկային արարքների համար պատասխանատու են իթթիհադական կուսակցությունը, բանակը և կառավարական տարբեր պաշտոնյաներ։ Նա գրում է. «Տեղահանությունները կյանքի են կոչվել Իթթիհադի վերին մարմիններում Բ. Շաքիրի կողմից։ Նրանց իրականացումը հանձնարարված էր վստահելի իթթիհադականների և հատուկ կազմակերպության»։

Գերմանացի արևելագետ Ե. Մարկվարտը և ֆրանսիացի պատմաբան Ժ. Մորգանը 1919 թ. հանդես եկան մի հայտարարությունով ու պահանջեցին միջազգային դատարանին հանձնել հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներին՝ Էնվերին, Թալեաթին և երիտթուրք մյուս լիդերներին։

«Ոչ ոք ի վիճակի չէ,— գրել է Վ. Մետերնիխը 1916 թ. հունիսի 30-ին,— սանձահարելու կոմիտեի հիդրային, ոչ էլ վերջ տալու շովինիզմին ու մոլագարությանը։ Կոմիտեն պահանջում է բնաջնջել վերջին հային, և կառավարությունը պետք է ղիջի...

Երիտթուրքերի «սեկցիաները»... երկրի խորքերի քաղաքներում շարժիչ ուժ են հանդիսանում, նրանց դերը շատ վճռական է դաժան բռնություններ կազմակերպելու և ի կատար ածելու մեջ։ Աքսորների հրամանի իրականացումը վստահվել է բանակի ղեկավարներին և վիլայեթների քաղաքացիական գերագույն իշխանություններին»[33]։ Ինքը՝ Թալեաթը, ցեղասպանության քաղաքականության իրագործման գլխավոր ուժ ու կազմակերպիչ համարում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության ֆունկցիոներներին, նրա հաստիքային և արտահաստիքային աշխատողներին։ Դրա համար էլ նա հանձնարարում էր. ««Իթթիհադի վե թերաքքիի» բոլոր պատգամավորները (կուսակցության ներկայացուցիչները տեղերում) ամեն հնարավոր բան պետք է անեն խնդիրը լուծելու համար»[34]։

Ֆիլիպ Գրավեսը, որն աշխատել է Անգլիայի ռազմական մինիստրության ինֆորմացիայի ծառայությունում (մինչ այդ «Թայմս» թերթի Կոստանդնուպոլսի թղթակիցն էր), 1915 թ.

սեպտեմբերին գրել է Լլոյդ Ջորջին. «Ելնելով իմ փորձից և հաշվի առնելով բոլոր նրանց փորձը, ովքեր շատ թե քիչ ճանաչում են Թուրքիան, կարող եմ ասել, որ այստեղ երբեք ոչ մի կոտորած տեղի չի ունենում, բացառությամբ միայն այն դեպքերի, երբ կառավարությունը ուղղակիորեն ակնարկում է, որ կոտորած է ուզում»[35]։

Երիտթուրք ղեկավարների դատավարության ժամանակ թուրքական սպա Ահմեդ բեյը ցուցմունք տվեց. «Գիշերն ինձ արթնացրին ինչ-որ զինված մարդիկ։ Նրանք ինձ հանձնեցին մի փակ ծրար, որի մեջ հայերին արտաքսելու հրամանն էր։ Հրամանը կատարելու համար կցված էր մի քաղաքացիական ծառայող։ Ինձ իրավունք էր վերապահվում սպանել նրան, եթե նա ընդդիմանար իմ հրամաններին։ Նույնը կարող էին անել նաև ինձ հետ...»[36]։

Ուրեմն, հայերի ոչնչացման մեջ ներգրավված էին ոչ միայն կուսակցական, այլ նաև զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաները։

Տեղահանությունն ու կոտորածները ղեկավարելու համար ներկայացուցիչներ ուղարկվեցին բոլոր գավառները։ Նրանց տրամադրեցին ֆինանսական և տրանսպորտային միջոցներ, ծածկագրեր վերծանելու հնարավորություններ, զենք և զինամթերք։ Երիտթուրքերի այս գործակալները հայտնի էին «հատուկ պատվիրակներ» կամ «աքսորումների կոմիսարներ» անունով։ 1915 թ. օգոստոսի 10-ին, օրինակ, երիտթուրքերի կոմիտեի անդամներ Շալիլ բեյն ու Ահմադը Ուրֆա ժամանեցին որպես աքսորումների կոմիսարներ։

«Մեկնելով Կ. Պոլսից նրանք անցան ողջ Անատոլիայով և ամենուրեք, որտեղով նրանք անցնում էին, ոչնչացնել էին տալիս հայ տղամարդկանց և երիտասարդներին, աքսորում կանանց ու երեխաներին և բոլոր մնացածներին։ Ահմեդը և Շալիլ բեյը նույնիսկ հանդգնություն ունեցան Ուրֆայի իշխանությունների հրամանների սահմաններից դուրս գործել, կարծես իրենք լինեին տեր ու տիրականը»։ Այդպես էր ոչ միայն Ուրֆայում, այլև հայաբնակ բոլոր նահանգներում ու գավառներում։ «Աքսորների ժամանակ... կոմիտեն իր ձեռքը վերցրեց գավառների կառավարման ղեկավարությունը... նա միջամտեց ոչ միայն կառավարական գործերին, այլև իր ամենահեղինակավոր անդամներին տեղավորեց մինիստրների խորհրդում...»[37]։

Ռազմական դատարանի նախագահ Ֆերիք Մուստաֆա Նազիմ փաշան 1919 թ. մայիսի 9-ին հարցնում է Անկարայի կուսակալի փոխանորդ Աթիֆ բեյին՝ արդյոք նա տեղյա՞կ է, որ «ընդհանուր կենտրոնի կողմից պատասխանատու պատվիրակներ և պատասխանատու քարտուղարներ էին ուղարկված Անկարա, Կաստամոնու, Եոզղատ, Երզնկա, Տրապիզոն, Սեբաստիա և շատ այլ տեղեր, որտեղ նրանք վալիներին, մութեսարիֆներին ինչ-ինչ գաղտնի հրամաններ են հաղորդել»[38]։

Դատարանը փաստեց, որ պատասխանատու քարտուղարներին իրավունք էր տրված, կենտրոնի հետ համաձայնեցնելով, պաշտոնանկ անել վալուն, մութեսարիֆին, կայմակամին, եթե վերջիններս չհամաձայնվեին կատարել կուսակցության այդ ներկայացուցիչների հրահանգները։ Օրինակ, Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը 1915 թ. հուլիսի 20-ին գնում է Եոզղատ և հայերին կոտորելու հրամանը հայտնում մութեսարիֆ Ջեմալ բեյին ու զինվորական հրամանատար Սալիմ բեյին։ Վերջիններս համաձայնվում են հայերին տեղահանել, բայց ոչ կոտորել։ Այդ մասին Սելևկիայի մութեսարիֆ Էդիպ բեյը դատարանին ցուցմունք տվեց. «...մենք իմացանք հայերի աքսորի ու տեղահանության հրամանի լուրը, երբ այս հրամանը գործադրելու համար Եոզղատ էր եկել «Միություն և առաջադիմություն» կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղարը»։ Ըստ նրա վկայության Նեջաթի բեյը մութեսարիֆ Ջեմալ բեյին նաև ասել է. «Թեև տրված հրամանը արտաքնապես հայերին աքսորելն է, սակայն կուսակցության կենտկոմի և ներքին գործերի նախարարության իսկական նպատակը հայերին բնաջնջելն է...»[39]։

Կոտորածների իսկական կազմակերպիչները երիտթուրքերի կուսակցության վերը նշված ներկայացուցիչներն ու պատասխանատու քարտուղարներն էին, ինչպես նաև նահանգներում ու գավառներում կուսակցական ակումբների նախագահները։ Այդ առնչությամբ ռազմական դատարանը արձանագրել է. «Երիտթուրքերի պատասխանատու քարտուղարները կատարեցին տեղահանություններ, կոտորածներ, աքսորներ, ավերեցին կալվածքներ և գործեցին գարշելի ոճիրներ»[40]։

Մի շարք վիլայեթներում ու կազաներում բարձրաստիճան պաշտոնյաների կազմում փոփոխություններ կատարվեցին։ Աշխատանքից ազատվեցին բոլոր նրանք, ովքեր հայերի ոչնչաց-

ման գործում եռանդ ու նախաձեռնություն չէին դրսևորել։ Այսպես, Անկարայի կառավարիչ Մազհար բեյը փորձեց խափանել կոտորածները, բայց պաշտոնանկ արվեց և նրա տեղը նշանակվեց Աֆիֆ բեյը։ Օգոստոսի 9-ին պաշտոնազրկվեց նաև Սալիմ բեյը։

Ուստի բեյը 1918 թ. դեկտեմբերին պաշտոնապես վկայեց. երբ Մազհար բեյին հարցրեց իր հրաժարականի պատճառը, նա պատասխանեց. «Հայերի տեղահանության առնչությամբ ներքին գործերի նախարարության հրամանները չհասկանալ ձևացրի...

Վրա հասավ Աֆիֆ բեյը և հաղորդեց հայերի տեղահանության, կոտորածի ու բնաջնջման մասին ՆԳ նախարարի բանավոր հրամանը։ Ես նրան ասացի. «Ոչ, Աֆիֆ բեյ, ես կառավարիչ եմ և ոչ թե չարագործ մարդասպան, իմ աթոռը թողնում եմ, դու տեղս նստիր և գործադրիր կոտորածի հրամանը»[41]։ Ուստի բեյը նաև վկայում է, որ երբ ինքը Աֆիֆ բեյին խնդրեց ներել մի դրամատեր հայի, նա մերժեց, ասելով, որ ինքը վերագասից հրաման է ստացել չթողնել, որ որևէ հայ կենդանի մնա կամ չտեղահանվի։

Ջեմալ բեյը ռազմական ատյանում 1918 թ. դեկտեմբերի 18-ին ցուցմունք տվեց. «Անկարայի «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը Եոզղատ եկավ... և ինձ ցույց տվեց կուսակալ Աֆիֆ բեյի կողմից ստորագրված մի նամակ՝ այն պահելով իր ափերի մեջ։ Նամակը ինձ հրամայում էր Նեջաթի բեյի հետ խորհրդակցել և ապա կարգադրություն անել տեղահանության համար»։ Ջեմալ բեյը հրաժարվում է այդ հանձնարարությունը կատարելուց և մի քանի օր անց պաշտոնանկ է արվում[42]։

Դիարբեքիրի վալի Ռաշիդ բեյը ավազակների միջոցով սպանել տվեց երկու կայմակամի, որոնք տեղահանություն կատարելուց հրաժարվեցին։ Հրամանները անտեսող թուրք բնակչության ու զինվորականների դեմ գործադրվում էին բռնություններ։ Երբորդ բանակի հրամանատարը հայտարարեց, որ ով հայերին օգնի, իր տան մեջ կսպանվի, իսկ տունն էլ կհրկիզվի։ Եթե որևէ պաշտոնատար անձ հայերին օգներ, անմիջապես պաշտոնազրկվում էր և ռազմական դատարանի առաջ կանգնում։

Ժանդարմների հրամանատարի օգնական Նումանը,— ռազ-

մական դատարանին ցուցմունք տվեց Եոզղատի հաղարապետ Սալիմ բեյը,— «պաշտոն ստացավ Սորկուն գյուղի հայերին կոտորելու համար... Ռիզա Տաուշը՝ Սարայի շրջանի հայերին ջարդելու համար։ Ջարդավայր նշանակված Քելլերի կոտորածների պաշտոնները վստահվեցին... (թվում է) բոլորն էլ իրենց պարտականությունը կատարեցին կատարյալ խղճմտությամբ՝ հնազանդվելով իրենց մեծավորներից ստացած հրամաններին։ Ջատ, Ջագմագ, Թերզլի, Գարա Եագապ և դեռ շատ ուրիշ այլ գյուղերում, որոնց անունները չեմ հիշում, գնդապետ Թեվֆիգը և իր օգնականները գործեցին գարշելի ոճիրներ, մի բան, որ երկրի յուրաքանչյուր բնակիչ լավ գիտե։ Ժանդարմները շատ ավելի սարսափած իրենց գործած ոճիրներից, քան այն պատիժներից, որոնց ենթակա էին, պահանջեցին, որ հրամանները իրենց գրավոր տրվեն*։

Այսպիսով, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամները, ինչպես նաև նրանք, ովքեր երազում էին չարաշահումով հարստանալ, հասան իրենց նպատակին և մարդկային պատմության մեջ աննախադեպ ցավալի ոճիրներ գործեցին։ Այնպիսի գարշելի արարքներ գործեցին, որ հավատաքննության խժդժությունները ստվերի տակ մնացին և արատավորեցին իսլամի պատիվը և Օսմանյան կայսրության պատմությունը»[43]։ Այդպիսիներից էր Նեջաթի բեյը, որին երիտթուրքերի կենտրոնը Բալկանյան պատերազմի ավարտից հետո նշանակել էր Անկարայի կուսակցական կազմակերպության պատասխանատու քարտուղար։ Այս կուսակցական բեյը եռանդ ու սատանայական հնարքներ գործադրեց հայերին ոչնչացնելու համար։ Այդ գործում նա մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում նաև նրա համար, որ, կոտորելով հայերին, միաժամանակ թալանում էր նրանց ունեցվածքը և կարճ ժամանակում մեծ հարստությունների տեր դարձավ։

Երիտթուրք մի այլ ակտիվիստ՝ Ահմեդ էֆենդին, Եոզղատի քաղաքապետն էր, Նեջաթիի ամենամտերիմ համախոհն ու հայ-

* Այս գործում ևս Թալեաթը իր ստորադասներին անձնական օրինակ էր ծառայում։ Ռազմական դատարանը վավերական համարեց Դեր Զորի կառավարիչ Ա. Սուատին նրա ուղարկած ծածկագիրը՝ «Վալիին և նրա թիկնապահ կոմիսար Մեհմտուին պետք է մահապատժի ենթարկել»։ Պատճառը՝ վալին ոչ մի կերպ չէր համաձայնվել կոտորել հայերին (Ա. Անտոնյան, «Մեծ ոճիրը», էջ 276—277)։

կական կոտորածների ամենաակտիվ մասնակիցը։ Հայերի նկատմամբ գործադրած գազանությունների համար Ահմեդ էֆենդին «Անկարայի կողմից ճանաչվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության ամենաազդեցիկ անդամներից մեկը և հաջողացրեց Պոլսի համագումարին մասնակցել»։

Կոտորածների համար նախատեսված վայրերում նախ հայերին կողոպտում էին, խլում նրանց դրամն ու արժեքավոր իրերը, իսկ ապա տրվում էր ջարդի հրամանը, որը, որպես կանոն, ամենուրեք ղեկավարում էին երիտթուրքական կուսակցության ակտիվիստներն ու ֆունկցիոներները։ Եվ այդ ամենը կատարվում էր անհոգ տրամադրությամբ, որպես սովորական առօրյա աշխատանք։

Ռազմական դատարանն ապացուցեց, որ Քեմալ բեյը «ամեն իրիկուն... Վեհիբ էֆենդու տունն էր հրավիրում քաղաքապետարանի տնօրեն Ահմեդին, նախկին առաջին քարտուղար Մուստաֆա բեյին, Սայիդ բեյին և ուրիշ գործակիցների, որոնք մի քանի գավաթ կոնծելուց հետո որոշում էին հաջորդ օրվա իրենց անելիքները։ Այսպես էր նա իրագործում կոմիտեի ազգային ձգտումները»[44]։

Ղեկավարների կանայք իրենց ամուսիններից հետ չէին մնում։ Օրինակ, Վեհիբի կինը «խուզարկություններ կատարեց քաղաքից դուրս և քննեց տարագրված կանանց մարմինները այն աստիճան, որ խուզարկեց կանանց օրգանների ներսը՝ այնտեղ ոսկի փնտրելու պատրվակով։ Այսպիսով, քաղաքացիներն ու գյուղացիները դանակներով, փոքր կացիններով, բիրերով, ոմանք ձիերի վրա սրով և զենքերով արյան հոտն առած սպանդանոցի շների պես սկսեցին վազել և հետևել քարավաններին՝ կոտորածներին մասնակցելու համար։ Ես վկայում եմ, որ բարբարոս ու արյունալի արարքները կատարեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներն ու նրանց պաշտոնյաները...»[45]։

Իսկ Ռատի բեյը դատարանում հայտարարեց. «Նրանք, ովքեր հայերի ջարդած թևերը կապեցին հաստ պարաններով, Անկարայի երեսփոխան Թայիբի փեսա, խորհրդի անդամ Շեյմսէդդին էֆենդու հետ միասին բանտում հավաքել էին հայերի մատանիները, ունեցած դրամները... Ապա թշվառներից կողոպտեցին ֆեսերը, կոշիկները, զգեստների մի մասը և գրեթե մերկ

վիճակում նրանց առավոտ վաղ բանտից հանեցին և 300 հոգու թևերը իրար կապած ուղարկեցին դեպի սպանդ»[46]։

Ռազմական դատարանում ընթերցվեցին նաև Քեմալ բեյի նամակները, որոնք Բաֆրա գյուղի ծանդարմ Շուքրիին հանձնարարում էին բարեխղճությամբ և մինչև վերջ կատարել իր կողմից ուղարկված երեք անձանց հանձնարարությունները՝ հայ կանանց ու աղջիկներին հսկողության տակ վերցնել, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավել և քաղաք ուղարկել, որ նշանակում էր այդ հայերին ոչնչացնել և նրանց ունեցվածքը քաղաք տեղափոխել։

Ասյանը Քեմալին մահվան դատապարտեց։ Բնորոշ է, որ երբ մահապատիժը ի կատար էին ածում, այդ հանցագործը, դիմելով պոլսեցիներին, ոչ թե ժխտեց իրեն ներկայացված մեղադրանքը, այլ հայտարարեց.

«Սիրելի ազգակիցներ.

Ես մի թուրք պաշտոնյա եմ, ես գործադրեցի այն հրամանը, ինչ ստացա, իմ պարտականությունը կատարեցի բարեխղճորեն»[47]։

1918 թ. նոյեմբերի 4-ին, երբ օսմանյան պառլամենտում քննվում էր հայերի տեղահանության և կոտորածի հարցը, պառլամենտի աչքի ընկնող անդամներից Ֆուադ բեյը տասը կետից բաղկացած պահանջ-մեղադրանք ներկայացրեց Ս. Հալիմի և Թալեաթ փաշայի կառավարություններին, պահանջելով այդ կառավարությունների անդամներին դատի տալ։

Ֆուադ բեյի ներկայացրած մեղադրանքի 5-րդ կետում ասված էր. «Մարդկային օրենքների և, մասնավորապես, ազգային ժողովի ոգուն հակառակ օրենքներ հրապարակելով երկիրը ոճիրների թատերաբեմ դարձրեցիք»[48]։

1918 թ. դեկտեմբերի 2-ին բացելով օսմանյան պառլամենտի նիստը, պառլամենտի նախագահ, երիտթուրքական կուսակցության հիմնադիրներից ու գաղափարախոսներից մեկը՝ Ահմեդ Ռիզան, հրապարակեց մի հայտարարություն. «Սկսած պատերազմին մեր մասնակցությունից մինչև Թալեաթ փաշայի կաբինետի անկումը, կառավարության կողմից գործած սխալների և ոճիրների, ջարդերի, հրապարակային ոճրագործությունների, անձի անապահովության, կալվածքների և շենքերի բռնագրավումների և բոլոր օսմանցիների նկատմամբ նման հարստահարություններ ու ոճիրներ գործած լինելու համար պահանջել եմ,

որ ընդհանուր դատախազությունը հանրային իրավունքների անունով դատ սկսի և ժամ առաջ ոճրագործները Երևան հանվեն ու արդարադատությանը հանձնվեն»[49]։ «Թասֆիրի էֆքեարթ» թերթը, նկատի ունենալով կառավարության անդամներին և կուսակալներին, գրում է. «Դժվար է հասկանալ, թե ինչու այս անձինք չմտածեցին, որ մի օր հաշիվ էին տալու այն բոլոր ոճիրների համար, որոնք կատարվեցին Թալեաթ փաշայի կառավարության կողմից»[50]։

1919 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլսի շովինիստական ուժերը կազմակերպեցին ջարդարար Քեմալ բեյի բազմամարդ ու շքեղ թաղումը։ Այդ նկատի ունենալով «Ալեմդար» թերթը գրեց. «Բնաջնջման քաղաքականությունը իրագործվեց կոտորածներով ու կողոպուտներով։

Երիտասարդ Թուրքերի կուսակցության կենտկոմը և նրա գործադիր մարմինը՝ նախարարների խորհուրդը, ինչպես նաև պաշտոնյաները՝ ամենավերից մինչև ամենավարը, պատասխանատու են։ Ոճրագործներին ազատելու փորձերը և այնպիսի մեծագույն սխալները, ինչպիսիք են մի ոճրագործի նկատմամբ համակրանքի ցույցերը, պատշաճ չեն մեր ազգային պատվին և վտանգում են մեր պետության շահերը։

Մեզ համար փրկության միակ միջոցը կոտորածներից հետո մնալն է, բղավել քաղաքակրթված աշխարհի առջև, թե իսկապես և գործնականորեն արդարությունն ենք կիրառելու բոլոր հանցավորների նկատմամբ։

Եթե Բայազետի հրապարակը մեր ոճրագործների կախաղանները չտեսնի, ապա Փարիզը մեր պետության և ազգի դատապարտման վայր կդառնա»[51]։

1918 թ. դեկտեմբերի 23-ին սուլթան Մահմեդ V Վահիդէդդին ընդհանուր ներում է շնորհում պատերազմի հանցագործներին։ Նա մի հրովարտակով արգելում է այդ ներումը հայերի տեղահանության և կոտորածների հանցագործների վրա տարածել։

Իսկ ովքե՞ր են այդ ջարդարարները։ «Սաբահ» թերթը գրեց. «Ասում են, թե բոլոր Թուրքերը մասնակցել են միութենականների գործած ոճիրներին և զզվելի պղծումներին. եթե Թուրքերն իսկապես այս արարքներին մեղսակից չեն եղել, ապա գոնե պտանց հավանություն են տվել...»[52]։

Իսկ «Ալեմդարը» գրեց. «Մենք դատապարտված ենք մի ոճիրով և վարակված մի անբուժելի հիվանդությամբ, որ ժանտախտից սոսկալի է...

Մարդկությունը տատամսում է մեզ մոտենալ, մինչ մենք ուզում ենք, որ նա մեզ ձեռք երկարի...»

Եվ ապա. «...Մենք որդեգրեցինք բնաջնջումի քաղաքականությունը, որ գործադրեցինք մեծագույն բռնաբարություններով մյուս տարրերի նկատմամբ և այնպիսի կատաղությամբ հետապնդեցինք այդ քաղաքականությունը, որ ուզեցանք իրագործել տարագրությունով, կոտորածներով ու հափշտակությամբ»[53]։

«Սաբահ» թերթի խմբագիր Ալի Քեմալը, բանավիճելով «Եէնի Կույնի» թերթի խմբագիր Ե. Նատի հետ, գրեց. «Աշխարհը գիտե, և սա է ճշմարտությունը, որ հայերի կոտորածները կազմակերպվեցին կենտրոնական կոմիտեի հրամաններով։ Այս հրամանները հաղորդվեցին առանձին պատվիրակների միջոցով և գործադրվեցին ավազակների ձեռքով իր իսկ կենտկոմի հրահանգությամբ։

Այդ Երևան հանելը մի՞թե Թուրքերին ու Թրքության դատին ծառայել չէ։ Ուզում ես, որ հեռո՞ւ մնանք այս բանն անելուց և մենք էլ նույն ամբաստանության տակ ընկնենք»[54]։

Ալի Քեմալի այս խոսքերը իսկապես իմաստուն են և կարող են պատգամ հանդիսանալ Թուրքիայի ժամանակակից պետական գործիչների ու պրոպագանդիստների համար։

Պե՞տք է հիշել 1915 թ. եղերական իրադարձությունները, թե ոչ։ Այս հարցին «Թուրքչե Ստամբուլ» օրաթերթը դեռ 1919 թ. պատասխանել է. «Այս ճշմարտությունները (կոտորածները) շատ բիրտ են, բայց պետք է կրկին ու կրկին վերհիշվեն։ Այստեղ չեմ ցանկանում վերամբաստանել միայն միութենականներին։ Նրանց անվանեք ինչպես ցանկանում եք, սակայն այն մարդիկ, որոնք տարբեր անունների տակ նույն մտայնությանն են ծառայում և ընթանում են բռնության ուղիով, կարող են լոկ հասնել միևնույն օրհասական արդյունքին...»[55]։

Թուրքիայի արդարադատության նախարարը 1918 թ. նոյեմբերի 25-ին հայտնեց, որ միջոցներ են ձեռնարկված հայկական ջարդերն իրականացրած բոլոր անձանց պատժելու համար. «Ներկա կառավարության միակ ելքն է՝ պատժել վալիներից սկսած ամբողջ կառավարության կազմը»[56]։ Հանցագործների թիվը շատ մեծ է և, ինչպես մի երեսփոխան նկատեց, «եթե նրանց անունները մեկ առ մեկ ասեմ, օրը գիշեր կդառնա»[57]։

«Այս մեծ ոճիրին մասնակցած բոլոր պաշտոնյաներին պետք է պատժել»[58]: Այդ նպատակով Կ. Պոլսում ստեղծվեցին երեք, իսկ գավառներում տասը ռազմական դատարաններ։

Սակայն ըստ «Ալեմդար» թերթի, սովորական հասկացողությամբ միայն ռազմական դատարանները բավարար չեն «արդարություն ապահովելու, որովհետև 5—6 տարվա ընթացքում գործված խժդժությունները աներևակայելի են»[59]։

Կ. Պոլսում գերմաներեն հրատարակվող «Վերածնունդ» թերթը գրեց. «Եթե այսօր խժդժությունների համար պատասխանատու հեղինակների նկատմամբ չկիրառենք իրենց արժանի պատիժներ, ապագա սերնդին կխաթարենք ու կապականենք...»։ Թերթը թվում է ցեղասպանության հանցավորներին.

«1. Բուն հեղինակներին։

2. Նրանց, ովքեր առաջինների թիկունքում թաքնված գործեցին։ «Միություն և առաջադիմություն» կենտրոնի ազդեցիկ անդամներին, նահանգային ակումբների նախագահներին...

3. Նրանց, ովքեր գաղտնի կազմակերպությունների մեջ էին, որպիսիք են կրտսեր սպաներն ու բանտերից ազատ արձակված սրիկաները։

4. Այն երեսփոխաններին, ովքեր չբողոքեցին, ովքեր հավանություն տվին ոճիրներին և մասնակցեցին կողոպուտին։

5. Հրատարակիչներին, որոնք ողջունեցին բոլոր ոճիրներն ու արարքները..., որոնք հանրային կարծիքը մոլորեցրին ամեն տեսակ խաբեություններով ու ստախոսություններով...

6. Նրանց, ովքեր շահաբեր գործեր հետապնդեցին առևտրի քողի տակ...

7. Մի լեգեոն փաշաներին ու բեյերին, ովքեր շրջապատեցին ավարառուներին և եղան նրանց քծնողներն ու խնկարկուները»[60]:

Մեղքը միայն երիտթուրք լիդերների վրա գցելու միտումով, թուրք հետազոտող Թ. Թունայան գրում է. ««Միություն և առաջադիմություն» կուսակցությունը տապալեց Աբդուլ Համիդ սուլթանին, սակայն նրա տեղը հաստատեց իր ընդհանուր կենտրոնի ինքնակալությունը, այնպես որ ո՛չ թագավորը, ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ ներկայացուցչական ժողովն է երկիրը կառավարում։ Պետական խորհուրդը կամ վարչությունը այլևս կարևորություն չունեն։ Փաստն այն է, որ բոլոր որոշումներն ընդունվում են վարչության հետևում։ Ութ անձից կազմված ժողովը իր ձեռքն է վերցրել ամեն ինչ, կայսրության դեկը։ Վարչության հետևում գտնվող անձանց ձեռքում է երեսփոխաններին շարժելու պարանը։ Այս սակավապետությունը ինչը խոսքով չի կարող անել, անում է գենքով...»[61]։

Ըստ դոկտ. Նաղըմի, եթե կուսակցության կենտրոնը մարդն է, ապա սուլթանը՝ միայն նրա կնիքը. սահմանադրությունը, ընտրությունը և պառլամենտը բացարձակ դատարկ բաներ են։ «Սա քողարկված ինքնակալություն է, սահմանադրական վարչակարգի նման մի բան»։

«Մենք սուլթանին դրեցինք վնաս հասցնելու անկարելիության մեջ։ Մենք գահի վրա նրա ներկայության կարիքն ունենք..., որովհետև ձգտում ենք բացարձակապես դեն նետել եվրոպական միջամտությունը։ Խալիֆան դեռ ունի բարոյական անսահման հեղինակություն, մենք ուզում ենք, որ նա իր ստորագրությունը դնի մեր որոշումների տակ։ Սուլթանը պարզապես մի ուրվական է»[62]։

«Թուրքչե Ստամբուլ» թերթը, նկատի ունենալով օսմանյան պառլամենտի անդամների լռակյաց համաձայնությունը երիտթուրքերի հայակործան քաղաքականության հետ, գրում է. «Մեր երկրի նախկին ղեկավար ծերակույտականներն ու երեսփոխանները պետք է անապատ քշվեին և այնտեղ քավեին իրենց մեղքերը։

Անտրամաբանական է խոսել, երբ մարդ պիտի լռի և լուռ մնալ, երբ պիտի խոսի»[63]։

Պոլսի մի այլ թերթ գրեց. «Խորհրդարանն, իր հերթին, եղել է երիտասարդ թուրքերի մեղսակիցն ու գործակիցը։

Մեղսակից, որ գիտակցաբար լռություն պահպանեց ամենազզվելի ոճիրների գործադրման ընթացքում, չնայած տեղյակ էր այդ ոճիրների կազմակերպմանը, որոնք տեղի ունեցան իրենց (երեսփոխանների) աչքի առջև։

Գործակից, որովհետև երեսփոխաններից շատերը անձամբ վարեցին կոտորածները։ Նրանք քվեարկեցին մի շարք ժամանակավոր, անօրեն, եղեռնագործ օրենքների օգտին»[64]։

«Տարիներ շարունակ այս երեսփոխանական ժողովը թույլատրեց, որ գործվեն պատմության մեջ աննախադեպ կոտորածներ, կողոպուտներ... և ապօրինությունների մի անհամար շարք»[65]։

Մի ուրիշ թերթ երեսփոխանների վարքագիծը բնութագրեց հետևյալ կերպ.

«Հայերը կոտորվեցին, նրանք ծափահարեցին,
Հույները տարագրվեցին, նրանք ծափահարեցին,
Արաբները բնաջնջվեցին, նրանք ծափահարեցին։

...Մի ժողով, որ նշանավոր է ամեն մի առաջարկությանը իր տված հավանությամբ, նույնիսկ Ներոնի ժամանակներից այսդին երբևիցե գոյություն ունեցած ամենաոճրագործների առաջարկներին»[66]։

1919 թ. հունվարի 28-ին Թուրքիայի ներքին գործերի մինիստր Քեմալ բեյը «Սաբահ» թերթում գրեց. «4—5 տարի առաջ երկրում գործադրվեց պատմության մեջ եզակի, աշխարհասասան մի ոճիր։ Նկատի ունենալով ոճիրի հսկայական չափերն ու ծավալը, պետք է ընդունել, որ նրա հեղինակները հինգ, տասը հոգի չեն, այլ... հարյուր հազարներ։ Ջարդվածները, եթե 600.000-ի փոխարեն 300.000, նույնիսկ 200.000 կամ 100.000 լինեին, հարյուր, հինգ հարյուր, հազար ոճրագործները չպետք է կարողանային բնաջնջել այսքան մարդ։ Արդեն ապացուցված իրողություն է, որ այս եղեռնը ծրագրվեց Իթթիհադի ընդհանուր կենտրոնի որոշումներով ու կարգադրություններով»։

«Սրանք այնպիսի ոճիրներ են,— գրեց թուրքական «Ալեմդար» թերթը 1919-ին,— որ բնավ կարիք չունեն առանձին-առանձին քննությունների։ Դրանք թե՛ հայտնի են և թե՛ հաստատված։ Ջիթաճիններից շատ քիչ մարդ կա, որ մասնակից չլինի տարագրությանն ու ջարդին։ Նրանք հավասարապես ոճրագործ են, որ Իթթիհադի հետ ձեռք ձեռքի մասնակցեցին (հայկական) տարրերի դեմ կատարված եղեռնին, նրանք, որ գործիք դարձան և նրանք, որ պարտավոր էին խոսելու, բայց լռեցին։

Ոճրագործ են ջարդերի մեծ ու փոքր պաշտոնյաներն ու այդ պաշտոնյաներին հրամայող բորենիները։ Խոսքը վերաբերում է մինիստրությանը, պաշտոնեությանը, պառլամենտին ու նրանց գերագույն ղեկավար Իթթիհադին»[67]։

1. Դե Ռեդ գրոսս, Հանդես, 1918 թ.։
2. Հ. Մորգենթաու, Դեսպան Մորգենթաուի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 337։

3. Էջմիածին, 1965, N. N 2—3—4։
4. Г. Чалгушян, Красная книга, Ростов-на-Дону, 1919, с. 64.
5. Էջմիածին, 1965, N N 2—3—4։
6. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, N 1, էջ 16։
7. Հուշամատեան Մեծ Եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 95։
8. Հ. Մորգենթաու, Դեսպան Մորգենթաուի..., էջ 298։
9. La rénénsans, 18 դեկտեմբերի 1918 թ.։
10. Le Crime de silense de Genocide des armeniens, Paris, 1984, p. 46, 72.
11. Նույն տեղը, էջ 133։
12. Ա. Քոչինյան, Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն 1915—1918, հ. Ա. Բուխարեստ, էջ 63—65։
13. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 228։
14. Նույն տեղը, էջ 169։
15. Նույն տեղը, էջ 169։
16. Նույն տեղը, էջ 172։
17. Նույն տեղը, էջ 182։
18. Նույն տեղը, էջ 184։
19. Նույն տեղը, էջ 187։
20. Նույն տեղը, էջ 188։
21. Նույն տեղը, էջ 207—208։
22. Նույն տեղը, էջ 210։
23. Հուշամատեան Մեծ եղեռնի..., էջ 528։
24. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 50—52։
25. Նույն տեղը, էջ 53։
26. Նույն տեղը, էջ 54։
27. Նույն տեղը, էջ 203։
28. Նույն տեղը, էջ 74։
29. Նույն տեղը, էջ 76։
30. Հուշամատեան Մեծ եղեռնի..., էջ 526։
31. Դրոշակ, 2 հունիսի 1915 թ.։
32. Հուշամատեան Մեծ եղեռնի..., էջ 1040։
33. Le Crime de silense..., p. 138.
34. Հուշամատեան Մեծ եղեռնի..., էջ 528։
35. Le Crime de silense..., p. 78.
36. La rénénsans, 1919, N 14։
37. Le Crime de silense..., p. 78.
38. Թագուիմը Վագայի, N 3772։
39. Դ. ե. N Մ 534։
40. Թագուիմը Վագայի, N 3549։
41. Դ. ե. N 251։
42. Դ. ե. N Մ 492—494։
43. Դ. ե. N Մ 574—Մ 577։
44. Նույն տեղը։
45. Նույն տեղը։
46. Դ. ե. N 251—253։

47. Ճակատամարտ, 23 մարտի 1919 թ.։
48. Ժամանակ, 4 նոյեմբերի 1919 թ.։
49. Ժամանակ, 13 դեկտեմբերի 1918 թ.։
50. Լա ռենեսանս, 15 դեկտեմբերի 1918 թ.։
51. Նույն տեղը, 16 ապրիլի 1919 թ.։
52. Նույն տեղը, 5 հունվարի 1919 թ.։
53. Նույն տեղը, 1 մայիսի 1919 թ.։
54. Նույն տեղը, 15 դեկտեմբերի 1918 թ.։
55. Նույն տեղը, 22 հունիսի 1919 թ.։
56. Ժամանակ, 13 դեկտեմբերի 1918 թ.։
57. Նույն տեղը, 4 սեպտեմբերի 1918 թ.։
58. Նույն տեղը, 27 նոյեմբերի 1918 թ.։
59. Լա ռենեսանս, 12 ապրիլի 1919 թ.։
60. Նույն տեղը, 19 դեկտեմբերի 1918 թ.։
61. Եռզատի հայասպանության վավերագրական պատմություն, Նյու Յորք, 1980, էջ 106։
62. Նույն տեղը։
63. Լա ռենեսանս, 7 փետրվարի 1919 թ.։
64. Նույն տեղը, 13 դեկտեմբերի 1918 թ.։
65. Նույն տեղը, 24 դեկտեմբերի 1918 թ.։
66. Արքամարտ, 23 դեկտեմբերի 1918 թ.։
67. Ալիք, 28 ապրիլի 1985 թ.։

ԲՌՆԱԳԱՂԹԸ ԲՆԱՋՆՋՈՒՄ ԷՐ

Թուրքական ռադիոյի «Հայկական թղթապանակ» հաղորդաշարի 1984 թ. նոյեմբերի 11-ի թողարկման մեջ ասվում է. «Ի՞նչ է նշանակում տեղափոխման հրամանը, որը մեր օրերում որպես պատրվակ օգտագործում են հայ ահաբեկիչները։ Օտար լեզուներում այս դեպքի համար օգտագործվում է «դեպորտեյշն» (վռնդել, աքսորել, հեռացնել) բառը։ Բայց այս բառն իրականում նշանակում է աքսորել։ Իսկ տեղափոխում (թահջիր) բառը թուրքերենում հենց բնակության վայրը փոխելու իմաստ ունի։ Օրինակ, Կեպանի ամբարտակը կառուցելու ժամանակ լճի տարածքում բնակվող բնակչությանը այլ շրջաններ, այսինքն՝ նրանց իրենց բնակավայրերից մի այլ տեղ տեղափոխեցին... ...Սա է տեղափոխման բառի իսկական իմաստը և այն կիրառվեց հայերին այլ վայրեր տեղափոխելու ժամանակ»։

Սա է Հայկական հարցի «ճարտարապետների» օգտագործած «դեպորտեյշն» բառը։ Բայց ինչո՞ւ հայերի նկատմամբ իրականացվեց այդ տեղահանման քաղաքականությունը։ Որովհետև, բարբաջում է հաղորդման հեղինակը, «չնայած հայերը օսմանյան քաղաքացիություն ունեին, բայց իրենց այնպես էին պահում, կարծես ռուսներ լինեին...»

Շարունակելով կեղծել պատմական իրադարձությունները, թուրքական ռադիոն հայտարարում է. «Իսկ ինչ վերաբերում է հայերի տեղափոխմանը, ապա դա ոչ թե նրանց պատժելու, այլ ռազմական գործողությունների շրջաններից հեռացնելու միջոցառում էր... Հայերը ռազմաճակատի թիկունքում մեծ գործունեություն ծավալեցին և օսմանյան ռազմական միավորումներին երկու կրակի մեջ դցեցին։ Այդ գործը պետք է դիտվեր որպես դավաճանություն, իսկ դրա կազմակերպիչները պետք է գնդակահարվեին։ Բայց օսմանյան կառավարությունը նրանց չպատժեց, այլ հեռացրեց ռազմական գործողությունների շրջաններից՝ նրանց կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու նպատակով։

... Ճիշտ է, հայերին տեղափոխելու ժամանակ նրանց ունեցվածքի վրա հարձակումներ եղան, բայց ինչ վերաբերում է նրանց սպանությանը, ապա դա սուտ է։ Սուտ է նաև..., որ թուրք բնակչությունն ու բանակը սպանել են հայերին։

... Բայց հակաթուրքական պրոպագանդա ծավալվեց, որի մեջ զրպարտվում էր, որ հայերը ենթարկվել են ցեղասպանության։ Նույնիսկ զրպարտեցին, թե սպանվածների թիվը հասնում է 1 միլիոնի։ Այդ թիվը 1915 թ., ըստ նրանց զրպարտությունների, հասնում էր 300 հազար մարդու, սակայն հետագայում բազմապատկվեց և 1980 թ. հասավ 2 միլիոնի»։

«Իրականում որոշ մարդիկ սպանվել են տեղափոխությունների ժամանակ, նրանցից ոմանք մահացել են հիվանդությունից, իսկ մյուսները՝ ճանապարհների դժվարության պատճառով։ Որոշ մարդիկ էլ սպանվել են 1914—1916 թթ. ըմբոստությունների ժամանակ։ Կայսրությունում ծաղիկով ու տիֆով տառապում էին 500—600 հազար մարդ։ Անդրանիկի ղեկավարած կամավորական գնդերը 1915—1918 թթ. սպանեցին ավելի քան 600 հազար մարդ։ Տեղափոխման ենթարկված հայերից զոհվել են ոչ ավելի քան 100—200 հազար մարդ»։

«Եվ իրոք, որոշ մարդիկ (թուրքեր), որոնք սպանություններ կատարեցին, օսմանյան իշխանությունների կողմից պատժվեցին։ Երանի պատժվեն նաև այն հայերը, որոնք սպանեցին թուրքերին»։

Ահա այսպես. ոչ թե բռնագաղթ, այլ տեղափոխություն, ոչ թե

ոչնչացում, այլ իշխանությունների պաշտպանության ներքո տարագրություն։ Իսկ ո՞րն էր իրականությունը, ո՞րն էր երիտթուրքերի նպատակը։

«...Ամբողջ հայ բնակչությունը,— գրում է Յո. Լեփսիուսը,— տեղահանվեց բարձրագույն հրամանով դեպի Միջագետք, անապատի հյուսիսային և արևելյան ծայրերը՝ Դեր Զոր, Ռակկա, Մեսքենե, Ռաս ուլ-Այն, մինչև Մոսուլ։ Տեղահան եղավ մոտավորապես 1,4 միլիոն հայ...

Ի՞նչ է նշանակում այս։ Թալեաթի ստորագրած հրամանագրի մեջ ասված է. «Տեղահանության նպատակը ոչնչացումն է»։ Եվ գործը համաձայն այս հրամանագրի առաջ տարվեց. տեղահանված ամբողջ բնակչության միայն 10 տոկոսն աքսորավայր հասավ, մնացած 90 տոկոսը ճանապարհին սպանվեց, կանանց և աղջիկներին առևանգեցին ոստիկաններն ու քրդերը, մնացածը մեռան սովից և ուժասպառությունից»։ Անապատ հասածները «ոչնչացան մեծ մասամբ սիստեմատիկ սովով ու ջարդերով... Նրանք խումբ-խումբ տարվում էին անապատ ու այնտեղ մորթվում»[1]։

Յո. Լեփսիուսի խոսքը ոչ թե զգացմունքային պոռթկում է, այլ կատարվածի ճշգրիտ բնութագիր։ Տեղահանությունը զանգվածային ջարդ էր, կոտորած, բռնագաղթը բնաջնջում էր, մի ամբողջ ժողովրդի ոչնչացում, ցեղասպանություն։ Ո՞րն էր համիդյան ջարդերի և երիտթուրքական կուսակցության որդեգրած բռնագաղթի տարբերությունը։ Համիդյան ջարդերը, որպես կանոն, տևում էին 4—6 օր, ամենաշատը մեկ շաբաթ։ Գազազած ամբոխը, հագեցնելով արյան իր ծարավը, ընկնում էր թալանի ու կողոպուտի հետևից, որի շնորհիվ շատերին հաջողվում էր փրկվել։

Այլ բան էր բռնագաղթը. այն նման էր տևական երկրաշարժի, որից ոչ ոք ազատվել չէր կարող։ Յուրաքանչյուր հայի համար դա տևում էր այնքան, քանի դեռ նա չէր սպանվել սրով կամ չէր կացնահարվել ու գնդակահարվել, կամ սովից ու ծարավից մեռել, կամ այրվել ու գանակոծվել։

Գերմանական «Դի Վեստդեուշե Լանդեսցայտունգ» թերթը 1921 թ. մարտին գրեց. «Իրականում ի՞նչ է նշանակում 1,4 միլիոն տղամարդկանց, կանանց և երեխաների տարագրումը։ Ըստ թուրքական կառավարության ցուցմունքների և խոսքերի՝ խաղաղ և օրինական փոխադրում նոր բնակավայր, բայց իրա-

կանում ժողովրդի ողջ ունեցվածքի կողոպուտ, արական սեռի ջարդ, երիտասարդ կանանց և աղջիկների արգելափակում թուրքական հարեմներում և քրդական գյուղերում, երեխաների վաճառք գերիների շուկայում և մնացածների չարատանջ մահ՝ հիվանդությունների ու սովի միջոցով... Մոտավոր հաշվումներով 800 հազար մարդ է զոհվել սիստեմատիկ ջարդերից ու սովից։ Քաղցը և հիվանդությունները լրացրին թուրքական զենքի սկսած գործը։ Եվ վստահորեն կարելի է ասել, որ այն, ինչ գործադրվեց հայ ժողովրդի դեմ, պատմության անցած դարերում նմանը չի եղել։ Մարդ ուղղակի անկարող է հավատալ, որ նույնիսկ XX դարում մեր հողագնդի վրա հնարավոր է մի ամբողջ ժողովրդի ոչնչացում նման զարհուրելի պայմաններում»։

«Օտարերկրացի մի ականատես,— գրում է Ֆ. Նանսենը,— ասել է. «Տեղահանությունը հոմանիշ է սպանությանը»։ Իրականում այն անհունորեն ավելի վատթար էր, քան սպանությունը։ Բիրտ մահվան փոխարեն զոհերը դատապարտված էին ամենաանմարդկային տանջանքների, և արդարացնելու համար անարդարանալի, բարբարոս և ստոր արարքները, իշխանությունները անպատկառորեն դրանք որակում էին «ռազմական անհրաժեշտ միջոցառում»։ Հունիս—օգոստոս ամենաշոգ եղանակին բոլոր վիլայեթներից ու քաղաքներից դեպի հարավ, դեպի անապատ շարժվեցին մահվան թափորները»[2]։

Այո, դրանք ոչ թե տարագրության քարավաններ էին, այլ մահվան թափորներ։

Գերմանացի մի ականատեսի վկայությամբ «18 հազար հայ տեղահանվեց Խարբերդից ու Սեբաստիայից, 350 հոգի միայն հասան Հալեպ, 19 հազար հայ տեղահանվեց Էրզրումից, 11 հոգի կենդանի մնաց»[3]։

Լեփսիուսը վկայում է, որ աքսորականների $^2/_3$-ը շնչասպառ ընկավ ճանապարհին, մյուսները՝ կիսամերկ, կմախքացած ուրվականներ, հասան Սիրիա և Միջագետք, անապատ քշվելու և այնտեղ անլուր տանջանքներով մահանալու համար։ Դատապարտվածների շարքերը քայլում էին ամիսներ շարունակ և, երբ հասնում էին ճանապարհի ծայրին, կանգ չէին առնում։ Նրանք անվերջ քայլում էին։ «(Բռնագաղթվածների) ճամբարները անընդհատ դատարկվում ու լցվում էին։ Կանխամտածված և հոռի դիտավորությամբ դժբախտներին թողնում էին, որպեսզի մեռնեին անօթևան ու քաղցած, եթե չմեռնեին, նրանց կմեռցնեին։

Տիֆը, այս զարհուրելի հիվանդությունը, սրի դաշնակիցն էր։ Դիակները դիզվում էին ճանապարհի երկայնքով և ապականում էին օդը»[4]։

Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյբները Վանգենհեյմին գրում է. «Թուրքերը խոստովանում են, որ իրենց նպատակը հայերի բնաջնջումն է։ «Եվ որովհետև այդ նպատակին չի կարելի հասնել զանազան բռնությունների միջոցով, այստեղ հույս ունեն, որ մինչև Միջագետք երկարատև ճանապարհի զրկանքներն ու անսովոր կլիման կավարտեն ամեն ինչ։ Հայկական հարցի այս «լուծումը» իդեալական է համարվում ծայրահեղ ուղղության բոլոր կողմնակիցների կողմից, որին պատկանում են գրեթե բոլոր ռազմական և կառավարական պաշտոնյաները»[5]։

Կոնիայում բնակվող մի խումբ գերմանացիներ 1915 թ. օգոստոսի 16-ին դիմում են Կ. Պոլսի գերմանական դեսպանին՝ «...Եվ այսպես, ձեռնարկված բոլոր միջոցառումները, հավանաբար, կհանգեցնեն հայերի լրիվ ոչնչացման։

Այս անմարդկային վերաբերմունքը անջնջելի խայտառակության կնիք է համաշխարհային պատմության մեջ ոչ միայն թուրքերի, այլ նաև մեր՝ գերմանացիներիս համար...»[6]։

Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչները գերմանական կառավարությանը բողոքի դիմում գրեցին հայերի ջարդերի դեմ։ Այդ դիմումում կան հետևյալ տողերը. «Բռնագաղթի նպատակը հայ ժողովրդի գլխովին ոչնչացումն է։ Այս դիտավորությունը հստակ երևում է այնպիսի փաստից, որ կառավարությունը հետևողականորեն դիմադրում է երկրում գտնվող բոլոր այն միսիոներներին, գթության քույրերին և մյուս եվրոպացիներին, որոնք ձգտում են օգնել հայերին։ Շվեյցարացի մի ինժեներ դատի տրվեց գաղթվող հայերի քարավանին հաց բաժանելու համար»[7]։

Հալեպի կուսակալ Ջելալ բեյը «Վագիթ» թերթում հայտարարություն տպագրեց, որն արտատպվեց «Լա ռենեսանսի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի համարում։ Այդ հայտարարության մեջ ասված է. «Հայերի տեղահանությունը սկսվեց ամենուր։ Սկզբում մենք Կոնիա ուղարկեցինք այն հայերին, որոնք բոլոր կողմերից (Հալեպ) էին հասնում։

Իսկույն (Կ. Պոլսից) հրաման ստացանք՝ նրանց Դեր Զոր ուղարկել։

Խոստովանում եմ, ես չէի հավատում, որ այս հրամաններն

ու գործողությունները հայերին ոչնչացնելու նպատակ էին հետապնդում։ Որովհետև չէի կարող ենթադրել, որ մեր կառավարությունը երբևիցե կարող կլինի այս ձևով բնաջնջելու իր իսկ հպատակներին...

Եվ այդ պատճառով հեռագիր ուղարկեցի ներքին գործերի նախարարին, ֆինանսներ խնդրեցի՝ բնակարաններ կառուցելու և նրանցում տեղահանված հայերին տեղավորելու... Կառավարությունում ոչ ոք չուզեց լսել իմ խորհուրդը...

Այս հայտարարությունս կրկնեցի Կոնիայի պատգամավորներին... Դեպուտատներից մեկը մայրաքաղաքից վերադարձին ինձ հաղորդեց կենտրոնական կոմիտեի անդամներից մեկի (Նազիմ բեյի) հանձնարարականը, թե այս միջոցառումները որոշվել են կոմիտեի հանգամանալից քննարկումից հետո, որ դրանք չեն կարող որևէ փոփոխության ենթարկվել, հայերի տեղահանությունը մասն է կազմում (թուրքական) ազգային իդեալի. ես ևս պարտավոր էի այս իդեալին զոհել իմ անձնական համոզմունքները»[8]։

«Հատիսաթ» օրաթերթը նույն օրերին գրեց. «Կոտորածների հեղինակները կառավարությանը ստիպեցին պատրաստել և հրատարակել տեղահանության օրենքը և իրականացնել կոտորածի գործը»։

Իսկ «Իսթիքլալը» գրել է. «Առաջին համաշխարհային պատերազմը մեզանում առաջացրեց ամենաբարձր աստիճանի անասնական և անբարոյական ոգի»[9]։

Եոզղատ գավառի Պողազլյան քաղաքի պարեստ, գնդապետ Մուստաֆա բեյը Կեսարիայի 15-րդ զորաբաժնի հրամանատար Շեհապէդդին բեյին 1915 թ. հուլիսի 24-ին գրում է, որ Պողազլյանի կայմակամ Քեմալ բեյի հրամանով 300, մի այլ անգամ 1,5 հազար և 3,6 հազար հայ է կոտորվել։ Շեհապէդդինը այդ հաղորդագրությունը նույնությամբ հայտնում է 5-րդ բանակի հրամանատար Խալիլ բեյին, իսկ վերջինս՝ Էնվեր փաշային։ Այս հեռագրերի իսկությունը ամբողջապես հաստատվեց դատավարության ժամանակ։ Դատարանում Խալիլ բեյը նույնպես հաստատեց նման հեռագրերի հավաստի լինելը, և ապա ընթերցվեց № 207 հեռագիրը։ Ահա այդ հեռագիրը.

«Անկարայի զորաբանակի հրամանատարությանը.

Պատիվ ունեմ հայտնելու, որ Պողազլյանի կայմակամի հրամանով մինչև հիմա Պողազլյանի և շրջակա գյուղերի հայե-

ից 3660 հոգի կոտորված է զինվորական կայքի հրամանատարի հաղորդագրության համաձայն։

23 հուլիսի 1915 թ.»[10]։

1915 թ. փետրվարի 19-ին Կեսարիայի զինվորական գնդի հրամանատար Խուլիսի բեյը Եաղը Զինի գիշերապահ կայանի հրամանատարին հեռագրում է. «Ձեր իրավասության սահմաններում մատնություն անող մի շարք լրտես հայեր տեղահանված են, այսինքն՝ կոտորածի իմաստով։ Իսկ զորաբանակի հրամանատարը մոտավորապես նույն շրջանից դիակները մինչև հաջորդ կեսօր հավաքելու հրաման է տվել։ Պողազյանի կայմակամ բեյի հրամանով հանձնարարվում է դիակները ծածկել ժողովրդի ուժերով»[11]։

1919 թ. փետրվարի 4-ին ռազմական դատարանի նախագահը Եոզղատի կուսակալին հեռագրեց. «Զինայրերի (ժանդարմների) նախկին հրամանատար Թեվֆիգ բեյը 150 ընտանիքից բաղկացած 6—700 բնակչություն ունեցող Գում Գույու հայկական գյուղի շուրջը վառելանյութ է դիզել տվել ու այնտեղ գտնվող անձերին այրել և այրել է տվել, օրորոցի մեջ ողջ մնացած մանուկներին կտոր-կտոր է արել և կտոր-կտոր անել է տվել, ինչ-որ հանրածանոթ եղելություն է։ Այս պատճառով շատ ենք խնդրում , բարեհաճեք հեռագրով մեզ ուղարկել կատարված քննության փաստաթղթերը...»[12]։

Եոզղատի կառավարիչ Ջեմալ բեյը 1918 թ. դեկտեմբերի 18-ին դատարանում հայտարարեց. «Թեև քաղաքացիական իշխանություններին արդեն հրաման ուղարկվել էր հայերի տեղահանության և աքսորի առնչությամբ՝ այդ հրամանը կասկածելի անհատների մասին էր, մինչդեռ զինվորական իշխանությունների հրամանն ընդգրկում էր, առանց խտրության, մանուկների, կանանց ու տղամարդկանց տարագրություն։

... Եոզղատ քաղաքից և շրջակա գյուղերից տեղահանված հայ քարավանները կոտորվեցին ու բնաջնջվեցին ոստիկանների, հրոսակների ու ժողովրդի կողմից»[13]։

1915 թ. հուլիսի 26-ին Եոզղատի 472 հայերի քարավանը տարագրվեց և օգոստոսի 6-ին Սեբաստիայից 4 ժամ հեռավորության վրա գտնվող Գարտաշլարի ձորում ջարդվեց։

Դիակները նետվեցին գետը։

Եոզղատի կառավարիչ Քեմալ բեյի կողմից տեղահանված հայերի մեծ մասը կոտորվեց ու բնաջնջվեց, նրանց ունեցվածքն ու արժեքավոր իրերը կողոպտվեցին[14]։

Եոզղատի հայերի տեղահանության ու կոտորածի դատավարության ժամանակ 1919 թ. փետրվարի 5-ին Քեմալ բեյի ու Թեվֆիգ բեյի փաստաբանները հաստատեցին. «Հայերի աքսորի հրամանը տրված էր նախարարների խորհրդի որոշումով, որը կայսերական իրադեյով վավերացված էր, իսկ պաշտոնեության կենտրոնը այդ հրամանն է, որ գործադրեց»[15]։

Նույն դատավարության ժամանակ հաստատվեց, որ Քեմալ բեյը հոխորտացել է. «Մենք հայերին բնաջնջելու բացարձակ հրաման ունենք։ Մուամերին (Սեբաստիայի կուսակալ), Ռեշիտին (Տիգրանակերտի կուսակալ) և ինձ բացարձակ հրաման է տրված, և ես որևէ այլ հրաման չեմ ընդունում»[16]։

Հայոց կոտորածը,— գրում է տեղահանությունների կազմակերպմանն անմիջական մասնակից Նայիմ բեյը,— մինչև օրս համաշխարհային պատմության մեջ արձանագրված զարհուրելի դեպքերից ոչ մեկին չի նմանվում։ Թուրքիայի լայնարձակ տարածքի որ անկյունում էլ փնտրես, որ ամենամութ խորշը խուզարկես, կգտնես ամենաանգութ ձևով խողխողված հայերի դիակներ ու կմախքներ։ «Հինգ-վեց նահանգների մոտավորապես մեկ միլիոն բնակչությունը տեղահան էր լինում։ Մինչև իրենց աքսորավայրն էին հասնում, յուրաքանչյուր քարավանից հազիվ 100—150 կին ու երեխա էր մնում։ Դա ապացույց էր, որ նրանց կոտորելով էին արտաքսում»[17]։

«Մի մեծ ազգ իր կանանցով և երեխաներով մահվան էր դատապարտված»[18]:

Թալեաթի նախաձեռնությամբ Հալեպի տարագրության վարչության պետ նշանակված Ա. Նուրիի կարծիքով, հայերին բնաջնջելու միջոցներից «լավագույնը հայ գաղթականներին զրկանքի և ձմռան սառնամանիքներին ենթարկելն է, այդ միջոցով նրանց մեռցնելը, որն ապագայում հնարավորություն կտար առաջ մղելու նրանց բնական մահով ոչնչանալու թեզը... 10—15 հազ. հայ գաղթականի մի տեղում կենտրոնացնելով, իհարկե, շուտով նրանք սովի, զրկանքի և հիվանդությունների պետք է ենթարկվեն...»[19]։

Սկսվեց համաճարակը, որին կուլ էին գնում ոչ միայն հայերը, այլ նաև Միջագետքի ողջ ազգաբնակչությունը։ Եվ երբ այդ կապակցությամբ Նայիմ բեյը անհանգստություն արտա-

հայտեց, Նուրի բեյը պատասխանեց, որ անհանգստանալու հարկ չկա, որովհետև «այդ ձևով միանգամից ոչնչացնում ենք երկու վնասակար տարրերի. հայերի հետ սատկողները արաբները չե՞ն։ Մի՞թե դա վատ է։ Թուրքերի ապագայի ճամփան է հարթվում»[20]։

Ռաս ուլ-Այնի կայմակամ Ե. Զիյա բեյի խնդրանքին՝ գաղթականների տեղաշարժը դադարեցնելու մասին, որովհետև ճանապարհին ամեն օր 5—600 մարդ էր մեռնում, ստացվեց հետևյալ պատասխանը. «Առաքումներն արագացրեք, որովհետև այդ դեպքում նրանք, ովքեր անկարող են մեկնել, քաղաքից մի քանի ժամ հեռանալով կընկնեն, կմեռնեն և գավառակը թե՛ ողջերից, և թե՛ մեռածներից կազատվի»[21]։

Ռաս ուլ-Այնի վրանների տակ պատսպարվել էր 50 հազ. հայ գաղթական։ Վանի, Մուշի և Բիթլիսի հայությանը կոտորելուց հետո Զեվդեթ բեյը նշանակվում է Ադանայի կառավարիչ։ Ճանապարհին, անցնելով Ռաս ուլ-Այնով, նկատում է վրաններ։ Իմանալով, որ դրանք հայերի վրաններն են, Զեվդեթը բղավում է. «Այդ շները դեռ կենդանի՞ են», և հրամայում է բոլորին ոչնչացնել։ Երբ կայմակամը հրաժարվում է այդ հրամանը կատարելուց, Զեվդեթ բեյը բղավում է. «Ուրեմն չգիտե՞ս թե կառավարությունը ինչ ծրագիր է հետապնդում»։

Զիյա բեյը աշխատանքից վտարվեց, և Ռաս ուլ-Այնի նոր կայմակամ նշանակվեց Ք. Ռեֆի բեյը, որն անմիջապես իրագործեց Զեվդեթի հրամանը[22]։ Այդ հրեշավոր գործի իրականացումը գլխավորելու համար Հալեպից եկել էր բռնագաղթի գրասենյակի ղեկավարներից մեկը՝ Ադիլ բեյը, որը, բռնագաղթվողներին ոչնչացնելուց առաջ, նրանց հիմնավորապես թալանեց և ջարդարարներին ցուցում տվեց. «Չլինի թե թեկուզ մեկ հոգու ողջ թողնեք. փոքրերին, նույնիսկ մինչև 7—8 տարեկաններին, ջարդեք անխնա, որովհետև, եթե ողջ թողնեք, վաղը դրանք կելնեն և մեզանից վրեժ կլուծեն»[23]։

Որ բռնագաղթը նշանակում էր հայերի բնաջնջում, վկայում է նաև Պապի կայմակամին Հալեպի դատախազի հետևյալ հեռագիրը. «Նույնիսկ ոճրագործության համար դատապարտված կամ մեղադրված ու ոստիկանության կողմից ձերբակալված հայերին բանտերում մի պահեք, անմիջապես առաջ ուղարկեք», այսինքն՝ տարագրեք[24]։

Հալեպից ստացված հրամանը ժանդարմներին հանձնարարում էր. «...Ճանապարհների վրա սոված ու ծարավ թողնելով հնարավորին չափ պակասեցնել գաղթականների թիվը»[25]։

Նուրի բեյը դրան ավելացնում է. «Գաղթականների առաքման կապակցությամբ ձեր կողմից ցուցաբերվող խստությունն ու արագությունը կարող են իրականացնել այն նպատակը, որ հետապնդում ենք։ Միայն պետք է ուշադրություն դարձնեք, որ ճանապարհներին դիակներ չմնան... Փոխադրության միջոցներ հայթայթելով մի զբաղվեք։ Գաղթականները հետիոտն էլ կարող են գնալ։

Այս օրերին մեզ ուղարկված շաբաթվա (ընթացքում) մահացածների ցուցակը գոհացուցիչ չէ։ Նրանից երևում է, որ այդ մարդիկ (հայերը) այդտեղ շատ հանգիստ են ապրում։ Գաղթականների առաքումը չպետք է ճանապարհորդության նմանվի։ Բողոքին ու ողբին կարևորություն չտաք»։ Եվ ապա՝ «Պապ գյուղաքաղաքը հայ գաղթականներից պարպելու կապակցությամբ կատարվելիք խստությունները հետապնդման չպետք է ենթարկվեն»[26]։

Այս հրահանգի համաձայն, ոստիկանությունը 24 ժամվա ընթացքում Պապից դուրս քշեց հայերին. «Եղանակը ձմեռ, ոտքից գլուխ մերկ. այս վիճակի մեջ ճամփա հանելով (հայերը) ճանապարհների եզրերին ընկնում մեռնում էին։ Պապից մինչև Մեսքենե ճանապարհի երկարությամբ արտերը հայերի դիակներով լցվեցին»։ Բայց սա էլ Նուրի բեյին քիչ էր թվում։

Մի քանի օր անց նա անձամբ գնաց Պապ, որտեղ «ամենազարհուրելի տեղահանությունը կատարվեց՝ վրանները այրելով և գաղթականների վրա զենք պարպելով։ Մեկ օրվա ընթացքում էյուբ բեյը 17,5 հազ. գաղթական քշեց առանց կառքի, առանց ջորու, հետիոտն, անձրևի տակ։ Հարյուրավոր հիվանդներ չէին կարողանում քայլել և ընկան մեռան, և նրանց դիակները մնացին ցեխի մեջ»[27]։

Մեսքենեում կուտակված հայերի ոչնչացումը կազմակերպելու համար, Նուրի բեյը ողջերթ ասաց Նայիմ բեյին. «Այդ մարդկանց (հայերին) կենդանի չթողնես. հարկ եղած դեպքում քո ձեռքով սպանիր։ Նրանց սպանելն էլ զվարճություն է»[28]։

«Մեսքենեի և Սպուհարբարի միջև գտնվող Տիբսի կոչված կայքը,— գրում է Նայիմ բեյը,— ամենախոշոր եղեռնավայրերից մեկն էր։ Մահվան դատապարտվածներն այնտեղ սպանվում և գետն էին նետվում։ Մեսքենեի մի ծայրից մյուսը կմախք-

ներով էր լցված։ Պարզապես ոսկորների արտի տեսք էր ստացել։

Միայն Հալեպից Ռաս ուլ-Այնի և Մեսքենեի ճանապարհով ուղարկվեց 200 հազ. հայ և այս մեծ թվից միայն 5—6 հազարը կարողացավ ողջ մնալ։ Երեխաներին Եփրատը գցելով մեացրին։ Կանայք, զանազան ճանապարհների վրա, ժանդարմների և ժողովրդի խժդժություններով վայրենաբար սվիններով կամ հրազենով սպանվեցին»[29]։

Երբ տարագրության քարավանների մնացորդները Դեր Զոր հասան, ներքին գործերի մինիստրությունից հեռագիր ստացվեց. «... Նախորդ հրահանգի համաձայն գործել սկսեք և շտապեք»։

Երկու օր անց սկսվեց ջարդը, որին զոհ գնաց 200 հազ. մարդ։ Սասունի ջարդարար Զեքի փաշան, որ նոր էր նշանակվել Դեր Զորի կառավարիչ, հայերին քշեց Մարաթի և Սուվարի անապատները, «և որովհետև հնարավոր չէր այդ ողջ բազմությանը սպանելով վերջացնել, ստեղծեց արհեստական սով, որի ընթացքում մարդիկ նախ էշեր, շներ, կատուներ կերան, հետո ձիու և ուղտի դիակներ. ավելի ուշ, երբ այլևս ուտելու բան չմնաց՝ մարդկային դիակներ, առավելապես փոքրիկ տղաների դիակներ։ Դրանք արդեն դիվահարների քարավաններ են, որոնցում կարելի է տեսնել սոսկումի այնպիսի տեսարաններ, որոնք իրենց նմանը չունեն մարդկային տարեգրության մեջ»[30]։

Երիտթուրքերին դատելու համար ստեղծված հետաքննող հանձնաժողովն ու ռազմական դատարանն ապացուցեցին, որ տեղահանությունն ու կոտորածը երիտթուրքերի թե առօրյա խոսակցության մեջ և թե պաշտոնական փաստաթղթերում նույն նշանակությունն ունեին՝ քաֆիր կամ սեվֆիյաթ բառերը նույն իմաստով էին օգտագործվում։

1918 թ. հուլիսի 22-ին Պողազլյանի զորքի հրամանատարը ծածկագիր է հղում Անկարայի 5-րդ զորաբանակի հրամանատար Խալիլ Ռեջայի բեյին. «Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ այս գիշեր գյուղերից ու ավաններից ձեռք գցված կասկածելի 14 հայեր ուղարկվեցին իրենց ամսոռավայրերը»։ Խալիլը ավելի որոշակի պատասխան է պահանջում։ Նույն օրը ստացվում է պատասխանը. «... վերոհիշյալ հայերը կասկածելի լինելու համար զինվորական տանտապետ Հ. Ավնիի հոգացությամբ ջարդվել են»[31]։

Եռզղատի հազարապետ Սալիմ բեյը դատարանում ցուցմունք տվեց. «Հայկական գյուղերի վրա զինվորական վաշտի հրամանատար Թեվֆիգի կատարած արշավանքների ընթացքում բազմաթիվ հայեր սպանվեցին առանց որևէ պատճառի... Սարը Համզա-ի դեպքերի ընթացքում 13 հայ սպանվեց և 5 ուրիշներ վիրավորվեցին... (Նա) Զափանլիի մոտ սպանել տվեց այն հայերին, որոնք բանտարկված էին...

Առաջին քարավանի առաքման ընթացքում 472 տեղահանված հայեր սպանվեցին Սեբաստիայի կուսակալ Մուհամեր բեյի հրամանով... Ինքն իսկ որոշեց ընկերանալ քարավանին և հարկադրեց նրանց (հայերին) հասարակական փոս փորել՝ Ինջե Զայրում տարագրվածներին կոտորելու և թաղելու համար...

Ինքը (Քեմալ բեյը) ու իր արբանյակները գործեցին ամեն տեսակ խժդժություններ և գարշելի արարքներ։ Նրանք ամենուրեք պարծանքով կրկնում էին, թե իրենց ոճիրները ավելի հերոսական ու փառավոր գործեր էին, քան արքայության բնակիչ սուլթան Սելիմ Նավուզի աշխարհակալությունները»[32]։

Թուրքական «Հատիսաթը» Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդ բեյին մեղադրում էր. «50 հազարից ավելի կանանց, տղամարդկանց, պատանիների, անմեղ ժողովրդի սպանելու, 30 հազար ոսկի և զարդեղեն կողոպտելու մեջ»։

Թուրքիայի ներքին գործերի մինիստր Քեմալ բեյի կարծիքով, «եթե աշխարհի վրա մեր բոլոր թշնամիները միավորվեին մեր դեմ ու ցանկանային մեզ (եղեռնի) նման մեծագույն կորուստ պատճառել, չէին կարողանա։ Հանրային հարստության գրեթե քառորդը հայերի ձեռքում էր։ Հայերն իրենց ձեռքում էին պահում երկրի վաճառահանության և արդյունագործության գրեթե կեսը։ Բնաջնջել հայերին՝ համազոր էր կայսրության քանդումին»[33]։

«Ստամբուլ» թերթը 1919 թ. նոյեմբերի 10-ին տպագրեց հայերին կոտորելու մասին Թալեաթի հեռագիրը, իսկ «Թայմսը»՝ այդ փաստաթղթի լուսանկարը։ 1919-ի հունվարի 24-ին պարբերականը գրեց. «Բացահայտ կերպով հաստատվում է, որ կոմիտեի (Իթթիհադի) կառավարությունը ծրագրել էր մի ամբողջ ազգի բնաջնջումը»։

Ալի Քեմալը, դիմելով հայերի հասցեին մեղադրանքներ շպրտող պառլամենտականներին, գրում է. «Ոչ, հայերը թուրքերի նկատմամբ նման բռնություններ չեն գործադրել, հայ վարչա-

պետները, հայ նախարարները, կուսակալներն ու պաշտոնյաները պաշտոնապես ու կանոնավորապես Թուրքերին նահանգից նահանգ չքշեցին և ճանապարհին բարբարոսաբար չսպանեցին»[34]։

1919 թ. ապրիլի 24-ը Թուրքիայում հայտարարված Ազգ օր։

1919 թ. մայիսի 2-ին «Թայմսը» գրեց. «Ինչ որ ասվեց և ասվում է հայկական սարսափների մասին, ամենևին չափազանցություններ չեն։

Դրանք հիմնված են անգլիական պաշտոնական տվյալների վրա»։

«Սաբահ» թերթը մի քանի հարց մեղադրանք է ներկայացնում երիտթուրքական կառավարության արդարադատության նախարար Ֆ. Իբրահիմ բեյին. «Երիտասարդ Թուրքերի կուսակցության հրոսապետերի ժողովատեղում ընդունված որոշման համաձայն չէ՞ր, որ բանտերից ազատ արձակել տվիր ամենից սարսափելի ոճրագործներին միակ նպատակով՝ հայերին իրենց բնակարաններից արտաքսելու համար և հակառակ նրանց բացարձակ անմեղության, բնաջնջել տվիր վայրագությամբ։

Մի՞թե դու չէիր, որ կազմակերպեցիր վայրենի հրոսակներ ամենավայրագ ոճրագործներից, որոնք Կ. Պոլսի կենտրոնակա-. նի գաղտնի կալանավորներն էին, միևնույն ժամանակ հրամաններ հղելով գավառները (բանտերից ոճրագործներին ազատ արձակելու մասին)։

Մի՞թե դու չէիր, որ քո տիրոջ՝ Թալեաթի հետ համաձայնվելուց հետո հրամաններ և հրահանգներ տվեցիր անմիջապես պաշտոնազրկելու հայ պաշտոնյաներին այն վայրերում, որտեղ պետք է տարագրվեին և բնաջնջվեին հայերը...

Մի՞թե դու չէիր, որ հրճվում էիր հայ ժողովրդի սպանդի տեսարանի առջև, որ գործադրվում էր կացնի, ուրագի և բրիչի հարվածներով»[35]։

«Ալեմդարը» 1919-ին գրեց Թալեաթի ու նրա գործընկերների մասին. «Կախեցին, սպանեցին, աքսորեցին, մորթեցին և միևնույն ժամանակ հայերին մորթել, աքսորել և սպանել տվին։ Նրանք կրկնակի մարդասպաններ են, որովհետև սպանելու հրաման արձակեցին և սպանեցին»[36]։ Իսկ Ֆուադ բեյը նրանց հասցեին ասաց. «Երկիրը ոճիրների թատերավայր դարձրին»[37]։

1918 թ. երիտթուրքերի կառավարությունը հայտարարվեց

օրենքից դուրս, իսկ նրա ղեկավարները դատի տրվեցին երկու գլխավոր մեղադրանքով՝ Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայ ժողովրդին բնաջնջելու համար։ Այսինքն՝ թուրքական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց եղեռնի փաստը։

Երիտթուրքերի պարագլուխների 1919 թ. դատավարության առթիվ «Թյուրքչի Ստամբուլ» թերթը գրեց. «Իթթիհադական պարագլուխների ձերբակալությունն ամեն կերպ արժանի է գնահատության։ Արդարև ի՞նչ կա ավելի ուրախալի, քան տեսնել արդարության ձեռքը հանձնված հայրենիքի այն դավաճաններին, որոնք առաջնորդեցին երկիրը դեպի անկումի խորխորատները, ոտնակոխ արեցին երկրի արժանապատվությունը, բռնաբարեցին պատիվներ, խոշտանգեցին, կողոպտեցին, մի խոսքով գործեցին ամեն տեսակի գազանություններ»[37ա]։

Այդ նույն ժամանակ «Թասֆիրի իքքեար» թերթը գրեց.

«...Ֆրանսիացիները իրենց թնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով այնքան գերմանացի են սպանել, որքան Թուրքերը՝ հայ»[38]։

1919 թ. դատավարության «ընդհանուր դատախազ» Ֆերուդին բեյի հրապարակած մեղադրական եզրակացությունում կարդում ենք. ««Իթթիհադ վե Թերաքին» է հեղինակը չարիքների այն շղթայի, որ սկսվում է սահմանադրության հրապարակումից հետո, և որը պարունակում է ջարդի, ավերումի, հափշտակության և թալանի նման սև ու արյունոտ իրողություններ։

Օսմանյան պետությունը շատ ավելի վնասվեց ընդհանուր պատերազմի ընթացքում կատարված ներքին ջարդերից ու շահատակություններից, քան ռազմաճակատում թափված օսմանցի քաջերի արյունից։ Ջարդի և շահամոլության նման գազանային և ստոր ոճիրները, դժբախտաբար, վերագրվում են Իթթիհադի ընդհանուր կենտրոնին՝ և՛ այդ կուսակցության բոլոր անդամներին, և՛ «Թեշքիլաթը Մախսուսեին», և՛ այն անձանց, որոնք այսօր դատի են կանչված ոչ թե որպես նախարարներ և պաշտոնյաներ, այլ իբրև Իթթիհադի կենտրոնի և ընդհանուր ժողովների անդամներ։ Արդարությունն է միայն, որ պետք է կարողանա մաքրել արյունի այն բծերը, որոնք մի սև խարան դարձան օսմանյան ճակատին։ Ահա այս բիծը մաքրելու համար է, որ այսօր աշխատում ենք»[39]։

Տրապիզոնի դատավարության ժամանակ դատախազը ասաց. «Հայերի տարագրության մասին Իթթիհադական կառավարության

որոշումները Տրապիզոնի և նրա շրջաններում գործադրվելու ժամանակ սկզբում տղամարդիկ, ապա կանայք և երեխաներն են տարագրվել։ Տղամարդկանց մեծ մասը Դայիրմենդերի կողմերում անգթորեն կոտորվել են։ Դրանցից բացի, կանայք և երեխաները նավակներով ծովի խորքերն են տարվել ու ծովը թափվել։ Մի մասին էլ, բուժելու պատրվակով, Կարմիր մահիկի հիվանդանոց տարան և այնտեղ թունավորեցին։ Դրանից հետո տարագրվածների գույքն ու գոհարեղենը թալանվեց։ Ամբողջ մարդկությունը անեծքով և զզվանքով պիտի հիշի վերոհիշյալ ոճիրները»[40]։

1919 թ. հունվարի 27-ին Կ. Պոլսի դատավարության ժամանակ հանդես եկավ ազգությամբ քուրդ, հրամանատարական բարձր դիրք ունեցող Մուստաֆա Քեմալ փաշան, որը երիտթուրք լիդերների մասին մասնավորապես ասաց. «Նրանք հիմք դրեցին ամեն տեսակ բռնության, կազմակերպեցին տեղահանություններ և ջարդեր, ծնողների ներկայությամբ նավթով այրեցին ծծկեր երեխաներին, բռնաբարեցին կանանց և երիտասարդ աղջիկներին, կապկպեցին, վիրավորեցին և բաժանեցին երիտասարդ աղջիկներին իրենց հայրերից և մայրերից, բռնագրավեցին նրանց շարժական և անշարժ գույքը, ողբալի վիճակով աքսորեցին կանանց մինչև Մոսուլ՝ կատարելով ամեն տեսակ բռնություններ։ Նրանք նավերի վրա բարձեցին հազարավոր անմեղների ու ծովը նետեցին»[41]։

1920 թ. Աթաթուրքը ԿԿ. Կարաբեքիրին զգուշացնում էր. «Հայերի նոր ցեղասպանություն պետք չէ կազմակերպել»[42]։

Շվեյցարական ժուռնալիստի հետ հարցազրույցի ժամանակ, որը տպագրվեց «Լոս Անջելես էքզամիներ» օրաթերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարում, նա հայտարարեց. Երիտթուրքական կուսակցությունը «պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգթորեն, զանգվածաբար քշվեցին իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին...»

«Գազետ դը Լոզանը» 1916 թ. փետրվարի 16-ին գրում է. «Ինչ որ այսօր տեղի է ունենում Հայաստանում, վաղուց ի վեր երիտթուրքերի ծրագիրն էր, որոնք պատեհ առիթի էին սպասում այն իրագործելու համար։ Այս սոսկալի պատերազմը լավագույն շարժառիթը եղավ։ Հայկական ապստամբությունը պատրվակ էր...»

Իսկ ամերիկյան «Նյու Ռեպուբլիկը» 1917 թ. հունվարի 27-ին գրում էր. «Երիտթուրքերը որոշել էին օսմանացնել Հայաստանը»։

1919 թ. հունվարի 24-ին «Թայմսը» գրեց. «Բացահայտ կերպով հաստատված է, որ կոմիտեի (Իթթիհադի) կազմակերպությունը ծրագրել էր մեթոդիկ կերպով բնաջնջելու մի ամբողջ ազգ»։

Հոլանդական մի լրտես 1915 թ. նոյեմբերին Կ. Պոլսից վերադառնալուց հետո հայտարարեց, որ Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը կրում է սիստեմատիկ բնույթ և շարունակվում է իրականացվել[43]։

Մեծ վեզիր Ս. Հալիմը 1918 թ. «Մեջլիս մեբուսան զաբիտների ուշունչու մեջլիսի» թերթի № 571 համարում ընդունեց ջարդերի փաստը, տեղահանության միջոցով ոչնչացում իրականացնելու վերաբերյալ գաղտնի հրամանի գոյությունը, ինչպես նաև Հատուկ կազմակերպության մարդասպան առաքելությունը։

1916 թ. դեկտեմբերին «Մանչեստր գարդիան» թերթը գրեց. «Մնում է մի բուռ Հայաստան, մի բուռ, որ հիշեցնում է ամենազարհուրելի սարսափը... իր ամբողջ ժողովրդի բնաջնջմամբ հողին հավասարեցված մի երկիր»։

«...առաջին համաշխարհային պատերազմից առաջ Թուրքիայում բնակվող 2 միլիոն հայերից պաշտոնական տվյալներով 1965 թ. մնացել է 33 հազ.»։

«Տխրահռչակ վերաբնակեցումն այլ բան չէր, քան հայերի զանգվածային սպանություն»[44]։

Ջորջ Հորթնը, որ որպես ՍՄՆ-ի հյուպատոս 30 տարի աշխատել էր Թուրքիայում և ականատեսն էր Ադանայի 1909 թ. ջարդերի, առաջին համաշխարհային պատերազմի տարիների և Զմյուռնիայի ջարդերին ու քաղաքի 1922 թ. հրդեհին, գրում է. «...մենք պետք է խոսենք հայ ժողովրդի կործանման, մարդկության պատմության ամենահրեշավոր ոճիրի մասին, որպեսզի մի օր հանցագործը անպայման աշխարհի առաջ զգա և հատուցում կատարի... Այդ ժողովուրդը քաղաքակիրթ աշխարհին չի կարող պատկանել...»

Ֆրանսիական «Լը Մոնդը» 1985 թ. ապրիլի 26-ին տպագրեց հայտնի հայագետ, պրոֆեսոր Ժան Պիեռ Մահեի հոդվածը, որտեղ գրված է. «Բնաջնջելու թուրքական գործողությունները պատերազմի հետևանքով առաջացած դժբախտությունների արդյունք

չէին, այլ կանխամտածված քաղաքականություն, ցեղասպանության ոճիր... ցեղասպանությունն այնպիսի ոճիր է, որի ցավալի և ողբերգական հետևանքները դեռ շարունակվում են նույնիսկ երեք սերունդ անց։ Այդ երրորդ (սերնդի) երիտասարդությունը այսօր դիմագրավում է իր ինքնությանը սպառնացող մի խորը վտանգի»։

«Ընդհանուր առմամբ երիտթուրքերը,— գրում է Ջ. Բրայսը,— իրենց ծրագրի իրականացման գործում պրուսական բծախնդրություն դրին, և բացառություններն ու «ոչ գործնականությունը» քիչ տեղ գրավեց։

...Էրզրումի, Բիթլիսի ու Վանի վիլայեթներում 1912 թ. ապրում էր 580 հազար հայ... այդ շրջաններում վերապրողների թիվը 12 հազար էր...

Այս պարագայում կրոնական նեղմտությունը շատ մեծ դեր չխաղաց. օրինակի համար, կրոնական նեղմտությամբ հնարավոր չէ բացատրել քրդերի ու չերքեզների վարքագիծը, որոնք սարսափելի արարքներ կատարեցին և որոնց համար նրանց չի կարելի պատասխանատու համարել։

Գյուղացիությունը հայերի վրա երբեք չէր հարձակվի, եթե մեծերը չհրամայեին... Շատ մահմեդական հարգելի քաղաքացիներ իրենց հարևան հայերին բնաջնջել չէին ուզում։ Թուրք իշխանությունները խստորեն պատժում էին այն մահմեդականներին, օտարականներին կամ հույներին, որոնք ապաստան էին տալիս հայ զոհերին...

Երիտթուրքական նախարարները, Կ. Պոլսի նրանց գործակիցները (ուղղակիորեն և անձնապես) սկզբից մինչև վերջ պատասխանատու են այս հսկայական ոճիրի համար, որ ավերեց Մերձավոր արևելքը 1915 թ.»[45]։

1919 թ. մարտի 13-ին ներքին գործոց նախարար Ջելալը ընդունեց, որ տեղահանությունների ժամանակ 800 հազար հայ ջարդվել է։ Այդ խոստովանությունը հրապարակեցին «Լը մոնիտոր օրիենտալ» և «Ալեմդար» թերթերը։ Լուրը ցնցեց թուրքերին։ «Հատիսաթը» չորս օր հետո հայտարարեց, որ այդ քայլը անվայել է մուսուլմանական ներկայացուցչին։ Յ. Բայուրը «Աթաթյուրք հայեթի վե էսերի» գրքում (հրապարակված 1963 թվականին) զայրանալով Ջելալի վրա, ասում է. «Նա այդպիսով մեր թշնամուն մատակարարեց հզոր փաստ ու զենք»։ Իսկ Թուրքիայի հանրապետության նախկին նախագահ Ջ. Բայարը

քննադատելով Ջելալին, գրում է, որ դա եղել է ամենատգեղ, անհաճո ու ամենաանտեղի բացահայտումը։

Դժբախտաբար այդ մտայնությունը դեռ «էն գլխից» թուրքական հասարակական կարծիքի վրա գերիշխող դեր ուներ։ Ցեղասպանության կազմակերպիչներն ու վայրագություններ կատարելու մեջ առավել աչքի ընկած անձինք համարվում էին մեծ հայրենասերներ ու հերոսներ։

Թեշքիլաթը Մախսուսեի թափթփուկները երիտթուրքերի կառավարության անկումից հետո Կ. Պոլսի մութ թաղերի թաքստոցներից սպառնում էին ոչնչացնել նրանց, ովքեր կփորձեին պատժել հայերի կոտորածների կազմակերպիչներին ու մասնակիցներին։

Հատուկ կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Էրթյուրքը, դահիճ Քեմալի մասին գրել է. «Թուրք ազգի այս հերոս զավակը... կախաղան հանվեց. նրա հիշատակը պետք է հավիտյան ապրի թուրք ազգի սրտում»[46]։

35 հազար հայ կին ու երեխա ոչնչացնող այդ նույն Քեմալ բեյը կախաղան բարձրացվելուց 12 օր առաջ (1919-ի մարտի 30-ին) գրեց. «Իմ հոգով տոգորված թուրք և իսլամ եղբայրներս պետք է կոթող կանգնեցնեն գերեզմանիս վրա և գրեն հետևյալ տապանագիրը.

«Ազգի ու հայրենիքի համար նահատակված Պողոսյանի կայմակամ Քեմալի հաղթական ոգուն»»[47]։

Դահիճը չէր սխալվում. նա ոչ միայն այն արյունոտ տարիների, այլ նաև մեր օրերի Թուրքիայի ազգային հերոսն է, թուրք ժողովրդի «վաղվա օրվա համար զոհված» հայրենասերը։

Թուրքական պառլամենտի անդամ Սադի Դոշասը 1967 թ. հրատարակեց «Հայերը պատմության մեջ և թուրք-հայկական հարաբերությունները» գիրքը, որտեղ բառացիորեն գրված է. «Այս կառավարական անմեղ պաշտոնյաներից մեկն էր Քեմալ բեյը, Պողոսյանի կայմակամը։ Նրա վերջին կտակը վկայում է, որ նա ուղիղ մարդ էր և որպես այդպիսին բարի օրինակ ծառայեց բոլորին»[48]։

«Թերջումանը» 1977 թ. մարտի 31-ին գրեց. «Զինադադարից հետո երկու անմեղ կայմակամներ՝ Նուսրեթ և Քեմալ բեյերը, Պոլսում կախաղան հանվեցին»։

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական գործիչների ու պատ-

մաբանների կարծիքով, հանցագործը ոչ թե Թալեաթն ու իր համախոհներն էին, այլ ռազմական դատարանը, որ դատեց նրանց։

1. Гр. Чалгушян, Красная книга, Ростов-на-Дону, 1919, с. 64.
2. Ֆ. Նանսեն, Հայաստանը և Մերձավոր արևելքը, Վերիտոն, 1956, էջ 273։
3. Նույն տեղը, էջ 273։
4. Նույն տեղը, էջ 274—275։
5. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 295.
6. Նույն տեղը, էջ 299։
7. Նույն տեղը, էջ 327—328։
8. Լա ռենեսանս, 13 դեկտեմբերի 1918 թ.։
9. Նույն տեղը, 13 ապրիլի 1919 թ.։
10. Դ. Ե. № 541։
11. Դ. Ե. № Մ 506։
12. Դ. Ե. № Մ 306։
13. Դ. Ե. № Մ 492—494։
14. Նույն տեղը։
15. Ժամանակ, 6 փետրվարի 1919 թ.։
16. Նույն տեղը, 12 փետրվարի 1919 թ.։
17. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 31—33։
18. Նույն տեղը, էջ 34։
19. Նույն տեղը, էջ 37։
20. Նույն տեղը, էջ 38։
21. Նույն տեղը, էջ 60։
22. Նույն տեղը, էջ 68։
23. Նույն տեղը, էջ 71։
24. Նույն տեղը, էջ 92։
25. Նույն տեղը, էջ 103։
26. Նույն տեղը, էջ 104։
27. Նույն տեղը, էջ 107։
28. Նույն տեղը, էջ 111։
29. Նույն տեղը, էջ 113—114։
30. Նույն տեղը, էջ 116—117։
31. Դ. Ե. № Մ 511։
32. Դ. Ե. № Մ 574—Մ 577։
33. Լա ռենեսանս, 13 դեկտեմբերի 1918 թ.։
34. Նույն տեղը, 22 հունիսի 1919 թ.։
35. Նույն տեղը, 19 հունվարի 1919 թ.։
36. Լա ռենեսանս, 30 ապրիլի 1919 թ.։
37. Ժամանակ, 5 նոյեմբերի 1918 թ.։
37ա. Լա ռենեսանս, 22 հունիսի 1919 թ.։
38. Նույն տեղը, 15 դեկտեմբերի 1918 թ.։

39. Թագուիմը Վագայի, № 8604։
40. Նույն տեղը, № 3771։
41. Paul du Véeu, La Passion de la Cilicie 1919—1922, Paris, 1954.
42. А. Тиркова, Старая Турция и младотурки, Петроград, 1916, с. 71, 80.
43. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1985, էջ 13։
44. Новая история стран зарубежного Востока, т. 2, М., 1952, с. 399.
45. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 1032։
46. Իքի Դեվրին Բերտե Արքասը, Կ. Պոլիս, 1964, էջ 301։
47. Ճակատամարտ, 23 մարտի 1919 թ.։
48. Ս. Գոչաս, Թարիխ Բոյունջու էրմենիլեր վե թյուրք էրմենի իլիշքիլեր, Անկարա, 1967, էջ 202։

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ԱՄԵՆԱԴԱԺԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՍՏՈՐ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Այժմ անդրադառնանք փաստերի, որոնք բնութագրական են ցեղասպանության թուրքական վարվելակերպին։

Ցեղասպանությունը թուրքերն իրականացրեցին ամենաայլանդակ, ամենավայրագ ու անմարդկային միջոցներով։ Երբ ծանոթանում ես կատարվածին, դժվարանում ես հավատալ, որ դրանց հեղինակները մարդիկ են։

Ալեքսանդրետում ԱՄՆ-ի հյուպատոս Բրյուվենտի վկայությամբ Հալեպի շրջանի մի վայրում (Կութմում) 250 հազար հայի դիակներ թափված էին իրար վրա[1]։

«Ժուռնալ դը Ժնեը» 1985 թ. մարտին գրեց. «...Սիրիայի անապատները քշված քարավանները նվազ վայրագ ու բարբարոս չէին, քան նացիստական վարչակարգի մահվան ճամբարներն ու գազախցերը»[2]։

ԱՄՆ-ի կոնգրեսմեն Մայքլ Ռոսի կարծիքով «...հայերի ցեղասպանությունը մի ավելի ահռելի բան է, քան հրեաների հետ պատահածը...»[3]։

Մի տեղ երկու երիտթուրք սպաներ վիճեցին, թե ինչ սեռի է իրենց առևանգած հղի կնոջ պտուղը։ Վեճի առարկա դրժբախտ զոհի արգանդը կտրեցին բացեցին։ Մի այլ տեղ բռնաբարեցին փոքրահասակ աղջնակին։ Ապա հագնելով, չարագործները մորթեցին իրենց զոհին և հարկադրեցին նրա մորը՝ բռնել ջրամանը և իրենց ձեռքերին ջուր լցնել։ Նրանք լվացվեցին (աղջկա) դեռևս չսառած դիակի վրա։ Մի երրորդ վայրում փոքր

երեխաներին եփեցին կաթսայի մեջ և մահվան սպառնալիքի տակ նրանց ծնողներին հարկադրեցին ուտելու այդ կերակուրը[4]։

Ականատեսներից մեկը պատմում է. «Իրար կապված կալանավորները մտրակների հարվածների տակ, շրջապատված սվինամերկ ժանդարմներով և կացիններով, սրերով, երկսայրիներով, գերանդիներով և այլ մահացու գործիքներով իրենց հետևող զինված ջարդարարների ոհմակով, երկու ժամվա տաժանակիր ճանապարհորդությունից հետո հասնում և կանգ են առնում ձորի մեջ գտնվող ջրաղացի մոտ։ Ատրճանակի կրակի ազդանշանով Ղասրմ բեկը բղավում է. «Ջարդե՛ք այս անհավատներին»։ Եվ խուժանը հարձակվելով կապկպված կալանավորների վրա, վայրագորեն հոշոտում է նրանց։

Զոհերի արյունոտ հագուստները ցցերին անցկացրած ջարդարարները գյուղ վերադարձան և հրեշային ծիծաղով բղավում էին հայուհիներին. «Տեսեք ձեր ամուսինների հիշատակները, ընդունեք ճշմարիտ կրոնը, ձեզ մեր մեջ բաժանենք... փրկվեք մահից»։ Խոսքից գործի անցնելով խուժանը հարձակվում է տների վրա, նախ բռնաբարում է անտեր մնացած հայուհիներին, սպանում է կանանց, աղջիկներին, երեխաներին և հետո թալանում տները։

Մարդուց բացի ամեն ինչի նմանվող վայրենիները... կատաղած գազանների նման չխնայեցին նույնիսկ տասը տարեկանից փոքր աղջիկներին, պղծեցին նրանց, և իրենց կրքերը գոհացնելուց հետո նրանց մերկ մարմինները բզիկ-բզիկ արեցին... ունելիները տաքացնելով մտցրին կանանց մերկացրած ստինքների մեջ...»[5]։

Երզնկայի վարժարանի 70 հայ սաների գիշերով տարան և դպրոցի պատի տակ փորված փոսերում կենդանի թաղեցին։

Բաղդադի երկաթուղու շինարարության շրջանում կային մեծ թվով բացարձակ մերկ կանայք, որոնք հարկադրված իրենց մարմնի մերկ մասերը ծածկում էին տերևներով։ Մահմեդական տղաները փայտով խփում էին նրանց ձեռքերին, որ նրանք չկարողանան փակել իրենց մերկ մարմինները։ Նրանց քշում էին անապատով, թույլ չտալով բնակավայրերին մոտենալ։ Եվ այսպես մինչև նրանք կմեռնեին։

Դարդանելի շրջանի Սեզարե քաղաքում թուրքերը մի տան մեջ հավաքել էին հայ երեխաների։ Հետո այնտեղ բերեցին

նրանց մայրերին և ասացին՝ վերցրեք ձեր երեխաներին։ Հենց այդ ժամանակ տան դռները փակեցին ու տունը հրդեհեցին։

Երզնկայում գետինը ծածկված էր դիակներով, կտրված գլուխներով, մարդկային վերջավորություններով, կանանց մազերով։ Հայ ամուսինները սպանում էին իրենց կանանց, եղբայրը՝ քրոջը, թշնամու ձեռքը չընկնելու համար։

Երիտթուրքերի ղեկավարների դատավարությանը ներկայացված մի փաստաթղթում գրված է. «Խարբերդի նահանգի գլխավոր նահանգապետը հայտնում է, որ ճանապարհները լիքն են կանանց ու երեխաների դիակներով, և ինքը ի վիճակի չէ դրանք թաղել»[6]։

Դիակները թաղելու և դրանք օտարերկրացիներից թաքցնելու Թալեաթի պահանջին Ջեմալ փաշան պատասխանեց. «Եփրատը մեր վիլայեթին քիչ է մոտենում, հավանաբար հոսանքով եկող դիակները քշված են Էրզրումի ու Խարբերդի վիլայեթներից։ Այստեղ ապստամբական շարժման մեջ սպանվածներին գցում են խոր ու խուլ անդունդները կամ ընդհանրապես այրում են։ Դրանք հազվադեպ են թաղվում»։ Եփրատի ջրերն այնպիսի քանակությամբ դիակներ էին տանում, որ դրանք տեղ-տեղ կուտակվելով պատնեշ էին ստեղծում և փոխում ջրի ընթացքը։ Մեկը Զորի նահանգապետին հարցնում է. «Ո՞ւշ է, որ դուք ոչնչացրել եք 10 հազար հայ»։ Վերջինս պատասխանում է. «Ես ունեմ իմ հպարտությունը։ 10 հազարն ի՞նչ է, այդ թիվը մեծացրու...»[7]։

Գերմանացի ականատեսներից մեկը գրում է. «...տղամարդկանց կապելուց հետո գնդակահարել էին քաղաքի (Դիարբեքիրի) պատերից այն կողմ։ Կանանց ու երեխաներին քշել էին մոտակա գյուղերը և տներում հարյուրներով տեղավորելուց հետո կենդանի այրել էին, իսկ մնացածներին էլ նետել էին ջուրը...։ Ավելի ուշ, փողոցներում կարելի էր տեսնել կանանց ու երեխաների՝ արյունաթաթախ ու ողբալի վիճակում։ Ո՞վ կարող է նկարագրել այդ տեսարանը, եթե դրան ավելացնենք նաև հրդեհված տների տեսքն ու այրված դիակների գարշահոտությունը։

Մի շաբաթվա ընթացքում գործը գրեթե ավարտված էր։ Սպաներն այժմ պարծենում էին իրենց քաջագործությամբ, որ կարողացել էին բնաջնջել ամբողջ հայ ժողովուրդը։ Երեք շաբաթ անց, երբ մենք հեռանում էինք Մուշ քաղաքից, գյուղերը դեռ վառվում էին...

Զինվորները, որոնք ուղեկցում էին մեզ, հպարտությամբ էին ցույց տալիս, թե որտեղ, ինչպես և որքան կանանց ու երեխաների էին սպանել... Մամուրետ ուլ-Ազիզը վերածվել էր մի մեծ հայկական գերեզմանոցի։ Տարբեր նահանգներից բոլոր հայերին քշել բերել էին այստեղ և նրանք, ովքեր չէին կորել ճանապարհին, հասնում էին Մամուրետ ուլ-Ազիզ, իրենց գերեզմանն այնտեղ գտնելու համար։

Մի այլ սարսափելի բան, որ տեղի ունեցավ Մամուրետ ուլ-Ազիզում. թուրքերը երկու ամիս շարունակ գազանաբար խոշտանգեցին անմեղ ու խաղաղ հայ ընտանիքներին։ Մարդկային ոտքեր, ձեռքեր և մարմնի պատառոտված այլ անդամներ մեխել էին տախտակների վրա։ Աքցաններով քաշում էին զոհերի մատներն ու եղունգները, մորուքն ու հոնքերը։ Ձիերի նման գամերով պայտում էին նրանց ոտքերը, իսկ շատերին գլխիվայր կախում էին արտաքնոցների պատերից...

Բանտերի շուրջը հավաքված խուժանը, ուր կատարվում էին այդ գազանությունները, թմբկահարում էր կամ սուլոցներով ղմուկ բարձրացնում, որպեսզի դրսի բնակչությունը չլսի զոհերի մահվան վերջին աղաղակները»[8]։

1915 թ. հուլիսի 13-ին Պոլսի հայոց պատրիարքը գրում է. «...եկեղեցիներն ու վանքերը կողոպտված, քանդված ու սրբապղծված են... Թուրքիայի ամբողջ հայությունը փակված է բերդերում... Վանի ու Բաղեշի շրջակա հայ գյուղերը ջարդված ու կողոպտված են։ Շապին-Գարահիսարը այս ամսվա սկզբին անխնա ջարդվեց...»։ «Նահատակված քահանաների ու վարդապետների մասին խոսելն ավելորդ է, երբ ժողովրդին լրիվ հեռացրել (աքսորել) են, եկեղեցիներն արդեն կողոպտված են և մզկիթի, ախոռի կամ այլ բաների են վերածված։ Պոլսի հրապարակներում սկսել են վաճառվել հայ եկեղեցիների անոթները և այլ գույքեր...

...Իթթիհադի նպատակն է բնաջնջել ողջ թուրքահայությունը։ Մահավճիռը ստորագրված էր, և հրամանը գործադրվում էր ամենախիստ միջոցներով՝ եվրոպական քաղաքակիրթ և զարգացած պետությունների աչքի առաջ։

Չորս կողմ օր ու գիշեր մերկություն, սովամահություն, լաց ու վայնասուն... Ամբողջ ազգը բնաջնջվելու վրա է, որքանոց չմնաց... Դրամ հասցրեք, Դեր Զորի տասնյակ հազարավոր հայեր սովից ու հիվանդությունից ջարդվում են...»[9]։

«Երզնկայի կառավարիչ Մեմտահ բեյը հայերին կողոպտելով 50 հազար լիրայի տեր դարձավ և հիմա էլ, որպես վարձ իր գործած վայրագությունների, Կաստամոնուի կուսակալ նշանակվեց... Երզնկայի շրջաններից 30 հազարից ավելի հայեր բնաջինջ եղան... Նույնիսկ կանայք ու երեխաները ողջ-ողջ թաղվեցին։ Հարյուրավոր կանայք ու կույսեր Եփրատ գետը նետվեցին։

Մի թուրք կառապան ասում էր. «Խարբերդից Սեբաստիա (տարածքը) ժամերով ու օրերով դիակների հոտից բոլորովին ապականված էր, մինչև իսկ ձիերին ջուր տալ չկարողացա...»[10]։

Տիգրանակերտի խճուղու վրա Խարբերդի մտավորականության քարավանի ճանապարհը կտրում է ավազակապետ Հայի Գայան և առաջարկում՝ մզկիթից մեկ ոսկով գաղթականներ վաճառել։ Նա 500 ոսկով գնում է քարավանը և ոստիկանության աչքի առաջ բոլորին սպանում և թալանում է։

1915 թ. հուլիսի 15-ին Ռեջեպ լեռան վրա 25 ոստիկաններ մի հայ աղջկա բռնաբարեցին, ապա նրա ոտքերը տարբեր ծառերի կապելով մարմինը երկու մասի բաժանեցին։

Հունիսի 7-ին Ակնում 400 հոգու վզից քարեր կապեցին ու գետի գցեցին[11]։

Շապին-Գարահիսարում հայկական եկեղեցին դարձրին հասարակաց տուն։ Մշո գյուղերում հանեցին եկեղեցիների զանգերը և նրանց տեղը շներ կախեցին։ Առաքելոց վանքի դռները ուղարկեցին Բաղեշ մի մահմեդական հոգևորականի նվիրելու, սակայն գերմանացիները այն վերցրին ու Բեռլին տարան։

Մոսուլի գերմանական հյուպատոսը 1915 թ. հունիսի 10-ին հեռագրեց, թե 614 հայերի՝ ծերերի, կանանց և երեխաների Դիարբեքիրում լաստերի վրա լցրին ու խեղդամահ արեցին։ Լաստերը Մոսուլ հասան դատարկ... Նման ուրիշ լաստեր էլ պատրաստվեցին։ Հուլիսի 18-ին Էրզրումի գերմանական հյուպատոսը տեղեկագրեց, որ «Երզնկայի մոտ ջարդեր են եղել։ Հեծելազորային 86-րդ խումբը իր սպաների հրամանով և քրդերի մասնակցությամբ ավելի քան 20 հազար կանայք և երեխաներ սպանեց Քեմախի կիրճում»[12]։

Թուրքիայում Գերմանիայի զինվորական օրգանները 1915 թ. նկարահանել էին հայկական կոտորածների բազմաթիվ դրվագներ։ Մի քանի տարի անց, երբ այս ժապավենները ցուցադրվեցին Անգլիայում, «Թայմս» և «Դեյլի տելեգրաֆ» լրագրերը

դրանց նվիրված մի քանի հոդվածներ տպագրեցին։ Տպագրվեցին նաև ընթերցողներից ստացված մի շարք բողոքներ այն մասին, որ «կինոթատրոններում այդ ժապավենները հասարակությանը ցույց է տրվել առանց նախապես զգուշացնելու, որ հիվանդներին, ցավագարներին և աճող սերնդին արգելվում է դրանք դիտել»։

Ա. Վեգները՝ գերմանացի այդ առաջադեմ հրապարակախոսն ու գրողը, մարտնչող հակաֆաշիստը 1915—1916 թթ. որպես զինվորական բժիշկ և թղթակից ծառայել է Միջագետքում։ Նա ոչ միայն ականատես էր երիտթուրքերի գազանություններին, այլև դրանք լուսանկարել է։ 200 լուսանկար, որ ցուցադրում էր իր բազմաթիվ հրապարակային դասախոսությունների ժամանակ։ Ա. Վեգները մի քանի աշխատություն գրեց՝ նվիրված հայ ժողովրդի ողբերգությանը։

Տիգրիսի ափին,— գրում է Ա. Վեգները,— «Մի խումբ հայ աղջիկներ ու կանայք հավաքվեցին գետեզերքի բարձրադիր ցցվածքի վրա... իրար կապված սկսեցին երգելով օրորվել և իրենց զոհաբերության արբեցումից վերացած միասին գահավեժ գետը նետվեցին...»

Մեկ տարի անց Հալեպից Պոլիս վերադառնալիս «տասնյակ հազարավոր տարագիրներից, որոնց... ճամբարներում խռնված էինք տեսել, միայն մի քանի հարյուրն էին մնացել։ Անապատի մեջ դիակներ ու դիակներ էին։ Երբ գիշերելու համար կանգ էինք առնում իջևանատների առջև, ստիպված էինք նախ մուտքերից տարագիրների ընկած և չորացած կմախքները հեռացնել»[13]։

Պարսիկ հայտնի գրող Մ. Ա. Ջամալզադեն 1916 թվականին Կ. Պոլսից ճամփորդում է Հալեպ, և իր տպավորություններն ամփոփում նոթագրություններում։ Ստամբուլից դուրս գալու «առաջին իսկ կայանից հանդիպեցինք հայերի խմբերի, որոնք զինված ժանդարմների և թուրք ձիավորների կողմից... դեպի մահ ու կործանում էին քշվում։ Հարյուրավոր հայ կանայք ու տղամարդիկ իրենց երեխաների հետ, ողբով ու հեկեկանքով առաջ էին քշվում։ Տղամարդկանց մեջ երիտասարդներ չէին երևվում, որովհետև բոլոր երիտասարդներին կամ ռազմադաշտ էին ուղարկել կամ զգուշության համար սպանել էին։

...Ամենուր տեսնում էինք հայ կանանց ու տղամարդկանց, որոնք ընկել ու մահացել էին խճուղու կողքին կամ մահանալու վրա էին։ Հետագայում լսեցինք, որ այդ վայրերի երիտասարդներից ոմանք չէին քաշվել իրենց կրքերին զոհացում տալ՝ անարգելով մահամերձ կամ մահացած հայ աղջիկների պատիվը։

Եփրատի արևմտյան ափով էր անցնում մեր ճանապարհը... Օր չկար, որ գետում դիակներ չտեսնեինք. ջուրը տանում էր դիակները»[14]։

Հռոմի Բենեդիկտոս XV պապը 1915 թ. սեպտեմբերի 10-ին նամակով դիմեց սուլթան Մուհամմեդին և դատապարտեց հայերի դեմ իրականացվող ցեղասպանության քաղաքականությունը։ Ապա պապը հանդես եկավ հոգևոր խորհրդի նիստում և ասաց. «Դժբախտ հայերը գրեթե ամբողջությամբ կոտորված են»։

Ռուսական բանակի կազմում Մուշ և Սասուն մտած հայ կամավոր Ս. Մելիքյանը կոտորածներից անմիջապես հետո գրառել էր իր տեսածներն ու լսածները, որոնք լույս տեսան 1917 թ. Թիֆլիսում՝ «Հայ կամավորի հուշերից» խորագրով։

«Տեղի (Խնուսի) կայմակամի հրամանով թուրքերը 1000 հայ հավաքեցին ու նրանց ուղարկեցին Գյումգյումի ուղղությամբ՝ Խնուսի և Մշո կես ճանապարհին՝ ռազմական անհրաժեշտության պատրվակով։ Բայց քարավանը, որին ուղեկցում էին զորաջոկատներն ու քրդերը, հեռու չգնաց։ Հազիվ քաղաքից դուրս եկած մի սրտակեղեք տեսարան տեղի ունեցավ՝ տղամարդկանց անմիջապես անջատեցին կանանցից ու երեխաներից, կողոպտեցին և ապա սպանեցին... Հետո կանանց և երեխաներին գետը թափեցին։

Ես շրջում էի Մուշի մնացորդների մեջ, երբ պատահեցի լեռներում կոտորածներից ազատված փախստականների... վատրանդի իրենց գյուղերից, անպատսպար, անգգեստ, մատմոլոր, քաղցից ու հոգնությունից մահամերձ, ողբալի դրության մեջ էին... համարյա տղամարդ չկար նրանց մեջ, բացի մի քանի ծերերից, որոնց, անշուշտ, արհամարհել էին թուրքերը։ Գրեթե մերկ երեխաները կմախքների էին նմանվում, այնքան սոսկալիորեն նիհարել էին, որ կարելի էր այդ չորացած փոքրիկ մարմինների ոսկորները համրել...

Մի հարուստ հայի... նախ կտրեցին ականջները, հետո քիթը, հետո ծոծրակը կտրելով լեզուն հանեցին և գտնելով, որ այդքան տանջանքը բավական չէ, աչքերը հանեցին։ Այդ բոլոր նողկալի գազանությունները կատարվեցին վաճառականի խուլ և անդամալույծ մոր, երեխաների և կնոջ ներկայությամբ...»

Մի այլ հայից ոստիկանությունը 1000 ոսկի պահանջեց։ Հայը վճարեց։ Հետևյալ օրը ժանդարմները դարձյալ եկան, քայց տանտերը փակեց դռները։

Թուրքերը չկարողացան ներս խուժել, կրակին տվին տունը։ «Տեղի ունեցավ սոսկալի մի տեսարան... կանայք սրտակեզ աղաղակ էին բարձրացնում և պատուհանից վայր նետվում՝ ընկնելով դահիճների սվինների վրա։ Վերջում պատուհաններից մեկին երևից մի կին, երեխային գրկած, հագուստն արդեն վառվելիս, աչքերն ահարկու։ Նա սարսափելի ճիչով իր ատելությունը թափեց թուրքերի վրա և երեխայի հետ միասին վայր գահավիժեց։ Բոլորը կորան կրակի մեջ»։

Մուշից դեպի Սասուն 7—8 կմ հեռավորության վրա գտնվող մի հիմնովին ավերված գյուղում «մտանք ճամփի վրա գտնվող մի տուն, որ լի էր դիակներով ու կմախքներով։ Սրանք հարյուրներով էին ընկած...

Թոնրի մոտ... ընկած էր մոտ 200 մարդ, իրար վրա թափված... թվում էր, թե նրանք դեռևս ցնցվում են վերջին բոպեի սոսկումից... Մի քանի քայլ այն կողմ, մի շատ փոքրիկ տնակ նույնպես լի էր ամեն մեծության կմախքներով ու գանգերով՝ կային փոքրեր, մեծեր, միջակներ։ Կային ջախջախված գանգեր, կմախքներ՝ երբեմն այնքան այլանդակված, ճզմված և սարսռազդեցիկ, որ անտանելի էր զսպել արցունքները։ Կային դեռատի աղջիկներ... բռնաբարված և ապա սպանված, կային մանավանդ փոքրերի դիակներ, իրենց պստլիկ շորերով... հաճախ էինք տեսնում գրկախառնված երկու դիակներ՝ մայրն ու երեխան...

Մտնելով եկեղեցի, ամենից առաջ խորանի վրա տեսանք մի տասնյակ կտրված ու կարգով շարված գլուխներ։ Գետինը ծածկված էր դիակների անհամար բազմությամբ և այդ խառնիճաղանջից բարձրանում էր մի խիստ սուր ծանր գարշահոտություն»։

«Հրացանազարկ էին արել տասնյակներով, և որովհետև այդ «գյավուրների համար շատ թանկ փամփուշտ վատնել», անցել են դաշույնի գործածության... Կրծքերի վրա դաշույնով խաչ են գծագրել, ուրիշների մատներն են կտրել...»

«Հարյուրավոր բնակիչների կոտորեցին Եփրատի ափերին և հետո թափեցին գետը։ Քանի մնում էինք այդտեղ, ամեն օր

տեսնում էինք Եփրատի մեջ դիակներ, որոնք քշվում էին հոսանքով»։

Ազգաբնակչության մնացորդներին բռնագաղթեցրին։ «Հայերին Միջագետք տանելու համար կազմված մահվան քարավանները ոչ այլ ինչ էին, եթե ոչ տանջալից մահվան դատապարտություն, և տեղում սպանելը նրանց ազատած կլիներ շատ տառապանքներից։ Հասարակածային այդ շոգ ճանապարհին մեռնում էին քաղցից ու հոգնությունից, շարունակ կողոպտվում և խոշտանգվում էին քրդերի կողմից։ Կանայք գնում էին հարեմները լցնելու համար, երեխաներին մահմեդական էին դարձնում, և նրանք, որ վերջ ի վերջո խուսափում էին այդ բոլոր արհավիրքներից, Միջագետք հասնելով թողնվում էին իրենց սև բախտին՝ այդ անապատան ու անսնունդ անապատում»։

«Երբ սկսվեցին ջարդերը, քրդական մի քանի աշիրեթություններ ապաստան տվին հայերին։ Այժմ նրանք հայերին բերել են թուրքական դիրքերի թիկունքից և մերոնց հետ փոխադարձ համաձայնության գալով՝ ամեն մի հայի փոխարեն մի ոսկի էին ստանում... Բերեցին մի հայուհու, մոտ 30 տարեկան, ազգային տարազով, երեսը հաստ լաչակով ծածկված։ Արևահար գույնն ու խորշոմած դեմքը ցույց էին տալիս նրա կրած բոլոր զրկանքները իր երկարատև գերության ընթացքում։

Դիմելով Միսակին, նա ասաց.

— Այստեղից մի օրվա ճանապարհի վրա գտնվում է իմ գյուղը. կուզեի, որ դու ինձ ընկերակցես այնտեղ գնալու։

Երբ հասան ամայի գյուղին, կինը կանգ առավ մի ավերակ տան առաջ։ «Ծնրադրելով մի անկյունում սկսեց փորել գետինը։ Քիչ անց վայրենի աղաղակ արձակելով, ձեռքում հաղթականորեն ճոճեց մի փոքր քսակ։ Ահա,— ասաց նա,— 60 ոսկի է, գիտեմ, որ քիչ է, բայց դա է իմ ամբողջ կարողությունը։ Առ այս դրամը և ազատիր մերոնցից նրանց, որոնք դեռ գերի են քրդերի ձեռքում»»[15]։

Տրապիզոնում ջարդերի կազմակերպիչ Ջ. Ազմին երկու օրվա ընթացքում ոչնչացրեց 14 հազար հայ, 600 հոգու նավերը լցրեց ու ծովում խեղդեց։ Ապա կանանց, ծերերին ու երեխաներին քաղաքից հանեց և Ջեվիզլիգ գյուղի մոտ գազանային միջոցներով սպանեց[16]։

Խարբերդում ամերիկյան հյուպատոսի 1915 թ. հուլիսի 11-ի տեղեկագրում գրված էր. «Հուլիսի առաջին օրերին Կարին՝ից,

Երզնկայից, Խարբերդից հասան ցնցոտիների մեջ, սովալլուկ, հիվանդ (հայերի) առաջին քարավանները։ Նրանք երկու ամիս անցկացրել էին ճանապարհներին՝ գրեթե առանց սննդի ու ջրի։ Մայրերը իրենց զավակներին հոժարակամ տալիս էին բոլոր նրանց, ովքեր ուզում էին վերցնել։ Հարուստ թուրքերը բժշկական քննության էին ենթարկում երիտասարդ աղջիկներին և ամենագեղեցիկներին տանում էին իրենց հարեմների համար»։

Խարբերդում բռնագաղթը սկսվեց «հազարավոր տղամարդկանց ձերբակալություններով։ Գիշերը նրանց տարան մոտակա լեռները և այլևս ոչ ոք չվերադարձավ... Հունիսի 5-ին ձերբակալվեց ևս 800 հայ։ Հետևյալ օրը նրանց տարան լեռների անապատային մասը, 14 հոգիանոց խմբերով իրար կապեցին... և սրախողխող արեցին։ Մերձակա գյուղերում հայերին... արգելափակեցին։ Երեք օր առանց ուտելիքի ու ջրի պահելուց հետո նրանց կանգնեցրին մոտակա ժայռերի առաջ ու գնդակահարեցին, ովքեր պատահաբար կենդանի էին մնացել, սվիններով ու դանակներով սպանեցին։ Հուլիսի 10-ին հազարավոր հայերի նոր ջարդեր եղան քաղաքից երկու ժամ հեռավորության վրա։ Նույնը կատարվեց շրջակա բոլոր գյուղերում...»[17]։

1915 թ. հունիսին թուրքական զորամասերը շրջապատեցին Բիթլիս քաղաքն ու նրան հարող գյուղերը, որոնք վերածվեցին սպանդանոցների։ Երբ ռուսական բանակը գրավեց քաղաքը, պարզվեց, որ վիլայեթի 180 հազար հայ բնակչությունից կենդանի էին մնացել միայն մահմեդականություն ընդունած 300—400 կանայք ու երեխաներ։ Բիթլիսի կառավարիչը պարծենալով, կենտրոնական կառավարությանը հեռագիր տվեց, թե իր վիլայեթում այլևս ոչ մի հայ չկա։

Հատկանշական էր նաև այն, որ երիտթուրքերի լիդերները թուրքերին կոչ էին անում ամրանալ հայերի հողերի վրա, մշտական բնակություն «հաստատել Արևելյան Անատոլիայում»։

Ժակ Մորգանը գրում է. «Սպանություններ, բռնություններ, կողոպուտ, ստրկացում, սրանք բնորոշ գծեր են բոլոր թշնամիների գործելակերպի՝ ինչպես տատոնների, այնպես էլ նրանց հարազատ թուրքերի համար»։ Սակայն աշխարհում չկա մի լեզու, որը «բավարար հարուստ և պերճախոս լինի, որպեսզի կարողանա նկարագրել» թուրքերի օգտագործած հրեշավոր մեթոդները, որպեսզի «արտահայտի ֆիզիկական և հոգևոր այն

տառապանքները, որ կրեցին այդ անմեղները մինչև որ» մահը վրա հասավ[18]։

Արաբ քաղաքագետ և հեղինակ Ֆայիզ էլ-Ղոսեյնը, որ 1917 թ. հրատարակեց «Հայկական կոտորածները Օսմանյան կայսրությունում» գիրքը, որպես ականատես գրում է. «Ինչ վերաբերում է Մուշ քաղաքին, ապա հայերի մի մասը փոսերի մեջ բնաջնջվեց, իսկ մի մասը դանակահարվեց ու գնդակահարվեց։ Իշխանությունը դահիճներ էր վարձում, յուրաքանչյուրին օրական վճարելով մեկ օսմանյան լիրա... Սվազի վիլայեթի Մարզվան կազայում... դատապարտյալներից տասական մարդ առանձնացնելով ժանդարմները մեկը մյուսի հետևից հայերին (չորս դահիճների) մոտ էին ուղարկում։ Դահիճները հայերին մորթում էին ոչխարների նման։ Բժիշկը (ականատես) հայտնում է իր զարմանքը, թե ինչպես էին հայերը մեռնում՝ առանց որևէ խոսք ասելու։ Ինչ վերաբերում է կանանց ու երեխաներին, ապա ժանդարմները նրանց կապելով բարձունքից ցած էին գլորում...»[19]։

Իշխանությունները քրդերից պահանջում էին հայերին նախ սպանել, ապա թալանել։ «Հրամայեցինք նրանց սպանել հայերին, սակայն քրդերը ավելի հակում ունեցան թալանի, քան սպանության»,— ասել է Մուշի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը[20]։

Կարինի հայ ազգաբնակչության բռնագաղթի ականատես, գերմանացի լեյտենանտ Շտանգեն գրում է.

«Բացարձակապես հավաստի է, որ հուսահատված մայրերը իրենց նորածին երեխաներին Եփրատն էին գցում, չկարողանալով նրանց կերակրել»[21]։

Տիգրանակերտի յուրաքանչյուր տանը կար մեկից հինգ հայուհի աղախին, նրանց թիվը քաղաքում հասնում էր հինգ հազարի, որոնց մեծամասնությունը Կարինի, Խարբերդի և մյուս վիլայեթների աղջիկներն էին։

Կահիրեում ֆրանսիական դեսպանը գրում է, որ 1916 թ. ապրիլի 15-ին Դամասկոսի հրապարակներից մեկում վաճառվում էր 300—400 հայ աղջիկ ու երիտասարդ կին։ Նրանց գինը տատանվում էր 8—23 ֆրանկի միջև։ Հալեպի շուկաներում վաճառվեցին հազարավոր հայ կանայք։ «Այսպես կոչված մահմեդական աշխարհի ինտելեկտուալները՝ խոջաները, ուլեմները, կադիները, մուֆտիները կարողացան արագորեն մեծացնել իրենց

սարուկների թիվը չնչին գումարով, պատճառաբանելով, որ իրենք են նրանց կրոնափոխել. մեծ թվով մահմեդականացված... կանայք մտցվեցին հարեմները»[22]։

«Հայերի հսկա քարավանները զանգվածային բնաջնջման են ենթարկվում սպանության ու սովամահության միջոցով կամ հիվանդության հետևանքով։ Գերմանացի սպաները ևս, որոնք վերջերս Փոքր Ասիայում են եղել, պատմում են այդ վայրերում տեղի ունեցած սրտակեղեք տեսարանների մասին»[23]։

Գերմանացի բուժքույրեր Դ. Վեդել-Յարլսբերովը և Ե. Էլվերսը գրում են, որ իրենց խոհարարուհին արցունքներն աչքերին պատմում էր, թե ինչպես քրդերին պատժելու անվան տակ կանոնավոր բանակը «սպանում էր կենդանի մնացած հայերին, կանանց ու երեխաների մեծ մասին»։ «Երբ մենք ահաբեկված բացականչեցինք, թե «Դուք ինչպե՞ս կարողացաք կրակել կանանց ու երեխաների վրա», հետևեց հետևյալ պատասխանը. «Մենք ի՞նչ կարող էինք անել։ Դա հրաման էր»»[24]։

Իթթիհադի ղեկավարներից Ի. Հաքքը Սալոնիկում լույս տեսնող «Բեյան ուլ Հաք» թերթում 1918 թ. գրեց. «Խաղաղ ազգաբնակչության դեմ ուղղված հալածանքները բարբարոս են և թշնամի դեմ։ Լուռ հանդիսատես մնալ նմանօրինակ իրողություններին, նշանակում է մեղսակից լինել։

Ամեն օր հազարավոր հայեր են սպանվում ամենահեռավոր վայրերում»։

Մի այլ թուրք գրող, Մ. Նեդիմը, 1925 թ. լույս տեսած իր «Վկայությունների» 90-րդ էջում գրում է. «Իմ վտիտ գրիչը անուժ է նկարագրելու (հայերի) չարչարանքները, որոնք աննախադեպ էին մարդկության պատմության մեջ...»

Երկրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան վկայել է, որ երբ Հալեպում չորրորդ բանակի տրամադրության տակ ուղարկվելու փոխարեն Սվազում գտնվող 2000 հոգուց կազմված հայ զինվորների գունդը չարդվեց թուրքերի կողմից, այդ դեպքը հետաքննելու ընթացքում հայտնի դարձան հայկական կոտորածների աղաղակող փաստեր։ Նա նկարագրում է Մուշի մոտակայքում գտնվող Ջուրիկ գյուղի ողբերգությունը, երբ բազմաթիվ մանուկներ ու կանայք կենդանի այրվել են։ «Մարդ չի կարող նման վայրագության ու վայրենության օրինակներ գտնել խալամի պատմության էջերում»[24ա]։ Վենեսուելացի սպա Ռաֆայել գե Նոգալեսը 1926 թ. Լոնդոնում հրատարակված իր հուշերում

(«Չորս տարի կիսալուսնի տակ») նկարագրում է Մուշի շրջանում իր տեսած վայրագությունները, կիսամեռ ու կիսավառված հայ մանուկների ու կանանց դիակները։

Տարագրվածները,— գրում է Ղոսեյնը,— Էրզրումից մինչև Սերուլա ողջ ճանապարհն անցել էին ոտքով, «...ժանդարմները նրանց տանում էին անապատային վայրերով, նրանց թողներով առանց ջրի։ Ննդաբերող կանայք հարկադրված էին նորածնին թողնել բախտի քմահաճույքին, անբնակ վայրերում։ Ոմանց մայրական սերը թույլ չէր տվել բաժանվել իրենց երեխաներից, և նրանք միասին զոհվեցին անապատում...»[25]։

«Ճանապարհի երկու կողմերին թափված էին մեծ քանակությամբ դիակներ..., (որոնք) արևի տակ ցամաքելով սևացել էին ինչպես ածուխը։ Մենք որքան մոտենում էինք Սեվերեկին, այնքան շատանում էր դիակների, հատկապես երեխաների դիակների թիվը...

Ամենուրեք դիակներ են. տղամարդիկ՝ բացված կրծքերով, կանայք՝ հոշոտված մարմնով, կողքին երեխան՝ հավերժական քնով քնած...

Մենք տեսանք լրիվ այրված դիակներ... Քանի երիտասարդներ և գեղեցիկ աղջիկներ էին... կենդանի այրվել այս վայրում...[26]։

Դիարբեքիրում հայերին ցերեկը զգուշացնում էին, որ երեկոյան իրենց ոչնչացնելու են։ Նրանց շրջապատման մեջ էին պահում մինչև երեկոյան ժամը 8-ը, որի հետո խումբ-խումբ տանում և գնդակահարում էին։ Հաճախ նրանց սպանում էին կացնի հարվածներով...

Բիթլիսում իշխանությունները հայերին լցրեցին... մեծ մարագի մեջ, դռները ծղոտով փակեցին և հրդեհեցին... Հաճախ նման ձևով միանգամից ոչնչացնում էին մի քանի հարյուր մարդ[27]։

Ժանդարմները... կանանց ու երեխաներին իրար էին կապում, մեծ բարձրությունից ցած գլորում... Դիարբեքիրում հաճախ նրանց խմբերով գցում էին ջրհորներն ու փոսերը և հողով ծածկում...»[28]։

Բռնագաղթվածներից մի սովյալ կին, երեխան գրկին, անցորդներից հաց էր մուրում, բայց վախենալով իշխանություններից՝ ոչ ոք չէր համարձակվում նրան հաց տալ։ Եվ այդպես

երկու օր շարունակ։ Երրորդ օրը նա երեխային դրեց շուկայի հրապարակում, իսկ ինքը նետվեց Եփրատի ջրերի մեջ։

Ղոսեյնը գրում է, որ մինչև 1915-ի օգոստոսը ոչնչացվել էր 1,2 միլիոն հայ։

«Մենք չգիտենք,— գրում է Ա. Մանդելշտամը,— բարձրագույն իշխանության ծրագրերի մեջ մտնո՞ւմ էին փոքր երեխաների ձեռքերը կտրելու, մերկ կանանց անապատում դեգերելու պլանները... Ճանապարհներին քարավանների ոչնչացումը սովի, ծարավի և հիվանդությունների միջոցով նախատեսված էր...»[28ա]։

Հայերի տները,— գրում է Վ. Գորդլևսկին,— եկեղեցիներն ու վանքերը լցված էին դիակներով, շատ դեպքերում դրանք թափված էին ածխացած։ «...Ոչ քիչ դեպքերում որովայնները լցված էին ավազով... Բիթլիսից այն կողմ ձգված կիրճում թափված էին դիակների սարեր...»[29]։

Հայ զինվորների ոչնչացման մասին Հ. Մորգենթաուն գրում է. «Մերթ այստեղ, մերթ այնտեղ հավաքում էին 50—100 մարդ, նրանցից չորսական հոգու իրար էին կապում, տանում գյուղերից հեռու» և ոչնչացնում։ Նրանք, ովքեր ուղարկվում էին այդ սպանվածներին թաղելու, վերջիններիս «գտնում էին ամբողջապես մերկ, որովհետև թուրքերը, որպես կանոն, լրիվ հանում էին նրանց հագուստները... մարդասպանները իրենց զոհերի տանջանքները մեծացնում էին նրանով, որ նրանց հարկադրում էի գնդակահարվելուց առաջ իրենց համար գերեզման փորել»[30]։

«Մի շարք դեպքերում ժանդարմները հայերի ոտքերն ու ձեռքերը մեխում էին փայտերին, հավանաբար, նկատի ունենալով Քրիստոսի խաչվելը»[31]։

Թուրք պաշտոնատարները չէին հերքում, որ կառավարությունը քաջալերում է խոշտանգումները, որոնց մանրամասները քննվում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության շտաբի գիշերային նիստերում։ Խոշտանգումների յուրաքանչյուր նոր մեթոդ «գնահատվում էր որպես գերադրական հայտնագործություն և ծառայողները մշտապես գլուխ էին ջարդում, որպեսզի հայտնագործեին խոշտանգումների մի նոր տեսակ... Նրանք նույնիսկ դիմում էին իսպանական հավատաքննության հաշվետվություններին...»։ «Հաճախ ժանդարմները սվինահարում էին բոլոր նրանց, ովքեր ընկնում էին ճանապարհին»[32]։

Տարագրության քարավանները «առաջ ընթանալու հետ միասին իրենց հետևում թողնում էին մի այլ քարավան՝ ծերերի և կանանց մեռած ու չթաղված դիակների քարավան...»

«Ես համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնպիսի սարսափելի փաստեր, ինչպես այս կոտորածը։ Անցյալում պատահած մեծ ջարդերն ու հալածանքները, համեմատած 1915 թ. հայ ժողովրդի կրած տանջանքների հետ, թվում են աննշան»[33]։

1918 թ. ամերիկյան «The Red Cross» հանդեսում տպագրվեց Հ. Մորգենթաուի «Պատմության ամենասոսկալի եղելությունները» հոդվածը, որ քիչ անց Փարիզում հրատարակվեց առանձին գրքով։ Այն արժեքավոր է ոչ միայն նրանով, որ հեղինակը իրադարձություններին քաջատեղյակ անձ է, որ գրված է այդ իրադարձություններից անմիջապես հետո և դրանց թարմ տպավորության տակ, այլ նաև նրանով, որ այն շատ հաջող փորձ է ներկայացնելու դարի առաջին ցեղասպանության բնութագիրը, նրա տեղը պատմական իրադարձությունների շղթայում, նրա պատճառներն ու հետևանքները, նրա միջազգային առնչությունները։

Հ. Մորգենթաուն հոդվածը սկսում է այսպես. «Քիչ երկրներ են այնպիսի խոշտանգման ենթարկվել, ինչպիսին Հայաստանն է։ Հարատև դաժանությունները, որոնց նա զոհ գնաց, եղել են այն աստիճանի զարհուրելի, որ մեզանից շատերի համար հենց «Հայաստան» անունը ստացել է նահատակ բառին համազոր նշանակություն»։

«Ինձ համար անսպասելի է,— շարունակում է Հ. Մորգենթաուն,— որ Եվրոպայի ու Ամերիկայի 400 միլիոն քրիստոնյաներ այս անգամ ներեն թուրքական կառավարության գործած այս վայրագությունները։ Արդյո՞ք նրանք Գերմանիայի նման կբռնեն թուրքի արյունլվա ձեռքը, կներեն ու կպարգևատրեն նրան, ինչպես այդ արեց Վիլհելմը՝ սուլթանին շնորհելով իր ամենաբարձր պատվի շքանշանները։ Արդյո՞ք այս սարսափելի արարքները, դժոխային չարչարանքները, կանանց արգելափակումը հարեմներում, անմեղ երիտասարդ աղջիկների հափշտակումն ու նրանցից շատերին չորս ֆրանկով վաճառելը, հարյուր հազարավոր մարդկային էակների սպանդը և այլ հարյուր հազարավոր հայերի աքսորը անապատ, որտեղ նրանք ոչընչացան սովամահությունից, հարյուրավոր քաղաքների ու գյուղերի կործանումը, վերջապես, Թուրքիայի հայ, հույն, սիրիացի

քրիստոնյաներին ոչնչացնելու կանխամտածված ու դժոխային այս ծրագրերի գործադրումը, արդյո՞ք այս բոլոր եղեռնագործությունները, ի վերջո, մնալու են անպատիժ։ Մի՞թե թույլ ենք տալու Թուրքերին, ինչ եմ ասում, մի՞թե մեր երկչոտությամբ քաջալերելու ենք նրանց՝ շարունակելու իրենց տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների հետ վերաբերվել որպես «անհավատ շների»»[34]։

Մորգենթաուի մտավախությունը անհիմն չէր։ Պատմությունը ցույց տվեց, որ Արևմուտքի խոշոր տերությունների, այդ թվում նաև նրա հայրենիքի՝ Միացյալ Նահանգների կառավարությունը գործնականում Թուրքիային իրենց հովանավորության տակ առան և մինչև օրս էլ աջակցում են նրա շովինիստական ուժերին, նպատակ ունենալով, հարկ եղած դեպքում, Թուրքիային օգտագործելու իրենց ագրեսիվ նպատակների համար։

Այժմ ընթերցողի ուշադրությանն ենք առաջարկում մարդկության մեծագույն զավակներից մեկի՝ Ֆ. Նանսենի մտքերն ու դիտարկումները՝ Թուրքիայում հայերի վիճակի ու Մեծ եղեռնի մասին, որ նա արձանագրել է բազմաթիվ առիթներով, մասնավորապես իր «Հայաստանը և Մերձավոր արևելքը» գրքում։

«Թուրքական գազանությունները իրենց չափերով ու նողկալի զազրելիությամբ,— գրում է Նանսենը,— գերազանցում են պատմությանը հայտնի բոլոր գազանությունները, և հայ գողգոթան իր նմանը չունի պատմության մեջ»[35]։

Մահաբեր ծրագիրը սկսեց գործադրվել մեթոդիկ ձևով։ Թուրքերը որոշել էին օգտվել առիթից՝ մեկընդմիշտ բնաջնջելու այն ամենը, ինչ հայ է ու հայկական։ Քանի որ տղամարդկանց մեծ մասը զորակոչվել էր, ծերերը, կանայք և երեխաները, հիվանդները ու հաշմանդամները աքսորվում էին[36]։

«Մարդկային դժբախտ էակներից բաղկացած քարավանը ճանապարհ էր ելնում. խուզարկու աչքերից հեռու, ամայի վայրերով, ոստիկանների անտարբերությունը փոխակերպվում, գառնում էր անորակելի բռնություն։ Բոլոր տղամարդիկ և պատանիները հավաքվում և անողոքաբար կոտորվում էին։ Կանայք, ծերերն ու երեխաները... մեռնում էին սովից ու ծարավից։ Նրանք, ովքեր այլևս քայլել չէին կարողանում, մտրակահարվում էին այնքան, մինչև որ կընկնեին, այնուհետև սպանվում էին։ Քարավանը հետզհետե նոսրանում էր. քաղցը, ծարավը, հոգնությունը և սպանություններն ավեր էին գործում։ Առևանգվում էին կանայք ու աղջիկները և վաճառվում իսլամական շուկաներում։ 20 դահեկան արժեր կույս աղջիկը, հինգ դահեկան՝ երիտասարդ կինը կամ այրին, իսկ երեխաները ձրի էին տրվում։ Չեթեներն ու քրդերը հաճախ հարձակվում էին հալումաշ քարավանների վրա, բռնաբարում էին կանանց, կողոպտում, սպանում»[37]։

«1916 թ. հունվարին գրեթե 6000 հայ Այնթափից քշվեց անապատ։ Ապրիլին 14 հազար աքսորյալներ կոտորվեցին Ռաս ուլ-Այնում։ Քաղաքի կայմակամի հրամանով ամեն օր 300—500 մարդ խումբ-խումբ տարվում էին գետափ և այնտեղ հատուկ վարձված չեթեները, ոճրագործները մորթում էին նրանց և նետում գետը։

Հալեպի արևելյան կողմում, Եփրատի ափին գտնվող Մեսքենեում, ըստ թուրքերի հայտարարության, 55 հազար սովամահ հայեր թաղվեցին։ 1915 թվականի ընթացքում շուրջ 60 հազար հայ ուղարկվեց Դեր Զոր, որտեղ բոլորը մեռան[38]։

1916 թ. ապրիլի 15-ին 19 հազար հայեր անապատով (300 կմ հեռավորություն) ուղարկվեցին Մոսուլ, միայն 2000 հայ այնտեղ հասավ մայիսի 22-ին։ Կանանց ու աղջիկների մի մասը ճանապարհին վաճառվեց բեդվիններին, մյուսները մեռան քաղցած ու ծարավ։ 1916 թ. հուլիսին Դեր Զորում կար 20 հազար աքսորյալ։ Ութ շաբաթ անց, ըստ գերմանական սպայի, այնտեղ կային միայն մի քանի հարյուր արհեստավորներ, մյուսների հետքը կորել էր։ Չեթեները նրանց խումբ-խումբ կոտորել էին։ Սովամահությունը ավելի հոռի էր։ Մի ականատես պատմել է, որ 1029 հայ Պապում սովից մեռան երկու և կես օրվա ընթացքում»[39]։

«Երբ ուշ, 1915-ին, Անատոլիայի խժդժությունների մասին Եվրոպայում իմացան, դրանք, նույնիսկ, համաշխարհային պատերազմի արհավիրքների մեջ զայրույթի փոթորիկ առաջացրեցին թուրքերի դեմ, նաև գերմանացիների դեմ, որոնք չեն կարողացել արգելք հանդիսանալ իրենց դաշնակցի ոճիրներին»[40]։

«Երիտթուրքերը հասան իրենց նպատակին, «մաքրեցին» Անատոլիան հայերից և Թալեաթ փաշայի հետ կարողացան ասել, որ «այլևս Հայկական հարց գոյություն չունի»։ Ոչ մի պետական գործիչ կամ կառավարություն (ամերիկացի թե եվրոպացի) այլևս չի հարցնի, թե այդ երկրում ինչ է կատարվում։ Այնպես

է թվում, որ ամերիկացիների ու եվրոպացիների համար ևս «Հայկական հարցը լուծված է», խեղդված արյան մեջ»[41]։

Այո, իմպերիալիստական պետությունները հանգիստ խղճով լողանում փակեցին Հայկական հարցը, լորդ Քերզոնի խոսքերով ասած՝ «աշխարհի ամենամեծ գայթակղություններից մեկը»։

1. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1985, էջ 19։
2. Նույն տեղը։
3. Հառաջ, 6 նոյեմբերի 1985 թ.։
4. Гр. Чалгушян, Красная Книга, Ростов-на-Дону, 1919, с. 70..
5. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 323,
6. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բեյրութ, 1977, էջ 234։
7. Նույն տեղը, էջ 285։
8. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 313—317.
9. Հուշամատեան Մեծ եղեռնի..., էջ 501։
10. Նույն տեղը, էջ 502։
11. Նույն տեղը, էջ 509։
12. Ապագա, 10 հունիսի 1985 թ.։
13. Նորք, 1965 թ. մարտ։
14. Հայր, հանդես, 1971, № 2։
15. Ս. Մելիքյան, Հայ կամավորի հուշերից, Թիֆլիս, 1917, էջ 9, 10, 14, 15, 19, 24—28։
16. Ս. Թեհլերյան, Վերհուշումներ, Կահիրե, 1956, էջ 78։
17. Նույն տեղը։
18. Геноцид армян..., с. 556.
19. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 8, էջ 17—18։
20. Նույն տեղը, էջ 13։
21. Նույն տեղը, 1984, № 1, էջ 17։
22. Նույն տեղը, 1985, էջ 13, 17, 18։
23. Բորսայում Ավստրիայի հյուպատոս Մ. Բալավիչինիի 1915 թ. օգոստոսի 23-ի զեկուցագիրը։
24. Ֆ. Նանսեն, Հայաստանը և Մերձավոր արևելքը, Վերիտոն, 1956, էջ 289։
24ա. Թագուիմը Վագայի, 5 մայիսի 1919 թ.։
25. Геноцид армян..., с. 399.
26. Նույն տեղը, էջ 401։
27. Նույն տեղը, էջ 403։
28. Նույն տեղը, էջ 405։
28ա. Նույն տեղը, էջ 506։
29. Նույն տեղը, էջ 508։
30. Նույն տեղը, էջ 542։
31. Նույն տեղը, էջ 544։
32. Նույն տեղը, էջ 545, 550։
33. Նույն տեղը, էջ 553։
34. Էմիածին, 1965, № № 2—3—4։

35. Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, Ե., 1986, էջ 33։
36. Ֆ. Նանսեն, Հայաստանը և Մերձավոր արևելքը, էջ 272։
37. Նույն տեղը, էջ 273։
38. Նույն տեղը, էջ 276։
39. Նույն տեղը, էջ 278—279։
40. Նույն տեղը, էջ 281—282։
41. Նույն տեղը, էջ 296։

ԱՌԱՋԱԴԵՄ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Մեր օրերում սուլթանների ու երիտթուրքերի մարդատյաց քաղաքականությունն արդարացնողների շարքերում միավորված են զանազան քաղաքական գործիչները, նացիոնալ-սոցիալիստական կուսակցության դահիճներն ու նեոֆաշիստները, ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության լրտեսներն ու գանգստերները։

Ահա, օրինակ, ԿՀՎ գեներալ, հայտնի արկածախնդիր Պոլ Հենսը, որ ամեն անգամ Թուրքիա այցելելիս իր պարտքն է համարում դատապարտելու «հայերի հակաթուրքական» գործունեությունը։ Պրովոկատորը մնում է պրովոկատոր, շովինիստական լարերի ու ատելության կրքերի վրա խաղացող։ 1983 թ. Ստամբուլում նա հրապարակավ բացականչում էր. «Հայ ահաբեկիչները գործադրում են ծայրահեղական տեռորիզմ։ Պատանդ չէին վերցնում, սպանում էին վիրավորներին... Թուրքերին նրանց ներկայացրած տարածքային պահանջներն անարդարացի են ու անօրինական»[1]։ Արևմտագերմանական թերթերից մեկը Պոլ Հենսին ու նրա նմաններին նկատի ունենալով է, որ հարց է տալիս. «Ովքե՞ր են այսօր կրկին խոսում հայերի մասին։ Այս հարցը Հիտլերը պետք է տար 1939 թ. հրամկազմի նիստերից մեկի ժամանակ, քանի որ Լեհաստանում նա իր գեներալներին արդեն ներշնչել էր «կենսական տարածության» գաղափարը, որը պետք է նվաճել և որի միակ բնակիչը պետք է դառնալ։

Այժմ ո՞վ է հիշում հայերի ջարդի մասին»։

Իսկ ցեղասպանության թուրքական քաղաքականությունը քննադատողների թվում են կոմունիստական ու բանվորական շատ կուսակցություններ, դեմոկրատական ու առաջադիմական ուժեր։

Թուրքիայի կոմունիստական կուսակցության օրգան «Ատիլիմ» թերթը գրում է. «Մեր պետության ամենասև էջերից մեկը 1915 թ. է, երբ Գերմանիայի դաշնակիցները՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարները, կազմակերպեցին օս-

մանյան սահմաններում բնակվող ավելի քան մեկ միլիոն հայերի կոտորած և նրանց քշեցին այն հողերից, որոնց վրա նրանք ծնվել ու մեծացել էին... 1915 թ. ցեղասպանությունը Թուրքական պատմության ամենաամոթալի էջերից մեկն է, և կոմունիստները դատապարտում են այն»[2]։

Ահա և Լիբանանի կոմկուսի հայտարարությունը. «Թուրքական հետադիմական բռնակալությունը ցանկացավ բնաջնջել քաջարի այս ժողովրդին, երբ ձախողվեց հայ ազգային ինքնությունը ձուլելու, նրան իր հողերից հեռացնելու և այդ հողերը յուրացնելու իր քաղաքականությունը։

Բոլոր տվյալները հայկական դատը առաջադրում են որպես քաղաքական դատ, որի կարևորությունը, տեղական ու համաշխարհային չափ նշաններով ծավալվում է հակառակ պատմության նենգափոխումների, որ կատարում են Թուրք հետադեմ պատմաբանները՝ համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու և Հայկական հարցը այլափոխելու համար։

Հայկական դատի համար մղվող պայքարը ենթադրում է դաշնակցային հարաբերություններ Թուրքական հետադիմության կողմից ճնշված բոլոր ազգությունների հետ, նախ և առաջ իր ազգային դատի համար պայքարող քուրդ ժողովրդի, ինչպես նաև ֆաշիզմին հակադրվող Թուրքական առաջադիմական ուժերի հետ։

Ակնհայտ է, որ ազգային ինքնուրույնության պահպանման և հայկական դատի համար պայքարը զարգանալ և հաջողություն ունենալ չի կարող, եթե նկատի չառնվի Սովետական Հայաստանի գոյությունն ու հարաճուն ուժը։ Նա պայծառ ներկա է, որի մեջ չի կարելի չտեսնել բոլոր հայերի ապագայի պատկերը»[3]։

Քրդստանի ազատագրության կուսակցությունը եղեռնի 70-ամյակի առթիվ դատապարտեց «Թուրքական բարբարոս պետության կողմից հայ ժողովրդի դեմ գործադրված հակամարդկային ցեղասպանությունը, ցեղասպանություն, որ հետո սկսեց գործադրվել նաև քուրդ ժողովրդի դեմ... անհրաժեշտ է հայ և քուրդ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի միասնություն ընդդեմ բռնատեր, հափշտակիչ, ցեղասպան ու ֆաշիստական Թուրքական պետությանն ու նրան հովանավորող ամերիկյան և ՆԱՏՕ-ի մյուս իմպերիալիստների»[4]։

Լեո Քյուփոի «Ցեղասպանություն» գրքում կարդում ենք. «Մի

շարք ցեղասպանություններին բնորոշ է արագությունը, մյուսներին՝ կազմակերպվածությունը։ Իսկ հայկականը բնորոշվում է այդ երկուսի միաձուլմամբ»։ «Պատերազմական պայմաններում կատարված բնաջնջումները իշխանությունների կողմից քողակվում են որպես ռազմական անհրաժեշտություն»։

Հայկական ցեղասպանությունը XX դարի «մոռացված ցեղասպանությունն է, որը գլխավորապես հիշում են միայն հայերը։ Բայց դա առաջին է իշխանությունների կողմից ամենայն սառնասրտությամբ ծրագրված ու գործադրված ցեղասպանություններից»։

«Հայերին, եթե նրանք նույնիսկ անհավատարիմ քաղաքացիներ լինեին, բավարար կարող էր լինել զինաթափումը, բայց երբեք՝ կոտորածը»[5]։

1984 թ. ապրիլի 13—16-ը Սորբոնում տեղի ունեցավ «Ժողովուրդների մշտական տրիբունալ» անունը կրող ոչ կառավարական միջազգային կազմակերպության նստաշրջանը, որի նիստերից մեկը նվիրված էր Հայկական եղեռնին։ Տրիբունալը արձանագրեց, որ ելնելով ցեղասպանությունը կանխելու և մեղավորներին պատժելու մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի դրույթներից, բոլոր հիմքերը կան ասելու, որ հայ ժողովրդի բռնի գաղթեցումն ու զանգվածային սպանությունները իսկական ցեղասպանություն են։

Հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը միաժամանակ «միջազգային հանցագործություն էր և Թուրքական պետությունը պետք է պատասխանատվություն կրի. նա պետք է պաշտոնապես ընդունի ցեղասպանության փաստը և հատուցի հայ ժողովրդին հասցված վնասը»[6]։

Տրիբունալը աշխարհի տարբեր ծայրերից բազմաթիվ նամակներ ստացավ։ Դրանց թվում էր աշխարհահռչակ կինոռեժիսոր, մեծ հայրենասեր, լեգենդար Գյունեն։ Նա ազգությամբ քուրդ է, իր կյանքի մեծ մասը անց է կացրել Թուրքական բանտերում՝ «կոմունիստական պրոպագանդայի համար» Թուրքիայում պարտադիր դարձած մեղադրանքով։

Տրիբունալին Գյունեն գրում է. «Այն ժամանակվա Թուրքական ղեկավարները, առաջնորդվելով Թունավոր նացիոնալիզմով, երազում էին ստեղծել պանթուրքական կայսրություն, որ տարածվելու էր Թուրքիայից մինչև Միջին Ասիայի տափաստանները։ Մինչդեռ Թուրքերով բնակեցված Թուրքիայի տա-

բածքը և Թուրքական ժողովուրդներով բնակեցված Հյուսիսային Կովկասն ու Միջին Ասիան միմյանցից անջատված էին քրդերով ու հայերով բնակեցված շրջաններով։ Որպեսզի հաղթահարվի այդ «խոչընդոտը», «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարությունը որոշեց ֆիզիկապես ոչնչացնել այդ երկու ժողովուրդներին»։

Նազիմ Հիքմեթի գրչին են պատկանում հետևյալ տողերը.

«Վառվեցին լույսերը Սուրենի
Նպարեղենի խանութում։
Նա չի մոռացել կոտորածը
հայկական։
Մինչև վերջ, մինչև մահ, գերեզման
Նա չի ների իր հոր սպանողին։
Բայց նա սիրում է քեզ,
Քանզի դու ևս չես ներել նրանց, ովքեր օգնել են,
որ Թուրքիայի ճակատին դրվի
այդ խարանն ամոթալի»[7]։

Թուրքիայի կոմկուսի II կոնֆերանսում ընդունված «Ազգային և գաղութային հարցեր» բանաձևում ասված է. «Կոմունիստները պաշտպանում են հայերի իրավունքները։ Ցեղասպանությունը, որ իրականացրին Թուրքական շովինիստները Թուրքահայաստանում, մարդկության պատմության մեջ երբևիցե կատարված ամենաբարբարոս գազանությունն է։ Թուրքիայի շովինիստական կառավարությունը մեկ միլիոն հայերի կյանքից զրկեց և թալանեց նրանց ունեցվածքը։ Նրանք, ովքեր փրկվելու հնարավորություն ունեցան, բռնությամբ քշվեցին այն հողերից, որտեղ նրանք ապրել են հազարամյակների ընթացքում... այսօր աշխարհով ցրված 6,5 միլիոն հայերից, որոնց կեսը բնակվում է ՍՍՀՄ-ում, միայն 100 հազարն են Թուրքիայի բնակիչներ։

Իրենց հողերից բռնությամբ քշված հայերին պետք է իրավունք տրվի անարգելք վերադառնալու, իսկ պետությունը պարտավոր է ամենայն օգնություն ցույց տալ նրանց, ովքեր ցանկանում են վերադառնալ։ Հայերի բոլոր դեմոկրատական իրավունքները պետք է վերականգնվեն։ Կոմունիստների պարտքն է՝ պաշտպանել հայ փոքրամասնությանը»[8]։

1965 թ. ապրիլի 23-ին «Յումանիտեն» գրեց.

Բավական է ասել, որ ցեղասպանության հանցագործությունը առաջին անգամ իրականացվել է XX դարի սկզբին, 1914—

1918 թթ. պատերազմի ժամանակ։ Եվ այդ հանցագործությունը երբեք չի դատապարտվել։ Ահա թե ինչու հայերը, որոնք ուրիշներից ավելի գիտեն խաղաղության արժեքը, չեն կարողանում մոռանալ այդ իրադարձությունը, որ ոչ միայն հիշողություն, այլ նաև պատմական տարեթիվ է, որը սակայն կարող էր դառնալ մի ամբողջ ժողովրդի կործանման տարեթիվ։ Հայերը չեն կարող մոռանալ արյան, ձերբակալությունների, աքսորյալների հոսքը դեպի անապատ՝ սովից, համաճարակներից, այլևայլ խոշտանգումներից կործանվելու։ Նրանք չեն կարող մոռանալ այդ 1,5 միլիոն զոհերին...»

Հայկական ցեղասպանությունը դատապարտվել է նաև 1965 թ. հուլիսին Հելսինկիում կայացած խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսում։ Նրա երկրորդ ենթահանձնաժողովի ընդունած բանաձևում, որը դատապարտում է դեսպոտիզմը, գաղութատիրությունն ու ցեղասպանությունը, մտցված է հետևյալ կետը. «Այս տարի լրանում է հայկական կոտորածների 50-ամյակը, որ կազմակերպվեց Թուրքիայի կողմից, նպատակ ունենալով ազգային հարցը լուծել մի ամբողջ ժողովրդի ջարդի միջոցով։ Այս ցեղասպանությունը խլեց ավելի քան 1,5 միլիոն ազատատենչ հայի կյանք, այսինքն հայ ժողովրդի $^2/_3$-ին»[9]։ Բանաձևը միաձայն ընդունվեց կոնգրեսի 1965 թ. հուլիսի 15-ի եզրափակիչ նիստում և արձանագրվեց կոնգրեսի գրքի մեջ որպես պաշտոնական փաստաթուղթ։

«Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը 8իմմերվալդում,— ասված է կոնֆերանսի բանաձևում,— իր ամենախոր համակրանքն է հայտնում պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհ և բելգիական ժողովուրդներին, հալածանքների ենթարկված հրեա և հայ ազգերին, բոլոր այն միլիոնավոր մարդկային էակներին, որոնք տառապում են անհամար աղետների ճնշման տակ, ստիպված են կրելու անլուր սարսափներ»[10]։

Կ. Լիբկնեխտը դատարանում արտասանած ճառում, խոսելով հայերի կոտորածների կազմակերպման գործում Գերմանիայի դերի մասին, ասաց, որ նա «...այս պատերազմի ժամանակ ևս իր ձեռքերը ներկել է հայերի արյունով, անչափ մեծացնելով իր մեղքը, իրականացնելով տարաբախտ հայ ժողովրդի դժնդակ ջարդը...»[11]։

Թուրքերը փայփայում են Թուրքիայի ողջ հայ բնակչության բնաջնջման հրեշավոր երազանքը,— գրել է Ս. Մ. Կիրովը,—

«...գուցե հետագայում միայն, երբ կանգ կառնեն մարդկային արյան գետերը, մի նոր Դանթե կնկարագրի միլիոնավոր մարդկանց անասելի տառապանքների պատկերը»[12]։

«Նոր պատմության մեջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք այնքան զոհեր տված լինեն, որքան հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որոնցում այնքան արյուն թափված լինի, որքան Հայաստանում»[13]։

Համաշխարհային ճանաչում ունեցող սովետական նշանավոր պատմաբան Տարլեն գրում է.

«Այն, ինչ կատարվեց Թուրքիայում, իր ծավալներով բացառիկ է համաշխարհային պատմության մեջ սկսած Չինգիզ խանի ժամանակներից»[14]։

Մ. Գորկու ղեկավարությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուի» ներածականում գրված է. «Նորից խաղաթղթի վրա է դրվել հայ ժողովրդի ազգային գոյության հարցը, իսկ համաշխարհային հրդեհի խիտ մշուշի հետևում դժվար է տեսնել և կռահել ապագան...»[15]։

Մոսկվայում լույս տեսնող «Ասիան և Աֆրիկան այսօր» ամսագրի 1985 թ. մարտ—ապրիլ համարներում տպագրվել է «Ցեղասպանություն կամ սանձաղերծ ոճիր» հոդվածը, որտեղ մասնավորապես գրված է. «Ապրիլի 24-ը 70 տարի առաջ Թուրքիայում սկսված հայերի զանգվածային բնաջնջման զոհերի հիշատակի օրն է... Այն ժամանակ կառավարող երիտթուրքական կառավարության հետադիմական ղեկավարությունը Ստամբուլից մինչև կենտրոնական Ասիա ընկած ընդարձակ տարածքի վրա թուրքական կայսրություն ստեղծելու ցեղամոլական ծրագրեր էր փայփայում։ Աջակցություն գտնելով գերմանական իմպերիալիստներից, երիտթուրքերն օգտագործում էին անզուսպ շովինիզմի քաղաքականություն։ Նրանք ցանկանում էին երկրի երեսից ընդհանրապես ջնջել հայ ազգն իր հնագույն մշակույթով, որ զարգացել էր հազարամյակների ընթացքում։ Նույնիսկ «Հայաստան» և «հայ» բառերը պիտի ընդմիշտ մոռացվեին։ Ամբողջ հայ ազգի վրա կախվել էր բնաջնջման սպառնալիքը։

Այդ ժամանակվա թուրքական կառավարության վարած ցեղասպանության քաղաքականության հետևանքը եղավ ավելի քան մեկ միլիոն հայերի ջարդը... Արևմտյան Հայաստանն ամայացավ, իսկ սակավաթիվ փրկված հայերին քրդացրին կամ թուրքացրին»։ «...Հայ ժողովրդի պատմության ողբերգական էջը

երբեք չպետք է մոռացվի, որպեսզի կանխվի՝ լինի դա հայերի, սլավոնների, կամպուչիացիների, թե պաղեստինյան արաբների կամ էլ երկրագնդի որևէ այլ ժողովրդի ցեղասպանություն»։

«Իզվեստիա» թերթի 1985 թվի նոյեմբերի 18-ի համարում տպագրված «Զայնակցում եմ հետադիմությանը» հոդվածում կարդում ենք. 1915 թվի իրադարձությունները «ցեղասպանության խորոշագույն և դաժան ակտ էին»։

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կանխման և նրանց պաշտպանության ենթակոմիտեում ՍՍՀՄ ներկայացուցիչը հայտարարեց. «Թուրքիայի այն ժամանակվա կառավարողների կողմից հայերի դեմ կատարված հրեշավոր ցեղասպանությունը ոչնչով չի կարող արդարացվել»[16]։

* * *

1915 թ. դեկտեմբերի 1-ին «Նյու Յորք Թայմսը» տպագրեց ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Թ. Ռուզվելտի նամակը, որտեղ նա ասում էր, որ Միացյալ Նահանգները քիչ բան էին «անում վայրագությամբ ու ծավալով աննախընթաց այն ոճիրի առթիվ, ինչպիսին հայկական կոտորածներն էին»։

Ամերիկյան «Սիթի» ամսագրում 1980 թ. ապրիլին զետեղված «Հայերը» հոդվածում կարդում ենք. «Թուրքերի կողմից 1915 թվականին իրագործված հայ ժողովրդի գենոցիդը, որի հետևանքով զոհվեց ավելի քան 1,5 միլիոն մարդ, մինչև այժմ պաշտոնապես չի ճանաչված որոշ կառավարությունների, այդ թվում և մեր կառավարության կողմից։ Բայց փաստը մնում է փաստ՝ մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի արևելյան շրջաններում և Արարատ լեռան մերձակայքում բնակվող հայերի թիվը երկու միլիոնից ավելի էր։ Այժմ այստեղ իրականում հայեր չկան։ Ո՞ւր են նրանք անհետացել»։

«Պրադվա» թերթն այդ հարցին պատասխանել է դեռ 1918-ին. «Մեկ միլիոն հայեր իրենց կանանց և երեխաների հետ սրի քաշվեցին միայն այն բանի համար, որ նրանք հայեր էին»։

1. Թուրքական հեռուստատեսություն, 21 հոկտեմբերի 1983 թ.։
2. Հառաջ, 27—29 սեպտեմբերի 1983 թ.։
3. Ազգային մշակույթ, 28 ապրիլի 1985 թ.։
4. Նույն տեղը։

5. Ալիք, 10 ապրիլի 1985 թ.։
6. Լռության ոճիր (Le Crime de silanse...), Փարիզ, 1984, էջ 345—346։
7. Н. Хикмет, Избранное, М., 1953, с. 226.
8. Գրական թերթ, 8 հունիսի 1984 թ.։
9. Էջմիածին, 1965, № № 2—3—4։
10. Լենինյան ուղիով, 1984, № 4։
11. К. Либкнехт, Мой процесс по документам. Петроград, 1918, с. 54.
12. Թերեք, 14 փետրվարի 1916 թ.։
13. Г. Орджоникидзе, Статьи и речи, т. I, М., 1956, с. 412.
14. Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 588.
15. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 56։
16. Известия, 18 ноября 1985.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈՒ ԵՆ ԿԵՂԾՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (Ներածության փոխարեն . . . 3

Մաս առաջին

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Հայկական հալածանքները օսմանյան կայսրությունում մինչև 1877—1878 թթ. 59
Բեռլինի կոնգրեսը և Հայկական հարցը 84
Զուլումի տարիներ 102
Քրդերի միջոցով 139
Ազատագրական գաղափարների տարածումը։ Ինքնապաշտպանություն։ Հայդուկներ 170
Սասունի գոյամարտն ու կոտորածները 203
1895—1896 թվականների զանգվածային կոտորածները։ Ինքնապաշտպանական կռիվներ 238

Մաս երկրորդ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

Անպարարություն 267
Ո՞ւմ շահերին են ծառայում 295
Ուծացում և քաղաքական հալածանքներ։ Պատմության և մշակույթի կողոպուտ 308
Հայկական ցեղասպանությո՞ւն, թե՞ հայկական ահաբեկչություն . . 326
Պանթուրանիզմից մինչև պանթուրքիզմ 349
Ցեղասպանություն 365
Երիտթուրքերի կուսակցությունը ցեղասպանության կազմակերպիչ . . 412
Բանաքաղը ընաջնջում էր 436
Ցեղասպանությունը իրականացվեց ամենադաժան ու ամենաստոր մեթոդներով 455
Անաջադեմ մարդկությունը դատապարտում է 473

Ստեփան Կարապետի Պողոսյան
ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՒՄ

Степан Карапетович Погосян
НА ПЕРЕПУТЬЯХ БОРЬБЫ ЗА СУЩЕСТВОВАНИЕ
(На армянском языке)
Ереван «Айастан» 1988

Հրատ. խմբագիր՝ Է. Վ. Գևորգյան
Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ռ. Ս. Ասատրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Տոնոյան

ИБ 5606

Տպագրվել է 1988 թ. մատրիցայից։
Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպ. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր։ 25,2 պայմ. տպագր. մամ.։ Լրացուցիչ տպաքանակ՝ 20.000։ Պատվեր՝ 1595։ Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ավ. Իսահակյան 28։
Издательство «Айастан», Ереван-9. ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան փող. № 65։
Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-10, ул. Алавердяна, 65.